



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

558

20
2-20 1856

2010

B 2001

10

20

ՀԱՄԵՌՈՏ

2-20

56

ՄՏԸՆԹՈՒԹԻՒՒՆՆԵՐ

ՔՐԻՍՏՈՆԵԱՅՆԵՐՈՒՆ ՀՈԳԵՒՈՐ

ՇՐՆՈՒԹԵԱՆԸ ՀԱՄԱՐ

ՏԱՐԻՈՅՆ ՕՐՈՒՅՆ ՎՐԱՅ

Printed in Turkey

Printed in Turkey

ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

24

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ

ՄԵԻՆԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

1856

23176

« Արքան կը սիրեմ քու օրէնքդ • ան է ամէն
օր իմ մտածութիւնս » : Սաղմ • ՃԺԹ • 97 :

2269

40

ՅՈՒՆՈՒՄ

1

Քանզի ի՞նչ է ձեր կեանքը • յիրաւի շողի մըն է, որ քիչ մը առեն կ'երևնայ, ու ետքը կ'ոչնչանայ : Յսի • Գ • 15 :

ԱՍՏՈՒԾՈՅ խօսքը սյսպէս կը ստորագրի մարդոյս կեանքը • և երբոր խորհիւնք կը տեսնենք որ ճիշդ ասանկ է : Աճա՛ տաքիին մէկն ալ անցաւ դնայ, և ան ալ ի՞նչ շուտ : Աս նոյն արագութիւնով մեր մնացած տարիներն ու օրերն ալ պիտի անցնին երթան : Եւ երբոր մահուան անկողինին վրայ պառկած աչքերնիս դէպ 'ի մեր անցեալ օրերուն դարձընենք, արդարեւ անոնք մեզի շողիի նման պիտի երևան : Աեանքերիս որչափ երկայն որ ըլլայ, տակաւին բոպէի մը չափ պիտի երևի մեզի մեռած ասե՛ննիս, երբ ալ յաւիտենականութեան անցնելու կէտին մէջն ենք : Եւ այս կեանքս ոչ միայն կարճ ու վաղանցիկ է, այլ նաև անոր վերջանալու բոպէն ալ ամենակին յայտնի չէ : Կարելի է թէ աս տարի կամ աս շաբթու, այսօր կամ աս ժամուս մեր երկրաւոր կեանքը վերջանայ ու աս աշխարհէս ելանք : Բայց մեր յաւիտենական կեանքը աս կարճ ու անստոյգ կեանքերնէս կախուած է : Միայն աս կարճ

կեանքերնուս մէջ կրնանք մեղքերնուս թողու-
թիւն գրանել և երկինքը երթալու պատրաս-
տուիլ : Ուստի հոգիներնուս փրկութեանը հա-
մար մեծ ջանքով ու եռանդով աշխատելու ենք ,
որ չըլլայ թէ գեռ սա մեծ գործը չ'կատարած յան-
կարծ կանչուինք : Ինչ մեծ յիմարութիւն է սրբ-
տերնիս ու մտքերնիս աշխարհային բաներուն տալ ,
որոնք շուտով պիտի ձգենք • և դալու աշխարհի
անվախճան կենացը համար պատրաստութիւն
տեանաւը զանց ընել :

2

Քու խօսքդ իմ ոտքերուս ճրագ է • ու իմ
չաւիղներուս լոյս : Ս ա ղ • Ը Ժ Թ • 105 :

ԱՐԴԱՐԵԻ աշխարհիս խաւար վիճակը ան-
հնարին պիտի ըլլար , թէ որ Աստուծոյ Բանին
լոյսը մեր վրայ ճառագայթած չըլլար : Քանզի
մտքերնիս անանկ խաւարած են մեղքով , որ բնա-
կան օրէնքով հաղիւ կրնանք գէշը աղէկէն որո-
շել • ու մեր մեղքերուն թողութիւն ըլլալուն ,
և սրբութեան ու երջանկութեան հասնելուն ,
և սա աշխարհէս ետքը մեզի պատահելու բանե-
րուն վրայով բոլորովին ապէտ ենք : Բայց Աս-
տուած իր ողորմութիւնովը մեզի Աստուածա-
շունչ Սուրբ Գիրքը տուաւ , որ անոր լուսովը
կրնանք մեր պարտաւորութիւնները տեսնել և

երջանկու թեան ճամբան գտնել : Անոր լուսովը
 կրնանք տեսնել թէ Աստուած ինչպէս կրնայ
 արդար ըլլալ և միանգամայն բոլոր մեղքեր-
 նուս թողութիւն տալ : Անոր լուսովը կը սոր-
 վինք թէ ինտոր կրնանք մեղաց դերութենէն ազա-
 տիլ և Աստուծոյ որդոցը ազատութիւնը վայե-
 լել : Կաև աս օրհնեալ Գիրքը դերեղմանին
 մ թութիւնը կը փարատէ , և կը ցուցնէ մեզի
 հանդերձեալ աշխարհքը , ճշմարտապէս Քրիս-
 տոսի հետևողներուն համար պատրաստուած եր-
 ջանկութեան բնակարանները , ու նաև կը ցու-
 ցնէ ան խաւար աշխարհք թշուառութեան բնա-
 կարանը , ուր որ աս աշխարհի մէջ իրենց մեղ-
 քերէն ճշմարտապէս չապաշխարտողները , և փրկ-
 կուելու համար յոյսերնին Քրիստոսի վրայ
 չ'դնողները յաւիտեան պիտի մնան : Օրհնեալ
 է Աստուած որ աս պատուական Գիրքը մեզի
 տուաւ : Երանի՛ թէ անիկայ մեր ամէն օրուան ուս-
 մունքը ըլլար • երանի՛ թէ անոր լուսովը քալինք ,
 ու անոր խոստմունքները սրտերնուս ցնծութիւն
 տային :

3

Բանդի ի՞նչ կը շահի մարդ մը՝ թէ որ բոլոր
 աշխարհք վաստըկի , և իր անձը կորսընցընէ •
 կամ իր անձին համար ի՞նչ ազատէք պիտի տայ
 մարդ : Մատթ . Ժ. 2 . 26 :

ԵՐԲՈՐ աս կեանքը վերջանայ, հոգին յա-
 շխտենապանութեան կ'երթայ • հազարաւոր տա-
 ըններ անցնին երթան, ինքը տակաւին կ'ապ-
 ըն՝ կը խորհի՝ կը զգայ և կը գործէ : Այն միջոն-
 աւոր դարեր ալ անցնին՝ տակաւին հոգին պիտի
 մնայ, կամ անմահ երջանկութեան մէջ կամ ան-
 վախճան թշուառութեան • և մէկ ատեն մը չ'կայ
 որ անոր էութիւնը վերջանայ : Ուստի ի՞նչ բան
 կայ որ կրնայ անմահ հոգիին հետ հաւասար ար-
 ժէք ունենալ : Ըսենք թէ մարդ մը խելքը միտքը
 աշխարհային երջանկութիւններ՝ հարստութիւն
 և պատիւ գտնելու տայ • և մարդուս վայե-
 լելու կարող եղածին չափ հարստութիւն՝ զո-
 րութիւն և պատիւ ստանայ • և ըսենք թէ
 հարիւր տարի ալ ապրի, ի՞նչ կը շահի : Հարիւր
 տարին շուտով կ'անցնի, ու ան ատենը իր հո-
 գին, որուն երջանկութեանը համար երբէք
 չաշխատեցաւ, խելճութիւնով ու թշուառ-
 թիւնով և ամէն բանէ զրկուած իր յաւիտե-
 նական բնակութեանը պիտի երթայ : Ի՞նչպէս
 պիտի արամի ու ցաւի աշխարհիս բարութիւն-
 ները շահելու համար իր վատնած կեանքին
 վրայ, որոնք հիմայ յաւիտենական կորուստով
 կորսուեցան • և որ բնաւ չ'ամսուայ իր անմահ
 հոգւոյն վրայ, ու հիմայ խաւարային մ'թութեա-
 նը մէջ իր յիմարութեան պտուղները յաւիտեան
 պիտի հնձէ : Երանի՛ թէ իմ ամէն օրուան
 գործս ըլլար հոգւոյս փրկութեանը համար աշ-
 խատիլ • ու երբոր աշխարհային սիրոյ և Ասա-

ուած մտանալու փորձութեանց մէջ իյնամ, երանի՛ թէ միշտ միտքս գար ան խորհուրդը, թէ իմ հոգիս յաւիտեան պիտի ապրի :

4

Քու պատուիրանքդ շատ ընդարձակ է : Մատթ. ԺԺԹ. 96 :

ՄԱԴՆՅ օրէնքները միայն արտաքին գործքերու նկատմամբ են, իսկ Աստուծոյ օրէնքը շատ ընդարձակ է, անոր զօրութիւնը ոչ միայն արտաքին գործքերուն, այլ սրտին խորհուրդներուն ու գիտաւորութիւններուն ալ կը հասնի : Սպանութիւն մի ըները Աստուծոյ օրէնքն ալ կը պատուիրէ՝ մարդոց օրէնքն ալ : Մարդոց օրէնքին նայելով սա պատուիրանքը ան ատենը կտարուած կը համարուի, երբոր իրօք մարդասպանութիւն մը ըլլայ • բայց Աստուծոյ առջեւը՝ ատելութիւնը (Ն. ՅԻ՛, Գ. 15) կամ սարսալակը բարկանալը (Մատթ. Ե. 22) սա պատուերին դէմ մեղանշել է : Ասանկ ալ տանաբանեաց օրէնքին միւս պատուիրանքները : Քրիստոս մեկնեց սա պատուիրանքները և ջուշուջ թէ անոնք սրտին խորունկ ակտերը կը տարածին : Մեզի, հրամայուած է աղօթք ընել, բայց պէտք է սրտով ընենք • մեզի հրամայուած է որ

հաւատանք , բայց պէտք է որ Բարե սրբաշին հաւատանք : Մեզի հրամայուած է որ Աստուծոյ երկրպագութիւն ընենք , բայց պէտք է որ հոգիով և ճշմարտաւէեամբ ընենք : Արդ՝ եթէ Աստուծոյ օրէնքները ասանկ սրտի մաքրութիւն կը պահանջեն , ալ սրջտի մեղաւոր եմ ես իր առջին . Աստուած՝ ներէ ինձի մեղաւորիս :

 5

Ես քու վրայովդ տկանջի լրով լսեր էի , բայց հիմա աչքս կը տեսնէ քեզ : Անոր համար իմ անձս կ'արհամարհեմ . հողի ու մոխիրի վրայ կը զղջամ : Յով . ԽԲ . 5 , 6 :

ԵՐԲՈՐ Յոր իր բարեկամներուն նախատանացը դէմ ինքզինքը կ'արդարացընէր , կրցաւ իր անխարդախ շտակութիւնը ու մարդասիրութիւնը անոնց պատմել . բայց երբոր Աստուած ինքզինքը անոր յայտնեց իբրեւ իր դատաւորը , ան ատենը միայն ասիկայ կրցաւ ըսել , "Եթէ իմ անձս կ'արհամարհեմ , և հողի ու մոխիրի վրայ կը զղջամ" : Ասանկ ալ հիմայ , երբոր մէկը ինքզինքը իր ընկերին հետ բաղդատելու ըլլայ , դուցէ պիտի կարենայ համարձակիլ իր արդարութեանը և աղէկութեանը վրայ պարծենալ . բայց երբոր Սուրբ Հոգին

յայտնէ իրեն Ղատուծոյ սրբութիւնը , ան
ասե՛նք պիտի աղաղակէ՛ “պիղծ և մեղաւոր
եմ ես” : Ղատուած անանկ սուրբ է , որ մին-
չև անդամ հրեշտակները անոր առջևը երես-
նին կը ծածկեն , մեղաց խորհուրդը անդամ ա-
նոր աչքին առջևը պղծութիւն է : Սակայն
այն ամենասուրբ Ղատուծոյն աչքը հանապազօր
ու շարունակ մեր սրտին խորութիւններուն
վրայ է , ու մեր ամենածածուկ խորհուրդնե-
րուն ու դրացումներուն կը նայի . և ինչ կը
տեսնէ արդեօք ինքը . Սաղմոսին Ժգ գլխուն 2
և 6 տուներուն մէջ մեզի կը սրտամէ : Սրտեր-
նիս մեր ընկերին բանալու կը սարսափինք . ու-
րեմն ինչպէս պիտի դողանք ու սարսափինք ,
երբոր խորհինք թէ մէկ գաղանի մեղք մը կամ
մէկ պիղծ երեսակայութիւն մը ծածկուած չէ
մեղքը ատող Ղատուծմէն . ինտոր դատաստանի
պիտի կայնինք Ղնոր առջևը . ինտոր պիտի կա-
րենանք արդարանալ :

6

Ու անոր Որդւոյն Յիսուս Քրիստոսին արիւնը
մեզ ամէն մեղքէ կը սրբէ : Ա . Յ . Ա . 7 :

Ի՞նչ ուրախակց լուր է ասիկայ մեզի մե-
ղաւորներու . թէպէտև հոգիներնիս բոլորո-
վն մեղքով պղծուած ու ասպականած են , սա-

կայն ահա աւազան մը , ուր որ կրնանք լուաց-
 ուիլ ու սրբուիլ : Ամենէն մեծ յանցաւորը
 կրնայ հոս ներում դանել , հոս ամենուն ալ
 յոյս կայ : Չ'կայ անանկ մեղաւոր մը , որուն
 մեղքերը Քրիստոսի արիւնը չ'կրնայ քաւել :
 Որովհետև Աստուծոյ սիրելի Որդին իր արիւնը
 մեզի համար թափեց , որովհետև ինքը օրէն-
 քին անէծքը իր վրան առաւ՝ որ մեկը անոր
 անէծքէն ազատինք , վասնորոյ թէ որ ապաշ-
 խարենք մեղքերնիս և անոնք ատենք ու Աս-
 տուծոյ երթանք ու Քրիստոսի սնունտով նե-
 րում խնդրենք , Աստուած մեզի թողութիւն
 կուտայ , և իր Սուրբ Հոգին ալ կը խրկէ՝ որ մաք-
 րէ սրտերնիս , որպէս զի սրասրաստ ըլլանք իր
 երկնային թագաւորութեանը :

7

Ուստի սիրելիներ՝ ատնեց սպասելով ջանա-
 ցէք , որ ան ձեզ անբիծ ու անարատ դանել խա-
 ղաղութիւնով : Ի . Պէտ . Գ . 14 :

Ի՞նչ էն ան բաները որոնց կը սպասենք .
 կը սպասենք ան ժամանակին մտենալուն , որ
 ատեն մտք բարեաւ սխաի ըսենք մեր բարե-
 կամներուն մեր ստացուածքներուն և աշխար-
 հիս մէջ մեզի սիրելի եղած ամէն բաներուն .
 որ ալ ան ատենը մեր մարմինները գերեզմանը

պիտի գրուին և մեր հոգիները Աստուծոյ՝ մեր
 դատաւորին առջև պիտի երթան : Ար սպասե-
 նք ան ժամանակին՝ երբոր Աստուծոյ փողը պի-
 տի հնչուի, ու բոլոր մարդիկ դատաստանի կանչէ,
 երբոր աշխարհս բոլոր իր մէջը եղածներովը
 պիտի այրի, և դատաւորը իր աթոռը պիտի
 նստի, և բոլոր մեռեալները մեծ ու սրտիկ իր
 առջև պիտի կայնին : Ար սպասենք ներկայ
 գտնուիլ ան տեղ, ուր որ Աստուծոյ թըշ-
 նամիները և բարեկամները իրարմէ պիտի զատ-
 ուին, և մեր վերջին դատաւորին բերնէն աս
 խօսքերը անոնց պիտի ելլեն թէ «եկէք իմ
 հօրս օրհնածները», և թէ «մէկ դի՛ դայէք ինձ
 մէ անիծեալներ» : Ար սպասենք ան ժամանա-
 կին՝ թէ որ ճշմարտապէս Վրիստոսի աշակերտ-
 ներն ենք, երբոր իր քովը պիտի ընդունէ մեզ
 ու ալ յաւիտեան իրմէն պիտի չզատուինք : Եր-
 բոր հրեշտակներուն և փառաւոր սուրբերուն
 ընկերութեանը պիտի խառնուինք, յաւիտեան
 առանց մեզաց Աստուծոյ ծառայելու : Արդ՝
 եթէ մենք ասանկ բաներու կը սպասենք, ու-
 րեմն ինսո՞ր արթնութեան մէջ ըլլալու ենք՝ բո-
 լոր մեր կենաքին մէջ Տէրօջը գալուն սպասելով :

Աս խօսքը հաւատարիմ է՝ ու բոլորովն ըն-
 դունելութեան արժանի : որ Վրիստոս Տիառս

աշխարհք եկաւ մեղաւորները փրկելու : Ա .
ՏԻՏ . Ա . 15 :

ԱՄԷՆ որ մեր ականջներուն շատ տեսակ խօսքեր կը հասնին , որոնց կամ շատ քիչ մտադրութիւն կրնենք և կամ բնաւ չենք ընկերբեմն անոնց ճշմարիտ ըլլալուն վրայ կերկբայինք ու ականջ չենք կախեր , և երբեմն ալ անօգուտ բաներ ըլլալուն համար , և կամ թէ մեզի վերաբերութիւն ունեցած չըլլալուն համար : Բայց հոս Աստուծոյ հողիին ներշնչութիւնովը խօսուած մէկ խօսք մը կայ , որ հաւատարիմ է և ճշմարիտ , և արժանի է աղէկ մըտնել ընելու , և ամէն անիկայ լսողներուն շատ օգտակար է : Ասիկայ շատ սքանչելի խօսք մըն է . Յիսուս Քրիստոս՝ Աստուծոյ յաւիտեանական Արդին , իր երկնային աթոռը ձգեց և սախաւար աշխարհքը իջաւ որ փրկէ . և որոնք Դ՛ր թշուառ մեղաւորներս : Եւ սակայն սա խօսքը լսողներուն շատերը անիկայ կարհամարեն կամ բողորովին զանց կրնեն : Բայց թող իմ ամէն օրուան ջանքս ըլլայ սա զարմանալի խօսքերուն միտքը հասկընալ : Երանի թէ բոլոր հողիովս սիրեմ անիկայ , որ իր ողորմութիւնովը մեղաւորները փրկելու համար սա աշխարհս եկաւ :

9

ԵՒ դուք որ յանցանքներու ու մեղքերու մէջ մեռած էիք, ինքք ձեզ կենդանացուց : Եփե . Բ . 1 :

ՄԵՂՔԻ մէջ մեռածները անոնք են, որ Աստուծոյ հոգիովը նոր կեանք մը չեն վարեր : Ինչպէս որ բնական մահով մեռեալը իր բոլորակքը եղած բնութեան գեղեցկութիւններէն բան մը չիմանար, և ամենաբազար նուագարաններուն ձայնը չ'լսեր . և սիրոյ ձայները զինքը չեն շարժեր . ասանկ ալ հոգիով մեռեալը սրբութեան գեղեցկութիւնները չիմանար, Վրիսառոսի ողորմութեան անուշ ձայնը չ'լսեր, և Փրկչին անձառելի սէրը զինքը չըշարժեր : Ատեն մը ես ալ աս վնասկին մէջն էի . և թէ որ Աստուծոյ շնորհօքը կենդանացայ . իմ ամէն օրուան գործքերուս մէջ ցուցնելու եմ իմ մէջս եղած հոգեւոր կենդանութեան կարողութիւնները : Եւ իմ ամէն գործքերս միշտ անոր ազդեցութեամբը ընելովս սէտք է որ ցուցնեմ թէ յախտենական ճրջմարտութեան զօրութիւնը կը դգամ . ես ինքզինքս՝ հոգիովս և մարմնովս Աստուծոյ կենդանի զոհ մը ընծայելու եմ :

Ձեզի կ'ըսեմ, որ ուն օրը Սողոմի դատաստանը աւելի դիւրին պիտի ըլլայ, քան թէ ան քաղաքին : Առ-ի . Ժ . 12 :

ՍՈՂՈՄ այնչափ չարութիւնով լեցուած քաղաք մըն էր՝ որ Աստուած ալ ևս անոր մնայր չուզէց, ու երկինքէն կրակ թափելով անիկայ կործանեց : Եւ սակայն անանկ մեղաւորներ կան, որոնց դատաստանին օրը ընդունելու դատապարտութիւնը, Սողոմացիներուն դատապարտութենէն աւելի սոսկալի պիտի ըլլայ : Ասոնք ան մարդիներն են, որոնք Քրիստոսի սրտմուծիւնը և անոր ըրածները ու մեղաւորները փրկելու համար անոր քաջած չարչարանքները կրլսեն, որոնք Քրիստոսով ողորմութիւն ընդունելու կը կանչուին, բայց չեն տեսր իրենց մեղքերը և չեն ապաշխարեր, և փրկուելու համար յոյսերնին Քրիստոսի վրայ չեն դներ : Ասոնք Աստուծոյ սէքը վար կը զարնեն և անոր սիրելի Արզոյն սրտաբար կ'արհամարեն : Աստուծոյ առջև ասկէջ ատելի մեղք չ'կայ : Ո՛վ Տէր աս մեծ յանցանքէն իմ հողիս փրկէ :

11

Քու խօսքդ խիստ մաքուր է • անոր համար քու
ծառայ անիկայ կը սիրէ : Սաղմ • ՃԺԹ • 140 :

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉՈՒՆ ամենէն երեւի յառ-
կութիւնը իր սրբութիւնն է • մեղքը սատղ սուրբ
Աստուծոյ մը վրայօք կը խօսի • բոլոր իր վարդա-
պետութիւնները և պատուիրանքները սուրբ են :
Մարդոցմէ կը պահանջէ որ թէ գործքով թէ
խօսքով և թէ խորհրդով եղած ամէն մեղքերէն
ետ կենան • և սուրբ ըլլան ինչպէս որ Աստուած
սուրբ է : Աստուածաշունչին բուն սա յատկու-
թիւնն է որ չարերը իրեն թշնամի կ'ընէ : Անոր
մեղք գործել կ'ուզեն, ջեն ուզեր չար կիրքերնին
սանձել • և երբ կը տեսնեն որ սա Գիրքը ամենա-
կարող Աստուծոյ մը անէծքը կը սպաննայ մեղք
գործողներուն վրայ, ստեղծ կուգայ իրենց ու ա-
նիկայ մէկ դի կը նեանն, և ջեն ուզեր որ անոր
հաւատան : Բայց երբոր Աստուծոյ զուկրններէն
մէկը սա Գիրքը կարգայ, անոր սրբութիւնը իրեն
մեծ ուրախութիւն է • կը խնդայ որ ալեղերքին
վրայ թագաւորողը սասնկ մէկ բարի Աստուած
մըն է • կուրախանայ որ բոլոր անոր պահանջմունք-
ները սասնկ սրբութիւն ունին • կուրախանայ որ
իրմէն սրտի մաքրութիւն կը պահանջէ • կը ցնծայ
որ սուրբ երկինք մը կայ, ուր որ կը յուսայ եր-
թալ, և ուր որ սքափ ազատ ըլլայ ամէն մեղքերէ :

Մասուծոյ խօսքին մէջ դասածները բոլոր ասոնք
են , և անոր համար անիկայ կը սիրէ :

12

Վասն զի Քրիստոս Յիսուսի քով ոչ թլփա-
տու թիւեր բան մը կրնայ , ոչ ալ անթլփատու
թիւեր , հասցա հաւատքը՝ որ սիրով 'ի դարձ
կը գրուի : Գաղ . Ե . 6 :

ՄԵԾ օրհնութիւն մըն է քրիստոնէայ ծնողք-
ներէ ծնանիլը , քրիստոնէից հետ համարուիլը ,
և անոնց երեւելի արտօնութիւնները վայելելը :
Բայց այսչափը մեզ չկրնար փրկել : Մաս-
ուած մէկը երկինքը չընդունէր , անոր աս աշ-
խարհիս մէջ քրիստոնէայ կոչուելուն համար .
ոչ , այն երկնից երջանիկ արքայութեանը մէջ
մայրնող մի միայն միջոցը հաւատքն է , այսինքն
Տէր Յիսուսի վրայ եղած ան կենդանի հա-
ւատքը՝ որ սիրով 'ի դարձ կը գրուի . ու Փրկի
չին վրայ հաստատուած ան ճշմարիտ յոյսը ,
որ իր մեր վրայ ունեցած անճառելի սէրէն-
յառաջ եկած այն ամէն յայտնուած բարե-
մասնութիւնները իբրև խկութիւնք կ'ընդունէ
և կ'սպասէ , որ անոր գէժ՝ դարձած բոլոր
մեղքերնուս համար մեր սիրտը կը կտարէ . և
երախտագիտութիւնով ու իր փառքին և սրտ-

ւոյն համար ապրեւու մեծ փափաքով մը անի-
կայ կը լեցընէ : Թէ որ Քրիստոսի վրայ հա-
ւատք ունինք , զինքը պիտի սիրենք , և իր մե-
զի ըրածներուն համար մեծ եռանդով պիտի
փափաքինք՝ սուրբ հնազանդութեան կեանք մը
վարելով մեր երախտապիտութիւնը ցուցընելու :

13

Ասոր համար կըսեմ՝ քեզի • Ներուած են ա-
սոր շատ մեղքերը , ինչու որ շատ սիրեց • Բայց
որո՞ւ որ քիչ կը ներուի , անիկայ քիչ կը սիրէ :
Ղուկ • Է • 47 :

ԱՆՈՒՆԻ որ մեղքին գէշութիւնը ու դառ-
նութիւնը բնաւ զգացած չեն , և որ իրենց
անձին արդարութեանը կ'ապաւինին , Պրկչին
վրայով բողոքովն անհոգ կը կենան , և անոր
մեզի համար ըրածները չեն խմանար : Բայց եր-
բոր Աստուծոյ Հոգին մարդուս միտքը կը լու-
սաւորէ , ու կ'իմացընէ մեղքին ինչպէս զգուելի
և անարդ բան ըլլալը , և Աստուծոյ ասջին իր
որչափ յանցաւոր ըլլալը , ու օրէնքին անեծքովը
բեռնաւորուած ու անոր ասի ճնշուած ըլլալը ,
ան ատենը սրտին մէջ կզգայ Պրկչին երախտիքն
ու սրատուականութիւնը , որն որ իր տեղը անցնե-
լով օրէնքին անեծքը իր անձին մէջ կրէջ :

Ան ատենը կը հիանայ և զարմանքով կը լեցուի Քրիստոսի սիրոյն վրայ, որն որ յայտնած է այսպիսի մեղաւոր արարածներուն վրայ, ու չ'իշտանար իր հոգին զանկից սիրելէն ու իր բերանը զանկից փառաբանելէն : Արդ զայ թէ յաւատենականութիւնը ասանկ մեծ մեղաւոր մը փրկող շնորհքը փառաբանելու բաւական չէ : Ասկից սիրէ, ինչու որ շատ թողութիւն գտաւ :

14

Ես եմ Յիսուսը՝ որ դուն կը հաշածես :
Գործք . Թ . 5 :

ՅԻՍՈՒՍ աս խօսքը ըսած ատենը իր հօրը աջ կողմը բարձրացած էր, ու ալ աշխարհիս վերայ ան ցած վիճակին մէջ չէր որ թշնամիները կարող ըլլային անոր մարմինը չարչարել : Ուրեմն ինչո՞ւ համար Սաւուղի՞ն կ'ըսէ թէ "ինչո՞ւ զիս կը հաշածես" : Անոր համար որ ինքը և իրեն հետևողները մէկ են : Եւ երբոր Սաւուղ անոնք չարչարել և մեռցընել կ'ուզէր, ինքը զգաց թէ ասիկայ իրեն ընել էր : Անպատմելի ուրախութիւն մըն է աս հաշածութի մէջ եղող ճշմարիտ քրիստոնէին : Ինքը չէ միայն ան նեղութիւնը քաշողը, հասկա Քրիստոս ալ իր հետը, ցաւակից է իրեն հետ բոլոր իր քաշածներուն մէջ,

& պիտի չ'թողու անոր թշնամիին որ վերջապէս
անիկայ յաղթէ : Ասիկայ նաև խրատ մըն է
անոնց , որ Քրիստոսի խոնարհ հեռուողներուն
անունը կ'աւրեն ու անոնց ինչ և իցէ կերպով վը-
նասներ կը հասցընեն : Քրիստոս ան ամէնը ի-
րեն եղածի պէս կը սեպէ . և ինչպէս իր առ-
ջեր պիտի կայնին դատաստանին օրը և աս
խօսքերը մտիկ ընեն , թէ "որվհետև աս իմ
եղբայրներուս պինտ պղտիկներէն մէկուն ըրիք ,
ինձի ըրիք" : Մատթ . ԻԵ . 40 :

13

Ան ալ դողով ու ապշութեամբ ըսաւ . Տէր'
ինչ կ'ուզես որ ընեմ : Գործք . Թ . 6 :

ՊՕՂՈՍ առաքեալը քիչ մը առաջ մեծ ատե-
լութիւնով կ'ատէր Նազովրեցի Քրիստոսը ու
անոր աշակերտները , և ձեռքէն եկածը կը-
նէր աշխարհիս մէջէն անոնք բնաջինջ ընելու :
Հիմա իր յանցանքին մեծութիւնը տեսնելով
կը դողայ . և կըսէ ան նոյն Յիսուսին "Տէր'
ինչ կ'ուզես որ ընեմ" : Եր սաստիկ թշնամու-
թենէն դարձաւ , ու խոնարհ և հնազանդ ծա-
ռայ մը եղաւ : Աս իր ներսի դին եղած փոփոխու-
թիւնը Սուրբ Հոգիին հօր կարողութիւնովե-
ր , ան նոյն կարողութիւնը՝ որ Քրիստոս Յի-

տուտով նոր տրարածնէր եղողներուն տրակը
կը փոխէ : Մեղաւորները դարձի բերող Աստու-
ծոյ շնորհքը ամենահարող է : Չկայ այնչափ հզօր
և զօրաւոր հալածիչ մը , որ շնորհքը անխիայ
չկարենայ յաղթել : Աւրեմն մեծ քաջալերու-
թիւն ունինք աղօթելու Պօղոսի պէս հալածիչնե-
րուն և հայոյիչներուն համար , որ նոր տրարածնէր
ըլլան • և անոր պէս աշխատին ասե՛ն մը կործանե-
լու աշխատած հաւատքնին տարածելու :

16

Եւ ըսաւ Յիսուս • Հայր՝ Թողու՞թիւն տուր ա-
մանց • ինչու որ չեն գիտեր ինչ կ'ընեն : Աջ-ի •
Իգ • 54 :

ԵՐԲՈՐ Յիսուս խաչին տանջանքները կը քա-
շէր և աշխարհի մեղացը համար արժանե եղած ա-
նէճքը կը կրէր , իր տանջանացը մէջ կը խորհէր
զինքը ապանողներուն վրայ • անոնց գործած ան
մեծ յանցանքին վրայ , և իրենց դալու թշուա-
ռութիւններուն վրայ • և գթալով անոնց վրայ
կ'աղաղակէ առ Աստուած որ անոնց Թողու՞թիւն
տայ : Արչափ սքանչելի է մեր ճշիջին ողորմու-
թիւնը և համբերութիւնը : Անհնարին բան է որ
աս մահկանացու լեղումնիս կարող ըլլանք պէտք
եղածին պէս իր վրայօք խօսիլ : Նախ պէտք է որ

Երկնային լեզուն սորվինք՝ որ կարող ըլլանք մէկ վա-
յելուչ կերպով մը փաստաբանութիւն ասլ իրեն :
Նրկինքին մէջ մեր Փրկչին սղորսութեանը և սի-
րոյն վրայ երգելը յախտեան մեր ուրախութիւնը
պիտի ըլլայ : Բայց քանի որ աշխարհիս վրայ ենք
ջանք ընենք անոր օրինակին հետեիլ : Որ ասեն
որ բարկանալու կամ ներողամիտ չ'ըլլալու փոր-
ձութեան մէջ իշնանք , մեր Փրկչին մեռած լու-
պէին մէջ զ'մեր սպանողներուն համար ըրած ա-
ղօթքը յի շենք :

17

Որ ամենուն առատասպէս կուտայ՝ ու ճախա-
տեր : Յով . Ա . 5 :

Աստուծոյ խնամքը սղէկ հասկընալու համար
պէտք է որ մարդոց ըրածները Աստուծոյ ըրած-
ներուն հետ բաղդատենք : Վիցուք թէ աշակերտ
մը բժամիտ ըլլայ որ իր համարը ասար անգամ
մեկնուէլէն ետքը՝ նորէն առջի հասկըցածէն աւելի
քան մը չը հասկընայ . մեռասաներորդ անգամ
հարցընելուն՝ արդեօք վարժապետին բերնէն նա-
խատական խօսք մը չէլէր : Ամ գիցուք թէ
սղայ մը հօրմէն ստակ ասնէ հայ գնելու համար
ու կորանցընէ . նորէն առնէ ու կրկին կորանցընէ .
քանի անգամ կրնայ ստակ ուղել իր հօրը համ-
բերութիւնը չ'հաստած : Եւ կամ գիցուք թէ բա-

բեկամ մը ունիս , որմէ շատ անգամ խրատ ուղեցիր ու առած խրատդ չ'բռնեցիր • երբոր նեղութեան մը մէջ ըլլալով կրկին երթաս իրմէ խրատ ուղես , արդեօք առանց նախատահան կերպով մը առջինները յիշելու կամ առանց յանդիմանութեան խօսք մը բերնէն հանելու նորէն անգամ մըն ալ քեզի խրատ կու տայ • չէ , մարդս ասանկ ջրներ : Բայց թէև հազարաւոր անգամ մի և նոյն խնդրուածքները Աստուծոյ մատուցած ըլլաս , թէև արդէն իրմէ ընդունած շնորհքներդ կորսնցուցած և արհամարհած ըլլաս , ու թէև չ'կրնաս իրեն հատասցընել թէ ան նոյն յիմարութիւնովը կրկին անգամ յանցաւոր պիտի չ'գտնուիս , տակաւին կրնաս իրեն երթալ քու բոլոր կարօտութիւններովդ , և անիկայ քեզ "չ'նախատեր" : Ի՞նչ ուրախալից խոստմունք մըն է աս • երբոր մեր ըրած մեղքերուն յիշատակութիւնովը պաշարուած աս ու գողի մէջ կիյնանք վախնալով թէ անոնք մեզ Աստուծմէ յաւիտեան պիտի բաժնեն • ան ստենը մեզի սիրտ ու քաջալերութիւն տալու համար աս խօսքը որչափ հարկաւոր է : Եւ իր բարութիւնը ու ներելու պատրաստ ըլլալուն խորհուրդները մեծ զգուշութիւնով ու աղօթասիրութիւնով մեզ կրչեցընեն որ իրեն դէմ մեղք չ'գործենք :

կան կենաց յուսով ժառանգ ըլլանք : Տէր .
Գ . 7 :

Ի՞նչ . Պողոս՝ ան երևելի առաքեալը միայն
չնորհ. քով արդարացաւ : Ան որ կրնայ ըսել իր
անձին համար թէ «ես մէկ բանով մը սրակաս
չեմ երևելի առաքեալներէն» : Բ . Վերնի . ԺԱ .
5 : Որ շարունակ կը ջանար մաքուր խղճմտանք ու
նենալ Աստուծոյ առջևը ու մարդոց առջևը .
Գործ . ԻԴ . 16 : Որ իր գարձի գալէն ետև իր
բոլոր կեանքը Աստուծոյ փառքին և մարդոց օգ-
տին համար անցուց . որ ինքզինքը Քրիստոսի գոր-
ծերուն նուիրած ըլլալուն համար հալածմունքներ
քաշեց , բանտարգուէցաւ՝ սաստիկ ծեծեր կե-
րաւ , որ շատ անգամ մահուան գուռը հասաւ ,
արդեօք չէր կրնար իր բարի գործքերովը արդարու-
թիւն սրահանջել : Միայն շնորհ. քով փրկուէցաւ :
Մ . Ե՞մ միայն շնորհ. քով : Ան ինքզինքը մեղաւոր-
ներուն գլուխը կը կոչէ . և միայն Քրիստոսի խա-
չովը կը պարծի : Բայց թէ որ իր արժանաւորու-
թեամբը սկստի չ'փրկուէր , ինչո՞ւ համար այնչափ
բարի գործքեր ըրաւ : Իր պատասխանը աս է .
«Քրիստոսի սէրը կը ստիպէ մեզ» : Քրիստոս Յի-
սուսով նոր արարած մը եղած էր , կը տեսներ ա-
նոր սրատուականութիւնը և սէրը . և իր սրտին
մեծ փափաքը իր կեանքը անոր համար անցընել
էր , որ իրեն համար մեռաւ ու յարութիւն ա-
ռաւ :

Դուք Աստուծակ էք՝ օրգեակներ, ու անոնց
յաղթեցիք • քանզի մեծ է անխկայ որ ձեր մէջն է,
քան թէ անխկայ՝ որ աշխարհիս մէջն է : Ա • Յ • Է •
Դ • 4 :

ՊԱՐԶԱՊԷՍ նայելով բոլոր մարդկային սեռը
Աստուծակ է, ինչու որ ինքը ստեղծեց մարմինն իս
ու հոգին իս : Բայց յատկապէս հաւատացեալնե-
րը Աստուծակ են • քանզի անոնք իր շնորհքին
կանչուած ու անով փրկուածներն են : Անոնք
նոր արարածներ են, որ Արարիչին համար եղան :
Բայց քանի որ աշխարհիս մէջ են զորաւոր թշնա-
միներ ունին պատերազմելու, որոնք են աշխարհս
մարմինը ու սատանան : Աւրեմն ինչպէս կ'ըլլայ որ
“յաղթեցիք” կ'ըսուի : Քանզի իրենց յաղթութիւ-
նը ստոյգ է և անշուշտ պիտի ըլլայ • Աստուածա-
շունչը շատ անգամ ըլլալու քանի մը վրայ եղածի
պէս կը խօսի : Բայց ինչո՞ւ համար հաւատացելոց
յաղթութիւնը այսչափ հաստատուն է : Չէ թէ
իրենց անձնական զորութեանը ու բարութեանը
համար, հարա ամենէն զորաւոր մէկը իրենց օգնա-
կան ունենալուն համար : “Մենք ալ աւելի յաղ-
թող կ'ըլլանք անո՞նք” “Ի՞նչու” : Աւաթի ահա կը-
տեսնենք թէ մեղքէ աղատուելու ու Քրիստոսի
թաղաւորութեանը մէջ մանկելու փառքը որի
տալու ենք : Արչափ երաստադիտութիւն ցուցը-
նելու ենք անոր, որ չէ թէ միայն փրկութիւն դոր-

Տեղ մեզի համար, հասցա նաև միշտ իր շնորհօքը
մեզ կը պաշտպանել:

20

Եւ հաց առաւ՝ գոհացաւ, կարեց և առաւ ա-
նոց՝ ու ըսաւ. Աս է իմ մարմինս, որ ձեզի հա-
մար արուած է. ասիկայ բրէք զիս յիշելու հա-
մար: Առ-ի. ԻԲ. 19:

ՈՐՉԱՓ մեծ էր մեր Տէր Յիսուս Քրիստոսի
սէրը, որ իր մասնուած գիշերը երբ բոլոր իր
քաշելու շարժարանքները ու մահուան ապհնապ-
ները իր առջև կը կենար, իր եկեղեցիին՝ բոլոր
գայու դարերու մէջ մէկ մնացուն միսթարութիւն
մը թողելու համար, աս խորհուրդը հաստատեց,
որ զինքը ու իր սէրը յիշելու համար կատարեն: Եւ
երբոր աս խորհուրդը կը կատարենք, պէտք է որ
զինքը յիշենք: Պէտք է որ բոլոր մեզի համար
ըրածները ու քաշածները միտքերնիս բերենք.
Թէ ինչպէս մեր յանցանքներուն համար միտա-
ւորվեցաւ և մեր անօրէնութիւններուն համար
պատժուեցաւ և մահ ճաշակեց, որ մենք ապ-
րինք: Պէտք է որ յիշենք թէ յարութիւն ա-
ռաւ մեզ արդարացրնելու համար, և հիմա Աս-
տուծոյ աջ կողմն է, և մեզի համար միջնորդու-
թիւն կ'ընէ: Պէտք է որ յիշենք թէ ան նոյն
Պրկիչը ներկայ է հիմա ու կը գիտէ մեզ թէ

Քնչ խորհուրդներով և ինչ սրտի զգայուններով
 իր մինչ ՚ի մահ ցուցուցած սէրը կը յիշենք : Եւ
 զինքը յիշած ասեաննիս պէտք է որ մեր սրտերը
 սիրով երախտագիտարթեամբ և հնազանդու-
 թեան նոր դիտաւորութիւններով լեցուին :

21

Տուրերու առուներ կ'իջնեն իմ աչքերէս . ինչ-
 չու որ մարդիկը քու օրէնքդ չ'սրահեցին : Սաղմ-
 ճ՝ ԺԹ . 336 :

ՅՒՄԱՐՆԵՐԸ մեզքը ծաղր կ'ընեն . բայց երբոր
 Աստուծոյ որդիներէն մէկը տեսնէ իր Երկնաւոր
 Հօրը օրէնքը կտարուած ու անոր անունը անար-
 գուած , ցաւը սրաին կը զարնէ . ճիշտ ինչպէս որ
 իր ծնողացը վրայ սիրով լեցուած աղայ մը կը
 վերաւորուի երբոր անոնց անունին նախատուիլը
 կը լսէ : Ասիկայ ճշմարիտ քրիստոնէաները աս
 աշխարհիս մարդոցմէն որոշելու նշան մըն է : Այս
 աշխարհիս մարդիկը կարելի է թէ ետ կենան այն
 տեսակ մեղքերէն , որոնք իրենց ընկերին աչքին
 առջին աչ տակ ի երեցած են , և ուրիշներուն
 դործած մեղքերուն մէջն աչ այնպիսի ամենա-
 սոսկալի չարութիւնները միայն ասեն , որոնք
 յայտնապէս վնասակար են ընկերութեան : Բայց
 քրիստոնէաները կ'ոյգան առ հասարակ թէ իրենց

և թէ ուրիշներուն վրայ տեսած որևիցէ տեսակ մեղքերնուն վրայ : Ար տեսնեն որ Աստուծոյ հրամանները արդար սուրբ ու բարի են , և կուզան երբոր մարդիկ անոնք կ'արհամարհեն : Ահմանաան թէ մեղքը մեծ չարիք մըն է , վասն որոյ կը փափաքին որ բոլոր մարդիկ անկէց ետ կենան : Անոնք կը սիրեն զԱստուած , անոր համար ամէն բանէն աւելի կ'ուզեն որ ամէն մարդ անիկայ սիրէ ու պատուէ :

22

Ինչու որ ամէնքս ալ շատ յանցանքներ կ'ընենք : Յօդ . Գ . 2 :

Մէկ մարդ մը , որ շնորհքին ձեռքովը նոր աչքաբարձ մը եղած է և սրտով կը սիրէ զԱստուած , իր ընկերին հետ արդարութեամբ կը վարուի և իր լեզուն ճշմարտութիւն կը խօսի , ու կրօնքին բոլոր արտաքին պարտաւորութիւնները կը կատարէ , ալ այն անձը Աստուծոյ և իր սուրբ օրէնքին դէմ երբէք կրնայ յանցաւոր համարուիլ : Իր անձին արդարութիւնը փնտոտլ անբարտաւան փարիսեցին • Ո՛չ՝ կը պատասխանէ ասոր • բայց Աստուծոյ խոնարհ ծառան , Այո՛ ամէնքս ալ շատ յանցանքներ կ'ընենք , կըսէ : Եւ թէ որ ճշմարիտ և հոգիով նորոգուած քրիստոնէի

մը հարցընէս , սխալի խոստովանի տրամութեամբ
 թէ ամէն օր մեղք կը գործէ : Ո՞րչափ ցուրտ է
 մեր սէրը Պրիչին վրայ , իր սիրոյն հետ բաղդա-
 տելով : Մեր ըրած պաշտամունքները ո՞րչափ
 անգամ տկար ու միայն ցուցընելու համար են :
 Մեր սէրը ո՞րչափ նուազ է , և ո՞րչափ անգամ
 ամբողջ ժամանակնիս Աստուծոյ ծառայելով ան-
 ցընելը զանց կընենք : Ո՞րչափ անգամ անհնա-
 զանգ կը գանուինք անոր մեղ վատացընելու համար
 խրկած նախախնամական գործքերուն : Ո՞րչափ
 անգամ մեր բերաններէն անողոյշ խօսքեր կը հա-
 նենք : Եւ թէ որ արթնութեամբ սրտերնիս դի-
 տենք , և անոնք Աստուծոյ սուրբ ու անարատ
 խօսքին հետ բաղդատենք , կրնանք իմանալ թէ
 ուրիշ քանի քանի կերպերով կը մեղանչենք :

23

Դուք էք երկրի աղը : Մատթ . Ե . 13 :

ԱՂԻՆ մասնաւոր յաակութիւնը մէկ բան մը
 ապականութենէ պահելն է : Աստուծոյ որդիքը
 երկրիս ալն են , ինչու որ անխիայ բարոյական ա-
 պականութեան դաւնաղէն ու կործանուելէն բողո-
 բովն կը պահեն , որովհետեւ Աստուած անոնց
 համար մեծ երկայնամտութիւնով աշխարհիս մեղ-
 քերուն կը համբերէ : Նոյ երկրիս ալն էր ջրը-

հեղեղէն առաջ • երբոր մարդոց չարութիւնը այնչափ շատցաւ , որ ալ Աստուած միտքը դրաւ երկրիս երեսէն անոնք բնաջինջ ընել • բայց համբերեց մինչև որ տասրանը շինուեցաւ ու Նոյ անոր մէջը տարահով եղաւ : Ղովա Սողոմի այն էր , և ան չարութեան քաղաքը չ'կործանեցաւ մինչև որ Ղովա դուրս ելաւ : Թէ որ Սողոմի մէջ տասը արդար դանուէր , բոլոր քաղաքը կործանուամէ պաշտպանուելու համար հոն բաւական երկրի աղ դանուած կ'ըլլար : Որովհետև Աստուած Աբրահամին ըսաւ որ եթէ հոն տասը արդար դանուէր՝ պիտի չ'կործանէր : Արդեօք Քրիստոսի խոնարհ աշակերանները ատող և հաշածող ամբարտաւան մարդոց մտքերէն կ'անցնի , թէ ան անարդուած մարդոց աղօթքովը ու Աստուածապաշտութիւնովը իրենք Աստուծմէ որչափ ողորմութիւններ կ'ընդունին :

24

Հապա թէ որ աղը իր համը կորսընցընէ , ինքը ինչո՞վ պիտի աղուի • անկէ ետև բանի մը չ'գար , միայն թէ դուրս ձգուելու և մարդոց ոտքին տակը կոխուելու : Մատթ • Ե 13 :

Մէկ անձ մը կամ եկեղեցի մը ստակ քրիստոնեայ անուն մը ունենալով երկրիս աղը չ'կ'անար ըլլալ : Թէ որ ճշմարիտ կրօնքին ուղին չ'կայ , թէ

որ սիրտը հողևոր բաներու վրայ սրազ է, թէ որ հաւատքին ան կենդանի սկզբունքը չկայ, որ սիրով 'ի գործ կը գրուի, ան ատենը ան մարդը կամ ան եկեղեցին աշխարհիս միւս մարդոցը սէս մեղքի մէջ մեռած և բոլոր անօրէնութիւն գործայնութուն կործանմանը ենթակայ է: Հրէաները՝ Աստուծոյ ընտրեալ և սեպհահան ժողովուրդը, երկրիս այն էին, բայց Քրիստոսի ժամանակը թէպէտ մեծ զգուշութեամբ իրենց կրօնքին ծէսերը և տրարողութիւնները կը սրահէին, սակայն հագիով չէր. ու իրենց վարքն ալ անանկ գէշ էր որ Քրիստոս անոնք իժերու ծնունդ կը կոչէ, այսինքն թէ որու հետ հաղորդակցութիւն ընեն անոնք կը թիւնաւորեն: Աս ժողովուրդը ուրիշները կործանուելէ սրահելու տեղը, ինքզինքը սոսկալի կործանաւմով մը կործանեց:

25

Տէրոջը խօսքերը փորձուած են: Սաղմ. ԺԼ, 30.

ԱՍՏՈՒԾՈՅ խօսքին զօրութիւնը շատ անգամ փորձեցին իր թշնամիները. անոր դէմ ելան իբրև թէ անիկայ երկրիս երեսէն բնաջինջ ընելու: Անհաւատները ամբողջ կեանքերնին անցուցին անիկայ սուտը հանելու և անոր մարդոց սրտերուն վրայ ունեցած իշխանութիւնը կործանելու ջանքովն ու աշխատանքովը: Բայց բոլոր իրենց աշ-

խառութիւններն ու ջանքերը հախառակ իրենց նպատակին Աստուծոյ խօսքին զօրութիւնը ևս առաւել յայտնեցին • ցուցրնելով թէ աշխարհիս և դժոխքին բոլոր զօրութիւնները կարող չեն անկկայ յաղթել : Աստուծոյ ստանալիքներուն ճշմարտութիւնը անոնք փորձեցին , որ ծաղր կ'ընէին ըսելով , “Ո՛ր է իր դալուն խոսամունքը” • (Բ Պէք • Գ • 4 •) և ահա յանկարծ կործանումներ վրանին հասաւ ու տեսան թէ Աստուծոյ խօսքը յաւիտենական ճշմարտութիւն է : Աստուծոյ խոսամունքներուն ճշմարտութիւնը անոնք փորձեցին՝ որ յոյսերնին ան խոսամունքներուն վրայ դրին : Եւ ի՛նչ անուշ խնայան անոնց հաւատարիմ խոսամունքներ ըլլալը : Իրենց ամէն նեղութիւններուն մէջ Աստուծոյ խոսամունքները իրենք պահեց և մխիթարեց • և դերեզմանը իջած ժամանակնին իրենց լոյս և ցնծութիւն եղաւ : Իմ բոլոր յոյսս Աստուծոյ խօսքին վրայ սկիսի դնեմ :

26

Ի ուք ձեր անձին տէրը չէք : Ա Կորնթ • Զ • 19 :

ԲՈԼՈՐ արարածները Աստուծոյ են , քանզի անոնք իր ձեռքին գործքերն են : Մարդիկ երբեմն կը կարծեն թէ որչափ աղքատ որ ըլլան , գոնէ իրենց անձը իրենցն է • ձեռքերնին ոտքերնին մարմիննին իրենցն է , և անոնցմով ուղածնին կրնան

ընել : Բայց առանկ չէ , անոնք Աստուծոյ են , և
 Խրատունք չունին իրենց մարմնոյն կամ մտքին կա-
 րողութիւններէն մէկը անոր արգիլած կերպերովը
 գործածել : Եւ յատկապէս քրիստոնեաները ի-
 րենց անձերուն տէրը չեն : Աստուած անոնք չէ
 թէ միայն ստեղծեց , հասցա անհուն գնով մը յա-
 շիակնական մահուանէ ազատեց : Աւրեմն իրա-
 տունք չունինք մեզի համար ապրելու , միայն մեր
 փառքը կամ մեր երջանկութիւնը փնտռելու , հա-
 սցա ամէն բանի մէջ անոր ուղածին պէս ընելու
 ենք , որուն որ ստեղծուածներն ենք : Բոլոր մեր
 խորհուրդներուն և գործքերուն մէջ յիշելու ենք ,
 թէ մենք մեր անձին տէրը չենք : Բոլոր մեր ունե-
 ցածները և անձերը անոր ծառայութեանը նուիր-
 ութելու են , որ մեզ իր արիւնտովը ծախու առաւ :

27

Երբոր կը տկարանամ , ան ստենը զօրաւոր եմ :
 Բ. Կորնթ. • ԺԲ • 10 :

ԵՐԲՈՐ մարդս անգամ մը ինկած և սաղակա-
 նած է բնութեամբ , ալ բոլոր մարդիկ հոգևորա-
 պէս տկար են : Բայց միայն Սուրբ Հոգիով լու-
 տաւորուած հոգին կ'իմանայ իր տկարութիւնը •
 Ճշմարիտ քրիստոնեայն կրնայ տեսնել թէ իր հո-
 գին մեղքով ո՞րչափ սաղակամեալ է , և կըզգայ
 թէ պէտք եղածին պէս չ'կրնար կատարել իր

պարտքերը : Աստուծոյ օրհնեալ օրէնքը սրտի և
 կենաց կատարեալ սրբութիւն կը պահանջէ , բայց
 ինքը շարունակ մեզք գործելու յօժար է , իր ու-
 զածին պէս չ'կրնար ընել : Հոգի . Ե . 15 . 19 :
 Արսիքէ Աստուծոյ օրէնքը ու անոր կատարեալ
 հնազանդութիւն ունենալու կը փափաքի , բայց
 երբոր բարին ընելը կը կամենայ չարը իր քօնէ է :
 Հոգի . Ե . 21 : Ամենէն թեթեւ պարտաւորու-
 թիւնը չ'կրնար տեղնի տեղօքը կատարել , քանզի
 չար շարժասխիթ մը կամ զգացում մը կը գանձե-
 բար իր ըրածներուն հետ խառնուած : Բայց
 երբոր առ տկարութիւնը կը զգայ ան ատենը զօրա-
 ւոր կըլլայ : Ան ատենը շատ արթնութեամբ կը
 գիտէ իր սիրտը ու վարմունքը . ան ատենը շատ ա-
 ղօթք կ'ընէ : Աստուածային պաշտպանութիւնը
 խնդրելով : Ան ատենը մեծ վատահաւթեամբ ինք-
 ղնքը ճիշդին ոտքը կը ձգէ որ ղնքը պահէ : Եւ
 Տէր Յիսուս Քրիստոս երբոր կը տեսնէ իր տկա-
 րութիւնը զգացող և իր յոյսը Աստուածային կա-
 բողութեանը վրայ դնող մարդը , անիկայ իր շնոր-
 հօքը կը լեցընէ : Ան ատենը ան քրիստոնեայն Տէ-
 րովմով ու անոր տուած զօրութիւնովը կը զօրա-
 նայ : Ան ատենը բոլոր իր հոգևոր թշնամիներուն
 մեծ յարթութիւնով կը յարթէ : Հոգի . Ը . 37 :

Աւազոյն և մնայուն ստացուածքներ ունիք ձե-
զի երկինքը : Եբր . Ժ . 34 :

ԱՍՏՈՒԾՈՅ որդիքը շատ անգամ աս աշխար-
հիս մէջ աղքատ ու անարգուած են : Եւ երբեմն
Քրիստոսի ճշմարիտ հետեւողները ըլլալուն հա-
մար է որ աղքատութեան և նեղութեան մէջ կ'իյ-
նան : Բայց Պօղոս իր ժամանակը գանուող նեղ-
եալներուն համար կ'ըսէ թէ , ուրախութեամբ
կրեցին իրենց ստացուածքներուն կողոսպուիլը :
Եբր . Ժ . 34 : Այսպէս քրիստոնեաները իրենց
ընտրած բաժինը աչքերնուն առջին ունեւալով ի-
րենց երկրաւոր ինչ և իցէ վիճակին մէջը միշտ կըր-
նան ուրախ ըլլալ : Իրենց բնակութիւնը երկինքն
է . ան օրհնեալ աշխարհին մէջն է իրենց բաժինը ,
սւր մեղք չ'կայ , և իրենց Փրկիչը հոն է , ու միայն
սրբութիւն և սէր կայ : Եւ աս աշխարհիս մար-
դոցը վայելած ինչ և իցէ բաժինէն աւելի աղէկ է .
քանզի ան բաժինը հոգիին բնութեանը կատար-
եալ յարմարութիւն ունի , և ամէն փառաքները
քոլորովին կը լէցընէ : Բայց ընդհակառակն աս
աշխարհիս վայելութիւնները չեն կրնար սիրտը
կշտացընել : Նաև աս ստացուածքը կը կենայ ու
կը մնայ : Երբոր կեանքերնիս կը վերջանայ , աս
աշխարհիս բարիքներէն մէկը մեզի չ'մնար և մինչև
ան ատենը անգամ շատ քիչերը կը մնան : Բայց
քրիստոնէին ընտրած բաժինը հոգիին հետ մէկ

տեղ կայ ու կրմնայ : Անիկայ յաւիտենական ժա-
նանգութիւն մըն է :

29

Եւ ահա ամէն օր ձեզի հետ եմ մինչև աշխար-
հիս վերջը : Մատթ . ԻԸ . 20 :

ԵՐԲՈՐ Տէր Յիսուս Քրիստոս երկինքը իր հօ-
րը ելեւու վրայ էր , իր աշակերտներուն հրաման
ըրաւ որ բոլոր աշխարհք երթան իր աւետարանը
քարոզեն : Անոնք աղքատ և անարգուած մար-
գիվ էին , և իրենց երկրին զօրաւորները գեռ ի-
րենց Տէրը նոր խաչեր էին • սակայն հրաման ե-
ղաւ իրենց ամէն տեղ առ նոյն խաչեալ Յիսուսը
քարոզել : Վարելի էր թէ առ գործին մեծութե-
նէն և վտանգներէն փախչէին • բայց Քրիստոս
խոստմունք մը ըրաւ անոնց՝ որ իրենք պաշտպա-
նելու և քաջալերելու բաւական էր • “Եւ ահա ամ-
էն օր ձեզի հետ եմ” ըսաւ , մինչև աշխարհիս
վերջը” : Ինքը զիրենք պաշտպանելէն և առաջնոր-
դելէն ետև ալ ինչ վախի տեղ ունէին : Աս խոստ-
մունքը մինչև աշխարհիս վերջը Քրիստոսի բոլոր
ճշմարիտ աշակերտներուն արուած է : Մենք մե-
զի յանձնուած մեծ գործ մը ունինք • պէտք է որ
մեղքին հոգիներնուս մէջ ունեցած զօրութիւնը
բոլորովին կործանենք • և ուրիշները Քրիստոսի
թագաւորութեանը առաջնորդելու և իր աւետա-

լանը բոլոր աշխարհք տարածելու համար ձեռքերնէս և կածը ընելու ենք : Նաև զօրաւոր թշնամիներ ալ ունինք , որոնք են աշխարհս մալմինք ու սասանան , որոնց հետ միշտ պատերազմելու ենք . բայց մեր տակնակարող զբիւիչք միշտ հետերնիս ըլլալէն ետև , ալ վախի բան մը չունինք : Սրհնեալ է իր անունը , որ մեզի սա պատուական խոստմունքը տուա :

30

Եւ անոր անունովը ապաշխարութիւն ու մեղաց թողութիւն քարոզուիլ բոլոր ազգերու մէջ՝ Նրուաաղէմէն սկսած : Աւ. Ի. Բ. 41 :

ՔՐԻՍՏՈՍԻ մէկ պատուէրը առիկայ էր թէ "Մերեցէք ձեր թշնամիները" . անանկ պատուէր մը որ սուաջուց անոր վրայ երբէք մէկը խորհած չէր : Աս պատուէրը նաև ինքը օրինակով ցուցուց զինքը սպաննողներուն համար խաչին վրայ աղօթք ընելովը : Եւ հիմա ալ որ աշխարհէս հեռանալու վրայ էր , ան նոյն ոգիովը կը հրամայէ որ իր օրհնեալ աւետարանը առաջ Նրուաաղէմ քարոզուի : Հոն ինքը մտանուեցաւ՝ նախատուցաւ՝ ծեծուեցաւ ու խաչը կըլաւ : Հոն էին անոնք որ "խաչը հանէ առիկայ խաչը հանէ առիկայ" կանչեցին : Հոն էին իր ձեռքերուն ու ոտքերուն դամբը զարնողները , և իր քաշած վիշափըը ծաղր ընելով

Խանութ համար լեղիով քացախ սուտղները , ու
 դերեզմանին քարին կնիք զարնողները . Աւետա-
 ռանին առաջին քարոզութիւնը սկսաք էր որ անոնց
 և անոնց նմաններուն ըլլուէր : Անոնց ըսուելու
 էր որ "Ձեր թախած արիւնը մինչեւ անգամ ձեր
 մեղքերն ալ քաւեց , եկէք ան նոյն Յիսուսին , ու
 յաւիտենական կեանք ընդունեցէք" : Չկայ ու-
 նանկ մեծ մեղք մը որ Քրիստոսի արիւնը կարող
 չ'ըլլայ անխիտ սրբելու : Չկայ այնչափ մեղաւոր
 հոգի մը որ ապաշխարէ ու իր փրկութեան յոյսը
 միայն Քրիստոսի վրայ դնէ , ու չ'կրնայ մեղայ
 թողութիւն գանել :

31

Քանզի որչափ որ Աստուծոյ խոստմունքները
 կան , իր մէջը Այո՛ կն , ու իր մէջը Ամէն կն՝ Աս-
 տուծոյ փառքին համար մեր ձեռքովը : Բ. Կորնթ .
 Ա . 20 :

ԱՍՏՈՒԱԾ շտա մեծ և սրատուական խոստ-
 մունքներ ըրաւ , և անոնց ամէնը Քրիստոսով կն :
 Թէ որ ճշմարտապէս Քրիստոսի մէջն ենք , աս
 խոստմունքները մերն են : Մենք անոր հետ մէկ
 ենք , անոր համար հայրը սիրով մեր վրայ կրնա-
 յի . և մեզի ամէն շնորհք և փառք կը խոստանայ :
 Աս խոստմունքներուն ամէնը հաւատարիմ և ճշ-
 մարիտ կն . անով Այո՛ կն ու անով Ամէն : Մար-

դիկ մեզ կը խաբեն , բայց Աստուած մարդ չէ որ
 սուս զրուցէ , ու մարդոյ որդի չէ որ իր խոսա-
 մունքէն դառնայ : Թո՞ւ . ԻԳ . 19 : Որչափ որ
 մեծ ըլլան խոսամունքները և որչափ որ արժանաւո-
 րութիւն չունենանք , թէ որ Քրիստոսի մէջն ենք
 ամէնը մերն են : Արնանք վասահիլ Տէրոջը խո-
 սածներուն վրայ . ան խոսամունքներուն ա-
 մէնքն ալ Աստուծոյ փառքին համար են : Անոնք
 իր շնորհքը կը փառաւորեն . քանզի արժանաւո-
 րութիւն չունեցողներուն ընծայուած ամենամեծ
 պարգևներ են : Անոնք իր ճշմարտութիւնը կը
 փառաւորեն , ինչու որ անոնց ամենուն ալ ճշ-
 մարիտ ըլլալը պիտի տեսնուի և բոլոր երկինք փա-
 ռաբանութիւն կարդայ ըսելով “Քու ճամբայնե-
 ներդ արդար և ճշմարիտ են ո՛վ Թագաւոր ամէն
 ազգերուն” : Յայ՞ . ԺԵ . 3 :



ՓԵՏՐՈՒՆԲ

1

Ինչու որ Որդին մարդոյ եկաւ կորսուածը փրկելու : Մատթ . ԺԸ . 11 :

ՔՐԻՍՏՈՍԻ Փրկիչ կանչելովն իս կը ցուցընենք թէ մենք կորսուած մեղաւորներ ենք : Թէ որ մեր մէջը բարի բան մը ունինք , անով Աստուծոյ ընդունելի ըլլալու . թէ որ կարողութիւն ունինք մենք մեզմէ մեր փրկութիւնը ձեռք բերելու . թէ որ իրաւունք կրնանք ունենալ մեր բարի գործքերովը երկինքը մտնելու , ան ատենը անոնցմէ չենք , որոնք փրկելու համար Քրիստոս աշխարհք եկաւ : Բայց թէ որ տեսնենք թէ ինքիրենն իս կորսուած ենք , թէ Աստուծոյ օրէնքը կտարած ենք ու մեր մեղացը համար բնաւ չենք կրնար քաւութիւն մը ընել , հասար յաւիտեան իր բարկութեանը արժանի ենք . թէ որ զգանք թէ հողին իս անանկ սրտեալ է մեղքով որ Աստուծոյ ընդունելի գործք մը խօսք մը կամ խորհուրդ մը չենք կրնար ընել . թէ բոլորովին անօգնական ենք ու յաւիտեանս պիտի կորսուինք թէ որ միայն իր գթութիւնովը մէզ չ'փրկէ . ան ատենը փրկուելնուս յոյս կայ : Ինչու որ Քրիստոս աշխարհք եկաւ , ճիշտ ասանկ կորսուած մեղաւորները փրկելու :

Մենք ինտոր պիտի ազատինք՝ թէ որ անհոգ ըլ-
լանք անանկ մեծ փրկութենէ մը : Եհր . Բ . 3 :

ՄԵԶ փրկելը Աստուծոյ գործքերուն ամենէն
մեծն է : Զարմանալի կերպով մը մեզի փրկու-
թիւն պատրաստեց : Բոլոր երկինքը շարժեցաւ
երբոր Քրիստոս աշխարհք եկաւ մեզաւորները
փրկելու : Աս մեծ գործքին գաղանխքը հրեշտակ-
ները կը ցանկային տեսնել : Ա Պէթ . Ա . 12 :
Բայց թէ որ աշխարհիս ունայնութիւններէն խաբ-
ուելով մեզի համար սա պատրաստուած փրկու-
թեանը բնաւ չնայինք ու թէ որ անիկայ զանց ը-
նենք ու վար զարնենք . մենք սա իր մեծ գործքը
և սքանչելի սէրը արհամարհե՛նաւս համար Աս-
տուծոյ բարկութենէն ինտոր պիտի ազատինք :
Մեր հոգիները կորսուելու վրայ են . մեղանչե-
ցինք և Աստուծոյ անեծքը վրանիս եկաւ , ու
յաւիտենական մահուան գառապարտութեան
տակը ինկանք : Ճամբայ մը կայ՝ և միայն մէկ ճամ-
բայ մը կայ , որով կրնանք սա ահարկու անեծքէն
ազատիլ . այսինքն Քրիստոսի երթալով ու իրմէ
փրկութիւն խնդրելով : Բայց թէ որ խելքերնիս
սա աշխարհիս բաներուն տանք և Քրիստոսի կա-
տարած ան մեծ փրկութիւնը թողունք , թէ որ իր
սղորմութեանը չիյնանք , մեր մեղքերուն արժանե-
կըսած պատիժէն ինտոր պիտի կարենանք ազատիլ :

3

Մարդոց սահմանուած է մէկ անդամ մը մեռ-
նիլ : Եւր . թ . 27 :

ԱՆՏԵՐԸ սա աշխարհիս մէջ անանկ կ'ապրին
իրբև թէ իրենց մնայուն բնակարանը : Անանկ է
սանդուն և ջերմ սպալ մը իրենց շահը մնտուե ու ,
սպախ ստանալու և զբօսանք ընելու հեա են , որ
կարծես թէ յաւիտեան հոս սխախ ապրին : Գա-
լիքները կը հաշուեն , իբրև թէ ապրելիս շատ ա-
ղէկ դիտեն , և յաջողութեան մէջ այնքան կը հը-
ստարտանան , ու ինքզնիքնին մեծ մեծ նեղութիւն
ներու աակ կը խոթեն՝ որ կարծես թէ հազարաւոր
զարեւր անանկ արգիւնքները սխախ վայելեն : Մըտ-
քերնուն ջեն անցըներ որ Աստուծոյ խօսքը կ'ըսէ
թէ սխախ մեանիք . թէ և սա խօսքը ամենուն հա-
մար ալ է : Եւ ջէ թէ միայն ամէնքե ալ սխախ մեանին ,
հասրա յայտնի ալ ջէ թէ որ բոպէնին սխախ մեանին :
Մէկն ալ ջ'դիտեր մինչև հետեեալ օրը , կամ մի-
ջև յաջորդ ժամը ապրիլը . կեանքն որ և իցէ մի-
ջոցին մէջն ալ մահուանէ ապահովութիւն չ'կայ :
Տղաքներուն՝ երիտասարդներուն՝ ջոխահաս մար-
դիկներուն և ծերերուն ալ գլխուն վրայ է մահը :
Հարուստը և աղքատը , խմաստուելը ու տղէար ,
պատուաւորը ու նուաստը , ամէնքն ալ նոյնպէս
օր մը սխախ մեանին : Ուրեմն ի՞նչ մեծ յիմարու-
թիւն է երկրաւոր բաներու ետեւ իյնալը , քանզի

չենք գիտեր թէ մինչև անգամ մէկ օր մը պիտի
կարենանք անոնք վայելել :

4

Ու անկէ ետքը դատաստան : Եբր . թ . 27 :

Թէ որ մահէն անդին ուրիշ կեանք մը չըլլար ,
բոլորովին աշխարհային բաներով յափշտակուել-
նիս այնչափ մեծ յիմարու թիւն մը պիտի չ'սեպ-
ուէր : Բայց տես որ մահէն ետքը դատաստան ալ
կայ . ան ատենը Աստուծոյ առջին պիտի կայնինք
դատուելու : Մեր գործերուն պէս պիտի դատ-
ուինք . մեր կեանքին մէջ բոլոր ըրած գործքեր-
նիս և բոլոր ունեցած գիտաւորութիւննիս պիտի
դատուին : Ան ատենը յայտնի պիտի ըլլայ թէ
կեանքերնիս ինչպէս և ինչ բաներով անցուցինք .
աշխարհային հոգերու ու հեշտութիւններու զբա-
ղեցանք , եթէ ջանացինք որ Աստուծոյ կամքը ը-
նենք ու իրեն հնազանդինք : Արդեօք մեզքերնիս
սպաշխարեցինք ու հաստատ գիտաւորութիւնով
անոնք ձգեցինք , եթէ մեզքը սիրեցինք ու Փր-
կիչը ատեցինք և զԱստուած մոռցանք . ասոնք ա-
մէնքը ան ատենը յայտնի պիտի երևին : Հոն կեղ-
ծաւորութիւն ու խաբէութիւն չ'բանիր . Աստ-
ուած ամենուն սիրար կը քննէ , ու խորհուրդ մը
և զգացում մը իր աչքէն ծածկուելի հնար չէ :
Աստուած արդար դատաւոր է , և հոն մեծի ու

արդարև ինչպէս չ'կայ : Ան օրուան վճիռները վեր-
ջին և անդառնալի վճիռներ են . Ադամին ամեն
մէկ զաւերներուն կամ յաւիտենական կեանք կամ
յաւիտենական մահ պիտի տրուի :

5

Ու իր մէջը դանուիմ . չէ թէ իմ արդարութիւ-
նըս ունենամ որ օրէնքէն է , հասրա Քրիստոսի հա-
ւաստութիւնը եղած արդարութիւնը՝ որ Աստուծմէ է
հաւաստութիւն : ՓԷԼԻՊ . Գ . 9 :

ԵՐԲՈՐ Աստուծոյ առջևը դատաստանի կայ-
նիք , պիտի չուզենք ինքզինքնիս արդարացրնելու
համար մեր անձնական արդարութիւնը յառաջ
բերել : Ան ատենը պիտի տեսնենք թէ՛ որչափ
սուրբ է եղեր Աստուծոյ օրէնքը , և անոր պա-
հանջմունքներէն որչափ պակաս դանուէր ենք :
Ան ատենը պիտի տեսնենք թէ՛ մեր աղօթքները՝ ո-
ղորմութիւնները և մեր ամենէն աղէկ գործքերուն
ամենն ալ իրենց հետ խառնուած մեղքեր ունին
ու թողութեան կարօտ են : Բայց թէ որ Քրիս-
տոսի մէջն ըլլանք , անոր արդարութիւնը ունենա-
լովիս ան օրը պիտի արդարանանք , և երկնից թա-
գաւորութեանը մէջ պիտի ընդունուինք : Պողոսի
մեծ աշխատութիւնը Քրիստոսի մէջը դանուիլն էր ,
և իր բոլոր ջանքերը սա նարատակիս կընայէր :
Մենք ալ սա բանին համար աշխատելու ենք : Ան

որք մի միայն Վրիստասի արդարութիւնը պիտի
մնայ . թէ որ աս արդարութիւնը մերն ըլլայ , ալ
վսիմնաշու բան մը չունինք : Եւ թէ որ մեղքեր-
նիս սպաշխարենք և հոգինիս իր ողորմութեանը
ձգենք , անշուշտ պիտի ընդունէ : և իր արդարու-
թիւնովը մեղ հագուեցրնէ :

6

Եւ սոսնք պիտի երթան յաւիտենական տան-
ջանքը : Մատթ . ԻԵ . 46 :

ՀՈՍ մեր Տէրը կը խօսի և կ'ստորագրէ մեզի վեր-
ջին ահաւոր գառատամնին և այն երկու անխո-
փոխ վճիռներուն վրայօք , որոնց մէկին կամ միւ-
սին տակը պիտի իյնայ ամէն մարդ : Եւ ան ա-
տենը սոսնք՝ այսինքն Գառաւորին ձախ կողմը
կայնողները պիտի բաժնուին երթան այն տանջա-
նայ բնակարանը յաւիտեանս տանջուելու : Ահ
արդեօք ինչ բաներէ և սէսկէց պիտի բաժնուին .
այն ամէն իրենց սիրելի եղած աշխարհային երջան-
կութիւններէն , ու բոլոր մարդկային ազգին բարի
մատեն : Հրեշաահներէն՝ այսինքն ան հոգիներէն ,
որոնք շատ կը սիրեն աս աշխարհիս մէջը գանուող
սուրբերուն սպասաւորութիւն ընել : Սուրբ Հո-
գիէն՝ որ միսիթարիչ է բոլոր Աստուծոյ ժողովրդո-
ցը : Ան Փրկիչէն՝ որ այնչափ սիրեց իրենք մինչև որ
իրենց համար մեռաւ ա : Հօր Աստուծմէն որ ա

մէն ողորմութիւններուն պարգևողը և ամէն երջան-
կութիւններուն աղբիւրն է : Ասե ինչպէս որ հիմա
աս ներկայ վայելչութիւններէն բաժնուեցան դա-
ջին, անանկ ալ ապումնիին մէջ կամ ժամանակէ
մը ետքը աս բաները կրկին վայելչութեամբ բոլոր յոյ-
տերէն ալ պիտի բաժնուին, ինչու որ իրենց
պատիժը յաւիտեանական է : Իրենց պատիժը
դոնէ ըստէ մը պակասած տեսնելու կարող պի-
տի չըլլան : Գարեր դարերու վրայ պիտի
անցնին ու տակաւին սատանային և անոր հրեշ-
տակներուն հետ յաւիտեանս յաւիտենից Աստու-
ծոյ բարկութիւնը պիտի կրեն : Խղճմանքնին ալ
պիտի զբուցէ իրենց թէ աս իրենց քաշած պա-
տիժը արդար է : Ո՛հ երանի թէ ազատ մնայի աս
սոսկալի դատապարտութենէն : Օ՛րհնեալ է Աստ-
ուած որ մեզի փրկութեան ճամբայ մը կայ :

7

Ու ալ մահ պիտի չըլլայ : Յայտ • ԻԱ • 4 :

ՄԱՏՐ, իբրև դաժան և անողորք լի բռնաւոր մը
կը զարհուրեցընէ ամէն մարդ և մամուսորապէս
մեղաւորները : Բնականաբար ամէն մարդ կը
վախնայ անկէ, և բոլոր իր ունեցածները կը զոհէ
թէ որ ազատիլ հնար ըլլայ : Սակայն անհնար է
որ անոր ձեռքէն փախչինք • ամէն ստեն մեր վը-
րայ և մեր շուրջն է մեզ կամ մեր սիրելիները կը
յափշտակէ : Եւ իր մեղէ երբ դառն ամենեկին չենք

գիտեր • մէկ բոպէ մը ապահով չենք իր զօրութե-
նէն : Անոր ծառայող սրաշտօնակալները հիւանդու-
թիւններ ու ցաւեր են , և ան բնակարանը ուր որ մեզ
կը տանի մութ գերեզմանն է , ուր ապականութեան
պիտի գառնանք , որդերը մեր մարմիններովը պի-
տի կերակրին : Բայց վերի բնակարանները որ
Վրիստոս պատրաստեց իրեն հեռուողներուն հա-
մար , աղատ են մահուան զօրութենէն : Ո՛հ՝ որ-
չափ պիտի ուրախանան անոնք՝ որ մահուան եր-
կիւղովը բռնուած բոլոր իրենց կեանքը իբրև գերի
անոր իշխանութեանը տակ անցուցին , երբոր տես-
նեն թէ մահը ալ յաւիտեան իրենց վրայ իշխա-
նութիւն չունի : Ուրեմն վախնալու չենք թէ մա-
հը պիտի գայ ու մեր ուրախութիւնները վերջա-
ցրնէ և մեզ մեր սիրլիներէն բաժնէ , ու անէ
տանի ան մութ գերեզմանին մէջ գոցելու : Չէ ,
ինչու որ մեր կեանքը ան ատենը յաւիտենական
կեանք պիտի ըլլայ :

8

Ո՛չ սուգ՝ և ո՛չ աղաղակ՝ և ո՛չ ցաւ պիտի ըլլայ
ասկէ ետև : Յայտ • ԻԱ • 4 :

ՔԱՆԻ որ աս մարմնոյս մէջն ենք երկինքի եր-
ջանկութեանը վրայ ճիշտ գաղափար մը չենք կր-
նար ունենալ : Բայց Աստուած մէկ քանի բաներ ը-
սաւ , որ երկինքին մէջ չ'կան • և ուր տեղ որ տ-

նոնք չ'ըլլան հոն երջանկութիւն կայ : Աս աշ-
 խարհքս արամութիւնով լեցուն է . մարդիկնե-
 րուն անպգամութիւնը ու չարութիւնը մեղի նեղու-
 թիւն կու սան : Աս կեանքիս մէջի նեղութիւննե-
 րուն կէս մասը մարդիկ իրարմէ կը կրեն : Աղ-
 քատութիւնն և անոր հետ ընկերացած գեշու-
 թիւններն ալ մեղ կը նեղեն : Բարեկամներն ա
 մեռնիլը մեղի ցաւ է , ու նաև հիւան դութիւններէ
 ու ցաւերէ շատ նեղութիւն կը քաշենք : Երբոր
 հիւանդանանք , ան ատենը կ'իմանանք թէ առող-
 ջութիւնը ինչ է ծ օրհնութիւն է : Աստուծոյ իր
 սիրելիներուն համար պատրաստած թաղաւորու-
 թեանը մէջ ոչ մահ կայ , ոչ արամութիւն և ոչ
 ցաւ : Թէ որ անանկ տեղ մը երկրիս վրայ ըլլա-
 րոր որ աս նեղութիւնները չըլլային ո՞րչափ ան-
 թիւ մարդիկներ շուտով հոն պիտի վազէին բնա-
 կելու : Ալ ո՞րչափ փափաքելու ենք երկնքին
 մէջ բնակելու , ինչու որ հոն չէ թէ միայն մահ-
 ուանէ՝ ցաւէ ու արցունքներէ ազատ պիտի ըլ-
 լանք , հասրա յաւիտենական երջանկութիւն պի-
 տի վայելենք :

9

Թէ որ մէկ մարդ մը նորէն չ'ծնանի , չ'կրնար
 Աստուծոյ թաղաւորութիւնը տեսնել : Յիշ .
 Գ . 5 :

ԱՅՏՈՒԱԾ Թագաւորութիւն մը պատրաստեց, ուր մարդոց որդիները սկիախ ընդունի, բայց հարկաւոր պատրաստութիւն մը կայ ընելու որ առանց անոր մէկը չ'կրնար ընդունուիլ : Աս Թագաւորութիւնը աշխարհի Թագաւորութիւններէ շատ ասորքեր է . և ան պատրաստութիւնը այսինքն փոփոխութիւնը՝ որ մարդիկ հոն մտնելէն առաջ ունենալու են, այնչափ մեծ է որ նորէն ծնանիլ կամ նորէն ստեղծուիլ կը կոչուի : Եւ ասիկայ կատարող ան հզօր Կախը Սուրբ Հոգին է : Ասիկայ միայն արտաքին փոփոխութիւն մը չէ, հասարակ սիրտ մը նոր փոփոխութիւններ և նոր սկզբունքներ ունենալ է : Մարդիկ երբ գեռ նորէն ծնած չեն, ամէն բանէ աւելի իրենց անձը կը սիրեն, նոյնպէս ալ մեղքը և աշխարհային հեշտութիւնները շատ հաճելի է իրենց : Բայց նորէն ծնանելէն ետքը Աստուած կը սիրեն հոգիով . և իրենց մեծ ուրախութիւնը անոր կամքը գիտնալու ընելն է : Ա՛ստեն մեղքը և կը ցանկան անկէջ ազատ ըլլալ . երկնային բաներու հետ կ'ըլլան, և կը ջանան ամէն բանի մէջ Քրիստոսի օրինակին հետեիլ : Իսկ հոգիս ալ անանկ նորէն ստեղծուելցա՛ւ : Ո՛վ Տէր գուն գիտես :

Եւ սրբութեան, որ առանց ասոր՝ մէկը սկիախ չ'տեսնէ Տէրը : Եբբ . Ժ.Բ . 14 :

ԱՄԷՆ՝ ԵՒ ալ յոյս ունինք որ սու կեանքէն
 ելելնէս ետքը Աստուծոյ հետ պիտի ըլլանք • բայց
 բան մը կայ, որ առաքեալը Աստուծոյ հոգիին
 ներշնչութիւնովը կը ըսէ թէ առանց անոր պիտի
 չկրնանք ակնեւ Տէրը : Աս բանը սրբութիւնն
 է, որ է սրտին Աստուծոյ սուրբ օրէնքին հետ միա-
 նալը : Աստուած այնչափ կը սիրէ իր զաւկները
 որ ամենեին թող պիտի չսայ պիտի հոգիներուն դալ
 ու անանց երջանկութիւնը խանդարել : Եւ թէ
 որ հնարաւոր ալ ըլլար մեղաւորներուն ան սուրբ
 աշխարհը մանել, հոն իրենց հաճելի բան մը պիտի
 չգտնէին : Երկինքին մէջը եղող սուրբներուն եր-
 ջանկութիւնը Աստուծոյ վրայ ունեցած սերերնէն
 ու Փրկչին ներկայ ըլլալէն յառաջ կուգայ : Անոնց
 ուրախութիւնը Աստուած փառաբանել ու իր
 համբը ընելն է : Անոնք Աստուծոյ և ան աշ-
 խարհքին բոլոր ժառանգներուն սրբութիւնովը կը
 զուարճանան : Բայց չ'նորոգուած մեղաւոր մը ա-
 սանկ բաներէ երջանկութիւն չ'կրնար քաղել : Ին-
 քը առ աշխարհիս մէջ զ՝Աստուած չէ փնտում,
 ու հոն ալ անոր մշտնջենաւոր ներկայութեանը
 պիտի չ'կրնայ դիմանալ : Սեղքը կը սիրէ և երկ-
 նից սրբութիւնը դժտիքէն ահարկու պիտի ըլլայ
 իրեն : Արեւն մեղաւոր մը փնչպէս պիտի կարենայ
 երկինքը մանելու յարմարութիւն ունենալ : Մի-
 այն իր մեղքերը Բրիտանի արիւնովը մաքրուելով
 և իր սկսող Սուրբ հոգիէն նորոգուելով :

Ամէն ատեն Տէրս իմ առջիս դրի • որովհետեւ
 իմ աջ կողմս է, պիտի չսասանիմ : Սաղմ •
 Եղ. 8 :

ԱՍՏՈՒԱԾ ամէն ատեն մեր բոլորակին է •
 բայց մենք միայն հաւատոյ աջօք կրնանք տեսնել
 զինքը : Աղէկ կրկոյ որ միշտ զգանք իր ներկա-
 յութիւնը, իրեն նայինք հաւատքով, և ամէն
 ատեն առջենիս ունենանք : Անիկայ մեր պաշտ-
 օղանն է, աչ ի՞նչ կայ վախնալու : Դաւիթ կ'ըսէ
 թէ, "Որովհետեւ իմ աջ կողմս է, պիտի չըսա-
 սանիմ" : Անիկայ մեր առաջնորդն է • մենք
 տկար ու աղէտ ենք, և մեր ճամբայները շատ ան-
 դամ վտանգաւոր և դժուարին են : Բայց թէ որ
 մեր ամէն ճամբայներուն մէջ զինքը ճանչնանք,
 թէ որ զինքը մեր առաջնորդը սեպելով շարու-
 նակ իրեն նայինք, մեր ճամբայները մեր առջին
 պիտի ուղղէ : Մերք մեր մեծ օրինակն է, կը հրա-
 մայէ մեզի իրեն պէս սուրբ և ողորմած ըլլալ :
 'Ասի • Զ • 36 : Ա Պեթ • Ա • 15, 16 : Թէ որ
 նորոգուած ենք՝ իր պատկերին պէս ենք • և եր-
 բոր իր նմանութիւնովը արթննանք իր առջին կե-
 նալու յարմար պիտի ըլլանք : Նաև ինքը շարու-
 նակ մեր խորհուրդները խօսքերը և ճամբայները
 կը քննէ • թէ որ ասիկայ միշտ մտքերնիս ըլլայ՝
 մեզաց դէմ ևս առաւել զգուշութիւն կ'ընենք, ա-
 ւելի մեծ եռանդով Աստուծոյ կը ծառայենք, մեր

ապաշտամուկները աւելի ջերմեռանդութեամբ կ'ընենք, և մեծ փափաքով սրբութեան ետեւէ կ'ըլլանք: Ո՛հ թէ ջանայի աս ճշմարտութիւնը միշտ աչքիս առջևը ունենալ: Տէ՛ր դուն իս կը անեսնես:

12

Ուր որ Յոյն ու հրէայ, թլփատութիւն ու անթլփատութիւն, բարբարոս, Սկիւթացի, ծառայ կամ աղատ չ'կայ. հասրա Քրիստոս է ամէնք՝ և ամէն բանի մէջ: Կող. Գ. 11:

ԱՌԱՔԵԱԼՐ, կ'ըսէ թէ անոնք որ հին մարդը վրաներնէն կը հանեն ու Քրիստոսի հետ մէկ կ'ըլլան, իրենց առաջուց ունեցած աղգային որոշումները ու ասեղութիւնները բոլորովին կը վերնան. որոնց ամէն մէկուն Քրիստոս կ'ըլլայ ամէնը և ամէն բանի մէջ: Ատեն մը հրէայները ենքզինքնին Աստուծոյ սեպհական ժողովուրդը կը սեպէին և բոլոր ուրիշները կ'ասակին: Յոյները իրենց ուսումնականութեանը և քաղաքավարութեանը վրայ սթարճնալով բոլոր ուրիշ աղգերը բարբարոս կ'անուանէին: Բայց հիմա ամէն անոնք, որ Քրիստոսի հոգին կ'ընդունին բոլոր աս որոշումները կը վերցնեն. Քրիստոս անոնց ամէնը և ամէն բանի մէջ կ'ըլլայ, և բոլոր Քրիստոսով եղողները իրարու հետ

մէկ և իրարու եղբայրներ կ'ըլլան: Այն անկէջ ետքը աշխարհիս վրայ մի միայն սա մեծ որոշումը կը մնայ, որ Տէր Յիսուս Քրիստոսը իրենց Պրկիչ ընդունողներն և չ'ընդունողները իրենց մէջը ունին: Թէ որ իմ Պրկիչս իմ ընկերներուս մէկը կ'ընդունի և կը սիրէ, անիկայ ինչ անուն որ ունենայ և ինչ ազգէ որ ըլլայ ես ալ ընդունելու և սիրելու եմ: Թէ որ մէկը կը սիրէ Տէր Յիսուսը և անոր կը ծառայէ, ան մարդը իմ եղբայրս է:

13

Թէ որ մէկը Քրիստոսի հոգին չ'ունի, անիկայ անորը չ'է: Հոգի. Ը. 9:

ԱՅՍ հոս մէկ փորձ մը կայ, որով կրնանք դիտնալ թէ արդեօք մենք Քրիստոսի նն ենք, ու յաւիտենական կենաց ալ ժառանգ: Թէ որ քրիստոնէայ ենք, ուրեմն նորոգուած ենք Քրիստոսի նըմանութեանը պէս: Ասիկայ թէ քիչ և թէ շատ ամէն Քրիստոսի ճշմարիտ աշակերտներն ալ ունին. բայց իրաւ է թէ քանի որ սա աշխարհիս վրայ ենք մեր ունեցած նմանութիւնը անկատար է: Թէ որ իր հոգին չ'ունինք, անորը չ'ենք: Քրիստոսի հոգին ունենալը ինչ է: Նքը կըլլոր աշխարհիս վրայ էր ինչ դիտաւորութիւններ ունէր. ինչ էին իր զգացումներն ու ջանքերը: Ննչ

Ար ան հոգին որ զինքը երկինքէն երկիրս իջե-
ցուց : Իր յատուկ փափաքները Աստուծոյ փառքին
յայտնուիլը ու մարդոց հոգիներուն փրկուիլը էին :
Իր կերակուրը ան էր որ զինքը խրկողին կամքը ը-
նէր և անոր դործքը կատարէր : Յովհ . Գ . 34 : Եւ
կը պարտէր մարդոց մարմիններուն և հոգիներուն
բարիք ընելու : Գործ . Ժ . 38 : Եւ երբոր աս դոր-
ծերը կ'ընէր կը հոգնէր և ցուրտէ ու անօթութենէ
ալ նեղութիւն կը քաշէր . և մինչև անգամ իր կեան-
քը սուաւ , որ անանկով Աստուծոյ օրէնքը պատ-
ուէ և մեղաւորներուն փրկութեան ճամբաց մը բա-
նայ : Եւ հիմա՝ արդեօք ես Քրիստոսի հոգին ու-
նիմ . արդեօք իմ յատուկ փափաքս Աստուած փա-
ռաւորէն է . կը փափաքիմ որ իմ ընկերներս փրկ-
ուին : Աստուծոյ փառքին համար որչափ ծանր
աշխատութիւն ըլլայ քաշելու յօժարութիւն ունիմ :
Թէ որ աշխատելովս և նեղութիւն քաշելովս պիտի
կրնամ հոգիներուն փրկութեանը միջոց մը ըլլալ ,
արդեօք պատրաստ եմ իմ անձս ատելով բոլոր աս
բաները ընելու :

14

Ինչպէս որ մէկ հայր մը կը գթայ իր որդոցը վը-
րայ , այնպէս ալ Տէրը կը գթայ իրմէն վախցողնե-
րուն վրայ : Մատթ . ԾԳ . 13 :

ԱՄՏՈՒԱԾ մեծ էակ մըն է . ինքը ստեղծեց աս
 աշխարհքը և բոլոր միւս աշխարհքներն ալ . բոլոր
 արարածներուն կեանքը իր ձեռքն է : Հրեշտակ-
 ներ և հրեշտակապետներ իր բոլորակքը առած են ,
 որոնք միշտ իրեն երկրպագութիւն և սպասաւորու-
 թիւն կ'ընեն : Արդ՝ աս մեծ Աստուածը կրնայ այն-
 չափ խոնարհիլ մեր կարօտութիւնները հոգալու
 համար , որ իր առջևը մենք որդերու պէս ենք :
 Այո՛ թէպէտ և այսչափ բարձր է , սակայն բոլոր
 իրմէ վախցողներուն վրայ հայրական դուժով կը-
 նայի : Երբոր տղայ մը ցաւ մը կամ արամուծիւն
 մը կուենենայ , կատարեալ վստահութիւնով կը վա-
 զէ իր հօրը կ'երթայ իր նեղութիւնները անոր զը-
 րուցելու , գխոնալով թէ անիկայ ցաւակից պիտի
 ըլլայ և իրեն մխիթարութիւն մը պիտի տայ : Ա-
 սանկ ալ մենք կրնանք բոլոր մեր արամուծիւննե-
 րովը Աստուծոյ երթալ ու ինքը հայրական սիրով
 պիտի գթայ մեր վրայ և մեզ մխիթարէ : Տղայ մը
 թէ որ չարութիւն մը ընելով պատժոյ արժանի ըլ-
 լայ , իր բարերար հայրը սիրով ու կարեկցութիւ-
 նով շարժուած անոր պէտք եղած պատիժը կու-
 տայ : Ասանկ ալ մեր Երկնաւոր հայրը յօժարու-
 թիւնով մեզ նեղութեան և թշուառութեան մէջ
 չ'ձգեր , հապա մեր օգուտին համար մեզ կը ջեխէ
 որ իր սրբութեանը մասնակից ըլլանք : Թէ որ իր հօ-
 րը անհնազանդութիւն ընող տղայ մը զղջալով եր-
 թայ և թողութիւն խնդրէ , իր հայրը ուրախ երե-
 սով զինքը կ'ընդունի և անոր վրայ կ'ուրախանայ :
 Ասանկ ալ մեր Երկնաւոր հայրը ամէն ապաշխա-
 րտ և դարձի եկող մեղաւորները կ'ընդունի :

15

Մհա՛ անխկայ աղօթք կ'ընէ : Գործ • Թ • 11 :

ՍՕՂՈՍ արդեօք առաջ աղօթք չ'է՞ր ընէր • ինք մե-
զի կ'ըսէ՛ թէ իր կրօնքին պինտ զգուշաւոր ճամբուն
պէս՝ փարիսեցի ապրէր է : Գործ • ԻԶ • 5 : Փարի-
սեցիներն իրենց կրօնքին բոլոր արտաքին կանոն-
ները շատ ճշգուծեամբ կը պահէին , և յատկապէս
շատ երկայն աղօթքներ կ'ընէին : Բայց հիմա Սօ-
ղոս անանկ կերպով մը աղօթք կ'ընէր , որ առա-
ջուց բնաւ ան կերպովը ըրած չունէր : Աս իր
ըրած աղօթքը խոնարհութիւնով և զղջումով
և իբրև կորսուած մեղաւոր մը Տէր Յիսուս Քրիս-
տոսի ապաւինելով կ'ընէր • բայց առաջ հպար-
տութիւնով լեցուն սրտով մը և ինքզինքը ար-
դար սեպելով աղօթք կ'ընէր : Ան աղօթքնե-
րը Աստուծոյ առջև գարշելի էին , բայց հի-
մա իր աղօթքները լուեցան և անոնց պատաս-
խանք ընդունեց : “ Մհա ինքը աղօթք կ'ընէ ”
խօսքը կը ցուցընէ թէ ալ անխկայ արիւնա-
հեղ հաշածիչ մը չէ , հասլա Քրիստոսի խո-
նարհ հաւատացեալներէն է : Աս խօսքը Աս-
տուծոյ ամէն որդոցը համար կրնանք ըսել թէ
“ Մհա անխկայ աղօթք կ'ընէ ” • այսինքն զղջ-
ջումով և հաւատքով լեցուն սրտով մը կ'աղօ-
թէ • ինչու որ միայն ան տեսակ աղօթքը Աս-

տուճոյ ընդունելի է : Ու Տէր Յիսուս Քրիստոսի անունովը աղօթք կ'ընէ , ինչու որ մի միայն անոր միջնորդութիւնովը կրնանք հօրը մօտենալ : Ստէպ աղօթք կ'ընէ , ինչու որ Տէր թղմէն սրատուէր առած է , թէ "Անդադար աղօթք ըրէք" : Ա թէ՛ս • Ե • 17 :

16

Ուստի եթէ դուք՝ որ չար էք , ձեր զաւակներուն աղէկ ընծաներ տալ դիտէք , որչափ աւելի ձեր հայրը՝ որ երկինքն է , բարի բաներ ուխտի տայ անոնց՝ որ իրմէ կը խնդրեն : Մատթ • Է • 11 :

ԱՍՏՈՒԾՈՅ մեզի խոնարհելը շատ զարմանալի է • կը հրաւիրէ մեզ և կը հրամայէ որ բոլոր մեր կարօտութիւններովը իրեն երթանք , և ամէն պէտք եղած օրհնութիւնները իրմէ խնդրենք : Բայց ինքը դիտէ թէ մենք թշուառ և ողորմելի մեղաւորներս որչափ թերեհաւատ ու վախկոտ ենք , և ինքզինքը իբրև հայր ցուցընելով մեզ կը քաջալերէ : Եւ չար մարդոց իրենց զաւակներուն վրայ ունեցած զգացումները մեզի օրինակ կը բերէ՝ որ մենք հաւատանք թէ ինքը որ անանկ բարի է ու սիրով լեցուն , պատրաստ է մեզի բարի բաներ տալու թէ որ իրմէ

խնդրենք : Ասկէ աւելի ալ ինչ բանի կարօտ
 ենք . Աստուծոյ հարստութեանք բոլոր գուռ-
 ները ահա մեր առջևը բայ են . և մենք հրա-
 շիրուած ենք ինչ որ կուզենք խնդրել ու առ-
 նել : Կատարեալ վստահութիւն կրնանք ունե-
 նալ թէ Տէրը մեր խնդրած բաները մեզմէ չ'խը-
 նայեր , երբ կը տեսնայ որ անոնք մեզի աղէկ
 են : Ինքը շատ աղէկ գիտէ թէ ո՞ր բանը մեզի
 օգտակար է , և կը գլծայ մեր վրայ ինչպէս որ
 մէկ հայր մը կը գլծայ իր զաւակներուն վրայ .
 և ամէն բան մեզի տալու ինքը կարողութիւն ու-
 նի : Ուրեմն մեր բոլոր փափաքները Աստուծոյ
 թողունք , և ինքզինքնիս իր ձեռքը ձգենք ոչ վախ
 և ոչ հոգ մը ունենալով , ինչու որ իր խօսքը
 հաւատարիմ ու ճշմարիտ է :

17

Ուստի եթէ գուք՝ որ չար էք , ձեր զաւակ-
 ներուն աղէկ ընծաներ տալ գիտէք , ալ ո՞րչափ
 աւելի ձեր հայրը երկինքէն Սուրբ Հոգին ակ-
 փ տայ անոնց , որ իրմէ կը խնդրեն : Ղուկ .
 ԺԱ . 13 :

ԱՒԵՏԱՐԱՆԸ հոս մեզի կը սորվեցընէ թէ
 մեր փնտռելու բարիքներուն ամենէն մեծը ո՞րն
 է , այսինքն թէ Սուրբ Հոգին : Ասիկայ է փրկ-
 կութեան ամենէն մեծ շնորհքը որ առանց ա-

սոր բնաւ մեղաւոր մը պիտի չ'փրկուի : Թէ որ Սուրբ Հոգին միտքերնիս չ'լուսաւորէր որ մեղքին չարութիւնը տեսնայինք, մենք ինչպէս մեր մեղքերը պիտի ապաշխարէինք : Թէ որ Սուրբ Հոգին մեր կարծրացած սիրտերը չ'խոնարհեցունէր, մենք մեր Վրկիչը ինչպէս պիտի սիրէինք : Եւ թէ որ Սուրբ Հոգին մեր սիրտերուն մէջը բնակելու չ'խոնարհէր, մենք հիսմա ինչպէս պիտի կրնայինք մեր վրայ եկած փորձութիւններէն անխտանգ ազատիլ և Քրիստոսը ուրանալէն ետ կենալ : Թէ որ Սուրբ Հոգին մեր տկարութիւնբուն օգնութիւն չ'հասնէր, մենք ինչպէս կրնայինք մէկ ընդունելի աղօթք մը մատուցանել : Թէ որ Սուրբ Հոգին մեր միտքարիչը չ'ըլլար, նեղութեան ժամանակնիս ինչ բանով կրնայինք միտքարուիլ : Թէ որ Սուրբ Հոգին մեզ չ'սրբաշնչէր մենք ինչպէս կրնայինք մեղքին իշխանութենէն ազատիլ : Եւ աս օրհնեալ Հոգին պիտի դայ և մեր մէջը բնակի, թէ որ զ'նքը աղօթքով խնդրենք : Պատուակա՛ն խոստմունք : Երանի թէ ես ամէն օր հաւատքով աղօթելով աս խոստմունքին խսկութիւնը փորձով խմանայի :

Եւ մարտաւորը հեռուն կայներ էր, ու շէր ուզէր տչքն ալ երկինքը վերջընել. հապա իր

կուրծքը ծեծելով կ'ըսէր . Աստուած՝ ողորմէ
 ինձի մեղաւորիս : Դ^ո-ի . ԺԸ . 13 :

ԱՍԻԿԱՅ ընդունելի աղօթքի մը օրինակ է ,
 որ Քրիստոս մեզի տուաւ : Ինչ էին սա աղօթ-
 քին նշանաւոր յատկութիւնները : Աղօթող
 մարդը մեղաւոր էր և իր մեղաւոր ըլլալը խնայ-
 ցեր էր : Եւ իր յանցաւոր ըլլալը այնչափ զգա-
 ցած էր , որ մինչև անգամ իր աչքերը չէր հա-
 մարձակեր երկինքը վերցընել : Իր մեղքերուն
 համար արամութիւնով լեցուած էր , ինչպէս
 որ կուրծքը ծեծելէն կը տեսնուի : Միայն ողոր-
 մութիւն կը խնդրէր . ինքը Աստուծմէ բան մը
 չ'պահանջէր իր բարի գործքերուն իբրև հատու-
 ցում մը ըլլալու . չ'աշխատեցաւ ինքիրմէն ար-
 դարութիւն մը գործելու , հասաւ ինքզինքը Աս-
 տուծոյ ողորմութեանը ձգեց . և խոստովանեցաւ
 թէ միայն մեղաւոր էր . ու ասանկ Աստուծոյ
 գնաց : Աստուած մեղաւորները արդարաւ ընէլու
 ճամբայ ունի , և մարտաւորը արդարացաւ : Մեր
 Փրկիչը ասանկ մարդուն համար կ'ըսէ , թէ " Ան
 որ իր անձը կը խնարհեցընէ պիտի բարձրա-
 նայ " : Դ^ո-ի . ԺԻ . 11 :

Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ ձեզի , որ իմ ա-
 նունովս ինչ որ խնդրէք հօրմէն , պիտի տայ
 ձեզի : Յ^ո-ի . ԺԶ . 23 :

ՄԵՆՔ մեղաւոր ենք, բայց Աստուած սուրբ է. ուրեմն ինչպէս կրնանք իր դիմացը ելլել և մեր խնդրուածքները իրեն մատուցանել: Աս հարցումէն պիտի սարսափէինք եթէ անանկ բարեկամ մը ունեցած չըլլայինք, որուն անունովը համարձակութիւն ունենայինք Աստուծոյ երթալու: Ան բարեկամը Աստուծոյ սիրելի Որդին է, որուն միշտ հայրը մտիկ կ'ընէ: Նաև ան մեր Փրկիչը ու Տէրն է և մենք իրենն ենք: Ան իր արիւնովը մեզ ծախու առաւ ու մեզ իրենները՝ ու իր բարեկամները և իր եղբայրները անուանեց: Մատ. . ԻԵ. 40: Իրեն հետ աղգականութիւն ունենալովսիս, հայրը մեզ ալ կը սիրէ: Ճշմարիտ է թէ մենք մեզմէ արժանաւորութիւն մը չունինք, որ անով համարձակինք Աստուծոյ մօտենալու. բայց մենք չենք երթար ու մեր անունովը Աստուծմէ օրհնութիւններ խնդրեր, հասլա Քրիստոսի անունովը կ'երթանք, որ անոր ունեցած արժանաւորութիւնը անհուն է: Ճշմարիտ է թէ Աստուծոյ բարկութեանը արժանի ենք, բայց Քրիստոս մեր աեղը անէծք կրեց: Ուստի ինչ կարօտութիւն որ ունենանք, թէ որ Տէր Յիսուս Քրիստոսի վրայ եղած հաւատքովը երթանք և անոր անունովը մեր խնդրուածքները Աստուծոյ մատուցանենք, ամէն պէտք եղած բարիքները պիտի ընդունինք: Աս անունը ամենայաղթ է, և թէ որ անիկայ ճշմարտապէս մեր Փրկիչն է, ամէն բան մերն է:

Եւ առաւօտուն շատ կանուխ ելլելով դեռ չուս-
ցած՝ ելաւ ու գնաց անապատ տեղ մը , և հոն
աղօթք կ'ընէր : Մարկ . Ա . 35 :

ՅԻՍՈՒՍ երբոր հրատարակաւ քարոզութիւն
ընել սկսեց՝ առի՞ն անդի՞ն կը պտըտէր և բարե-
գործութիւն կ'ընէր , և իր բոլոր ժամանակը ա-
սանկով կ'անցընէր : Մարդիկ միշտ իր բոլորաթի-
քը կը ժողովուէին իր խօսածները մտիկ ընելու
կամ իր հրաշքները տեսնելու , կամ իրենց հի-
ւանդութիւններէն բժշկուելու : Շատ անգամ մի-
այն գիշերը կրնար առանձնանալ . բայց աղօթ-
քը չէր կրնար ձգել . ուստի առտուանց շատ
կանուխ ելաւ առանձին տեղ մը գնաց և հոն ա-
ղօթք ըրաւ : Անիկայ մեղք չունէր խոստովա-
նելու և թողութեան կարօտ չէր , բայց իր հօ-
րը հետ հաղորդակցութիւն՝ ունենալը կը սիրէր :
Արդ՝ ան որ Քրիստոսի հոգին չունի , անիկայ
անորը չէ : Մենք ալ թէ որ ճշմարիտ Քրիս-
տոնեայ ենք աղօթքը կերակուրէ և հանգստու-
թենէ աւելի պիտի սիրենք : Արդեօք մէկը կըր-
նայ Աստուած սիրել ու անոր հետ հաղորդակ-
ցութիւն ընելու չ'փափաքիլ : Արնայ ըլլալ որ
մէկը իր մեղքերը ապաշխարէ ու անոնք Աս-
տուծոյ չ'խոստովանի : Արնայ մէկը Քրիստոսի
սէրը յարգել ու զանիկայ չ'փառաբանել : Արդ-
եօք կրնայ ըլլալ որ մէկը իր տկարութիւնը և

Աստուծոյ կախում ունենալը խմանայ, ու անկէց սրաշտարանու թիւն չխնդրէ : Արնայ մէկը Աստուծոյ խոստմունքներուն հաւատալ ու անոր խոստացած օրհնութիւնները չխնդրել : Արդարեւ թէ որ Աստուած աղօթք ընելու արտօնութիւնը մեզի չտար, մենք թշուառ էակներ պիտի ըլլայինք : Օրհնեալ ըլլայ իր անունը, որ հրաման ունինք մեր աղաչանքները իրեն մատուցանելու :

21

Ու անոր անունը Յիսուս դնես . քանզի անիկայ իր ժողովուրդը իրենց մեղքերէն պիտի փրկէ : Մատթ . Ա . 21 :

ԵՐԲՈՐ Աստուծոյ որդին մարդոց փրկութեան գործին ձեռք զարկաւ, իր դիտաւորութիւնը միայն մեղաց թողութիւն պատրաստել չէր : Արդարեւ ասիկայ մէկ մեծ գործ մըն էր նկատմամբ մեր անկեալ վիճակին ու յաւիտենական երախտագիտութեան ալ արժանի, սակայն ինքը սակէ աւելի մեծ և ուրիշ կարևոր դիտաւորութիւն մըն ալ ունէր իր աշխարհ գալուն մէջ : Թէ որ մարդիկ իրենց յանցանքներուն թողութիւն գրանէին ու տակաւին մեղքը սիրէին, իրենց թրշուառութենէն աղատուած պիտի չըլլային . վասն զի չար սրտով մարդս երջանիկ չ'կրնար ըլլալ,

մինչև անդամ թէ որ Աստուած իր օրէնքին ա-
 նէ՛քքը անոր վրայէն վերցնէ՛ ալ : Բայց Քրիս-
 տոս աշխարհք եկաւ չէ՛ թէ միայն մեզ մեզքին
 պատիժէն փրկելու , հասլա նաև մեզ անոր իշ-
 խանութեանն ալ ազատելու : Իր գիտաւորու-
 թիւնն է բոլոր իրեն եկողներուն սիրտերը մաք-
 րել , և զանոնք Աստուծոյ պատկերին վերանո-
 րոգել , ու վերջապէս ամբի՛ծ և անարատ անոնք
 իր սուրբ թագաւորութեանը մէջ մտցնել : Ին-
 քը մեր յանցանքներուն և մեղքերուն մէջ մեր
 անօգնական ըլլալը դիտէ , ու մեզ կը հրաւիրէ
 իրեն երթալ և թողութիւն գանել . մեր մեղ-
 քով հիւանդացած հոգիները իրեն ձգել , ու ինք
 անոնց հոգեւոր առողջութիւն սխախտայ : Մե-
 ղաց և սատանային իշխանութեան այն կրկին
 շղթաները , որոնցմով հոգիներն իս աշխարհին և
 անոր ունայնութիւններուն հետ կապուած են ,
 կ'արձրիկ , ու արտօնութիւն կը շնորհէ մեզի
 Աստուծոյ զաւակներուն փառաւոր ազատութիւ-
 նովը պարտիլ : Իր սրբարար հոգին կուտայ մե-
 ղի , որ հոգին իս մեղաց ամէն աղտեղութիւննե-
 րէն և արատներէն մաքրէ : Ինտո՛ր երախտադէտ
 ըլլալու ենք իրմէն , որ մեզի համար այսքան մեծ
 բաներ ըրաւ :

Երանի՛ անոնց՝ որ անօթի ու ծարաւ են ար-
դարութեան, ինչու որ անոնք պիտի կշտանան :
Մատթ . Ե . 6 :

ԱՆՕԹՈՒԹԵԱՆ, ու ծարաւութեան զգացում-
ները մեր բնութեան ամենէն զօրաւոր զգացում-
ներն են . ու թէ որ անոնց պիտայքները չ'հոգանք
կը մարինք և կը մեռնինք : Աս բառերը զօրաւոր
փափաք ցուցնելու համար Սուրբ գրոց մէջ
չատ անգամ կը գործածուին : Քրիստոնեան շատ
աղէկ կը հասկընայ այն « անօթի ու ծարաւ ար-
դարութեան » խօսքին նշանակութիւնը . ինքը
չատ անգամ սրբութեան անանկ զօրաւոր փա-
փաք մը կը զգայ, որ ինչեպէ՛ աշխարհային բան
մը անիկայ ամենեւին չ'կրնար յագեցընելը : Ծեղ-
քին շարութիւնը կը տեսնայ ու անոր ինչ զըզ-
ուելի և հոգին կորսնցընող բան ըլլալը կ'իմա-
նայ : Փրկչին ստորոգելիքները կը տեսնայ ու ա-
նոնց գերազանցութեանը վրայ կ'զմայլի անոր
կատարեալ սրբութիւնը կը սիրէ, և անոր պատ-
կերին փոխուելու կը փափաքի : Բայց երբոր
իրեն վրայ կը նայի ու մեղքով ապահանուած
ըլլալը կը տեսնայ . երբոր իր տկարութիւնը կ'ի-
մանայ ու իր բարի գիտաւորութիւններուն գէմ
չատ անգամ մեղքի մէջ լնալը կը տեսնայ, գը-
լիթի կը վախնայ թէ իր փափաքները բնաւ

սխախ չլեցուին , և թէ բնաւ կատարեալ սրբ-
բութիւն սխախ չգտնայ : Աս վիճակին մէջ Փրկ-
չին առ պատուական խոստմունքը՝ թէ “ Անոնք
սխախ կշտանան ” , կատարեալ յոյս և մխիթա-
բութիւն է իրեն , թէ առ իր փափաքները ա-
ւատարէն սխախ լեցուին :

23

Քանզի ինծի արուած Աստուծոյ շնորհքովը
առ կ'ըսեմ ձեր մէջը եղող ամէն մէկուն , որ
արժան եղածը մտածելէն աւելի բան չմտա-
ծէ . հասցա զգաստ կենալ մտածէ . ինտոր որ
Աստուած ամէն մէկուն բաժնեց հաւատքին
չափը : Հոռվ . ԺԲ . 3 :

ԱՌԱՔԵԱԼԻՆ գրուցած առ խօսքը ճշմա-
րիտ խոնարհութեան կատարեալ մեկնութիւն մը
կրնանք սեպել : Ինքզինքնիս շատ բարձր սեպե-
լու չենք , կամ իրօք ինչ որ ենք՝ մեր վրայ ան
կէց աւելի համարում ունենալու չենք : Պէտք
է որ ինքզինքնիս Աստուծոյ օրէնքին հետ բաղ-
դասենք , և անսնանք թէ ան կատարեալ կշե-
ռովը դատուինք նէ ինչ աստիճանի մէջ կ'ըլլանք :
Պէտք է որ մեր ստացուածքներուն մեր վիճա-
կին և մեր ունեցած միտքին վրայ խորհինք , թէ
արդեօք ասոնք մեր արժանաւոր ըլլալուն հա-

մա՛ր մեզի արուեր են թէ մեր երկնաւոր Հայրը
անոնք մեզի ձրի սարգսեր է • որով զինքը սի-
րելու և իրեն հնազանդելու աւելի մեծ սարտա-
ւորութեան տակ ինկած ենք : Ահաք է որ խոր-
հինք թէ քանի քանի անգամ Աստուծոյ դէմ
մեղանչեցինք , ու թէ իր առջևը ինչ բարք ու-
նեցանք : Մեր անձերուն վրայ ունեցած համա-
րումնիս պէտք է որ մեր հաւատքին չափովը ըլ-
լայ : Մեր ունեցած մեղքերուն նայելով արդ-
եօք մեր ըրած աստղաարութիւնը բաւական է :
Արդեօք մեր Փրկիչը իր արժանաւորութեանը չափ
կը սիրե՞նք • պէտք եղածին պէս Աստուծոյ ճշը-
մարտութեանը ասպաւինե՞ր ենք : Մեր ունեցած
քրիստոնէական զգացումները արդեօք բուն մի
սրտերէն յառաջ եկած են թէ Սուրբ Հոգիին
ներգործութիւնովն են :

24

Հասա խոնարհութիւնով մէկզմէկ ձեր անձին
լու սեպեցէք : Փիւ՛ռ • Բ • Ծ :

Ի՛նչ անձին վրայ իբրև արդար նայող մէկու
մը շատ դժուար կուգայ Առաքեալին աս
սատուէրը կատարել • բայց Քրիստոսի խոնարհ
աշակերտին՝ որ ստրկած է իր անձին վրայ պէտք
եղածէն աւելի համարում չունենալ , շատ դիւ-

րին է : Անիկայ աւելի աղէկ կիսանայ իր սրաին մեղքերը , քան թէ ուրիշներունը . և կը խորհի թէ յիրաւի ուրիշ մէկը երբէք իրեն պէս և իրեն չափ մեղք գործած չէ : Երբոր կը տեսնայ թէ ուրիշները իր ըրածներէն շատ մեծ չարութիւններ կը գործեն , կը խորհի թէ ինք անոնցմէ աւելի շնորհքներ ընդունած է , թէ ինքը Աստուծոյ և Քրիստոսի վրայ անոնցմէ աւելի տեղեկութիւն ունի , և հետևապէս իր գործած յանցանքները անոնց յանցանքներէն մեծ են : Ար խորհի իր վայելած արտօնութիւններուն վրայ , թէ ինչպէս Սուրբ Հոգին գործեց իրեն հետ և իրեն համար ինքը ապաշխարութեան բերելու . կը խորհի . Աստուծոյ ողորմութեանը ու Քրիստոսի իրեն ցուցուցած սիրոյն վրայ , և անանկ կը սեպէ թէ իրեն պէս մեղաւոր չ'կայ : Ար խորհի թէ մեծ երջանկութիւն սխալի ըլլայ յաւիտենականութեան մէջ ան շնորհքը փառաբանել , որ կարող է իրեն պէս մեծ մեղաւոր մը փրկել :

Մեր անձը Տէրոջը կը սպասէ , մեր օգնութիւնը ու մեր վահանը անիկայ է : Սողմ . ԼԳ .
20 :

ՀԱՒԱՏԱՑԵԱԼՆԵՐԸ, կը զգան թէ Տէրն է
 գերազոյն բարին՝ կենաց աղբիւրը՝ իրենց մեծ
 ցնծութիւնը՝ իրենց ամէնը ու ամէն բանի մէջը :
 Կող. Գ. 14 : Ասիկայ զգալով իրենց փափաք-
 ները յագեցընելու համար աշխարհային բաներ
 չեն փնտռեր, հասլա Տէրոջը կը սպասեն : Մեծ
 փափաքով Աստուծոյ կը սպասեն, և իրենց յոյ-
 սը անոր ողորմութեանը վրայ է : Իրենց աչքե-
 ըր միշտ անոր վրայ են . ձախորդութեան օրե-
 ըր համբերութեամբ իրեն կը սպասեն, մինչև
 որ անոր երեսին լոյսը վրանին ծագէ և իրենց
 սրտերը ուրախութեամբ լեցընէ . նեղութեան օ-
 ըրերը չեն տրանջար, ինչու որ Տէրոջը ասպաւի-
 նած են : Հաւատացեալներուն Տէրոջը սպասե-
 լով ունեցած քաջալերութիւնները Գաւիթ մեղի
 կը ցուցընէ, ըսելով « Մեր օգնութիւնը և մեր
 վահանը անիկայ է » : Անոնք խօսնութեան կարօտ
 են թէ իրենց պարտաւորութիւնները կատարելու
 համար թէ երբոր նեղութիւններու տակ են և
 մանաւանդ երբոր մահուան շունքին մութ ձո-
 րէն պիտի անցնին : Նաև զօրաւոր և արթուն
 թշնամիներ ունենալնուն համար պաշտպանի մը
 կարօտութիւն ունին . ամէն պէտք եղած ատեն
 իրենց օգնականը Տէրն է . եւ թշնամիներնուն
 ամէն նետերէն զիրենք պահելու համար իրենց
 վահանը ան է :

Ես պառկեցայ ու քնացայ • արթընցայ, վա-
սըն զի Տէրը զիս պաշտպանեց: Սաղմ. Գ. 5:

ՀԱՏԵՐԸ, կան որ կ'արթըննան ողջ առողջ ի-
րենց անկողիններէն կ'ելլեն ու իրենց ամէն օր-
ուան գործքերուն հետ կ'ըլլան առանց ամենե-
ւին մտքերնէն անգամ անցընելու՝ թէ յամէն
բանէն առաջ Աստուծոյ գոհութիւն մատուցա-
նելու սրբազան պարտաւորութիւն մը ունին:
Դաւիթ ասանկ չէր ըներ • իր քնացած ատե-
նը լզինքը պահպանող ձեռքը կը ճանչնար և
գիտէր որ Տէրոջը պահպանութիւնովը նորէն ար-
թընցաւ: Քուներ մահուան պատկերն է, քնա-
ցած ատեննիս մեր բոլորտիքները եղածներէն
բան մը չենք զգար և մեր անձերուն ամենե-
ւին չենք կրնար հոգ տանիլ: Թէ որ հազարա-
ւոր վտանգներ ալ մեր վրայ գան՝ մենք ոչ կ'ի-
մանանք և ոչ ալ անոնք մեզմէ հեռացընե-
լու բան մը կրնանք ընել: Կարելի է որ մահը
մեզի մօտենայ ու մենք չիմանանք • բայց մէկ
աչք մը կայ որ ոչ կը մրափէ ու ոչ ալ կը
քնանայ: Սաղմ. ՃԻԱ. 4: Տէրը միշտ մեր
քովն է • ինչպէս մեր արթունս եղած ատե-
նը անանկ ալ մեր քնացած ատենը կեանքեր-
նիս կը պահէ: Երբոր քնանալու համար կը պառ-
կինք ինքզինքնիս անոր պահպանութեանը յանձ-
նելու ենք, գիտնալով թէ մեզ սպահով պա-

հողը միայն Տէրն է, եւ ան ստէնը խաղաղու-
թեամբ կրնանք քնանալ : Եւ երբոր դիշեր-
ուան քունովը կազդուրուած եւ զօրացած առ-
տուանց ողջմամբ կ'ելլենք ան օրուան գործքերը
ընելու, պէտք է որ մեր առաջին գործը ըլլայ
մեր Ամենակարող Պաշտպանին գոհութիւն մա-
տուցանել :

28

Ուրեմն մեզմէ ամէն մէկը Աստուծոյ հաշիւ
պիտի տայ իր անձին համար : Հոով • ԺԻ • 12 :

ԱՍՏՈՒԱԾ մեզ բանական եւ պատասխանա-
տու հաններ ստեղծեց ու դրաւ առ բարիքնե-
րով լեցուն աշխարհիս մէջ, որ ան բարիքները
վայելենք և գործածենք ոչ թէ մեր այլ իր
կամքին պէս, ինչու որ օր մը մեզ հաշիւի պի-
տի կանչէ : Ան վերջին ատեանին մէջ մին-
չեւ անգամ մէկ եզակի անձ մըն ալ զանց
պիտի չ'անուի : « Մեզմէ ամէն մէկը », հոն պի-
տի գտնուի և ամէն մարդ իր անձին համար
հաշիւ պիտի տայ : Հոս կրնանք բարեպաշտ բա-
րեկամներ ունենալ որ մեր փրկութեանը հա-
մար շատ սղօթք ընեն, բայց հոն թէ որ մեզի
համար աղաչելու ըլլան ձայներնին մտիկ ընող
չկայ : Հոս Քրիստոնեայ ուսուցիչներ կրնանք
ունենալ, որոնց վրայ վստահութիւն ունենանք :

բայց հոն անոնք մեղի համար հաշիւ չեն կրնալ
տալ : Հոս թէ և չար ընկերներ մեղ մոլոր-
ցրնեն, և կամ մենք կուրութեամք գէշ ու-
սուցիչներու հետեւինք, սակայն հոն մեր ան-
ձերուն հաշիւը միայն մենք պիտի տանք : Եւ
թէպէս առ աշխարհիս վրայ մեղաց ճամբանե-
րուն մէջ բազմութեամք կը քալենք, սակայն
երկնաւոր Գառաւորին առջին ամէն մէկերնիս
իր անձին համար հաշիւ պիտի տայ, իբրև թէ
բոլոր աշխարհիս վրայ մի միայն մեղաւորը ինք էր :
Արդ մեր անձերուն համար հաշիւ տալու թէ
որ առջինիս ասանկ ահեղ օր մը կայ, ուրե-
մըն շատ անդամ մտմտալու ենք թէ ան օր-
ուանը ինչպէս պիտի պատրաստուինք : Շատ
անդամ պէտք է որ հողինիս հաշիւի կանչենք,
ու ան վերջին սոսկալի օրուանը նայելով մեր
անձերը քննենք :

28

Պատուական է Տէրոջը առջին իր սուրբերուն
մահը : Սաղմ. ՃԺԶ. 15 :

ԵՐԲՈՐ ճշմարիտ հաւատացեալ մը կը մեռ-
նի ընդհանրապէս անոր մեղմէ զատուելուն
վրայ կը ցաւինք, և անանկ կը տրտմինք և
կուլանք, իբրև թէ անակնկալ և շատ մեծ
թշուառութիւն մը գլխունուս եկաւ : Բայց

Տէրոջը առջին անոր մահը պատուական է : Աստուած իր փառքին համար անոր մեռնելուն բոլոր պարագաները անանկ կերպով մը կը կարգադրէ որ անիկայ թէ հրաժարող հոգիին երջանկութեանը և թէ իրմէն ետքը մնացող Քրիստոնէից մեծ օգտին համար եղած կ'ըլլայ : Իր հեռուութիւններուն նայելով ասիկայ պատուական դիպուած մըն է : Տէրը բոլոր աս հեռուութիւնները առաջուց կը տեսնէ, ու ասոր համար Քրիստոնէաներուն մահը իրեն շատ պատուական է : Սրբոց մահը իրենց մեղքի հեռունեցած պատերազմը և իրենց բոլոր նեղութիւնները կը վերջացընէ • և իրենք կատարեալ երջանկութեան և սրբութեան վիճակի մը կը փոխէ : Մէկուն մահովը երկինքը փառաբանութիւն ընողներուն և Աստուծոյ կամքը կատարողներուն թիւը կ'եւելնայ : Աս մահը իր բոլոր հեռուութիւնները մէկ տեղ առնելով մեռնողին մնացած Քրիստոնէայ բարեկամներուն ալ պատուական է, ինչու որ ասիկայ առիթ մը կ'ըլլայ որ անոնք դէս 'ի երկինք ունեցած ճամբորդութիւններնուն մէջ աղէկ յառաջ երթան, և իրենց երկնային ժառանգութեանը վրայ ևս առաւել խորհին ու անոր հասնելու փափաքնուն մէջ աւելնան : Ուստի սրբոց մահը ինչպէս որ Տէրոջը առջին պատուական է, անանկ ալ թող մեզի պատուական ըլլայ ու անոր վերայ բնաւ չ'սրտմինք :

Մ Ա Ր Տ

1

Երկու կողմանէ ալ նեղի մէջ եմ, մեկ-
նեկու ու Քրիստոսի հետ ըլլալու փափաք ու-
նենալով. քանզի ան՝ շատ աւելի աղէկ է: Փի-
լոս. Ա. 23:

ՊՕՂՈՍ առաքեալը հոս կը ցուցընէ թէ ին-
քը երկու բանի կը փափաքի և չ'զիտեր թէ ա-
նոնցմէ որը աւելի ընտրէ: Բայց աս երկու բաները
ի՞նչ էին, որ մինչև անգամ առաքեալին միտքը տա-
րակուտանքի մէջ ձգեցին: Անոնք մահ և կեանք
էին. և աս երկուքին որը ընտրելա չեմ գի-
տեր՝ կ'ըսէ: Ապրելու փափաքը ունէր, որ մար-
դուս բնական է. շատ սիրելի բարեկամներ ու-
նէր, որոնցմէ զատուիլը քիչ մը դժուարին էր.
և սակայն հրաժարելու փափաք ալ ունէր: Բայց
ի՞նչ էր աս փափաքին պատճառը. իր դարձի
դալէն ետքը կեանքը աշխատութիւնով ու նե-
ղութիւնով և հալածանք քաշելով անցուցեր էր:
Իր քաշածները և աշխատութիւնները երկրորդ

Կորնթացոյ Տասնևմէկերորդ գլխուն մէջ կը պատմէ որ անոնց պատճառովը կրնար աշխարհէս ելլելու փափաքիլ . ուրեմն իր մեկնելու փափաքին պատճառը ասիկայն էր , սյսինքն թէ աս նեղութիւններէն ազատի : Չէ . ինքը կ'ըսէ . Քրիստոսի հետ ըլլալու փափաքն էր հրաժարիլ ուղեղուն պատճառը : Իր Փրկչին քովը երթալու և անոր պատկերին կերպարանակից ըլլալու կը ցանկար : Իր ամենէն մեծ փափաքը Քրիստոսի հետ ըլլալն էր :

2

Ինչու որ ինծի համար՝ ապրիլը Քրիստոս է , ու մեռնիլը օգուտ : Փիլիպ . Ա . 21 :

ՊՕՂՈՍԻ ապրիլ ուղեղուն պատճառը հոս կը տեսնենք որ Քրիստոսի համար աշխատիլն է : Շատ կորսուած մեղաւորներուն Քրիստոսի անունը և սէրը յայտնելու գործիք եղաւ . և ան օրհնեալ գործքին մէջ մնալու կը փափաքէր : Իր Տէրը կը սիրէր , և ամէն բանէ աւելի կ'ուզէր որ մարդիկ անիկայ ճանչնան անոր անունը պատուեն ու անոր հնազանդին . և կրցածին չափ ապրիլ ու Տէրօջը անունը տարածելը իրեն մեծ արտօնութիւն կը սեպէր : Եւ սակայն զիտէր թէ մեռնիլը օգտակար է իրեն . Աստու-

Տոյ խոստամուհիքներուն վրայ սնանկ զօրաւոր
 հաւատք ունէր որ իր երկնային ժառանգու-
 թեանը վրայ երկբայութիւն մը չունէր : Գի-
 տէր թէ երբոր աս աշխարհէս մեկնի Քրիս-
 տոսի քով պիտի երթայ, թէ ալ յաւիտեա-
 նրս անոր քով պիտի մնայ և ալ բնաւ մեղք
 պիտի չգործէ : Պօղոս մեղի պէս կիրքի տակ
 ինկած մարդ մըն էր • (Յակ • Ե • 17 •) բայց Տէր
 Յիսուս Քրիստոսի հաւատարիմ մէկ ծառան
 էր, և իր Տէրոջը հողիէն շատ ունէր : Արդեօք
 մենք ալ անոր պէս կրնանք ըսել, թէ Մեղի
 կեանք Քրիստոսն է, ու մեռնիլը օգուտ : Թէ
 որ ճշմարիտ Քրիստոսնեայ ենք պարտաւոր ենք
 աս բանը գիտնալ և միշտ զգալ :

3

Ո՛ւր է ո՛վ մահ՝ քու խայթոցդ, ո՛ւր է ո՛վ
 գերեզման քու յաղթութիւնդ : Ա Վերնի •
 ԺԵ • 55 :

ՄԱՏԻՆ խայթոցը մեղքն է • մարդ մը և
 թէ գիտնայ թէ արդար և բարի Աստուծոյ բար-
 կութիւնը շարժելու բան մը չէ ըրեր, անոր
 գիմացը ելլելու պիտի չՎախնայ : Մահը մար-
 դոց այնչափ սոսկալի ցուցընող բանը սոսկ մեռ-
 նելու ցաւը չէ, հասկա խղճմտանքը իրենց կ'ի-

մացընէ թէ մեղանչեցին , և թէ Աստուած բարկացած է իրենց , ասոր համար մեռնելէն և դատաստանի երթալէն կը վախնան : Բայց Յիսուսի հաւատացողներուն համար մահուան դորութիւնը կործանած է , ալ ևս խայթոց չունի : Անոնց մեղքերը Քրիստոս իր վրան առաւ և անէծքը անոնց վրայէն վերցուց : Քրիստոս անոնց համար մահ ճաշակեց , ուստի անոր ահարկու երևոյթէն ալ չեն սոսկար : Ան մութ ձորին մէջ քալած ժամանակնին Քրիստոս անոնց առաջնորդն է , և մահը իրենց վրայ իշխանութիւն չունի : Գերեզմանն ալ իրենց վրայ յաղթութիւն չունի . իրենց մարմինները թէպէտ ատեն մը գերեզմանին մէջը կը պահուին , բայց նորէն յարութիւն պիտի առնեն : Ապահանութիւնով ցանուած մարմինը անասպական յարութիւն պիտի առնէ . մահկանացուն՝ անմահութիւն պիտի հագնի : Գոհութիւն Աստուծոյ , որ Տէր Յիսուս Քրիստոսով մեզի յաղթութիւն կուտայ :

4

Ուստի վստահութիւն ունինք՝ և ալ աւելի կ'ուզենք մարմինէն հեռանալ , ու Տէրոջը քով կենալ : Բ. Կորնթ. Ե. 8 :

ԵՐԲՈՐ բարի տղայ մը իր սիրելի ընտանի-

քէն զատուած հեռու դպրատան մը մէջ կը
 բնակի, անոր միտքը շատ անդամ իր ճնողացը՝
 քոյրերուն և եղբայրներուն վրայ կ'ըլլայ թէ
 երբ պիտի երթայ և կրկին անոնք տեսնայ: Ու
 երբոր իր տուն երթալու ժամանակը կը մօտե-
 նայ, ինքը մեծ փափաքով անոր կը սպասէ:
 Թէպէտ դպրատանը մէջ սիրելի բարեկամներ
 և ընկերներ կ'ունենայ, որոնցմէ զատուելը ի-
 րեն ցաւ է, բայց իր սիրելի ընտանիքը տես-
 նելու յոյսը թող կուտայ որ ան ընկերները
 ձգէ: Թէ որ ճշմարիտ Գրիստոսեայ ենք, եր-
 կինքը մեր բնակարանն է, և քանի որ աս աշ-
 խարհիս մէջն ենք, մեր բնակարանէն շատ հե-
 ոու ենք: Մահը մեր երկնաւոր հօրմէն խոր-
 կուած դեպքանի մը պէս կուգայ մեզ տուներ-
 նիս հրաւիրելու. ինչո՞ւ համար աս հրաւերքէն
 վախնանք: Արդարեւ մահը մեզ ժամանակ մը
 մեր սիրելիներէն կը բաժնէ, բայց անիկայ չէ՞
 որ մեզ երկինքին մէջ մէկ օրհնեալ ընկերու-
 թեան մը պիտի տանի: Ամէն դարի մէջ Բը-
 րիստոսի հաւատացող բարի մարդիկը հոն են.
 հոն մեզմէ առաջ դացած շատ սիրելի բարե-
 կամներ ունինք, և մանաւանդ Յիսուս մեր Փրո-
 կիչը հոն է: Ուստի ալ պիտի չուզենք աս
 մարմնոյս մէջ կենալէն աւելի Տէրոջը հետ ըլ-
 լալ:

Ուսկից որ բոլոր ազգատոհմը երկինքի մէջ
ու երկրի վրայ անուն կ'անէ : Եփե" . 9 . 15 :

ՅԻՍՈՒՍ Քրիստոս Եկեղեցիին գլուխն է .
ամէն ճշմարիտ հաւատացեալներ անոր անդամ-
ներն են . անոնք ամէնը իրենց գլխուն հետ
սիրով միացած և մէկզմէկու հետ սիրով կապ-
ուած մէկ ընտանիք մըն են : Աս ընտանիքին
մէկ մասը երկինքն է , և մէկ մասը աշխարհիս
վրան է . անոնք երկինքը աշխարհէս բաժնող
վարագործը մէկզմէկէ զատուած են , բայց Քր-
իստոսով միացած են : Անով երկինքին մէջ
եղողները և երկրիս վրայ գանուողները մէկ են :
Երբոր մահը կուգայ Քրիստոնեայ բարեկամ-
ներնուս մէկը կը տանի , անիկայ չկորսուիր .
միայն թէ Քրիստոսի Եկեղեցիին աշխարհիս մէ-
ջը գանուող ժողովուրդէն կ'ելլայ ու երկինքը
եղած ժողովուրդին հետ կը միանայ : Նաև սէտք
է որ անոր վրայ ողբանք . ինչու որ անիկա
Քրիստոսի մեծ ընտանիքովը տակաւին մեզի հետ
միացած է . ան մեզմէ քիչ մը առաջ գնաց ,
մէնք ալ շուտով իրեն քով պիտի երթանք :
Եւ փրկուածներուն բոլոր ընտանիքը շուտով
հոն պիտի երթան , երդելով և սրտերնին յա-
ւիտենական ցնծութիւնով լեցուած :

6

Հանդատութեան օրը միաքիչ բեր՝ անիկայ
սուրբ պահելու համար : Եւէո . Ի . 8 :

ԱՍՏՈՒԾՈՅ քոչոր պատուիրանքները ինչ-
պէս որ իր փառքին համար անանկ ալ մեր մեծ
օգուտին համար են : Մեծ արտօնութիւն մըն
է մեզի քոչոր մեր աշխարհային հոգերը և գործ-
քերը մէկ դի ձգած , եօթը օրին մէկը մեր երկ-
նաւոր հօրը և Փրկչին հետ հաղորդակցութիւն
ընելով անցընել , և աղօթքով հոգիներնիս եր-
կինքի յաւիտենական հանդատութեանը համար
պատրաստել : Աստուած գիտէր թէ մարդիկ
ինչպէս աշխարհասիրութեան պիտի իյնան , թէ
ինչպէս խեղբերնին մտքերնին հարստութեան և
դքսանաց հետ պիտի ըլլայ , և այսպէս Աստ-
ուած և իրենց անմահ հոգիները պիտի մոռ-
նան . ասոր համար սրբեց եօթը օրերուն մէկը
որ ան օրը իրեն ծառայեն : Կայծակներով ու
վախերով պատած Մինա լեռնէն աս պատուի-
րանքը կրկնեց , և իր մատովը քարէ տախտակ-
ներուն վրայ գրեց , որ չըլլայ թէ մարդիկ եր-
բէք մոռնան : “ Մի սպանաներ ,” օրէնքը կոա-
րելը որչափ որ մեռք է , շարաթ օրը սուրբ պա-
հելու օրէնքը կոարելն ալ Աստուծոյ առջև
նայնչափ մեռք է : Ըարաթ օրը աշխարհային
գործքերով անցընելը Աստուծմէ գողութիւն ը-
նել է , որովհետեւ Ըարաթը իրեն օրն է :

Թէ որ շաբաթը՝ իմ սուրբ օրս՝ քու ցանկութիւնդ կատարելէն ոտքդ դարձրնես ու շաբաթը՝ քու զուարճութիւնդ, ու Տէրոջը նուիրած օրը՝ պատուական անուանես, ու զանկայ պատուես, քու ճամբաներուդ չհետեւելով, քու ցանկութիւնդ չ'կատարելով ու պարսպ խօսք չ'խօսելով, ան ատենը Տէրոջմով պիտի ուրախանաս. և քեզ երկրիս բարձր տեղուանքը պիտի հանեմ, ու քու հօրդ Յակոբին ժառանգութիւնը քեզի պիտի կերցընեմ. քանզի Տէրոջը բերանը խօսեցաւ: Եսայ. ԾԸ. 13, 14:

Այս տեղս կը սորվինք թէ Աստուած ինչպէս կ'ուզէ որ մենք իր սուրբ օրը պահենք. մենք մեր կամքը ընելու և մեր հաճութիւնները կատարելու չենք: Ու նաև աս օրը Աստուծոյ նուիրելը ծանրութիւն մը իմանալու չենք. մեր սրտերը պէտք է անանկ միճակի մը մէջ ըլլան, որ Աիրակիմ յուրախութիւն դայ մեզի: Թէ որ բարի որդիի մը հրամանս ըլլայ իր օրական աշխատութիւնը ժամ մը ձգել ու ան ատենը իր իմաստուն և բարեբար հօրը հետ անուշ խօսակցութիւններ ընելով անցընել, ան ժամը իրեն շատ հաճելի պիտի դայ: Ասանկ ալ թէ որ սրտերնիս Աստուծոյ առջևը շխտակ

է, իրեն հետ հաղորդակցութիւն ընելու համար ընտրուած աս օրը մեզի ուրախութիւն տուող օր մը պիտի ըլլայ: Շաբաթ օրը իրենց գործքերը և զուարճութիւնները ձգելով, ուրախ սրտով անհիկայ Աստուծոյ նաւիրողներուն Տէրը հոս յատուկ պարգևներ կը խոստանայ: Եւ Աստուած ինչպէս որ իր ամէն խոստմունքներուն վրայ անանկ ալ աս խոստմունքին վրայ հաւատարիմ է. ու նաև աս օրը աւրողներուն դէմ յատուկ բարկութիւն կը ցուցնէ: 'Նէէ՛՛ . ԺԳ . 17, 18: Երանի՛ թէ միշտ Շաբաթը խոհոգիս սուրբ զուարճութեան օր մը ըլլայ:

8

Շաբաթը մարդուն համար եղաւ, ու չէ՛ թէ մարդը շաբաթին համար: Մարի . Բ . 27:

ՀՐԷԱՆԵՐՈՒՆ շաբաթը պահելու կերպին նայելով անանկ պիտի կարծէինք թէ առաջ շաբաթը հաստատուեցաւ ու ետքը շաբաթը պատուելու համար մարդիկ ստեղծուեցան: Բայց անանկ չէ. առաջ մարդս ստեղծուեցաւ և ետքը շաբաթը իրեն տրուեցաւ որ անհիկայ միայն իր օգտին համար գործածէ: Մարդասէր Արարիչը անհիկայ իբրև գերազանց սրբազն մը մեր մեծ օգտին համար մեզի տուաւ:

Ասիկայ մեղի արուեցաւ որ մեր մարմինները
 դորանաչու համար աս անհանգիստ աշխարհիս
 աշխատանքներէն ու հոգերէն հանգչինք, և մեր
 հոգիները կենդանացընելու համար Աւետարա-
 նի մխիթարութիւնները փնտռենք: Ուստի ին-
 չո՞ւ համար ես ան օրը ծուլութիւնով յիմա-
 րութիւնով և խաղով վատնեմ. անիկայ իմ
 ամենէն շատ աշխատելու և հոգևոր օգուանելի
 քաղելու օրս է, իմ ամենէն սուղ և ամենէն
 օգտակար ժամանակս է. պէտք է որ ուրիշ օ-
 րեր մարդոց հետ տեսութիւն ընելու երթամ
 ու չէ թէ աս օրս: Հիմա արտօնութիւն ու-
 նիմ օրհնութիւններ խնդրելու անկէց, որուն
 շնորհքը կեանք է և որուն սէրը կեանքէ ալ
 աւելի, և ինչո՞ւ համար աս արտօնութիւնը զանց
 ընեմ: Իմ բարերար երկնաւոր Հայրս իս ի-
 րեն մօտենաչու և իրեն հետ հաղորդակցութիւն ը-
 նելու և իրեն Հայրական օրհնութիւնը ընդունե-
 լու կը հրաւիրէ, և ինչո՞ւ համար ես քաշուիմ:
 Ես հիմա պատեհութիւն ունիմ իմ միտքս ամ-
 փոփ տալ անասական ժառանգութիւն մը ստա-
 նաչու, և ինչո՞ւ համար յաւիտեան խեղճութեան
 և թշուառութեան մէջ մնամ: Անմահ պատիւներ
 դանելու պատեհութիւն ունիմ, ինչո՞ւ համար
 ձեռքէս փախցընեմ: Թէ որ մարմնաւոր բաներու
 մէջ ասանկ պատեհութիւնները ձեռքէս փախ-
 ցընեմ, մարդիկ ինձի յիմար պիտի կանչեն. և
 արդեօք յաւիտենական բաները մարմնաւոր բա-

ներս չափ օգտակար չէն, այո՛ և անկէց աւելի: Օրհնեալ է Աստուած որ ինձի համար շաբաթը հաստատեց, և կրնամ անխիայ յաւիտենական օգտիս համար գործածել:

9

Իրենց Ժողովարաններէն դուրս պիտի ձգեն ձեզ, ու Ժամանակ ալ պիտի գայ՝ որ ամէն ո՛վ որ ձեզ սպաննէ, անանկ պիտի սեպէ թէ Աստուծոյ պաշտօն կը մատուցանէ: Յով. Ժ. 2:

ՈՐՉԱՎ տարբեր են Քրիստոսի իր աշակերտներուն ըրած խոստմունքները սուս կրօնքներ հաստատող մարդոց իրենց հետևողներուն ըրած խոստմունքներէն: Անոնք հարատու թիւն կամ պատիւ կամ զօրութիւն և կամ մարմնաւոր հեշտութիւններ կը խոստանան իրենց ետևէն դացողներուն, բայց Քրիստոս ատելութիւն և հալածանք ու մինչև անգամ իր անունին համար մեռնիլ ալ կը գնէ առջևին: Մեր ճրկիչը աս խօսքերը զրուցած Ժամանակը բանտարդուելու՝ ծաղր ըլլալու՝ ծեծուելու և անարգ մահուամբ մը մեռնելու վրայ էր: Իմացուց իր աշակերտներուն որ իրենք ալ ասանկ բաներու ենթակայ պիտի ըլլան, և իր խօսքերը ճշմարիտ ելան: Արդարև անոնք զօրաւոր և չար

մարդիկներէն շատ ատելութիւններ՝ արհամարհանք և անդժուութիւններ քաշեցին . և սակայն հաւատքներնուն միայն հաստատ կեցան , և իրենց թիւը կը շատնար : Ասիկայ աշխարհի մարդոց առջևը զարմանալի բան մըն էր : Իսկո՞՞ճ ու աւարդուած Նազովրեցիներն մեռցուցին , և իրեն հետևողները կ'ատէին ու կը հալածէին , բայց ահոնք ալ ևս կը շատնային : Աշխարհի մեջ դանուող թագաւորութիւններուն ամենէն զօրաւորը իր բոլոր կարողութիւնովը Քրիստոնէութեան դէմ կեցաւ , բայց չկրցաւ անոր յաղթել : Աս տարօրինակ բանը ինտո՞ր հասկընալու է . ան անարդուած Նազովրեցիներն Վատուծոյ Որդին էր , և այնչափ զօրաւոր՝ որ երկիր և գծոխք զէնքը յաղթահարելու կարող չէին :

10

Քեզի դէմ շինուած գործերը ամենեկին պիտի չ'յաջողի , և քու միայն դատաստանի ելլող ամէն լեզուն պիտի դատաստարաուի . Տէրոջը ծառաներուն ժառանգութիւնը ասիկայ է , ու անոնց արդարութիւնը ինծմէ է , կըսէ Տէրը : Եսայ . ԾԴ . 17 :

Այ խօսքերը՝ որ մարդտրէն Վատուծոյ ժո.

գովուրդին համար խօսեցաւ , մարդոց առջեւ
 գրեթէ միշտ անկարելի երեցան : Քանզի Աս-
 տուծոյ ժողովուրդը միւսներուն հետ բաղդա-
 տելով ամէն ասէն քիչուոր և տկար էին , ու
 իրենց թշնամիները զօրաւոր : Ըստ անդամ
 “ Երկրի թաղաւորները ինքզինքնին հաստատե-
 ցին և իշխանները մէկ տեղ խորհուրդ ըրին ” որ
 անոնք երկրիս երեսէն բնավնջ ընեն : Բայց
 սակայն Աստուծոյ խոստմունքը ճշմարիտ ելաւ ,
 և անոնց դէմ շնուած զէնքերէն կամ գոր-
 ծիքներէն բնաւ մէկը չ՝ յաջողեցաւ : Իրենց քա-
 ջած այն սոսկալի հալածանքները միշտ առիթ
 եղան որ իրենց հաւատքը և վրանին եղած Աս-
 տուծոյ շնորհքը աւելի պայծառ փայլի իրենց
 վրայ , որով տեսնողներն ալ համագրուեցան թէ
 Տէրը անոնց հետ էր : Այսպէս ուրիշներն ալ
 հաւատքի եկան և իրենց համբանքը ևս առա-
 ւել շապցաւ ան նոյն միջոցով , որով թշնա-
 միները կը ջանային զանոնք կորսնցընելու : Եւ
 միշտ ասանկ պիտի ըլլայ . Տէրը թշնամիներուն
 բոլոր ջանքերէն իր ժողովուրդը պիտի պաշտ-
 պանէ : Աստուծոյ ընտրեալ ժողովուրդը մէջ
 գանախը մեծ երանութիւն է : Իմ ժառան-
 գութիւնս հիւսն ալ ու յաւիտեան անոնց հետ
 թող ըլլայ :

Ու երկինքի մէջ մեծ ձայներ եղան՝ որ կ'ըսէին . աշխարհին թագաւորութիւնը մեր Տէրոջը ու իր Օծեալինը եղաւ, և ինքը պիտի թագաւորէ յաւիտեանս յաւիտեանից : Յայտ. ժԱ. 15 :

Այս աշխարհքը Աստուած ստեղծեց և անոր ամէն բնակիչները պէտք է որ անոր հնազանդին : Բայց մարդիկ անոր դէմ ապստամբեցան . Աստուծոյ Որդին աշխարհք եկաւ և անոնք փրկելու համար մեռաւ, բայց տակաւին մեղքերնին չ'ձգեցին և իրեն չ'հնազանդեցան : Աշխարհիս մեծ մասը մինչև անգամ իր անունը լսած չէ, և իրեն վրայօք լսողներէն շատերը զինքը կ'ատեն, ու մինչև անգամ իրեն վրայ հաւատք ունենալ խոստովանողներէն շատ քիչերը գործքով և ճշմարտութեամբ իրեն կը հեռակին : Բայց միշտ սասանկ պիտի չ'մնայ . քանզի ահա ան ժամանակը կու գայ որ ատեն հեթանոսները իրենց կուռքերը խլուրդներուն և ջղջիկներուն պիտի նետեն, (Եսայ. Բ. 20,) և բոլոր աշխարհք Տէրոջը վառքովը պիտի լեցուի . (Թա. ժԴ. 21.) Տէրը խոստացաւ և անշուշտ պիտի կատարէ : Բայց իր խորհուրդները մարդիկներուն միջոցովը կը կատարէ . Աւետարանը բոլոր ազգերուն պիտի քարոզուի . աս փառաւոր գործը կատարելու մէջ ամեննիս ալ բաժին ու-

նինք : Պէտք է որ Քրիստոսի դործակից ըլ-
լանք , բոլոր մարդիկ իր թագաւորութեանը ա-
ռաջնորդելու աշխատինք : Եւ պէտք է որ միշտ
աղօթք ընենք ըսելով , « Քու թագաւորութիւնդ
դայ » :

12

Բայց անոր համար ողորմութիւն դայ , որ
պինտ առաջ Յիսուս Քրիստոս իմ վրաս ցու-
ցրնէ բոլոր երկայմութիւնը՝ օրինակ ըլլալու
անոնց՝ որ պիտի հաւտային իրեն՝ յաւիտենա-
կան կենաց համար : Ա ՏԻՃ • Ա • 16 :

ՏԱՐՍՈՆԱՅԻ Սօղոսը Քրիստոսի աշակերտ-
ներուն դասն և զօրաւոր մէկ թշնամին էր , որ
անոնք մինչև անգամ մահու չափ կը հալածէր :
Բայց Քրիստոս աս թշնամին ինչ՝ ըրաւ .
ինքը կրնար անիկայ թող տալ որ իր մեղքե-
րուն մէջը մեռնի ու յաւիտեան կորսուի , բայց
անանկ չըրաւ . հասրա մեղաւոր ըլլալը իրեն ի-
մացընելով իրմէն ողորմութիւն իննդրել տուաւ ,
ու ան ասեանը բոլոր իր մեղքերուն թողութիւն
չնորհեց : Ասիկայ անանկ մէկ զարմանալի դը-
թութիւն մըն էր , որ բնաւ ուրիշ էակ մը
կարող չէ ցուցրնել : Աս ողորմութիւնը որ Սօ-
ղոսին եղաւ , Քրիստոսի ամենակարող շնորհա-

ցը յայանի վկայութիւնն էր թէ ան դարուն մարդոցը և թէ մինչև աշխարհիս վերջը գալու բոլոր մարդիկներուն • ու նաև պատճառ մը պիտի ըլլայ որ երկինքին մէջը յաւիտեան Աստուծոյ փառաբանութեան երգեր կարդացուին : Աս օրինակը ամէն դարերուն մեղաւորներուն քաջալերութիւն տուաւ Քրիստոսի ողորմութեանը ապաւինելու • ասիկայ կը ցուցնէ թէ Քրիստոս մեղաւորներուն գլուխը անդամ կրնայ փրկել : Նաև կը ցուցնէ մեզի իր շնորհքին ամենակարող զօրութիւնը որ ասանկ թշնամի մը կրնայ խոնարհ աշակերտի մը փոխել : Աս օրինակը պէտք է որ մեզ Քրիստոսի բոլոր հաւատակորդներուն համար աղօթք ընելու առաջնորդէ • քանզի ան որ Տարսոնացի Սողոսին սիրտը փոխեց , կրնայ հիմա ալ բոլոր իր ամբարտաւան թշնամիներուն յաղթել :

13

Բայց գիտե՛ք որ երբ անիկայ յայանուի , անոր պէս պիտի ըլլանք • վասն զի անիկայ պիտի տեսնենք՝ ինչպէս որ է : Ա Յ՝ Թ • Գ • 2 :

ՔՐԻՍՏՈՆԵՒՆ աչքին առջևը փառաւոր բաներ կան , որոնք հաւատքին աչքովը յայանի կը տեսնէ , և որոնց մէջ անասուգութիւն չկայ :

Աս աշխարհիս մէջ ամէն գաղիքներն անատոյգ
 են . հաստատուն յոյսեր և եռանդուն փառաբա-
 ներ կ'ունենանք , սակայն հաղարաւոր անակըն-
 կալ դիպուածներ կը հանդիպին և յոյսերն աւ
 հասնելէն մեզ կ'արդիւեն : Բայց Քրիստոնէից
 երկնային ժառանգութիւնը ասանկ չէ . առա-
 քեալը կ'ըսէ , թէ գիփէնք . չէ թէ լոկ-կը հաւ-
 տանք կամ լոկ կը յուսանք , հասլա գիփէնք :
 Մեր երկնային ժառանգութեանը վերաբերեալ
 քանի մը բաներ կան որ չենք գիտեր և քա-
 նի որ աս մարմնոյս մէջն ենք , չենք կրնար գիտ-
 նալ . չենք կրնար գիտնալ՝ թէ հոն ինտոր և որ-
 չափ երջանիկ պիտի ըլլանք . բայց գիտենք որ
 Քրիստոսի նման պիտի ըլլանք : Ասիկայ պիտի
 ըլլայ Քրիստոնէից ամէնէն հաստատուն յոյսե-
 րուն կատարելութիւնը : Հոս մեզքը Քրիստո-
 նէին մեծ նեղութիւնն է , բայց երկինքին մէջ
 իր Պրկչին նման առանց մեղաց և կատարեալ
 սուրբ պիտի ըլլայ . մենք պիտի տեսնենք զինքը
 ինչպէս որ է : Հոս Քրիստոսի ստորոգելեացը
 միայ ունեցած դաղափարնիս անկատար են , և
 մեզքերնիս շատ անգամ ամսի պէս զինքը աշ-
 քերնաւս կը ծածկեն . բայց հոն անանկ չէ : Իր
 քովը պիտի երթանք , պիտի տեսնանք զինքը
 ինչպէս որ է , և իրեն նման պիտի ըլլանք : Եր-
 կինքին մէջը մեր ունենալու երջանկութիւնը ա-
 սիկայ է :

Եւ ամէն ո՛վ որ աս յոյսը իր մէջը ունի՝
ինքզինքը կը մաքրէ, ինչպէս որ անիկայ մաքուր
է: Ա. Յով. Գ. 3:

ԱՆՈՒՅ որ երկինքը երթալու յոյս ունին,
պէտք է որ ան սուրբ տեղին ընկերութեանը
մէջ մտնելու պատրաստութիւն տեսնեն: Թէ որ
մէկը կ'ուզէ և կը յուսայ իր Թագաւորին առ-
ջիւք ելլել և անոր բոլորաիքը առած ընկերու-
թեանը մէջ մտնել, կ'աշխատի ինքզինքը անոնց
վարքին նմանցընել որ անոնց աչքին հաճելի երե-
ւայ: ԱԼ որչափ առաւել պարտաւոր ենք Աս-
տուծոյ աչքին հաճելի վարք մը ունենալ թէ
որ յոյս ունինք իր աթոռին բոլորաիքը եղող
ընկերութեանը հետ խառնուելու: Առաքեալը
կ'ըսէ թէ Քրիստոնէին յոյսին արդիւնքը աս
պիտի ըլլայ: Թէ որ Յիսուսը տեսնելու և ան-
կէց ետե անոր նման ըլլալու կապասենք, հի-
մադուրնէ իրեն նման ըլլալու աշխատելու ենք:
Թէ որ կը յուսանք յաւիտեան ան աշխարհին
մէջ ապրիլ ուր որ մեզք չմտնար, չենք կր-
նար հոս մեզքը սիրել: Թէ որ մէկը մեռնե-
լէն ետե երկինքը երթալու կը յուսայ, ու տա-
կաւին մեզքը կը սիրէ և սրտի ու կենաց մաք-
րութիւն չունի, ան մարդուն յոյսը ոչինչ է:
Ինքը կը ցուցընէ թէ բնաւ նորէն ծնած չէ, և
Քրիստոս անանկ մարդուն համար կ'ըսէ թէ

Հիմնար Աստուծոյ թաղաւորութիւնը տեսնել :
Քրիստոնէին յաւացած քաներուն վրայ որչափ
որ մտածենք , և երկինքի երջանկութիւններուն
ինչ ըլլալը որչափ որ խմանանք , այնչափ ա-
ռաւել անոնց զօրութիւնովը սրտով պիտի մտք-
րուինք :

15

Օրհնեալ ըլլայ Աստուած՝ ու մեր Տէր Յի-
սուս Քրիստոսի Հայրը , գթութեանց Հայրը և
ամէն միսիթարութեան Աստուածը : Բ Կ-ԸՆԸ .
Ա . 3 :

ԱՌԱՔԵԱԼԸ հոս Աստուծոյ՝ մեր Տէր Յի-
սուս Քրիստոս Հօրը մէկ քանի գեղեցիկ ստո-
րագիւղքները կը ցուցնէ : Անիկայ իր Որդին
մեր մեղացը համար մեռնելու առաւ որ իրմով
փրկութիւն գտնանք : Անիկայ գթութիւններուն
Հայրն է . մեր կեանքերը անոր գթութիւննե-
րովը լեցուն են . մենք մահուան արժանի ենք ,
բայց տակաւին կենդանութիւն կը վայելենք :
Առողջութիւն՝ բարեկամներ՝ հանդիստ բնակա-
րան՝ կերակուր ու հանգերձ ունինք , թէպէտ
և մեր մեղքերովը միայն յաւիտենական թըշ-
ուառութեան արժանի ենք . ասոնցմէ զատ մեր
աչքերուն առջև յաւիտենական կենաց յոյսե-

բնն ալ ունինք : Բոլոր սա օրհնութիւնները ,
 որոնց մէկուն ալ արժանաւորութիւն չունինք ,
 Աստուծմէ գթութիւններուն Հօրմէն են . ա-
 նիկայ ամէն միսթարութիւններուն Հայրն է :
 Մարդիկ պարսպ տեղը առանց Աստուծոյ ինչ
 և իցէ բանի մէջ ճշմարիտ երջանկութիւն կը
 փնտռեն : Ան է մեր վայելած օրհնութիւննե-
 բուն երջանկութիւն սալու զօրութիւն տու-
 զը . ան է մեր հոգիները բարութիւնով կշտա-
 ցընողը : Փորձութեան և նեղութեան մէջ ա-
 նիկայ միայն կրնայ սրտերնիս միսթարել . ան
 կրնայ վերջընել մեղսալից խղճմտանքին խոյ-
 թոցը և մեր մեղքերուն թողութիւն սալով սր-
 տերնիս ուրախութիւնով լեցընել : « Անոր ցու-
 պը ու դաւաղանը մահուան շուքին մէջը մեզ
 պիտի միսթարեն ,, և ինքը յաւիտեան մեր բա-
 ժինը պիտի ըլլայ :

16

Բայց անիկայ մեր մեղքերուն համար վերա-
 ւորուեցաւ , և մեր անօրէնութիւններուն հա-
 մար ծեծուեցաւ . մեր խաղաղութեան պատի-
 ժը անոր վրայ եղաւ . և անոր վերջերովը մենք
 բժշկուեցանք : Եսայ . ԾԳ . 5 :

Ան երևելի մարգարէութիւնը՝ որուն մէկ

մասն է ասիկայ, Վրիստոսի աշխարհք դա-
 լին քանի մը հարիւր տարի առաջ գրուեցաւ,
 բայց ան դիպուածը ըլլալ կատարուելէն ետքը
 գրուած պատմութեան մը պէս անոր չար-
 չարանքները և մահը կատարեալ կը ստորագ-
 րէ: Մարգարէն աս տեղս Վրիստոսի քաջած
 չարչարանքներուն պատճառն ալ կը պատմէ:
 Ասիկայ յանցանք չունէր, հօրը սիրելի որ-
 դին էր • և սակայն «Տէրը հաճեցաւ որ զանիկայ
 ծեծելով ցաւերու մասնէ», : Եսայ • ԾԳ • 10 :
 Մեղաւորներուն տեղը անցաւ մեր անօրէնու-
 թիւնները կրեց, և աս պատճառաւ չարչարուեցաւ
 ու մեռաւ: Մեր վրայ նայեցաւ որ մեղքի և թշուա-
 ռութեան մէջ թաղուած ենք, և իր գութը շար-
 ժեցաւ, ինքզինքը մեզի համար վրիանք մատուց,
 և «Տէրը մեր ամենուն անօրէնութիւնը անոր վրայ
 դրաւ», : Եսայ • ԾԳ • 6 : Ո՛հ ասիկայ ինչ մեծ
 սէր և ողորմութիւն է • մենք իրեն ինտոր սէր
 և երախտագիտութիւն ցուցընելու ենք: Անոր
 դէմ մեղանչեցինք, ու մեր անձերը կործանու-
 մի մէջ ձգեցինք, և յաւիտենական մահուան
 անէծքը մեր վրայ բերինք, բայց ինքը ձեռք զար-
 կաւ մեր վրիութեանը: Գիտէր որ մեր վրե-
 կանքին դինը իր արիւնը պիտի ըլլայ, բայց ետ
 չկեցաւ, իր սէրը զինքը յառաջ վարեց, մեր
 տեղը չարչարանք քաշեց որ մենք ապրինք: Սբ-
 դարե հիմա իրեն համար և միայն իրեն համար
 ապրելու ենք, թէպէտև դէպի իրեն ունեցած
 երախտագիտութեան պարտաւորութիւններն իս
 վճարելու կարող չենք:

Մարմնաւոր խորհուրդը Աստուծոյ դէմ թըշնամութիւն է : Հոգի • Ը • 7 :

ՀՈՍ « մարմնաւոր խորհուրդ » կաշուած է սիրտն իր բնական վիճակին մէջ , որ Աստուծոյ հոգիովը նորոգուած չէ : Ուրեմն առաքեալը կը հաստատէ թէ ամէն շնորոգուած սիրտեր Աստուծոյ դէմ թշնամի են • ասանկ ալ նաև յայտնի չարութիւն ընողները և անառակները , և ամէն մարմնաւոր խորհուրդներ ունեցողները : Մարդ մը շատ քաղցր և իր ընկերներուն բարի օրինակ կրնայ ըլլալ , բայց մինչև որ Քրիստոս Յիսուսով նոր ստեղծուած մը չըլլայ Աստուծոյ թշնամին է : Սուրբ Հոգիէն ներշնչուած առաքեալին մարդոց համար տուած վկայութիւնը աս է : Եւ թէ մեր վրայ թէ ուրիշներուն վրայ եղած փորձերէն աս վկայութեան ճշմարիտ ըլլալը արդեօք մենք ալ իմացած ենք , այո՛ անշուշտ իմացած ըլլալու ենք : Թշնամութենէն զատ ուրիշ ի՞նչ բան կայ որ պատճառ կ'ըլլայ մարդուս զԱստուած բողոքովին մոռնալու , և ամէն օր այսչափ օրհնութիւններ ընդունելու առանց մէկ երախտագիտութիւն մը զգալով , և մեզի կենաց առաջնորդ ըլլալու համար տրուած ան Սուրբ Գիրքը զանց ընելու , ու միշտ իր հրամաններուն չհնազանդելու , իրեն դէմ անխիղճ

մեղք դործելու, և բողոքովին անհոգ ըլլալու
ան սիրոյն վրայ որ մեղի ցուցուց իր Արդին մե-
ղաւորներուն համար մեանելու տալովը : Ար-
դարև զարմանք չէ Քրիստոսի առ խօսքը ըսե-
լը "Թէ որ մէկ մարդ մը նորէն չճնանի, չը-
կրնար Աստուծոյ Թագաւորութիւնը տեսնալ" :
Յ. Է. Գ. 3 :

18

Թէ որ ձեզմէ երկու հոգի երկրի վրայ միա-
բանին ամէն ինչ բանի համար որ խնդրեն,
սկիտի ըլլայ անոնց իմ հօրմէս՝ որ երկինքն է :
Մատթ. ԺԸ. 19 :

ԱՍՏՈՒԱԾ մեզ ընկերական ստեղծեց. ըն-
կերութիւնով մեր ամէն երջանկութիւնները կ'ե-
ւելնան : Թէ որ Աստուած կը սիրենք ուրիշ
զինքը սիրողներու հետ իր փառքերուն վրայօք
խօսակցելը մեղի զուարճալի կու դայ : Թէ որ
աղօթք ընել կը սիրենք, առ սպարտաւորութիւ-
նը ուրիշներուն հետ մէկտեղ կատարելն ալ սկի-
տի սիրենք : Թէ որ մէկ օրհնութեան մը հաս-
նելու փափաքներ ունինք, ուրիշներուն ալ նոյն
փափաքները ունենալը տեսնելով կ'ուրախանանք.
և կը սիրենք միաբանութեամբ ան փափաքնիս
անոր մատուցանել, որ ինքը միայն կարող է

անոնք լեցրնել : Ընկերական միաբանութեամբ մատուցուած աղօթքը Քրիստոսի չէ թէ միայն հաճելի է, հասկա յատուկ խոսամունք ալ ըրաւ երբոր երկու հոգի աղօթք ընեն « հոն եմ ես անոնց մէջը » : Աստուածաշունչին մէջ միաբան աղօթքներու և անոնց արուած բարեշնորհ պատասխաններու շատ օրինակներ ունինք : Երբոր Սուրբ Հոգին Պենակեղոսակին օրը աշակերտներուն վրայ իջաւ, անոնք ամէնը միաբան աղօթք կ'ընէին : Երբոր Հերովդէս բանտարդէց Պեարոսը, Եկեղեցին իրեն համար անդամար աղօթք կ'ընէր, և երբոր շատերը մէկտեղ եկան աղօթք ընելու, անիկայ հրեշտակին ձեռքովը ազատուած մէջերնին եկաւ : Քանի որ առ չարութիւններու մէջ թաղուած աշխարհիս վրայ ենք շատ օրհնութիւններ ունինք Աստուծմէ խնդրելու : Ուստի թող Քրիստոնէաները առ օրհնութիւնները Աստուծմէ խնդրելու միաբանին, և թէ որ պէտք եղածին պէս խնդրեն Քրիստոսի ըրած խոսամանը իսկութիւնը մեձամբ պիտի փորձեն :

Եւ Սամուէլ բոլոր խօսքերը անոր պատմեց, անկէ չպահեց : Ու Հելլի ըսաւ . Մնիկայ Տէրին է . իր աչքերուն հաճոյ երևցածը թող ընէ : Ա. Թագ. Գ. 18 :

Ա մարդը՝ որուն որ Սամուէլը խօսեցաւ, չեղի Քահանայապետն էր: Սամուէլին ձեռքովը չեղիին եկած պատգամը ահարկու սրտագամ մըն էր, քանզի անխիայ իր և իր դաւակներուն մեղացը համար իր տանը վրայ դալուսաստիկ պատիժները կ'իմացընէր: Սակայն առիկայ երբոր չեղիին ահանջը հասաւ անխիայ գէմ չկեցաւ, դիակեր որ Տէրոջը խօսքն էր ան, ու ըսաւ. « իր աչքերուն հաճոյ երեցածը թող ընէ »: Չեղիին հնազանդութեան հողին մեղի աղէկ օրինակ մըն է, անխիայ այն խոնարհ ու հլու հնազանդութիւնն է, որն որ Աստուծոյ դաւակները անոր նախախնամական ամէն անօրինութիւններուն պարտին ցուցընել: Երբոր նեղութիւններ և տառապանք գլխունուս կուգան, դիակեր որ դիպուածով չեն, հասցա Աստուծոյ անօրէնութիւնովը, և իրմէն եկած ըլլանուն համար յօժարութեամբ հնազանդելու ենք: Աստուծմէ ինչ որ դոյ բարի է, որովհետեւ ինքը իմաստուն՝ հղօր և բարի է, անոր համար անիրաւ բան մը չ'ընէր: Թէ որ փորձանքի մեջ դժկամակութիւն ցուցընէք, մեր կամքը Աստուծոյ կամքին դէմ հանած և ինքզինքնիս իրմէն իմաստուն սեպած կ'ըլլանք: Բայց յատկապէս մեղաւոր ըլլանուս համար հանդարտութեամբ Աստուծոյ հնազանդելու ենք: Աստուծոյ աս կեանքերնուս մեջը մեզի խրկած արամութիւնները միշտ մեր արժանի եղածէն թէ՛ են: Թէ որ աշխարհիս վրայ մեր ունեցած

բաժնուծիւնները մեզմէ առնէ ու Աւետարանին պարգևները տակաւին վայելէնք, պարտաւոր ենք իր ողորմութիւնը բարձրաձայն փառաբանելու:

20

Դուն առ բանին մէջ մասն ու բաժին չունիս • ինչու որ քու սիրտդ Աստուծոյ անջևը շիտակ չէ: Գործ • Ը • 21:

ԱՍ խօսքերը Պետրոս Սիմոն Տոգին զրուցեց • Սիմոն Յիսուս Քրիստոսի հաւատքը դաւանեցաւ • առաքեալները մկրտեցին զինքը և իրենց ձեռքով եղած նշանները ու հրաշքները տեսնելով անոնց հետ կը պտրտէր: Մարդիկ որ բանին արտաքին երևոյթքին կը նային միայն, զինքը ճշմարիտ հաւատացեալ կարծեցին • բայց երբոր իր շահախնդրութիւնը գրգռելու առիթ մը եղաւ, ան ատենը յայտնի եղաւ իր ինչ բնաւորութեան տէր ըլլալը: Յուցուց թէ արւծաթսիրութիւնը դեռ կը թաղաւորէր իր սրտին մէջ, և թէ շատ նուաստ ու անարդ խորհուրդներ ունէր Աստուծոյ շնորհացը վրայ • թէ ուղիղ հոգեւոր խմացումներ չունէր: Աս պատմութիւնը մեզի շատ օգտակար բաներ կը սորվեցընէ • ասկէց կը սորվինք թէ մկրտութիւնով և տեսանելի եկեղեցիին հետ կապուելով փրկու-

Թիւն ջրլսար • ինչու որ Սիմոն մկրտուեցաւ առաքեալներուն մէկէն, և սակայն « Մաղձի դառնութեան մէջ, և անիրաւութեան կապին մէջ » էր: Շատ պատճառներ կան որոնց համար մարդիկ ինքզինքնին Քրիստոնեայ կը կոչեն • և Քրիստոնէի մը արտաքին երևոյթքը երկան տան կրնան պահել • բայց թէ կանուխ և թէ ուշ իրենց ճշմարիտ բնաւորութիւնը կը յայտնուի: Աստուած չէն կրնար խաբել ինչու որ ան սիրտերը կը նայի • և թէ որ սրտերնին իր առջևը շիտակ չէ, ան մարդիկը մասն ու բաժին չունին ան բանին մէջ:

21

Ու մեծ ուրախութիւն եղաւ ան քաղաքին մէջը: Գործ • Ը, 8:

Ան քաղաքը Սամարիան էր • և իրենց ուրախութեանը պատճառը Փիլիպպոսի հոն երթալն ու Աւետարանը անոնց քարոզելն էր • և անոնք ամէնը մէկէն Փիլիպպոսին ըսած խօսքերուն ահանջ գրին: Ուր որ Քրիստոսի Աւետարանը կը քարոզուի ու կը ընդունուի հոն մեծ ուրախութիւն կը ըլլայ: Մեղքի գերի եղած և յանցանքներով բեռնաւորուած մեղաւորները կը լսեն թէ մէկ անանկ Փրկիչ մը կայ

եղեր որ կրնայ զիրենք մեղքին անկճքէն և
 իշխանութենէն ազատել, և իրեն հաւատալով
 սրտերնին անպատմելի ուրախութիւնով կը լեց-
 ուի: Ար տեսնեն որ իրենց բարեկամներն ու
 ընկերներն ալ ան նոյն Փրկիչը սիրով կ'ըն-
 դունին, և անոնց վրայ կ'ուրախանան: Արբոր
 Աւետարանը ընդունուի ատելութիւնը հակա-
 ոսկութիւնները ու կռիւները կը դադրին, և
 ամէն սիրտ Աստուծոյ ու մարդոյ վրայ սիրով
 կը լեցուի. ու աս ալ մեծ ուրախութեան պատ-
 ճառ կ'ըլլայ: Օրհնեալ է Աստուած որ Աւե-
 տարանը մեզի ճանչցուց, որ աս երջանկութիւն-
 ներուն աղբիւրն է. ահա ան ժամանակը կու-
 գայ որ ատեն բոլոր աշխարհք Քրիստոսի ա-
 նունը պիտի լսէ ու անոր հաւատայ: Ան ա-
 տենը ոչ պատերազմ պիտի ըլլայ և ոչ ալ
 արիւնհեղութիւն, ոչ գողութիւն և ոչ ալ ա-
 ւազակութիւն, ոչ անձնասիրութիւնով իր ան-
 ծին շահը մնատել ուրիշին մասս հասցընելով,
 և ոչ ալ ատելութեան դորձքեր ու խօսքեր,
 հասրա խաղաղութիւն և սէր պիտի թագաւո-
 րէ ամէն սրտերու մէջ: Ան ատենը բոլոր աշ-
 խարհիս վրայ մեծ ցնծութիւն պիտի ըլլայ:

Ուստի ձեզի հաւատացեալներուդ սրտուական
է ան : Ա Պէր • Բ • 7 :

ՃՇՄԱՐԻՏ հաւատացեալները մեծ յարգութիւն կու տան Քրիստոսի • անիկայ իրենց “ Ամէնը և ամէն բանի մէջ է ” : Կող • Գ • 11 : Անիկայ իրենց աշխարհային բարեկամներէ կամ ինչ և իցէ երկրային վայելչութիւններէ և կեանքէ ալ աւելի է : Երբոր իր բնութեանը վրայ կը մտաածեն իրենց “ Տասը հազարներէն երևելի ” (Երդ • Ե • 10) կ'երևայ • երբոր երկինքին վրայ կը խորհին, ան աշխարհքին իրենց սրտուած մեծ ուրախութիւնը Քրիստոսի հետ և անոր նման ըլլալին է : Եւ Քրիստոնեաները Տէր Յիսուս Քրիստոսը ամէն արարածներէն աւելի յարգելու են : Արդարեւ սրտուական է ինքը անոնց ըրած բաներուն և սրտուած շնորհքներուն համար • քոչոր յուսացած օրհնութիւններնին իրմով կ'ընդունին : Օրհնքին անկէքէն իրենք խաշտեց, ինքը անոնց համար անկէք ըլլալով • կը հագուեցրնէ իրենք իր արդարութիւնովը որ Աստուծոյ առջև արդարութիւն գանեն : Աստուծոյ աջ կողմը նստած է անոնց համար բարեխօսութիւն ընելու • անոնց համար բնակարաններ սրտուած զնաց, և պիտի գայ ու անոնք իր քովը առնէ : Բոչոր յոյսեր-

նին անոր վրայ է • ինքը կու տայ անոնց զօրու-
թիւն առ աշխարհիս մէջ գլխունուն եկած փոր-
ձութիւնները յաղթելու • նեղութեան ժամեր-
նուն մէջ ինքը մխիթարութիւն կու տայ : Ինքը
կը զօրացնէ անոնք մահուան ժամերնուն և
ինքը պիտի բանայ անոնց երկինքին դուռները :

23

ԱՃեցէք մեր Տէր ու Փրկիչ Յիսուս Քրիս-
տոսի շնորհքովք ու գլխութիւնովք : Ա Պէր •
Գ • 18 :

ԵՐԲՈՐ մէկ մարդ մը նորէն կը ծնի • արե-
բութեան գործը իր մէջը կատարեալ չէ , ան
ատենը հոգևոր բաներու մէջ դեռ տղայ է :
Բայց շնորհքով պիտի աճի • հոգևոր կեանքի
մէջ օրէ օր պիտի զօրանայ մինչև որ Քրիստոս
Յիսուսով կատարեալ մարդ ըլլայ : Պէտք է որ
իր հաւատքը աճի , ու իր մեղաւոր ըլլալը ա-
զէկ տեսնայ , և իր տարաշխարութիւնը կատար-
եալ ըլլայ ու իր Աստուծոյն և Փրկչին վրայ
ունեցած սէրը օրէ օր բորբոքի : Մէկ խօսքով
պէտք է որ օր ըստ օրէ բոլոր Քրիստոնէա-
կան շնորհքները իր վրայ երևան , և Յիսուս
Քրիստոսի պատուահանութեանը վրայ աւելի
տեղեկութիւն ունենայ • շնորհքի մէջ ասանկ

ածնելու համար պէտք է որ յարմար միջոցներ
գործածէ : Պէտք է որ Աստուծոյ խօսքը շատ
կարդայ և անոր վրայ մտածէ . պէտք է որ
Աստուածաշունչին մէջ ցուցուած Բրիտանոսի բը-
նութեանը վրայ շատ խորհի : Պէտք է որ միշտ
արթուն կենայ ու աղօթք ընէ, և Սուրբ Հո-
գին խնդրէ, որ ան է միայն զինքը սրբացրնու-
ող . և պէտք է որ մեղքի դէմ արթուն կենայ,
որ չըլլայ թէ աս օրհնեալ Հոգին տրամեցրնէ
ու ան իր սրտէն հեռանայ : Արդեօք ես չնոր-
հաց մէջ կ'աճիմ . թէ որ չէ՝ վախնալու լեմ
որ բնաւ նորէն ծնած չեմ :

24

Բանի մը համար հոգ մի ընէք . հապա ա-
մէն բանի մէջ աղօթքով ու աղաչանքով, դո-
հութիւնով մէկտեղ ձեր խնդրուածքը Աստու-
ծոյ յայտնի ըլլայ : Փիւք . Դ . 6 :

ԱՍ աշխարհս տրամութիւնով և անասու-
գութիւնով լեցուն է . աս օրուան վայլածնիս
վաղը ձեռքերնէս կ'երթայ, ու չենք դիտեր թէ
գլխունուս ինչ նեղութիւններ պիտի դան : Եւ
սակայն բնաւ նեղութիւն մը ունենալու չենք
սպառնիլն վրայ . քանզի բոլոր դիպուածները
կառավարողը և կարգադրողը մեր երկնաւոր

Հայրն է : Փոքրիկ տղայ մը՝ իր հօրը տունը եղած ժամանակը ամենեւին չ'հոգար թէ ինչ պիտի ուտէ կամ ինչ պիտի խմէ, քանզի գիտէ թէ իր ծնողքը զինքը կը նային . և ոչ ալ կը վախնայ թէ իր խաղալիքները ձեռքէն կ'անեն ու զինքը կը չարչրկեն : Աոյնպէս և մենք պարտինք Աստուծոյ խոստումներուն վրայ փոքրիկ տղու մը ունեցած վստահութեանը պէս վստահութիւնով ապաւինիլ, թէ բոլոր մեզի պէտք եղածները պիտի տայ, և թէ մեզի բնաւ նեղութիւն մը պիտի չ'տայ, բայց միայն թէ որ մեր օգտին համար ըլլայ : Աղօթքով Աստուծոյ կրնանք երթալ և մեր ամէն խնդրուածքները իրեն յայտնել . և ալ ուրիշ հոգ ունենալու չենք, ինչու որ եթէ ուզած բաներն իս մեզի օգտակար են Աստուած անոնք կուտայ . և թէ որ չ'տայ հանդիստ ըլլալու ենք դիտնալով թէ անիկայ ինչ որ մեզի աղէկ է կ'ընէ : Աղօթքներնուս հետ գոհութիւն ալ ըլլալու է . ուրիշ օրհնութիւններ խնդրած ժամանակնիս Աստուծոյ արդէն պարզեւած անհամար օրհնութիւնները մոռնալու չենք :

23

Ան ատենը ամէնքն ալ նորէն աղաղակեցին՝ ըսելով . Մի արձակէր ատիկայ, հապա Բարաբրան : Յով . ԺԸ . 40 :

ԵՐԲՈՐ Յիսուս Քրիստոս Հոովմայեցի դա-
տաւորին առջև դատաստանի հանեցին, չէին
կրնար յանշանք մը ցուցնել անոր վրայ: Պի-
ղատոս ինքը ըսաւ. « Ես աս մարդուն վրայ
մէկ յանշանք մը չեմ գտներ »: ՂԳ. Ի. Գ. 4:
Զինքը հոն բերողներն ալ գիտէին թէ անակո-
կէր. գիտէին թէ իր կեանքը անդադար բարե-
բարութիւն ընելով անցուց. կոյրերուն աչքե-
րը և խուլերուն ախանջները բացաւ, կաղերը
քաշեցուց, անօթիները կշտացուց, հիւանդները
բժշկեց, մեռելներուն յարութիւն տուաւ և
սակայն աղաղակեցին ըսելով, աս մարդը չէ,
հապա Քարաբբան: Քարաբբան աւաղակ ու
մարդասպան էր. ասանկ մարդու մը աղատու-
թիւն գտնելովը ժողովրդոց ստացուածքը ու
կեանքը վտանգի մէջ կ'իյնար. բայց և այնպէս
քահանայապետները և ծերերը անոր կեանքը
աղաատել կ'ուզէին ու չէ թէ հեղ ու բարե-
բար Յիսուսին: Պիղատոս ալէկ հարցուց թէ
« Ինչո՞ւ համար, ի՞նչ չար ըրաւ »: Անիկայ
մարդոց Աստուծոյ օրէնքին սրբութիւնը ու մաք-
րութիւնը ճանչցուցեր էր. բարձր տեղերը հա-
մարձակութեամբ չարութիւնը յանդիմաներ էր,
ճշմարիտ արդարութեան կենդանի օրինակ մը
եղեր էր, և այսպէս ինքզինքնին արդար սե-
պող փարիսեցիներուն կեղծաւորութիւնը ու
չարութիւնը երևան հաներ էր: Անիկայ աչ-
խարհիս լոյս բերեր էր, բայց մարդիկ խառա-

ըր լոյսէն աւելի սիրեցին , ինչու որ իրենց գործ-
քերը չար էին • անոր համար աղաղակեցին •
ատիկայ չէ , հասրա Բարաբբան :

26

Ու իրենք պաշատը չ'մտան՝ որ չ'աղծուին ,
հասրա որ զատիկը ուտեն : Յ•Ը • ԺԸ • 28 :

ԱՍԿԷՅ կը սորվինք թէ ինտոր արդարու-
թիւն էր դախրներուն ու փարիսեցիներուն ար-
դարութիւնը : Անոնք կաշառակրծութիւնով կա-
րող էղան Յիսուար ձեռքերնին անցընել : Սըր-
տերնին չարութիւնով ու ատելութիւնով լեց-
ուած էր Աստուծոյ Որդիին դէմ • փափաքելով
կըփափաքէին անոր սպանման գործը կատարելու •
վկայներ հանեցին անոր դէմ սուա վկայութիւն
տալու : Բոլոր առ չարութիւնները առանց խըղ-
ճի կ'ընէին , և սակայն երբոր իրենց բանտար-
դեալը հռովմայեցի դատաւորին առջևը հանե-
ցին , պաշատը չ'մտան որ չ'ըլլայ թէ աղծուին ,
հասրա որ զատիկը ուտեն : Քրիստոս աղէկ ը-
սաւ անոնց , “ Այն ձեզի կեղծաւոր դախրներ
ու փարիսեցիներ՝ • • • դուրսէն մարդոց արդար
կ'երևնար , ու ներսէն կեղծաւորութեամբ և ա-
նորէնութեամբ լեցուն էք : ” Մատթ • ԻԳ • 27 ,
28 : Ամէն մարդ կրնայ հիմա տեսնել , թէ ինչ

զղուելի բան էր ան չար մարդոց ըրած կեղծա-
 ւորութիւնը, բայց մենք պարտաւոր ենք մեր
 սրտերը աղէկ քննել, որ չըլլայ թէ դալիրնե-
 րը ու փարիսեցիները դատապարտած ատեննիս,
 մենք ալ նոյն դատապարտութեանը մէջ գրա-
 նուինք: Թէ որ կը յուսանք արտաքին արարո-
 զութիւնով Աստուծոյ հաճոյ ըլլալ, թէ որ
 առաւել ջերմեռանդութիւն կը ցուցնենք կրօն-
 քին արարողութիւններուն և ծէսերուն քան
 թէ մեր ներսը ճշմարիտ սրբութիւն ունենա-
 լուն, թէ որ մեր արտաքին գործքերուն աղէկ
 կը նայինք և սրտերնուս մէջ չարութիւն և ա-
 տելութիւն կը պահենք, մէկ խօսքով թէ որ
 մեր կրօնքը սրտերնիս մաքուր չպահէր, մեր
 բնութիւնն ալ ճիշտ անոնց սէս է ու անոնց
 տրուած վայր մեզի ալ է:

27

Ու ըսաւ. Ի՞նչ կ'ուզէք ինձի տալ, ու ես
 ձեզի մատնեմ զանիկայ. և անոնք երեսուն սիկղ
 արծաթ կը աւեցին անոր: Մատթ. Ի. Զ. 15:

ՅՈՒԴԱՆ Յիսուսի աշակերտներէն մէկն էր
 ու անոր հետ շատ տեղեր ստորտած և անոր ըրած
 բարերարութիւնները ու սուրբ և անարատ վար-
 քը տեսած էր: Անոր մարդոց վրայ ինտոր և

որչափ սէր ունենալը աղէկ գիտէր և անշուշտ ինքն ալ անկէջ բարերարութիւններ ընդունէր . բայց իր սրտին մէջ զօրաւոր արծաթսիրութիւն մը տիրած էր և անիկայ լեցընելու համար իր Տէրը և Ղարգասալեար մատնեց : Քահանայապետներուն ու դպիրներուն Քրիստոսի վրայ ունեցած անհաշտելի ատելութիւնը գիտէր , գիտէր թէ երբոր անիկայ անոնց ձեռքը մատնուի պիտի չարչարեն ու մեռցընեն , բայց արծաթը կը սիրէր և միայն երեսուն կտոր աւարդ արծաթի համար օրհնեալ Փրկիչը իր թըշնամիներուն ձեռքը մատնեց : Ա՛հ ինչ ապակահեալ սրտի տէր մարդ ըլլալու է որ ասանկ բան մը ընէ . բայց ասիկայ ընողը մի միայն Յուդան չէ . ան մարդը որ Քրիստոսեայ կը կոչուի , ու վաստակի համար Քրիստոսի օրէնքներուն արդիլած մեղքերը կը գործէ , ինչպէս խորամանկութիւն՝ խաբէութիւն՝ արծաթսիրութիւն . ու ամենուն առջև Քրիստոսի անուանը ու գործին նախաափնք կը բերէ , Յուդային պէս իր Տէրը թշնամիներուն մատնած կ'ըլլայ : Ան մարդը՝ որ իր ունեցած հարստութենէն բարի գործքերու համար բաժին չ'հաներ և օգնութիւն չ'ըներ , ճիշդ Յուդայի նման արծաթը Քրիստոսէն աւելի սիրող կը համարուի :

Անիկայ անիրաւութիւն կրեց, ու չարչարուեցաւ, բայց իր բերանը չբացաւ. մորթուելու տարուող ոչխարի պէս, ու խուզողներուն առջևը մունձ կեցող մաքիի պէս՝ անանկ իր բերանը չբացաւ: Եսայ. ԾԳ. 7:

ՔՐԻՍՏՈՍԻ մեռնելու տակնը ցուցուցած հեղութիւնը շատ սքանչելի էր, բոլոր ան նախատիկները ու չարչարանքները սիրով քաշեց. երբոր ինքը կը բամբասէին ինքն ալ փոխարէնը չէր բամբասեր: Անիկայ ծաղը ըրին ծեծեցին ու երեսը թուքին, և իր դառն չարչարանքներուն մէջը իր վրայ կը ծիծաղէին թէ իրենց թագաւորը սխախ ըլլայ, բայց բոլոր ասոնց մէջ բարկութիւն կամ նախատանայ խօսք մը բերնէն չհանեց: Երբոր Պետրոս ուղեց անիկայ սուրով ազատել ինքը հրամայեց որ իր սուրը տեղը դնէ, և իր թշնամիներէն մէկուն ընդունած վէրքը բժշկեց: Յիսուս մեղի մեծ օրինակ մըն է. թէ որ Աստուած մեր վրայ նեղութիւն մը բերէ պէտք չէ որ դանդախնք. թէ որ մեր ընկերները մեզ բամբասեն ու չարչարեն, պէտք չէ որ չարին փոխարէն չար հատուցանենք: Բամբասանքի դէմ բամբասանք ընելու չենք, հասլա պէտք է որ հեղութիւնով քաշենք ան վնասները որոնցմէ չենք կրնար

փախչել, միայն Աստուծոյ ասպաւինելով որ
մեզ սրաշտպանէ ու մխիթարէ :

29

Կը կարծէս թէ չեմ կրնար հիմա իմ հօրս
աղաչել, և ինձի հասցընէ տասուերկու գուն-
դէն աւելի հրեշտակներ : Մատթ. Ի. Զ. 53 :

ՅԻՍՈՒՍ ինքզինքը սրաշտպանելու կարողու-
թիւն չունենալուն համար չէր որ անանկ հե-
ղութեամբ թշնամիին նախաստիները կրեց : Եւ
ամենակարող ըլլալը ևս առաւել սքանչելի կ'ը-
նէ իր ցուցուցած համբերութիւնը • կարող
էր մէկ խօսքով մը անոնք ամէնը յաւիտենա-
կան մահով սպաննել, քանզի երկինքին ու երկ-
րին բոլոր զօրութիւնները իրենն էր : Զինքը
սպաննողները անագանօք կը ստիպէին որ ինքի-
րենը խաչէն վար իջնալով իր Մեսիան ըլլալը
ցուցընէ • աս բանը կրնար ցուցընել երկինքէն կը-
րակ իջեցընելով որ անոնք լափէ, բայց իրեն ամէն
տուած նեղութիւնն լռութեամբ քաշեց : Եւ
ասիկայ ինչո՞ւ համար էր • անոր համար որ մար-
դիկներուն փրկութեանը ձեռքը զարկած էր ու
մեր աւրած օրէնքին անէծքը կը կրէր և չէր
ուզեր կենալ մինչև որ անիկայ կասարէ : Անոր
համար որ սուրբ գիրքերը կասարուին, որոնք

աս բաները առաջուց ըսին : Ո՞րչափ բան քա-
չեց մեր Փրկիչը մեզի համար , իրեն ո՞րչափ սէր
և երախտագիտութիւն ցուցընելու ենք :

30

Ուստի Յիսուս երբոր քացախը առաւ , ը-
սաւ . Ամէն բան կատարուեցաւ . ու գլուխը
ծռելով հողին աւանդեց : Յովն . ԺԹ . 30 :

Ո՛հ ինչ մէկ մեծ գործ մը կատարեցաւ ան
ասե՛նք , երբոր երկրիս ու երկինքին հիմերը
դնող Տէրը խաչին վրայ աղաղակեց թէ “ Ա-
մէն բան կատարուցաւ ” , մէկ գործ մը որ ար-
դարև արարչագործութենէն ալ մեծ էր , մէկ
գործ մը որ երկնային զօրաց գունդերը միա-
քերնին դրեր էին և անձկանօք կ'ստասէին , և
չորս հազար տարիներէն 'ի վեր զանազան կեր-
պերով և օրինակներով մարդոց ցուցուեցաւ և
խօսուեցաւ . մէկ գործ մը որ հրէից կրօնքին
բոլոր ծեսերն ու արարողութիւնները անոր
նշանակն էին , և բոլոր մարդարէներուն եղած
յայտնութիւններուն վախճանական նախաստիչ
ասիկայ էր : Անանկ գործ մըն էր որ Աստու-
ծոյ յաւիտեանական Որդիէն զատ ուրիշ էակ մը
կարող չէր կատարել . և անհնար բան էր որ
ուրիշ վճարքով մը ըլլար , այլ միայն անոր

սրատուկան արիւնովը : Աստուծոյ օրէնքին բո-
լոր սրահանջածը Յիսուս հիմա կատարեց և ար-
դարութեան բոլոր սրահանջածներն ալ քաշեց ,
քաւութիւնը հիմա կատարեցաւ ու Քաւիչը գը-
լուխը ծռելով հոգին աւանդեց : Ըս մեծ գոր-
ծը երկինքը զարմանքով և փառաբանութիւ-
նով լեցուց , աշխարհիս վրայ եղած բոլոր եր-
ջանկութիւններուն սրտաճառ եղաւ , և բոլոր յա-
ւիտենականութեան մէջ երկինքը փրկուածնե-
րուն երգը պիտի ըլլայ ան : Թող ևս շատ
խորհիմ աս մեծ գործին վրայ , և երանի՛ թէ
Սուրբ Հոգին իմ միտքս լուսաւորէր , որ Քը-
րիստոսի զարմանալի սէրը քիչ մը խմանայի :

31

Ուստի Յիսուս երբոր տեսաւ իր մայրը , և
ան աշակերտը որ կը սիրէր , որ մօտը կայնէր
էր : Ըսաւ իր մօրը • Ա՛՛վ կին • ահա՛ քու որ-
դիդ : Ետքը ըսաւ աշակերտին • Ահա՛ քու մայ-
րդ : Յովհ • ԺԹ • 26 , 27 :

ՅԻՍՈՒՍ թէպէտև մեծ շարժարանքի և տաղ-
նասաներու մէջ էր , բայց իր մայրը չ'մոռցաւ •
տակաւին ծնողասէր որդիի մը բոլոր կարեկցու-
թիւնները զգայ և ցուցուց : Իր տանջանքին
սաստիկութեանը մէջ խղճալով անհկայ իր սի-

բեւի աշակերտին յանձնեց, « Եւ ան ժամա-
 նակէն աշակերտը անիկայ իր քովը առաւ » :
 Ի՞նչ մեծ մխիթարութիւն գտած պիտի ըլլայ
 իր մօրը վերաւորեալ սիրտը ասանկ ժամու մը
 մէջ ասանկ որդի մը զինքը յիշելովը : Յիսուս
 Քրիստոս կաաարելտակէս հնազանդեցաւ Աստու-
 ծոյ օրէնքին, որ կ'ըսէ « Բու հայրդ և մայրդ
 պատուէ » : Ամէնքս ալ աս նոյն հոգին ունե-
 նալու ենք • պինտ սասաիկ նեղութիւնը անգամ
 չկրնար մեր ծնողքները սիրելու պարտականու-
 թիւններնէս մեզ արձրկել : Միշտ ջանալու ենք
 սիրոյ գործքերով սրտերնին ուրախացրնել • ան
 որ իր ծնողքը չ'սիրեր Քրիստոսի հոգին չունի :



ԱՊՐԻՒՆ

1

Ասան զի շնորհքով փրկուած էք դուք հաւատքի միջոցով . և սա չէ թէ ձեզմէ է , հասցա Աստուծոյ պարգևն է : Եփե . Բ . 8 :

Մ ԵՆ փրկութիւնը միայն շնորհքով է . Աստուած բուն իր ողորմութիւնովը ճամբայ մը պատրաստեց , որ մեղաւորները փրկուին . մեզ մեզքի մէջ մեռած տեսաւ և իր Սուրբ Ինքն իրկեց որ մեզ կենդանացնէ : Թէ որ մեր մէջը սրբութիւն մը ունինք անիկայ Աստուծոյ ձրի շնորհքովը մեր նոր արարածներ ըլլալէն ու մեր մէջը Տէր Յիսուս Քրիստոսի վրայ հաւատք հաստատուած ըլլալէն առաջ եկած է : Թէ որ հաւատքի մէջ հաստատ մնանք , պատճառը իրեն մեզ պահելը և փորձութեան դէմ կենալու համար մեզի զօրութիւն տալն է : Եթէ ըլլայ որ արքայութիւն երթանք , անիկայ միայն Աստուծոյ ձրի շնորհացը տալու ենք , ու չէ թէ մեր ըրած արդարութեան գործքերուն : Յաւիտենահամութեան մէջ մեր ուրա-

խուժիւնը մեզի տէս մեղաւորները փրկող ան
մեծ շնորհքը փաստարանելը պիտի ըլլայ : “ Չէ
թէ մեզի՛ ո՛վ Տէր՛ չէ՛ թէ մեզի , հաստա քու
անուանոց փառք տուր ” : Մատթ . ՃԺԵ . 1 :

2

Մի կարծէք թէ ես եկոյ օրէնքը կամ մար-
դարէնքը աւրելու . չեկոյ աւրելու , հաստա
կտաարելու : Մատթ . Ե . 17 :

ԹԻՊԷՏԵԻ Քիսուս Քրիստոս Աստուծոյ օ-
րէնքին անկճքէն մեզ խաւսեց , սակայն օրէն-
քին հնազանդելու պարտաւորութենէն մեզ ա-
զատ չորաւ : Աեղանչեցիւք և մեր արժանա-
ւորութիւնովք բնաւ կարող չէնք փրկուիլ . ու
թէ որ փրկուիւք՝ բո՛ւրովն Քրիստոսի ըրած
քաւութիւնովք պիտի փրկուիւք . բայց սակայն
միշտ Աստուծոյ բոլոր պատուիրանքները պա-
հելու պարտականութեան սակ էնք : Թէ որ
մարդ մը մեանելու արժանի յանձնըսվ մը
բնաւի ու իր հերութեան օրէնքներովք մահ-
ուան գատապարտի , բայց թագաւորը իր
գթութիւնովք անոր յանձնըր ներելու ճամ-
բայ մը գտնայ , ան մարդը սկ թագաւորին
ողորմութիւնովք աղաաած կը լայ՝ ու չէ թէ իր
բարի գործքերովք . ինչու որ իր գործքերը զին-

քը մահուան դատապարտեր էին : Բայց ասանկով միթէ իր Տէրութեանը օրէնքները կատարելու պարտաւորութենէն ազատ կ'ըլլայ . ու թէ որ ալ անկէց ետեւ աղէկ մարդ ըլլայ և օրէնքներուն դէմ փոքր յանցանք մը անգամ չըդործէ, կրնայ ըսել թէ իր աղէկութիւնովը ազատեցաւ . ամենևին չէ : Անիկայ մահուան դատապարտուելու արժանի դործ մը ըրեր էր, և չէր կրնար ան դործը ետ դարձրնել, ու անկէց ետեւ ցուցրցած բարի վարքը միայն իր պարտաւորութիւնը կատարել էր և չէ թէ աւելի բան մը . ասոր համար պէտք է որ միշտ խոստովանի թէ միայն թագաւորին ողորմութիւնովը իրեն արժան եղած մահէն ազատեցաւ : Ասանկ ալ մենք թէ որ ասկէց ետեւ Աստուծոյ պատուիրանքները կատարեալ պահենք՝ միայն մեր պարտաւորութիւնը կատարած կ'ըլլանք : Անցած մեղքերնուս համար օրէնքին անէծքը տակաւին մեր վրայ է . և թէ որ փրկուինք միայն շնորհքով պիտի փրկուինք :

3

Հաւատքով անոնց սիրտերը մաքրելով : Գործօժե . 9 :

ԵՐԲՈՐ մարդ մը իր հոգիին փրկութեանը համար Տէր Յիսուս Քրիստոսի կը հաւատայ, ջանք

կ'ընէ Աստուծոյ պատուիրանքները պահելու .
 չէ թէ միայն որ կը զգայ թէ միշտ պարտա-
 կան է անոնք կատարել , հասկա որ ալ կը սի-
 րէ անոնք : Ան կենդանի հաւատքը՝ որ ինչ-
 պէս ճիւղը որթին վրայ կապուած է այսպէս
 զինքը Յիսուս Քրիստոսի կը կապէ , իր սիր-
 ար կը մաքրէ . և մեղքը ալ առջի պէս չ'սի-
 րեր : Առաջ Աստուծոյ պատուիրանքները իրեն
 ծանր կու գային , և շատ կ'ուրախանար երբոր
 գիտնար թէ առանց դատապարտութեան կըր-
 նայ մեղք գործել . բայց հիմա Աստուծոյ օրէն-
 քը կը սիրէ , քանզի անիկայ սուրբ է : Ար տես-
 նէ թէ մեղքը շատ չար ու դառն բան մըն է , ա-
 նոր համար անիկայ կ'ատէ . գիտէ որ իր բարի
 գործքերովը ամենեկին չ'կրնար փրկուիլ . սա-
 կայն կ'աչխատի Աստուծոյ օրէնքին համաձայն
 գանուելու , և կ'ողբայ որ անոր մէջ այնչափ
 պահաս կը գանուի : Աերստին ծնած է ինքը
 հողիով . Յիսուս Քրիստոսով նոր արարած
 մըն է :

4

Ինչու որ Քրիստոսի սէրը մեզ կը ստիպէ :
 Բ Կորնթի . Ե . 14 :

ՃՇՄՍՐԻՏ հաւատացեալները մեղաց գէմ
 պատերազմելու և սրբութեան ետեւ ըլլալու

շարժող աճեանէն զորաւոր շարժառիթը Քրիս-
 տոսի սէրն է : Արբոր մեզք գործեալ փոր-
 ձուցեալն մէջ կ'իջնայ , զ'նքը մեզքին անկէճքէն
 և իշխանութենէն աղաւտեալ համար Քրիստո-
 սի բոլոր ըրածները և քաշածները միաքը կը
 քերէ : Աւասի ան բանը որ Աստուծոյ Արդիին
 մահաւանը պատճառ կըլաւ , սէտք է որ ինք
 սիրէ . անիկայ սէտք է որ Վրէկը վասը-
 նեալ բան մը ընէ , որ զ'նքը աշխարհ սիրէ :
 Երբոր կը խորհի իր ներքին և արտաքին մեղ-
 քերուն վրայ , որոնց մէջ ամէն որ կ'իջնայ ,
 Քրիստոսի իրեն վրայ ունեցած ան մեծ սիրոյն
 մտածութիւնը խորունկ զզուամով իրեն ապաշ-
 իարէլ կը տայ : Չիսէ որ Քրիստոս աշխարհք
 եկաւ ու մեռաւ որ զ'նքը և բոլոր աշխարհք
 Աստուծոյ հնազանդեալ և երանկութիւն գրա-
 նեալ առաջնորդէ . ուստի ինքն ալ Քրիստո-
 սի սիրով ստիպուած իր կենսալ գիտաւոր նը-
 պատակը ասիկայ կ'ընէ : Ա'աշխատի օրէ օր ին-
 քը աւելի սուրբ ըլլաւ և կրօնական շարժալ
 ուրիշները համոզեալ , որ մեղքերնին ապաշխա-
 րեն և Քրիստոսի գան ու անոր ապաւինին որ
 վերկուին :

բան մը գիտնալ, բայց միայն Յիսուս Վրիս-
տոսը, ու ան՝ խաչը կ'ամ: Ա. Կորնթ. Բ. 2:

ՊՕՂՈՍ երբոր Ղեկաարանը քարոզէ ու ընա-
քուէցաւ, ապէկ հասկըցաւ իր Աստուածային
Վարդապետէն, նոյննամ սրաշատը. գիտէր որ
Ղեկաարանը մեղաւորներուն քաղցր աւեախաներ
կու աայ, ջուշրնէ ով թէ փրկութեան ճամբայ
մը կայ, և թէ ան փրկութիւնը խաչեալ
Փրկիչ՝ մը ձեռքովը կ'ը սայ: Աւրեմն աս պի-
տի ըստ իր քարոզութեան մեծ նիւթը, թէ
Յիսուս Վրիստոս մեռաւ մեղաւորները փրկե-
լու համար: Ի՞նչ բանը անանկ հարկաւոր կ'ե-
րեար իր աչքին և այնչափ ալ կը քարոզէր,
որ կարծեա թէ ուրիշ բան չէր գիտեր: Պօ-
ղոս բոլոր Ղեկաարանը քարոզողներուն օրինակ
մըն է. անոնք ալ պէտք է որ աս նոյն խօս-
քը քարոզեն և նոյն սերտութիւնն առնող լու-
րերը հրատարակեն: Ննչպէս որ ան ստանը ա-
նանկ ալ հիմա աշխարհս մեղաւորներով լե-
ցուն է, և անշուշտ ուրիշ քարոզութիւն մը
այնչափ ընդունելի չէ իրենց որչափ ան որ կ'ի-
մայրնէ անոնց թէ Փրկիչ մը կայ, որ օրէն-
քին անե՛ծքը իրենց տեղը կրէց: Երբոր աս
մեծ ճշմարտութիւնը հաւատարմութեամբ և խո-
նարհութեամբ կը քարոզուի, ան ստանը Աստ-
ուած կ'օրհնէ իրենց քարոզութիւնները ու մե-
ղաւորները դարձի կու գան: Մէկ քանի քա-
րոզչներ Արինշանախայի Հեթանոսներուն Աս-

առեծոյ էութեանը և դէպի Անոր ունեցած պարտաւորութիւններնուն վրայ քսան տարիի չափ քարոզութիւն ըրին, բայց մէկ յաջողութիւն մը չտեսան : Ետքը Յիսուսը անոնց քարոզեցին որ մեղաւորներուն համար մեռաւ . խեղճ Հեթանոսները տեսան որ առ է ճիշտ իրենց ուղած Փրկիչը, ապաշխարեցին ու հաւատացին :

6

Ինչու որ ձեզի տրուեցաւ Քրիստոսի համար չէ թէ միայն անոր հաւատալ, հասլա անոր համար չարչարուիլ ալ : Փիւեռ • Ա • 29 :

ԵՐԲՈՐ առաքեալները Հրէից ատեանը կանչուեցան ու Յիսուսը քարոզեցնուն համար ծեծ կերան, ինդացին որ իր անունին համար առնորդանքի արժան սեպուեցան : Պօղոս ալ Փիլիպեցիներուն ունեցած արտօնութիւններուն մէկը կը սեպէ անոնց Քրիստոսի համար նեղութիւն քաշելը : Ասիկայ աշխարհիս մարդոցը ապանջին նոր բան մը կու գայ . մարդիկ նեղութիւն քաշելը բնաւ չեն սիրեր . ուրեմն ինչո՞ւ համար առաքեալները ասանկ խօսք մը խօսեցան . արդեօք կը յուսային թէ նեղութիւն քաշելով փրկուելու արժանաւորութիւն պիտի ունենան . չէ, շնորհքով փրկուելէն զատ բոլոր

ուրիշ խորհուրդները կը հեքքէին : Անոնք ըս-
տիպողը Քրիստոսի սէրն էր , ու երբոր աս
սէրը ցուցընելու համար ինչ և իցէ բան մը
կամ նեղութիւն մը կը քաշէին շատ կ'ուրախա-
նային : Ար խնդային որ իրեն հեռեւորներուն
համբանքին մէջն են . Քրիստոս ըսաւ , " Թէ որ
աշխարհ ձեզ կ'ատէ , պիտոյք որ ձեզմէ առաջ զիս
ատէց " . և կ'ուրախանային որ անոր հետ իր քա-
շած նեղութիւններուն մէջ ընկեր եղան : Նաև
աս նեղութիւնները քաշելովն իրենց հաւատա-
քին զօրութիւնը ու Քրիստոսի վրայ ունեցած
սէրը աշխարհիս կը ցուցընէին , և ասանկով չը-
հաւտացողներուն առջևը ղինքը կը պատուէին ,
ու կ'ուրախանային . երբոր աս բաները ընելու
պատեհութիւն կը գտնէին : Նաև աս նեղութիւն-
ները իրենց բան մը չէր երևար , ինչու որ
աչքերնին միշտ իրենց համար պատրաստուած
ան յաւիտենական փառքին մեծութեանը վրայ էր :

7

Բայց ես ու իմ տունս Եհովան պիտի պաշ-
տենք : Յե* . ԻԳ . 15 :

ԻՍՐԱՅԷԼԱՅԻՆԵՐԸ միշտ կուսպաշտութիւն
ընելու յօժար էին . և Յեսու անոնց հետ իր
վերջն խօսակցութեան ատենը հրամայեց ա-
նոնց որ ընտրեն թէ ո՞ր Աստուծոյ պիտի ծա-

ասյեն • և նոյն ժամանակը ցուցուց թէ ինքը
 Եհովան պաշտելու հաստատ գիտաւորութիւն
 ունի : Աս ընտրութիւնը չէ թէ միայն իրեն
 համար էր հասցա իր անը համար ալ • ինչ-
 պէս որ Եհովան իրեն Վասուած ընտրէր էր
 անանկ ալ իր ընտանիքին համար Աստուած
 ընտրէց : Երբոր մէկ մարդ մը ինքզ'նքը Աս-
 տուծոյ ծառայութեանը կու սոյ , պարտական
 է որ իր ընտանիքն ալ նոյնպէս անոր նուխ-
 րէ : Երգարե չկրնար իր զաւկընեքուն սիրտը
 մտխել ու աննը իտուս Վրիստոսով նոր ա-
 րարածներ ընել , բայց կրնայ “ Աննք մեծցը-
 նել Տէրոյը վարժութիւնովը ու խրատովը ” :
 Եփե • 2 • 4 : Ամէն որ կրնայ սորվեցընել ա-
 նոնց Աստուծոյ խօսքին ճշմարտութիւնները , և
 կրնայ աշխատիլ անոնց մօքին մէջ ապաւորե-
 լու Աստուծոյ զաւկընեքուն պէս վարուելուն
 հարկաւորութիւնը : Արնայ Վրիչ'ն սիրոյն վը-
 րայ անոնց խօսիլ և աշխատիլ որ անոնց ցու-
 ցընէ թէ պարտական են “ իրենց անձեյնուն
 կենդանի չըլալ , հասցա անոր՝ որ իրենց համար
 մեռաւ ” : Ի Կորնթե • Ե • 1 : Իր ամէն օրուան
 վարքովը կրնայ ցուցընել անոնց թէ ինքը ա-
 ռաւել անոնց հողինեքուն վրիտութեանը կը փա-
 փաքի , ու չէ թէ աշխարհային հարստութիւններ
 ու պատիւ ունենալուն : Արնայ ամէն օր ա-
 զօթքով աննը Վասուծոյ յանձնել , և Սուրբ
 հողին ազգեյութիւնները անոնց համար խընդ-
 րել : Ամէն Վրիստոնեայ իր զաւկընեքուն վը-

բայ այսչափ պարտաւորութիւններ ունի, և թէ որ հաւատարմութեամբ ասոնք կատարէ՝ կլնոյ յոյս ունենալ թէ Աստուած իր տունը պիտի օրհնէ :

8

Ինչո՞ւ որ մարդոյ վառքը Աստուծոյ վառքէն աւելի սիրեցին : Յով. • ԺԲ • 43 :

Թէ որ մէկը Քրիստոսի աշխարհիս վրայ եղած ասոնք անոր աշակերտ ըլլալ ուղէր, ինքզինքը ծաղր ըլլալու նախաախնք ու հալածանք քաշէ ու սակ կը ձգէր : Ասոր համար շատերը թէպէտ անոր պահանջմունքներուն ու վարդապետութիւններուն ճշմարիտ ըլլալը գիտէին, բայց անոր աշակերտները չէին ըլլար • առաւել կը վախնային մարդոյ աչքին առջև անհաճոյ դանուէ կն քան թէ Աստուծոյ : Եւ իրենց վարձքը կը ընդունէին, աշխարհիս վրայ անցընէ ու կործ կեանքերնուն մէջ մարդիկնէրէն դավութիւններ կ'առնէին, և անկէց ետե դատաստանի գային անոր գիմար՝ որ ըսաւ, « Եւ ո՞վ որ մարդոյ առջև զս կ'ուրանայ, ես ալ անիկայ պիտի ուրանամ իմ Հօրս առջև՝ որ երկինքն է » : Մատթ. • Ժ. • 33 : Հիմա ալ Փրկչէն ջերմեռանդ ու հաստատուն հեռուողները շատ անգամ խայտասակ ըլլալու և անարդանքի տակ

կ'իյնան . և աս բանը շատերը Քրիստոսի ճշմարիտ աշակերտ ըլլալէն կ'արդիլէ : Բայց ո՞րը առաւել աղէկ է , աս աշխարհիս մէջ ժամանակաւոր նախատիներն առելութիւններ և հաւածանքներ քաշելը՝ թէ յաւիտեանս Աստուծոյ բարկութիւնը կրելը : Թող մարդիկ մեզ դալէն կամ արհամարհեն , ասիկայ միայն քիչ ժամանակ կը տեւէ . բայց Աստուծոյ հաճութիւնը կամ բարկութիւնը մեզ կամ յաւիտեանս պիտի երջանկացընէ , և կամ յաւիտեանս թշուառութեան մէջ պիտի ձգէ : Թէ որ Յիսուս անգամ մը իս ընդունէ , ալ անկէց ետեւ « Պիտի չ'վախնամ . մարդը ինձի ի՞նչ կրնայ ընել » : Սաղմ . ԾԶ . 11 :

9

Յիսուսի նայինք՝ մեր հաւատքին առաջնորդին ու կատարողին : Եբր . ԺԲ . 2 :

ԱՍ ներկայ կեանքերնուս մէջ մեր աչքերը պէտք է որ Յիսուսի վրայ հաստատուած ըլլան . պէտք է որ Յիսուսի նայինք իբրև մեր օրինակին , և միշտ աշխատինք անոր նման ըլլալու : Իր բնութիւնը սորվելու ենք , ինտոր որ յայնուած է Աստուածաշունչին մէջ , որ իմանանք թէ ի՞նչ պարտաւոր ենք ընել : Նաև

Յիսուսի կրնանք նայիլ իբրև բարեկամ կարեկից, ինքը մեր բնութիւնը հագաւ, և « Աստուծոյ է մեր տկարութեանը հետ մէկ տեղ շարձարուիլ » : ԵՔԵ • Գ • 15 : Նեղութեան մէջ իրեն նայելու ենք որ մեզի մսիթարութիւն տայ, և ինքը մեզի հրամայեր է որ բոլոր մեր արտամութիւնները իրեն տանինք • ու թէ որ միայն անոր աստուծոյն ինքը կարող է և կամեցող սրտերնուս խաղաղութիւն տալ : Պէտք է որ փորձութեան ժամանակ իրեն նայինք, որ մեզի օգնութեան հասնի ու զօրութիւն տայ • « Ինքը ամէն կերպով փորձը առած է մեզի նման, բայց առանց մեղքի » , ԵՔԵ • Գ • 15 • « Ու կրնայ փորձանաւորներուն ալ օգնական ըլլալ » • ԵՔԵ • Բ • 18 : Պէտք է որ ամէն ատեն իրեն նայինք որ մեզի թողութիւն տայ • անիկայ մեր մեղքերը խաչափայտին վրայ կրեց, անոր համար միայն իրմէն կը յուսանք թողութիւն գրանել : Պէտք է որ իրեն նայինք իբրև մեր միջնորդը և բարեխօսը Հօր Աստուծոյ, քանզի միայն անոր ձեռքովը կրնանք ընդունուելու յուսով Աստուծոյ երթալ : Յիսուս մեզի ամէնը և ամէն բանի մէջ է, և թէ որ իրեն նայինք պիտի փրկուինք :

Իսկ դուք անկէ էք Քրիստոս Յիսուսով, որ
ան մեզի Ղստուծմէ իմաստութիւն՝ արդարու-
թիւն՝ սրբութիւն ու փրկութիւն եղաւ : Ա. Կորնթ. -
Ա. 30 :

ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ, ու հոգևոր բաներու մէջ
բնականաբար մենք ազէա ենք • ու նաև ապա-
կանուած ենք ու յախտենական մահու գա-
տապարտուած • բայց մեր ասանկ արտում և ան-
օգնական վ ճակիմ մէջ Յիսուս Քրիստոս մեզի
կու գայ իր ձեռքը բոլոր մեր կարօս եղած օրհ-
նութիւններովը լեցուն : Ան մեզի Ղստուծմէ
իմաստութիւն եղաւ • ինքը կը լուսաւորէ մրտ-
քերնիս • ինքը մեզի կու տայ որ Ղստուծոյ բը-
նութեանը և սրբութեանը ու մեր պարտաւո-
րութիւններուն և գայու վ ճակիմ վրայ քիչ մը
բան գիտնանք : Նաև արդարութիւն եղաւ մե-
զի, մեր աեղը կայնեյաւ, մեր բնութիւնը ա-
ռաւ ու Ղստուծոյ օրհնքին կատարեալ հնա-
զանգեցաւ, և մեր մեղքերուն արժան եղած
անէծքը կրեց, և հիմա մեզ իր արդարութիւ-
նովը պիտի հաղուեցնէ, որ Ղստուծոյ առջին
արդար երևնանք : Նաև մեզի սրբութիւն ե-
ղաւ • իր միաքը գրաւ որ չէ թէ միայն իր ժո-
ղովուրդը գատապարտութենէ ազատէ, հասրա
անանք նաև սուրբ ընէ : Եւ բոլոր իր ընտրած-

ները պիտի սրբէ, որ անոնք Մտառոծոյ ակթո-
 սին առջևը անկեղ երկչրնէ: Ենքը մեր վրը-
 կուծիւնը եղաւ, առ գործը որ սկսեց պիտի
 կատարէ: մեզ ապահով առ աշխարհէս պիտի
 անչրնէ, և գ'երը սիրողներուն համար պատ-
 րաստած օթեւանները պիտի տանի, ուրտեղ
 յաւիտեանս իրեն երկրպագութիւն պիտի ընենք
 իբրև մեր Փրկիչը, ճանչնալով որ մեր վրկու-
 թիւնը բոլորովն իրմէն է:

11

Ուստի ամէն ինչ որ կ'ուզէք, որ մարդիկ
 ձեզի ընեն, դուք ալ անոնց անանկ ըրէք, քան-
 զի առ է օրէնքը ու մարգարէները: Մատթ. է. 12:

ԱՍ է մեր ընկերին հետ վարուելու կա-
 նանիս որ Քրիստոս մեզի տուաւ, և շատ ըս-
 քանչէ ի կանոն մըն է. կարճ է, սակայն իր
 հեղ նակին խնաստութիւնը և բարեսիրութիւնը
 կը փայլի անոր մէջ: Քանի մը խօսքերով ա-
 նանկ պրանչելի կանոն մը կու տայ որ մարդոց
 ամէն հարգութեանցութիւնները ամէն տեղ և ա-
 մէն տակն կառավարելու յարմարութիւն ունի:
 Թէ որ միայն առ օրէնքը պահուէր, մարդոց
 հաստատած ամէն օրէնքները պարտաւր կ'էլէ-
 ին: Ան տակնը ոչ խաբէութիւն կ'ըլլար՝ ոչ

զըկանք, ոչ գողութիւն և ոչ ուրիշ մեղք մը :
 հասար ընդհանուր խաղաղութիւն կը թաղաւո-
 րէր ամէն տեղ, ու բանտեր բնաւ պէտք չէ-
 ին ըլլար : Աս օրէնքը շատ պարզ է, դիւրաւ
 կը յիշուի ու կը գործածուի . փոքրիկ տղայ մը
 կրնայ անխիտ յիշել, և իր գործքերը անոր
 հետ բաղդատել : Դէպի մեր ընկերներնուս ու-
 նեցած մէկ պարտաւորութեան մը վրայ թէ որ
 տարակոյս մը ունենանք թէ ինտո՞ր պէտք է որ
 ընենք, ան ատենը միայն սա հարցընելու ենք
 թէ ան նոյն բանը ինտո՞ր պիտի ուղէինք որ
 անոնք մեզի ընէին : Թէ որ սա կանոնիս հը-
 նազանդուէր, սա կեանքիս թշուառութիւննե-
 րէն շատերը չէին ըլլար : Ասիկայ Քրիստոսի
 բոլոր օրէնքներուն նման աշխարհի վրայ խաղա-
 ղութիւն ու մարդիկներուն հաճութիւն կու տայ
 և կը ցուցնէ թէ Քրիստոս ինչպէս որ իմաս-
 տուն է այնպէս ալ բարի է : Աղէկ ըսին ի-
 րեն համար, երբոր դեռ աշխարհիս վրայ էր,
 թէ “ Երբէք մէկը սա մարդուն, պէս խօսած
 չէ ” : Յով. Է . 46 :

12

Եւ եղաւ որ երբ անոնք կ'օրհնէր, զատ-
 ուեցաւ անոնցմէ, ու վեր կ'ելէր երկինքը : Ղոսկ .
 Խ . 15 :

ՅԻՍՈՒՍ աշխարհիս վրայ իր ունեցած գործը կատարած էր ու ալ երկինք պիտի ելլեր . ուստի իր սգաւոր աշակերտներուն սիրտը մխիթարեց . մտքերնին բացաւ որ Սուրբ Գիրքը հասկընան , որն որ կը ցուցընէր թէ պէտք էր իրեն ասանկ չարչարուիլ : Սուրբ հոգին անոնց խոստացաւ և իր վերջին հրամանն տաւ , ու ետքը ձեռքերը վեր առաւ և անոնք օրհնեց ու ասանկ զատուեցաւ անոնցմէ ու վեր ելաւ երկինքը : Իր աշակերտները օրհնելով վեր ելաւ . և մինչև հիմա աս օրհնութեան գործը շատ հաճելի է իրեն : Աշխարհիս վրայ ըրած աս իր վերջին գործը , որ երկինքը ելլալու ատենն ալ ըրաւ , մինչև հիմա կը գործէ : Թէպէտև Աստուծոյ աջ կողմը բարձրացաւ , բայց մարդոց մէջը անանկ խեղճ ու անարդուած մէկը չ'կայ , որ եթէ ապաշխարող և հաւտացող սրտով մը իրեն մօտեցայ , ինքը անոր չ'նայի ու անիկայ չ'օրհնէ : Իր անձը տալով մարդոց որդիներուն համար ամենամեծ օրհնութիւններ ծախու առաւ , ու ասոնք ձրի և շարունակ բոլոր զինքը սիրողներուն կը պարգևէ :

Ինչու որ հաւատքով կը քաշենք, աւ չէ թէ
երևոյթով: Բ. Կորնթ. Ե. 7:

ՔՐԻՍՏՈՍԻՆ ԻՆ ԻՐ ԱՆՇԻՆՆԵՐ ԱՆՆԵՅԱԾ ԿՈՒՄԱՐԱՆԻ
ՆԵՐՐ ԱՆՆԵՆԵՐ ԱՆՍՐԻՆԵՐ չեն: Իրեն դի-
տաւորութիւնը անանկ բաներու վրայով են,
որոնք միայն Աստուծոյ իրեն յայանեցողը ըն-
գունած է: Իր ունեցած յոյսերուն աւ վախե-
րուն ամենքն ալ աներևոյթ բաներու կը վերա-
բերին. բայց հաւատքը անանկ զօրութիւն մըն
է իր մէջը, որ ան բաները աչքով տեսած ըլ-
լալու չափ հաստատութիւն կու տայ իրեն: Կը
հաւատայ որ երջանկութեան արքայութիւն մը
ու թշուառութեան դժոխք մը կայ, որ մար-
դըս մեանեկն ետեւ անանց երկուքին մէկուն մէջ
պիտի երթայ. և կ'աշխատի անանկ ճամբով մը
երթալու որ մէկուն հասնի ու մէկաւն ետ կե-
նայ: Կը հաւատայ որ իր հոգին յաւիտեան
պիտի ապրի, և առ ճշմարտութեանը հաւատա-
լով կ'որոզ կը լայ բոնորակքը գանաւոր զգալի
բաներէն յառաջ եկած փորձութիւններուն դէմ
կենայու: Կը հաւատայ որ սուրբ Աստուած մը
միշտ իր վրան կը նայի, և քիչ շատ անանկ
կերպով մը կը շարժի որ իբր թէ Աստուծոյ
աչքը իր վրայ հաստատուած կը տեսնէ: Կը
հաւատայ որ Յիսուս Քրիստոս զինքը փրկելու

հասնար մեռաւ, և առ ճշմարտութեանը հաւա-
սալով, աչքոսը անկեաց խաչափայտին վրայ
տեսածի տես սիրտը կը շարժի: Հաւատքնիս
որչափ որ զօրաւոր ք լայ, հողեոր բաներու վրայ
լրած խորհրդածութիւններնիս այնչափ սպայծառ
և վարքելնիս ալ այնչափ սուրբ կը լայ: Աղօ-
թենք աշակերաներուն հետ ըսելով, Տէր՝ « Մէր
հաւատքը աւելցուր »:

14

Ամբարիշտները խաղաղութիւն սխտի չունե-
նան, կը լօէ Տէրը: Եսայ • ԽԼ • 22:

ՄԵՐԳԻԻՎ մեղանչելով խաղաղութիւննին կը
կորսն ընեն, կրնայ ըլլալ որ մեղասակց կեան-
քի մը մէջ անասնկ ստեղծներ ըլլայ որ զուար-
ճանան և երբեմն քիչ մը ստեն շատ երջանկու-
թիւն ունենան, բայց երբէք հաստատուն խա-
ղաղութիւն մը չունին: Խղճմտանքնին զիբենք
կը նեղէ և դարձած մեղքերնին իրեն, կիմացը-
նէ, և առ ըանը իրենք թշուառութեան մէջ
կը ձգէ: Մահուան խորհուրդը անկէն երջա-
նիկ ժամերնին կ'աւրէ, և երբոր Աստուծոյ
առջևը դատաստանի ելանին կը մամտան վա-
խով ու գողով կը լեցուին: Նրենց ջար կիր-
քերն ալ՝ որ 'ի գործ կը դնեն, զիբենք մը-

արնշենաւոր թշուառութեան մէջ կը ձգեն : Տէրքն է՝ ըսողը « Ամբարիշտները խաղաղութիւն պիտի չունենան », և ամէն մարդ իր փորձառութիւնովը կը աւանդ որ Տէրոջը աս խօսքը ճշմարիտ է : Կնտոր խաղաղութեան մէջ կրնայ ըլլալ ան մարդը, որ մեղքով լեցուն խղճմանքի մը տուած տանջանքներուն տակ կը հեծէ . և Աստուծոյ բարկութիւնը իր վրան է : Միայն մէկ ճամբայ մը կայ, որով մեղաւորը ճշմարիտ և հաստատուն խաղաղութիւն կրնայ գրանել, և անիկայ Քրիստոսի հաւատան է : Թէ որ մեղաց համար անոր քրած քառութեանը տալաւնիսը, խխղճերնիս մեզ տանջե կն կը դադրի : Թէ որ անոր արդարութիւնովը հաղութիսը, Հայրը մեզի հետ կը հաշտուի և որդտերնուս խաղաղութիւն կու տայ : Թէ որ իրեն հաւատանք, ինքը կը խոստանայ որ մեզի յաղթութիւն պիտի տայ մահուան վրայ, անանկ որ մահը ալ մեզի վախ մը չկրնայ տալ : Թէ որ սրտերնիս իրեն մտակցրնենք, բոլոր պիտի կիրքերնիս պիտի սանձէ, որ մեր ներսիզին խաղաղութիւն կ'ունենանք :

Ահով ու դողով անձերնուդ փրկութիւնը գործեցէք . ինչու որ Աստուած է՝ որ ձեր

մէջը կը ներդարձէ կամենալը ու ընելը իր հաճութեանը համար : Փիլիպ . Բ . 12 , 13 :

Այս դարձը՝ որ հրամանն եղած է մեզի , մեզ քերնուս համար քառութիւն ընել չէ , ինչու որ աս բանը Վրիստոս մեզի համար ըրեր է : Ասիկայ մեր բարի դարձքերովը արքայութեան արժանաւորութիւն մը ունենալը փնտաւել չէ , քանզի ըսուած է մեզի որ « Սրէնքին դարձքերովը մէկ մարմին մը պիտի չարդարանայ » : Բայց մեր դարձը Աստուծոյ ուղածին պէս արամութիւնով մեզքերնիս զըջալ է . Վրիստոս մի միայն Փրկիչ հաւատալ է . խեղճ ու թշուառ մեղաւորները ըլա՛նիս զգաւով՝ անձերնուս վրայ ամենեկին յոյս մը չդնել , և փրկութեան համար մի միայն Վրիստոսի ապաւինել է : Արքի հասղանդութիւնով մեր հաւատքին ճշմարիտ ըլալը ցուցընել է . սրտերնուս մէջն եղած բոլոր մեզքերը յաղթելու աշխատիլ է , և մեր Փրկչին նման ըլալ է : Ասիկայ մէկ մեծ դարձ մըն է որ ահով ու դողով ընելու ենք . ինչու որ մեղանշահան ու խաբերայ սրտեր ունինք , որոնք միշտ մեզ մոլորցընելը կը նային . ու նաև աս աշխարհիս մէջ սատանան և ուրիշ թշնամիներ ալ կան , որոնք միշտ մեզ կորսընցընելու կ'աշխատին : Բայց աս ծանր դարձիս մէջ աս քաջաշերտութիւնը ունինք որ Աստուած կը ներդարձէ մեր մէջը կամենալը ու ընելը իր հաճութեանը համար : Թէ որ ճշմար-

տապէ՞ իր զաւկընէրն ենք, մեր սրտերուն մէջ
 սկսած գործը չձգեր որ մենք կատարենք, հա-
 պա ինքը առաջ պիտի տանի իր սկսածը: Ին-
 քը կատարեալապէս մեղայ իշխանութենէն և ա-
 նէճքէն մեզ պիտի ազատէ, և մենք միայն շը-
 նորհքով եղած փրկութիւնը յաւիտեանս պիտի
 երգենք:

16

Թէ որ մէկը կ'ուզէ անոր կամքը ընել, պի-
 տի գիտնայ առ վարդապետութեանս համար՝
 թէ արդեօք Մատուծմէ է, թէ ես ինքիրմէս
 կը խօսիմ: Յո՛ն • է • 17:

ԱՍ աշխարհիս մէջ շատ անհաւատաներ կան,
 բայց իրենց անհաւատութեանը մեծ պատճա-
 րը « Անոր կամքը ընել » չուզելնին է: Աստ-
 ուածաշունչը մարդոցմէ կը սրահանչէ որ մեղքը
 ատեն և սուրբ ըլլան, բայց անոնք մեղքը կը
 սիրեն և կ'ուզեն միշտ գործել • ուստի չեն ու-
 զեր հաւատալ թէ Աստուածաշունչը Աստու-
 ծոյ հրամանովը գրուած է: Բայց թէ որ մարդ
 մը Աստուածաշունչը կը կարդայ՝ սրտանց անոր
 ճշմարտութիւնը գիտնալու և անոր հեռեկրու
 փափաքով մը, ան ատենը անոր Աստուծմէն
 ըլլալը շուտով պիտի խմանայ: Պիտի գտնայ որ

մարդու բնաւորութեանը վրայ հոն ինչ որ ըս-
 ուած է կատարելապէս ճշմարիտ է . պիտի ի-
 մանայ թէ ինքն է ան նոյն մեղաւորը որ հոն
 ստորագրուած է : Պիտի իմանայ թէ վրկու-
 թեան խորհուրդը ճիշտ իրեն կարօտ եղածին
 պէս է , ու թէ ան էակը հարեր է աս ճամ-
 բան որ մարդուն ներսիցին ինչ կենալ աղէկ գի-
 տէ : Ինչ որ սպաշխարէ իր մեղքերը և Քրիս-
 տոսի հաւատայ , հաւատացեալներուն արուած
 խաղաղութեան խոստումներին ճշմարտութիւնը
 պիտի իմանայ : Աստուծոյ և սուրբերուն հետ
 եղած հաղորդակցութեան վարդապետութիւնը
 պիտի հասկընայ , ինչու որ աս բանը նաև բուն
 իր վրայ փորձով ապիտի իմանայ : Թէ որ
 անկեղծութեամբ աղօթէ՝ Աստուծոյ աղօթք լը-
 սելուն և աղօթքի պատասխանելուն վարդապե-
 տութեան ճշմարտութիւնը պիտի սորվ : Վար-
 դապետութիւններու վրայ եղած մարդու բո-
 լոր տարակուսանքները սրարդապէս Աստուածա-
 շունչին պատուէրներուն հնազանդելով կը լուծ-
 ուին :

Եւ ամենուն կը ըսէր . թէ որ մէկը կ'ուզէ իմ
 ետեւ գալ , թող իր անձը ուրանայ , և ամէն
 որ իր խաչը վերջնէ , ու իմ ետեւ գայ :
 Ասի . Թ . 23 :

Թէ որ Քրիստոսնեւթիւնը 'ի սկզբանս աշխարհս մտած ժամանակը ուրիշ սուս կրօնքներէն սուսեւ մեծ զբուծիւն չունենար, ակրայէս անկարելի էր որ ստորածուեր, քանի որ անոր հիմնադիրը սա վերի պահանջմունքնէրը կ'ընէր: Եւ թէ որ Վստուած ճշմարտութեան զբուծիւն չտար, մինչև սա օրս Տէր Յիսուս Քրիստոսի անկեղծութեամբ և ջերմեռանդութեամբ հետևող մը պիտի չգտնուէր. ինչու որ մարդիկ սակաւին բնութեամբ անձնաւարացութեան կեանք վարելու բոլորովն հակառակ են: Բայց ինչ է Քրիստոսի պահանջած անձնաւարացութիւնը. Վստուծոյ օրէնքին հակառակ գտնուած անէն փոփոխութիւնիս մէկդի ձգել, մեր կամքը բոլորովն Վստուծոյ կամքին հասգանդելնէն, մինչև անգամ խորհրդով գործուած մեղքերու դէմ կենալ է: Վստուծոյ մեղէ պահանջած բոլոր բաները ընել է, մինչև անգամ թէ որ սա սրտածառովք բոլոր մեր բարեկամները ու ճանչցողները մեղծադր ընեն և սանն ալ: Մեր զուարճութիւնները կամ մեր շահը չնայիլ, երբոր սասնկով կրնանք ուրիշներուն օգուտ մը ընել, կամ Քրիստոսի ճշմարտութիւնը տարածել: Եւ վերջապէս անձերնուս վրայ անկենիս յոյս մը չբանել, գիտնալով թէ մեզմէ անկենիս արժանաւորութիւն մը չունինք. և փրկութիւնը իբրև պարգև մը ընդունիլ Քրիստոսի արիւնովք մեզի համար ծախու անուամբ:

Իսկ ես արդարութեամբ պիտի տեսնեմ քու
երեսդ . երբ որ արթննամ քու դիմքէդ պիտի
կշտանամ : Սարճ . ժէ . 15 :

ԱՄԷՆ մարդ երջանկութեան մեծ փառաբար
ունի , որ անխիղաց երկրաւոր բաներէն բնաւ մէ-
կը չկրնար չեցընել : Քրիստոնեան աւելի մեծ
փառաբաներ ունի և դիտէ որ անոնց կատարե-
լապէս չեցուէրու ժամանակը կը մօտենայ : Աս-
տուծոյ ամեն ճշմարիտ զաւկընէրը կրնան ըսել
Գաւիթ մարդարէին հեա , “ Երբ որ արթննամ
քու դիմքէդ պիտի կշտանամ ” : Սարգս առաջ
Աստուծոյ պատկերին պէս ստեղծուէյաւ . բայց
աս կերպարանքը մեղքով աւրուէցաւ . ճշմար-
իտ Քրիստոնէին ամենէն մեծ փառաբար աս
կերպարանքը նորէն ունենալ է : Անոնք փա-
ռաբարէսլ կը փառաբանեն մեզքէ բոլորովն ա-
զատ ըլլալու , որն որ ղրկէր Աստուծոյ պատ-
կերէն կը մերկայընէ : Առզէն որ բոլոր իրենց
փառաբանէրը անոր ունեցած փառաբաներուն պէս
ըլլան , և իրենց կամքը բոլորովն անոր կամ-
քին համաձայն : Նր ցանկան որ իրեն պէս սուրբ
ըլլան . և աս իրենց փառաբանէրը պիտի կատար-
ուին : Մտքեալք կըսէ , թէ “ Երբ անխիղաց
յայտնուի , անոր պէս պիտի ըլլանք , փասն զի
անխիղաց պիտի տեսնենք ինչպէս որ է ” : Ա. Յով .

Գ . 2 : Օրհնեալ յոյս . շարունակենք մեղաց
դէմ ունեցած պատերազմնիս , գիտնալով որ
ասոր վախճանը աս յոյսն է . խնդալով քր-
նանանք մահուան քունը , գիտնալով որ իր նը-
մանու թիւնովը պիտի արթնանք :

19

Եւ հաւատացեալներուն բազմութիւնը մէկ
սիրտ ու մէկ հոգի ունեին : Գործ . Գ . 32 :

ՔՐԻՍՏՈՍ ալթթք ըրաւ որ իր աշակերտնե-
րը մէկ ըլլան , և նոսինի հաւատացեալները մէկ
սիրտ ու մէկ հոգի ունեին : Նանք Վրիստո-
սի վրայ ունեւած սերերնին անոր տուած փոր-
ձովը կը ցուցնեին . այսինքն թէ “ Ասով ամե-
նը պիտի գիտնան ” թէ իմ աշակերտներս էք ,
թէ որ իրարու վրայ սեր ունենաք ” : Թով .
ՃԳ . 35 : Բայց որչափ փոխուած է հիմա աս
քանը . Վրիստոսեայ կանչուողներէն քանի քա-
նիները փոխանակ իրարու վրայ սեր ունենալ-
ուն իրարու դէմ աս եւ թիւն կը ցուցնեն .
արդեօք տասնիները ճշմարտապէս Վրիստոսի
հետևողներ են : Ետեղը կան որ միայն իրենց
Նկեղելիին անդամ եղողները կը սիրեն , ու
բոլոր ուրիշներուն վրայ թէ որ թշնամութեամբ
ալ չէ , բայց ցրտութիւնով մը ու կասկած

ունենալով կը նային • առանկ բաներ ըլլալու
 չեն : Ամէն հաւատացեալներ Վրիստոսի հետ
 մէկ են , ան որթն է անոնք ալ ճուշներն են ,
 ուստի պէտք չէ որ մէկզմէկու հետ ալ մէկ
 ըլլան : Նոյն արիւնտովը փրկուած են և ամէնն
 ալ նոյն արքայութեանը մէջ բնակիլ կը յու-
 սան , ուստի պէտք է որ աշխարհիս մէջ մէկ-
 զմէկ ասեն : Նստուած սէր է , և բոլոր Աս-
 տուծմէ ծնածները մէկզմէկ սիրելու են :

20

Թէ որ սրախ մէջը անօրէնութիւն տեսնէի ,
 Տէրը սխախ ջուեր : Սաղմ • ԿԶ • 18 :

ԱՍՏՈՒԱԾ աղօթքի համար մեզի շատ և
 պատուական խոսամուտներ ըրաւ , բայց չէ թէ
 առանց պայմանի • պէտք է որ շիտակ կերպով
 աղօթենք , այսինքն իրեն կամքին համաձայն
 բաներ խնդրենք , և ան ալ Վրիստոսի անուճու-
 վը : Նստուած սիրուերնիս կը քննէ ըրած իրն-
 զիրներնուս դիտաւոր լծիւնները տեսնելու հա-
 մար , և թէ որ հոն անօրէնութիւն տեսնէ ,
 մեզի սխախ ջուէ : Նստուծոյ կամքին գէ՛մ բան
 խնդրելու չենք • թէ որ աշխարհային օրհնու-
 թիւններ խնդրենք՝ ու ինքը խնդրածնիս ջը-
 տալը ապէկ սեպէ , պատրաստ գանուելու ենք

ուրախութեամբ իրեն հազանդելու : Չենք կրօնար անանկ շնորհք մը խնդրել, որ միայն կամ գլխաւորապէս մեր օգտին համար ըլլայ, հասլա բոլոր վայելել ուզած բաներնուս վախճանը Մատուծոյ փառքին համար սէտք է ըլլայ : Թէ որ հոգևոր օրհնութիւններ խնդրենք, անտարակոյս Մատուած մեզի սխի ի սայ թէ որ շատակ կերպով խնդրենք, բոցց նայելու ենք որ անկեղծութիւնով և ջերմեամոգութիւնով աղօթենք : Նայելու ենք որ լուի մեր հպարտութեանը փափաքները լեւնելու և մեր վրայ ունեցած վատահոսութիւննիս զորացնելու համար ջրլայ : Ա՛հ որչափ կարօտ ենք Սուրբ Հոգիին օգնութեանը որ մեզ կարողացնէ շատակ կերպով աղօթելու :

21

Աւտի ալ ծառայ չես, հասլա սրդի • և թէ որ սրդի, ալ Մատուծոյ ժառանգը Վրիստոսով : Գ.աղ. • Դ. • 7 :

Ի՛նչ զարմանալի ճշմարտութիւններ կան Մատուածաշունչին մէջ • և ամենէն զարմանալիներէն մէկն ալ սա է, որ մեզաւոր մարդիկ Ատուածոյ սրդի և ժառանգ կրնան ըլլալ : Թէ որ մէկը սա բարձր պատիւը պահանջելու ըլլ

լար, շատ մեծ յանդգնութիւն ըրած պիտի սե-
պէինք • բայց Աստուած ինքը կ'ըսէ թէ աս
բանը կրնայ ըլլալ • և իր սուրբ խօսքին մէջ
ալ ասանկ գրուած է : Այո՛, թէպէտև մենք
միայն որդեր ենք, թէպէտև յանցանքով բեռ-
նաւորուած մեղաւորներ ենք, մեր յանցանք-
ներովը կորսուած և անօգնական, սակայն կըր-
նանք Ամենակարող Աստուծոյ որդիները ու
աղջիկները ըլլալ • ու նաև ժառանգ ալ, որով
հետև երկնային թագաւորութեան բոլոր փառ-
քերը մեր ժառանգութիւնն են : Քրիստոսով
մինչև աս ասիճանը կրնանք բարձրանալ • մեզ
մէջ մէկ արժանաւորութիւն մը ունենանուս հա-
մար չէ, քան լէջի • հասցա իր արիւնը թա-
փելուն համար որ մեր մեղքերը քաւէ, և ա-
նոր համար որ եթէ ապաշխարենք և իրեն հա-
ւատանք, մեզ իր արդարութիւնովը պիտի հազ-
ուէ՛րնէ, և այսպէս իր հօրը աթոռին առջին
մեզ անմեղ պիտի երևընէ : Ասիկայ բոլորո-
վն Քրիստոսով է : Արհեան՛ Քրիիչ, քու ան-
ճառելի սիրոյդ դէմ ի՛նչ սրբաւորութեան
տակ ենք :

Չեր ամէն հոգը անոր ձգեցէք, վասն զի անիկայ ձեզի համար կը հոգայ : Ա Պեփ . Ե . 7 :

ՔՐԻՍՏՈՆԵԱՆԵՐԸ աշխարհային բաներու համար հոգ ու նեղութիւն քաշելու պատճառ չունին : Ի՞նչ պիտի ուտենք, ի՞նչ պիտի խմենք և ի՞նչ պիտի հագնինք խօսքերը միայն աս աշխարհիս համար ասլոզ և Վրիստոսով Աստուծոյ հետ չհաշտուող մարդոց նեղութիւն ու սրտմաշոք տուող հարցմունքներ են : Բայց անք որ Աստուծոյ կը նային իբրև հաշտուած հօր մը՝ հանգիստ ըլլալու են, հաւատաւով որ բոլոր պէսք եղածները իրենց պիտի տայ : Եւ ոչ ալ մեծ հոգ սանեւու են իրենց զաւկրներուն կամ բարեկամներուն և կամ գալու նեղութեան վրայ : Աստուած իրենք կը հոգայ, և այսչափը բաւական է . Աստուածաշունչն է ասիկայ հաստատողը, որ նաև կըսէ թէ մեր ամէն հոգը իրեն ձգենք . ասիկայ Աստուծոյ կողմէն մեզի մեծ շնորհք մըն է, բայց որովհետև իր խօսքն է անիկայ հաստատողը, ուստի անկէջ առաջ եկած բոլոր միսիթարութիւնները կըրնանք վայելել : Աստուած է որ մեզ կը հոգայ, ուրեմն մենք հանգիստ ընենք : Բոլոր մեր նեղութիւնները սպահովութեամբ իրեն կրնանք յանձնել և ինքը մեզ կը հոգայ :

23

Ան որ օրէնքը մտիկ ընելէն ետ կը գարծը-
նէ իր տկանը, անոր աղօթքը անգամ սկիզ-
է: Առաի . ԻԸ . 9 :

ԱՍՏՈՒՄԾ կը հրամայէ բոլոր մարդոց որ
աղօթք ընեն . ու սուրբ և կոտորած սրտով ի-
րեն եկողներուն աղօթքը անոր շատ հաճոյ է:
Բայց մարդիկ տսիկայ չարաչար կերպով կը
գործածեն, քանզի կը կարծեն թէ շատ ու եր-
կայն աղօթքներ ընելով կրնան Աստուծոյ ըն-
գունել: Ըլայ, թէ և իրենց կենցաղավարու-
թիւնը գէշ ըլլայ: Արնան գուցէ բոլոր օրը
խաբէութիւնով և ընկերնին զրկելով անցընել,
կրնան Աստուծոյ օրէնքին արգիլած բոլոր մեղ-
քերը գործել . կրնան բոլոր օրը Աստուած միա-
քերնուն չանցուցած անցընել, և թէ որ իրե-
կունը արտաքին կերպով աղօթքնին մատուցա-
նեն, կը կարծեն թէ ասանկ սուղունքով ծա-
ռայելին անոր հաճելի բան մըն է: Աամ բո-
լոր շարաթը մեղքով կ'անցընեն, ու երբոր
Աիրակի օրը կու գայ, Եկեղեցին կերթան իբր
թէ իրենց անցած մեղքերը քաւելու համար:
Բայց Աստուած ասանկ զոհերը կ'ատէ . անի-
կայ սրտին կը նայի, և անդէղը սրտերուն մա-
տուցած աղօթքը իրեն անհաճոյ է, որոնք կըր-
կին իրենց մեղքերուն կը դառնան . անիկայ չը-

խաբուիր ու ծաղր չըլար : Ա՛հ թէ շնորհէր
ինձի Տէրը որ հաւատքով և ապաշխարութիւնով
աղօթք մատուցանէի , իրեն հնազանդելու հաս-
տատուն գիտաւորութիւն ունենալով :

24

Որ մեզ ազատեց խաւարին իշխանութենէն ,
ու իր սիրելի Որդւոյն թաղաւորութեանը փո-
խադրեց : Կող . Ա . 13 :

ԵՐԲՈՐ մէկ մարդ մը կ'ապաշխարէ ու Քրի-
ստոսի կը հաւատայ , մեծ փոփոխութիւն մը
կ'ըլայ իր վճակին և վարքին մէջ : Ան մար-
դը առաջ խաւարին իշխանութեանը տակն էր .
եր միտքը խաւարած էր , անոր համար չէր
կրնար ճշմարտութիւնը իմանալ . ու պարաստ
և խաբէական մտորութիւններու ետեւէ կ'եր-
թար , չարը բարիի ու բարին չարի տեղ առնելով :
Իր վրայ տիրողը խաւարին իշխանն էր , որ ան-
կէ բռնուած էր իր կամքին ծառայելու : Բ .
ՏԻՏ . Բ . 26 . իր աչքին առջև ունեցած բո-
լոր ժառանգութիւնը խաւարին մ'թռլթիւնն էր :
Բայց հիմա աս խաւարին թաղաւորութենէն
Քրիստոսի թաղաւորութեանը բերուեցաւ , իր
միտքը լուսաւորուած է ու կրնայ տեսնել Ար-
տուծոյ ճշմարտութիւնը , և անոր լուսովը ու-

բախտութեամբ կը քայլէ : ԱԼ զինքը դերի բըռ-
նալ կիրքերու ենթակայ չէ , հասա իր սիր-
տը նորոգուած է , ու բարին կը սիրէ և բա-
րի բաներու կը հեռուի : Հիմա Աստուծոյ որդի-
ներուն ազատութիւնը կը վայելէ , կրնայ Աստու-
ծոյ նայիլ իբրև իր հօրը , Վիտուս Քրիստոս
իւր հէրը ու Վարդապետն է և ուրախութեամբ
կերթայ ուր որ զինքը առաջնորդէ . Աստու-
ծոյ ժողովուրդին հետ ընկերութիւն ունի , և
կրնայ նայիլ ան ծամանահին երբոր լոյսի մէջ բը-
նակող սուրբերուն վճակին մասնակից պիտի
ըլլայ : Կող . Ա . 12 : Սբոցք առ մեծ փոփո-
խութիւնը իմ վրաս եղան : Ամէն օր քննեմ իմ
սիրտս , որ չըլլայ թէ , ասանկ մեծ բանի մը մէջ
խաբուած դատուիմ :

23

Բայց ես բանի մը համար հոգ չեմ ընել ,
և իմ անձս սրատուական չեմ սեպել , միայն
թէ իմ ընթացքս ուրախութեամբ կատարեմ :
Գործ . Ի . 24 :

ՊՕԳ, ԱՍ գիտեր թէ իր առջեւ կայեր և նե-
ղութիւններ կային . արդէն Քրիստոսի համա-
շատ նեղութիւն քաշած էր , և գիտեր թէ մին-
չև իր կեանքին վախճանը խաղաղութիւն ու հան-

գիտա պիտի շիրտար գտնել : Բայց այս բանե-
 րէն մեկը զ'նքը չէր շարժեր . երբոր փորձու-
 թեան մը մէջ կ'իյնար ուրիշ մարդոց սկսա 'նե-
 ղութիւն կը քաշէր . բայց առջևի եղածներուն
 կը նայէր , ու ճամբուն մէջ 'պստաճած բանե-
 րուն մ'օրի չէր ընէր : Նստուած ինչ որ գիտուն
 բերէր կ'ուզէր ընդունի . անանկ որ հաստատ
 մնայ մինչև վերջը և իր ընթացքը ուրախու-
 թեամբ կատարէ : Պօղոս խելացութիւնով առ
 ճամբան բանեց . որչափ նեղութիւն որ քաշե-
 աս աշխարհիս մէջ միայն քիչ մը ատեն կը աե-
 լէ , և ան ատենը վախճանը յաւիտենական
 ուրախութիւն պիտի ըլլայ : Մենք ալ միշտ մեր
 ընթացքին վախճանին նայելու ենք . բոոր մեր
 գիտաւորութիւններուն ու զբաղմունքներուն հա-
 մար , բոոր մեր զուարճութիւններուն և ջան-
 քերուն համար մենք մեզի հարչնելու ենք , թե
 աս բանը՝ որուն որ ձեռք պիտի զարնեմ , ար-
 գեօք իմ ընթացքս ուրախութեամբ կատարե-
 լուս կ'օգնէ : Հոգ չէ ինչ որ գիտունուս գայ
 աս կարճ կեանքերնուս մէջ , բայց առջևիս ե-
 ղած յաւիտենականութեանը նայինք , որ հոն
 երջանկութիւն գտնելու համար աշխատիլը ամէն
 բանէն աւելի օգտակար է :

26

Ամէն բանի մէջ գոհութիւն տուէք . ինչու
որ սա է Աստուծոյ կամքը Քրիստոս Յիսու-
սով ձեր վրայ : Ա թե՛ . Ե . 18 :

Ե՛ի ի՛նչ , միթէ ամէն պարագաներու մէջ գո-
հութիւն տալու ենք . երբոր ստացուածքնե-
րնիս կորսնցրնենք ու աղքատութեան և կարօ-
տութեան մէջ իյնանք , երբոր հիւանդութիւն
գայ վրանիս ու ցաւերով տանջուինք , երբոր
մահը գայ ու ամենէն սիրելի բարեկամներնիս
առնէ ասնի , միթէ ան ատենն ալ գոհութիւն
տալու ենք : Ա յո՛ , որովհետեւ ան խոստմուն-
քը ունինք թէ ամէն բան Աստուած սիրողնե-
րուն օգուտին համար է , և հաստատ գիտենք
թէ անիկայ մեր օգուտին համար մեզ կը յան-
դիմանէ , որ անոր սրբութեանը հաղորդ ըլ-
լանք . Եբ՛ . ԺԲ . 10 : Ուստի մեծ պարտա-
կանութիւն ունինք Աստուած օրհնելու մինչև
անգամ մեր սկստա ծանր նեղութիւններնուս մէջ :
Ասկէց զատ ինչ և իցէ փորձութեան մէջ որ
իյնանք տակաւին մենք անարժաններս շատ օրհ-
նութիւններ կը վայելենք , որոնց համար պար-
տաւոր ենք գոհութիւն տալ : Ասոնցմէ աւե-
լի՛ թէ որ յոյս ունինք թէ մեղքերնիս ներ-
ուած է , և թէ Քրիստոսով ընդունուած ենք .
թէ որ յոյս ունինք թէ երկինքին մէջը յաւի-

ատեն երջանկութիւն պիտի վայելենք, ան ա-
տենը թէ և բոլոր մարմնաւոր հանգստութիւն-
ներնուս զրկուինք ալ՝ աստիաւին Աստուծոյ շատ
գոհութիւն տալու ենք: Երբոր խորհինք Աս-
տուծոյ ան մեծ սիրոյն վրայ, որով մեզ սի-
րեց մինչև անգամ իր Որդին մեզի համար մեռ-
նելու տալովք, պէտք է որ փառաբանութիւն
տալու համար մեր սրտերը միշտ վառին ու
մեր լեզուներն ալ բնաւ չգաղբին:

27

Ուրախ եղիք Տէրօջմով ամէն ատեն • դար-
ձեալ կըրսեմ՝ ուրախ եղիք: Փիւհ • Դ • 4:

ԱՌՁԻ բերանը դժուար կ'երևի ամէն ա-
տեն աս հրամանին հնազանդիլը • մեր սիրելի
բարեկամներնուս մէկ քանիին մեռնելուն հա-
մար, կամ գլխուճուս եկած մէկ թշուառու-
թեան մը համար, և յաստիպէս մեղքերնուս
ծանրութիւնը խմանալով՝ երբոր մեծ արամու-
թեան մէջ կ'ընանք, դժուարին գործ մը կ'ե-
րևի մեզի « Ամէն ատեն ուրախ եղիք » հրամա-
նին հնազանդիլը: Աւ իրաւցունէ՛ դժուար բան
կըլլար թէ որ աս ուրախութիւնը մեր մէջը
փնտռելու ըլլայինք • բայց ասանկ չէ, հասցա
մեզի հրամայուած է որ՝ Տէրօջմով ուրախ ըլ-
լանք: Վերջ ամէն ատեն նոյն է և իրմով կըր-

Կանք միշտ ուրախ ըլլալ : Ուրախ ըլլալու ենք
 որ Տէրը կը թաղաւորէ, և թէ անդէրքին կա-
 ռաւարու թիւնը ասանկ սուրբ էակի մը ձեռքն
 է : Ուրախ ըլլալու ենք որ ինքը իր բոլոր կա-
 տարելու թիւններովը այնչափ փառաւոր է . թէ
 ինքը արդար՝ սուրբ և բարի է, թէ մեղքը ա-
 ռանց պատիժի պիտի չթողու : Ուրախ ըլլալու
 ենք որ մենք ու մեր ամէն բաները իրեն ձեռ-
 քն են, և թէ մեր ու բոլոր իր արարածնե-
 րուն վրայ շատ խնաստու թիւնով ու բարու-
 թիւնով կը տիրէ : Ուրախ ըլլալու ենք իրմով,
 որ ինքն է Տէր Յիսուս Քրիստոսի Հայրը, և
 անոր միջնորդութիւնովը ինքը ողորմութիւննե-
 րուն Հայրը և ամէն շնորհքներուն Աստուա-
 ծըն է : Ամէն ստեն մարդարեօն հեա ըսելու
 ենք « Թէ և թղենին ընծիւղ չտայ, ու որթե-
 րու սրուղ չըլլայ, և ձիթենիին բերքը ստէ,
 ու արտերը կերակուր չտան, ու փարախէն ոչ
 խարը կարի, և գումերու մէջ արջառ չըլլայ,
 Սակայն ես Տէրոջմով պիտի ցնծամ . իմ փրկու-
 թեանս Աստուծովը պիտի ուրախանամ » : Աճ .
 Գ . 17, 18 :

Ասան ղի ես կը ճանչնամ իմ յանցանքներս
 ու իմ մեղքս միշտ իմ առջես է : Քեզի՛ մի-

այն քեզի դէմ մեղանշեցի, և քու աչքերուդ առջևը չարութիւն ըրի: Սաղմ. ԾԱ. 3, 4:

ՃՇՄԱՐԻՏ ապաշխարութեան խօսքերը աւանք են. ան մարդը որ մեղաց համար իրօք կը արամի, իր յանցանքները Աստուծոյ կը զրուցէ: Իր մեղքերը ծածկել չուզեր, հապա իր բոլոր ըրածները Աստուծոյ առջին կը խտատովանի: Եւ չէ թէ միայն այսչափ, հապա ինքիրենը շատ կը խորհի անոր վրայ ու կ'ողբայ: Սիրտը կը վերաւորուի տեսնելով որ այնչափ մեղանշեր է անանկ բարի և սուրբ Աստուծոյ մը դէմ, և ասիկայ մտքէն չելլեր: Յիւրաւի կրնայ ըսել « Իմ մեղքս միշտ իմ առջիս է »: Դաւիթ առ սաղմոսը գրած ժամանակը Ուրիային դէմ շատ մեծ մեղքեր գործած էր. բայց երբոր անոնց վրայ խորհեցաւ, իր մեղքերը իրեն այնչափ սոսկալի երեցան, որ իբր թէ ուղղակի Աստուծոյ դէմ գործեր էր, ինչու որ կ'ըսէ, Քեզի՛ միայն քեզի դէմ մեղանշեցի: Ամէն գործած մեղքերնիս Աստուծոյ դէմ են. թէ որ մեր ընկերներուն նենգութիւն մը կամ խաբէութիւն մը ընենք, կամ մէկ միասա մը հասցրնենք անոնց թէ խօսքով և թէ գործքով, Աստուծոյ դէմ մեղք է, ինչու որ ինքը կը հրամայէ մեզի որ ընկերնիս անձերնուս սէս սիրենք: Ընկերներնուս վրայ ունեցած ամէն չար զգացումներնուս վրայ Աս-

տուժոյ առջին ողբալու ենք, ինչպէս որ կ'ողբանք երբոր զինքը մոռնանք ու աշխարհքը սիրենք և իր ուրիշ սրատուիրանքները կտարենք :

29

Ինչու որ անիկայ իր ականջը ինձի խոնարհեցուց, ու իմ օրերուս մէջ անոր պիտի կանչեմ : Սաղմ. ՃԺԶ. 2 :

Թէ որ երկրաւոր բարեկամէ մը բարերարութիւն մը խնդրենք, ու անիկայ մեր խնդրածը մեզի տայ, շուտով երկրորդ անգամ նոյն բանը խնդրելու չենք համարձակիր, որ չըլլայ թէ ձանձրանալով ըրած խնդիրքնիս չկատարէ : Բայց երբոր Աստուծմէ բարերարութիւններ ընդունինք ասանկ ընելու չենք. ինչու որ մեր իրմէն ընդունածները մեզի քաջալերութիւն կու տան ալ աւելի մեծ օրհնութիւններ խնդրելու : Չենք կրնար Աստուծոյ շնորհաց հարստութիւնները հասցընել և կամ զինքը ձանձրացընել : Անիկայ կ'ուզէ և մեզի կը հրամայէ ալ որ պէտք եղած օրհնութիւնները միշտ իրմէն խնդրենք : Երբոր Աստուած մարգասիրութեամբ մեր աղօթքներուն կը պատասխանէ և խնդրած բաներնիս կու տայ, անով աւելի մեծ շնորհքներ խնդրելու համարձակու-


Թիւն ունենալու ենք և աւելի հաստատուն հաւատքով աղօթելու ենք : Դաւիթ երբոր իր աղաչանքներուն սրատասխանը ընդունեց , քաջալերութիւն առաւ իր բոլոր կեանքին մէջը Աստուծոյ գիւմելու : Պէտք է որ խնդրած օրհնութիւններնիս ընդունելու սպասենք , և անոր հաւատարմութեանը ապաւինելով մտքերնիս դրնենք միշտ աղօթք ընելու : Ան ատենը մեր փորձառութիւնովը պիտի գիտնանք թէ Աստուած աղօթքի կը լսէ ու կը սրատասխանէ :

30

Ուստի Պետրոս բանտին մէջը սրահուած էր , բայց եկեղեցին անդադար աղօթք կընէր Աստուծոյ՝ անոր համար : Գործ • ԺԲ • 5 :

ԱՍ ատենս եկեղեցին մեծ նեղութեան մէջ էր , հալածմունքը իրեն վրայ սաստկացաւ , իրեն առաջնորդներէն մէկը՝ որ երկելի առաքեալներէն էր , սպաննուեցաւ • և հիմա ուրիշ մէկն ալ բանան էր , որ անոր նման մահուան մը կը սպասէր : Չէին գիտեր թէ ասոր վախճանը ո՛ւր պիտի երթայ , կամ թէ իրենցմէ ո՛վ թշնամիին կատաղութենէն ազատ պիտի մընայ : Բայց արդեօք յուսահատեցան ու բան մը չըրին , և կամ թէ զիրենք ասանկ ատելի ը-

նաղ ճշմարտութիւնը ձգեցին • չէ՛ գիտէին որ
 յուսահատելու բան մը չկար, գիտէին որ իրենց
 կողմէն եղողը բոլոր թշնամիներէն շատ աւելի
 զօրութեան տէր է, և ուստի անոր գային ու
 անկէ՛ ողորմութիւն խնդրեցին : Անիկայ խոս-
 տացեր էր որ աղօթքներնուն ախտի լսէ և ան-
 դադար աղօթեցին, ու ըրած աղօթքնին պա-
 րապէս չգնաց : Քրիստոսի եկեղեցին միշտ շատ
 թշնամիներ ունեցաւ, և ասոնք երբեմն ալ
 շատ կը զօրանան • բայց ամենևին յուսահատե-
 լու բան մը չկայ : Թէ որ Աստուած մեր կող-
 մին է, թէ և աշխարհք մեզի դէմ՝ ըլլայ մեր-
 ջապէս յաղթող ախտի գտնուինք : Մեր ամե-
 նէն մեծ նեղութեան ատենները պէտք է որ
 միայն անդադար աղօթք ընենք, և վստահ ըլ-
 լանք թէ Աստուած մեզի ախտի լսէ ու աղաւտէ :



ՄՆՅՈՒ

1

Հաւատոս Տէր Յիսուս Քրիստոսին, ու պի-
տի փրկուիս դուն՝ և քու տունդ : Գործ .
ԺԶ . 31 :

ԱՌԱՅԵՍԷԼԸ, աս պատասխանը տուաւ բան-
տապեալին, որն որ խմանալով իր կորսուած
մեղաւոր մը ըլլալը, գողալով հարցուց թէ « Կն-
ծի ի՞նչ պէտք է ընել, որ փրկուիմ » : Պօ-
ղոս չքսաւ իրեն որ իր բարի գործքերովը փրկ-
կուելու ջանք ընէ : Աս բանը չէր կրնար ըլ-
լալ, վասն զի անիկայ մեղաւոր էր ու իրեն
հիմախուան վարքը որչափ մաքուր ալ ըլլար՝ ի-
րեն անցած մեղքերը սրբուելու օգուտ մը չու-
նէր : Նաև չքսաւ թէ զոհերով կամ ինքզինքը
տանջելով իր մեղքերը քաւելու ջանք ընէ :
Չէ, վասն զի ինտո՞ր կրնայ մեղաւոր մը ան-
տուրբ օրէնքին դէմ գործած յանցանքները
քաւել, որուն դէմ գործուած ամենափոքր
մեղքին պատիժը յաւիտենական մահ է : Ասի-
կայ էր Աւարեալին ցուցրցած պարզ ճամբան,

Թէ « Հաւատա՛ Տէր Յիսուս Քրիստոսին », ու
 ետքն ալ ան ձրի խոստմունքը « Աւ պիտի
 փրկուիս » : Բանտապետը ինչ ճամբով որ փրկուեցաւ՝ մենք ալ նոյն ճամբովը պիտի փրկուինք , այսինքն Քրիստոսի հաւատաւով : Անոր հաւատաւու ենք իբրև մեղաւորներուն մի միայն զրկիչը , և մեր գործքերովը երկինքը արժանաւորութիւն մը ունենալու յուսալու չենք : Իրեն նայելու ենք որ մեղաւորներուն համար մեռաւ , և իր արիւնին սպաւինելու ենք որ մեղքերնուս քաւութիւն առնենք : Իրեն հաւատալու ենք իբրև մեր արդարութիւնը և Աստուծոյ առջև միայն իր արժանաւորութիւնովը արդարանալու յուսալու ենք : Թէ որ իրեն առանկ հաւատանք , պիտի աշխատինք իր կամքը կատարելով իրեն վրայ ունեցած սէրերնիս ցուցնելու :

2

Եւ կէս գիշերին Պօղոս ու Շիղա աղօթք կ'ընէին՝ և Աստուած կ'օրհնէին , ու բանտարկեալներն ալ անոնց մօտիկ կ'ընէին : Գործ • ԺԶ • 25 :

ԱՍ մարդ պիտի կարծէ թէ Պօղոս և Շիղա փառաբանութեան երգեր երգելու վիճակի մէջ չէին : Առջի օրը բազմութիւնը վրանին

յարձակեցան և իրենք սաստիկ ծեծեցին ու
 ներքին բանաղ նեակեցին, և բանտապետին յա-
 տուկ պատուէր տուին որ անոնք աղէկ պահէ :
 Հիմա ոտքերնին կոճղի մէջ ամուրցած էին, և
 գուցէ անանկ մէկ դիրքով մը որ ցաւէն չէին
 կրնար քնանալ. բայց ժամանակնին հեծու-
 թիւններով և պարսպ տեղը սղբալով ջանցու-
 ցին, հասաւ աղօթք ըրին : Իրենց կատարի
 թշնամիներուն ձեռքն էին, բայց դիտէին որ
 Աստուած կարող էր իրենք ազատել և իրենց
 աղաչանքները անոր մատուցին : Աստուած մին-
 չև անգամ իր թշնամիներուն բարկութենէն
 փառաբանութիւն կ'ընդունի, Սաղմ. հ. 9. 10.
 և Աստուծոյ ժողովուրդը ամէն իժիր աղօթք
 ընելով կը զօրանայ : Ան ստենը անոնք ամե-
 նակարող զօրութիւն մը կ'ունենան իրենց կող-
 մը, և թշնամի մը կարող չէ անոնք յաղթել :
 Բայց Պօղոս և Շիղա չէ թէ միայն աղօթք կ'ը-
 նէին, հասաւ օրհնութիւն ալ կ'երգէին : Թէ-
 պէտե մեծ նեղութեան մէջ ինկած էին, սա-
 կայն Աստուծոյ փառաբանութիւն տալու պատ-
 ճառ ունէին. գուցէ գոհութիւն կուտային որ
 Քրիստոսի համար նեղութիւն քաշելու արժա-
 նի եղան : Աարելի է որ միշտ կը սպասէին թէ
 զիրենք պիտի մեռցունեն, և գոհութիւն կու-
 տային իրեն որ եթէ մեռնին ալ յաւիտեան
 Քրիստոսի հետ սպրեւու յոյս ունին : Քրիս-
 տոսի ամէն ճշմարիտ հեռեողները ամէն ատեն
 պատճառ ունին Աստուած փառաբանելու :

3

Թո՛ղ ամբարիշտը իր ճամբայէն՝ ու անօրէն մարդը իր խորհուրդներէն հրաժարի, և Տէրօջը դառնայ, ու անիկայ պիտի ողորմի անօր • ու մեր Աստուծոյն, ինչու որ անիկայ առատասպէս կը ներէ : Եսայ • ԾԵ • 7 :

ՓՐԿՈՒԹԵԱՆ պայմաններուն մէկը ասպաշխարութիւնն է • Քրիստոս ըսաւ, « Թէ որ չասպաշխարէք, ամէնքդ ալ անանկ պիտի կորսուիք » : Ա՛յ • ԺԳ • 3, 5 : Բայց մէկ ասպաշխարութիւն մըն ալ կայ որ կեանքի չտանիր : Յուդան ասպաշխարեց, և սակայն դնաց ինքզինքը կախեց ու բռն իր տեղը դնաց • ուստի շատ օգտակար բան է ճշմարիտ ասպաշխարութեան ինչ ըլլալը գիտնալ : Մարդարէն անոր արդիւնքները կը ստորագրէ • ան մարդը որ իր մեղքերուն վրայ Աստուծոյ ուղածին պէս կը տրամի, իր չար ճամբաները և անօրէն խորհուրդները կը ձգէ • կ'ողբայ որ Աստուծոյ պէս բարի և սուրբ էակի մը դէմ մեղանչեց • մեղքը կ'ատէ, անիկայ չար և դարշելի բան մը սեպելով • և ասանկ զգացումներ ունենալով չկրճար կամաւ մեղք գործել • կ'աշխատի անկէց ետ կենալու, անիկայ շատ մեծ չարիք մը սեպելով : Մինչև անգամ թէ որ մեղայ համար պատիժ ալ չըլլար, ճշմարիտ ասպաշխար

բողը տակաւին անկէց զդուելով պիտի փախչէր, անիկայ ինքիրմէն դարչելի բան մը և Աստուծոյ գէմ թշնամութիւն սեպելով: Ճշմարիտ ապաշխարողը լալով ու կտարած սրտով Տէրոջը կը դառնայ • և կ'աշխատի Աստուծոյ պատուիրանքներուն ցուցրցած ճամբաներուն մէջ քալել, որ չըլլայ թէ անոր պատուիրանքները ոտքի տակ առնէ ու կրկին անգամ անիկայ բարկացրնէ:

4

Բայց ես՝ քաւ լիցի որ պարծենամ, հապա միայն մեր Տէր Յիսուս Քրիստոսի խաչովը, որ անով աշխարհ ինծի խաչը ելած է, ես ալ աշխարհի: Գաղ. 2. 14:

ԽԱՉԻ վրայ մեռնիլը պինտ խայտառակ պատիժ մըն էր, սակայն Պօղոս խաչով միայն կը պարծենայ: Արնար իր Աարդասպետին՝ Յիսուսի մեծութիւնովը պարծենալ, որ Աստուծոյ Որդին էր • կամ Անոր ամենակարող զօրութիւնովը՝ որ աշխարհիս Ստեղծողն էր, բայց խաչին կը փաթտուի իբրև իր պարծանքին պինտ մեծ պատճառը: Եւ ասիկայ ինչո՞ւ համար էր • նախ և առաջ որ իրեն և մեր ընդունած բոլոր օրհնութիւնները Քրիստոսի մեղի համար

մեռնելովք մեզի արուած են : Յաւիտեանակա-
 նութեան յոյս մը չէինք կրնար ունենալ , թէ
 որ Քրիստոս իր կեանքը մեզի համար չտար
 որ մենք ապրինք • խաչին վրայ մեղքերնուս քա-
 ւութիւնը եղաւ , որով մեզի փառքի պատիւի
 և անմահութեան ճամբայ բացուեցաւ : Բայց
 խաչը չէ թէ միայն մեզի յոյսի պատճառ մըն
 է , հապա անհիկայ Աստուծոյ փառքին ափնտ
 երևելի յայտնուած աեղն է : Աստուծոյ արդա-
 րութիւնը հոն երևցաւ որ իր Որդին մեղաւոր-
 ներուն աեղը մեռնելու տուաւ , ու չթողուց որ
 իր օրէնքը սաքի տակ առնուելով աւրուի : Իր
 սէրն ու ողորմութիւնն ալ հոն երևցաւ որ ա-
 սանկ անհուն գինով մը մեղաւորներուն փրկու-
 թեան ճամբայ մը պատրաստեց : Յիրաւի մի-
 այն Քրիստոսի խաչը թող մեր պարծանքը ըլլայ :

Յ

Ու անոնք քու որդւոցդ կրկին և կրկին ան-
 դամ սորվեցրնես • և թէ տանդ մէջ նստած ա-
 տենդ , թէ ճամբայ դացած ատենդ , և թէ պառ-
 կելու ու ելլելու ատենդ անոնց վրայով խօսիս :
 Բ Օրին • Զ • 7 :

ԱՍ պատուէրը Մովսէս Իսրայէլացիներուն
 ըրաւ Աստուծոյ օրինաց խօսքերուն վրայով , որն

որ ինքը անոնց տուած էր : Մենք անոնց ունեցած Աստուծոյ կամքին յայտնութենէն աւելի կատարեալ յայտնութիւն մը ունինք , ուստի աւելի մեծ պարտականութեան տակ ենք իր խօսքերը յարդելու և անոնք քննելու : Եւ չէ թէ միայն անոնց վրայ խորհրդածութիւն ընելու ենք , հասա մեզի հեա հաղորդակցութիւն ունեցողներուն հեա անոնց վրայօք խօսելու ենք : Աստուծոյ խօսքը աս կերպով գործածելնիս շատ մեղքերու մէջ իյնալէն մեզ կը պահէ , և թէ որ փորձութեան մէջ իյնանք անկէջ ազատելու մեղի կ'օգնէ : Աս պատուական խօսքերը զաւերներնուս ալ սորվեցընելու ենք , չէ թէ անհոգութիւնով ու երբեմն , հասա ժիրութիւնով : Ծնողքները Աստուծոյ առջև պատասխանատուութեան տակ են , ինչու որ անիկայ իրենց ձեռքը անմահ հոգիներ յանձնել է որ անոնք յաւիտենականութեան պատրաստեն : Եւ իր պատուական խօսքը մեր զաւերներուն առաջնորդ ըլլալու է ինչպէս որ մեզի ալ , և թէ որ անոնց սորվեցընենք որ անիկայ կարգան ու սիրեն և անոր կանոններովը երթան , և նոյն ժամանակը Սուրբ Հոգին ինդրենք որ ան խօսքերը սրտերնուն մէջ տպաւորէ , կրնանք յոյս ունենալ թէ Աստուած մեր ջանքերը կ'օրհնէ և մեր զաւերները գարծի կու գան ու կը փրկուին :

6

Որ երբոր եկաւ՝ և Աստուծոյ շնորհքը տեսաւ, ուրախացաւ : Գործ • ԺԱ • 23 :

ԲԱՌՆԱԲԱՍ բարի մարդ մըն էր, ու Սուրբ Հոգիով և հաւատքով լեցուն, անոր համար երկնային զգացումներ շատ ունէր : Քրիստոս ըսաւ որ Երկինքը հրեշտակները կ'ուրախանան երբոր մէկ մեղաւոր մը աստղատուէ, ասանկ ալ Բառնաբասը կ'ուրախանար թէ որ մէկ մեղաւորի մը դարձի դարը տեսնէր, ուստի որչափ առաւել ուրախացաւ երբոր Աստուծոյ շնորհքը Անտիոքի մէջ տեսաւ, որ մեծ քաղաք թիւն մը հաւատաց : Երուսաղէմի եկեղեցին Բառնաբասը Անտիոք խրկեց որ երթայ նայի թէ արդեօք լսածներնուն ամէնքն ալ ճշմարիտ են, և անշուշտ իրենք շատ ուրախացան երբոր եկաւ բոլոր տեսածներն ու լսածները անոնց պատմեց : Քիչ մը առաջ մեծ հալածում մը ելեր էր աս եկեղեցիին դէմ, և անշուշտ շատ տրտմեցան անոնք երբոր տեսան թէ այն հալածումին պատճառով իրենց անդամները անդին առդին ցիրուցան եղան : Բայց տես թէ ասիկց ինչ հեռակցաւ, աս նոյն հալածեալները ամէն տեղ դաշին Աստուծոյ խօսքը քարոզեցին, և իրենց ձեռքովն էր որ Անտիոքի մէջ Աստուծոյ խօսքը ընդունեցին, անանկ որ ան նոյն հալած-

մունքը որ Երուսաղէմի եկեղեցին արամեցուց
միանգամայն առիթ եղաւ անոնք մեծ ուրախու-
թիւնով լեցրնելու : Աստուած իր թշնամիներ
րուն չար դիտաւորութիւնները իր ժողովուր-
դին աղէկութեանը և յառաջագիմութեանը դար-
ձունելու ճամբան միշտ գիտէ : Քրիստոսի ճրչ-
մարտութեանը դէմ մարդոց ըրածներուն բնաւ
մէկէն ալ վախնալու չենք, քանզի Աստուած ճրչ-
մարտութիւնը պիտի յաջողէ :

7

Եւ ժողովուրդը տեսնելով որ Մովսէս ուշա-
ցաւ լեռնէն իջնալու, ժողովուրդը Ահարոնին
քովը ժողովուեցան՝ ու ըսին անոր • ելի՛ր, մեզի
աստուածներ շինէ՛ որ մեր ապշէն երթան •
քանզի ան Մովսէսը՝ մեզ Եգիպտոսի Վերկրէն
հանող մարդը, չենք գիտեր թէ ի՞նչ եղաւ ա-
նոր : Եւե՞ • ԼԲ • 1 :

ԻՍՐԱՅԻԼԱՅԻՆԵՐԸ աս մեծ մեղքը գոր-
ծելէն քիչ մը առաջ Եգիպտոսի մէջ Աստու-
ծոց ըրած զարմանալի գործերը տեսան, որոնց-
մով իրենց գերութեան տունէն իրենք դուրս
հանեց, և հրաշագործութիւնով անոնք կարմիր
ծովէն անցուց • և գիշերը կրակէ սիւնով ու
ցորեկը ամպով մը ճամբաներնին ցուցուց : Քա-

Կի մը որ առաջ Մինա լեռանը վրայի կրակը և
 մուխը տեսան . և լսեցին ան սրտառմները՝ ու
 բոնցմով Աստուած օրէնքը տալու իջաւ , և իր
 գլխացը վախով լեցուեցան : Եւ սակայն հիմա
 առ բաներուն ածէնքն ալ կը մտնան և իրենց
 ոսկիէ աստուած մը շինել կ'ուզեն որ իրենց
 առջևէն երթայ : Անկարելի բան կ'երևայ որ
 մարդս ասանկ անդգայ և չար ըլլայ . բայց չենք
 գիտեր թէ մարդուս չար սիրտը ինչ բաներ
 կրնայ ընել : Երանի թէ սիրտերը քննող Աստ-
 ուածը , մեր մէջը առ կռասպաշտութեան մեծ
 մեղքը չտեսնէր : Իսրայէլացիները Աստուծոյ
 զօրութիւնը որչափ որ տեսան ու իմացան , նոյն-
 չափ ալ մենք տեսած ենք . դուցէ իր Հոգին
 սրտերնիս եկած է , և մեզ իր սրբութեանը
 ու կարողութեանը և մեր մեղքերուն համար
 իր առջևը դողացուցած է : Եւ սակայն առ աս-
 անկ ըլլալով արդէօք մենք ալ շատ անգամ
 կռասպաշտութիւն չըրինք : Իրաւ մենք ոսկիէ
 որթ չշինեցինք ու անոր երկրպագութիւն չը-
 բինք , բայց աշխարհքը կամ մէկ աշխարհա-
 յին բան մը կամ մէկ երկրաւոր բարեկամ մը
 արդէօք Աստուծմէ աւելի շիրեցինք : Թէ որ
 ըրինք , կռասպաշտութիւն ըրած եղանք և նոյն
 Ժամուն՝ որ Իսրայէլացիները կը դատաւարակենք ,
 պէտք է որ մենք բուն մեղմէ ամենանք :

Եւ Աստուծոյ Սուրբ Հոգին մի արամեցը-
նէք, որով դուք կ'երուեցաք փրկութեան օր-
ուանը համար: Եփե. Գ. 30:

ԱՍՏՈՒԱԾ մարդոց փրկութեան ճամբայ
մը պատրաստեց և անխիայ ընդունելը իրենց ա-
զատ ընտրութեանը յանձնեց. սակայն բանը
բացարձակապէս իրենց չթողուց, քանզի Եթէ
ասանկ ընէր մարդիկ ասկաւին Քրիստոսը ակի-
տի ասէին, և իրենք իրենց մեղքերովը կոր-
սուէին. հասցա ինքը իր Հոգին աշխարհ խոր-
կեց որ անոնց միաքերը լուսաւորէ, ու իրենց
մեղքերը և Ֆրիչի մը կարօտ ըլլանին անոնց
ճանչցընէ. անխիայ իր Աստուածային ամենա-
կարող զօրութիւնովը անոնցմէ ոմանց սիրտե-
րը նորէն կը ստեղծէ, և անոնք իր ողորմու-
թեան պարգեւները կ'ընդունին և կ'ապրին: Բայց
աս մարդիկը նորէն ստեղծելէն ետև անոնք
չձգեր որ իրենց զօրութիւնովը կայնին, հասցա
" Իր գործը անսնց ներսիդին " կը շարունա-
կէ, մինչև որ բոլորովն սրբուին ու երկինքին
մէջի սուրբերուն ընկերութեանը ընդունուելու
յարմարութիւն ունենան: Բայց աս օրհնեալ
Հոգին՝ որմէն բոլորովն կախեալ ենք որ մե-
զի զօրութիւն ասց մեր երկնային ճամբուն մէջ
հաստատ մնալու, կրնանք արամեցընել որ մեղ-

մէ հեռանայ : Անիկայ կը արամի թէ որ կամ
մաւ մեղք գործենք ու թէ որ իր առած խը-
րասներուն մակի ջնենք , երբոր ինքը մեղի կը
խրատէ որ մեղք չգործենք , որ սուրբ ըլլալու
համար ըրած ջանքերնուս մէջ աւելի թիւր ըլ-
լանք , որ աւելի աղօթք ընենք , աւելի շատ
խորհրդածութիւններ ընենք և Աստուածաշուն-
չը միշտ կարգանք : Ա՛հ որչափ վախնալու ենք
որ չըլլայ թէ զինքը արամե ընենք , ինչու որ
եթէ մեզմէ հեռանայ ալ յաւիտեանս կորսուած
ենք : Ա՛վ Սուրբ Հոգիդ , եկներ հանդէս սրբ-
ախ մէջ , և բնաւ ամենակին իս մի թողուր :

9

Ինչու որ անոր առջև մէկ մարմին մը սկի-
տի չարդարանայ օրէնքին գործքերովը : Հոգի .
Գ . 20 :

Ի՛նչ ուրախալից բան է որ Աստուածաշուն-
չին մէջէ եղած վարդապետութիւնները ինքնին
կապալուցանեն թէ ան գիւրքը Աստուծմէ է :
Արդարև Աստուածաշունչին ճշմարիտ ըլլալը
հաստատող ուրիշ արտաքին վկայութիւններ
եթէ ամենակին չըլլային ալ , իր մէջը գտնուած
վկայութիւնները ինքնին բաւական կին մեզ հա-
մոզելու թէ անիկայ Աստուծոյ խօսքն է : Թէ

որ մէկ մարդ մը ջանք ընէր անանկ մէկ կը-
 րօնք մը հնարելու որ իր վախճանական նը-
 սառահը մարդոց միայն առաքինութիւն գոր-
 ծել տալ ըլլար, արդեօք իր աս նստասակին
 երբէք կրնար հասնել, երբոր ըսելու ըլլար՝ թէ
 որչափ որ բարի գործքեր գործելու աշխատին և
 գործեն՝ անով տակաւին վարձքի մը արժա-
 նաւորութիւն չեն կրնար ունենալ: Եւ թէ
 իրենց արժանի եղած սրտիժներէն ազատե-
 լու համար՝ պէտք է որ իրենց բարի գործքե-
 րը մէջ չխառնելով սարգասէս ուրիշի մը հա-
 ւատան: Ա՛չ. մարդս իր խեղին հարցնելով
 պիտի ըսէր թէ աս բանը մարդիկ համարձակ
 մեղք գործելու պիտի առաջնորդէ. անկարելի
 է որ աս բանը անոնք բարի գործքեր գործե-
 լու շարժէ, թէ որ իրենց գործքերովը երջան-
 կութեան արժանաւորութիւն մը չեն կրնար
 գանել: Բայց Աստուածաշունչը համարձակ կը
 զրուցէ, թէ Օրէնքին գործքերովը մէկ մարմին
 մը պիտի չարդարանայ, թէ փրկութիւնը մի-
 այն շնորհքէն է Քրիստոսի հաւատալով: Բայց
 ասանկով մի թէ մարդիկ մեղք գործելու կ'ա-
 ռաջնորդէ, ո՛չ. Աստուծոյ կարող զօրութիւ-
 նը աս վարդապետութեանը հեան է. և ո՛վ
 որ ասոր կը հաւատայ, ու փրկուելու համար
 միայն Քրիստոսի արժանաւորութեանը կ'ապա-
 ւինի, շուտով կը սկսի սրբութիւնը սիրել և
 սրբութիւն գործել. մեղքը կ'առնէ, անոր վը-

բայ կ'ողբայ, և անկէց ետ կենալու կ'աշխա-
տի: Կ'աշխատի Աստուծոյ բոլոր պատուիրանք-
ներուն հնազանդելու, սակայն իր բարի գործ-
քերուն ապաւինելուն տեղը՝ տրամութեան մէջ
կ'իյնայ թէ ինքը պէտք եղածին չափ հնազան-
դութիւն չկրցաւ ունենալ, և թողութիւն գրա-
նելու համար խաչին կը փաթառուի: Աստուծ-
մէ զատ ուրիշ էակ մը կարող չէր հնարել
միայն շնորհքով արդարանալու գաղափարը, և
անոր զօրութենէն զատ ուրիշ զօրութիւն մը
չէր կրնար ասով մարդիկ սրբութեան և հնա-
զանդութեան կեանք մը վարելու շարժել:

10

Թէ որ կը սիրէք զիս, իմ պատուիրանքնե-
րըս պահեցէք: Յով. • ԺԴ • 15:

ՔՐԻՍՏՈՍ իր աշակերտներուն չքաւ որ է-
թէ երկինքը երթալ կ'ուզեն իր օրէնքին հը-
նազանդին, որ իբրև իրենց բարի գործքերուն
հատուցում մը՝ յաւիտեանական կենաց արժա-
նի ըլլան: Հապա պարզապէս պահանջեց որ
զինքը սիրեն, ու պատուիրանքները պահելը իբրև
զինքը սիրելնուն նշան տուաւ: Եւ ո՞վ չկր-
նար խմանալ աս բանին զօրութիւնը • Թէ որ
չատ սիրելի բարեկամ մը ունենանք՝ արդեօք

չենք ուրախանար երբոր իրեն հաճելի գործ-
 քեր ընենք : Թէ որ աղայ մը իր ծնողքը սիրէ ,
 անոնց հրամանները կատարելով իր սրտին մէջ
 երջանիկ չղգար և չուրախանար : Յատկապէս՝
 եթէ աղայ մը անհնազանդութիւն ընէ , և ը-
 րածին վրայ ճշմարտապէս զղջայ , պիտի չաշ-
 խատի անոնց կամքը կատարելով առջինէն աւել-
 լի իր սէրը ցուցնելու : Մենք զՔրիստոս մեր
 երկրաւոր բարեկամներէն խիստ շատ աւելի
 սիրելու ենք . մարդկային էակ մը անոր մեզի
 սիրածին չափ չկրնար մեզ սիրել . անիկայ աս
 աշխարհս եկաւ , աշխատեցաւ , չարչարուեցաւ ,
 և մեռաւ որ մենք ապրինք . և հիմա մեզի կ'ը-
 սէ " Թէ որ զիս կը սիրէք , իմ պատուիրանք-
 ներս պահեցէք " . Մենք իրեն դէմ շատ մեղ-
 քեր գործելինք . մեր մեղքերուն համար էր
 որ չարչարուեցաւ . շատ տարիներ զինքը և իր
 ցուցրցած սէրը զանց առինք . և հիմա թէ որ
 մեր յանցանքները կը տեսնենք և իրեն դէմ
 գործած մեղքերնուս վրայ կ'ողբանք , աշխա-
 տելու ենք իրեն ծառայելով և զինքը փառա-
 բանելով , մեր կեանքը անցընել : Աշխատելու
 ենք բոլոր իր պատուիրանքները պահելու , չէ
 թէ մեր անցած մեղքերուն հատուցում մը ը-
 նելու մտքով , ինչու որ մեզի պէս մեղաւորը
 ինչպէս կրնայ իր գործքերովը արդարանալ ,
 հասկա Քրիստոսի վրայ ունեցած սէրերնիս ցու-
 ցընելու՝ իրեն հաճոյ ըլլալու և զինքը պատ-
 ւելու միտքով :

11

Աստուած խիստ զարհուրելի է սուրբերուն
 ժողովքին մէջը, և ահաւոր է ամէն իր բա-
 լորսիցը եղողներուն: Մատ. 2Թ. 7:

ԱՍՏՈՒԱԾ մեծ Աստուած մըն է, և մենք
 սփար էակներ ենք. ան սուրբ է, մենք մե-
 դաւոր ենք. ան մեր Մբարիչն ու Տէրն է,
 ուստի շատ մեծ յարգութիւնով իրեն առջևը
 ելելու ենք: Երբոր առանձին աղօթք կ'ընենք,
 մեծ խոնարհութիւնով ընելու ենք՝ մեր անար-
 ժանութեանը համար, ու նաև ան ամենա-
 կարող էակին վախովը լեցուած, որուն որ կը
 մտանանք: Երբոր ընկերներնուս հեա Աստուծոյ
 նուիրուած սան մը մէջ կը ժողովակնք իրեն ծա-
 սայելու համար, կը վայելէ որ Աստուածազա-
 տական երկիւղածութիւնով մը և մեծ յար-
 գութիւնով սրտերնիս լեցուի: Թէ որ աշխար-
 հիս թագաւորներէն մէկուն դիմացը ելելու
 ըլլայինք, անշուշտ սրտերնիս ահով և երկիւ-
 ղով լեցուած և ինքզինքնիս անոր մեծ պատիւ
 և խոնարհութիւն ցուցնելու պարտաւոր ճանչ-
 նալով պիտի երևնայինք իր առջևը. ալ ո՞ր-
 չափ առաւել թագաւորներուն թագաւորին և
 տէրերուն Տէրոջը դիմացը ելած ատեննիս: Մըտ-
 քերնուս մէջը աշխարհային խորհուրդներ և
 պարսպ երեակայութիւններ դանուելու չեն,

ինչու որ Աստուած սրտերնիս կը նայի • անիկայ
 ջեարուիր և ծաղր չըլար : Երկրպագութեան ա-
 տեն սարսապ և ոչինչ խօսակցութիւններ ընելը
 Աստուծոյ տունը պղծել և իրեն մատուցուած
 երկրպագութիւնը անպատիւ ընել է : Անանկ
 գրուած է թէ հրեշտակները երեսնին կը ծածկեն՝
 երբոր “ Սուրբ՝ սուրբ՝ սուրբ է զօրութեանց
 Տէրը ” կ'աղաղակեն • ալ ո՞րչափ խորունկ
 հարկութիւնով մը մտքերնիս լեցուելու է , եր-
 բոր մեր Տէր Աստուծոյն երկրպագութիւն ընե-
 լու կը ժողվուինք :

12

Վասն զի Աստուած իր Արդիւն ջերկեց աշ-
 խարհ , որ աշխարհը դասէ , հապա՛ որ աշ-
 խարհս անով վերկուի : Յ. Լ. Գ. 17 :

ԱՍ աշխարհիս մարդիկները՝ որ բոլորովն
 մեղքի մէջ թաղուած էին , թէ որ սոսկ Աս-
 տուծոյ Արդիւն աշխարհք դալը խմանային առանց
 անոր ինչ նպատակաւ դալը գիտնալու և անոր
 նշանները տեսնելու , արդեօք ի՞նչ զգացումներ
 պիտի ունենային և ինչ բաներու պիտի սպա-
 սէին • ամէնքն ալ վախով լեցուած իրենց ար-
 ժան եղած պատիժին պիտի սպասէին : Բայց
 Աստուծոյ ճամբաները մեր ճամբաներուն չեն
 նմանիր • թէպէտև ծանր դատաստանի արժանի

էինք, սակայն անսկիայ իր Որդին չխրկեց աշխարհ որ աշխարհը դատէ, հասլա որ աշխարհ անով փրկուի: Ս. քանչեւի՛ ողորմութիւն: Բոլոր մարդիկ Աստուծոյ դէմ ապստամբեր էին, ամէնքն ալ իր օրէնքը կը կտարէին, ամէնքն ալ դէպի անոր ունեցած սարսաւորութիւննին զանց առած էին, և իրեն դէմ համարձակութիւնով մեղք կը գործէին. բայց Աստուած տակաւին անոնց ողորմութիւն ընելու դիտաւորութիւն ունէր: Եւ աս իր դիտաւորութիւնները կատարելու համար երկինքին զօրքերուն մէջէն հրեշտակ մը չասհմանուեցաւ. ինչու որ հրեշտակներէն մէկը կարող չէր անանկ մեծ գործ մը կատարել. հասլա Աստուած իր սիրելի Որդին խրկեց որ մեր մեղացը համար քաւութիւն ընէ, և աս կերպով մեր փրկութեանը ճամբայ մը սրատրաստուի: Արդարեւ սակիայ խեղճ մտքէ վեր սէր մըն է:

Վասն զի թէ որ թշնամի եղած ատեննիս Աստուծոյ հետ հաշտուեցանք իր Որդւոյն մահովն, որչափ աւելի մեր հաշտուած ատենը պիտի ապրինք անոր կեանքովը: Հոով. Ե. 10:

ԱՍՏՈՒԾՈՅ իր սիրելի Որդին իրեն թըշ-

նամիներուն համար մեռնելու տալովը ցուցը-
 ցած սէրը սքանչելի սէր մըն է, և գրեթէ ան-
 հաւատալի: Բայց որովհետեւ աս բանը ընելը
 պիտե՛նք, առաքեալը մեզի կը ցուցընէ թէ ասի-
 կայ զօրաւոր սրտածառ մըն է յուսալու, թէ
 մեզի պէտք եղած բոլոր շնորհքները պիտի տայ:
 Ամենէն մեծ բանը ընողը միթէ պղտիկ բանը
 ընելէն ետ կը քաշուի՝ իր թշնամիներուն այս-
 չափ բան ընողը միթէ իր բարեկամներուն ա-
 սրահովութեանը պէտք եղած բաները պիտի
 չընէ: Թէ որ մեղքերնիս ապաշխարած ենք, և
 Քրիստոսով Աստուծոյ հետ հաշտուած ենք,
 ընաւ վախճալու չենք թէ Աստուած մեզ ե-
 րեսէ պիտի ձգէ: Արդ պիտե՛ք որ մեղքերնու շա-
 ար տակաւին ներսիդինիս է. կը տեսնենք որ
 ամէն ըրածներնու հետ չարութիւն խառնուած
 է. երբեմն յանցանքներնու դրացումը չորս
 կողմէն մեզ կը պաշարեն. բայց թէ որ յոյ-
 սերնիս Աստուծոյ վրայ գնենք, կրնանք յու-
 սալ թէ վերջապէս բոլոր հոգևոր թշնամիներ-
 նուս վրայ յաղթող պիտի գանուինք: Աստուած
 մեզ ասանկ անհուն գնով մը չքնեց որ վեր-
 ջը մեզ ձգէ որ սասանային խաբէութիւններ
 բովը կորսուինք. բոլոր մեր փորձութեան ժա-
 մանակները կրնանք իրեն երթալ օգնութիւն
 խնդրել, և մեզի համար իր առջի ըրածները
 կրնանք սրտածառ բերել, որ հիմակուան խընդ-
 բածնիս ալ տայ. և անշուշտ մեզի պիտի լսէ:
 Միայն յոյսերնիս իրեն վրայ գնելու ենք և
 պիտի փրկուինք:

Բայց Աստուծոյ մօտենալս բարի է ինծի :
Սաղմ . ՀԳ . 28 :

ԱՍ խօսքին փորձը ոչ միայն Սաղմոսեր-
գուն առած է , այլ ամէն ճշմարիտ հաւատա-
ցեալ . որ Քրիստոնեան իր սրտին խորունկու-
թենէն չղգար թէ Աստուծոյ մօտենալը իրեն
բարի է : Երբոր գործած յանցանքներն իսկ
անոր առջև մեծ մեղաւոր ըլլալն իսկ զգանք ,
բարի է խոստովանութիւնով ու զղջումով ի-
րեն մօտենալը . բարի է իրեն առջին բոլոր մեր
գործած մեղքերը ճանչնալ և իրմէն ներում
խնդրելը : Երբոր մեծ փորձութիւններու մէջ
կ'իյնանք և իր տեսնենք որ մեղքին զորութիւնը
ներսիդինն իսկ կ'աճի , բարի է իրեն մօտենալը ,
և բոլոր մեր կարօտութիւնները իրեն խնայը-
նելը , և մեղի պէտք եղած ամէն շնորհքները
և կարողութիւնը իրմէն խնդրելը : Երբոր նե-
ղութեան մէջ իյնանք բարի է Տէրօջը մօտե-
նալը , և բոլոր ցաւերն իսկ առջին թափելը ,
և բոլոր նեղութիւններն իրեն պատմելը , և
իրմէն միսիթարութիւն խնդրելը : Երբոր մահը
մօտերն իսկ կ'երևայ , բարի է Աստուծոյ մօտե-
նալը , և ան մութ ձորին մէջէն անցնելու ա-
տենն իսկ պէտք եղած օգնութիւնը իրմէն խնդ-
րելը : Կակ բարի է դո՛հութիւնով և շնորհա-

կաշութիւնով Տէրոջը մօտենայլը • բարի է իրեն
 երկրպագութիւն ընելը և իրեն օրհնութիւն եր-
 գելը իր “անպատուստ պարզկենտրուն” համար :
 Բարի է իրեն գոհութիւն և փառաբանութիւն
 մատուցանելը Աւետարանին առած օրհնեալ
 յոյսերուն համար • բարի է սրտերնիս երախ-
 տագիտութիւնով լեցրնելը մեզի պարզեա՞ծ իր
 անթիւ ողորմութիւններուն համար : Եւ երբօր
 կը դգանք թէ բոլոր մեր սէրն ու երախտագի-
 տութիւնը իրեն նուիրելու արժանի եղածէն
 շատ պակաս են, որ մեզ այնչափ սիրեց, բա-
 րի է իրեն մօտենայլը և ինքզինքնիս իր ոտքը
 ձգելը և իրեն աղաչելը, որ մեզի օգնէ պէտք
 եղածին մէջ զինքը փառաբանելու և սիրելու :

13

Հաստատ միտքը կատարեալ խաղաղութեան
 մէջ կը պահես • ինչու որ քեզի կը յուսայ :
 Եսայ • Ի, Զ • 3 :

ԵՐԲՈՐ տղայ մը անանկ տեղէ մը անցնի,
 որ իրեն վտանգաւոր կ'երևայ, իր հօրը ձեռքէն
 կը բռնէ, և ան առենը ապահով կ'ըլլայ : Գի-
 տէ որ իր հայրը զինքը կը սիրէ և կը հաւա-
 տայ ալ թէ կարող է զինքը պաշտպանելու •
 և այսպէս նեղութիւն տուող խորհուրդներէ

ազատ կ'ըլլայ : Մենք ալ նոյնպէս Աստուծոյ ապաւինելու ենք • երկրաւոր հայրերուն իրենց զաւկներուն վրայ ունեցած սէրէն աւելի մեր վրայ սէր ունի , և անհուն խմաստութեան և ամենակարող զօրութեան Տէր է • ուստի անշարժելի ապաւինութիւնով կրնանք յոյսերնիս ահոր վրայ դնել : Նկքը մեզ կը հրաւիրէ որ իրեն ապաւինինք , և մէկուն ապաւինութիւնն ալ պարսապը չհաներ • կատարեալ խաղաղութեան մէջ կը պահէ ան ամէնը որ յոյսերնին միայն իրեն վրայ կը դնեն : Ասանկներուն տկար հաւատքը կը զօրացընէ • մինչև որ մարմնաւոր աչքով տեսածի պէս հաստատ հաւատան թէ իր Ամենակարող բաղուկները իրենց օգնութեանը համար երկնցուցած է : Ասանկ հաստատուն հաւատքով՝ ալ բանէ մը վախ չեն քաշեր • թէ և դժոխքին ամէն զօրութիւնները իրենց դէմ միարանին , տակաւին իրենց կողմը եղողը բոլոր իրենց դէմ եղողներէն զօրաւոր է : Արնան Աազմոսերդուին հետ ըսել , “ Տէրը իմ լոյսս ու իմ վերկութիւնս է , ես ուսկից պիտի վախնամ • Տէրը իմ կեանքիս ապաւէնն է , ես ուսկից պիտի դողամ ” : Սաղմ • ԻԿ • 1 :

Ու երբոր Հերովդէս ուզեց անիկայ դուրս
բերել, ան գիշերը Պետրոս երկու զինուորներուն
մէջ տեղը կը քնանար՝ կրկին շղթաներով կապ-
ուած. ու պահապանները դրանք առջևը բան-
ար կը պահպանէին : Գործ . ԺԲ . 6 :

ՊԵՏՐՈՍ կատարեալ խաղաղութեան մէջ էր,
ինչու որ իր մխարը Աստուծոյ վրայ էր. ինքը
չատ մեծ փորձութեան մէջ էր. բանասարգուած
և անանկ պահպանուած էր որ մտորդկային մի-
ջոցով փախչելը անհնար բան էր, և հեռուեալ
օրը զինքը մեռցնելու վախ տուեր էին. և սա-
կայն հանգարտութեամբ կը քնանար : Ասիկայ
չէ թէ անդդայութենէ էր, հապա խաղաղու-
թիւնով և հանգարտութիւնով հանգչելու պատ-
ճառ ունէր. իրեն քաշածը իր Աստուածային
Վարդապետին ճշմարտութեանը համար էր, որ
խոստացեր էր միշտ իրեն հեռ ըլլալու : Թէ որ
Քրիստոս իր հեան էր, ալ վախի բան չունէր.
Թէ որ իր թշնամիները անիկայ մեռցունէին,
միայն քիչ մը առաջ իր երկնային բնակարա-
նը խրկած պիտի ըլլային որ յաւիտեան իր սի-
րելի Փրկչին քով կենայ : Եւ գիտէր որ Քր-
իստոսի ճշմարտութիւնը՝ որուն դէմ կատրած
էին անոր թշնամիները, անշուշտ պիտի յաջողի.
և թէ Աստուած մինչև անդամ իր թշնամիներ.

րուն բարկութիւնովք անխիայ պիտի յաջողէ :
Բայց Պետրոս դիտէր ալ թէ աղէկ կ'ըլլար՝ թէ
որ իր կեանքը խնայուէր . Աստուած կարող
էր զինքը դիւրաւ ազատել . և անշուշտ կ'ազա-
տէր թէ որ աչքին աղէկ երևար : Ասանկ խոր-
հուրդներով Պետրոս հանդիատ էր , և իր երկ-
նաւոր հօրը ապաւինած իրեն նեղութիւն տու-
ող խորհուրդ մը չունենալով քնացաւ . և իր
յոյսերը պարասը չէլան :

17

Եւ ահա Տէրօջը հրեշտակը եկաւ վրան կայ-
նեցաւ , ու տանը մէջ լոյս մը ծագեց , և Պետ-
րոսին կողք խթելով՝ արթնցուց զանխիայ , ու
ըսաւ . շուտով ելի՛ր . ու շղթաները անոր ձեռ-
քէն վար ինկան : Գ. ԲԺ . ԺԻ . 7 :

ՀԵՐՈՎԻՆՍ անշուշտ դիտէր թէ իր բան-
ասարգեալը աղէկ պահուած է , և Աւետարանին
թշնամիները կը խորհէին թէ առաքեալներուն
մէկուն մեռնիք պիտի տեսնեն և պիտի ուրա-
խանան : Բայց Պետրոս ամենակարող պաշա-
պան մը ունէր , որուն ձեռքը յանձներ էր ինք-
զինքը , որ ինքը բնաւ չդադրեցաւ անոր վրայ
պաշտպանութիւն ընելէն : Նաև հեռու տան մը
մէջ շատերը մէկտեղ ժողովուած կ'աղօթէին :

Հաւանահանարար Հերովդէս ծաղր սխալի ընէր ,
 եթէ լսէր թէ մէկ քանի անարգուած Գրիա-
 տոնեաներ Պետրոսը իր դիտու չարիքէն ազատե-
 լու համար՝ աշխատելու դիտաւորութիւնով մէկ
 տեղ եկեր են : Բայց անոնք մէկ անանկ զօրու-
 թիւն մը ունէին , որ Հերովդէս երազին մէջը
 անգամ տեսած չունէր . անոնք աղօթք ըրին
 և իրենց աղօթքներովը ամենակարող ձեռք մը
 ունեցան իրենց կողմը : Հերովդէս Պետրոսը քան-
 տին մէջ պահէր էր շղթաներով կապուած ,
 և զինուորներով ապէկ պահպանուած . բայց
 անոնք աղօթք ըրին և հրեշտակ մը երկինքէն
 իջաւ , ու կապակց Պետրոսին ձեռքերուն շղ-
 թաները , և բացաւ բանտին դուռները ու զին-
 քը առաւ տարաւ : Տէրը միշտ իր զօրութիւնը
 իրեն յուսացողներուն կը ցուցնէ . խոնարհու-
 թեամբ և հաւատքով մատուցուած աղօթքնե-
 րը լսելը կը սիրէ , և միշտ կրնայ ազատել իր
 ծառաները երբոր իրեն կ'աղաղակեն : Ամէն մի-
 ջոցը իր ձեռքն է . կրնայ հրեշտակ մը խրկել
 անոնք ազատելու համար . և կրնայ անոնց վրայ
 ելլողներուն սիրտերը դարձնել , անանկ որ մին-
 չև անգամ իրենց թշնամիները անոնց հետ խա-
 ղաղութիւն ունենան : Բարի է ամէն ատեն Տէ-
 րոջը ապաւինելը :

Բայց Աստուած ըսաւ անոր. Անձիս' առ
դիշեր հողիդ քնդնի սխափ սլահանչուի : Առի-
ժի. 20 :

ՄԱՐԳԻՆՅ ըստ անգամ ուրիշներուն ըրած
գործքերուն աղէկ կամ գէշ ըլլալուն վրայ սխալ
դատումներ կ'ընեն : Փեսաս Հաովմայեյի իշ-
խանը Պողոս առաքեալը յիմար կոչեց, երբոր կ'ը-
սէր թէ ճշմարտութեան և դատարարութեան խօս-
քեր կրխօսիս : Բայց ահա մարդ մը, որ Աս-
տուած անիկայ յիմար կը կոչէ և իր ըրած դա-
տումին մէջ սխալ չկայ : Աս մարդուն վրայ
եղած խօսքերը դիտելով կ'իմանանք թէ անոր
յիմարութիւնը ուր տեղ էր : Քրիստոս կ'ըսէ
թէ անիկայ հարուստ մարդ մըն էր, և իր աղ-
տերը աւատ քերը տուին. իր հարստութիւնը
այնչափ շապար. որ ալ տեղ չունէր իր բարեք-
ները դնելու. այսպէս սիրտը իր երկրաւոր դան-
ձերուն վրայ դրաւ իր անձին ըսելով, Հանդէ, ,
կէր' խմէ, և ուրախ եղիր : Նր յիմարութիւնը
առ բաներուն մէջն էր, որ հարստութեան ետե-
ւէ էր' ամենէն մեծ բարութիւնը անիկայ սե-
պելով. և կը կարծէր թէ առ կերպով իր անձին
փափաքները կրնայ կշապարնել : Աստուած անի-
կայ անունկ ստեղծած էր, որ ըստ մեծ ուրա-
խութիւններ կրնար վայելէլ զնրքը սիրելով և

իրեն ծառայելով, իր գործքերը և իր խօսքերը սորվելով, աս աշխարհիս մէջ իրեն հեռ հազորդակցութիւն ունենալով, ու ասկէց ետև ալ փառաւոր անմահութեան մը յոյսով: Բայց աս մարդը բոլոր աս մեծ բարութիւնները ատեց և կարծեց թէ իր հարստութիւնները վայելելով կատարեալ երջանիկ պիտի ըլլայ: Աս կարծիքն ալ ըրաւ թէ իր գանձերը շատ տարիներ զինքը պիտի կշտացընեն. աս բանին մէջն ալ յիմարութիւն ըրաւ քանզի ան նոյն գիշերը իր հոգին իրմէն ուզուեցաւ: Գիտէր որ մարդու կեանքը կարճ և անստոյգ է, բայց անանկ գործ տեսաւ որ կարծես թէ շատ տարիներ ապրելու գրաւ է ատեր. իւ երբոր հրաման եղաւ որ իր հոգին սայ ու իր գանձերը ձգէ և Աստուծոյ առջեւը գտաասանի կայնելու երթայ, ան ատենը իր յիմարութեան հետեւանքները խմացաւ:

19

Այսպէս է անիկայ՝ որ իր անձին համար գանձ կը դիպէ, ու Աստուծոյ չհարուստեար: Դրախ. ԺԲ. 21:

ՀԱՏ անգամ ուրիշներուն բռնած ճամբուն մէջ յիմարութիւն կը տեսնենք և անոնք կը

դատենք, չխնայալով որ մենք ալ նոյն դատա-
 պարտութեանը տակն ենք: Երբոր Քրիստոս
 անմիտ մեծատունին պատմութիւնը բրաւ, ու-
 ղեց խնայընել որ չէ թէ միայն ան մարդուն
 ըրածը յիմարութիւն էր, հասլա ամէնն ալ
 նոյն դատապարտութեանը տակն են երբոր ի-
 րենց անձին համար գանձ կը դիզեն ու Աս-
 տուծոյ չեն հարուսանար: Ան մարդը որ հոս
 հարստութիւն կը դիզէ կարելի է քանի մը տարի
 անոնք վայելէ, բայց երբոր մեռնի անշուշտ ա-
 մէնքն ալ պիտի ձգէ, և չգիտեր ալ թէ որ
 ժամուն պիտի մեռնի: Բայց ան որ Աստուծով
 ու հաւատքով հարուստ է, անիկայ երկինքի
 մէջ գանձ կը դիզէ. և ազէկ գիտէ որ չէ թէ
 քանի մը տարի, հասլա հազարաւոր տարիներ
 յաւիտեանս յաւիտենից անոնք պիտի վայելէ:
 Աւստի ճշմարտապէս անմիտ է ան մարդը, որ
 բոլոր իր կարողութիւնները և ղգացումները աշ-
 խարհիս կորսուելու հարստութիւնները հաւքելու
 կու տայ, և երկինքի մնայուն գանձերը բոլորովն
 զանց կ'առնէ: Երբոր աշխարհային հարստու-
 թիւններ ունենանք, անոնք մեր փափաքները
 չեն կրնար կշտայընել. բայց երբոր երկնային
 հարստութիւններ դիզելու ետեւ ըլլանք, անոնք
 հիմակուքնէ մեզի երջանկութիւն կու տան: Ան
 մարդը որ աշխարհային հարստութիւններու ե-
 տեւ է, կարելի է չկրնայ անոնք ձեռք բերել.
 Բայց մէկը չկայ որ երկնային հարստութիւն

փնտռէ ու պարտաւր է ըսյ : Աշխարհի հարցա-
տու թիւններու ետեւէ եղողը՝ թէ որ յաշտոյն
ալ, յախտենտականութենէն բաժին չունի . բայց
երկնաւոր հարստութիւններու ետեւէ եղողը՝
իրեն համար յախտեան փառք և սրտախ կը դե-
ղէ : Երանի՛ թէ ես ալ ան յիմարներէն չը ըսյի,
որանց բաժինը աս աշխարհս է : Հոս իմ վճա-
կըս ինչ որ ըսյ թող ըսայ, միայն թէ երկին-
քին մէջ մէկ ժառանգութիւն մը ունենամ, ալ
բան չեմ ուզեր :

20

Ու երբոր մտեցաւ, քաղաքը անսնելով լա-
ցաւ անոր վրայ : Ա. Կ. Ժ. Բ. 41 :

ՅՒՍՈՒՍ Քրիստոս թէպէտ Աստուծոյ յախ-
տենախան Արգին էր, սակայն մարդկային զգա-
ցումներ ալ ունէր, և ուրիշ մարդոց տէս կը արտա-
մէր ու կու լար երբոր ասանկ զգացումներ գըր-
գող սրտագաններու մէջ դանուէր . բայց անի-
կայ ուրիշներուն վրայ կու լար և չէ թէ իրեն
վրայ : Բնաբանին մէջ ցուցուած ժամանակը
հանգէսով Երուսաղէմ քաղաքին կը մտենար .
ու քաղմութիւնը «Ովսաննա», կ'աղաղակէին :
Քաղաքը բոլոր իր գեղեցիկութիւնովը առջևն էր .
հոն էր Աստուծոյ նուիրուած տաճարը, և հոն

Աստուած մամուսուր կերտով մը հաճեցաւ
 քնակելու : Հոն էր Միօն լեւը , աշխարհիս
 ցնծութիւնը , ուր որ Իսրայէլիք՝ Աստուծոյ
 ընարեալ ժողովուրդը ուրախութիւնով իրեն
 երկրպագութիւն կը մատուցանէին : Բայց Յի-
 սուս գիտէր թէ ան քաղաքին ժողովուրդը
 ինչպէս իրական հեռացած էին , և թէ ինչպէս
 իրենց անօրէնութիւններուն չափը սխալ լեցը-
 նէին զՆիքը ստեղծ և խաչելով : Գիտէր ալ
 գլխունուն գառը վայերը իբրև սրտիժ իրենց
 մեղացը . և գիտէր թէ Աստուծոյ բարկութիւ-
 նը ինչ սոսկալի կերտով վրանին սխալի գար ,
 ու քաղաքը տեանելով անոր վրայ լայաւ : Մենք
 ալ Քրիստոսի աս հոգին ունենալու ենք .
 մենք ալ ողբալու և լալու ենք անզեղձ մեղա-
 ւորներուն գառը գատապարտութեանը վրայ ,
 ու աշխատելու և սղոթելու ենք , որ ապաշ-
 խարեն ու վախճին ան վտանգէն քանի որ
 ձեռքերնին ժամանակ կայ :

21

Քանզի մէկ Աստուած մը կայ , ու մէկ միջ-
 նորդ մը Աստուծոյ ու մարդոյ մէջը՝ Քրիս-
 տոս Յիսուս մարդը : Ա՛՛ՏԷՏ . Բ . 5 :

ՅԻՍՈՒՍ Քրիստոս կատարեալ յարմարու-

Թիւն ունի գառապարտուած մեղաւորներուն և արդարապէս բարկացած Աստուծոյ մէջ տեղը միջնորդութիւն ընելու : Անիկայ սուրբ է և Աստուծոյ սիրելի Արդին : Թէպէտ մարդոց մեղքերուն համար զոհ եղաւ , բայց ինքը մեղք չճանչցաւ . ուստի կրնայ մեր կողմէն համարձակութիւնով Աստուծոյ մօտենալ , և հօրը ! աչքին միշտ հաճոյ է : Նաև մարդ է . մեր բռնութիւնը առաւ և ամէն կերպով մեղի պէս փորձուեցաւ . մեր բոլոր արամութիւնները և կարօտութիւնները գիտէ . Թող կու տայ որ իբրև եղբայր իրեն երթանք . ինքը ցուցուց որ մեր վրայ ունեցած սէրը մահէն ալ զօրաւոր է : Ուստի կատարեալ վստահութիւնով կրնանք իրեն երթալ , և ինքզինքնիս իր ձեռքը յանձնել . բոլոր մեր մեղքերը կրնանք իրեն խոստովանիլ , և անոնց վրայ իր առջին ողբալ , և այսպէս մեղքերնիս կը ջնջուի , քանզի ինքը միշտ պատրաստ է մեղի համար բարեխօսութիւն ընելու : Երբոր յանցանքներնու ծանրութիւնը աղէկ տեսնենք , և մեղքերնիս այնչափ մեծ երեւան որ կարծենք թէ Թողութիւն պիտի չկրնանք գտնել , տակաւին կրնանք յոյս ունենալ , քանզի բարեխօս մը ունինք հօր Աստուծոյ առջին Յիսուս Քրիստոս արդարը :

22

Եւ Նարայէլի բոլոր որդիքը տրանջեցին Մովսէսին ու Մհարոնին դէմ, ու բոլոր ժողովուրդը ըսաւ անոնց. Երանի թէ՛ Եդիպոսսի երկրին մէջ մեռած ըլլայինք. Երանի թէ՛ առ ա՛նապատիս մէջ մեռած ըլլայինք: Թ.՝. Ժ.՝. 2:

ԻՍՐԱՅԷԼԻ որդիքը շատ նեղութիւններու մէջ ինկան, բայց անոնց ամենէն ալ Տէրը աղատեց զիրենք: Թշնամիներուն ձեռքէն զիրենք ազատելու համար ծովը բաժնեց, երկինքէն հաց խրկեց որ փորերնին կշտացընեն և աստուածէն ջուր բղխեցուց որ ծարուութիւննին անցընեն: Տէրոջը ըսած բոլոր առ բարերարութիւններուն վրայ երբոր իրենց ժառանգելու երկրին բնակիչներէն իրենց վասնդ կ'երևայ, ան ատենը կը սկսին յոյսերնին Աստուծոյ վրայէն վերցընել, անոր դէմ տրտունջ ընել, և ցանկալ որ իրենց դերի եղած քաղաքին մէջ թող տար զիրենք հոն մեռնելու: Ասիկայ իրենց ընդունած բոլոր ողորմութիւններուն փոխարէն անարդապերասխտութեան հատուցում մըն էր: Նարայէլացիներուն ցուցըցած նոյն երկմտութիւնը շատ անգամ մենք ալ կը ցուցընենք, և ան ալ շատ հեղ իր բարութեանը և շնորհքներուն վրայ Նարայէլացիներուն ունեցած փորձառութիւններուն չափ կատարեալ փորձառութիւն

ունենալէն ետքը : Այսչափ տարիներ Տէրը իր
 ողորմութիւնը մեր վտայէն անպահաս ըրաւ , և
 սակայն երբոր նեղութիւն մը կամ դժբաղդու-
 թիւն մը կը տեսնենք , կը ցաւինք կ'ողբանք ու
 որամութեան մէջ կը թողուինք , իբրև թէ վը-
 րանիս հոգ սանող Աստուած չունինք : Մեր
 մեղքերուն համար իր Արդին մեռնելու տուաւ ,
 և իր սիրոյն սասանկ մէկ փորձը աննշնէս ե-
 աւ , ալ երկմտութիւն մը կամ վախ մը ունե-
 նալու չենք :

23

Կ'աղաչեմ քու մեծ ողորմութեանդ համե-
 ճատ ներէ աս ժողովուրդին անօրէնութիւնը ,
 ինչպէս որ ներէ իր աս ժողովուրդին Եգիպ-
 տոսէն մինչև հոս : ԹՊՊ . ԵԳ . 19 :

ՄԱՂԱՒԵՍ ջերմեռանդ ոգիով աղօթք ընող
 մարդ մըն էր . երբոր սրայէլայիներուն կող-
 մէն աղօթքով Աստուծոյ բարեխօսութիւն կ'ը-
 նէր , իր բերանը փաստերով լեցուն էր : Աս-
 տուած սպանաւ ըրաւ որ անոնք իրենց ան-
 հաւատութեանը և արեւախօսութեանը հա-
 մար պիտի կորսնցընէ . բայց Մովսէս բարեխօ-
 սութիւն ըրաւ որ իր սուրբ անունին պատիւին
 համար ան բանը չընէ , որ չըլլայ թէ Եգիպ-

ասցինքը ըսեն թէ չկրցաւ անոնք Քանանու
 երկիրը սանել : Կաև Մովսէս Աստուծոյ ու-
 նեցած ստորոգելիքներն ալ անոր առջևը բերաւ ,
 այսինքն անոր երկայնամիտ ու անօրէնութիւն-
 ներու՝ անհրաւուրութիւններու և մեղքերու ներող
 ըլլալը , որոնք Աստուած իրեն յայտնէր էր :
 Ետքը աղաչեց որ իր առջի ըրածներուն պէս
 իր մեծ ողորմութիւնովք անոնց ներէ : Տէրը իր
 ծառային աղօթքը լսեց ու իր ժողովուրդը չը-
 հորսնցուց : Կէնք ալ երբոր աղօթք ընելու
 համար Աստուծոյ կը մօտենանք կրնանք ասոր
 նման փաստեր առաջ բերել : Կրնանք իրմէն
 խնդրել որ իր սուրբ անուանը պատիւին հա-
 մար և իր կարողութիւնը ու շնորհքը ցուցնե-
 լու և իր Արդիին պատիւին համար , որ մեղա-
 ւորներուն Փրկիչն է , և իրեն ողորմութեանը
 համար մեր մեղքերը ներէ : Կրնանք իբրև փաստ
 մինչև հիմա մեզի համար և ուրիշ մեղաւորնե-
 րու համար ըրածը առաջ բերել որ մեզի միշտ
 ողորմութիւն ընէ : Կաև շատ ասանկ փաստեր
 կրնանք առաջ բերել երբոր մեղաւորներուն
 դարձի գալուն համար և Պրկիչին թաղաւորու-
 թեանը տարածուելուն համար կ'աղօթենք : Եւ
 թէ որ միայն Վրիստոսի անունովք աղօթքնիս
 մատուցանենք պիտի լսէ և սրտասխանը տայ :

Ուստի գիտցիր որ՝ քու արդարութեանդ համար չէ որ քու Աստուածդ աս բարի երկիրը քեզի ժառանգել կուտայ • քանզի դուն խաստարարանոց ժողովուրդ մըն ես : Բ. Օգի՞ն • Թ • Ե :

ԵՐԲՈՐ զօրասպետ մը կամ աշխարհակալ մը էր զօրքը պատերազմի կը տանի, սովորաբար կ'ուզէ անոնք քաջութիւնով լեցրնել, և անոնց հպարտութիւնը դրդուել յառաջ բերելով անոնց արդէն ըրած յայտութիւններնին և իրովն անցեալ ատեններու մէջ ցուցրցած քաջութիւններնին : Մովսէս՝ Աստուծոյ ընտրեալ ժողովուրդին առաջնորդը, ասանկ չըրաւ : Երբոր խոստացուած երկրին սահմաններն եկան, որ ալ ներս պիտի մտնէին և առջևնին դանուող ազգերը պիտի յայտէին, Մովսէս անոնք աս դործերը կատարելու կը պատրաստէ՝ իրենց աւարդ անհաւատութիւնը և մեղքերնին յառաջ բերելով : Միտքերնին կը ձգէ որ իրենց զօրութիւնովը և իրենց խնաստութիւնովը չէր որ ան երկիրը պիտի ժառանգէին, հասաւ իրենց Տէր Աստուածն էր որ իրենց համար պատերազմեցաւ, և բոլոր փառքը անոր արուելու էր : Եւ որ չըլլայ թէ Աստուած այսպէս իրենք ընտրելուն համար հպարտանան, ուստի կը պատուիրէ որ յիշեն թէ իրենց արդարու-

Թեանք համար չէր որ Աստուած իրենք ասանկ սիրեց, ինչու որ իրենք խստաստարանաց ժողովուրդ մըն էին: Մովսէս միայն մարդկային Լմաստու.թիւնով ասանկ խօսք մը չէր կրնար ընել. հասրս Սուրբ Հոգիին զօրութիւնովք խօսեցաւ. և իր ըրած խօսքերը անոնց սիրար ասանկ վիճակի մը հասցընելու համար էր՝ որ Տէրը անոնք օրհնէ: Տէրը իրենց համար սրտազրկելու վրայ էր, բայց « Ամբարտաւաններուն և ինքզինքնին արդար սեպտոյներուն հակառակ է, և իր շնորհքը խոնարհներուն կուտայ »:

25

Միտքդ սրահէ ու մի մտնար, որ դուն քու Տէր Աստուածդ անասլասին մէջ բարկացուցիր. Եդիպտոսի երկրէն ելած օրէդ՝ մինչև հոս եկած օրդ Տէրոջը անհնադանդ եղաք: Բ. Օրհն. Թ. 7:

ՈՐՊԷՍ զի Իսրայէլացիք իրենց ընդունած մասնաւոր շնորհքներնուն վրայով հարարս ոգի մը չունենան, Մովսէս կը սպասուիրէ անոնց որ Եդիպտոսի երկրէն ելած օրերնէն մինչև Քանանու սահմանները եկած ստե՛ննին իրենց գործած մեղքերը միտքերնին սրահեն: Աս բանը

անոնք խոնարհութեան մէջ պահելու համար
էր, և միանգամայն շարժեալ որ երախտագէտ
արտով ճանչնան ու փառաւորեն Ղաթաւծոյ խ-
րենց վրայ ցուցրցած ողորմութիւնը և երկայն-
մատութիւնը: Մովսէսին յարայէացւոյ առած
յորդորանքը մեր վրայ ալ տանէնք. ապէհ է որ
մեր կեանքին անցած տարիներուն վրայ նայինք և
տեսնենք թէ Ղաթաւծոյ դէմ յըջափ մեղք գոր-
ծեցինք: Բնաւ մաքելնէս հանեալ չենք թէ ին-
տո՛ր սպաստամբներ էինք, թէ ինչպէս Ղաթա-
ւծոյ պատուիրանքները կատրելինք և մեր ուզած
ճամբան դա՛նինք, բնաւ անար չնայելով: Ինչեւ
ենք թէ քանի քանի անգամ ճրկչին սիրոյն
վրայ խօսուած խօսքերը լսեցինք, ու մեր վրայ
ամենեւին ազդուութեան նշան մը չերևաց, և
թէ ինչպէս Սուրբ Հոգիին դէմ կեցանք: Եւ
յիշեալ ենք թէ սրտերնիս նորոգուելն և Ղա-
թաւծոյ որդիքը ըստնէս իւր քանի քանի
հեղ անհաւատութեան և երկամտութեան մէջ
ինկանք, ու տրտնանք ըրինք և շատ ուրիշ
մեղքեր ալ գործեցինք: Մտքաներուն յիշա-
տակութիւնը մեզի համարձակութիւն չտար որ
ինքզինքնիս արդար սեպենք, և մեզ նորէն Գը-
րիստոսի երթալու կը սախպէ իրմէն թողու-
թիւն խնդրեալ համար: Եւսե ճրկչին պատ-
ուականութիւնը մեզի կը սարվեցընէ, և մեզի
կը շարժէ Ղաթաւծոյ երկայնմատութիւնը փառա-
բանելու, որով այնչափ մեզի համբերեց:

26

Եւ Տէրը երկրիս մէկ ծայրէն մինչև մեկաւ
ծայրը՝ բոլոր ժողովուրդներու մէջ պիտի ցըր-
ուէ քեզ, ու հոն ծառայութիւն պիտի ընես
ստար աստուածներու՝ փայտի ու քարի, որոնք
ոչ գուն ճանչցեր էիր՝ ոչ ալ քու հայրերդ :
Ի Օրիս . ԻԸ . 64 :

ՄՈՎՍԷՍ Աստուծոյ աստիճանութիւնովը
Բարայէլի որդւոյը առջեւը գրաւ կեանքն ու
մահը : Եւ որ իրենց Տէր Աստուծոյն պատուի-
րանքներուն հնազանդէին, ամէն ուղած օրհնու-
թիւննին պիտի ընդունէին . բայց թէ որ Տէրո-
ջը ձայնին մօտիկ չընէին, և բոլոր իր պատուի-
րանքները չհասարէին, ան ատենը գլխունուն
չտա ստակալի պատահաններ պիտի գար : Սով
մահ սուր և գերութիւն պիտի գար, և վերջա-
պէս ամէն ազգերուն մէջ պիտի ցրուէին : Ա-
նանկ մեծ պիտի ըլլար իրենց նեղութիւնները,
որ սով ն ստակութեան ատենը ծնողքները զո-
ւակնին պիտի ուտէին, և ասդին անդին ցըր-
ուած ժամանակնին ալ տակաւին սիրտերնին
գողի մէջ պիտի ըլլար և հողինին ալ պիտի
մարմրէր : Բարայէլայիք Աստուծոյ չհնազանդե-
ցան, և թէպէտ շատ համբերեց՝ սակայն վեր-
ջապէս բոլոր իր սպանալիքները հասարեցան :
Բարայէլի որդւոյը պատմութիւնը թէ որ աս

մարդարեւ թիւններուն հետ բաղդատուի, յայտնի կ'երեւայ Մովսէսին Աստուծմէ շարժուած մարդ ըլլալը: Աս խօսքերուն ամէն մէկը կատարուեցան. Աստուած ցուցուց թէ իր սպանալիքներն ալ իր խոստումներներուն պէս ճշմարիտ են: Աստուած արդար է և շարերը պիտի պատժէ, թէ և շատ ալ համբերէ: ,, Սարսափելի բան է կենդանի Աստուծոյ ձեռքը կ'նաւը: Եբր. Ժ. 31:

27

Անդգամը իր սրտին մէջ ըսաւ՝ թէ Աստուած չկայ: Սաղմ. ԺԴ. 1:

Թէ որ մարդ մը գեղեցիկ ու ամենայն ճշտութեամբ շտապ բանող ժամացոյցի մը վրայ նայելու ըլլայ, ու ըսէ թէ ասիկայ մէկը չէ շիներ, հասցա անոր զանազան կտորները դիպուածով մէկ տեղ եկեր ու ինքիւրեն նին ասանկ շինուեր են, անանկ մէկու մը համար կամ խենդ է կ'ըսենք և կամ վերջի աստիճանի անդգամ, որ ասանկ ինքնայայտ բան մը ուրանալու կը յանդգնի: Արդ ճիշտ ասանկ է ան մարդն ալ, որ աս աշխարհս ու անոր մէջը եղած բոյսերուն և կենդանիներուն զարմանալի կազմութիւնները, ու նաև անոնք ինչ

բանի համար որ ստեղծուած են ան նոյն նը-
 առասկին ունեցած կատարեալ յարմարութիւն-
 նին տեսնելէն ետքը, տակաւին կը ըսէ թէ
 Աստուած չկայ • այն ասիկայ ևս առաւել ար-
 ժան է խենդ կամ “Ննդամ” կոչուելու :
 Բայց յայտնի է որ մարդոց ասանկ երկբայու-
 թիւններու մէջ իյնալուն պատճառը Աստու-
 ծոյ էութիւնը հաստատող վկայութիւններուն
 պակասութիւնը և կամ անոնց ան վկայութիւն-
 ները հասկնալու կարող չըլլալնին չէ, որովհե-
 տև անոնք միայն իրենց սրտերնուն մէջ կը ըսեն
 թէ “Աստուած չկայ” : Որ ըսել է թէ չեն
 ուզեր անանկ էակի մը իշխանութեանը տակ
 ըլլալ որ իրենց ամէն խորհուրդները՝ խօսքերը
 և գործքերը կը գիտէ և անոնց համար հաշիւ
 պիտի պահանջէ իրենցմէ • կ'ուզեն որ բուն ի-
 րենց ուղած ճամբան երթան, և ուստի հա-
 կամիս են ըսելու թէ Աստուած չկայ որ զի-
 րենք հաշիւի կանչէ : Բայց մարդոց համարձակ
 մեղք գործելու համար ինքզինքնին աս բանին
 համարելովն ճշմարտութիւնը չհասկանալիք • մի-
 այն թէ անոնք անանկ հաւատալը ուզելով ի-
 րենց խենդ կամ յեախն աստիճան անդգամ ը-
 լալնին կը յայտնեն • ինչու որ Աստուած զեռ կեն-
 դանի է, և ասանկ իրեն դէմ ապրտամբողմեքու-
 ու իր անունը անպատիւ ընողներուն իր կ-
 հութիւնովը այցելու թեան պիտի դայ :

Ուր որ անոնց որդը չմեռնիր, և կրակը չմեռնի : Մարի . Թ . 45 :

ԱՄՏՈՒԱԾ կատարեալ արդարութիւն և անհուն ողորմութիւն ունեցող էակ մըն է . երբեմն երկրաւոր ծնողքները իրենց զաւկրներուն գործած յանանքներուն համար արժան եղածէն շատ աւելի պատիժ կու տան . ինչու որ պինտ շատ բարկացած են ու կիրքով կու տան ան պատիժը և չէ թէ բանականութիւնով : Բայց Աստուած ասանկ չէ . անիկայ իր արարածները կը սիրէ . և թէպէտ մեղքը կ'ատէ, սակայն արժան եղած պատիժէն աւելի պատիժ չտար : Ուստի երբոր Աստուածաշունչն մէջը չարերուն տրուած պատիժին վրայ կը կարգանք թէ անոնք անմարելի կրակով պիտի այրին և չմեռնող որդերը զիրենք պիտի կրծեն, կը տեսնենք մեղքին ինչ գէշ բան ըլլայ, որ Աստուած անոր համար ասանկ մեծ պատիժ մը կու տայ : Անիկայ անհուն չարութիւն մըն է, ինչու որ պատիժը յաւիտենական է : Մեղքը անանկ գէշ բան է և իրեն հետ կցուած անէծքն ալ անանկ սոսկալի է, որ Աստուծոյ յաւիտենական Որդիէն զատ բնու ուրիշ մէկը չկրնար անիկայ քաւել և մեղաւորին պատիժը անոր տեղը քաշել : Անէնքս ալ մեղաւոր ենք,

ուստի ամենքս ալ յաշխտենական սրատիժի ար-
ժան ենք : Բայց Քրիստոս մեր տեղը անէծքը
կրեց , և թէ որ իրեն հաւատանք կրնանք ան-
կէց աղատիլ : Ուրեմն անոր մեր վրայ ցուցը-
ցած առատ սիրոյն համար ինչ մեծ սրարտա-
ւորութեան տակ ենք :

29

Ուստի ասանկ աղօթք ըրէք դուք : Մատթ .
9 . 9 :

ՅԻՍՈՒՍ Քրիստոս մեղի օրինակ մը տուաւ
որ սորվեցնէ թէ ինչ հոգիով ու ինչ եղա-
նակով աղօթք ընելու ենք : Ինքը ըսել չուզեց
թէ միայն իր ըսած խօսքերը կրկնենք , հասկա
որ ան կերպովը և ան բաներուն համար աղօ-
թենք , կամ թէ իր ըսած աղօթքին մէջի ցուցուած
պագումները և փափաքները ունենալով աղօ-
թենք : Ինքը մեղի կը սորվեցնէ որ իրեն իբ-
րև մեր հայրը մօտենանք : Մեծ պատիւ է մե-
ղի որ կրնանք Աստուած մեր հայրը կոչել .
բայց մեղի համար աս շնորհքը ծախու առնու-
ղը Քրիստոս է , և ինքը կը հրամայէ որ անի-
կայ վայելենք : Ուստի թէ որ Աստուած մեր
հայրը կը կոչենք , որգիական հոգիով պէտք է
իրեն աղօթք ընելու մօտենանք . պէտք է որ-

գիական սիրով ու որդիական յարգութիւնով մտեանսք : Նաև որդիական վատահաւթիւնով իրեն երթալու ենք , և կատարեալ հաւատք ընծայելով իր ճշմարտութեանը և իր խոստմունքներուն վրայ ունեցած հաւատարմութեանը : Նաև իր կամքին կատարեալ հնազանդութիւն ցուցնելու ենք , ինչպէս որ հնազանդ որդի մը իր դժած հօրը կամքը ուրախութիւնով կը կատարէ : Քրիստոս մեզի կը սորվեցնէ որ ճշ հայրը ըսենք , և չէ թէ պարզապէս իմ հայրս : Արնանք ամէն մէկերնիս մեր անձին համար սասանկ կանչել , բայց նոյն ժամանակը զգալու ենք թէ անկեղծութիւնով ու ճշմարտութիւնով իրեն ազադակող ամէն մարդոց և ամէն աղգերուն ալ հայրն է : Ուստի բոլոր սասանկ մարդիկը մեր եղբայրներն են , և ամէնքրս ալ նոյն հօրը զաւկրնէրը ըլլալնուս համար անոնք ամէնը եղբայրական սիրով սիրելու ենք :

30

Քու անունդ սուրբ ըլլայ • քու թագաւորութիւնդ գայ , քու կամքդ ըլլայ , ինչպէս որ երկինքը՝ անանկ ալ երկրիս վրայ : Մատթ . 2 . 9 , 10 :

ՄԵՆ մեծ փափաքը Աստուծոյ փառքին և

իր ճշմարտութեանը ասարածուելուն համար պէտք է ըլլայ : Քրիստոս մեղի կը սորվեցնէ՝ նախ և առաջ և ամենէն շատ աս բանին համար աղօթք ընել : Աս աղօթքին մէջի եօթը խընդրուածքներէն երեքը Աստուծոյ պատիւին և իր թագաւորութեանը կը վերաբերին : Առաջինը « Քու անունդ սուրբ ըլլայ » է . սիրելի զաւակ մը իր հօրը անունին յարգութիւնով և սիրով յիշուելուն վրայ կ'ուրախանայ . անանկ ալ մենք փափաքելու ենք որ մեր Երկնաւոր Հօրը անունը իր ամէն արարածները սուրբ սեպեն : Երկրորդ խնդրուածքն է՝ « Քու թագաւորութիւնդ գայ » . թէ որ Աստուծոյ թագաւորութիւնը հաստատուի , և ամէն մարդիկ անոր մէջը մտնեն , ան ատենը աշխարհք կըրկին իր առջի սրբութիւնը խաղաղութիւնը ու երջանկութիւնը կը գանէ . ամէնը Աստուած կը սիրեն և անոր կը ծառայեն , ու մէկզմէկու վրայ սէր կ'ունենան : Մեր Երկնաւոր Հօրը պատիւին և մեր ընկերներուն օգտին համար պարտաւոր ենք աս բանին փափաքելու : Երրորդ խընդրուածքն է՝ « Քու կամքդ ըլլայ , ինչպէս որ երկինքը անանկ ալ երկրիս վրայ » . երկինքը հրեշապակները Աստուծոյ կամքը կատարելու կը փափաքին , իր հրամաններուն հնազանդելու կը վաղեն . անանկ ալ մարդիկ ուրախութիւնով և զուարթութիւնով Աստուծոյ հնազանդելու են : Թէ որ աս խնդրուածքները

անկեղծութիւնով մատուցանենք, ամենէն շատ
մենք պիտի աշխատինք Աստուծոյ կամքը կա-
տարելու, իր թաղաւորութեանը մէջ կենալու,
և իր անունը փառաւորելու:

31

Մեր ամէն աւուր հացը՝ այսօր մեղի տուր:
Մատթ. 2. 11:

ԿՐՆԱՆԻ մեր Երկնաւոր Հօրը երթալ և խընդ-
րել որ բոլոր մեր կարօտութիւնները լեցնէ:
Չէ թէ միայն մեղաց թողութիւն և մեր հո-
գևոր պիտոյքները, հասպանակ բոլոր մեր մարմ-
նաւոր պիտոյքներն ալ կրնանք իրմէն խնդրել,
ինչպէս որ փոքրիկ տղայ մը կ'երթայ իր ծը-
նողքներէն կերակուր կը խնդրէ: Մեր կերա-
կուրն ու հանդերձը և ամէն վայելած բարու-
թիւննիս տուողը Աստուած է, և արժան է
որ մեր պիտոյքները իրմէն խնդրելով անկէց
ունեցած կախումնիս ցուցնենք: Բայց Քրիս-
տոս մեղի համարձակութիւն չտար որ մարմնա-
ւոր բաներու վերաբերեալ մեծ բաներ խընդ-
րենք. ինքը մեղի հարստութիւն և պատիւ խընդ-
րելու աղօթքի օրինակ չտուաւ, հասպա պար-
զապէս մեր օրական հացը խնդրելու: Պէտք չէ
որ մենք աւելորդ բաներ խնդրենք, հասպա օր

ըստ օրէ մեր օրական պատուիր . ինչպէս որ առա-
 քեալը կ'ըսէ . « Ունինք կերակուր ու հան-
 դերձ , անոնցմով բաւականանանք » : Ա ՏԻՏ . 2 .
 3 . Ուստի թէ որ կրնանք ամէն օր մեր Երկ-
 նաւոր Հօրը երթալ , և բոլոր մեր կարօտու-
 թիւնները լեցընել , արդարև գալու ժամանա-
 կին վրայ հոգ տանելու բան չունինք . և բնաւ
 վախնալու չենք թէ մեր ամէն աւուր հացը չենք
 գտնիք :



ՅՈՒՆԻՍ

1

Եւ մեզի ներէ՛ մեր սլարոքերը , ինչպէս որ
մենք ալ կը ներենք մեր [սլարտահաններուն :
Մատթ . 2 . 12 :

ԱՍ խօսքը Ղուկասու աւետարանին մէջ
այսպէս գրուած է , թէ “ Մեր մեղքերը մեզի
ներէ ” : Ղուկ . ԺԱ . 4 : Գործած մեղքերնիս
չենք կրնար հաշիւի տակ առնել . թէ որ Աս-
տուած մեր յանցանքներուն համար մեզմէ խըս-
տութեամբ հաշիւ պահանջէր , տասը հազարէն
մէկին սրտասիւանը չէինք կրնար տալ : Բայց
Յիսուս Քրիստոս արդար Աստուծմէ թողու-
թիւն գտնելու ճամբայ մը բացաւ և հիմա մեծ
համարձակութիւն ունինք Աստուծոյ մօտենալու
և բոլոր յանցանքներնուս համար ներում խընդ-
րելու : Բայց չենք կրնար մեր ներսը անհաշտելի
ողբի մը ունենալ և նոյն ատենը մեր անձին հա-
մար յուսալ թէ թողութիւն սլիտի գտնենք .
մէկը չկրնար մեր Աստուծոյ դէմ գործած յան-
ցանքներնուս չափ մեզի դէմ յանցանք գոր-
ծել : Ուստի թէ որ մեզի դէմ գործուած յան-

ցանքներուն սրտով չենք ներեր, և մեղի մնաս
 հասցունողներուն սէր ու բարի կամք չենք ցու-
 ցըներ, ինտսր կրնանք Աստուծոյ գէմ գոր-
 ծած անթիւ մեղքերնու թողութիւն դանելու
 յուսալ, և կարծել թէ անխնայ մեղ կը սիրէ :
 Քրիստոս աս աղօթքովք մեղի կը սորվեցընէ թէ
 Աստուծմէ խնդրած բաներնիս մեր ունեցած նե-
 րողամտութեան չափովք պիտի ընդունինք :
 Արդ՝ թէ որ աս աղօթքը ըրած ատեննիս թշնա-
 միներնուս վրայ բարկութիւն կամ վրէժխնդրու-
 թիւն ունենանք, Աստուած՝ մեղի մի ներեր ը-
 սած կ'ըլլանք :

2

Ու մեղ փորձութեան մի՛ տանիր, հասցա՛ չա-
 րէն մեղ աղատէ՛ . ինչու որ քուկդ է թագա-
 ւորութիւնը և զօրութիւնը ու փառքը յաւիտ-
 եանս . Ամէն : Մատթ . Զ . 13 :

ԱՄԷՆՔՆԵՒՍ ալ տկար էակներ ենք, ու
 մեղք գործելու յօժար սիրաներ ունինք, և չենք
 կրնար փորձութեան դիմանալ, ուրեմն մեր Երկ-
 նաւոր հօրը աղաչելու ենք որ մեղ փորձու-
 թեան չտանի, հասցա չարէն մեղ աղատէ :
 Ամէնէն մեծ չարիքը մեղքն է . մեծ եռանդով
 փափաքելու ենք որ աս բանէն աղատինք . ու-

ըիշ չարիքները, ինչպէս են հիւանդութիւն նեղութիւն աղքատութիւն և այլն, կրնան մեղի մեծ օգուտներ ընծայել • բայց մեղքը լոկ չարութիւն է, և Աստուծոյ ալ զղուելի • ուստի միշտ խընդրելու ենք որ ասկէց ազատ մնանք : Աղօթքներնուս մէջ փառաբանութիւն ալ ըլլալու է • տիեզերքին թագաւորութիւնը Տէրոջն է, և մենք իր հպատակներն ենք, ու իրեն հնազանդելու ալ պարտական ենք : Ամէն զօրութիւնները իր ձեռքն են, և թէ որ աղէկ սեպէ կրնայ սրտերնուս ամենէն մեծ փափաքները լեցընել : Ու բոլոր փառքը յաւիտեան իրենն է • թէ որ աս աշխարհիս մէջ բարի բան մը ընելու կարող ըլլանք, կարողութիւն տուողը ինքն է և փառքը իրենն է • ինչ որ ձեռքերնիս ունինք, իրեն պարգեւն է, և փառքը իրեն տալու ենք : Մեղի խոնարհութիւն կը վայելէ, բայց Տէրոջը փառք և պատիւ յաւիտեան :

3

Ան ասե՛նք Իսրայէլի որդիքը նուաճեցան, ու Յուդայի որդիքը իրենց հայրերուն Տէր Աստուծոյն ապաւինելնուն համար ոյժ գտան : Բ ՄԸ-նայ • Ե.Գ. • 18 :

ՏԵՐՈՋԸ ապաւինողներէն մէկն ալ բնաւ

պիտի չամչնայ • աս համարին մէջ ցուցուած
 ժամանակը Իսրայէլի որդիքը Յուդայի զաւկը-
 ներուն ունեցած զօրքէն երէք անգամ աւելի
 զօրք ունէին • Բայց Իսրայէլի որդիքը Տէրը է-
 րեսէ ձգելու էին, ու ոսկիէ որթեր շինելու էին
 անոնց երկրագագութիւն ընելու : Սակայն Յու-
 դայի որդիքը յոյսերնին Աստուծոյ խոստմունք-
 ներուն վրայ դրին թէ իրենց հետը պիտի ըլ-
 լայ թէ որ իրեն վստահութիւն ցուցնեն • Ե-
 սանկով կատարեալ յաղթութիւն ստացան :
 Միայն Տէրոջը ապաւինողները վախի բան չու-
 նին • իր խօսքին գրաւը տուաւ թէ ասանկ
 մարդիկները պիտի պաշտպանէ և փրկէ • Ա'ու-
 ղէ որ իր որդիքը իրմէն կախում ունենալնին
 զգան • որ ատեն ՚որ սրտերնին բարձրացնեն
 ու ինքզինքնին զօրաւոր կարծեն, ինքը ետ կը
 քաշուի անոնցմէ և կը թողու որ իրենց տկա-
 րութիւնը խմանան ու նորէն գան իրմէն պաշտ-
 պանութիւն խնդրեն : Բայց բարի է Տէրոջը յու-
 սալը և իր զօրութեանը ապաւինիլը և զինքը բռ-
 նելը, ինչպէս որ փոքրիկ տղայ մը վտանգի ա-
 տեն իր մօրը ձեռքէն կը բռնէ • ասանկով բնաւ
 պիտի չիյնանք :

Գիրքերը քննեցէք • ինչու որ դուք անոնց մով կը սեպէք յաւիտենական կեանքը ունենալ • և բուն անոնք են որ ինձի համար կը վկայեն : Յով • Ե • 39 :

ՅՈՒՆԻՍ աս խօսքը հրեից ըսաւ , որոնք իրեն Աստուծմէ ըլլալը չէին հաւատար : Անոնց կ'ըսէ թէ Սուրբ Գիրքերը ասնեն նային , ու իր սահանջմունքները անոնցմով փորձեն , ինչու որ անոնք են որ իրեն համար կը վկայեն : Աս խօսքը իբրեւ մեղի ալ զըտեցուած սեպելու ենք • ադէկ քննելու ենք Սուրբ Գիրքերը որ խմանանք թէ ինչ բաներ կը սորվեցընեն • և մեր կրօնական ուսուցիչներուն ամէն վարդապետութիւնները ու բոլոր կրօնական գիրքերը Աստուծոյ խօսքին հետ բաղդաստելու ենք , և թէ որ անոր հետ համաձայն են՝ ընդունելու ենք , թէ որ համաձայն չեն՝ ձգելու ենք : Աստուած իր խօսքը մեղի առաւ որ մեր կենաց առաջնորդը ու մեր հաւատքին կանոնը ըլլայ , և աս իր առաւ խօսքը անանկ սրարդ է որ ամենէն տկար մարդը թէ որ հնազանդ ոգիով մը և ճշմարտութիւնը գիտնալու անկեղծ փափաքով մը կարդալու ըլլայ , կարող է անխկայ հասկընալ : Եւ թէ որ մոլորութիւն մը ընդունինք կամ մեղանշական գործքի մը հետեւինք չենք կրնար ինքզինքնուս

համար ջատագովութիւն ընել : Բայց առ խօսքը , որ մեր ճամբուն լոյս ըլլալու համար արքունած է , մթութենէն զատ ուրիշ բան պիտի չըլլայ մեզի թէ որ ժիրութիւնով անիկայ չկարդանք : Եւ անիկայ կարգացած ասե՛ննիս աղօթելու ենք Սարմուսերգուիս հետ ըսելով , « Բայց իմ աչքերս , որ քու օրէնքէդ հրաշքներ տեսնեմ » : Սաղմ • ԾԺԹ • 18 :

 3

Սիմոն Պետրոս պատասխան տուաւ անոր • Տէր՝ որո՞ւն պիտի երթանք , դուն յաւիտենական կենաց խօսքեր ունիս • ՅԻԷ • Զ • 69 :

ՓՐԿՈՒԹԻՒՆ դանելու համար Յիսուս Քրիստոսէն զատ որո՞ւ կրնանք երթալ • անկէջ զատ որո՞ւ կրնանք երթալ երջանկութիւն դանելու : Թէ որ ինքզինքնիս քննենք , կը տեսնենք որ բոլոր մեր արդարութիւնը մեղքէն զատ ուրիշ բան չէ , և թէ որչափ որ մեղաւոր ենք՝ նոյնչափ ալ տկար ենք : Աարողութիւն չունինք ինքզինքնիս մեղաց իշխանութենէն ազատելու , և մենք մեղմէ զօրութիւն չունինք աշխարհիս՝ մարմինին և սատանային դէմ կենալու : Բայց Յիսուս Քրիստոս իր արդարութիւնը և զօրութիւնը մեզի կու սայ , և թէ որ ի-

րեն երթանք յաւիտենական կեանք կ'ունենանք :
Թէ որ զինքը ձգենք ու մեր ընկերներէն մե-
կուն երթանք, ան ալ մեզի պէս մեղաւոր ու
տկար պիտի գտնենք և իր անձը ազատելու կա-
րողութիւն չունեցող, և ինչպէս մեզի պիտի
օգնէ : Երբոր աշխարհ իր փորձութիւնները առ-
ջննիա դնէ, ու մեզի արդիւուած հեշտութիւն-
ներ վայելելու և մեղանշական ճամբաներու մեջ
քալելու դրդուէ, ան ատենը աս պատասխանը
տալու ենք ան փորձութիւններուն թէ ուրիշ
որո՞ւ քով յաւիտենական կենաց խօսքեր կան :
Ո՛վ մեղաւորներուն Փրկիչը, քու գիրկդ կ'եյ-
նամ և կ'աղաչեմ պահէ իս որ քեզ չթողում .
միայն քու քովդ է կեանքն ու փրկութիւնը :

6

Ատիկայ ինչ որ ունէր՝ ըրաւ : Մարի . ԺԴ . 8 :

ԱՍ մեծ գովեստը մեր Փրկիչը սուաւ ան
կնկանը, որ շիշ մը պատուական նարդոսի եղ
գլուխը թափեց : Արծաթասէր Յուդան դա-
տապարտեց աս գործը իբրև անպիտան ծախք
մը, բայց Յիսուս կը գովէ անսիկայ իբրև բարի
գործք մը : Տեսաւ որ ասիկայ իրեն վրայ ու-
նեցած սիրոյն պտուղն է, և պարզ սիրով է .

դած ամէն ընծայ իրեն ընդունելի է . սրտին
 սիրով բորբոքելը արտաքին գործքերով երե-
 ւալու է : Թէ որ Փրկիչն իսկ սիրենք , առ սէ-
 րը սրտերնուս մէջը ծածկուած մնալու չէ , հա-
 պա իրեն հաճոյ ըլլալու և զինքը պատուելու
 համար ըրած ամէն ջանքերնուս մէջ երևալու է :
 Աս կինը բաւական չտեսեց միայն ընդհանուր
 գործածուած սիրոյ նշաններով իր սէրը ցու-
 ցրնելը . հապա սուղ ընծայ մը բերաւ , մէկ
 շատ սրտառական եղ մը՝ և անոր գլուխը թա-
 փեց . Յիսուս տեսաւ որ անիկայ իր սէրը ցու-
 ցրնելու համար ձեռքէն եկածը ըրաւ : Ահա
 մեր պարտաւորութեան կանոնը ասիկայ է . մեր
 Փրկիչը փառաւորելու համար ինչ որ ձեռքեր-
 նէս կու գայ ընելու ենք . հիմա աշխարհիս վը-
 ըայ չէ որ մեր ընծաները տանինք իրեն մա-
 տուցանենք . բայց անոր փառաւոր գործը հոս
 է , որ իրեն շատ սիրելի է , որուն համար կըր-
 նանք աշխատիլ : Ինքը կ'ըսէ թէ ինչ որ իրեն
 հետևողներուն ընենք իրեն ըրածի պէս կ'ըլլանք .
 ուրեմն շատ կերպերով կրնանք Քրիստոսի վըայ
 ունեցած սէրերնիս մեր գործքերովը ցուցրնել :
 Խօսքով ողորմութիւնով և աղօթքով կրնանք
 իր ճշմարտութեանը տարածմանը և յառաջ
 երթալուն օգնել . և երանելի պիտի ըլլանք
 թէ որ խիղճերնիս վիայեն թէ ինչ որ ձեռքերնէս
 կու գար ըրինք :

Չենք ուզեր եղբայրներ՝ որ աղէտ ըլլաք ննջեց-
եալներուն վրայով, որ չարամիք ինչպէս ուրիշ-
ները՝ որոնք յոյս չունին : Ա. Թ. Կ. 12 :

ԱՆՈՒՔ որ Յիսուս Քրիստոսի ձեռքով Աս-
տուծոյ հետ հաշտուած չեն՝ մահը տխուր և
ցաւալի բան մըն է իրենց . և երբոր իրենց բա-
րեկամները գերեզմանը դնելու կ'ըլլան՝ անմխի-
թար կը արամին . գերեզմանը աչքերնուն սու-
կալի բանս մը կ'երեւայ, և անկէջ անդին յու-
սալու բան չունին : Բայց աւետարանը կեանք և
անմահութիւն կը քարոզէ, (Բ. ՏԻՃ . Ա . 10 :)
և անոր օրհնեալ խոստմունքներուն հաւատա-
ցողները յոյս չունեցողներուն պէս արամա-
թեան մէջ խնայու չեն : Երբոր մահը գայ քը-
րիստոնեայ բարեկամներնու մէկը տանի, թէ-
պէտ մեղի մեծ ցաւ կու տայ և սրտերնիս արբա-
մութիւնով կը լեցուի, սակայն աւետարանին
տուած յոյսերովն ալ մխիթարուելու ենք : Ա-
նոնց վրայ ողբալու չենք, իբրև յաւիտենական
խաւարը գաշած . հասցա հաւատքի աչքով ա-
նոնց ետեւն Քրիստոսի անոնց համար պատ-
րաստած բնակարանները երթալու ենք, և ի-
րենց երջանկութեանը վրայ ուրախանալու ենք,
և Աստուծոյ փառաբանութիւն տալու ենք որ
Քրիստոս Յիսուսով անոնց յաղթութիւն տու-

աւ : Թէ որ հաւատարիմ ենք՝ մենք ալ շուտով ան բնակարանները պիտի ընդունուինք , և կրկին անոնք պիտի գանենք , որոնցմէ մահը մեզ բաժնեց :

8

Ուստի մէկզմէկ մտիթարեցէք աս խօսքերով :
Ա. Թ. Է. • Դ. • 17 :

Ի՞նչ խօսքեր են անոնք , որոնցմով Պօղոս մահուան քունը քնացող բարեկամներու վրայ սուգ ընտղներուն կ'ըսէ թէ « մտիթարուեցէք » : Անոնք յարութեան և յաւիտենական կենաց վարդապետութիւններն են • ինչպէս որ Յիսուս մեռաւ և յարութիւն առաւ , անանկ ալ անոնք որ Քրիստոսով կր'ննջեն յարութիւն կ'առնեն • քիչ մը ժամանակէն ինքը Տէրը պիտի իջնէ հրեշտակապետին ձայնովը , և ան ատենը մեռելները յարութիւն պիտի առնեն : Երբոր Քրիստոսնեայ բարեկամի մը մարմինը գերեզմանը կը գնենք , հոն յաւիտեան պիտի չննջէ , հասցա ետքը յաւիտենական կեանքի յարութիւն պիտի առնէ • մենք ալ անոնց քովը պիտի երթանք և մէկտեղ կրկինքը պիտի ընդունուինք , և յաւիտեան Տէրը ըր քով պիտի մնանք : Ասիկայ է երջանկու-

Թիւններուն կատարելու թիւնը • և աս յոյսը ա-
մէն փորձու թիւններնուս մէջ մեղի մեծ միտի-
թարու թիւն է : Մենք անցաւոր աշխարհի մը մէջ
ենք , և շատ տրամու թիւններու ալ են թակայ •
բայց ինչ որ գլխունուս դայ բնաւ տրամու թեան
մէջ թաղուելու ջենք , քանի որ ան յոյսը ու-
նինք թէ շուտով աս աշխարհը պիտի ձգենք
երթանք , ու անկէջ ետե յաւիտեան մեր Փրո-
կիչին քով պիտի մնանք : Ա՛հ թէ անանկ ա-
սաշխարու թիւն մը ընէի և անանկ հաւատք
մը ունենայի , որ աս յոյսս պարասը չեւեր :

9

Իմ հօրս տունը շատ բնակարաններ կան •
ապա թէ ոչ՝ ես ձեզի պիտի ըսէի հիմա կեր-
թամ ու ձեզի տեղ կը պատրաստեմ : Յո՛ն •
ժԻ • 2 :

ԵՐԲՈՐ Յիսուս իր աշակերտներուն ըսաւ
Թէ իրենցմէ բաժնուելու վրայ է , սրտերնին
տրամու թիւնով լեցուեցաւ : Բայց ինքը անոնք
քաջալերեց որ թէ և անոնցմէ պիտի զատուի ,
բայց իրենք պիտի չմոռնայ : Երկինքը իր խաղի
տեղը համբառնալէն ետե , տակաւին վրանին
պիտի հող տանի • ինքը անոնցմէ առաջ կեր-
թայ իր հօրը տունը անոնց տեղ պատրաստե-

լու : Յիսուս աշխարհիս վրայ եղած առե՛նը իր
 սկսած դործը ձեռքէ չձգեց . և աս դործը ա-
 սաջ կը տանի ու պիտի տանի ալ, մինչև որ
 բոլոր իր հաւատացեալ աշակերտները իր վա-
 ռաւոր տունը երթան : Բոլոր դարձի բերած-
 ները բնաւ երեսի վրայ չձգեր, և իր Հօրը
 տունը մեզի բնակարաններ կը պատրաստէ . այն,
 ինծի համար ալ թէ որ ճշմարտասպէս իրեն կը
 հաւատամ : Մեզի տանելու տեղը հոն է . մեր
 բնակարանը աշխարհը չէ . հոս միայն մեր երկ-
 նային ժառանգութեանը մանելու պատրաստու-
 թիւն տեսնելու ենք . մեր Տէրը շուտով մեզ
 իր սրատրաստած տեղը պիտի կանչէ, և պէտք
 չէ որ աս հրաւերքը ընդունելուս ուրախա-
 նանք :

10

Եւ թէ որ երթամ ու ձեզի տեղ պատրաս-
 տեմ, նորէն կու դամ և ձեզ քովս կ'առնեմ .
 որպէս զի սէր որ ես եմ՝ դուք ալ հոն ըլլաք :
 Յովն . ԺԳ . 3 :

ՅԻՍՈՒՍ իր հաւատացեալները մահուան ժա-
 մուն մինակ չթողուր . չէ թէ հրեշտակ մը կը
 խրկէ որ անոնք իր առջին բերէ, հասցա ինքը

անձամբ կու գայ և անոնք կ'առնէ կը աանի : Ուրեմն զարմանալի բան չէ որ մահը ճշմարիտ քրիստոնէին վախ չբերեր • զարմանալի բան չէ որ այսչափ քրիստոնէաներ հողեարք ինկած առեւնին կ'ուրախանան : Աս օրհնեալ յուսովը ամենէն տկար հաւատացեալը կրնայ ըսել Սաղմոսերգութին հետ « Թէ և մահուան շուքի ձորին մէջն ալ պարտիմ , չարէն պիտի չվախնամ • վասն զի դուն իմ հետս ես • քու ցուպդ ու գաւազանդ , անոնք իս պիտի մխիթարեն » Սաղմ . ԻԳ . 4 : Աստուծոյ որդիքը մահը տեսնելու ինչո՞ւ համար պիտի սարսափին • մեր Փրկիչը և մեր Արդապեարը մեզ կը կանչէ , պիտի գայ մեզ առնելու • մեզ իր թեքուէն վրայ պիտի առնէ իր պատրաստած բնակարանները տանի , և ինքը ուր որ է՝ մենք ալ միշտ հոն պիտի ըլլանք : Ա՛հ ինչ արժանաւորութիւննիմ ասանկ խնամքներ ասանկ խոստմունքներ ընդունելու • բայց Տէր՝ դուն խոստացար , և ես կը հաւատամ ու վստահ եմ քու խօսքիդ , և քեզ կը գովեմ :

11

Ես ձանձրացած եմ, ու չեմ ուզեր որ յա-
ւիտեան սպրիտ : ՅԲ • Է • 16 :

ՅՈՒ առ խօսքը զըռցած ժամանակը շատ
մեծ փորձութիւններու մէջ ինկած էր, բայց
նոյն խօսքը աշխարհիս մեզնի տուած ամենէն
մեծ երջանկութիւններուն մէջն ալ կրնանք հան-
դարտ և հեզ ձայնով մը ըսել : Քրիստոնէին փա-
փաքելի բան չէ միշտ առ աշխարհիս մէջ սպրիտ •
Թէ որ ընտրութիւնը իրեն ձգուի, մահէն ա-
զատիլ պիտի չուզէ : Հոս սպրիտ մեղքի են-
թակաց ըլլալ է, մեղաւորներու մէջ դանուիլ
է, և իրենց մեղանշահան գործքերէն նեղու-
թիւն քաշել է • Հոս սպրիտ ցաւերու՝ նե-
ղութիւններու և տրամութիւններու ենթակաց ըլ-
լալ է : Բայց մեռնիլը ճշմարիտ քրիստոնէին ան-
երկիրը երթալ է, ուր տրամութիւնը անձա-
նօթ բան է • ամէն մեղքերէ և մեղաց մէջ խ-
նայու ամէն վախերէ ազատ ըլլալ է • մեզմէ
առաջ գացող բոլոր բարի մարդոց և սուրբե-
րուն հետ խառնուիլ է, և երկնային բլուրներուն
վրայ ելող հրեշտակներուն ժողովին մէջ մըա-
նել է : Այս Աստուծոյ քով երթալ է՝ ալ յաւի-
տեան իրմէն չզատուելու պայմանով : Ուստի ալ
նձ կ'ուզէ միշտ հոս սպրիտ • Ո՛վ չուզեր Աս-
տուած փառաւորել ան սուրբ շնծութիւննե-
րուն մէջ, որոնք մեռնելէն ետե պիտի դանենք :

Ամէն մարմին խոտ է, ու անոր բոլոր վայելչութիւնը դաշտի ծաղկին պէս է: Եսայ. Խ. 6:

Թէ որ առ աշխարհէս անդին ուրիշ կեանք մը չըլար, շատ ցաւալի բան պիտի ըլար մահուան ըրած ջարդերը տեսնել: Ինչպէս որ խոտը արեգակին գիմացը կը չորնայ ու դաշտերուն մէջի այսօր շատ գեղեցկութիւնով բացուած ծաղիկները վաղը կը թոռմին, այնպէս ալ մարդիկ կ'անցնին ու կ'երթան: Մանուկն ու ծերը, հարուստն ու աղքատը, զօրաւորն ու տկարը ամէնքն ալ մեռնելու վրայ են. ասօրուան տողը ու շատ յոյսեր ունեցող մարդը քանի մը օրէն գերեզմանը հանգչելու կը կանչուի: Չենք կրնար ըսել մէկ բարեկամի մը համար՝ թէ և շատ սիրելի և պատուաւոր ըլլայ, թէ շատ օրեր կամ տարիներ մեզմէ պիտի չառնուի. մենք չենք գիտեր թէ արդեօք հետեւեալ օրուան լոյսը պիտի կրնանք տեսնել: Բայց անհուն ողորմութի մըն է մեր կեանքին առանկ անստոյգ ըլլալը. մինչև անգամ հիմա ալ մարդիկ առ աշխարհը իբրև իրենց բնակարանին պէս կ'ապրին, և կը մոռնան մահուան դատաստանին և յաւիտենականութեան դալուստը. ալ ո՛րչափ տաւել անհոգութեան մէջ պիտի կը-

նային, թէ որ գիանային թէ այսչափ ժամա-
 նակ պիտի ապրին : Երբոր մարդիկ իրենց գո-
 նէ քանի մը տարի ապահով ապրելուն վատա-
 հուծիւնովը աւելի անհոգութեան մէջ կ'իյնան,
 որչափ դժուար պիտի ըլլար անոնք արժնցընելը
 որ իրենց վտանգն ու յանցանքները իմանան և
 Աստուծոյ հետ հաշտուին : Ո՛հ թէ Աստուած
 անանկ սորվեցունէր մեզի օրերնիս համբելը,
 որ սրտի իմաստութիւն ստանայինք : Սաղմ .
 Ղ . 12 :

13

Իսկ թէ որ մեր Աւետարանը ծածկուած ալ
 է, կորսուածներուն մէջ ծածկուած է : Որոնց
 մէջ առ աշխարհիս Աստուածը անհաւատնե-
 լուն միտքերը կուրցուց, որ Քրիստոսի փա-
 ռայ Աւետարանին լոյսը անոնց վրայ չծագէ .
 որ ինքն է Աստուծոյ պատկերը : Բ Կորնթ .
 Դ . 3, 4 :

ԲՈՂՈՐ Աւետարանը Աստուծոյ իմաստու-
 թիւնովը լեցուն է . անոր պատուէրները անանկ
 մաքուր և սուրբ են, որ անհնարին է կարծե-
 լը թէ անոնք մեղաւոր մարդիկներէ հնարուած
 խօսքեր են, և առ պատուէրներուն հնազան-
 դելով մարդս կրնայ մի միայն երջանիկ ըլլալ :

Անոր վարդապետութիւնները բարի են և խմատութիւնով լեցուն . հոն ցուցուած փրկութեան ճամբան անանկ սքանչելի է որ ստեղծուած էակ մը կարող չէ հնարել , և անսօսնական մեղաւորին ունեցած կարօտութիւններուն ճիշտ յարմար է : Բայց թէպէտև ամէն անկեղծ սրտով Աւետարանը սորվողները կրնան կատարեալ հասկրնալ աս ապացոյցները՝ որոնք Աւետարանին Աստուծմէ գրուած ըլլալը կը հաստատեն , սակայն շատերը կան որ կըսեն թէ անոնց ամէնքն ալ սուտ են և մարդու հնարած : Պօղոս կը զրուցէ ասոր պատճառը . թէ Ասաշխարհիս աստուածը անանց միտքերը կուրցուց : Թէ որ անոր ճշմարիտ ըլլալը ընդունէին , անտեներ իր պատուէրներուն հնազանդելով սուրբ կեանք մը անցընելու պարտաւորութիւննին սլիտի զգային . սակայն անոնք մեղքը կը սիրեն . աս աշխարհիս աստուծոյն կամաւոր հարատակներն են : Սրտերնուն մեղանչական կիրքերը և սատանային փորձութիւնները միտքերնին ամպով կը պատեն . ուրախութեամբ կը դարձունեն երեսնին Քրիստոսի փառաց Աւետարանին լոյսէն և անիկայ բոլորովին խաւար կը կոչեն , որ ազատութեամբ շրջին “ իրենց աչքերնուն լուսովը ,” և առանց սանձի մեղաց ասպարէզին մէջ յառաջ երթան : Եւ թէ որ Աստուած իր անհուն ողորմութիւնովը սրտերնին չփոխէ , անանկ սլիտի երթան մինչև որ յաւիտենականութեան առթուն իրենց վրայ լուսնայ :

14

Քանզի քեզի ծառայութիւն չընող ազգը ու
 թագաւորութիւնը պիտի կորսուի, ու ազգերը
 բոլորովին պիտի կործանին: Եսայ . 4 . 12 :

ՏԻԵՁԵՐՔԻՆ Աստուածը աս աշխարհիս մէջ
 մէկ թագաւորութիւն մը հաստատեց, որն որ
 ինքը վճռեց թէ վերջապէս բոլոր աշխարհ պի-
 տի տարածուի: Աս թագաւորութեանը հպա-
 տակներն անոնք են, որ Քրիստոսի կը հաւա-
 տան և իրեն կը հնազանդին . ով որ յապաշխարէ
 և փրկութիւն գտնելու համար Քրիստո-
 սի երթայ, աս թագաւորութեան հպատակը
 կ'ըլլայ: Աս թագաւորութեանը մէջ գտնուող-
 ները մեծ արտօնութիւններ կը վայելեն . ամէն
 մէկ անձ թագաւոր և քահանայ է Աստուծոյ .
 աս աշխարհիս մարդոցը աքջին աղքատ երեան
 ալ, մէկ մեծ ժառանգութեան մը՝ յաւիտենա-
 կան պատկի մը տէր են: Մինչև աս օրս աս թա-
 գաւորութիւնը քիչ հպատակներ ունէր, բայց
 միշտ ասանկ պիտի չմնայ . պիտի տարածուի
 մինչև որ ամէն ազգ իր տակը առնէ . և աս մեծ
 թագաւորութեանը չհնազանդող ազգը և թա-
 գաւորութիւնը կործանելով պիտի կործանի:
 Մարդիկ շատ անգամ աս թագաւորութեանը
 դէմ կեցան, և ուղեցին իր ընթացքը խափա-
 նել, բայց իրենց ջանքերուն ամէնքն ալ պա-

րասլը գացին • անոր թագաւորը իրենցմէ շատ
 զօրաւոր է , և շուտով իրենց յիմարութիւնը
 պիտի տեսնեն ու պիտի ողբան • ասարկու բան
 է Աստուծոյ հակառակ գանուիլը : Բայց աս
 թագաւորութեան տարածուելուն համար աշ-
 խատողները մեծ ուրախութիւնով պիտի խըն-
 դան , տեսնելով որ իրենց աշխատանքը սլարա-
 սլը գացած չէ :

15

Քու ամէն ճամբաներուդ մէջ զանիկայ ճանչ-
 ցիր , ու անիկայ քու շաւիղներդ պիտի ուղղէ :
 Առաի • Գ • 6 :

ԽԵՂԸ՝ հարձատես մահկանացուներ ենք ,
 և շատ անգամ կը տարակուսինք թէ ինչ ճամ-
 բայ բռնելու ենք • շատ բաներու մէջ կը տա-
 րակուսինք թէ արդեօք մեզի օգտակար են ,
 կամ թէ արդեօք մեր սարսաւորութիւնն են :
 Բայց թէպէտ հարձատես և աղէտ ենք , կրնանք
 անհուն բարի և խնամտուն էակ մը մեզի առաջ-
 նորդ ունենալ : Աստուած մեզի առաջնորդ և
 սրաշտարան կ'ըլլայ • թէ որ երթանք իրմէն ա-
 ռաջնորդութիւն խնդրենք ան սրտով որ մեզի
 ուր որ առաջնորդէ երթանք և ինքը ինչ որ
 ընտրէ ան ընենք , երբէք մեզ պիտի չթողու-

որ արդիւեայ և վտանգաւոր ճամբաներու մտ-
 լորինք : Ինքը կրնայ տեսնել թէ այս ինչ ճամ-
 բան մեզ սէր պիտի տանի , և իր աչքը յաւի-
 տենապան դարերէն ետե գալիքը կը տեսնէ :
 Ատրելի է այն ինչ ճամբան կամ ընթացքը բռ-
 նելը մեզի հաճելի թուի , բայց ինքը բոլոր
 երկայնութիւնը կը տեսնէ , և թէ որ իրեն ապա-
 շինինք որ մեզ առաջնորդէ , մեզ ուղիղ և բա-
 րի ճամբաներէ պիտի տանի : Ասիկայ Աստու-
 ծոյ կողմանէ մեզի մեծ շնորհք մըն է , բայց
 ինքը յօժարութեամբ կը կամի մեզի առաջնոր-
 դել . բարի է ասանկ Աստուծով երթալը .
 բարի է որ ասանկ անհուն իմաստութեան մը
 մեզ առաջնորդելու գրաւը ունինք : Աս արաս-
 նութիւնը կրնան վայելել ամէն անոնք , որ
 խոնարհութեամբ անիկայ կը փնտրուն , որ շա-
 բունակ ինքզինքնին աղօթքով Աստուծոյ կու-
 տան , և որոնք կ'ուզեն թէ անիկայ իրենց ա-
 ռաջնորդէ :

16

Յաւիտենապան կենաց յուսովը , որ ինքը անսուտ
 Աստուածը խոստացաւ յաւիտենապան դարերէն
 առաջ : ՏԻՊ • Ա • 2 :

ՔՐԻՍՏՈՆԷԻՆ ունեցած յոյսը պարապ և

անհինն յոյս չէ : Անիկայ Աստուծոյ խոստմունքին վրայ հիմնեալ է , որն որ երբէք սուտ չը կրնար ըլլալ : Ահովան ճշմարտութեան Աստուած է . եթէ ասանկ չըլլար բոլոր տիեզերքը թշուառութիւնով կը լեցուէր : Չարերը իրենց չարութիւնը առաջ պիտի տանէին յուսալով որ մեղաց գէմ ըրած Աստուծոյ սպառնալիքները բնաւ պիտի չկատարուին : Բարի մարդիկ վախով և կասկածանքով իրենց բարութեանը մէջ պիտի վարանէին , ինչու որ պիտի չկրնային գիտնալ թէ Աստուծոյ խոստմունքները պիտի կատարուին : Բայց ասանկ չէ . Աստուծոյ բերնէն ելած խօսքերուն ամէնքն ալ կատարելապէս պիտի կատարուին . ինչ որ ըսաւ անշուշտ պիտի ըլլայ : Ինքը ճշմարտութիւն կը սիրէ , և բոլոր իր արարածներէն ճշմարտութիւն կը սպասանջէ . սուտ խօսող պոկուները իրեն զգուելի են և մեծ սրտմտութիւն կը սպառնայ ամէն ճրջմարտութիւն չխօսողներուն : Կ'ատէ ամէն խեղճակ խաբէութիւնը և կեղծաւորութիւնը . ինքը սրտերը կը տեսնէ , և կը պահանջէ որ բերնէ ելած խօսքերը սրտին զգացումներուն և զխաւորութիւններուն յարմար դան : Աստուծոյ աստորոգելիքը բոլոր զինքը սիրողները ցնծութիւնով և վստահութիւնով կը լեցունէ . իբայց մեղաց մէջ կեցողներուն միայն վախ կու տայ . ինչու որ աս Աստուածը որ բոլոր զինքը սիրողներուն յաւիտենական կեանք խոստացաւ , նաև

յաւխտենաական մահ սպառնացաւ բոլոր իրենց չար ճամբաները չձգող և իրեն չդարձողներուն :

17

Բայց Սողոս տակաւին Տէրոջը աշակերտներուն դէմ սպառնալիք ու մահ փչելով՝ քահանայապետին քովը դնաց : Գործ • Թ • 1 :

ԱՒԵՏԱՐԱՆԻՆ կատղած թշնամիները Ստեփաննոսը մեռցուցին , և Սողոս մէկդի կայնած կ'ուրախանար : Բայց այսքանով չկշտացաւ • անարդուած կրօնքին դէմ ունեցած չարանախանձ ոգին ղինքը աւելի յառաջ քշեց : Անոնց դէմ սպառնալիք ու մահ կը փչէր • արդէն Երուսաղէմի Եկեղեցիին դէմ մեծ հալածմունք հանելով հաւատացեալներուն շատ լիսաններ տուած էր , և անոնք ասդին անդին ցիրուցան եղած էին : Եւ հիմա միաքը դրաւ Դամասկոսի մէջ եղած Յիսուսի աշակերտներուն փոքրիկ միաբանութեանը վրայ ալ յարձակելու : Քահանայապետէն հրամանագիր առաւ որ անով իշխանութիւն ունենայ քրիստոնեաները կապուած Երուսաղէմ բերելու : Եթէ մէկը Սողոսին ըսէր թէ ան Աւետարանը՝ որ հիմա բնաջինջ ընել կ'աշխատիս , շուտով դուն սխալ

քարոզեա, աս խօսքին վրայ իբրև չարախօսութիւն մը որչափ պիտի բարկանար : Ատիկոտ աշակերաններէն մէկը թէ որ լսէր թէ քիչ աւենէն Սօղոս եկեղեցիին մէջ սիւն մը պիտի ըլլայ, իրեն հաւատքը այնչափ զօրաւոր պիտի չըլլար որ աս բանը հնարաւոր կարծէր : Բայց ամէն սիրտ Տէրոջը ձեռքն է, և ինքը ովոր կը կամի անսկայ փրկութե՛ն ժառանգ և իր թագաւորութեանը օգուտ ընող գործիք մը ընելու համար կ'ընարէ • միտքը դրաւ աս հպարտ թըշնամին յաղթելու և անսկայ յաղթող շնորհաց յաղթանակներէն մէկը ընելու : Սօղոս իր այս հաւածման պաշտօնը կատարաբար գործադրելու միտ դրած քաղաքը դեռ չհասած, խոնարհութիւնով և հնազանդութիւնով երկրպագութիւն ըրաւ Նազովկեցի Յիսուսին աղաղակելով, « Տէր ի՞նչ կ'ուզես որ ընեմ » :

18

Ան ամէնը որ հայրը ինձի կու տայ, ինձի պիտի գայ • և ան որ ինձի կու դայ, բնաւ դուրս պիտի չհանեմ : Յով • 2 • 37 :

Ի՞նչ պատուական քաջալերութիւն մը կայ հոս ապաշխարող մեղաւորներուն համար : Քըրիստոսի՛ դուրս պիտի չձգեմ, ըսածը արգար

մարդուն համար չէ, մինչև անդամ անանց հա-
 մար ալ չէ, որոնք ընդհանրապէս Աստուծոյ
 պատուիրանքները պահելու կը ջանան, հարցա-
 կրեն գացողներուն համար է: Չկայ այնչափ
 մեղի մեղաւոր մը որ ինքը Յիսուսի երթայ, և
 Յիսուս զանկիայ չփրկէ. աշխարհիս կամ իր աչ-
 քին առջին որչափ մեծ մեղաւոր ըլլայ մնաս չու-
 նի, թող Պետրոսին պէս Փրկիչը ուրացած ըլ-
 լայ, և կամ Պողոսին պէս հալածիչ եղած ըլ-
 լայ, տակաւին թէ որ Քրիստոսի երթայ ողոր-
 մութիւն կը դանէ: Բայց ինչ է Քրիստոսի եր-
 թալը. սրտով ու հոգիով իրեն հաւատալ, իր
 սահմանած ճամբովը իրմէ փրկութիւն խնդրել,
 և մեր յանցանքները և անօգնական վիճակը ըզ-
 գալով բոլոր յոյսերնիս մի միայն իր վրայ դը-
 նել. ու նաև յաւիտենական մահէն ուրիշ բա-
 նի արժանաւորութիւն չունենանիս ՚ի խորոց
 սրտէ զգալով խնդրել որ մեզ փրկէ իր ա-
 նունին և իր արեանը պատիւին համար, որն որ
 թափեց խաչին վրայ ամենամեծ մեղքերու քա-
 լութիւն ընելու համար: Ահա աս է պարզա-
 պէս Քրիստոսի երթալը, ու թէ որ աս կեր-
 պով Քրիստոսի երթանք, կատարեալ և հաս-
 տատ յոյս կ'ունենանք թէ մեզ պիտի ընդու-
 նի. ինքը խօսք տուաւ մեզի, և թէ որ աշ-
 խարհ մեզի դէմ ելլէ՝ մենք իր խօսքին կրնանք
 ապաւինիլ: Բայց Քրիստոսի երթալը մեզք ա-
 տել ալ կը պարունակէ իր մէջը. թէ որ յու-

սանք թէ մեղ պիտի փրկէ և նոյն ժամանակը
մեղքը սիրենք, ինքզինքնիս կը խաբենք և յոյ-
սերնիս բոլորովին պարսպ է :

19

Տրամածներու պէս՝ ու միշտ ներախ ենք :
Բ Կորնթ . Զ . 10 :

ՊՕՂՈՍ քանի մը պատճառներ ունէր տրտա-
մելու որոնք միանգամայն ուրախութիւն ալ էին
իրեն . այսինքն Քրիստոսի հաւատալուն համար
իր կրած սաստիկ ու ծանր հալածանքները .
Բայց հասարակ Քրիստոնեաները ասոնցմէ զատ
ուրիշ պատճառներ ալ ունին շարունակ տրտա-
մելու և ուրախանալու : Ար տրտմին որ տակաւին
սրտերնուն մէջ այնչափ մեղք կը գտնեն . կը տրտա-
մին որ շատ անգամ կը զգան թէ կը նեղացրնեն
անիկայ որն որ սրտով կը սիրեն . կը տրտմին որ
իրենց Փրկիչը ևս աւելի ու ըստ արժանոյն չեն
փառաւորեր : Ար տրտմին նաև որ աշխարհ ա-
մէն քանէ առաջ իր յաւիտենական Արարիչը չը-
պատուեր և չսիրեր . կը սիրեն զԱստուած, ու
անոր համար իր օրէնքին ոտքի տակ առնուիլը
և իր սուրբ անունին անպատիւ ըլլալը երբոր
կը տեսնեն սաստիկ ցաւ կը զգան : Ար տրտմին ևս
տեսնելով որ իրենց ընկերներէն և կարելի է իրենց

ամենէն մօտ բարեկամներէն շատերը մահուան տա-
նող ճամբայէն կ'երթան • գիտեն որ Քրիստոսի
հաւատացողները ինչ սոսկալի դատապարտութե-
տակ պիտի իյնան , և իրենց անզեղ ընկերնե-
րուն վրայ կու լան ու կ'ողբան : Նաև տրամու-
թեան ան ընդհանուր սրտճառներն ալ ունին ,
որոնք առ հասարակ ամէն մարդոց վրայ քիչ
շատ կը գտնուին , որոնք են հիւանդութիւն-
ներ բարեկամներու կորուստ և այլն • բայց բո-
լոր առ տրամութեան սրտճառներուն հետ շա-
րունակ ուրախութեան առիթներ ալ ունին : Կ'ու-
րախանան որ ասանկ բարի և սուրբ Աստու-
ծոց մը իշխանութեանը տակն են և անոր ձեռ-
քն են : Կ'ուրախանան աւետարանին մէջ
յայտնուած փրկութեան ան սքանչելի եղանա-
կին վրայ , որ անով ամէն մեղաւոր թէ որ
ուղէ կը փրկուի : Կ'ուրախանան Յիսուս Քրի-
ստոսի յայտնած սիրովը ողորմութիւնովը
և հաւատարմութիւնովը : Կ'ուրախանան վան-
դի կը հաւատան թէ մեղքերնին ներուած է ,
և թէ Քրիստոսի հաւատալով արդարացած են :
Եւ կ'ուրախանան տեսնելով ան մեծ ժառան-
գութիւնը , որ գերեզմանէն անդին իրենց հա-
մար պահուած է :

Չէ որ աս բաներով պէտք էր Քրիստոսի չարչարուել, և իր միտքը մանել : Ղո՛ւ . ԻԳ . 26 :

ՔՐԻՍՏՈՍԻ աշակերտները չհասկըցան անոր ինչ բանի համար աշխարհ խրկուելը, և անոր մահուանը վրայ կը տրամէին երբոր Յիսուս դիմացնին ելաւ և մտքերնին բացաւ որ Սուրբ Գիրքերը հասկընան, և տեսնեն թէ պէտք էր իրեն աս բաները քաշել : Թէ որ Աստուած առանց աս զոհին մեղաւորներուն թողութիւն տար, արդարութեան կողմանէ պահաս պիտի երևար, և իր օրէնքին բոլոր զօրութիւնը պիտի կորսուէր . բայց երբոր յաւիտենական Որդին ինքզինքը մեղաւորներուն տեղը դնելով անոնց տեղը օրէնքին անէծքը կըրեց, ան ատենը Աստուած կրցաւ արդար ըլլալ և միանգամայն ապաշխարող մեղաւորները արդարացընել : Ան ատենը բոլոր տիեզերքը տեսաւ որ Աստուած իր օրէնքը կը պահէ, և թէ ամէն մեղանչողները արդարութեան պահանջած անէծքին տակը պիտի իյնան, որովհետև իր Որդին շինայեց երբոր մեղաւորներուն տեղը կայնեցաւ, հապա անիկայ անիծեց անոնց համար պատրաստուած բարկութեան դաւաթը խմելու : Ետև ան ատենը բոլոր տիեզերքը տեսաւ մեղքին ինչ չար բան ըլլալը,

որովհետև անսկիսց քաւելու համար մեծ զոհ մը պէտք եղաւ : Աս գործին մէջ Աստուծոյ ողորմութիւնն ալ շատ սքանչելի կերպով մը յայտնուեցաւ, որովհետև մեղաւորներուն վրայ ունեցած գութը այնչափ մեծ էր, որ անոնց փրկութեան ճամբաց մը բանալու համար իր սիրելի Արդին մեռնելու տուաւ : Աստուծոյ այն յաւիտենական խտորագիւծները, որոնք Քրիստոսի մահովը յայտնի երեցան, ամէն բանական արարածներուն սիրտերը սիրով՝ վատահութիւնով և սրբազան երկիւղով կը լեցընեն : Փրկագործութեան աս ըսքանչելի եղանակը բոլոր հաւատացելոց սրտին մէջ մեղքին դէմ սաստիկ ատելութիւն մը կը յարուցանէ և սրբութեան վրայ սէր • քանզի ինտո՞ր կըրնան ալ ևս մեղք սիրել և անոր մէջ մնալ, քանի որ ան եղաւ իրենց Փրկչին չարչարանաց ու մահուան սրտաճառը • ինտո՞ր կըրնան մանկէլ ան բանին մէջ որ իրենք այնչափ սիրողը պիտի նեղացընէ :

21

Ասկէ ետքը տեսայ, և ահա մեծ բազմութիւն՝ որն որ մէկը չէր կրնար համրել, բոլոր ազգերէն՝ ու ցեղերէն՝ և ժողովուրդներէն՝ ու լեզուներէն, որոնք աթոռին առջև ու Գառնուկին առջև կեցեր էին ճերմակ հանգերձներ

հաղած , և ձեռքերնին արմաւենիներ բռնած :
Յայտ • Է • 9 :

ՅԻՍՈՒՍ Քրիստոս պարապ տեղը չմեռաւ .
ինքը մեծ պատարագ մը մատուց , ու անով երկին-
քը նոր ցնծութիւնով յաւիտեանս յաւիտենից
պիտի լեցուի : Աշխարհիս սկիզբէն մինչև հիմա
չարունակ հոն ան երկնային աշխարհը սուրբեր
դասին , անոր արժանաւորութիւնովը ընդունե-
լութիւն գտնելով • և վերջապէս մեծ բազմու-
թիւն մը՝ որ մարդ կարող չէ համրել , հոն ա-
թոռին առջին պիտի ժողվուին , անոր չարչա-
րանքներովը փրկուած : Աս հոգիները՝ որոնք
յաւիտենական թշուառութեան տակ մնալու
դատապարտուած էին , ինքը ծախու առաւ լու-
աց ու սրբեց , և անոնց ամէն մէկը ինչ երա-
նութիւն որ սուրբ և փառաւորեալ հոգիները
կրնան վայելել , յաւիտեանս պիտի վայելեն : Յա-
ւիտենական դարերուն մէջ բարձրաձայն աղա-
ղակներով օրհնութիւն պիտի կարդան | նոր՝ որ
իր արիւնովը իրենք փրկեց : Երկինքի բոլոր բը-
նակիչներուն առջիւր իրենց թագաւորին սիրոյն
և շնորհացը յաւիտենական յիշատակարան մը
պիտի ըլլան : Հրեշտակներուն զօրքերը ցնծու-
թեան և փառաբանութեան նոր պատճառ պիտի
գտնեն փրկուածներուն մեծ բազմութիւնը տես-
նելով , ու երկնից զօրքերը նոր ուրախութիւն-
ներով պիտի լեցուին : Երբոր Քրիստոս աս ի-
րեն արուած բազմութեանը վրայ նայի իրրև

իր մահուան պտուղը , և տեսնէ իր չարչարանք-
ներէն առաջ եկած ան յաւիտենական երջան-
կութիւնը , շատ պիտի ուրախանայ :

22

Ե՛ղբայրներ՝ իմ սիրտիս փափաքը ու աղօթքը
առ Աստուած անոնց փրկուելուն համար է :
Հոռով • Ժ • 1 :

ՊՕՂՈՍ Իսրայէլացի էր , և թէպէտ ամէն մար-
դու վրայ ալ սէր ունէր , բայց՝ ինչպէս որ ու-
րիշ տեղմը կ'ըսէ , տակաւին շատ փափաքներ
ունէր իր մարմնոյ կողմանէ ունեցած եղբայր-
ներուն և ազգականներուն վրայ : Ամէն քրիս-
տոնեայ կը դանէ որ իր սիրելիներուն վրայ ու-
նեցած սէրը և անոնց ամենէն մեծ օգուտին
համար ունեցած փափաքները Քրիստոսի վրայ
ունեցած սիրտը կը զօրանան : Երբոր մարդ մը
Աստուծոյ Հոգիովը ճշմարտապէս դարձի դայ ,
իր բարեկամներուն վրայ ուրիշ աչքով մը կը նայի •
անոնց վրայ կը նայի իբրև անմահ էակներ , և նոյն
հասարակաց փրկութեանը մասնակիցներ • և ըստ
որում հաւատացեալը հաստատ կը յուսայ որ եր-
կինքին մէջը յաւիտեան անոնց հետ մէկտեղ պիտի
բնակի : Բայց թէ որ իր բարեկամները դարձի ե-
կած չեն , արամութիւնով ու նեղութիւնով կը-

լէցուի : Աստուծոյ խօսքին կը հաւատայ , և կը
 գողայ տեսնելով ան դատաստարաութիւնը՝ որ
 իր սիրելիներուն վրայ պիտի դայ , որոնք ան-
 զեղջ կեցեր են : Աստուծոյ խօսքէն կը սորվի թէ
 անոնք յաւիտենական կործանումով պիտի պատ-
 ժուին Տէրոջը երեսէն հեռանալով , թէ անոնք
 յաւիտենական տրամութեան մէջ պիտի մնան , և
 իրենց բնակութիւնը կորսուած հողիներուն հեա-
 պիտի ըլլայ , ուր տեղի որդերը չեն մեռնիր ու կը-
 ըակը չմարիր : Սերտը կը ցուի ու չիրնար կայնիլ
 իր սիրելիներուն կործանմանը վրայ նայիլ . կը
 յորդորէ՝ կ'աղաչէ ու անոնք կեանքին ճամբան
 գնելու կ'աշխատի : Եւ աս ամենուն վրայ մեծ ջեր-
 մեռանդութիւնով կ'աղաչէ Անոր , որուն արածնու-
 թիւնները սիրտերը վտխելն է , որ անոնք տպաշ-
 խարութեան բերէ :

23

Եւ Սամուէլ Յեսսէին ըսաւ . Տղաքներդ այդ-
 չափ են : Ու անիկայ ըսաւ . Տակաւին պինտ սըղ-
 տիկը մնայ , և ահա՛ անիկայ ոչխարները կ'արածէ :
 Ա թօգ . ԺԶ . 11 :

ԿԵՐԵՒԱՅ Թէ Յեսսէ իր ամենէն սղտիկ ար-
 ղան բանի տեղ չըրաւ . երբոր Սամուէլ զինքը և
 իր որդիքը զոհի կանչեց , որ անոնցմէ մէկը Նս-

քայլերացիներուն վրայ թագաւոր օժէ, անոնք Դա-
 շիթը թողուցին որ դաշտին մէջ ոչխարները արա-
 ծէ: Եւ մինչև անգամ Սամուէլ մեծ զաւկին հա-
 սակին և դէմքին նայելով հաւատաց թէ Աս-
 տուծոյ ընտրածը աս պիտի ըլլայ. բայց Տէրը մար-
 դոց տեսածին պէս չտեսներ. իր եղբայրներէն ա-
 նարգուած պատանիին վրայ նայեցաւ, և անիկայ
 իր ժողովուրդին վրայ թագաւոր ընտրեց: Ան
 խոնարհ հովիւին ան ժամանակէն ՚ի վեր Աստուծմէ
 ու մարդոցմէ ընդունած պատիւին պէս պատիւ
 ընդունող քիչ կը գտնուի: Եւ մինչև աշխարհիս
 վերջը իր անունը պիտի սիրեն և պատուեն իբրև
 Աստուծոյ սրտին ուզածին պէս մարդ մը: Նիքը
 Իսրայէլի թագաւորութիւնը իր վերջին աստիճան
 փառացը բարձրացուց, և իսկն համար էր որ իր
 սերունդները այնչափ ժամանակ թագաւորու-
 թիւննին չկորսնցուցին: Իսրայէլի Սաղմոսերգուն
 հազարաւոր արտերու լոյս և ցնծութիւն տուաւ.
 իր ազօթքները և օրհնութիւնները տակաւին եր-
 կինքին տակը եղող ամէն լեզուի պիտի թարգման-
 ուին, և ամէն ազգ անոնցմով պիտի օրհնուի:
 Աստուած խոնարհները կը սիրէ, և իր թագաւո-
 րութեանը մէջ մեծ ու երևելի անձինքը ցածերէն
 ու անարգուածներէն կ'ընտրէ: Ով որ Տէրոջմէն
 պատիւ առնէ, անիկայ իրաւցունէ պատիւ պիտի
 գտնէ. իրենց անունները պիտի յիշուին չէ թէ
 միայն աս աշխարհիս մէջ քանի մը տարի, հապա
 յաւիտեանս յաւիտենից Աստուծոյ թագաւոր-
 ները և քահանաները պիտի ճանչցուին:

24

Բայց կըսեմ ձեզի՝ որ մտիկ կ'ընէք • Սիրեցէք
 ձեր թշնամիները, ձեզ ասողներուն բարի ըրէք =
 Ղուկ • 2 • 27 :

ՅՐՍՈՒՍԻ աս պատուէրը շատ օտար եկած
 պիտի ըլլայ անոնց ականջին, որոնք վրէժխնդրու-
 թիւն ընելը առաքինութիւն կըսեալէին, և միշտ
 թշնամիներնին կ'ատէին : Բայց Յիսուս անանկ
 բաներ սորվեցուց, որ բնաւ մարդ մը սորվեցու-
 ցած չէր : Իր պատուէրները երկրաւոր չէին, հա-
 սրա երկնաւոր ու Աստուածային • և ասոնք ինքը
 դործքով կատարեց • ինչպէս որ խօսքով ըսաւ ան-
 նանկ ալ օրինակով սորվեցուց : Արդարեւ աշխար-
 հիս վրայ անցուցած իր կեանքը բոլորովին սէր էր
 իր թշնամիներուն վրայ : Գեռ որ թշնամիներ է-
 ինք Քրիստոս մեզի համար մեռաւ • ղինքը ասող-
 ներուն համար աշխատեցաւ՝ չարչարուեցաւ ու իր
 արիւնը թափեց : Քրիստոսի աշակերանները շատ
 հոգ տանելու են աս պատուէրը պահելու, որուն
 օրինակն ալ ինքը անանկ աղբու եղանակով մը
 տուաւ : Յիսուսի հետ ըլլալնիս իր հոգին ցուցը-
 նելով պիտի խմանանք • իրաւունք չունինք ամենէն
 մեծ թշնամիներնուս դէմ՝ մտքերնէս չար խորհուրդ
 մը անցընելու • երբոր մեզի վրաս կը հասցընեն
 պարտինք ձեռքերնէս եկածին չափ օրհնել զանոնք :
 Թէ որ մեզ հալածեն և նախատեն՝ անոնց համար

աղօթք ընելու ենք • թէ որ սրտերնուս մէջ վրէժ-
խնդրութեան զգացումներ ծագին, անոնց յաղ-
թելու ենք միաք բերելով Քրիստոսի սէրը՝
որն որ ցուցուց մեր վրայ երբոր մենք դեռ
թշնամիներ էինք: Թէ որ առ հասարակ Քրիս-
տոսի աս պատուէրը օգտուէր, աշխարհիս մէջը
եղած թշուառութիւններուն կէսը բնաջինջ կ'ըլ-
լար, և ամենուն մէջը ընդհանուր սէր կը մաներ:
Անոր հնազանդողները սրտերնուն մէջ անանկ խա-
ղաղութիւն կը դանեն, որ անհաշտելի բնաւորու-
թիւն մը ունեցողները բնաւ անոր համը առած չեն:

25

Եւ հռութ ըսաւ • իմ վրաս մի կյնար՝ որ քեզ
թողում, ու քեզմէ հեռանամ • քանզի ուր որ
երթաս, հոն պիտի երթամ, և ուր որ մնաս հոն
պիտի մնամ • քու ժողովուրդդ՝ իմ ժողովուրդս
ըլլայ, ու քու Աստուածդ իմ Աստուածս ըլլայ:
Հոսի • Ա • 16:

ՀՈՒՆԻՄ աս խօսքը ըսած ժամանակը իր երկ-
րին և իր սիրելիներուն մէջն էր, և հաւանական է որ
հարստութիւն ալ կը վայելէր • բայց միաքը դրաւ
բոլոր ասոնք ձգել, և իր կեսութեան հետ օտար
երկիր մը երթալ, և անոր հետ օտարականներու
մէջ աղքատութիւն քաշել: Եր կեսութեան Աստու-

ծոյ ժողովուրդներէն մէկն էր և ինքը Իսրայէլացւոց երկիրը կ'երթար Աստուծոյ օրհնեալ ժողովուրդին հետ բնակելու : Հսութ ձգեց իր հայրերուն երկրագագած կուռքերը, և Նհովան՝ մի միայն կենդանի և ճշմարիտ Աստուածը, իրեն Աստուած ընտրեց : Աս ընտրութիւնը իմաստութիւնով ըրաւ, մինչև անգամ աս կեանքիս մէջն ալ իր վարձքը ընդունեց • իր ձգածէն աւելի հարստութիւն և պատիւ դասաւ • շատ թագաւորներու մայրեղաւ, և Մեսիան ալ իրմէն եկաւ : Աստուծոյ ժողովուրդը մեզի բաժին ընտրելը, ամէն ատեն խելացութիւն է : Աս ընտրութիւնը թէ որ աշխարհիս մէջ նեղութեան և աղքատութեան պատճառ ալ ըլլայ, դաշու աշխարհին մէջ յաւիտենական հարստութիւններ և երջանկութիւններ կ'ընծայէ • մինչև անգամ աս կեանքիս մէջը Աստուծոյ սէրը բոլոր երկրաւոր հարստութիւններէն աւելի փրնարուելու է : Անիկայ անանկ խաղաղութիւն մը կ'ընծայէ մեզի, որ ամէն մտքէ վեր է • և անանկ յոյս մը, որ ամէն վիճակի և ամէն պարագաներու մէջ հոգիին ղէնք մըն է :

26

Չար մարդուն խորհուրդները Տէրոջը առջև պիտի են : Առակ • ԺԵ • 26 :

ՄԱՏԻԻԿ ընդհանրասպէս ինքզինքնին կը խա-

բնն՝ անձերնին իրենց արտաքին գործքերէն դա-
 տելով . երբոր կը տեսնեն թէ իրենց արտաքին
 վարմունքներն ու գործքերը այնքան մեղադրանքի
 արժանի չեն, և առ ընկեր ունեցած պարտաւորու-
 թիւններնին հաւատարմութեամբ կը կատարեն,
 ալ կը սեպեն թէ Աստուծոյ առջևը յանցաւոր
 չեն, և նոյն իսկ երկինքը առաջնորդող ճամբուն
 մէջն են : Բայց Աստուած մարդուս բնութիւնը
 արտաքին գործքերէն չգտներ . մարդոցմէ մեծ
 յարգութիւն ընդունողներէն շատերը Աստուծոյ
 առջևը պիտի են : Անիկայ սրտին խորհուրդներուն
 ու երեւակայութիւններուն կը նայի և Սուրբ Հո-
 գիէն շնորհուած ամէն սրտի մէջ չարութենէ զատ
 ուրիշ բան չտեսներ : Հոն շատ խորհուրդներ կը
 տեսնէ որ մեղաւորը մի միայն իր անձը փառաւո-
 րելու համար կը տածէ, ու ոչ թէ զԱստուած .
 աշխարհային հարստութիւններ ձեռք ձգելու
 հետ է, ու ոչ թէ հաւատքի և աստուածաշատու-
 թեան մէջ հարստանալու : Եւս շատ մը այնպիսի
 խորհուրդներ կը տեսնէ որ յաւատ մեղքէն ծա-
 դած չարիքներուն և թշուառութեանցը վրայ է, ու
 ոչ թէ անոր չարութեանը և կամ անոր ինչպէս
 յողթելու է ջանքին վրայ . շատ խորհուրդներ կը
 տեսնէ աշխարհային հաճութիւններ գտնելու հա-
 մար, ու չէ թէ Աստուծոյ հաճոյ ըլլալու, կամ
 անոր շնորհքովը երջանկանալու համար : Նաև
 շատ անգամ կը տեսնէ որ սրտին խորհուրդները
 չթուանքներէն ելած խօսքերուն հակառակ են .
 նոյն ժամուն որ պահուանքները քարերարութիւն և

սէր կը խոստովանին, սիրտը անձնասիրութիւնով
 և դուցէ՛ ատելութիւնով լեցուն կը դանկ։ Նոյն
 ժամուն որ շրթունքները աղօթքով Աստուծոյ
 կը մօտենան, կը տեսնէ որ խորհուրդները աշխար-
 հային և մեղանշական բաներու վրայ կը պարտին։
 Արդարեւ չարին խորհուրդները Աստուծոյ անա-
 րատ և սուրբ աչքերուն առջևը սղծութիւն են։

27

Փորձէ՛ զիս՝ ո՛վ Աստուած՝ ու գիտցիր իմ սիր-
 տըս • իս քննէ՛ ու գիտցիր իմ մտածմունքներս։
 Սաղմ • ՃԼԹ • 23։

ԻՆՔԶԻՆԻՍ գիտնալը մեծ բան է • և աս
 կեանքիս մէջ քիչերը սրտերնին կատարելապէս կը
 գիտնան։ Մէկ մարդ մը իր բնաւորութիւնը որչափ
 աղէկ որ ճանչնայ, ու Աստուծոյ օրէնքը սորվի, ու
 սուրբ ըլլալու աշխատի, այնչափ առաւել կ'իմա-
 նայ իր սրտին ամէն բանէ աւելի խաբէութիւնով
 ու չարութիւնով լեցուն և չարը բարիի տեղ առնե-
 լու ալ պատրաստ ըլլալը։ Ինքը իրեն վրայ անանկ
 մեղքեր կը տեսնէ որ անհոգ մարդ մը անտնք ամե-
 նեին բանի տեղ չգնէր • կը զգայ որ իր սիրտը շատ
 անգամ խաբեց զինքը, և թէ ան նոյն ատենը որ
 ինքզինքը մաքուր և սուրբ պատճառներէ շարժու-
 ած կը կարծէր, անձնասիրութիւնը ու մեղքը

իրեն մեծ աղգուութիւն ըրեր են : Իր սրտին վրայ վաստահութիւն դնելէն կը վախնայ, ուստի Աստուծոյ կ'աղաղակէ ըսելով, "Փորձէ զիս ո՞վ Աստուած, ու գիտցիր իմ սիրտս • իս քննէ, ու գիտցիր իմ մտածմունքներս" : Եւ Աստուած չէ թէ միայն կրնայ յայտնել մեզի սրտերնուս մէջի եղածները, հասկա կրնայ ու՛ թէ որ իրմէն խնդրենք, կը կամի սրտերնիս նորէն ստեղծել : Կարող է անհիկայ մաքրել, և մեզ անոր խաբէութիւններէն փրկել • Քրիստոսով կրնանք բոլոր հոգևոր կարօտութիւններնիս Աստուծոյ առջին բերել • կրնանք մեր սրտին վատթարութիւնը և խաբէբայութիւնը անոր ցուցրնել, և մեզի պէտք եղածին չափ շնորհք խնդրել : Եւ գիտենք որ եթէ Քրիստոսի անունովը իրեն երթանք, ձայներնուս մտիկ կ'ընէ :

28

Տէրը որ ձեզ սիրեց ու ընտրեց, ամէն աղգերէն շատուոր ըլլայնուդ համար չէ, քանզի դուք ամէն աղգերէն քիչուոր էիք : Բ. Օրին • Է • 7 :

ԱՍՏՈՒԱԾ իր ըրածներուն համար մարդոց հաշիւ չափ, և չենք կրնար ըսել թէ ինչո՞ւ համար այս ինչ կամ այն ինչ բանը ասանկ կամ անանկ կ'ընեն : Ինքը իր ըրածներուն պատճառները չուզեր մեզի զրուցել, սակայն երբեմն իր ճամբաներուն

Իմաստութիւնը կրնանք տեսնել : Ու թէ որ կա-
 բող ըլլայինք իր բոլոր տեսածները տեսնել, ան-
 շուշտ իր իմաստութեան խորունկութեանը վրայ
 աւելի պիտի զարմանայինք : Երբոր բոլոր մարդ-
 կային ցեղը մեղաց մէջ ընկղմած էր, Աստուած իր
 բարի հաճութիւնով մէկ ժողովուրդ մը ընտրեց
 որ իրեն սեպհահան ժողովուրդը ըլլայ • Ինքզինքը
 մասնաւոր կերպով մը անոնց յայանեց իր օրէնքը
 տալով, իրենց համար հրաշքներ գործելով,
 աշխարհի միւս ժողովուրդներէն մասնաւոր ծէ-
 սերով և օրէնքներով անոնք զատելով, և խոստա-
 նալով որ Մեսիան իրենցմէ պիտի գայ, օր բոլոր
 ազգերը պիտի օրհնէ : Աս բաներուն համար ինչ
 պատճառով մէկ ազգ մը ընտրելը Աստուած մեզի
 չզրուցեց • Բաւական է մեզի դիմնալ թէ ինքը
 աղէկ սեպեց ասանկ ընելը : Բայց աս ազգը մար-
 դոց ընտրելու եղանակաւ չընտրեց • մեծ ու հզօր
 ազգ մը չընտրեց, հապա ամէն ժողովուրդներէն
 քիչերը : Ասանկ զանազան ճամբաներով Աս-
 տուած իր դիտաւորութիւնը կը ցուցնէ, մարդոց
 ամբարտաւանութիւնը անարգելու և անոնք յոր-
 դորելու, որ իրեն տան՝ որուն ալ որ կը վայելէ,
 ամէն փառք և պատիւ •

ծոյգ առջևը ըսես • Իմ հայրս Թափառական Ասորի մը ըլլալով, Եգիպտոս իջաւ, ու հոն քիչէոր հոգիով պանդխտութիւն ընելով՝ մէկ մեծ զօրաւոր և շատէոր ազգ մը եղաւ: Բ. Օրէն • Ի. Զ. 5:

ԵՐԲՈՐ Իսրայէլի որդիքը Տէրոջը իրենց ստալութատացած երկիրը եկան, ու իրենց բոլոր Թշնամիները յաղթուեցան, և իրենք հանգարտութիւնով ու ազատութիւնով տեղաւորուեցան, ան ասեւնը հրամայուեցաւ իրենց որ գոհութեան ընծանելով Աստուծոյ առջին դան, և իրենց ազգին ինչ տկարութիւնով ծագիլը, ու Աստուծոյ իրենց ըրած բոլոր մեծ բարութիւնները անոր առջև խոստովանին: Ասիկայ անոր համար էր որ հարաւ և մեծահոգի զգացումներու մէջ կ'յնայէն զգուշանան, և Թէ չխորհին որ իրենց զօրութիւնովը կամ իմաստութիւնովը ասանկ մեծ ազգ մը եղան, հապա երախտապարտ սրտիւ արժան եղած՝ բոլոր փառքը և պատիւը Աստուծոյ սուրբ անուանը մատուցանեն: Մարդիկ կը կարծեն Թէ իրենք խմաստութեան և զօրութեան տէր են, և Թէ իրենց կարողութիւնովը մեծ մեծ բաներ կրնան ընել • և ուստի միշտ պատրաստ են ինքզինքնին բարձրացընելու: Հպարտութիւնը գուցէ ամէն մեզքերէն ընդհանուրն է, և Աստուած կ'ըսէ Թէ անիկայ իրեն շատ ասելի է: Աստուած իր Ժողովուրդը միշտ խոնարհութեան մէջ պահելու կ'աշխատի • իր տուած կրթութեանները յատկապէս անոնց հպարտութիւնը


կործանելու համար թէն : Երբոր իրենց վայելած առատ օրհնութիւններովը վառաւորութիւն, և սրտերնին բարձրանայ, անոնցմէ մէկ քանին ձեռքերնէն կ'առնէ, որ խմանան թէ ընդունածներնուն զատ ուրիշ բան չունին : Թէ որ սկսին խորհիլ թէ սրբութեան մէջ մեծ յառաջագիմութիւն կ'ընեն, և Աստուծոյ շնորհքէն որչափ կախում ունենանին մտնան, ինքզինքը անոնցմէ ետ կը քաշէ որ երթան իրենց իշխանովը խոնարհութիւն սորվին :

30

Այո՞՛ սով Հայր, ինչու որ քու առջիկ ասանկ հաճելի եղաւ : Մատթ. • ԺԱ • 26 :

ՎԵՐԻՆ տեսչութե՛ն թէ իր նախախնամական ընթացքին մէջ և թէ իր երկնային շնորհացը մատակարարութե՛ր մէջ իր անխմանալի սքանչելիքները տեսնելով, եթէ ըլլայ որ անոնցմէ մէկը մեր աչքերուն առջին իբրև դաղանիք երևայ, հոս մեր մտքին մէջ ծագած տարակուսանքները և խնդիրքները հանդարտեցնող ըստ բաւականին յադեցուցիչ պատասխան մը կայ, “ Այո՞՛ սով Հայր, ինչու որ քու առջիկ ասանկ հաճելի եղաւ ” : Ուստի Աստուծոյ խոնարհ որդին՝ ալ ասկէց աւելին չփնտռեր • դիտէ թէ իր Հայրը խնամաւուն և բարի է, և ամենէն աղէկը Անոր ուղածն է • Յիսուս Քրիստոս աս խօսքը զտու-

ցեց տեսնելով որ Աստուած իր ինքնիշխան շնորհքովը աւետարանին ճշմարտութիւնները մանկանց կը յայտնէ և անոնք խմաստուններէն և դիտուէններէն կը ծածկէ : Չենք կրնար տեսնել թէ ի՞նչ սրտաւառ Աստուած իր ինքնիշխան ողորմութիւնովը մարդոցմէ ոմանք յաւիտենական կենաց կ'ընտրէ, և ոմանք կը թողու որ իրենց բռնած ճամբանին երթան մինչև որ յաւիտենական մահը դայ վրանին հասնի : Չենք գիտեր թէ ինչո՞ւ համար մէկ ընտանիքէ մը այս ինչ անձը կը կանչէ և ոչ թէ միւսը չենք կրնար իմանալ թէ ինչո՞ւ համար տկարները յիմարները և անարդուածները կը կանչէ, ու չէ թէ հղորները ու ազնուականները : Բայց Աստուծոյ տոանկը հաճելի երեցաւ, և օրհնեալ է իր անուանման իր ուղածը կ'ընէ, բոլոր դաղանիքներուն ամենէն մեծը ինծի պէս մեղաւորը ընտրելն է, իր սուրբ Հոգիովը նորոգելու և երկնից Ժառանգ ընելու : Բայց ասանկ հաճելի երեցաւ իր առջին և իրեն կը վայելէ բոլոր փառքը : Աստուծոյ մարդկային ազգին ըրած բոլոր նախասխնամութիւններուն չենք կրնար խելք հասցընել • չենք գիտեր թէ ինչո՞ւ համար կը թողու որ չարերը շատ ապրին աշխարհիս մէջ • չենք գիտեր թէ ինչո՞ւ համար կ'աւանէ կը տանի այս ինչ շատ օգտակար մարդը, և կը ձգէ այս ինչ բոլորովն անօգուտ մարդը • չենք գիտեր թէ ինչո՞ւ համար մէկը կը բարձրացընէ ու միւսը կը ցածցընէ : « Այն ո՞վ հայր, ինչու որ քու առջիդ ասանկ հաճելի եղաւ » :



ՅՈՒՂԻՍ

1

Որ ան յոյսը ունենանք իբրև մէկ հաստատու
անշարժ խարխախ մը մեր անձին, որ վարատուրին
ներսի կողմն ալ կը մտնէ : ԵՔԻ • Զ • 19 :

ԵՐԲՈՐ նաև մը աղէկ տեղ մը հաստատու
խարխախ նետած է, անասուն թէ որ հովեր ու
մրրիկներ ելլեն մնաս չիրեր, ու նաևը եղողները
ապահով կ'ըլլան • և հովերը որչափ որ կատողին
այնչափ աւելի յարգը կը գիտնան զիրենք ապա-
հով պահող խարխախն : Իր յոյսը Գրիատասով
Աստուծոյ խոստմունքներուն վրայ հաստատող
քրիստոնեան ալ ասոր նման է • ինչ մրրիկներ
որ ելլան, նեղութեան ալիքները որչափ որ բարձ-
րանան իր սիրտը խաղաղութեան մէջ է, քանզի
Աստուած իր հեան է : Գիտէ թէ ամէն բան իր
օգտին համար կ'ըլլայ, ինչու որ Աստուած անանկ
ըսաւ • գիտէ թէ քիչ ատենէն պիտի հանդատա-
նայ երկինքին մէջ, և ինչո՞ւ համար հիմակուան նե-
ղութիւններէն պիտի խռովի այնչափ, թէ և ա-
նոնք շատ մեծ ալ ըլլան : Թէ որ փորձու-
թիւններ գան գլխուն, իր մեղքերուն յիշա-
տակութիւնը զինքը պաշարէ, իր հակառակոր-

դը սատանան իրեն գէտ ելլէ, և իր յոյսը Աստուծոյ ողորմութենէն մէկդի քաշելու ջանք ընէ, տակաւին անիկայ պիտի չլինայ: Իր ատաւանութիւնը յաւիտենական ժայռին վրայ հաստատած է. իր վստահութիւնը Տէր Յիսուս Քրիստոսի վրայ դրած է, և Աստուծոյ ըրած երգումն ու խոստումներէն իր փրկութիւնը կը հաստատեն: Ա՛րչափ երանելի են անոնք և միայն անոնք՝ որ աս քրիստոնէական յոյսը ունին:

2

Վասն զի մենք երեցած բաներուն չենք նախիր, հապա չերեցածներուն. ինչու որ երեցած բաները ժամանակաւոր են, բայց չերեցածները՝ յաւիտենական: Բ. Կորնթ. Գ. 18:

ՔՐԻՍՏՈՍՆԷՒՆ նայելու բաները աս երեցածները չեն. անոր շատ սիրած բաները իր բողոքակիցը եղած տեսանելի առարկաները չեն: Երգարե աս բաներէն շատերը հաճելի և սիրելի են իրեն, բայց սակայն ամենէն հաճելիները և ամենէն սիրելիները անոնք չեն: Քրիստոնէան մեծ և պատուական գիտաւորութեան մը համար կ'ապրի: Ինչպէս որ իր անմահ հողիին փափաքները անհուն են, անանկ ալ իր գլխաւոր օգուաները անհուն են: Բայց իր բողոքակիցը եղած տեսանելի բաները ժա-

մանակաւոր են • անոնք իրեն որչափ սրտաւական
ալ որ երևան, քիչ մը առեն պիտի մնան • կամ
անոնց ամէնը շուտով պիտի անցնին երթան, կամ
ինքը անոնցմէ պիտի դատուի : Բայց ան աներևոյթ
բաները, որոնց վրայ է դիտաւորապէս իր սէրը և
յոյսերը, յաւիտենական են, անոնք ոչ պիտի փո-
խուին ոչ ալ պիտի կորսուին • որչափ որ մեծ սէր
տայ անոնց, զինքը իր յոյսերէն ընաւ դատարկ պի-
տի չհանեն : Ամէնառենաս աներևոյթ և յաւիտե-
նական բաներուն նայելու ենք • խելքերնիս մշտ-
քերնիս մեր երկնաւոր ժառանգութեանը տալու
ենք • յաւիտենականութիւնը միշտ աչքերնուս առ-
ջին ըլլալու է • մեր հաւատոյ աչքը շարունակ մեր
աներևոյթ Աստուծոյ և Փրկչին վրայ հաստատե-
լու է : Ասանկով կը կարողանանք երկնային կեանք
մը վարելու աշխարհիս մէջ • ասանկով սրտերնիս
աս աշխարհիս տալէն կ'ազատինք : “ Հաւատքով
կը քալենք, ու չէ թէ երևոյթով ” : Բ. Կորնթ. Ե . 7 :

3

Եւ Սամուէլ ըսաւ • Մի՛թէ Տէրոջը առջևը ող-
ջակէզնեւորը ու զոհերը՝ Տէրոջը ձայնին հնազան-
դութիւն ընելու չափ հաճոյ է • ահա՛ հնազանդու-
թիւնը՝ զոհէն, ու խօսք մաիկ ընելը՝ խոյերուն
ճարպէն աղէկ է : Ա թագ • ԺԵ • 22 :

Տէ՛ր, հրաման ըրաւ Սաւուղին որ Ամաղեկա-
ցիները բնաջինջ ընէ, և մարդ կամ անասուն ողջ
չթողու : Սաւուղ ըստ մասին հնազանդեցաւ, բայց
Աստուծոյ հրամանին դէմ խաշներուն և հօտերուն
ընտիրները պահեց, և Ագագ թագաւորը ողջ թո-
ղուց : Երբոր Սամուէլ կանչեց զինքը իր անհնա-
զանդութեանը համար հաշիւ տալու, ջանաց ինք-
զինքը արդարացընել ըսելով, թէ ան արջառները
Տէրոջը ողջակէզ ընելու համար պահեցի : Աստու-
ած զոհը ինքն էր դրեր, ու թէ որ հաւատքով ու
սիրով մատուցանէին իր առջին ընդունելի էր •
բայց անիկայ հնազանդութեան տեղը զոհ չէր ըն-
դուներ • աս մեղքով Սաւուղին անօրէնութիւննե-
րուն չափը լեցուեցաւ, և Աստուած ալ զինքը
յաւխտեան երեսէ ձգեց : Երբոր Աստուած մեզի
հրաման մը կ'ընէ, ուրիշ բան պէտք չէ ընել, հա-
պա տեղնիտեղօքը անիկայ կատարել • բնաւ չենք
կրնար մէկ պարտաւորութիւն մը կատարելով ու-
րիշ պարտաւորութեան մը զանցառութիւնը քա-
ւել : Մարդիկ երբեմն կը կարծեն թէ շատ ողոր-

մութիւնն տալով, կամ մէկ մեծ բարեպաշտութեան գործ մը կատարելով, Աստուծոյ պատուիրանքներուն դէմ ըրած սովորական անհնազանդութիւններնուն փոխարէն մը ըրած կ'ըլլան . բայց Տէրոջը այնչափ հաճելի չեն ողջակէզները ու զոհերը, որչափ որ Տէրոջը ձայնին ականջ կախելը : Եւ ան նոյն ողորմութիւնները կամ էրկրպագութիւնները՝ որոնք անկեղծ և խոնարհ սրտէ մը յառաջ կու գան, հաճելի են . բայց պղծութիւնն կու գայ իրեն, երբոր կը տեսնէ թէ իրեն հակառակ և իր օրէնքը չսրահող սրտէ մը յառաջ կու գան :

4

Հաւատքով Աբրահամ իր փորձուած ատենը Իսահակը պատարագ մատուց . և ան որ խոսամունքները առած էր, իր մէկ հաախկ որդին կը մատուցանէր : Եբբ . ԺԱ . 17 :

ԱԲՐԱՀԱՄ հաւատացեալներուն հայրը կը կոչուի . անիկայ իր հաւատքին զօրութիւնը շատ անգամ ցուցուց, և ինքը Աստուածաշունչին մէջ իբրև բոլոր հաւատացեալներուն օրինակ ցուցուած է : Երբոր Աստուած իր հաւատքը փորձեց ամենէն խիստ փորձով՝ չտկարացաւ . Աստուած խոստացաւ որ իր սիրելի զաւկին Իսահա-

կին սերունդը մեծ ազգ մը պիտի ըլլայ ծո-
 վին եղերքի աւազին պէս շատ . և թէ իրմով աշ-
 խարհիս բոլոր ազգերը պիտի օրհնուին : Աբ-
 բահամ հաւատաց աս խոստմունքներուն , և եր-
 բոր Աստուած զինքը կանչեց որ իր մէկ հասիկ
 որդին ողջակէզ ընէ , ան ատենն ալ տակաւին
 անոնց հաւատաց . գիտէր որ Աստուած կա-
 րող էր անիկայ մեռելներէն յարուցանել , և
 թէ մէկ կերպով մը պիտի կատարէ բոլոր իր
 խոստացածները : Աստ գժուար էր հօր մը ա-
 սանկ ծնողական դուրսի դէմ պատուերի մը հը-
 նազանգիլ , ու իր մէկ հասիկ և սիրական որ-
 դին իր ձեռքովը սպաննել , և անիկայ ողջակէզ
 ընել : Բայց Աբրահամ կը հաւատար որ Աս-
 տուծոյ բոլոր պատուիրանքները խնամուն և բա-
 րի են . ինքը անոր սպաւինեցաւ և անմիջա-
 պէս պատրաստութիւն տեսաւ . իր հնազան-
 դութիւնը ցուցրնելու : Մենք ալ Աբրահամին
 պէս հաւատք ունենալու ենք . Աստուծոյ բո-
 լոր ըսածներուն հաւատալու ենք , թէ և մար-
 դոյ աչքին շատ օտար բան երևայ անիկայ կա-
 տարելը : Առանց երկմտութեան իրեն սպաւի-
 նելու ենք , թէ և կարող չենք բոլոր իր ճամ-
 բաներուն խելք հասցրնելու . անանկ վառահու-
 թիւն մը ունենալու ենք իր վրայ , որ ուրա-
 խութեամբ հնազանդինք բոլոր իր պատուիրանք
 ներուն , և աս ընելովնիս ինչ որ պիտի հե-
 տեի իրեն ձգելու ենք : Հոս և յաւիտենակա-

նութեան մէջ ինքզինքնիս և մեր ամէն սիրած
բաները իրեն յանձնելու ենք, հաւատալով որ կա-
րող է պահել և պիտի պահէ անոնք :

Յ

Հաւատքով Ռախաբ պոռնիկը անհաւատնե-
րուն հետ ջկորսուեցաւ, որ լրտեսները խա-
ղաղութեամբ ընդունել էր : Եհր • ԺԱ • 31 :

ՀԱԽԱՏՔԸ ինչպէս փրկեց Ռախաբը • Իս-
րայէլի Աստուծոյն վրայ ունեցած հաւատքը ղին-
քը անոր ժողովուրդին հետ մէկ ըլլալու առաջ-
նորդեց • հաւատաց որ անոր թշնամիները պի-
տի կորսուին, և միտքը դրաւ անոնցմէ բաժ-
նուիլ : Լրտեսներուն խոստմունքներուն հաւա-
տաց, և դրաւ ան նշանը, որով իրենց բոլոր
տիքը եղողներուն ամէնքն ալ կործանելու ժա-
մանակը ինքը և իր հօրը առնել պիտի ազա-
տէր : Աստուած ըսաւ մեզի որ մէկ ահարկու
կործանում մը կայ իր թշնամիներուն վրայ գա-
լու, բայց ամէն ղինքը սիրողները ու իրեն հը-
նազանդողները ան կործանումէն ապահով պի-
տի ըլլան : Եթէ կը հաւատանք ասոր, շատ պի-
տի փափաքինք իր թշնամիներէն հեռու կենա-
լու, և Աստուծոյ բարեկամներուն մէջ բնա-
կելու : Նաև խմացուց մեզի, թէ ինանք կըր-

նանք աղատիլ գալու բարկութենէն • իր Սուրբ
խօսքին մէջ զրուցեց մեզի, թէ իր Որդին Յիսուս
Քրիստոս մեր տեղը չարչարուեցաւ, թէ իր ա-
րիւնովը և իր արդարութիւնովը պիտի արդարացը-
նէ ու փրկէ բոլոր ապաշխարողները ու իրեն գա-
ցող և փրկութիւն խնդրողները : Եթէ Աստու-
ծոյ իր Որդիին վրայով մեզի ըսած խօսքերուն
կը հաւատանք՝ պիտի ապաշխարենք մեղքերնիս,
և Քրիստոսի պիտի երթանք փրկութիւն խընդ-
րենք, և ինքզինքնիս իրեն պիտի յանձնենք և
իրեն պիտի ապաւինինք, ու յաւիտենականու-
թեան յոյսերը պիտի վայելենք | որուն պիտի
արժանի ըլլանք միայն իր արժանաւորութիւ-
նովը : Եթէ կը հաւատանք Աստուծոյ իր սիրոյն
վրայ ըսածներուն, պիտի սիրենք զինքը ու պի-
տի աշխատինք իրեն հաճոյ ըլլալու և պիտի
պատուենք զինքը բոլոր իր կամքը կատարելով •
այսպէս հաւատքը մեզ պիտի փրկէ, ինչպէս
որ Ռախաբ պոռնիկը փրկեց :

6

Արդարը հաւատքէն պիտի ապրի • Եբե • Ժ • 38 :

ՄԱՏԴՍ երբոր սկիզբէն մեղանջեց, հոգե-
ւորապէս մեռաւ • անիկայ “մեռաւ մեղքի և յան-
ցանքի մէջ” : Երբոր մարդիկ Սուրբ Հոգիին

ազգեցութիւններովը նորէն կը ստեղծուին, կըրկին անգամ հոգևոր կեանք կ'առնեն. աս ներսիդինին եղած կեանքը կենդանի կը մնայ և Քրիստոսի վրայ ունեցած հաւատքովնին կը զօրանայ : Իրենց հաւատքը որչափ որ զօրաւոր ըլլայ, այնչափ արագութիւնով կ'աճին և Քրիստոս Յիսուսով կատարելութեան կը հասնին : Հեթանոսները երբեմն կ'աշխատին մարմնաւոր տանջանքներով կամ նեղութիւններ քաշելով արբութիւն գտնել, բայց քրիստոնեան անանկ ջրներ, իր յոյսը մարմնաւոր ապաշխարանքներու կամ իրեն ըրած ջանքերուն վրայ չգնէր, հապա Քրիստոսի կը նայի : Գիտէ որ անոր քովը առատ շնորհք կայ իր կարօտութիւնները լեցընելու համար, և կը հաւատայ ան խոստմունքին, թէ բոլոր իրեն գացողներուն պակասութիւնը պիտի լեցընէ, և իրեն ապաւինելով իրմէն առատապէս շնորհք կ'ընդունի : Նեքը տրկար է, բայց Քրիստոս իր զօրութիւնն է : Երբոր փորձութեան մէջ կ'էյնայ, Քրիստոս զինքը կը բանէ. թէ որ մեղաց մէջ էյնայ, Քրիստոսի արիւնին կը նայի որ քաւէ իր մեղքը, և իրեն խաղաղութիւն տայ : Շարունակ Քրիստոսի հետ հաղորդակցութիւն ընելով, օրէ օր առաւել կերպարանակցութիւն մը կ'ունենայ անոր պատկերին : Աս հոգևոր կեանքը որ հաւատացեալը աս աշխարհիս մէջ հաւատքով կը վայելէ, երկինքին մէջ իր յաւիտենական ժա

աանգութիւնը պիտի ըլլայ, որն որ Տէրը իր սիրելիներուն խոստացաւ: Հաւատացեալը աշխարհիս մէջը եղած ատենը աս յաւիտենական կենացը կը սպասէ ցնծութիւնով՝ չէ՛ թէ իբրև իր բարի գործքերուն մէկ հասուցում մը, այլ իբրև Յիսուս Քրիստոսի իր արիւնովը ծախու առած շնորհքը, որն որ ձրի կը պարգևէ բոլոր իրեն սպաւինողներուն:

7

Որովհետև ինծի ունեցած սրամտութիւնդ, ու քու ամբարտաւանութիւնդ իմ ականջներուս ելաւ, Ես ալ իմ կարթս քու քիթդ և իմ սանձս քու բերանդ պիտի դնեմ, ու քու եկած ճամբայէդ քեզ ետ պիտի դարձնեմ: Դ. Թագ. յ. Թ. 28:

ՍԵՆԵ ԲԵՐԻՄ Ասորեստանի Թագաւորը այնչափ յաջողութիւն գտաւ իր պատերազմներուն մէջ որ ինքզինքը անյաղթելի սեպեց, և Յուդային վրայ յարձակեցաւ ան ալ դիւրութեամբ իր յաղթանակներէն մէկը ընելու: Բայց հոս իր ընթացքին անանկ արգելք մը գտաւ որ առաջ երբէք պատահած չունէր: Եղեկիան ազօթող Թագաւոր մըն էր, և թէպէտ ինքը զօրութեամբ Սենեքերիմէն շատ տկար էր, բայց

իր աղօթքներովք Տէրը իր կողմէն եղաւ, որ անկ-
 կայ Ամենակարող է: Նաև Սենեքերիմք ամ-
 բարտաւանութիւնով խօսեցաւ Նարայէլի Աստու-
 ծոյն դէմ, ուստի սորվեցաւ թէ անանկ մէ-
 կուն հետ կը սլատերազմի, որ ամենէն հզօրնե-
 րէն հզօր էր: Աստուած ըսաւ իրեն թէ զին-
 քը գործածեց իրեն յաղթած ազգերը յան-
 դիմանելու համար, բայց հիմա իր եկած ճամ-
 բէն զինքը ետ պիտի դարձնէ: Ասորեստանի
 թագաւորը տեսաւ որ երկինքի Աստուծոյն դէմ
 պատերազմող դանուիլը ահարկու բան էր: Չար
 մարդիկ իրենց հպարտութեան և իրաւասիրու-
 թեան գործքերը կատարելով շատ անգամ Աս-
 տուծոյ դիտաւորութիւնները տեղը կը տանին,
 թէպէտ իրենց մտքերնէն չանցնիր՝ բայց տակա-
 շին Աստուծոյ իշխանութեանը տակն են. և
 երբոր ան կէտին կը հասնին որ ալ անկէց ան-
 դին թոյլտուութիւն ընելը աղէկ չսեպեր, ա-
 նոնք իրենց եկած ճամբէն ետ կը դարձնէ:
 Բայց մէկը կարող չէ Աստուծոյ ժողովուրդին
 դէմ պատերազմիլ և յաջողութիւն դանել:
 Աստուած միշտ իր ժողովուրդին աղաղակները կը
 լսէ և անոնք բոլոր իր թշնամիներէն կ'աղատէ:

տի գոզէ, ու մնացած բարկութիւնը դուն պի-
տի զսպեա : Սաղմ . հՁ . 10 :

ԱՍՏՈՒԱԾ Երկինքը կը բազմի, և երկրիս
բնակիչներուն մէջը կը շրջի . թէպէտ չար մարդիկ
իր իշխանութիւնը չեն ճանչնար, բայց սա-
կայն անոր իշխանութեանը տակն են : Արնան
կատղիլ իրեն և իր ժողովուրդին դէմ . բայց
Աստուած անոնք իր անուանը փառաւորուե-
լուն և իր ճշմարտութեանը տարածուելուն օգ-
նողներ պիտի ընէ : Չար մարդիկ Տէր Յիսուս
Քրիստոսի վրայ խիստ բարկացան և իր անու-
նը աշխարհիս երեսէն բնաջինջ ընել խորհե-
ցան . բայց զինքը 'ի մահ դատապարտելով
յայտնած կատաղի բարկութիւննին երկնից Աս-
տուծոյն անունը փառաւորելու առիթ եղաւ .
վասն զի անով Աստուծոյ յաւիտենական խոր-
հուրդներն ու դիտաւորութիւնը կատարողներ
եղան, որ ամէն մարդոց փրկութեան ճամ-
բայ մը բացուեցաւ : Քրիստոս երկինքը համ-
բառնալէն ետև իր թշնամիները սկսեցին իրեն
հեռուողներուն վրայ բարկանալ . անոնք մահու
չափ հալածեցին, և Երուսաղէմի մէջ եղող աշա-
կերանները ամէն տեղ յիրուցան եղան : Բայց ուր որ
երթային Աստուծոյ խօսքը կը քարոզէին, և ասան-
կով Աւետարանը շատ տեղ տարածելու սլառճառ
եղան . անանկ որ աս կերպով Աստուած մարդոց
բարկութիւնը իր Թաղաւորութիւնը յառաջացը-

նելու համար գործածեց : Բայց մարդու բարկու-
 թիւնը դիւրաւ չիջնար • չար մարդիկ քիչ չարու-
 թիւն գործելով չեն կշտանար • բայց Աստուած
 թող չտար որ իր աղէկ սեպած կէտէն անդին անց-
 նին , կամ ինքը փառաւորուելու համար թող
 տուած չափէն աւելի բարկանան , երբոր ալ
 մնաս պիտի բերեն : Աս կէտին անոնք կը զըս-
 պէ • ու երբեմն ալ Տարսոնացի Սողոսին պէս
 իր թշնամիները բարեկամներու կը դարձնէ :
 Բայց թէ որ ասանկ չընէ , ուրիշ շատ ճամ-
 բաներ ունի անոնք սանձելու • ամենեին ցաւե-
 լու չենք երբոր տեսնենք թէ Քրիստոսի թըշ-
 նամիները գրառանց յաղթութիւն կը գործեն ,
 ինչու որ անոնց բարկութիւնը զինքը պիտի դո-
 վէ , և մնացած բարկութիւնը ինքը պիտի զըս-
 պէ :

9

Մեր Տէր Յիսուս Քրիստոսի շնորհքը՝ ձեր
 հոգիին հետը ըլլայ • ամէն : Փիւլի • 25 :

ԱՍ էր Պօղոս առաքեալին տուած օրհնու-
 թիւնը իր սիրելի եղբօրը և գործակիցին Փիլի-
 մոնին : Արնար անոր համար հարստութիւն և
 պատիւ խնդրել • կրնար առողջութիւն և եր-
 կայն կեանք խնդրել • կրնար անոր երկրաւոր

բարեկամներ խնդրել : Բայց առ բաները Պօղոսին առջին մեծ յարգութիւն ջունեցին . ուստի ասոնցմէ մեծ օրհնութիւն մը կը փափաքէր որ իր բարեկամին վրայ դայ : Ան բաները աղէկ են հոս , և մեզ քիչ մը ժամանակ կ'երջանկացընեն , սակայն մնայուն չեն . 'բայց մեր Տէր : խուս Քրիստոսի շնորհքը մեզ երջանիկ կ'ընէ հոս ալ՝ դալու աշխարհին մէջն ալ : Իր շնորհքը կեանք է , և իր սէրը կեանքէ ալ աւելի . ինքը առ կեանքերնուս մէջ ամէն պէտք եղած բարութիւնը կու տայ , և յաւտենասկան կեանք ալ կը պարգևէ մեզն որ ամէն բանէ աւելի է : Պօղոս իր բարեկամին մարմինին օրհնութիւն մը ջննդրեց , հասլա հոգիին . մարդիկ շատ աւելի կը խորհին մարմինին վրայ , քան թէ հոգիին . Բայց թէ որ հոգին խաղաղութեան մէջ ըլլայ , երջանիկ կ'ըլլանք , զեն ջունի մարմինին վաճակը ինչ որ ըլլայ . հոգին անմահ է , վասնորոյ առաւել հոգ ասնելու ենք անոր պակտութիւնները լեցընելու՝ քան թէ մարմինին , որ մահկանացու է : Մեր Տէր Յիսուս Քրիստոսի շնորհքը առատապէս պիտի լեցընէ մեր ամէն հոգևոր փափաքները : Պօղոս ասկէց մեծ օրհնութիւն մը չէր կրնար փնտրուել իր բարեկամին , քանզի ամէն օրհնութիւն անոր մէջն է . առ է ան մեծ բարութիւնը որ թէ մեզն և թէ մեր սիրելիներուն համար փրկարուելու ենք :

Ժողովուրդէն մէկը պատասխան տալով ըսաւ .
 Անորդատակա՛ իմ Որդիս քեզի բերի , որ համբ
 ողի ունի : Մարի . Թ . 16 :

ԱՍ հայրը մեծ ցաւ կը կրէր իր զաւկին քա-
 շած նեղութեանը համար : Շատ ծնողքներ թէ
 որ իրենց մէկ սիրելի զաւկին քաշած նեղու-
 թիւնները իրենք քաշեն այնչափ չեն ցաւիր ,
 որչափ որ անոնց ան նեղութիւնները քաշելը
 տեսնելով կը ցաւին : Բայց մասնաւորապէս աս
 հօրը կրած նեղութիւնը մեծ էր , քանզի նայե-
 ցաւ որ իր զաւակը չար ոգիի իշխանութեան
 տակ ինկած է . ու իր նեղութեանը մէջ օգ-
 նութիւն մնառեց ճշմարիտ օգնութեան աղբիւ-
 րէն : Մարդոցմէ օգնութիւն գտնելու համար
 թէ որ աշխարհիս բոլորակքը պարտէր՝ պարտաւ
 էր . բայց Յիսուսի վրայօք լսած էր , և իր զա-
 վակը անոր բերաւ , ու պարտաւ տեղը եկած չե-
 դաւ : Յիսուս Քրիստոս ան նոյն գորովագութ
 Փրկիչն է հիմա ալ , ինտոր որ առաջ էր աշ-
 խարհիս մէջ եղած օրերը . հիմա ալ պատրաստ
 է բոլոր իրեն աղաղակողներուն ձայնին մտիկ
 ընելու , հիմա ալ փորձութեան մէջ ինկած ա-
 տեննիս մեր վրայ կը դժայ , և կը մխիթարէ ա-
 մէն անոնք , որ հաւատքով իրեն կ'երթան .
 հիմա ալ ծնողքները կրնան իրեն երթալ աս

հօրը բրածին պէս, և իրենց զաւկընէրնուն
օրհնութիւն խնդրել: Մեր զաւակները ամէնքն
ալ բնականաբար մեզայ իշխանութեանը տակն
են. մէկ արարած մը չկայ որ կարող ըլլայ ա-
նոնք աս դերութենէն ազատելու. բայց ամէն
զօրութիւններ Յիսուսի ձեռքն են, և ինքը պատ-
րաստ է փրկելու: Ուստի հիմա ալ կրնանք եր-
թալ իրեն ան նոյն վաստահութիւնովը որ պիտի
երթայինք թէ որ դեռ աշխարհիս մէջն ըլ-
լար, և բարեգործութիւն ընելու համար ան-
դին ասդին շրջէր: Արնանք խնդրել իրմէն որ
մեր զաւկները օրհնէ և իրենց հոգեւոր հիւան-
դութիւնները բժշկէ, և թէ որ հաւատքով խընդ-
րենք պարասպ տեղը խնդրած չենք ըլլար:

11

Եւ սղուան հայրը շուտ մը աղաղակեց՝ ու
արցունքով ըսաւ. Ար հաւատամ Տէր, օգնէ՛ իմ
անհաւատութեանս: Մարի. Թ. 23:

ՅԻՍՈՒՍ բոլոր իրեն եկող օրհնութիւն խընդ-
րողներէն հաւատք կը պահանջէր. հաւատալու են
իր զօրութեանը, եթէ կ'ուզեն որ յայտնուի
իրենց: Համբ ոգի ունեցող զաւկին հայրը հա-
ւատքով Յիսուսի եկաւ. հաւատաց որ Յիսուս կա-
րող էր փրկել. բայց գիտէր որ իր հաւատքը

պէտք եղածին չափ զօրաւոր չէր : Իր հաւատ
 քին անկատար ըլլալը խոստովանեցաւ , բայց չէ
 թէ անհոգութիւնով մը , հասկա անոր վրայ ող-
 բալով , արցունքով խոստովանեցաւ : Աւ բաւա-
 կան չսեպեց իր ունեցած հաւատքը , հասկա ա-
 նիկայ զօրացընելու ամենէն ազէկ միջոցը գոր-
 ծածեց , այսինքն ամէն շնորհքները պարզեող
 Յիսուսին ձգեց որ անիկայ զօրացընէ , ըսելով՝
 Ար հաւատամ Տէր՝ օգնէ իմ անհաւատու-
 թեանս : Ամէնքս ալ հաւատքներնուս տկարու-
 թեանը վրայ ողբալու ենք . թէպէտ Յիսուսի
 կը հաւատանք , բայց մեզմէ ո՞վ կայ իրեն ապա-
 շինող հաստատուն յոյսով ինչպէս որ պէտք է
 ունենալ : Մեր հաւատքին տկարութիւնը մեր
 Ֆրկչին անպատուութիւն է , և անոր վրայ ող-
 բալու ենք , երբոր իրեն կը խոստովանինք : Բայց
 մեր անհաւատութիւնովը իրեն երթալու ենք
 օգնութիւն խնդրելու . մենք մեզմէ օգնութիւն մը
 չենք կրնար գտնել , բայց Յիսուս ամէն ատեն
 պատրաստ է մեզի՝ օգնելու : Թէպէտ մեր ան-
 հաւատութիւնովը զինքը անպատիւ կ'ընենք , բայց
 թէ որ ապաշխարութիւնով իրեն երթանք ,
 և ինքզինքնիս իրեն ձգենք որ մեզն ողորմի ,
 ձայներնուս կը լսէ ու հաւատօքնիս կը զօրացը-
 նէ : Սքանչելի՛ է մեր Ֆրկչին խոնարհիլը ու
 շնորհքը . կը համբերէ բոլոր մեր մեղքերուն
 ու անհաւատութեանը . և սակայն երբոր իրեն
 կ'երթանք մեր թշուառ վիճակովը , և իրմէն
 աւելի շնորհք կը խնդրենք , միշտ պատրաստ է
 մեր ձայնին լսելու և պատասխանելու :

12

Ու հրեշտակը անոր գալով՝ ըսաւ . Ողջոյն
քեզ՝ ո՛վ շնորհընկալ կոյս . Տէրը քու հետդ
է : Ղ. 1 . Ա . 28 :

ԱՍՏՈՒԱԾ իր մասնաւոր շնորհքները սո-
վորաբար մարդոց մէջ մեծ յարգութիւն ու-
նեցողներուն չպարգևեր : Իսրայէլի որդիքը Քա-
նանու երկիրը երթալու և իբրև Աստուծոյ
սեպհական ժողովուրդը հոն բնակելու կանչու-
ելէն առաջ Եգիպտոսացոց երկիրը գերի էին :
Անկէց ետև ալ Աստուած, Իսրայէլացոց դա-
տաւորներուն և աղափիչներուն շատերը վար սա-
տիճանի մարդոցմէն ընտրեց : Եւ աս ատենս ալ
որ իր յաւիտենական Որդիին մարմին առնելու
գաղանկքը կատարուելու վրայ էր, անարգ սե-
պուած Նազարէթ քաղաքէն մէկ աղքատ կոյս մը
կ'ընտրէ զանիկոց աշխարհք բերելու միջոցը ը-
լալու : Աս կոյսը թէպէտև աղքատ և նուաստ
մէկն էր, բայց հաւատքով հարուստ էր, և Աս-
տուած անոր պարգևեց մարդկային սեռէն բնաւ
մէկուն չարուած ան պինտ բարձր պատիւը :
Հրեշտակ մը խրկուեցաւ աս դիպուածը Մարի-
ամին աւետելու, և ան զմէքը Շնորհընկալ կո-
չեց : Հրեշտակները կ'ուրախանան Աստուծոյ կամ-
քը կատարելով, և երբոր Աստուծոյ Որդին
աշխարհք եկաւ բնակելու, շուտով վազեցին և

դած զխառնածը Բեթլէհէմի հովիւներուն խնայուցին, և հոս ընակած ատենն ալ իրեն ըստասաւորութիւն ընելը իրենց պինտ մեծ պատիւ մըն էր : Ուստի զարմանք չէ որ հրեշտակները Մարիամը կանանց մէջը օրհնեալ սեպեցին, որուն տրուեցաւ անանկ մօտ ազգականութիւն մը ունենալ Քրիստոսի հետ՝ երբոր աշխարհիս մէջ էր, և այնչափ ատեն անանկ մեկտեղ ընկերութիւն մը ունենալ անոր հետ և իրեն ստասաւորութիւն ընել : Որչափ հաստատուն հաղորդակցութիւն որ ունինք Քրիստոսի հետ, և որչափ որ իր կամքը կը կատարենք նայնչափ պատիւ է մեզի :

13

Եւ քու սրտէդ ալ թուր մը պիտի անցնի :
Ղո-ի • Բ • 35 :

ՄԱՍՆԱՒՈՐ արտօնութիւնները շատ անգամ հեանքնին յատուկ փորձութիւններ ալ կը բերեն : Մարիամ շատ երանելի եղաւ Քրիստոսի մայրը ըլլալով • Թէ որ մեծ պատիւ կը սեպուէր Մեսիային նախնիքը ըլլալու արտօնութիւնը, ալ որչափ առաւել էր անոր բուն մայր ըլլալը : Թէպէտև Մարիամ ուրախանալու էր իր վայելած արտօնութիւնովը, բայց

առաջուրնէ ըսուեցաւ իրեն որ Քրիստոսի հետ
 ասանկ աղագահանութիւն ունենալովք շատ ալ նե-
 ղութիւն սխախ քաշէ : Երբոր տեսաւ որ իր
 որդին մարդոցմէ կ'անարդուէր ու ասելութիւն
 կը քաշէր , և ասդին անդին կ'երթար իր դուխը
 դնելու տեղ մը չունենալով , և կը հալածուէր
 Իսրայէլացիներէն ու Փարիսեցիներէն և բոլոր
 ձեռքերնին իշխանութիւն ունեցող մարդոցմէն ,
 և որ զինքը կ'արհամարհէին , անաարակոյս իր
 սիրտը մեծ նեղութեան մէջ ինկաւ : Բայց եր-
 բոր խաչին քովը կեցած նայեցաւ անոր վրայ
 որ շատ սիրելի էր իրեն , և որ ան ալ զինքը
 շատ կը սիրէր . անանկ անմեղ որդի մը , որուն
 նմանը բնաւ մէկ մայր մը ունեցած չէ . երբոր
 տեսաւ անիկայ խաչին վրայ տարածուած , ու
 ձեռքերը և ոտքերը դամբրով ծակուած , երբոր
 տեսաւ անոր քաշած անհնարին տանջանքները
 և լսեց իր աղաղակելը՝ Աստուած իմ՝ Աստու-
 ած իմ՝ իս ինչո՞ւ թողուցիր . արդարեւ անա-
 տենը իր սրակն ալ թուր մը անցաւ : Երա-
 նելի բան է Քրիստոսի հետ միաւորիլը , մինչև
 անգամ թէ որ աս բանը աշխարհիս մէջ մեղ
 մասնաւոր նեղութիւններու ենթակայ ընէ : Թէ
 որ հոս իրեն հետ նեղութիւն քաշէր , ասկէց
 ևս և իր փառքին մասնակից սխախ ըլլանք :

Ուրեմն դուք ալ պատրաստ կեցէք, քանզի Որդին մարդոց կու գայ անանկ ժամու մէջ՝ որ գուք չէք կարծեր : Ղու. 1. Ե. 40 :

Թէ որ մահը յանկարծ վրանիս հասնի ու մեզ անպատրաստ դանէ . Թէ որ յաւիտենական աշխարհը երթալու կանչուինք դեռ քանի որ Աստուծոյ հետ հաշտուած չենք և մեղքերնիս ներուած չէ, ալ անատենը յոյս փնտուելու միջոց չկայ : Ալ անկէց ետև մեր վիճակը յաւիտենական ու անսխիթար թշուառութիւն է . Աստուծմէ և սուրբ էակներէն սխաի վնասուինք ու սխաի երթանք մշտնջենաւոր տրամութեան և տառասպանքի մէջ կյնանք : Բայց չենք դիտեր երբ մեռնելնիս . շատ անգամ մահը յանկարծակի մարդոց շունչը անանկ կը կարէ որ վայրկեան մը առաջ իրենք չէին դիտեր . մահը շատ անգամ առողջ և երջանիկ մարդիկը յանկարծ գերեզմանը կ'իջեցընէ : Կարելի է թէ մենք ալ ասանկ մահուան մը պատահինք . Աստուած տեղ մը անանկ խոտմուռնք մը ըրած չէ թէ մեզ հոսկէց կանչելէն ժամանակ մը առաջ մեզի սխաի իմացընէ : Արդ որովհետև մեր յաւիտենական կեանքը ասանկ վտանդի մէջ է, և որովհետև սա կարճ կեանքէս կախուած է յաւիտենական երջանկութիւնն ու թշուառութիւնը, անոր

համար բանական մարդոց պարտքն է որ մահուան պատրաստ գտնուին : Անանկ կեանք մը վարող մարդը որ մահը որ ատեն որ դայ հոգը չըլտայ , անվախճան թշուառութեան մէջ չիյնար , հասա յաւիտենական երջանկութիւն կը գանէ : Աս պատրաստութիւնը կ'ուենեանք՝ միշտ յոյսերնիս Յիսուս Քրիստոսի վրայ դնելով , բոլոր սրտով հաւատալով և ամէն օր իրմէն շնորհք խնդրելով որ մեզ երկնային թագաւորութեանը յարմարցընէ :

15

Ու երկինքէն ձայն մը լսեցի՝ որ կըսէր . Գրէ , Այսուհետեւ երանելի են ան մեռելները՝ որոնք Տէրոջմով կը ննջեն , այս՝ կըսէ հոգին , որ իրենց աշխատութենէն հանգչին , ու իրենց գործքերը իրենց ետէն կ'երթան : Յայտ . ԺԴ . 13 :

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԻՆ մէջ շատ անգամ երանելի կը կոչուին անոնք , որոնց վրայ մարդիկ իբրև խղճալի կը նային : Մարդիկ երնէկ կու տան երկայն ապրողներուն , բայց Աստուածաշունչը՝ մեռնողներուն . բայց չէ թէ բոլոր մեռեալներն ալ երանելի կը կոչուին , հասա միայն անոնք որ 'ի Տէր ննջեցին : Անոնք են 'ի Տէր ննջողները որ կենդանի հաւատքով մը Քրիստոսի

առաի հետ միացած են, և որոնք որ իր փառ-
 քին համար ապրեցան: Աս ճշմարտութիւնը՝
 այսինքն թէ ասանկները երանելի են, անանկ
 մեծ ճշմարտութիւն մըն էր որ Յովհաննէսին
 հրաման եղաւ որ գրէ: Մարդս բնականաբար
 աս բանին հաւատք չընծայեր, բայց ահա իրենց
 օգտին համար հոս գրուած է, և անիկայ ըստ
 ղը երկնային ձայն մըն էր ու սխալ չկրնար
 ըլլալ: Բայց ինչո՞ւ համար ննջեցեալները երա-
 նելի կը կոչուին. նախ՝ անոր համար որ աս
 կեանքիս չարիքներէն ազատեցան, որոնց ամենէն
 մեծը մեղքն է: Թէ որ չարութեան բոլոր միւս
 պատճառները մէկտեղ դանձն կրնար մեղքին
 չափ չարութիւն ճնանիլ: Բայց ՚ի Տէր ննջող-
 ները յաւիտեանս կ'ազատին մեղաց իշխանու-
 թենէն. և չէ թէ միայն չարէն ազատեցան,
 հասցա նաև պինտ մեծ երջանիկ կեանքի մէջ
 մտան. Աստուծոյ կը ծառայեն և միշտ իրեն
 փառաբանութիւն կը մատուցանեն. միշտ իր փառ-
 քը կը վայելեն և իրենց Փրկչին ներկայութենէն
 երբէք դուրս չեն ելեր: Ուրեմն պատճառ չունինք
 ՚ի Տէր ննջող բարեկամներնուս վրայ ողբալու:

Եւ հոն բնաւ անմաքրութիւն մը պիտի չմտնէ ,
 ոչ ալ պղծութիւն ու ստութիւն գործող մը .
 հասլա միայն անոնք , որ Գառնուկին կենաց գրք-
 քին մէջ գրուած են : Յայտ . ԻԱ . 27 :

Աս աշխարհիս մէջ բարեպաշտ մարդուն ունե-
 ցած թշուառութիւններուն մեծ պատճառներէն
 մէկն աս է որ պարտաւորուած է այսչափ չա-
 րութիւն տեսնելու , և Աստուծոյ վրայ սէր չու-
 նեցող ու իրենց վարքով չարին առաջնորդող
 մարդոց հետ հաղորդակցութիւն ընելու , և այն-
 չափ մեղանշահան խօսակցութիւններ լսելու :
 Բայց երկինքին մէջ ասանկ չէ . հոն անսուրբ
 բան չմտնէր . հոն սուրբ էակներուն վիշտ աու-
 ող պիտի խօսքեր չկան . հոն մեղքի առաջնոր-
 դող չկայ . հոն չարագործութիւն չկայ : Ընտիր
 ընկերութիւն մը պիտի ըլլայ հոն . չէ թէ աշ-
 խարհիս մեծերէն ու զօրաւորներէն , հասլա ա-
 մէն ազգի ամէն կարգի և ամէն վիճակի մար-
 դոցմէն ընտրուածներէն , աշխարհիս սուրբե-
 րէն : Անոնց ամենուն անունը գրքի մը մէջ գր-
 րուած է . հոն խաբէութիւնով կամ հնարքով
 անուն մը մտած չէ . ան գիւրքը բանողը բոլոր
 սրտերը կը ճանչնայ . ինքը չխաբուիր : Ան երկ-
 նային ընկերութեան անդամներուն անունները
 գրողը Յիսաւս Գրիստոս է . անիկայ մեղաւոր-

ներուն բարեկամն է և ասպաշխարութիւնով ու
հաւատքով իրեն եկողներուն ամէնքն ալ պիտի
ընդունի • բայց ինքզինքնին արդար սեպող հը-
պարաները հոն տեղ չունին : Աս գիրքը կենաց
գիրքն է • թէ որ անուններնիս հոն գրուած են
յաւիտենական կեանքը մերն է : Ուրեմն շատ
մեծ բան է որ ասպաշով ըլլանք թէ անուննիս
հոն գրուած են • և աս բանին կրնանք ասպա-
հով ըլլալ , թէ որ ունինք ան հաւատքը՝ որ
սիրով ՚ի գործ կը գրուի և սիրար կը սրբէ :

17

Քանզի ձեր գանձը ուր որ է , սիրտերնիդ
ալ հոն պիտի ըլլայ : Մատթ . 2 . 21 :

Թէ որ մարդ մը հեռու տեղ մը մեծագին
գանձ մը ունենայ՝ մտքէն չէլլեր , միշտ կը խոր-
հի վրան , շատ հոգ կը տանի որ չըլլայ թէ
կորսուի կամ մնասուի : Թէ որ մարդ մը մեծ
ժառանգութեան մը ժառանգաւոր ըլլայ , շատ
անգամ անոր արժէքին վրայ կը խորհի , և թէ
երբ պիտի ձեռք ձգէ : Անանկ ալ շատ խոր-
հելու ենք մեր երկնային ժառանգութեանը վը-
րայ • ու վերը ունեցած գանձերնուս յարգը
գիտնալու ենք : Աշխարհային հարստութիւններն
ու ժառանգութիւնները անոր քովը ոչինչ են •

մարդկային աչքը անանկ բան մը տեսած չէ .
 աշխարհս անոր անարատմելի փառքին վրայով բան
 մը լսած չունի : Աս ժառանգութիւնը ծախու
 անուողը ինքը մեզի համար անիկայ կը պատրաս-
 տէ . ինքը մեզի անոր վրայով քիչ մը բան
 պատմեց , բայց անոր կատարեալ արժէքը չենք
 կրնար իմանալ , մինչև որ իրօք չվայլենք : Գի-
 տենք որ սա ժառանգութիւնը մերն է , թէ որ Յի-
 սուս Քրիստոսի ճշմարիտ աշակերտներէն ենք ,
 ինչու որ խօսք տուաւ , և իր խոսամուկները
 չկատարելիք չընէր : Օրեր շաբաթներ կ'անց-
 նին առանց անոր վրայօք միտքերնէս խորհուրդ
 մը անցնելու . երբոր կը կանչուինք որ երթանք
 անիկայ ժառանգենք , ետ ետ կը փախչինք ու
 մեր աղքատութեանն ու չարութեանը կը փաթ-
 տուինք , իբր թէ անոնք երկնից գանձերէն պա-
 տուական են : Բայց ասանկ ըլլալու չէ . եթէ
 երկինքը գանձ ունինք , մտմտութիւնս ու սրտեր-
 նիս ալ հոն ըլլալու է :

Աբրամ Բանանու երկրին մէջ բնակեցաւ ,
 Ղովտն ալ դաշտի քաղաքներուն մէջ բնակե-
 ցաւ , ու իր վրանը Սողոմի քով բացաւ : Ծննդ .
 ԺԳ . 12 :

ՂՈՎՏ երկայն աստէն Աբրահամին հետը կե-
 ցաւ . և իրեն մեծ շնորհք մը եղած պիտի ըլ-
 լայ հաւատացելոց հօրը իր Աստուածասպաշտ աղ-
 դականին հետը մէկ տեղ ըլլալը : Բայց երբոր
 իրենց ստացուածքները շատցան աղէկ սեպեցին
 զատուիլ : Աբրահամ Ղովտին ձգեց որ ուր որ
 ուղէ բնակի , և Ղովտ Սողոմի պաղաքեր դաշ-
 տը ընտրեց . տեսաւ որ ան տեղը բարեբեր և
 ջրոտ է , և իր վրանը հոն հաստատեց : Բայց
 անանկ տեղ մը չփնտռեց , որուն բնակիչները
 ճշմարիտ Աստուծոյ երկրպագողներ ըլլան : Սո-
 դոմացիները շատ չար մարդիկ էին Տէրոջը առ-
 ջին , աշխարհային օգուաներու համար չարերու
 հետ բնակելու չենք . Աստուծոյ որդիներուն
 ընկերութիւնը ամէն հարստութիւններէ վեր բռ-
 նելու ենք : Բայց Ղովտին աշխարհասիրութիւնը
 առանց պատիժի չմնաց : Աստուած իր զաւկը-
 ները բնաւ առանց յանդիմանութեան չթողուր
 երբոր աշխարհային ընթացք մը վարեն : Սո-
 դոմի մէջ Ղովտ չկրցաւ այնչափ վայելել իր ըս-
 տացուածքները քանի որ ձեռքն էին , քանզի

սիրտը շատ կը վշտանար բոլորափքը եղողներուն
 չարագործութիւններէն : Աստուծոյ զաւկրները
 չեն կրնար երջանիկ ըլլալ երբոր չարագործնե-
 րու մէջ իյնան : Բայց վերջապէս Սողոմին վրայ
 ահարկու կործանում մը եկաւ . իրաւ՝ Ղովտ
 փախաւ , Տէրը իր ողորմութիւնովը զինքը աղա-
 անց , բայց զինքը հոն երթալու դրդող հարըս-
 տութիւններուն բոլորն ալ ձեռքէն գնաց , և
 աւելի սոսկալին ան է որ իր զաւկրներէն մէկ
 քանին քաղքին կործանումովը կորսուեցան , և
 իր կինը դաշտին վրայ մնաց Աստուծոյ բար-
 կութեանը յիշատակարան մը եղած իր անհը-
 նազանդութեանը համար աղի արձան մը դառ-
 նալով :

49

Եւ ուրիշ մէկով մը փրկութիւն չկայ . ին-
 չու որ անկէ 'իզատ ուրիշ անուն մը չկայ եր-
 կինքի տակը մարդոց մէջ արուած , որ անով
 կարող ըլլանք փրկուելու : Գործ . Դ . 12 :

ՄԵՂԱԽՈՐ ըլլանուա համար չենք կրնար
 մեր արժանաւորութիւնովը դատասպարաութենէ
 աղատութիւն պահանջել . թէ որ փրկուինք՝ ու-
 ընչի մը արժանաւորութիւնովը փրկուելու ենք :
 Բայց մարդ մը չկրնար մեզ փրկել , քանզի բո-

լոր մարդկային սեռը մեզի հետ նոյն դասա-
 պարտութեան տակն են : Ամենէն բարին և ա-
 մենէն սուրբը ինքզինքը մեծ մեղաւոր մը կը
 ճանչնայ ու Աստուծմէ ամենափոքր շնորհք մը
 ընդունելու ալ անարժան • արարածներէն բնաւ
 մէկը չկրնար մեզ փրկել : Բայց օրհնեալ է
 Աստուած որ Փրկիչ մը ունինք • մէկ անուն մը
 կայ մեզի արուած , որով կրնանք փրկուիլ :
 Միայն մէկ անուն մը , բայց ամենուն ալ կ'օգ-
 տէ • իր արիւնովը և արժանաւորութիւնովը բա-
 լոր մարդկային ցեղը կրնայ արդարանալ , թէ
 որ միայն ապաշխարեն և հաւատան • չկայ այն-
 չափ մեղաւոր մարդ մը՝ որ չկրնայ փրկուիլ թէ
 որ սա Փրկչին երթայ : Յիսուս Քրիստոսով ո՛վ
 որ ուզէ յաւիտենական կեանք կրնայ գանել :
 Որովհետեւ միայն մէկ անուն մը կայ երկինքին
 տակը մարդուս արուած՝ որով կրնայ փրկուիլ ,
 պէտք է որ ջանք ընենք Յիսուսի անունը բո-
 լոր մեր ընկերներուն ճանչցընել : Շատերը կան ,
 որոնք անոր վրայով բնաւ բան մը չեն գիտեր •
 աշխատելու և աղօթք ընելու ենք որ ղինքը
 ճանչնան : Նաև մենք ալ զգուշութիւն ընելու ենք
 որ մի միայն Քրիստոսէն փրկութիւն յուսանք ,
 թէ որ յոյսերնիս ուրիշ էակի մը վրայ դնե-
 լու ըլլանք , կամ թէ որ մեր բարի գործոցը
 ասպաւինելու ըլլանք , Քրիստոս արհամարհած
 կ'ըլլանք , և չենք կրնար փրկուիլ , ինչու որ իր-
 մով միայն փրկութիւն կ'ըլլայ :

20

Ուստի բոլորովին կարող ալ է ապրեցընելու
անոնք՝ որ իրմով Աստուծոյ կու դան • որովհե-
տե ինքք միշտ կենդանի է անոնց համար բա-
րեխօս ըլլալու : Եբբ • է • 25 :

ԱՐԴԱՏԻ սքանչելի է Աւետարանին տու-
ած օրհնութիւններուն առատութիւնը : Յիրաւի
շատ մեծ մսիթարութիւններ կուենանաւք թէ՛ որ
ապահով ըլլալու համար Քրիստոսի պիմենք ,
մեզի պէտք եղած բոլոր բաները կ'ընդունինք •
անով բոլոր կարօտութիւններնիս կը լեցուին :
Թէպէտ Յիսուս Քրիստոս մեզի համար մեռաւ ,
սակայն թէ որ վստահ չըլլայինք թէ ինքք շա-
րունակ մեզ կը հոգայ , յուսահատութեան մեջ
պիտի կյնայինք : Պիտի խորհէինք թէ մենք ա-
նանկ մեղաւոր ենք ու անանկ ապերախս Աս-
տուծմէ հեռանալու , և բոլոր իր մեզի համար
ըրածները մոռնալու անանկ յօժար , որ ար-
գարեա իր համբերութիւնը հատած և իր բարու-
թիւնը սպառած պիտի ըլլայ , և պիտի վախնայինք
թէ ալ յաւիտեանս մեզ պիտի ձգէ : Բայց չէ •
ան որ այնչափ մեզ սիրեց որ մեզի համար մեռաւ ,
հիմա կենդանի է մեզի համար բարեխօսութիւն
ընելու • անիկոյ հօրը առջևը մեր բարեխօսն է •
և արդարեա ամենայաղթ բարեխօս մը ըլլալու է :
Կրնայ մեզի համար իր արժանաւորութիւնները

յառաջ բերել . ճշմարիտ է թէ մեղանչեցիներ ,
բայց ինքը իր արիւնովը ծախու առաւ մեզ :
Ուստի թէ որ ասանկ մէկ բարեխօս մը ունինք
վերը , կրնանք իրմով Աստուծոյ երթալ ամե-
նայն վստահութեամբ . կրնանք մեր աղաչանք-
ները Գրիստոսով մատուցանել , հաւատալով
թէ իրեն համար սխաի լսուին և ընդունուին :
Ի՞նչ մէկ սքանչելի Փրկիչ մը ունինք : Օրհնեալ
Յիսուս՝ մեղի համար ըրածներուդ փոխարէն
ի՛նտոր կրնանք ըստ բաւականին քեզ սիրել և
սրատուել :

21

Ըսաւ անոր երրորդ անգամ . Միմոն՝ Յով-
նանին որդին , զիս կը սիրէս . Պետրոս արամե-
ցաւ որ իրեք անգամ իրեն ըսաւ՝ թէ Ձիս կը
սիրէս . և ըսաւ անոր . Տէր՝ դուն ամէն բան
գիտես , դուն գիտես որ ես քեզ կը սիրեմ . ըսաւ
անոր Յիսուս . Արածէ իմ ոչխարներս . Յով .
ԻԱ . 17 :

ՊԵՏՐՈՍ իր վարդապետը ուրանալովը խիստ
մեծ մեղք գործեց , և անշուշտ խմացաւ թէ
Յիսուս իր սիրոյն վրայ երկբայելու սրտաճառ
ունէր : Բայց դառնապէս զղջաց իր գործած
մեղքին վրայ , և կը փափաքէր իր Վարդապետին

սէրն ու վաստահութիւնը կրկին ձեռք ձգելու .
 աս պատճառով տրամեցաւ երբոր Յիսուս երեք
 անգամ կրկնեց թէ « Զիս կը սիրես » : Ահա
 տենը Վրիստոսի ամենագիտութիւնը մէջ բերաւ
 ըսելով , « Դուն ամէն բան գիտես » . գիտէր
 թէ Յիսուս ամենուն սիրտը կը տեսնէ , և պէտք
 չէ իրեն զրուցել թէ հոն ինչ զգացումներ կան ,
 և թէ անհնար է որ խաբուի . և գիտնալով իր
 անկեղծութիւնը՝ ըսաւ , Դուն գիտես որ ես
 քեզ կը սիրեմ : Բարի է սիրտերը քննող Փրկի-
 չին ասանկ մէկ բողոք մը ընելու , և առանց
 երկբայութեան « Գիտես որ ես քեզ կը սիրեմ »
 ըսելու կարող ըլլալ . թէպէտե քեզի դէմ կը
 մեղանչեմ , և շատ անգամ քեզ կը բարկացը-
 նեմ , թէպէտե ինչպէս որ պէտք է քեզի ա-
 նանկ չեմ ծառայեր , սակայն կը տեսնես որ
 մեղքը չեմ սիրեր , որ կ'ապաշխարեմ , ու որ
 կը փափաքիմ մի միայն քուկդ ըլլալ : Յիսուս
 Պետրոսին գործ տուաւ՝ որ իրեն համար կա-
 տարէ . և այսպէս զինքը սիրողներուն ամենուն
 գործ կու տայ կատարելու . և մեր սիրոյն ան-
 կեղծութիւնը իր փառքին համար ըրած ջան-
 քերովնիս կրնանք ցուցնել :

Քանզի հիմա գիտցայ որ Աստուծմէ կը վախ-
նաս . որովհետեւ քու մէկ հասիկ որդիդ ինծ-
մէ չխնայեցիր : Ծննդ . ԻԲ . 12 :

ՈՒՐԻՇԻ մը վրայ ունեցած սէրերնիս , ա-
նոր համար հաճութեամբ քաշած բաներովնիս
կ'երևայ : Տղայ մը իր հայրը կը սիրէ երբոր ա-
նոր ամենէն ծանր հրամանին անգամ պատ-
րաստ է հնազանդելու , և սղայ մը իր հօրը վրայ
վստահ է երբոր կ'ապաւինի անոր խոստմունքնե-
րուն , մինչև անգամ թէ որ չտեսնայ ալ թէ
ինչ կերպով կրնան կատարուիլ : Աբրահամ
Աստուած կը սիրէր , վասն զի պատրաստ էր իր
սիրելի և մէկհասիկ որդին անոր տալու . ան-
կէց կը վախնար և անոր կը հնազանդէր , վասն
զի երբոր Աստուած ըսաւ որ իր զաւակը իր
ձեռքովը զոհէ , որ գուցէ մարդուս տրուած հը-
րամաններուն ամենէն աւելի ծանրն էր , փու-
թայ Աստուծոյ պատուիրածը ընելու : Ինքը
նաև Աստուծոյ ապաւինեցաւ , քանզի տակաւին
կը հաւատար իր սերնդոցը եղած խոստմունքին .
թէպէտև իր մէկ հասիկ որդին մահուան դատա-
պարտուած էր : Աստուած շատ հաւնեցաւ Աբ-
րահամին ըրածին , և հոս ալ պատմուած է որ
մեզի օրինակ ըլլայ : Աստուած հիմա մեզի չը-
հրամայեր որ սիրելի որդի մը իրեն ողջակէզ

ընենք, հասա միայն մահով մեր սիրելիները
մեզմէ կ'առնէ, և ան ատենը իր վրայ ունեցած
սէրերնիս կրնանք ցուցրնել անոնք իր կամքին
ձգելով: Աստուած մեզ անանկ պարտաւորու-
թիւններ ընելու կրկանչէ որ մեզի ցաւալի կու
գան, բայց թէ որ ճշմարտապէս Աստուծմէ
կրվախնանք ինչ որ հրամայէ փութալու ենք
կատարելու, թէ և մեզի շատ ծանր գան: Եւ
թէ որ ճշմարտապէս Աստուծոյ կրհաւատանք
ամենէն գէշ ժամանակնիս իրեն սպաւինելու
ենք. իր խոստմունքներուն վրայ ամէն ատեն
ասպահով ըլլալու ենք:

23

Ու երբոր Փղշտային ելաւ, ու եկաւ Գաւի-
թին մօտեցաւ, Գաւիթն ալ շուտով պատերազ-
մի ասպարէզը վազեց Փղշտային դիմաւորելու:
Ա. Թագ. Ժ. 48:

ՏԱՐՕՐԻՆԱԿ բան մը երեցած պիտի ըլ-
լայ սարսրիւմ իսրայէլացիներուն և հպարտա-
ցած Փղշտայիներուն պատանի Գաւիթին ա-
ռանց զէնքի իբրև իսրայէլացիներուն ախոյեանը
առաջ վազելը հսկայ Գողիաթին դէմը ելլալու
համար, որ պղինձէ զրահներով հագուած էր.
և որ այնչափ ատեն իսրայէլի բոլոր զօրքը նա-

խատուց : Անոնք կը կարծէին թէ Գաւիթ ան-
շուշտ պիտի յաղթուի , բայց ան մէկ աներե-
ւոյթ պաշտպանութիւն մը ունէր , և անանկ զօ-
րութիւն մը՝ որ իր թշնամիները երազնուն մէջ
անգամ տեսած չունէին : Գողիթին յոյսը նի-
զակին և վահանին վրայ էր , բայց Գաւիթին
յոյսը զօրութեանց Տէրոջը վրայ , և անոր ա-
պուհներովը երկրիս և դժոխքին զօրութիւննե-
րէն ապահով էր : Աստուած կը պատուէ ամէն
անոնք որ յոյսերնին իրեն վրայ դնելով զինքը
կը պատուեն • ամբարտաւան Գողիթը սատկե-
ցաւ՝ չէ թէ զօրաւոր թշնամիի մը սուբովը ,
հասրա պատանիին պարսատիկով նետած քա-
րովը • այսպէս Աստուած ամբարտաւանները կը
ցածցընէ և հողին հետ մէկ կ'ընէ : Աստուծոյ
Ճշմարտութեանը և կամ Աստուծոյ ժողովուրդին
դէմ պատերազմելու համար պարսպ բան է
մարդոցմէ ամենէն զօրաւորին , կամ ամենէն
կատարեալ պաշտպանութեան և կամ ամենէն
զօրաւոր զէնքերու ասրաւինիլը : Ամենակարողն է
իրենց պաշտպանը , և մարդիկներուն բնաւ մէկ
զօրութիւնը անոր դէմ չկրնար կենալ : Թէ որ
Աստուած մեր կողմն է , թէ որ իր ժողովուր-
դին համբանքէն ենք՝ մարդոց մեզի դէմ ըրած
բաներուն բնաւ մէկէն վախնալու բան չունինք :

24

Ան ատենը անոնց աչքերուն դարաւ՝ ու ըսաւ .
Չէր հաւատքին պէս ըլլայ ձեզի : Մատթ . Թ . 29 :

Այ երկու կոյրերը մեծ շնորհք մը խնդրեցին Քրիստոսէն , այսինքն որ աչքերնին բանայ : Բայց առ աղաչանքը ըրին իրեն հաւատալով որ ինքը Դաւթի Արդին ան սպասուած Մեսիան է , որուն արտօնութիւնն էր կոյրերուն աչքը և խուլերուն ախանջը բանալը , ու մեռելները յարուցանելը : Յիսուս՝ իրմէն որչափ մեծ բաներ որ կ'ուզէին , կ'ընէր , և անոնք կը հաւատային որ բոլոր ուղածնին ընելու կարող էր . անխիկայ կամեցաւ որ իրենց հաւատքին պէս ըլլայ իրենց , ու աչքերնին բացուեցաւ : Յիսուս երբոր աշխարհիս մէջն էր ամենուն իրեն հաւատքին չափովը կու տար . Վախճանայումի մէջ շատ մեծ գործքեր չորաւ իրենց անհաւատութեանը համար . բայց հաւատքով իրեն եկողներուն ամենուն իր գորութիւնը ցուցուց բժշկելով անոնք և ազատելով : Հիմա ալ Յիսուս նոյն կանոնով կու տայ իր հոգևոր օրհնութիւնները . երբոր ազօթքով իրեն կ'երթանք և մէկ շնորհք մը կը խնդրենք որուն կարօտ ենք , կատարեալ հաւատք ունենալու ենք իրեն անոնք տալու կարողութեանը և գորութեանը վրայ : Պատուելու ենք զինքը իր խոստումներուն վրայ շատ հաս-

տաստ յոյս ունենալով , և պիտի լեցընէ սրտեր-
նուս բոլոր փափաքները : Իր շնորհաց աղբիւրը
անհասնում է , և կրնանք երթալ իրեն բոլոր
մեր յանցանքներովը ու չարութիւններովը , և մե-
ծամեծ օրհնութիւններ խնդրել կորսուող հո-
գիներնուս համար , և մեր հաւատքին պէս պի-
տի պարգևէ մեզի իր շնորհքները :

25

Բարի է գոհանալ Տէրոջմէն , ու սաղմոս ը-
սել քու անուանդ՝ ո՛վ Բարձրեալ : Սաղմ .
ՂԲ . 1 :

ԱՄԷՆ ճշմարիտ քրիստոնեայ կը զգայ որ
բարի է Աստուծոյ աղօթք ընելը , նեղութեան
ատեն իրեն աղաղակելը , և ամէն պէտք եղած
շնորհքները իրմէն խնդրելը : Անոնք փորձը ա-
ռած են թէ ինքը որչափ կը մօտենայ բոլոր ա-
նոնց՝ որ իրեն կ'աղաղակեն , և թէ որչափ պատ-
րաստ է իրենց խնդրուածքները կատարելու .
բայց գուցէ ամէնքն ալ գոհութիւն չեն մա-
տուցաներ : Ըստ բաւականին չենք զգար թէ
որչափ բարի է Տէրոջը գոհութիւն մատուցանե-
լը , և իր անունին սաղմոս երգելը . և սակայն
ասկէց աւելի բնական պարտաւորութիւն մը
չկայ : Աստուծոյ մեզի պարգևած շնորհքները

անհամար են • անոնք ամէն օր կը նորոգուին և ամէն բոպէ կը շարունակուին • անոնք շատ մեծ և սրտառական շնորհքներ են : Աստուծոյ մեզի պարգևած օրհնութիւններուն արժէքը մտքերնիս չենք կրնար սղմեցնել , և մի՞թէ պարտաւոր չենք շատ գոհութիւն մատուցանել : Ամենեին չենք կրնար իր ողորմութիւններուն մեծութեանը համեմատութիւնովը իրմէն գոհանալ , բայց մեր տկար զօրութեանը չափովը իրեն փառաբանութիւն մատուցանելու ենք : Նաև բարի է Տէրոջը սաղմոս երգելը իր էութեանը վրայ • Եւ այնք է որ բարձրացընենք իր սրբութիւնը՝ արգարութիւնը՝ սէրն ու ողորմութիւնը : Արչափ որ փառաբանութիւն մատուցանենք իրեն , այնչափ մեր սիրտերը կը լեցուին իր սրտառական նութեան զգացումովը , և այնչափ առաւել իր պատկերին կերպարանակից կ'ըլլանք : Փառաբանութիւնը երկնային գործ մըն է , և հօս որչափ որ Աստուած փառաբանենք՝ այնչափ պատրաստութիւն կ'ունենանք երկնից մէջ եղած գործքերուն և վայելչութիւններուն :

Ու անիկայ ըսաւ . Իսրայէլը ես չնեղեցի ,
հապա դուն ու քու հօրդ տունը . քանզի
Տէրոջը պատուիրանքները թողուցիք , ու Բահա-
ղիմին ետևէն դացիք : Գ թագ . ԺԼ . 18 :

ԱՍԻԿԱՅ քաջ մէկ պատասխան մըն էր որ
Եղիան տուաւ Աքաաբ չար թագաւորին որ
զինքը մեռցընել կ'ուզէր : Երեք տարիէն աւելի
էր որ Իսրայէլացւոց մէջ սով կար , և բոլոր
ան ժամանակը ոչ անձրև եկաւ և ոչ ցօղ իջաւ :
Եղիան աս բանը առաջուց ըսաւ , և հիմա Աքաաբ
չարախօսութիւն կ'ընէ անոր վրայ թէ ան էր Իս-
րայէլացիներուն նեղութիւն տուողը : Եղիան ա-
ռանց վախի պատասխանեց թէ , Ես չեմ Իս-
րայէլին նեղութիւն տուողը , հապա դուն և
քու հօրդ տունը : Արդարները ամէն երկիրնե-
րու օրհնութիւն են . Աստուած շատ անգամ
իրենց համար կը խնայէ և կ'օրհնէ բոլորտիքին
եզող չարագործութիւն ընողները : Բայց չա-
րերը ամէն տեղ անէծք են . անոնք իրենց օ-
րինակովը և ջանքերովը ուրիշները չարին կ'ա-
ռաջնորդեն , և Աստուած մարդիկ կը պատժէ
մեղքի պատճառաւ : Չար մարդու մը վիճակը
որչափ բարձր ըլլայ , այնչափ չարիք կը բերէ
իր ազգին վրայ : Աքաաբ թագաւոր էր և իր
օրինակովը բոլոր Իսրայէլացիները խտորեցուց .

արհամարհեց Տէրօջը պատուէրները , և Բա-
հայկմին հեռուեցաւ ու բոլոր ազգն ալ իրեն
հետը մոլորցուց • ասանկով Աստուծոյ բարկու-
թիւնը անոնց վրայ դաշուն պատճառ եղաւ • ու
վերջը սոսկալի հաշիւ մը պիտի տար Աստուծոյ
բոլոր իր ըրած չարութիւններուն համար : Նոյն
պէս ամէն ուրիշներուն մեղք գործել տուողը ,
թէ բարձր աստիճանի մարդ ըլլայ և թէ նու-
ասա , սոսկալի հաշիւ մը պիտի տայ Աստուծոյ
իր ըրածներուն համար :

27

Ու եօթներորդ անգամին ըսաւ • Ահա՛ ծովէն՝
մարդու թաթի չափ պղտիկ ամպ մը կ'ելլէ , ու
անիկայ ըսաւ • Եւր , Ա. քաարին ըսէ • կառքդ
լծէ ու իջիր , որ անձրևի չբռնուիս : Գ. Թագ •
ԺԸ • 44 :

ԵՂԻԱ բոլոր Իսրայէլացւոց բերնէն խօսք
առաւ թէ Տէրը Աստուած է • և Բահայկին մար-
գարէները մեռցուց , ետքը դնաց և աղօթք ըրաւ
որ ան երկրին վրայ կրկին անձրև դայ : Եղիան
մեղի պէս կիրքի տակ ինկած մարդ մըն էր ,
բայց ջերմեռանդութեամբ և հաւատքով աղօթք
ըրաւ , և Աստուած ըսեց իր ձայնը ու չար Իս-
րայէլացիներուն ողորմելով անոր պատասխանեց :

Մենք ալ նոյն աղատութիւնը ունինք Աստուծոյ մօտենալու, և Եղիային պէս մեր աղաչանքները մատուցանելու, և Աստուած հիմա ալ ան առնինն պէս սրտորաստ է հաւատքով եղած աղօթքը մտիկ ընելու: Ուրեմն թէ որ աղօթքին զօրութիւնը կրցածնուա չափ դործի դնենք, չարութեան մէջ թաղուած աշխարհիս վրայ մեծ օրհնութիւններ իջեցընելու միջոց կրնանք ըլլալ: Եղիա կատարեալ յոյս ունէր որ իր աղօթքները պիտի լսուին, և կը սպասէր որ պատասխան մը առնէ. շատ անգամ չենք սպասեր մեր աղօթքներուն պատասխանը առնելու. կը խնդրենք ու կ'անցնինք կ'երթանք իբր թէ ընդունելու յոյս չունինք: Եղիան շարունակեց իր աղօթքը. մէկէնիմէկ պատասխան չընդունեց, հապա կրկին և կրկին աղօթեց. մենք ալ նոյնպէս միշտ աղօթելու ենք: Աստուած երբեմն իր տալու օրհնութիւնը ժամանակ մը կ'ուշացընէ մեր հաւատքը փորձելու համար. բայց ժամանակին պիտի հնձենք թէ որ կատարեալ յոյսով մեր աղաչանքներուն պատասխանին սպասենք:

Եւ ինտոր Մոզսէս անաստառին մէջ օձը բարձրացուց, անանկ ալ պէտք է որ Արդին մարդոց բարձրանայ. Ար ամէն ո՛վ որ անոր հաւատայ՝

Ճորսուի , հասցա յաւիտենական կեանք ունե-
նայ : Յով . Գ . 11 , 15 :

ԵՐԲՈՐ Իսրայէլացիք անապատին մէջ օձե-
րուն խայթէն կը մեռնէին , որոնք Աստուած իբ-
րև պատիժ անոնց վրայ խրկեց , հաւատալի
բան պիտի չերևնար որ եթէ մէկը պղինձէ օձի
մը նայի , անիկայ պիտի կարենայ այն մահաբեր
վէրքին ազդեցութենէն ազատիլ : Բայց աս բա-
նը Աստուածային պատուէր մըն էր , և ով որ
Աստուծոյ կը հաւատար ու անոր կը հնազանդէր
պղինձէ օձին կը նայէր ու կը բժշկուէր : Մենք
մէկ հոգևոր ախա մը ունինք որ անապատին
մէջի օձերուն խայթէն շատ սոսկալի է . աս
ախաք մեղքն է , և իր ազդեցութիւնը մարմինին
վրայ չէ հասցա հոգիին . չէ թէ միայն ժամա-
նակաւոր , հասցա յաւիտենական մահ ալ կը
պատճառէ : Մենք ինքզինքնիս աս ախտէն չենք
կրնար ազատել , և ոչ երկրաւոր զօրութիւն
մը կարող է մեզի մէկ դեղ մը ճարել : Բայց
Աստուած չթողուց մեզ որ առանց յոյսի կոր-
սուինք . իր սիրելի Որդին տուաւ որ մենք փրկ-
կուինք : Յիսուս Քրիստոս խաչը ելաւ մեր մեղ-
քերը քաւելու համար . հիմա բոլոր աշխարհք
կրնայ իրեն նայիլ և ասցիլ : Աս դեղը առնելը
գիւրին բան է . ամէն մարդ կրնայ անկէց օ-
գուտ քաղել . մենք անօգնական ողորմելիներս
մեր մեղքերուն մէջը մեռած՝ և բոլորովն աղ-

կարութիւնով պատած , ուրիշ բան մը ընելիք չունինք , հասլա միայն հաւատոյ աչքերնիս խաչին վրայ բևեռեալ Յիսուսին վերցընելու ենք ու պիտի ասորինք : Հաւատալու ենք Աստուծոյ իր Որդիին և վրկութեան մէկ հասիկ ճամբուն վրայ բոլոր ըսածներուն , և միայն Քրիստոսի ասպաւինելու ենք և յաւիտենական կեանք պիտի ունենանք :

29

Ան որ Որդիին կը հաւատայ , յաւիտենական կեանք ունի . և ան որ Որդիին չհնազանդիր , անիկայ կեանք պիտի չաեսնէ . հասլա Աստուծոյ բարկութիւնը անոր վրայ կը մնայ : Յով . Գ . 36 :

ՔՐԻՍՏՈՍԻ հաւատացողները չէ թէ միայն մեռնելուն ետքը հանդերձեալ աշխարհին մէջ յաւիտենական կեանք ունենալու խոստմունքը առած են , հասլա անոնք նոյն աս կեանքիս մէջ ալ յաւիտենական կեանքը կ'ունենան : Երբոր կը դգան թէ նորէն ծնած են , անատենը կ'ընդունին ան նոր հոգևոր կեանքը՝ որ ալ յաւիտեանս յաւիտենից իրենց ներսը պիտի աճի : Իրենց հոգիներուն կենսական շնչառութիւնը առջի բերանը տկար և անզօր կ'ըլլայ , բայց յա-

Վիտեանս յաւխտենից զորանաչու վրայ պիտի ըլ-
 լայ : Անոնց սրտերուն մէջ գոյացած աս երկ-
 նային կեանքը ասով յայտնի կ'ըլլայ՝ երբոր ու-
 թիշ նոր աչքով մը կը տեսնեն մեղքին չարու-
 թիւնը, և Աստուծոյ փառաւոր ստորագելիքնե-
 րուն վրայ նոր խնացումներ կ'ունենան, Քրիս-
 տոսի սիրոյն վրայ նոր զգացումներ կ'ունենան,
 և փրկութեան փառաւոր ճամբան նոր պայծա-
 րութիւնով մը կը տեսնեն, որոնց վրայ ամենե-
 լին զգացում մը չունէին, դեռ որ յանցանաց
 և մեղքի մէջ մեռած էին : Քրիստոսի հաւատա-
 ցողներուն ամէնքն ալ յաւխտենական կենաց աս
 սկզբնաւորութիւնը կ'ունենան : Բայց Քրիստոսի
 չհաւատացողները կեանք պիտի չտեսնեն • անոնք
 մէկ հատիկ կեանք տուողէն երեսնին կը դար-
 ձնեն • կորսուած մեղաւորները մի միայն Քրիս-
 տոսի հաւատաչով կրնան ապրիլ, և թէ որ աշ-
 խարհիա մէջ եղած ատեննին աս հաւատոյ կեան-
 քը չսկսին, վերջը յաւխտենական մահով պիտի
 կորսուին : Եւ Աստուծոյ մեր Արարչին բար-
 կութիւնը անոնց վրայ կը մնայ, որուն ձեռքն
 ենք մենք ամէնքս ու յաւխտեան անոր ձեռքը
 պիտի մնանք : Ո՞վ կրնայ Աստուծոյ Բարկաւիւնը
 խօսքին իր մէջը պարունակած ահարկութիւն-
 ները ցուցնել : Օրհնեալ Փրկիչ՝ Աստուծոյ
 բարկութենէն քեզմով ազատութիւն դոնեմ :

Վոյրերը կը տեսնեն , կաղերը կը քալեն , բորոտները կը մաքրուին , խուլերը կը լսեն , և մեռելները յարուժիւն կ'առնեն , ու աղքատներուն Աւետարան կը քարոզուի : Մատթ . ԺԱ . 5 :

ԱՍՏՈՒԱԾ մարդու բանականութիւն տուաւ և չարահանջեր որ բանականութեան գէմբան ընեն . չարահանջեր մեզմէ որ մէկ բանի մը հաւատանք առանց բաւական վկայութիւն տալու որ հաւատանք : Երբոր մարդոց Մեսիս մը տալ խոստացաւ , ցուցուց որ զինքը ճանչնալու նշաններէն մէկը ան էր որ Աստուածային մարդասիրութիւնով հրաշքներ պիտի գործէ : Եւ երբոր Յիսուս Քրիստոս աշխարհք եկաւ , չարահանջուեցաւ որ մարդիկ զինքը ընդունին առանց յայտնի վկայութեան անոր իրօք Աստուծմէ ըլլալուն : Իր գործքերը իրեն վկայ էին ինչու որ մէկը չէր կրնար իր ըրած հրաշքները գործել առանց Աստուածային զօրութեան : Եւ աս իր գործքերը համաձայն էին իր աշխարհք դալու զիտաւորութեանը . մարդիկ օրհնելու եկաւ , և անդին ասդին շրջեցաւ բարի գործքեր ընելով : Իր հրաշագործութիւնները իրեն համար չէին , հասցաւ ուրիշներուն համար . կոյրերը կը տեսնէին , խուլերը կը լսէին , կաղերը կը քալէին , և մինչև անգամ մեռելները յարուժիւն կ'առնէին .

ուր որ կ'երթար խեղճ ու թշուառ մարդիկ ու
բախուժիւնով կը լեցուէին : Ուրեմն կարգէ դուրս
բան է որ մարդիկ զ'նքը ցնծալով չընդունեցին
ու չբարևեցին , և ուրախութեամբ իրեն չհա-
ղանդեցան : Բայց ինքը սուրբ էակ մըն էր , և
մարդիկ մեղքը կը սիրէին , և արհամարհեցին
զինքը , քանզի չէին ուզեր մեղքերնին ձգել :

31

Եւ աս է դատապարտութիւնը՝ որ լոյսը
աշխարհ եկաւ , ու մարդիկ խաւարը լոյսէն ա-
ւելի սիրեցին • ինչու որ իրենց դործքերը չար
էին : Յովհ • Գ • 19 :

ԱՆՈՆՔ մեղքը կը սիրեն ճշմարտութիւնը
տեսնել չեն ուզեր • չեն ուզեր իրենց պար-
տաւորութիւնները սորվիլ , կամ սուրբ վարք
մը ունենալ , քանզի անանկները աս աշխարհէս
կը դատապարտուին : Քահանայապետները Նը-
պիրները և Փարիսեցիները Քրիստոսը արհամար-
հեցին , թէպէտև շատ աղէկ գիտէին թէ ինքը
Մեսիան էր : Նքը անանկ կը խօսէր՝ որուն պէս
մարդիկ բնաւ խօսած չունէին • բոլոր իր պատուի-
րանքները և վարդապետութիւնները կը ցուցը-
նէին թէ ինքը երկինքէն էր • բայց ինչ պար-
տաւորութիւններ որ կը դնէր անոնց վրայ , և

ինչ ճշմարտութիւններ որ կը խօսէր բոլորը
անոնց յանդիմանութիւն էին , և իրենց ըն-
թացքը կը դատասպարաէին : Ինքը հոգիով
աղքատներուն երանի կու տար , բայց անոնք հո-
գիով հպարտ էին : Ինքը կը սորվեցընէր թէ
ամէն մարդ մեղաւոր է , բայց անոնք ինքզինք-
նին արդար կը սեպէին : Ինքը կը սորվեցընէր
թէ Աստուծոյ ընդունելի երկրպագութիւն ընե-
լու համար սրաի մաքրութիւն սէտք է , բայց
անոնց սրբութիւնը արտաքին արարողութիւննե-
րու վրայ էր , և սրտերնին ամէն տեսակ պղղ-
ծութիւնով լեցուն կը պահէին : Եւ օրինակով
ալ կը դատասպարաէր զանոնք • իր հեղ խոնարհ
ներողամիտ և երկնային բարքը յայննի կը ցու-
ցընէր անոնց հպարտութիւնը՝ վրէժխնդրութիւնը
և աշխարհային միտքը • ասոր համար կ'արհա-
մարհէին զինքը և իր վարդապետութիւնները •
խաւարը կը սիրէին , ինչու որ իրենց դործքերը
չար էին : Բայց Քրիստոս ու իր ճշմարտութիւնը
արհամարհողները միայն Դափրներն ու Փարի-
սեցիները չեն • հիմա ալ շատերը կան՝ որոնք նոյն
պատճառով զինքը չեն ընդունիր : Մեղքը կը
սիրեն և անոր համար Աւետարանին հաւատալ չեն
ուզեր , քանզի Աւետարանը մեղքը թողուլ և
սրբութեան դառնալ կը պահանջէ :

() Գ ՝ Ո Ս Տ Ո Ս

1

Բայց ան որ ճշմարտութիւն կը գործէ , լայն
սին քովը կու գայ , որ իր գործքերը յայտնի
ըլլան թէ Աստուծով գործուեցան . Յով . Գ .
21 :

ԿՐՆԱՅ ըլլալ որ մարդիկ ճշմարտութիւնը
լսեն , անիկայ ճանչնան ու անկէջ յաղթուին ,
և սակայն լոյսը ատեն ու խաւարը սիրեն :
Երբոր մարդ մը անգամ մը կը սկսի ճշմար-
տութեան սրահանջմունքները կատարել և իր
սրտին զգացումները և իր գործքերը անոր հա-
մաձայնել , ալ անատենը խաւարը լոյսէն աւել-
ի չսիրեր : Ան ատենը լոյսը գանել և անոր
մէջը քաշել կ'ուզէ , անատենը կը ջանայ ճշմար-
տութեան վրայ աւելի բան գիտնալու , և փափա-
քելու որ ճշմարտութիւնը իր բոլորակքը եղող-
ներն ալ ճանչցած ըլլային : Ալ անկէ ետև
ճշմարտութիւնը զինքը չգտտապարտեր , քանզի
իր վարքը քիչ շատ անոր համաձայն է . անկէ
ետև ամէն որ անիկայ կը սորվի , կ'ուզէ որ իր
գործքերը անով փորձէ : Իր զգացումները և

ըրածնէրը Աւետարանին պահանջմունքներուն հետ
կը բաղդատէ, և երբոր կը գտնէ թէ անոնց մէջ
համաձայնութիւն կայ, կ'ուրախանայ որ Աստուծոյ
մով գործուած են, վասն զի մի միայն Աստուծոյ
Հոգւոյն մարդուս սրտին մէջ ազդած սրբարար
չնարհքովն ու զօրութիւնովն է, որով մարդս
կը կարողանայ սուրբ զգացում մը ունենալ
կամ բարի գործ մը գործել:

2

Իս երեսէդ մի ձգեր, ու քու Սուրբ Հոգիդ
ինձմէ մի հաներ: Սաղմ. ԾԱ. 11:

ԱՄԷՆՔԻՍ ալ Աստուծոյ երեսէն իյնալու
արժան էնք. թէ որ հիմա իր ողորմութիւնը
մեր վրայէն վերցընէ և մեզի յաւիտեան մէկ
բարութիւն մը չտայ, չենք կրնար և իրաւունք
չունինք գանգատելու թէ Տէրը մեզի անգթու-
թիւն և անիրաւութիւն կ'ընէ: Մեր մեղքե-
րուն համար յաւիտենական մահուան արժանի
ենք, և իր ողորմութիւնն ու երկայնամու-
թիւնը անասման ըլլալուն համար է, որ տա-
կաւին յուսոյ աշխարհին մէջն ենք, և կրնանք
աղաղակել իրեն ըսելով, Իս քու երեսէդ մի
ձգեր: Իր ներկայութիւնը երկնից ուրախու-
թիւնն է. իր ներկայութեան զգացումը հաւա-

տացեալին սիրտը ցնծութիւնով կը լեցընէ հոս
 աս աշխարհիս մէջ, և դեռ աս կեանքէս չե-
 լած արդէն երկինքին մէջ եղածի պէս կը թուի
 իրեն: Իր երեսէն ձգուիլը՝ աս աշխարհիս մէջ
 մեղաց և թշուառութեան ճամբուն մէջ իյնալն է,
 և հանդերձեալ աշխարհքն ալ յաւիտենական
 տրտմութեան մէջ մնալը: Ուստի ամէն օր աղա-
 շէնք Սաղմոսերգութիւն հեա, « Իս երեսէդ մի ձը-
 գեր, ու քու սուրբ Հոգիդ ինձմէ մի հաներ »:
 Սուրբ Հոգին միայն կրնայ պահել մեզ սրբու-
 թեան և խաղաղութեան ճամբուն մէջ. միայն
 իր օգնութիւնովն է որ սոսկալի մեղքերու մէջ
 իյնալէ ապահով և զերծ կ'ըլլանք: Եթէ մեր
 մէջը բարի բան մը ըլլայ, անիկայ իր ձեռքին
 գործն է: Ան է սրտերնուս մէջ սէր բորբո-
 քողը. ան է մեր հաւատքը զօրացունողը մեզի
 խոնարհութիւն և զղջում տուողը, և փորձու-
 թեան ատեն մեզ բանողը. թէ որ մեզ ձգէ՝
 կորսուեցանք: Ուրեմն զգոյշ ըլլալու ենք որ
 մեր մեղքերովը Աստուած չբարկացընենք որ իր
 Հոգին մեզմէ հանէ, հապա որ շարունակ մեր
 մէջը մնայ:

3

Եւ Մարիամ ըսաւ. Ահա ես Տէրոջը աղա-
 խիմն եմ, քու ըսածիդ պէս թող ըլլայ ին-
 ծի: Լուի. Ա. 38:

ԱՄԻԿԱՅ ճշմարիտ հաւատքի գեղեցիկ օրինակ մըն է . երբոր Զաքարիային որդի մը ունենալու խոստմունքը եղաւ , չհաւատալիք ըրաւ , և իր անհաւատութեանը համար լեզուն կապուեցաւ . բայց երբոր խոնարհ Մարիամին աւելի մեծ բանի մը խոստմունքը եղաւ՝ խիոյն հաւատաց : Խոստացուած բանը աշխարհիս ըսկիզբէն ՚ի վեր չեղած մէկ բան մըն էր . և Մարիամ կրնար ըսել թէ հաւատալի բան չէ որ այնքան ժամանակ առաջուց խոստացուած Մեսիան ինծի պէս աննշան և վար աստիճանի կնոջ մը որդին ըլլայ : Հրեաները կը սպասէին մէկ քաջայարթ թագաւոր մը իրենց Փրկիչ գալու , և Մարիամ պատճառ ունէր երկբայելու թէ արդեօք իրեն պէս աղքատութիւնով պիտի աշխարհք գայ : Բայց չհաւատացող սիրտը թէև շատ տարակուսանքներ կրնայ դանել , թէև առ բանը մարդոց աչքին կրնայ շատ անհաւանական երևալ , բայց սակայն Մարիամ աղէկ գիտէր որ իր ընդունած պատգամը Տէրոջմէն էր , և այսչափը իրեն բաւական էր : Տէրն էր ան բանը ըսողը , և իր ամէն երկբայութիւնները փարատեցան , և ինքը սրտի մտօք ինքզինքը Աստուծոյ ձեռքը յանձնեց , անոր դիտաւորութիւնները կատարուելուն մէկ գործիք մը ըլլալու : Յիսուս Քրիստոսի մայրը ըլլալը իրեն մեծ երանութիւն մըն էր , և իր հաւատքովք օրհնուեցաւ , որով Տէրոջը իրեն յայանածները բոլոր սրտով և պարզմտութեամբ ընդունեց :

4

Բայց Մարիամ առ ամէն բաները կը պահէր, և իր սրտին մէջը կը մտածէր : Ղ. 19 :

ՄԱՐԻԱՄ իր որդիին վերաբերեալ շատ գաղափարներ ունէր խորհելու : Քրիստոսի գալէն առաջ անոր գործին ինչ ըլլալը մարգարէները անգամ աղէկ հասկըցած չէին, որոնք առաջուց անոր գալը զուցեցին, ինչպէս որ կ'իմանանք Պետրոսի Առաջին թուղթին Առաջին, Գրուելիէն . անոր համար հասարակութիւնն ալ անոր հանդամանքներուն վրայ շատ քիչ տեղեկութիւն ունէր : Բայց առ որդիին խոսամունքը Մարիամ երկինքէն իջած հրեշտակէ մը ընդունեց, և իրեն ըսուեցաւ որ անիկայ Բարձրեալին Որդին պիտի ըլլայ, և իր Գաւիթ հօլը աթոռը պիտի ժառանգէ : Անոր ծննդեան ժամանակը հրեշտակները Բեթլէհէմի հովիւներուն խնայուցին, և ասաղ մը երեցաւ երկինքը մտղերը արևելքէն անոր եղած տեղը առաջնորդելու համար . և անոնք եկան ու անոր երկըստադութիւն ըրին, և պատուական ընծաներ բերին : Չարմանք չէ որ առ բաները լսողներուն ամէնքն ալ կը սքանչանային, և յատկապէս Մարիամ իր մայրը իր սրտին մէջ անոնց վրայ կը մտածէր : Բոլոր առ բաները ինք ջը-

հասկըցաւ, մինչև որ փրկագործութեան ճամբան կատարեցաւ, Քրիստոսի երկինքը համբաննալովը՝ ու Սուրբ Հոգիին իջնալովը հաւատացելոց մտքերը լուսաւորելու : Բայց իր Որդիին խոստացուած Մեսիան ըլլալը զգալու համար բաւական բան գիտէր . և թէպէտ կարող չեղաւ բոլոր անոր վերաբերեալ բաները հասկընալ, սակայն ան զօրաւոր հաւատքը ունէր, որով Աստուծոյ խօսքին ապաւինեցաւ և ամէն բանին յայտնուելուն սպասեց :

3

Եւ ըսաւ անոնց . զիս ինչո՞ւ կը փնտրուէիք, չէիք գիտէր թէ ինձի պէտք է որ իմ Հօրս տունը ըլլամ : Ղուկ . Բ . 49 :

ՅԻՍՈՒՍ Քրիստոս Աստուծոյ կամքը ընելու համար աս աշխարհս եկաւ . և աս բանը միշտ իր աչքին առջևն էր : Երբոր գեռ տասներկու տարեկան տղայ էր տաճարին մէջը մընաց վարդապետներուն հետ, անոնց ըսածները մտիկ կ'ընէր և անոնց հարցումներ կ'ընէր : Իր մայրը տրամած զինքը փնտռեց և երբոր գտաւ քաղցրութեամբ մը անիկայ յանդիմանեց իրենք ձգելուն համար . բայց ան պատասխան տուաւ և ըսաւ, թէ պէտք է որ Հօրս գործին ետեւն

ըլլամ : Գէտի իր երկրաւոր ծնողացը պարտաւորութիւններ ունէր ընելու , բայց իր մեծ գործը ան չէր : Իր Հայրը երկինքէն մէկ մեծ գործով մը զինքը աշխարհք խրկեց . ուստի պարտրկան էր անխկայ ընել : Իր գործն էր Աստուծոյ օրէնքին հնազանդիլ և մարդոց մեղքերը քաւել . իր սուրբ վարքովը իր անսպառ մարդասիրութիւնովը և իր մահովը մարդկային սևոր օրհնել : Ինքը միշտ իր աս մեծ գործին կը նայէր . և կ'աշխատէր ու ամենեին մէկ դիչէր ձգէր , մինչև որ ամէնը կատարուեցաւ և իր առջի տեղը համբարձաւ : Յիսուս Քրիստոս աս բանին մէջ մեղի օրինակ է . մենք ալ մեր Հօրը գործը ընելու ենք . աս աշխարհս չեկանք մեր ուզածները ընելու , մեր անձին զուարճութիւնները փնտռելու , հասցա Աստուած փառաւորելու : Մեր էութեանը աս մեծ վախճանը միշտ միտքերնիս ըլլալու է , և մեր Հօրը գործը կատարելու համար ապրելու ենք :

6

Եւ իջաւ անոնց հետ՝ ու գնաց Նազարէթ , և անոնց հնազանդ էր : Առի . Բ . 51 :

ՅԻՍՈՒՍ Քրիստոս Աստուծոյ օրէնքին կատարեալ հնազանդութեան օրինակ մըն էր . թէ

սկսուեալ Վատուծոյ՝ յաւխտենաական Որդին էր, և մեծ
 դործ մը ունէր կատարելու՝ որ էր աշխարհիս
 փրկութիւնը, սակայն իր հայրը ու մայրը պա-
 տուելը չմտցաւ: Անոնց հետ ատելի սեպուած
 Նազարէթ քաղաքը իջաւ և անոնց հնազանդ
 էր: Ինքզինքը անոնց իշխանութեանը խոնար-
 հեցուց, թէպէտև ինքը հրեշտակներուն և մար-
 դոց Տէրն էր: Առաջ զաւկի մը դէպի իր ծը-
 նողացը խննեցած պարտաւորութիւնները կատա-
 րեց, և խոնարհութեան ու որդիական հնազան-
 դութեան առաքինութիւնները ցուցուց և ետքը
 իր հրապարակաւ ընելու դործին սկսեց: Ան
 անանկներ որ կը խորհին թէ այնչափ մեծ պար-
 տաւորութիւններ ունին ընելու որ դէպի իրենց
 ծնողացը ունեցած պարտաւորութիւններնին չեն
 կրնար կատարել: Բայց ասանկները Քրիստոսի
 հարազատ հետեողներ չեն, քանզի ինքը իր
 ան մեծ դործին մէջ իր հօրը և մօրը հը-
 նազանդութիւն ցուցուց: Ինքը շատ սքանչելի
 կերպով մը Վատուծոյ՝ «Պատուէ՛ քո հայրդ և
 մայրդ» պատուիրանքին օրինակը տուաւ:

7

Անոնք աշխարհէ չեն, ինտոր որ ես աշխարհէ չեմ : Յովն . ԺԷ . 16 :

ՅԻՍՈՒՍ Քրիստոս թէպէտև անձամբ աշխարհիս մէջն էր, սակայն ինքը աշխարհէ չէր . բոլոր իր զգացումներովը և գործքերովը բոլորտիքը եղած ամբարիշտներէն անանկ տարբեր էր, որ անոնք իմացած պիտի ըլլան թէ իրենց հետ հաղորդակցութիւն մը չունէր . իր սուրբ վարքը կը ցուցնէր թէ ինքը երկինքէն էր ու չէ թէ աշխարհէս : Անանկ ալ իր աշակերտները աս աշխարհէն չեն . և որչափ որ անոր հոգին կ'ընդունին՝ անոր տուած օրինակին կը հետեւին, այնչափ առաւել յայտնի կ'ըլլայ աս ճշմարտութիւնը . իրենց գործքերը աս աշխարհիս շարժառիթներովն ու կանոններովը չեն ըներ : Մարդիկ գործքերնուն կանոնը ընդհանրապէս իրենց անձին շահը կ'ընեն, և դիտաւորութիւննին երկրաւոր պատիւ և հարստութիւն ձեռք բերելէն զատ ուրիշ բան չէ : Բայց Քրիստոսինը յեղոյները իրենց կենաց կանոնը Աստուծոյ խօսքը կ'ընեն և իրենց վախճանը Աստուծոյ հաճոյ ըլլալ և ղինքը միտաւորել է : Աստուածաշունչին պատուէրները աշխարհի իմաստութեան ըսկըզբունքներուն անանկ հակառակ են՝ որ անոնք բանողներուն և ուրիշ մարդոց մէջ շատ մեծ

տարբերութիւն մը կ'երևայ : Նաև անոնք աս
աշխարհէս չեն , անոր համար որ սրտերնին
յոյսերնին ամէնը երկնաւոր բաներու վրայ են .
Թէպէտև աշխարհիս մէջն են , սակայն իրենց
ուզած բաները գլխաւորապէս հոս չեն և ի-
րենց գանձերը հոս չեն դիզեր : Իրենց բընա-
կութիւնը հոս չէ . միշտ հոս մնալ չեն ուզեր .
կը յուսան որ աս աշխարհս շուտով պիտի ձը-
գեն և երթան յաւիտեան վերը իրենց Տէրօջը
քով բնակին :

8

Ո՛վ հայր՝ անոնք որ գուն ինձի տուիր ,
կ'ուզեմ որ ուր որ ես եմ , անոնք ալ իմ
հետս ըլլան , որպէս զի տեսնեն իմ փառքս՝
որն որ ինձի տուիր . ինչու որ գուն զիս սի-
րեցիր աշխարհիս սկիզբէն առաջ : Յով . ԺԷ . 24 :

ՅԻՍՈՒՍ Քրիստոս իր արիւնը թափեց մար-
դիկ մահուանէ ազատելու համար , բայց իր դի-
տաւորութիւնը անոնք միշտ աս մեղքով և ան-
թիւ վտանգներով լեցուն աշխարհքիս մէջ ձը-
գել չէր : Մեծ և պատուական դիտաւորութիւն
ներ ունի իր ծախու առաձներուն համար . կ'ու-
զէ որ ինք ուր որ է անոնք ալ հոն ըլլան :
Հօրը աղաչեց որ ասանկ ըլլայ , և հայրը միշտ

իրեն կը լսէ : Հիմա առ ինդրուածքը շարունակ
 կը կատարուի , և Քրիստոսի աշակերաները մե-
 կիկ մէկիկ առ աշխարհքը կը թողուն և իր քովը
 կ'երթան : Քրիստոնեան երբոր կը մեռնի՝ խա-
 լարին : մէջ չմնար , հասլա վեր կ'երթայ Քրիս-
 տոսի քով մնալու և անոր փառքը տեսնելու :
 Աստ անգամ Քրիստոնեաներուն հարկ կ'ըլլայ
 որ ամօթով նախաախնիքով և նեղութիւնով
 Քրիստոսի ետեէն երթան . Քրիստոս հոս սլա-
 տիւ չունի : Բայց երբոր իր բարեկամները իր
 եղած տեղը կ'առնէ , անատենը իր փառքը սփ-
 տի տեսնեն : Պիտի տեսնեն որ երկինքին բոլոր
 զօրքերը՝ հրեշտակներն ու արդար մարդոց հո-
 դիները անիկայ կը փառաբանեն , և ինքը հօրը
 բոլոր փառքովը պատած է : Ասանկ մէկ փառք
 մը մտքերնիս չենք կրնար սղմեցընել , բայց թէ
 որ իրենն ենք մեռնելնէս ետե յսիտի տեսնենք :
 Պէտք չէ որ մահէն սոսկանք և հրաժարուած
 քրիստոնեայ բարեկամներնուս վրայ ողբանք , ին-
 չու որ հաւատացեալներուն համար մահը ուրիշ
 բան չէ բայց միայն առ աշխարհէս ելլել ու
 Յիսուսի քովը երթալու և անոր փառքը տես-
 նելու դուռը :

Ես ալ Հօրը պիտի աղաչեմ, և ուրիշ Մխիթարիչ մը պիտի տայ՝ ձեզի, որ յաւիտեան ձեզի հետ բնակի : Յով . ԺԲ . 16 :

ՅԻՍՈՒՍԻ աշակերտներուն սիրտը արամուծիւնով լեցուեցաւ՝ երբոր ըսաւ թէ ալ իրենցմէ բաժնուելու վրայ է : Միշտ իր հետն էին, իր զարմանալի գործքերը կը տեսնէին, իր պատուական խօսքերը կը լսէին, իր գորովագութ սէրը կը վայելէին, և սիրտերնին անոր կապուած էր, բայց հիմա իրենցմէ պիտի բաժնուէր ու զիրենք առ աշխարհիս մեղացը փորձութիւններուն և արամուծիւններուն մէջ պիտի թողուր : Բայց Քրիստոս առանց պէտք եղած հոգածութիւնը ընելու որք ու անմխիթար չըթողուց զիրենք . մխիթարեց անոնք խօսք տալով որ իր բարեխօսութիւնովը Հայրը ուրիշ Մխիթարիչ մը պիտի խրկէ իրենց, որ յաւիտեանս հետերնին բնակի : Մեր Փրկչին առ առաւանական խոստումները կատարուեցաւ և միշտ կը կատարուի . Ինքը ան Ամենակարող Մխիթարիչը՝ իր Սուրբ Հոգին աշխարհք խրկեց, որ բոլոր իր ճշմարիտ աշակերտներուն սրտին մէջը բնակի : Աս օրհնեալ Հոգին սրտերնիս կը կակուղցընէ և մտքերնիս կը լուսաւորէ որ ճշմարտութիւնը իմանանք . մտքերնուս աչքը կը բա-

նայ՝ որ Գրիստոսի անճառելի սիրոյն մեծութիւնը տեսնենք : Ինքը մեղի կը ցուցնէ թէ իր խոստմունքները որչափ մեծ և սրատուական են, սուրբ սիրով մը սրտերնիս կը վառէ և մեղ ցնծութիւնով ու խաղաղութիւնով կը լեցնէ : Օրհնեալ Սուրբ Հոգիդ, եկուր ու իմ սրտիս մէջն ալ բնակէ :

10

Խաղաղութիւն կը թողում ձեզի, իմ խաղաղութիւնս ձեզի կու տամ • չէ՛ թէ ինչպէս որ աշխարհս կու տայ՝ ես ձեզի կու տամ • սրտերնիդ չխռովե ու չվախնայ : Յով • ԺԳ • 27 :

ՔՐԻՍՏՈՍԻ պարգևած օրհնութիւնները աշխարհիս տուած օրհնութիւններուն պէս չեն : Անիկայ աշխարհիս տուած կերպովը չտար : Առանց ստակի և առանց բան մը վճարելու ձրի կու տայ իր շնորհաց դանձէն : Աշխարհիս տուած չափովը չտար, թէ որ տայ առանց չափի կու տայ իր անհասնում հարստութենէն : Եւ ոչ ալ աշխարհիս տուած օրհնութիւններէն կու տայ • իր պարգևած օրհնութիւններուն հետ չար բան խառնուած չկայ, բոլորովին սուրբ են և անճառելի ուրախութիւն կու տան անոնք ընդունողին : Իր տրամած աշակերտներուն խաղաղու-

Թիւն տալ խոստացաւ . չէ թէ աս աշխարհիս
 հետ , քանզի իմացուց իրենց թէ աս աշխար-
 հիս մէջ նեղութիւն պիտի ունենան . հասա-
 անոնց խաղաղութիւն առաւ Աստուծոյ և ի-
 րենց խղճմանքներուն հետ : Մարդոց մտքէն
 վեր խաղաղութիւն մը առաւ անոնց , որ աշ-
 խարհիս փորձութիւններուն մէջ անոնք պահէ :
 Փրկչին կտակով թողուցած աս մեծ պարգևը մի-
 այն ան ատենը դանուողներուն համար չէր , հա-
 սա մինչև աշխարհիս վերջը բոլոր իրեն հա-
 ւատացողներուն համար է : Մերն ալ |է . Իմ
 ալ է , թէ որ Քրիստոսինն եմ : Երբոր աս
 երկնային խաղաղութիւնը սրտերնուս մէջ ու-
 նինք , թէպէտև տրամուծիւններով պաշարուինք ,
 թէպէտև մեծ փորձութիւններ գլխունուս գան ,
 թէպէտև շատ թշնամիներ վրանիս ելլեն , տա-
 կաւին սրտերնիս խռովելու ու վախնալու չէ :

11

Սիրտերնիդ չխռովի' . Աստուծոյ հաւատա-
 ցէք , ինծի ալ հաւատացէք : Յով . ԺԴ . 1 :

ԱՍՏ սքանչելի է Քրիստոսի իր աշակերտացը
 վրայ ունեցած կարեկցութիւնը . իր տանջուե-
 լու ժամանակը մօտեցած էր , գիտէր իր առջին
 եղածները , իր քաշելու ցաւերուն սասակութիւնը

առջին առջևն էր : Բայց կարծես թէ իր աշա-
 կերաներուն վրայ ունեցած գուժովը իր տան-
 ջանքները մոռցաւ : Գիտէր թէ իր դատապար-
 տուիլը և մեանիլը տեսնելնուն սրտերնին դառն
 տրամուծիւնով պիտի լեցուէր : Գիտէր թէ պի-
 տի ողբային իրենցմէ հրաժարելուն վրայ և գի-
 տէր թէ աս ոխակալ աշխարհիս մէջ մինակ
 մնալովնին վախով պիտի լեցուէին : Անոր հա-
 մար իր վերջին ժամերը անոնց հետ շատ քաղ-
 ջըր և կազդուրիչ խօսակցութիւններով անցուց ,
 որոնք Աստուածաշունչին ամենապատուական և
 սիրտ տուող մասերէն են : “ Սիրտերնիդ ջխը-
 ւովի ” , ըսաւ , “ Աստուծոյ հաւատացէք , ինձի
 ալ հաւատացէք ” . տառապանքի ժամ մը կար
 առջևնին , բայց ինքը յորդորեց անոնք՝ որ բու-
 լոր ան ատենը իրեն ապաւինին . տակաւին կա-
 թողութիւն ունէր և ամէն ատեն ունի անոնք
 ազատելու : Իր կեանքը իրմէն առնուելու ջէր ,
 հապա ինքը կամաւ պիտի տար անիկայ աշ-
 խարհիս փրկութեանը համար : Ուրեմն թէ որ
 իրեն հաւատային և իր խոստմունքներուն վրայ
 վստահէին , խռովելու բան չունէին : Միայն
 թէ քիչ մը սպասելու էին ան մութ ամպին
 անցնելուն , և վերջը ուրախութիւնով պիտի լեց-
 ուէին : Քրիստոսի վրայ եղած ամուր հաւատքը
 նեղութեան ժամանակ մեծ մխիթարութիւն է :

Եւ յիրաւի դուք հիմա արամութիւն ունիք .
բայց եւ ձեզ նորէն պիտի տեսնեմ , և ձեր
սիրտերը ուրախ պիտի ըլլան . և ձեր ուրախու-
թիւնը մէկը ձեզմէ պիտի չհանէ . Յով . ԺԶ .
22 :

ԱԸԱԿԵՐՏՆԵՐԸ արամած էին , ինչու որ
Յիսուս ըսաւ թէ Չեղմէ պիտի բաժնուիմ .
և իրենց արամութիւնը սաստկացաւ երբոր ա-
նոր խաչը ելլելը և թաղուիլը տեսան : Անա-
տենը արտերնին մեծ նեղութեան մէջ ինկաւ .
անոր վրայ ունեցած յոյսերնին՝ թէ Իսրայէլի
ազատիչն է , գրեթէ կարեցաւ և անմխիթար ու
յուսահատեալ սրտով ցկրուցան եղան : Բայց
երբոր Յիսուս յարութիւն առաւ՝ յոյսերնին կեն-
դանացաւ և արտերնին ուրախութիւնով լեցուե-
ցաւ : Երբոր ինքը իր առջի եղած տեղը համ-
բարձաւ և Սուրբ Հոգին եկաւ ու լուսաւո-
րեց միաքերնին որ փրկութեան զարմանալի ճամ-
բան հասկընան , երբոր խելքերնին հասաւ թէ
ինչու իրենց Տէրը ու Արդապետը խաչին վրայ ան-
տանջանքները քաշեց , երբոր կարողացան քիչ
չափ իր խանձուն սիրոյն և իրենց ու բոլոր
իրեն հաւատացողներուն համար ծախու առած
օրհնութիւններուն արժէքը գիտնալ , անատենը
արտերնին անձառելի և փառաւոր ուրախութիւ-

նով մը ցնծաց • և իրենց ուրախութիւնը մէկը
 չէր կրնար առնել իրենցմէ : Մարդիկ վրանին
 ելան , ստեցին հալածեցին բանտարգեցին և մէկ
 քանիններնին ալ մեռցուցին , բայց սակայն անոնք
 իրենց Փրկիչովը ուրախ էին : Նեղութիւններ
 քաշելու և մեռնելու ժամանակնին կ'ուրախա-
 նային , և յաւիտեանս յաւիտենից անպատմելի
 ուրախութիւնով պիտի ցնծան : Աս նոյն ուրա-
 խութիւնը Քրիստոս բոլոր զինքը սիրողներուն
 համար ալ ծախու առաւ • և թէ որ Յիսուսի
 հաւատանք և իրմով ապրինք՝ աս ուրախու-
 թիւնները մերն ալ են :

13

Անասներ բոլոր աշակերտները լծողուցին ա-
 նիկայ՝ ու փախան : Մատթ . ԻԶ . 56 :

ԵՐԲՈՐ Յիսուս բռնուելէն առաջ իր աշա-
 կերտներուն հետ կը խօսէր , երբոր անոր իրենց
 վրայ ունեցած սէրն ու կարեկցութիւնը ըզ-
 դացին , անանկ եկաւ իրենց թէ զինքը երեսէ
 պիտի չձգեն : « Թէ և քեզի հետ մեռնելու ալ
 ըլլամ՝ բնաւ քեզ պիտի չուրանամ » , ըսաւ
 հաստատուն Անարասը , և նմանապէս բոլոր միւս-
 ներն ալ : Աստահ էին թէ իրենց Արդապէտը
 չեն ձգեր , որ իրենց սյնչափ սէր ցուցուց , և որ

զինքը Աստուծոյ Որդին և աշխարհիս Փրկիչը
 կը համարէին : Բայց երբոր փորձութեան ժամը
 եկաւ հասաւ , երբոր զինքը իր թշնամիներուն
 ձեռքը մատնուած տեսան , երբոր կատապի զօր-
 քերուն զինքը յափշտակելը և առնել տանիլը
 տեսան , մոռցան խոստմունքներնին , մոռցան իր
 խրատները և իր սէրը , հաւատքնին տկարա-
 ցաւ , ու թողուցին զինքը և փախան : Մինչև
 որ չփորձուինք չենք գիտեր սրտերնուս մէջ է-
 ղաճները , կրնանք մեծ վատահուծիւն ունենալ
 թէ մեր Փրկիչը բնաւ պիտի չթողունք , բայց
 թէ որ մեր զօրութեանը ապաւինինք աղէկ գիտ-
 նանք որ փորձութեան ատեն պիտի լյնանք :
 Մենք պէտք եղածին չափ Գրիստոսի չենք եր-
 թար . . . մեր զօրութիւնը միայն իրմէն է . մեր
 ապահովութիւնը մի միայն ինքզինքնիս իրեն
 յանձնել և իրեն միշտ աղաչել է որ մեզ իր
 շնորհքովը պահէ : Արչափ սքանչելի է իր շը-
 նորհը որ իրեն բարեկամ կը կանչէ անոնք ,
 որոնց հաւատքն ու սէրը այնչափ տկար է որ
 անշուշտ զինքը պիտի թողուն թէ որ իր Ա-
 մենակարող շնորհքովը անոնք չպահէ :

14

Ան ատենը Յիսուս ըսաւ անոնց • Մի վախնաք ,
 դացէք իմ եղբայրներուս ըսէք՝ որ Գալիլեա
 երթան , ու հոն զիս պիտի տեսնեն : Մատթ .
 ԻԸ . 10 :

ԱՆՏԱՐԱԿՈՅՍ Քրիստոս արամեցաւ իր ա-
 մենէն մեծ հարօտութեան ժամուն իր աշա-
 կերաները զինքը ձգելուն համար : Սրտին մեծ
 ցաւ եղած պիտի ըլլայ երբոր տեսաւ՝ թէ որ-
 չափ տկար և անհաստատ էր իրենց սէրը և որ-
 չափ խախուտ էր իրենց հաւատքը : Բայց բռ-
 լորն ալ իրենց ներեց • ինքը անոնք ընտրեց էր
 և անոնց վրայ ունեցած սէրը չվերցուց , թէ-
 պէտ անոնց իրեն վրայ ունեցած սէրերնին շատ
 տկար էր : Յարութիւն ստանելէն ետե կրկին
 անոնք եղբայր կանչեց և ան նոյն սիրոյ անու-
 նովք խօսք խրկեց անոնց որ Գալիլեա երթան
 և հոն զինքը տեսնեն : Գիտէր թէ սրտերնին
 արամութիւնով կը լեցուէր , և շատ կը զղջային
 երբոր կը յիշէին իր նեղութիւններուն մէջ ա-
 նոր ցուցուցած անհաւատարմութիւննին : Բայց
 ինքը ուզեց անոնք միսիթարել , և անոնց գիտ-
 ցունել թէ իրենց յանցանքը ներած է : Ար-
 չափ ուրախացած պիտի ըլլան երբոր իրեն ան
 սրտադամը ընդունեցին , երբոր գիտցան թէ սա-
 կաւին իրենք եղբոր պէս կ'ընդունի , և երբոր

Վատահ եղան իր սէրը շարունակելուն և Յիսուս
 հիմա ալ աշխարհիս մէջ եղած ատենին պէս
 կարեկից և ներողամիտ է . ամէն քրիստոնեայ
 կը զգայ թէ իր համբերութիւնը շատ սքանչե-
 լի է : Արդարեւ մարդկային լեզուով չենք կրնար
 խօսիլ իր ներողամիտ սիրոյն մեծութեանը վը-
 րայ : Ո՛հ թէ հոս եղած ատեննիս սրտերնուս
 փափաքած խորհրդածութիւններուն նիւթը աս
 ըլլար . և երկինքին մէջը պիտի սորվինք մեր
 սարտականութեանը չափ աս սէրը գովել :

15

Երկինքը՝ Աստուծոյ փառքը կը պատմէ , ու
 երկնից հաստատութիւնը անոր ձեռացը գործ-
 քերը կը ցուցընէ : Սաղմ . ԺԺ . 1 :

ԱՍՏՈՒԱԾ ինքզինքը մեզի միայն Աստուա-
 ծաշունչով յայտնած չէ . անով իր աստուա-
 ծային ստորոգելիքները կատարելապէս կը ցուցը-
 նէ , բայց նաև ինքզինքը ճանչցուցած է իր ձեռքին
 գործքերովը , թէպէտ չէ թէ այնչափ կատարեալ
 կերպով մը : Աս իր գործքերը քննելու ենք՝
 որ աւելի բան գիտնանք Աստուծոյ վրայօք , և
 մեր հաւատքը զօրանայ . սեսնելով որ Աստու-
 ծոյ ստորոգելիքները ինչպէս որ Աստուա-
 ծաշունչին մէջ յայտնուած են , նոյնը կ'երե-

ւայ իր գործքերուն մէջն ալ : Յայանի է թէ
 Գաւիթ սովորութիւն ունէր Աստուծոյ հան-
 դամանքները սորվելու անոր արարչագործութե-
 նէն . անոր գործքերուն մէկ մասին վրայ խոր-
 հելովը պարտաւորեցաւ աղաղակել , “ Երկինքը
 Աստուծոյ փառքը կը պատմէ , ու երկնից հաս-
 տատութիւնը անոր ձեռացը գործքերը կը ցու-
 ցընէ ” : Երկինքը՝ արեգակը՝ լուսինը և աստ-
 ղերը՝ արդարև Աստուծոյ փառքը կը պատմեն :
 Աս անհուն աշխարհքները ստեղծողը և անոնք
 պահողը Ամենախաբով զօրութեան տէր էակ մը
 պիտի ըլլայ : Ան՝ որ իրենց շարժումները ա-
 նանկ կատարելապէս կարգադրեց որ հաղարա-
 ւոր տարիներ է որ ջխանգարուեցան , անհուն
 իմաստութեան տէր էակ մը պիտի ըլլայ : Ան՝
 որ անանկ դրաւ անոնք որ շարունակ երջանկու-
 թեան աղբիւր մըն են իր արարածներուն , շտա-
 բարերար էակ մը պիտի ըլլայ : Աստուած երկինքը
 ստեղծեց մեր սրահսութիւնները մատակարարե-
 լու համար . ինքն է որ արեգակին մեղի լոյս
 և տաքութիւն տալ կու տայ , և գիշերը անի-
 կայ մեղմէ կը ծածկէ որ ան խաւար և հան-
 դարտ ժամանակը հանգստանանք : Գիշերը եր-
 կինքը անհամար աստղերով կը զարդարէ , որոնք
 աչքի հաճելի են և քիչ մըն ալ լոյս կու տան
 որ բոլորովին խաւար չըլլար : Ամէն օր Աստու-
 ծոյ փառք տալու ենք իր բարութեանը հա-
 մար , որն որ երկնից հաստատութեանը մէջ
 իր ստեղծուածներուն վրայ կ'երևայ :

Ինծի՛ դարձէք , ու էս ձեզի՛ պիտի դառնամ՝ կ'ըսէ զօրաց Տէրը : Մառ . Գ . 7 :

Աս խօսքերը Իսրայէլացւոց դրուցուած ժամանակը անոնք Աստուծոյ ճամբէն խոտորած և անկէ մոլորած էին . և Աստուած Թողուց որ իրենց գործքերուն պատուը քաղեն , իրենց երկիրը Թշուառութեան մէջ ձգելով , և իրենց Թշնամիներուն Թոյլտուութիւն տալով որ անոնց յալթեն : Բայց Աստուած իր ողորմութիւնը անոնցմէ մէկէնիմէկ ջլարեց . շատ երկայնմը տութիւն ցուցուց իրենց , և մարդարէն՝ ը խըրկեց զանոնք խրատելու և յորդորելու որ զըջան և իրեն դառնան : Շատ մարդասիրութիւնով վարուեցաւ անոնց հետ . մեծ խոստմունքներ տուաւ որ պիտի կատարէր անոնք՝ Թէ որ ապաշխարէին : Եթէ իրեն դառնային՝ ինքն ալ անոնց պիտի դառնար . պիտի ներէր իրենց կըռասպաշտութեանը՝ ապերախտութեանը և բոլոր գործած մեղքերնուն , որոնցմով իր բարկութիւնը դրդուեցին , և կրկին իրենց Աստուածը պիտի ըլլար իրենք օրհնելու և ազատելու , ու անոնք ալ կրկին իր Թողովուրդը պիտի ըլլային : Աստուած նոյն լեզուովը կը խօսի մեզի հետ ալ , որով խօսեցաւ հին Իսրայէլացւոց . կը կանչէ ամէն մարդիկ որ իրենց չար ճամբաները ձգեն , և իրեն դառնան ու իրեն ծառայ-

յեն և հնազանդին, և ան ատենը ինք ալ անոնց պիտի դառնայ և իր ներողամիտ սէրն ու իր շնորհաց առատութիւնը պիտի ցուցընէ անոնց : Անաս չունի թէ մարդ մը որչափ մեղաւոր ըլլայ . թէ և իր մեղքերը կրկնակի կարմիրի պէս ըլլան, և թէ ապաշխարէ և կտորած սրտով Աստուծմէ դայ ողորմութիւն խնդրէ, Աստուած պիտի ողորմի և ներէ իրեն : Իր ողորմութիւնը և դուժը անսահման է և ասոր համար փառաւորեալ է իր անունը յաւիտենից յաւիտեանս :

17

Աստուծոյ ողորմութեանը կը յուսամ յաւիտեանս յաւիտենից : Սաղմ . ԾԲ . 8 :

ԴԱԻԹ գիտէր թէ ինքը մեղաւոր էր . իմացաւ որ իր բարի դորձքերուն համար Աստուծմէ շնորհք և օրհնութիւն չկրնար ուզել : Եթէ Աստուած իր անվրէպ արդարութեան պահանջածին պէս անոր անօրէնութիւններուն արժան եղածը անոր ընէր, յաւիտեանս ձգելու էր ղինքը : Բայց Աստուած ցուցուց որ ինչպէս որ արդար է, անանկ ալ ողորմած է . և թէպէտ մեղաւոր էր՝ սակայն կրնար Աստու-

ծոյ ողորմութեանը ապաւինիլ , և միտքը դը-
 րաւ որ յաւիտեանս իր ողորմութեանը յուսայ :
 Աստուծոյ ողորմութիւնը Գաւիթէն աղէկ գի-
 տենք . անկէց աղէկ կը հասկընանք իր ողոր-
 մութեան ճամբան : Աստուծոյ Արգին աշխարհք
 եկաւ և ինքզինքը մեր տեղը տալով արգա-
 րութեան մեղմէ պահանջածները կատարեց , և
 իրմով Աստուած իր ողորմութիւնը կը ցուցնէ
 բոլոր իրեն դարձողներուն : Աւրախութեամբ
 Քրիստոսով Աստուծոյ ողորմութեանը կրնանք
 ապաւինիլ փրկուելու համար . մեղաւորներուն
 ցուցուցած աս ողորմութիւնը անչափ է : Բայց
 ոմանք կան որ կը վախնան Աստուծոյ ողորմու-
 թեանը ապաւինելու . կ'ուզեն աշխատիլ որ ի-
 րենց բարի գործքերովը արքայութիւն երթան .
 իրենցմէ արգարութիւն ունենալ կը ջանան , որ
 Աստուծոյ շնորհքները իբրև իրենց արգարու-
 թեանը հատուցում մը ընդունին : Ասանկները
 շատ անպատիւ կ'ընեն Աստուած , որ ցուցուց
 թէ ողորմիլը իրեն բերկրութիւն է : Բայց ես
 կ'փափաքիմ Աստուծոյ երթալ իբրև խեղճ
 մեղաւոր մը . ուրիշ յոյս մը չունիմ՝ այլ մի-
 այն Քրիստոսի խաչովը ցուցուած իր ողորմու-
 թիւնն է իմ յոյսս :

48

Ո՛վ Տէր իմ զօրութիւնս՝ քեզ պիտի սիրեմ : Սաղմ . ԺԼ . 1 :

ԱՍՏ բաներ կան հոս աս աշխարհիս մէջ , որոնք պարտաւոր ենք սիրել և պէտք է որ սիրենք : Աստուած մեզ անանկ սքանչելի աշխարհքի մը մէջ դրաւ , ուր իր ձեռքի գործքերէն շատերը կը տեսնենք որոնք շատ գեղեցիկ և հաճելի են ըստ ինքեան , և մենք իրաւունք ունինք չափով մը սիրելու աս բաները : Աստուած բարեկամներ ունինք որոնք պարտաւոր ենք սիրել . ծնողքներն ու որդիքը , եղբայրներն ու քոյրերը , էրիկներն ու կնիկները մէկզմէկ սիրելու պարտաւորութեան տակն են : Բոլոր քրիստոնեաները սիրելու ենք . Վրիառոսի նոր պատուիրանքն է “ Մէկզմէկ սիրեցէք ” : Բայց մէկ էակ մը կայ որ անիկայ ոչ միայն պարտաւոր սիրելու ենք , այլ աւելի մեծ և գերագոյն սիրով մը սիրելու ենք , ամէն բանէ առաջ և ամէն բանէ աւելի սիրելու ենք . մեր բոլոր պարտաւորութիւններուն բովանդակութիւնը՝ մեր Տէր Աստուածը բոլոր սրտովիս և բոլոր անձովիս ու բոլոր կարողութիւնովիս և բոլոր մտքովիս սիրել է : Սաղմոսերգուն միտքը դրաւ աս պարտաւորութիւնը կատարել , և սրբաանց աղաղակեց , “ Ո՛վ Տէր իմ զօրութիւնս

քեզ պիտի սիրեմ ,, : Ամէն սիրտ որ նորոգուած է Սուրբ Հոգիով պատրաստ է նոյնպէս ըսելու , Այո՛ կը սիրեմ և միշտ պիտի սիրեմ քեզ , ո՛վ Տէր՝ իմ զօրութիւնս : Աստուած արժանի է մեր սիրոյն . իր ստորագելիքներուն ամէնքն ալ սիրելի են . ինքը սուրբ արդար և բարի է : Նաև արժանի է մեր սիրոյն մե շի ըրած բաներուն համար . երբոր խորհինք մեզի պարգևած անթիւ օրհնութիւններուն վրայ , և թէ ինչպէս համբերեց մեր ասպատակութեանը՝ ապերախտութեանը և մեղքերնուս , և նոյն գութը և սէրը շարունակեց՝ չէնք կրնար չաղաղակել , Այո՛ Տէր , պիտի սիրեմ քեզ : Ամէն բանէն վեր երբոր յիշենք թէ որքան սիրեց մեզ որ իր սիրելի Արդին մեզի համար մեռնելու տուաւ , սրտերնիս մեծ սիրով լեցուելու է :

19

Դուք ինտո՞ր կրնաք հաւատալ որ իրարմէ փառք կ'առնէք . և ան փառքը որ մէկ Աստուծմէն է , չէք փնտուեր : Յօ՛ւ . Ե . 44 :

ՅԻՍՈՒՍ անարդուած Նազովրեցի մըն էր . իր մայրը աննշան կին մըն էր և հայրը նուաստ հիւս մը : Կրեն աշակերտները խեղճ աղքատ ձկնորաներ էին . իրեն հետևողներուն

մէջ հարուստ՝ մեծ՝ պատուաւոր մարդիկ չը-
 կային, և ինքն ալ անոնց աշխարհային փառք
 մը չխոստացաւ: Ուստի անոնք որ մարդոցմէ
 պատիւ կ'ընդունէին չէին ուզեր իր քովը եր-
 թալ. յիրաւի փառասիրութիւնը անանկ կուը-
 շուցած էր աչքերնին որ չէին կրնար իրեն
 հաւատալ. վասն զի մարդոցմէ պատիւ վնասողը
 անոր պահանջմունքներուն ահանջ չկատեր,
 կամ պարզմտութեամբ չքննէր անոր Աստուծ-
 մէն ըլլալուն ապացոյցները, քանզի իրեն հաւա-
 տալով նախատանքի և արհամարհանքի ենթա-
 կայ պիտի ըլլայ: Միայն անոնք որ հաւատա-
 ցին նուսառ Յիսուսին թէ աշխարհի Փրկիչն է,
 զգացին թէ Աստուծոյ հաճելի ըլլալը բոլոր
 աշխարհային փառքերէն աւելի է: Ամէն մեղք
 կը կուրցընէ միտքը որ ճշմարտութիւնը չտեսնայ.
 սէտք է ուզենք որ Աստուծոյ կամքին հակա-
 ոակ դանուող ամէն բան ուրանանք, և սէտք
 է փափաքինք որ ամէն բանէն առաջ Աստու-
 ծոյ կամքը ինչ ըլլալը դիտնանք, և ան ատենը
 ամէն ճշմարտութեան պիտի առաջնորդուինք:

20

Իմ ճամբաներուս վրայով մտածեցի, և իմ
 ոտքերս քու վկայութիւններուդ դարձուցի:
 Սաղմ. ՃժԹ, 59:

ՀԱՏ անդամ՝ Աստուած իր ժողովուրդին հա-
 մար մեծ և ծանր դանդախաներ կ'ընէ, որոնց
 մէկն ալ աս է՝ թէ՛ « Վ՛ր ժողովուրդս չմտա-
 ծեր » : Նաև նոյն բանը կ'ընեն անոնք ալ որ դեռ
 մեղաց մէջ են . չեն մտածեր թէ ինչ գէշ
 բան է մեղքը, և կամ իրենք ս'ւր կը տանի .
 չեն խորհիր առ Աստուած ունեցած պարտա-
 ւորութիւններնուն վրայ, թէ պարտաւոր են
 զինքը սիրելու և իրեն ծառայելու : Չեն խորհիր
 անոր իրենց վրայ ունեցած իշխանութեանը
 վրայ, և ոչ ալ իր բարկութեանը տակն իյնա-
 լը սրչափ ահարկու բան ըլլալուն վրայ : Սաղ-
 մոսերգուն կ'ըսէ թէ ինքը մտածեց իր ճամ-
 բաներուն վրայով : Եւ ինքը նաև կը զրուցէ
 թէ ինչ եղաւ աս մտածմունքին արդիւնքը,
 « Վ՛ր ոտքերս քու վկայութիւններուդ դարձու-
 ցի » : Սաղմոսերգուն օրինակին հեռակնիք ու
 խորհիւնք մեր ճամբաներուն վրայով . արդեօք
 Աստուծոյ պատուիրանքներուն ճամբուն մէջ
 կը քալե՞նք, թէ մեղաց ճամբաներուն մէջ . իր
 սէրը և օրհնութիւնը կը վայելենք, թէ ամէն
 օր իր բարկութեանը տակը կ'ասարիւնք . բռնած
 ճամբանիս մեզ յաւիտենական կենաց կը տանի,
 թէ յաւիտենական մահուան : Սուրբ Հոգիին
 օգնութիւնը ինդրենք որ աս հարցումները լը-
 բած ժամանակնիս խորհրդածութիւննիս շտկէ,
 և ան տակնը Աստուծոյ շնորհքովը Սաղմոսերգու-
 ին հասած վախճանիս մէնք ալ պիտի հասնինք .
 ու ոտքերնիս Աստուծոյ վկայութիւններուն սկի-
 ւի դառնան :

21

Քու պատուիրանքներդ պահելու արտորացի
ու չուշացայ : Սաղմ • ՃԺԹ • 60 :

ՏՂԱՅ մը թէ որ իր հայրը կը սիրէ , ան-
շուշտ անոր պատուիրանքներուն հնազանդիլն ալ
կը սիրէ : Ա'արտորաց անոր կամքը կատարելու ,
և հայրն ալ ասանկ զուարթութիւնով եղած
հնազանդութիւնը կ'ընդունի իբրև նշան իր վրայ
ունեցած սիրոյն : Բայց ասոր հակառակը՝ թէ
որ տղան անամայ հնազանդի և կամ թէ ու-
շացընէ հնազանդիլը որչափ որ կրնայ առանց
պատիժի մնալ , հայրը ասիկայ հնազանդու-
թեան տեղ չգնէր , վասն զի սէրէ յառաջ եկած
չէ՝ հասկա պատիժի վախէ : Ասանկ ալ Աս-
տուծոյ պատուիրանքները • թէ որ զլինքը կը-
սիրենք , արտորալու ենք և ուշանալու չենք ա-
նոնք պահելու : Մենք ամէնքս շատ անգամ
անհնազանդութիւն ըրած ենք իրեն , և իր օրէնք-
ները ձգած ենք • բայց թէ որ հիմա անկեղ-
ծութեամբ զղջում ընենք մեր անցած մեղքե-
րուն վրայ , թէ որ զգանք թէ Աստուած մեզի
որչափ ողորմած և երկայնամիտ է , թէ որ քիչ
շատ իր սէրը կայ սրտերնուս մէջ , փափաքանօք և
ուրախութիւնով ջանալու ենք իր պատուի-
րանքներուն հնազանդելու : Բ՛մէն բանի մէջ մեր
կամքը անոր կամքին հնազանդելու է • թէ որ

գէպի իրեն ունեցած պարտաւորութիւննիս պահանջեն որ մեր անձը ուրանանք, ան ասեւոր աւելի աղէկ պատահութիւն կ'ունենանք իր վրայ ունեցած սէրերնիս և հնազանդելու հաստատուն դիտաւորութիւննիս ցուցնելու, իր պատուիրանքները պահելու արտորալով և ջունասլով :

22

Երանի է ձեզի՝ երբոր կը նախաստեն ձեզ ու կը հաշածեն, և սուտ տեղը ամեն կէրտ գէշ խօսքեր կը խօսին վրանիդ՝ ինծի համար : Մատի . Ե . 11 :

ԱՆԱՐԳԱՆՔՆ ու նախաստինքը հաճելի բան չէ . ցաւալի բան է հաշածուիլը և բամբասուիլը : Աս բաները ինչպէս որ ուրիշ մարդոց անանկ ալ քրիստոնեաներուն ծանր ու գժուարին կու դան . և սակայն ասոնք ան բաներն են, որ Քրիստոս առաջուց իր աշակերտներուն խնայուց թէ իրեն աշակերտութիւն ընելովնին անոնց ենթակայ պիտի ըլլան : Բայց երանի տուաւ աս բաները իրեն համար քաշողներուն . երանելի են անոնք՝ Քրիստոսի ետեւն ելլածնուն և իր չարչարանացը մասնակից ըլլանուն համար : Ծառան իր Տէրօջմէն մեծ չէ, և արդա-

բուժեան համար կրած հալածանքնին իրենց
 Տէրն ալ կրեց : Արանելի են անոնք , քանզի
 անանկով պատահութիւն կ'ունենան Քրիստոսի
 վրայ ունեցած սէրերնին յայտնելու , և ցուցը
 նելու թէ անանկ ամուր կապուած են իրեն'
 որ հալածանքն ու մահը կարող չեն իրենք
 անկէջ բաժնելու : Արանելի են՝ անոր համար
 որ պատահութիւն կ'ունենան , շնորհքին զօրու
 թիւնը սրտերնուն մէջը ցուցնելու , որով կը
 կարողանան հեզութեամբ և համբերութեամբ
 հալածանք քաշել՝ բոլոր ուրիշ մարդիկներուն
 շնամնելով : Աւերջապէս երանելի են՝ անոր հա-
 մար որ Աստուած ինքը իր սէրը և շնորհքը անոնց
 պարգևեց անոնք պահելու , և իրենց փորձու-
 թիւններովը անոնք իր երկնային թագաւորու-
 թեանը պատրաստելու համար : Քրիստոս մար-
 դոյ պէս երանութիւն չտար . հալածման և նե-
 ղութիւններու մէջ երանութիւն կու տայ . որ ու
 որ երանի կու տայ արդարեւ երանելի է ան՝ թէ
 հոս և թէ՛ յաւիտենականութեան մէջ :

Ուստի ոչ տնկողը բան մըն է, և ոչ ջուր
տուողը, հասցա Աստուած՝ որ անձեցուց : Ե.
Կորնթ. • Գ. • 7 :

ԵՐԲՈՐ Պօղոս դարձի եկաւ, ըսուեցաւ թէ
ինքը ընտիր աման մըն էր Քրիստոսի ա-
նունը կրելու հեթանոսներուն՝ թագաւորնե-
րուն և Իսրայէլի ժողովուրդին առջև : Իրեն
յանձնուած սարսաւորութիւնները հաւատար-
մութեամբ կատարեց, Աստուած ալ իր աշ-
խատութիւնները օրհնեց, և զինքը հեթանոս-
ներէն շատերը Քրիստոսի եկեղեցիին մէջը բե-
րելու գործիք ըրաւ : Աս գործին մէջ անանկ
ժրութիւնով կը գործէր, որ հաւատացեալնե-
րէն ոմանք սկսեցին չափէն աւելի իրեն սպ-
տիւ տալ, և ուղեցին ինքզինքնին եւելի Պօղոս-
եան անուանել քան թէ Քրիստոսեան : Պօ-
ղոս շուտով աշխատեցաւ աս զգացումը խա-
փանելու • չուղեց որ իրենք դարձի բերելուն
համար իրեն սպախւ մը տան : Ինքը և իր միւս
ընկերները բան մը չէին, հասցա միայն Աս-
տուած էր ամէն բան ընողը և բոլոր փառքը անոր
տրուելու էր : Թէ որ անանկ պատահի որ Աս-
տուած շնորհք ընէ մեզ պատուելու՝ իր թա-
գաւորութեանը մէջ մեզ օգտակար մարդիկ ը-
նելով, շատ զգուշանալու ենք որ բոլոր փառ-

քը իրեն տանք, որուն ալ որ կը վայելէ :
 Մենք մեզմէ կարողութիւն մը չունինք մեր ըն-
 կերներէն մէկուն ներսիգին մէկ բարի խորհուրդ
 մը կամ բարի զգացում մը առաջ բերելու,
 ու թէ՛ն Աստուած անոնք դարձի բերելու
 համար մեզ իբրև գործիք գործածէ, բայց ան
 գործը իրենն է իբրև թէ մեզ ամենևին չգոր-
 ծածեց : Ինքը միայն իշխանութիւն ունի մար-
 դոց սրտերուն վրայ՝ ինչու որ Սուրբ Հոգին
 իրենն է, և բոլոր գովութիւնը իրեն տալու է :
 Մենք խոնարհութեամբ փառք տալու ենք ի-
 րեն, որ կը թողու մեզ իրեն համար աշխա-
 տելու, և մեզի յոյս կու տայ մեր աշխատու-
 թեան պարասը չերթալուն :

24

Հաւատքով Մովսէս երբոր մեծցաւ, չընդու-
 նեց Փարաւոնի աղճկանը որդի ըսուելը : Քան
 զի աւելի աղէկ սեպեց Աստուծոյ ժողովուրդին
 հետ չարչարուել, քան թէ մեղաց ժամանա-
 կաւոր զուարճութիւնը վայելել : Ե՛բե • ԺԱ •
 24 • 25 :

ՄՈՎՍԵՍ Հարատու թիւններով և պատուով
 մեծցաւ : Փարաւոնի աղճկանը որդեգիրը ըլա-
 լով Եգիպտոսի պալատին փառքը կը վայելէր :

Եգիպտացւոց բոլոր խնաստութիւնովք կրթուե-
 ցաւ և հանդիսա կեանք մը կրնար անցընել ,
 Թագաւորի մը որդիի հարստութիւնովք և պա-
 տուովք պատած , որ մարդուս ամենէն փառիա-
 քելի բաներն են : Բայց Մովսէս թողուց բո-
 լոր սա փառքերը ու Փարաւոնին տունէն ե-
 լաւ , և խեղճ տառապեալ Իսրայէլացւոց վի-
 ճակակից եղաւ , որ ան տակեր Եգիպտոսի մէջ
 դերի էին ու սաստիկ կ'աշխատէին : Աս ընա-
 րութիւնը Եգիպտացւոց շատ սարօրինակ բան
 մը երևցած պիտի ըլլայ : Մարդու մը իր հան-
 դրստութիւնը՝ պատիւը՝ փառքը՝ և արքունի ըն-
 կերները՝ աղքատութեան համար և գերիներու
 հետ ընկերանալու համար ձգելը իրենց շատ լիծ
 խենդութիւն երևցած պիտի ըլլայ : Բայց Մով-
 սէս մէկ անանկ աչք մը և տեսութեան կա-
 րողութիւն մը ունէր որ անոնք չունէին : Հա-
 լատքին աչքովք Եգիպտոսի պողատականներուն
 փառքին վրայ նայեցաւ , և տեսաւ որ իրա-
 ցունէ ոչինչ են : Վիտցաւ որ անոնք ճշմարիտ
 մտքի խաղաղութիւն չեն կրնար տալ հոս սա
 աշխարհիս մէջ , և սա կարճը կեանքս ալ անց-
 նելէն ետե յաւիտեան պիտի կորսուին : Բայց
 ան գերիները՝ որոնց վիճակը ընտրեց , Աստու-
 ծոյ ժողովուրդն էին . ինքը գիտէր թէ Աստու-
 ծոյ շնորհքը աշխարհիս բոլոր գանձերէն աւելի
 է . գիտէր ալ որ թէպէտ Եգիպտոսի Թա-
 գաւորութիւնը թողուց , բայց մէկ լաւարոյն

Թագաւորութիւն մը պիտի շահի երկնից մէջ
յաւիտեան : Հազարաւոր սարիներ եղաւ որ աս
երկնային Թագաւորութիւնը կը վայելէ , ու իր
ընտրութեանը վրայ չղջար :

23

Ու անիկայ իր նեղութեան ատենը՝ իր Տէր
Աստուծոյն երեսը խնդրեց , և իր Հայրերուն
Աստուծոյն առջև մեծապէս խոնարհեցաւ :
Բ. Մնաց . 1Գ . 12 :

ԱՍ խօսքերը Հրէաստանի Թագաւորին Մա-
նասէին վրայօք խօսուած են : Իր Հայրերուն
Աստուծոյն դէմ մեծ մեղք մը գործեց , և Աս-
տուած սրատեց զինքը , Թող տալով որ Աս-
րիներուն Թագաւորը յաղթէ զինքը ու Բաբել-
լոն գերի տանի : Երբոր աս նեղութեանը մէջ
ինկաւ՝ սկսեց խորհիլ և աղօթք ընել . Աս-
տուած իր աղօթքը լսեց , ու ետքը նոր վարք
մը բանելով իր աստաշխարութեան անկեղծու-
թիւնը ցուցուց : Շատ անգամ նեղութիւնը կը-
յորդորէ մարդիկ որ Աստուծոյ աղաղակէն և
իրմէն օգնութիւն խնդրեն : Յաջողութեան ժա-
մանակնին զինքը կը մոռնան , և համարձակու-
թեամբ մեղք գործել կը սկսին . կը խորհին թէ
իրենք իրենցն են , և իրենց հաճութիւնները կա-

տարելու են : Բայց երբոր գլխունուն նեղու-
թիւն կու գայ , երբոր մեծ վախի մէջ կ'լցնան ,
և երբոր մահը աչքերնուն կը մտենայ , ան ա-
տենը կը սկսին Աստուծոյ աղաղակել : Ար տես-
նեն որ շատ տկար են եղեր , և կ'աղաչեն իրեն
որ ողորմի և զիրենք փրկէ : Բայց ամսոս որ
քիչերը կան Մանասէին պէս բոլոր սրտով
ինքզինքնին Աստուծոյ առջև խոնարհեցունող ,
և իրենց ետքի վարքովը ճշմարտապէս ապաշ-
խարենին ցուցնող : Երբոր նեղութիւններնուն
աղաաին , բոլոր վախերնին մաքերնէն կ'ելլէ •
Աստուած կը մտնան և նորէն մեղք գործել
կը սկսին : Ասանկներուն՝ նեղութիւնը անկէք է •
Բայց ճշմարտապէս ինքզինքնին Աստուծոյ առ-
ջև խոնարհեցունողներուն նեղութիւնը օրհնու-
թիւն կ'ըլլայ :

26

Բայց Տերօջը առջև խոնարհեցաւ , ինչպէս
որ իր հայրը Մանասէն խոնարհեր էր • մանա-
ւանդ աս Ամենը աւելի յանցանք գործեց : Բ
Մնաց • ԼԳ • 26 :

ԱՄՈՆ՝ Մանասէին որդին , իր հօրը շա-
րութեան օրերուն մէջ բռնած ճամբուն հեռուե-
ցաւ : Մանասէն փորուած կուռքեր ջններ էր ,

և Ամոն անոնց զոհ կը մատուցանէր : Բայց իր
 ասպաշխարութիւնը հօրը ասպաշխարութեանը պէս
 չէր : Մանասէ ինքզինքին գալէն և Տէրոջը ծառա-
 յել սկսելէն ետեւ մեծ նեղութիւն կրած պիտի ըլ-
 լայ՝ տեսնելով իր որդւոյն չարութիւնը : Եւ
 շատ անգամ մեծ կսկիծ տուած պիտի ըլլայ
 իրեն աս խորհուրդը թէ ինք էր անիկայ մեղաց
 ճամբաներու մէջ քաշելու կրթողը : Ծնողքները
 շատ մեծ զօրութիւն ունին իրենց որդւոյը վը-
 լայ • և որովհետեւ սիրտը սկիզբէն իվեր աւելի
 չարին յօժար է քան թէ բարիին , վասն որոյ
 տղաքը շատ դիւրութեամբ իրենց ծնողացը չար
 օրինակին կը հետեւին , քան թէ բարիին : Մեծ
 քան է մեր ընկերին վրայ ասանկ մէկ իշխանու-
 թիւն մը ունենալը • կրնանք մեր օրինակովը ա-
 նոնք մեղաց առաջնորդել , և հողինին յաւի-
 տեան կործանելու պատճառ ըլլալ : Ծնողքները
 շատ շնորհք խնդրելու են դէպի իրենց զաւկրնե-
 րուն ունեցած պարտաւորութիւններնին կատարե-
 լու համար : Իրենց բարքը շտկելու են • և թէ
 որ Աստուծոյ հողին հետերնին չըլլայ և իրենց
 զաւկրներուն սուրբ օրինակ մը ըլլալու իրենք
 չկարողացրնէ , կարելի է թէ Մանասէին պէս
 մեղքերը շատցունող զաւակ մը ունենան վրան
 ուղբալու :

Ու ըսի՝ Ո՛վ Աստուած իմ՝ կ'ամենամ , ու իմ
երեսս քեզի վերցընելու չեմ համարձակիր ,
ո՛վ Աստուած իմ . վասն յի մեր անօրհնութիւն
ները մեր գլխէն վեր բարձրացան , ու մեր յան-
ցանքը մինչև երկինքը ելաւ : Եղբ . Թ . 6 :

ԱՍՈՆԻ Էին Եզրասին ըրած աղաղակները
Իսրայէլի ժողովուրդին մեղացը համար , որ մին-
չև անգամ Աստուծմէ մեծ ողորմութիւններ ըն-
դունելնէն ետքն ալ գործած էին , ան որ իրենց
գերութեան երկրէն իրենք 'էտ դարձուց , և
Թողուց որ տաճարը նորէն շինեն և իրենց
երկրին մէջ հանգատանան : Ամէն ճշմարիտ ա-
պաշխարող մեղաւոր Եզրասին ցուցրցած զգա-
ցումներէն չափով մը կ'ունենայ , երբոր խոր-
հի իր յանցանքին մեծութեանը վրայ , և ջանք
ընէ անիկայ Աստուծոյ խոստովանելու : Ա՛րդ-
գայ որ յիրաւի իր մեղքերը մինչև երկինքը
բարձրացած են . Աստուած մտքը չբերելով
անցուցած օրերուն մէկուն մէջ գործած մեղ-
քերը անգամ չկրնար համրել : Աստուծոյ օ-
րէնքը և փառքը բոլորովին ձգելով անցուցած օ-
րերուն մէկուն մէջ ըրած բոլոր մեղանշտկան
խորհուրդները , իր սրտին չար զգացումները , և
իր չար գործքերը կարող չէ հաշիւի տակ առ-
նելու . ընր մնաց բոլոր իր կեանքին մէջը գոր-
ծած մեղքերը : Ուստի ասանկ յանցանքի մէկ

մեծ բեռով մը բեռնաւորուած ինտոր կրնայ
 երեսը Աստուծոյ վերցընել : Արխորհի նաև
 Աստուծոյ իրեն պարգևած մեծ և բազմաթիւ
 ողորմութիւններուն վրայ , ու շատ կ'ամչնայ իր
 մեղքերը անոր առջին խոստովանած ժամանա-
 կը : Ան ատենը կը զգայ իր միջնորդին պա-
 տուականութիւնը , որուն ձեռքովը կրնայ Աս-
 տուծոյ մօտենալ : Ամենեին չէր կրնար համար-
 ձակիլ ողորմութիւն խնդրելու , թէ որ Յիսուս
 Քրիստոս իր մեղքերը քաւած չըլլար , և թող
 տուած չըլլար անոր իր անունովը երթալու և
 բոլոր պէտք եղած օրհնութիւնները խնդրե-
 լու :

28

Իմ մէջս կեցէք՝ ու ես ձեր մէջը . ինչպէս որ
 ճիւղը չկրնար ինքիրմէն պտուղ բերել , թէ որ
 որթին վրայ հաստատուած չըլլայ , նոյնպէս
 ալ դուք չէք կրնար , թէ որ իմ վրաս հաս-
 տատուած չըլլաք : Յովհ . ԺԵ . 4 :

ԵՐԲՈՐ մեղաւորները Քրիստոսի կը հաւատան ,
 իրեն հետ կը միանան և իրմով կ'ապրին : Քր-
 իստոս անոնք իբրև իրենները կ'ընդունի . ա-
 նոնք իր անդամները կ'ըլլան , և ինքը կը սը-
 նուցանէ և կը պահէ իրենց մէջը եղած ան հո-

գետր կեանքը , որն որ ինքը անոնց մէջ ըս-
 կըսեց : Ինչպէս որ որթէն զատուած ճիւղը իր
 մէջը զօրութիւն և կեանք չունի , անանկ ալ
 անոնք իրենց մէջը զօրութիւն և կեանք չու-
 նին , և թէ որ Քրիստոսէ զատուին՝ կը մեռ-
 նին : Ինքն է ամէն օր անոնց պէտք եղած շը-
 նորհքը տուողը . իրեն նայելով է որ սրտեր-
 նուն մէջը սուրբ սիրոյ բոց մը կը հրահրի . ին-
 քըն է անոնց տկար հաւատքը զօրացնողը : Եւ-
 մով միայն կրնան աշխարհիս՝ մարմինին և սա-
 տանային փորձութիւններուն դէմ կենալ . ի-
 ըն երթալով կը զգան որ մեղքերնին ներուած
 է , և խաղաղութիւն կը գտնեն : Ինքը կը զօրա-
 ցընէ բոլոր անոնց սուրբ դիտաւորութիւնները ,
 և իրմով միայն յոյս ունին : Ո՛րչափ սրտանց
 որ անոր փաթտուին , այնչափ շուտով շնորհքի
 մէջ կ'աճին : Շարունակ անոր հետ հաղորդու-
 թիւն մը ունենալովնին անոր պատկերին կեր-
 պարանակից կ'ըլլան : Եւ աշխարհքիս մէջ ունե-
 ցած աս միաւորութիւննին , երկինքին մէջ ու-
 նենալու ասպագայ յաւիտեանական միաւորութիւն
 ներնուն գրաւն է : Աշխարհքիս և դժոխքին զօ-
 րութիւնները կարող չեն ճիւղերը կենդանի որ
 թէն զատել :

29

Ասով իմ հայրս փառաւորուեցաւ , որ գուք
չատ սրտուղ բերէք , ու իմ աշակերաներս ը-
լաք : Յ՝Է . ԺԵ . 8 :

ՔՐԻՍՏՈՍ գեռ որ աշխարհիս մէջն էր , իր
գործը հօրը կամքը կատարելն էր . աս մեծ
բանովը Աստուած կը փառաւորուէր : Եւ ինքը
մեղաւորները կը փրկէ և անոնք կը նորոգէ , որ
անոնք ալ աս դիտաւորութեանը համար աս-
րին : Թէ որ Քրիստոսի աշակերաններն ենք ,
չատ սրտուղ բերելու ենք Աստուծոյ փառքին
համար : Թէ որ սուրբ վարք մը ունենանք ,
թէ որ ջանանք կատարեալ համաձայնութիւն
ունենալու Աստուծոյ օրէնքին հետ , թէ որ
աշխատինք մեր ընկերին բարիք ընելու , թէ որ
մեղքի վրայ ողբանք՝ և անկէց զգուշանանք ,
Աստուած կը փառաւորենք : Մարդիկ շնորհքին
ըրած գործքերը կը տեսնեն , և զԱստուած կը
փառաւորեն : Թէ որ Քրիստոսի նմանինք , թէ
որ իր հոգին ունենանք և իր օրինակին հետե-
ւինք , անանկով մեր զրկիչ Աստուծոյն Աւե-
տարանը ուրիշներուն առջին սիրելի և գովելի
կ'ընենք . և մեր բարի գործքերը տեսնելով մեր
Երկնաւոր Հայրը կը փառաւորեն , ասանկով Քր-
իստոսի աշակերաները կ'ըլլանք : Աս փորձը մե-
ղի սուաւ՝ որ իմանանք թէ արդեօք իրենն ենք ,

Թէ արդեօք Աստուծոյ փառքին համար շատ սը-
տուղ կը բերէնք : Չէ՛ Թէ որ մեր բարի գործ-
քերովը արքայութեան արժանանալու յոյս մը
կրնանք ունենալ , աս անհնարին բան է . վասն
զի Աստուածաշունչը կը ըսէ Թէ Փրկութիւնը
միայն շնորհքն է . բայց Թէ որ ներսիդինիս հոգե-
ւոր կեանք մը ունինք , անիկայ մեր գործքերովը
ցուցընելու ենք : Թէ որ Քրիստոսի հոգին ու-
նինք իր ոտքերուն քայլերուն հետեւելու ենք :

30

Չէ՛ Թէ դուք զիս ընտրեցիք , հասցա ես ձեզ
ընտրեցի , ու դրի ձեզ , որ դուք երթաք՝ և
ստուղ բերէք , ու ձեր ստուղը մնայ : Յով .
ժե . 16 :

Չէ՛ Թէ մենք Քրիստոսը ընտրեցինք , հասցա
ինքը մեզ . մենք իրմէն մոլորած մեր մեղքե-
րուն մէջ յառաջ կ'երթայինք , և Թէ որ մեզ
ինքնիւրեննուս թողուր , մեզք գործելով ալիսի
երթայինք մինչև որ յուսահատութեան ան-
խաւար աշխարհքը հասնէինք : Բայց ինքը ո-
ղորմեցաւ և իր սէրը մեզի ցուցուց . մահուան
ճամբան բանող դացող բազմութենէն մեզ ընտ-
րեց , և միտքը դրաւ մեզ փրկել : Իր Սուրբ
հոգին խրկեց մեր աչքերը բանալու , որ մեր

գացած ճամբան և անոր վախճանը տեսնենք :
 Մեր մեղքերը և անօգնականութիւնը մեզի ըզ-
 դալ տուաւ , և ետքը ցուցուց որ ինքը կարող
 է և կամեցող մեզ փրկելու : Մեր աչքերը բա-
 ցաւ , որ սրբութեան գեղեցկութիւնը տես-
 նենք , և անոր եռակէն ըլլանք : Իր փառաւոր
 բնութիւնը մեզի յայտնեց , և մեզի խմայուց
 թէ ինքն էր ան մէկ հասոյի սիրելին : Թէ որ
 ճշմարտապէս իր աշակերտներն ենք , իր մեզ
 ասանկ ընտրելովը և շատ պտուղ բերելու սահ-
 մանելովը եղանք : Միայն մեր ասպահովութեանը
 և երջանկութեանը համար չէր որ մեզ ընտ-
 րեց , հասպա Աստուած փառաւորելու համար :
 Մեր Տէր Յիսուս Քրիստոսի մեզի ցուցրցած
 շնորհքը կարող չենք խօսքով ցուցնել : Իրն է
 մեր փրկութեան փառքը , սկիզբէն մինչև վեր-
 ջը ինքը փրկեց մեզ , ինքը մեզ ընտրեց , ին-
 քը մեզ նորէն ստեղծեց , և ինքը վերջապէս
 մեզ վերը իր հօրը բնակարանը պիտի տանի ,
 իբրև յիշատակարան իր սիրոյն զօրութեանը .
 և յաւիտեանս յաւիտենից բոլոր փառքն ու
 պատիւը իրեն պիտի մատուցանենք :

Բայց Յովնան ելաւ որ Տէրոջը երեսէն Թարսիս փախչի : Յով . Ա . 3 :

ԽԵՂԸՃ անխելք մարդ . արդեօք իրաւցունէ կարծեց թէ աս աշխարհիս մէջ պիտի կրնայ տեղ մը գանալ , որ հոն Տէրը ներկայ չըլլայ ու անոր աչքերը իր վրայ չըլլան : Սաղմոսեր գուն կ'աղաղակէ " Ո՛ր երթամ քու հոգիէդ , և քու երեսէդ ո՛ր փախչիմ " : Սաղ . ՃԼԹ : 7 : Դաւիթ չէ թէ Աստուծմէ փախչիլ կ'ուզէ , հապա ան սրտին խորունկ զգացումները կը ցուցունէ՝ որ Աստուածային կատարելութիւններուն անհունութեանը վրայ սիրով ու զարմանքով լեցուած է : Յովնան աս ատենս Աստուծոյ դէմ ապստամբ եղած վիճակի մը մէջ էր : Աստուած պատուիրէր էր անոր որ երթայ Նինուէացիներուն քարոզէ . բայց Նինուէ շատ մեծ ու հարուստ և զօրաւոր քաղաք մըն էր , ու նաև շատ ալ չար էր . ու խեղճ Յովնան վախցաւ ասանկ ժողովուրդի մը առջևը երևալու իբրև Աստուծոյ մարդարէն իրենց մեղքերը երեսնին տալու և կործանումնին իրենց խնայուն ներու համար եկած . ու Նինուէ երթալուն տեղը Թարսիս փախաւ , ու նաև մը մանելով ծովին անդի կողմն անցնելու վրայ էր : Զարմանալի՛ անխելքութիւն : Բայց Աստուած կտե-

ւէն գնաց անոր ու ստակալի սրատուհասներ բե-
 րաւ վրան, ու անիկայ եւս դարձուց հնազան-
 դութեանն ու իր սարտականութիւնը կատարե-
 լու: Անհնազանդ հոգին շատ անգամ կը փա-
 փաքեցունէ մարդիկ որ Աստուծոյ ներկայու-
 թենէն փախչին: Աս հոգին Ադամին ու Եւա-
 յին ալ առաջնորդեց որ ինքզինքնին սահեն
 պարտէզին մէջը: Քրիստոսի ետեւէն դացողներ իե-
 ղող դաւանողներուն շատերուն ալ կ'առաջնորդէ
 որ ինչ սարտականութիւն ունենալնուն խառջ-
 նորդելու վրայով հարցում ընելու համար Աս-
 տուծոյ՝ աղօթք ընելէն ետ կայնին, երբոր կը
 տեսնան թէ աս սարտականութիւնը չսիրուելու
 բան մըն է: Հիմա ալ Քրիստոսի եկեղեցիին
 մէջը ընդհանրապէս կարծուածէն վեր պինա
 շատ աւելի Յովնաններ կան: Կարդացող՝
 արդեօք մէկն ալ դո՞ւն ես: Ամէն բանի մէջ
 քու սարտականութիւնդ ընելու սրտորմատ ես,
 թէպէտե րլայ որ ան բանին տակէն քեզի
 վտանդ կամ մահ ելլայ: Աղէկ լմտքդ դի՛ր
 աս բանը՝ թէ աս աշխարհիս մէջ քու սարտակա-
 նութիւնդ կատարելու ճամբէդ իզատ քեզի
 ճշմարտապէս ասպահով ճամբայ չկայ:

ՍԵՊՏԵՄԲԵՐ

1

Աստուծոյ զոհը կտարած հոգին է . կտարած
ու խոնարհ սիրտը ո՛վ Աստուած՝ դուն չես
անարդեր : Սաղմ . ԾԱ . 17 :

ԱՆԽԱՐՀԻՍ մեղքերուն համար մէկ մեծ
զոհ մը եղաւ . և ալ ասկէց ետև պարտալ բան
է խորհիլը՝ թէ մեր մեղքերուն համար քաւու-
թիւն մը կրնանք ընել : Չենք կրնար մէկ պա-
տարագ մը մատուցանել Աստուծոյ իբրև գոր-
ծած մեղքերնուս փոխարէն : Պարտալ բան է
Աստուծոյ սէրը կրկին ձեռք բերելու յոյսով
մարմիններնիս նեղելը . խիստ ճգնութիւններ ընել
ը , և կամ անձնուրացութեան գործ մը կա-
տարելը . իր պահանջածը ասիկայ չէ : Իր Որ-
դին մեղաց քաւութիւն ըրաւ , և ուրիշ քա-
ւութիւն մը ընելու աշխատիլը զինքը անպատիւ
ընել է : Բայց մէկ զոհ մը կայ , որն որ Աս-
տուած կը պահանջէ որ իրեն մատուցանենք՝ եր-
բոր կ'երթանք Քրիստոսի մատուցած ան մեծ
զոհովը ծախու անուամբ օրհնութիւնները ըն-
դունելու : Աս զոհը կտարած և սպաշխարող

սիրան է • Աստուած միայն աս զոհը մատու-
ցանողներուն կ'ողորմի : Մեզմէ մէկ արդարու-
թիւն մը գործելը , խիստ ապաշխարանքներու
տակ մանեղը , բոլորը պարսպ են , հասլա մի-
այն ճշմարիտ զղջումն է ընդունելին • ապաշխա-
րող սրտէ յառաջ չեկող պատարագներուն բո-
լորը Աստուծոյ զղուելի են :

2

Վասն զի ես այսպէս կը դատեմ որ աս ժա-
մանակիս չարչարանքները բան մը չեն՝ գալու-
փառքին քովը , որ մեզի պիտի յայտնուի :
Հովհ • Ը • 18 :

ՊՕՂՈՍ աղէկ գիտէր աս ժամանակիս չար-
չարանքներուն ինչ ըլլալը : Ինք հասարակ մար-
դոցմէ շատ աւելի բան քաշեց , անոր համար
աղէկ յարմարութիւն ունէր անոնց վրայ դա-
տողութիւն ընելու : Եւ ինքը զգաց թէ ա-
նոնք ետքէն գալու փառքին հետ բաղդատելու
արժան չեն : Աս կեանքիս չարչարանքները որ-
չափ սաստիկ և շատ ալ ըլլան , քիչ կը տե-
ւեն , վախճանը շուտ կու գայ • բայց երկնային
փառքը յաւիտենական է : Աս կեանքիս չարչա-
րանքները ուրախութիւններով խառնուած են ,
որոնք անոնց սաստիկութիւնը կը կակղեցընեն •

Բայց երկնային փառքերուն հետ տրամուծիւն խառնուած չկայ՝ որ անոնց կատարելութիւնը ընդմիջեն և շատութիւնը քիչցընեն : Աս աշխարհիս մէջ քրիստոնէին քաշած չարչարանքները գլխաւորապէս մարմնաւոր են , որոնց մէջ տեղը միտքը կրնայ խաղաղ ըլլալ : Բայց երկնից երջանկութիւնները բնաւ մէկ մարմնաւոր երջանկութեան մը չեն նմանիր , անոնք հոգեւոր են և մեր խելքէն շատ վեր : Ասանկ զուարճ հոգեւոր և յաւիտենական երջանկութիւններ ունինք առջնիս , անոր համար ոչինչ սեպենք աս ներկայ կեանքիս անշաւոր չարչարանքները :

3

Թէ որ ձեզմէ մէկը նեղութեան մէջ է , աղօթք թող ընէ . Թէ որ մէկը ուրախ է , սաղմոս թող երգէ : Յակ . Ե . 13 :

Մէկ տեղ մը կայ՝ ուր որ բոլոր տառապեալները մխիթարութիւն կրնան գտնել , որ է շնորհաց աթոռը : Հոն տեղը մխիթարութիւն մնատողներուն բնաւ մէկը սրբապը չելաւ : Անաս չունի թէ որչափ մեծ տրամուծիւն ըլլայ , կամ ինչ բանէ որ սրտաճառած ըլլայ : Թող տառապեալը խկոյն իր Երկնաւոր հօրը

երթայ՝ Փրկչին անուևովը , և բոլոր իր ցաւե-
րը անոր առջին թափէ ու իրմէն մխիթարու-
թիւն խնդրէ , ու թող հաստատ գիտնայ որ
պիտի ընդունի : Աստուած աղէկ գիտէ տրտ-
մած սիրտերը մխիթարելու ճամբան . ինքը կըր-
նայ անոնց զգացընել թէ իրենց հաւատար-
մութիւնն էր իրենք ան նեղութեան մէջ ձը-
գողը : Ինքը կրնայ ցուցընել անոնց ան խոստ-
մունքին պատուականութիւնը , թէ ամէն բան
Աստուած սիրողներուն օգտին համար կ'ըլլայ .
կրնայ անոնք անանկ ուրախացընել իրմով՝ որ
իրենց նեղութիւնները մոռնան : Չանազան կեր-
պերով առատ մխիթարութիւն կրնայ տալ և
պիտի տայ բոլոր իրմէն խնդրողներուն : Նոյն-
պէս և սրտերնիս ուրախութիւնով լեցուած
ժամանակն ալ Աստուծոյ երթալու ենք . ան
ասենք փառաբանութեան երգերով իրեն եր-
թալու ենք : Ինքն է ամէն բարութիւններուն
աղբիւրը , և ուրախացած ժամանակնիս իրեն ե-
րախտագիտութիւն մատուցանելու ենք . ան խ-
տենը բոլոր ուրախութիւններնիս պիտի շատնան
և մաքրուին : Թէ որ միշտ աս կերպով Աս-
տուծոյ մօտենանք , թէ տրտմութիւնը և թէ
ուրախութիւնը մեղ օրէ յօր առաւել ևս պիտի
մօտեցընեն իրեն , և մեղ իր երկնաւոր թագա-
ւորութեանը մէջ մտնելու պիտի պատրաս-
տեն :

4

Պատերազմէ հաւատքին բարի պատերազմը :
 Ա. ՏԻՏ . 2 . 12 :

ՔՐԻՍՏՈՆԵԱՆ Վրիստոսի Թադաւորու-
 թեանը կանչուած չէ հանդիսա նստելու և իրեն
 գործը նայելու : Վանի որ աս աշխարհիս մէջն
 է՝ իր կեանքը շարունակ պատերազմով պիտի
 անցընէ . իր Թշնամիները շատ են և ուժով ,
 ու շարունակ զգուշութիւն ընելու է , թէ չէ
 կը յաղթուի : Չէ թէ միայն ինքզինքը պաշա-
 պանելու է , հասա ձեռքէն եկածը ընելու է
 իր Թշնամիները յաղթելու համար : Եր ամենէն
 զօրաւոր Թշնամիներէն մէկը իր սիրան է . եր-
 բոր նորէն կը ծնի իր ներսիդին եղած մեղքին
 զօրութիւնը բոլորովին ջաղթուի . և թէպէտ
 իրօք սրբութեան ետեւ է , սակայն սակաւին
 իր սիրտը շատ անգամ զինքը մեղաց մէջ կը
 ձգէ : Արդարեւ շատ անգամ այնչափ շարու-
 թիւն կը գտնէ իր սրտին մէջ , որ աղաղակելը
 կու գայ թէ « Ի՛նչ խղճալի մարդ եմ ես .
 ո՞վ զիս պիտի ազատէ աս մահացու մար-
 մինէն » : Հոով . է . 24 : Մէկ ուրիշ Թշնամի
 ալ սատանան է , որ միշտ բոլորախիքնիս կը պը-
 տրաի գոռացող առիւծի մը պէս՝ և կը նայի թէ
 ո՞վ կրնայ կլէլ : Եր Թշնամիներէն մէկն ալ
 աշխարհքս է , որ իր գեղեցկութիւնները առջին

կը թտփէ, և կը գրդէ զինքը ան բարեկամու-
 թիւնը ընելու իրեն հետ, որ Աստուծոյ 'դէմ'
 թշնամութիւն է: Բայց թէ որ քրիստոնէան
 ուղիղ կերպով պատերազմի առ պատերազմը,
 դիտէ թէ անշուշտ պիտի յաղթէ: Հաւատա-
 քին աղէկ պատերազմը պատերազմելու է:
 Հաւատքը իրեն մէկ վահան մըն է թշնամիին
 բոլոր յարձակումներուն դէմ: Հաւատքով ամենա-
 կարող զօրութիւն մը կ'ունենայ ձեռքը, որով
 իր թշնամիները կը յաղթէ: Հաւատքը կը ցուցը-
 նէ իրեն, թէ իր կողմը եղողները իրեն դէմ
 եղողներէն շատ են, և ասով շատ կը քաջա-
 լերուի: Հաւատքը կը պահէ զինքը մինչև իր
 վերջին թշնամիին յաղթուելուն, և իր յաղ-
 թութեան ուրախութիւնը վերին Սիօնի լեռանը
 վրայ կրնէ:

 5

Եկէք ինձի բոլոր յոգնած ու բեռնաւորա-
 ներ, և ես ձեզ պիտի հանդէսցընեմ: Մատթ. .
 ԺԱ. 28:

Աս աշխարհքս յոգնածներով և բեռնաւո-
 րածներով լեցուն է: Հատերը կը յոգնին խա-
 դաղութիւն և երջանկութիւն գտնելու: Իրենց
 մէջը մէկ երջանկութիւն մը չեն գտներ, և

շարունակ կ'աշխատին հարստութիւնով դքսանի
 քով և պատուով փափաքներնուն հասնիլ :
 Եւ թէպէտ շատ կը յոգնին ու կը բեռնաւոր
 ըլլին , բայց իրենց աշխատանքը պարասը գա-
 ցած կը դանեն : Շատերը յանցանքնին զգալով
 բեռնաւորած են . գիտեն թէ գործած մեղ-
 քերնին անթիւ է , ու կը յոգնին անոնք քաւե-
 լու և արդարութիւն գործելու՝ ու անով անոնք
 ծածկելու : Բոլոր ասանկ յոգնած ու ծանրա-
 բեռնեալ մեղաւորները Փրկիչը սիրով և ողոր-
 մութիւնով կը կանչէ ըսելով , Եւսի եկէք և ես
 ձեզ սխալի հանգչեցընեմ : Յիտուս միայն կըր-
 նայ վերցընել մեղաւորներուն վրայ ծանրացած
 յանցանայ բեռը : Ան բեռը ինք իր վրան
 կ'առնէ , և խաչափայտին վրայ թափած արիւ-
 նովը անիկայ կը քաւէ : Իր արդարութիւնովը
 օրէնքին պահանջածները կը հատուցանէ , և յան-
 ցաւոր մեղաւորը իր բեռէն արձրկուած հան-
 դրստութիւն կը դանէ : Ալ անկէց ետև չաշխա-
 տիր իր բարի գործքերովը երկնային թագաւոր-
 ութիւնը ձեռք ձգելու , հասցա Քրիստոսի ար-
 դարութեանը կընայի , անիկայ իրեն բաւակիան
 սեպելով : Ալ անկէց ետև չաշխատիր լոկ աշ-
 խարհիա բարութիւններովը երջանկութիւն գրու-
 նելու , հասցա իր Աստուծոյն և Փրկչին հետ
 հաղորդակցութիւն ընելով և յաւիտենական կե-
 նայ փառաւոր յոյսովը ճշմարիտ խաղաղու-
 թիւն կը դանէ : Ա՛հ թէ ամէն յոգնածներն

ու բեռնաւորածները Քրիստոսի աս հրաւեր-
քին ականջ կախելին, և իրեն գային ու հանգ-
չելին :

6

Տէրոջը գործքերը պիտի յիշեմ - յիրաւի քու
անջի հրաշքներդ պիտի յիշեմ : Սաղմ . հէ . 11 :

ԱՍՏՈՒԱԾ իր սուրբ Գրոցը մէջ պատմած է
մեզի մարդոց ըրած իր սքանչելի գործքերէն
մէկ քանին : Պէտք է որ շատ անգամ կար-
դանք և խորհինք Տէրոջը ըրած հրաշքներուն
վրայ : Անոնցմէ Աստուծոյ բնութեանը վրայօք
շատ բաներ կրնանք սորվիլ, և անոնցմէ խրատ
տուող և քաջալերող շատ դասեր կրնանք առ-
նել : Աստուծոյ մարդոց հետ վարուած ճամ-
բաներուն վրայ խորհրդածութիւն ընելով, ա-
ռաւել ևս կը հաստատուինք իր ճշմարիտ ըլլա-
լուն վրայ : Իր խոստմունքներուն և ստրանա-
լիքներուն բնաւ մէկը չկատարուած պիտի չը-
մնայ . ասանկ եղաւ հին ատեններն ալ . կ'ըլ-
լար որ ուշացրնէր, բայց երբէք զանց չըրաւ
վերջապէս իր ըսածները կատարելու : Կան ա-
նիկայ սուրբ Աստուած մըն է . մեղքը իրեն
զղուելի բան է, և մինչև անգամ Աբրահամին՝
իւ բարեկամին սերունդները իրեն դէմ մեղան.

չեղնուն համար կը դատապարտէ : Ինքը նաև ու
 դորմած և երկայնամիտ է . իր դուժը Իսրայէլ-
 լացւոց վրայէն չպակեցուց , թէպէտ շատ մեծ
 մեղքեր գործեցին իրեն դէմ , բայց միշտ պատ-
 րաստ էր անոնք ընդունելու՝ երբոր իրեն դառ-
 նային : Ինքը իր պատուոյն վրայ նախանձու
 էր . երբոր մարդիկ իրենց զօրութեանը վրայ
 պարծենցան և իրեն փառք չտուին՝ անոնք մին-
 չև հողը խոնարհեցուց , ինչպէս որ ըրաւ Նա-
 բուգոդոնոսոր Բաբելոնի թագաւորը : Իր ժո-
 դովուրդը իրեն պատուական է . անոնց համար
 թագաւորները յանդիմանեց , և իրենց թշնամի-
 ներուն անոնց հետ խաղաղութիւն ընել տուաւ :
 Թէ որ Աստուծոյ ժողովուրդէն ենք , մարդոց
 մեղի ըրածներէն վախնալու չենք :

 7

Ասոնց ամէնը իմ գլխուս եկաւ : Ծնե՞ր .
 ԽԲ . 36 :

ԱՍԱՆԿ աղաղակեց Յակոբ՝ երբոր Յովսէփ
 իր ամենէն սիրելի որդին ու Շմաւոն զկային ,
 և հիմա Բենիամինն ալ կ'ուղէին առնել ու
 Եգիպտոս իջեցընել : Բայց որչափ կարճատեւ
 է մարդս . սա գիպուածները՝ որոնց վրայ Յա-
 կոբ ասանկ կու լար ու սուգ կ'ընէր , իր ըն-

տանեացը փրկութեանը համար էին . Յակոբ
 աս բանը շուտով պիտի գիտնար : Եր Յովսէփ
 որդւոյն կորուստովը՝ որ գրեթէ իր մէջքը կտա-
 րէց , Աստուած Իսրայէլի ընտանիքին վրայ ու-
 նեցած բարի գիտաւորութիւնները կը կատարէր :
 Յովսէփ հիմա Եգիպտոսացւոց երկրին վրայ իշ-
 խան էր . և շատ ցորեն ժողոված էր Յակոբը և
 իր ընտանիքը ան մեծ սովին ատենը կերակրե-
 լու համար՝ որ ամէն տեղ եղաւ : Իր ձեռքովը
 բոլորը Եգիպտոս եկան . և հոն Աստուծոյ ըս-
 քանչեւի կարողութեանը և ողորմութեանը մէկ
 քանի գործքերը երեցան իրենց կողմէն , որոնք
 ան ժամանակէն ի վեր խրատական և քաջալերա-
 կան դասեր եղան ամենուն : Ամէն ատեն ապա-
 հով կ'ըլլանք թէ որ ինքզինքնիս և բոլոր սի-
 րած բաներնիս Աստուծոյ ձեռքը գնենք : Ա-
 նանկ գիտուածներ կրնան պատահիլ որ մեզի
 մութ կ'երևին և չենք կրնար հասկընալ , բայց
 ապահով ըլլալու ենք որ Աստուած ամէն բան
 շիտակ կ'ընէ , և թէ որ զինքը կը սիրենք բնաւ
 մէկ բան մը մեզի գէմ չէ , հապա ամէն բան
 մեր օգտին համար կ'ըլլայ :

Քանզի ես Եհովայ եմ, չեմ փոխուիր, ա-
նոր համար դուք՝ ո՛վ Յակոբի որդիք չսպա-
ռեցաք : Ս՝առ . Գ . 6 :

Թէ որ մարդ մը խեղճ երեսէ ձգուած ար-
լայ մը գանէ ու գուժը անոր վրայ շարժի և
առնէ զինքը տուն տանի, ու միտքը դնէ որ
զաւկին սէս նայի . Թէ որ ան տղան ասե-
րախտ և անհնազանդ ըլլայ, իրեն ցուցուցած
բարերարութիւնները իր բարերարին վաստին գոր-
ծածէ, և երբեմն երբեմն զղջալէն ետև կըր-
կին նոյն յանցանքները դործելու ըլլայ, ալ ան
մարդուն համբերութիւնը կը հատնի . տղուն վը-
րայ ունեցած դիտաւորութիւնները կը փոխէ ու
անխկայ բոլորովին երեսէ կը ձգէ : Բայց Աս-
տուած մարդոց սէս չէ . անխկայ չփոխուիր՝ ա-
նոր համար մենք ալ չենք սպառիր : Միտքը
դրած է մարդոց որդիներուն ողորմիչ, և աս
իր դիտաւորութիւնը բնաւ չփոխուիր, ամե-
նուն իր շնորհքները կու տայ և կ'ողորմի ամե-
նուն Թէ և շատ մեղաւոր ըլլան : Անոնց ըրած
ասերախտութեանը համար իր դիտաւորութիւն-
ները չփոխեր՝ մինչև որ աս աշխարհիս մէջը
ունեցած փորձուելու ժամանակնին վերջանայ :
Քրիստոս միտքը դրած է հաւատացողները փր-
կելու, և բնաւ մէկ բանով մը պիտի չբարկանայ

և իր դիտաւորութիւնը չփոխէ ու անոնք ըստ
 պատէ : Շատ անգամ իրեն դէմ կը մեղանչեն
 և ղինքը կ'արհամարհեն , բայց ինքը բնաւ ա-
 նոնք երեսէ չձգեր : Երենց մեղքերնուն համար
 շատ անգամ անոնք կը յանդիմանէ , բայց իր
 սէրն ու բարերարութիւնը անոնցմէ բնաւ ետ
 չքաշեր : Անոնց վրայ ունեցած իր դիտաւորու-
 թիւնները բնաւ չփոխեր , մինչև որ ծախու առ-
 նուին լուացուին ու սրբուին յաւիտեանս իր
 առջևը կենալու :

9

Արդ՝ թէ՛ ուտէք՝ թէ՛ խմէք՝ և թէ՛ ինչ
 գործ որ ընէք , ամէն բան Աստուծոյ փառքին
 համար ըրէ՛ք : Ա. Կորնթ. Ժ . 31 :

ԱՍՏՈՒԾՈՅ մեզմէ ըրած պահանջմունքները
 շատ ընդարձակ են : Մենք բնաւ մէկ բանով
 մը ամենեկին մերը չենք : Մեր ամէն գորութիւն-
 ներն ու կարողութիւնները իրենն են , մեր մարմ-
 նոյն ամէն անդամները իրն են և ամէնքն ալ
 իրեն համար գործածուելու են : Ար պահանջէ
 մեզմէ որ ղինքը պատուենք չէ թէ միայն ա-
 ղովք և փառաբանութիւն մատուցանելով , չէ
 թէ միայն իր եկեղեցւոյն սահմանադրութիւն-
 ները կատարելով , հասկա մեր ամէն գործքե-

բովը . թէ ուտենք՝ թէ խմենք՝ թէ ի՛նչ բան
 որ ընենք Աստուծոյ փառքին համար ընելու
 ենք : Սրտերնուս ամենէն մեծ փափաքը Աս-
 տուած փառաւորելը ըլլալու է . բոլոր մեր գործ-
 քերը աս կանոնովը ընելու ենք : Եր փառքին
 համար կերած ու խմած կ'ըլլանք թէ որ ան-
 կէց առած զօրութիւննիս իրեն համար գործա-
 ծելու մտքով ուտենք և խմենք , և զինքը մեր
 ամէն աւուր հայր տուող ճանչնանք : Արնանք
 իր փառքին համար սլարասլ կենալ և զբօսանք
 ընել , թէ որ ան մտքով ընենք՝ որ անով մար-
 միննիս ու մտքերնիս աւելի զօրանան մեզի ին-
 կած սլարտաւորութիւնները կատարելու : Կա-
 խախնամութեան սլարգնները իր փառքին հա-
 մար վայելած կ'ըլլանք , թէ որ անոնք իր ձեռ-
 քէն ընդունածի սէս՝ իրեն երախտագիտու-
 թիւն և գոհութիւն մատուցանենք , և անոնք
 մեր և ուրիշներուն օգտին համար գործածելու
 ըլլանք : Մէկ խօսքով ամէն բան Աստուծոյ
 փառքին համար ըրած կ'ըլլանք , թէ որ մեր
 ամէն օրուան սլարտաւորութիւններնիս իրեն
 հաճելի կերպով մը կատարել փափագինք , և
 խնդրենք որ օրհնէ մեր ըրածներն ու վայելած
 բաները :

10

Անոր համար պէտք էր անոր բոլորովին եղբայրներուն նման ըլլալ, որ ինքը ողորմած ըլլայ ու հաւատարիմ քահանայապետ Աստուծոյ կողմանէ, ժողովուրդին մեղքերը քաւելու համար : Եբր . Բ . 17 :

ԱՒԵՏԱՐԱՆԻՆ ցուցուցած փրկութեան ճամբուն կերպը չէ թէ միայն Աստուած փառաբանելու համար է, հապա մարդոց զգացումներուն և բնութեանն ալ յարմար է : Յիսուս Քրիստոս կրնար Աստուծոյ օրէնքը կատարել և մարդոց մեղքերը քաւել առանց այնչափ ժամանակ առաջարհիա մեջ պանդխտութիւն ընելու . բայց ուզեց ամէն բանով մեզի նման ըլլալ՝ որ հաւատանք թէ կրնայ մեզի հետ ցաւակից ըլլալ, և իր վրայ կատարեալ վստահութիւն գնենք : Տղայ եղաւ և տղայութեան փորձութիւններուն համն առաւ, և հիմա փոքր տղաքները կրնան իրենց գլխուն եկած փորձութիւնները և ունեցած կարօտութիւնները իրեն իմացընել, վստահ ըլլալով որ ինքը կրնայ իրենց նեղութիւնները զգալ : Աղքատութիւն քաշեց, անօթի մնաց և ցուրտին սաստիութիւնը անձամբ կրեց . շատ մեծ նախասախնեքներ և ատելութիւններ քաշեց : Մեծ փորձութիւններով սատանայէն փորձուեցաւ՝ ու ալ հիմա կա-

րող է ինչևիցէ կերպով նեղութիւն քաշող ներու ցաւակից ըլլալ : Չէ՛ թէ միայն մեզի նրման եղաւ , այլ նաև ամօթ չսեպեր մեզ իրեն եղբայր կանչելը : Արթողու որ իբրև եղբայր իրեն երթանք կատարեալ վստահութիւնով որ ինքը անձամբ փորձը առնելովք կարող է փորձա նաւորներուս օգնել :

11

Ուստի ալ համարձակութիւնով մօտենանք ջր նորհացը աթոռին աւջեր , որ ողորմութիւն ընդունինք՝ ու շնորհք գաննեք պէտք եղած ատենը մեզի օգնելու : Եբր . Դ . 16 :

ՏՂԱՅ մը որ իր հայրը բարկացուցած է ջր համարձակիր անոր երթալու և անկէ բան մը խնդրելու : Բայց թէ որ շատ անգամ բարկացուցած է զանիկայ և ներում ու սէր խընդրած է , երբոր կրկին հօրը գէմ յանցանք մը գործէ , ալ կը վախնայ և կ'ամչնայ նորէն երթալու և բան մը խնդրելու : Մեր գէպի Աստուծոյ ունեցած զգացումներնիս ալ բնականաբար ասանկ է . մեր մեղքերովք զինքը շատ անգամ բարկացուցած ենք , ալ ինչ համարձակութիւնով իրեն երթալու ու շնորհք խընդրելու ենք : Շատ անգամ մեղքերնիս իրեն

խոստովանեցանք և իրմէն շնորհք խնդրեցինք ,
 ու ինքը երկայնամտութիւն ցուցընելով՝ մեզի
 շատ օրհնութիւններ պարգևեց . սակայն կրկին
 շարունակեցինք իրեն դէմ մեղանշելնիս . ալ
 կրնանք երթալու և իրմէն թողութիւն ու ողոր-
 մութիւն խնդրելու համարձակիլ : Չէինք կրնար՝
 թէ որ իր աթոռին առջևը Ամենակարող միջ-
 նորդ մը՝ մէկ մեծ Քահանայապետ մը չունե-
 նայինք , որ մեզի պէս մեծ մեղաւորներուն ան-
 գամ մեղքերը քաւեց : Աենդանի է ան և մե-
 զի ալ կողմնակից է՝ թէ որ ճշմարտապէս իրեն
 կը հաւատանք . մեր մեղքերը իր վրան առած է ,
 և հիմա մեզ կը հրաւիրէ համարձակութեամբ
 իր շնորհաց աթոռին առջևը երթալու և ինչ
 օրհնութիւն որ պէտք է խնդրելու : Իր արժա-
 նաւորութիւնովը ընդունելի կ'ըլլանք , և թէ որ
 իր անունովը երթանք ամենեկին վախի բան
 չունինք :

12

Ուրեմն ապաշխարութեան արժանաւոր պը-
 տուղ բերէ՛ք : Մատթ . Գ . 8 :

ՊՌԿՈՒՆԲՆԵՐՈՎ ապաշխարութիւն ընելը
 դիւրին բան է . սա բանը Փարիսեցիները և
 Սադուկեցիները կ'ընէին երբոր կու գային Յով

հաննէսին իրմէ միրառուելու . բայց Յովհաննէս
 խրատեց անոնք՝ որ ապաշխարութեան արժանի
 պատու դ բերեն : Ամէնքս ալ աս խրատը վրանիս
 առնելու ենք . թէ որ կ'ըսենք թէ Քրիստոս
 կը սիրենք , մեղքերնիս ալ ապաշխարելու ենք :
 Բայց ապաշխարութիւնը միայն սուկունքով չը-
 լար . սրտով կ'ըլլայ և արտաքին գործքերովնիս
 կ'երևայ . իր բերած պատուները սրբութիւն ու
 Աստուծոյ բոլոր պատուիրանքները սիրելն է :
 Թէ որ մարդ մը Աստուծոյ դէմ ըրած իր ան-
 ցած ապերախարութեանը վրայ կը զղջայ , սկսելու
 է շատ փառարանութիւն և գոհութիւն մատու-
 ջանել իրեն՝ բոլոր իր ողորմութիւններուն հա-
 մար . թէ որ կը զղջայ աղօթքը զանց առնելուն
 համար , սկսելու է բոլոր սրտով աղօթք ընել :
 Թէ որ կը զղջայ իր անձնասիրութեանը , և իր
 ընկերին օգտին ջաշխատելուն համար , սկսելու
 է սիրել անոնք , և անոնց աղէկութեանը համար
 աշխատիլ : Թէ որ իր սրտին հպարտութեանը
 համար կը զղջայ , Աստուծոյ առջև ինքզինքը
 շատ խոնարհեցրնելու է : Թէ որ կը զղջայ իր
 Փրկիչը ձգելուն համար , սկսելու է քննել իր
 փառաւոր բնութիւնը , և աշխատիլ զինքը մար-
 դոց առջև փառաւորելու : Մէկ խօսքով թէ
 որ Աստուծոյ այս ինչ պատուիրանքը կտարե-
 լուն համար կը զղջայ , աշխատելու է անկէց ետև
 ան պատուիրանքին հնազանդելու :

13

Ուստի մենք հաւատքով արդարացած ըլլալով
խաղաղութիւն ունինք Աստուծոյ հետ՝ մեր Տէ-
րոջը Յիսուս Քրիստոսի ձեռքովը : հոսով . Ե . 1 :

ԵՐԲՈՐ Աստուծոյ դէմ գործած մեր յան-
ցանքներուն մեծութիւնը ճանչնանք , չենք կրը-
նար իրեն հետ խաղաղութիւն ունենալ : Որ
ատեն որ իր ներկայութեանը ելլենք խղճմտանքը
միշտ մեզ պիտի յանդիմանէ , և պիտի վախ-
նանք ու դողանք իր դիմացը : Ո՛չ ալ մեր բարի
գործքերովը կրնանք յանցանքնիս ծածկել , և
իրաւունք մը ունենալ Աստուծմէ ողորմութիւն
խնդրելու : Չէ՛ , մենք մեզմէ կորսուած մեղա-
ւորներ ենք , և անօգնական ու կորսուած պի-
տի մնանք թէ որ մեր զօրութենէն կամ մեր
բարութենէն զատ ուրիշ զօրութիւն մը կամ
բարութիւն մը չունենանք : Քրիստոս բոլոր մե-
զի պէտք եղածները կ'ընէ , թէ որ իրեն հաւա-
տանք . հաւատքով կրնանք արդարանալ : Մեր
արդարութիւնը Քրիստոսի հաւատալն է , և ա-
նով կրնանք Աստուծոյ առջևը ելլել , և իրեն
ընդունելի ըլլալ : Եւ երբոր հաւատքով արդա-
րանանք , Աստուծոյ հետ խաղաղութիւն կ'ունե-
նանք . ան ատենը կը հաշտուի մեզի հետ մեր
Փրկչին համար՝ որուն ապաւինած ենք , և
մարդասիրութեամբ մեր մեղքերուն թողութիւն

կու տայ և մեզ կը սիրէ : Մեզի զգացունել
 կու տայ թէ մեղքերնիս ներուած են , անոր
 համար սրտերնիս կը հանդէ : Եւ մեր վայելած
 խաղաղութեան յոյսն ու ուրախութիւնը ամէն
 քնն ալ Քրիստոս Յիսուսով են : Ինքը կու
 տայ մեր բոլոր ունեցածները , և յաւիտեանս
 բոլոր փառքը իրեն տալու ենք :

14

Ասանկ ալ հաւատքը՝ թէ որ հետը գործ
 չունենայ , ըստ ինքեան մեռած է : Յով . Բ . 17 :

ՄԵՂԱՒՈՐԸ Աստուծոյ առջին արդարացը-
 նող հաւատքը լոկ ճշմարտութիւնն հասկընալ
 և անոր անտարբեր հաւանութիւն մը տալը չէ .
 ճշմարիտ հաւատքը սիրով 'ի գործ կը դրուի և
 սիրալ կը սրբէ : Անոգանի հաւատքին պտուղը
 բարի գործքեր են . չէ թէ հաւատացեալը իր
 բարի գործքերովը փրկուիլ յուսալու է . քան
 լիցի : Աստարեշապէս կը հաւատայ Աստուծոյ
 խօսքերուն , որ կ'ըսէ՝ թէ Օրէնքին գործքե-
 րովը մէկ մարմին մը պիտի չարդարանայ : Սըր-
 սով կ'ընդունի Աստուածաշունչին Քրիստոսի
 համար տուած վկայութիւնը , թէ " Անկէ 'ի
 դատ ուրիշ անուն մը չկայ երկնիքին տակը
 մարդոց մէջ տրուած , որ անով կարող ըլ-

լանք փրկուելու ,, : Բայց քանի որ միայն Քրիստոսով փրկութիւն գտնել կը յուսայ՝ հաւատքը իր սրտին մէջը կը գործէ , և զինքը աւանկ վիճակի մը կը հասցընէ որ բարի գործքեր կը սկսի ընել առ Աստուած և առ մարդիկ : Իր ընկերը կը սիրէ և անոր բարի ընել կ'ուզէ , Աստուած կը սիրէ , և զինքը փառաւորել կը փափաքի : Աս գործքերը՝ որ հաւատքին բընական ստուղներն են , կը ցուցընեն թէ իր սրտին մէջ հաւատք կայ : Թէ որ մարդ մը կ'ըսէ թէ Քրիստոսի կը հաւատամ ու տակաւին անոր պատուիրանքներուն անհնազանդութիւն կ'ընէ , կը ցուցընէ թէ ան իր հաւատքը մեռած է , որ իր սրտին մէկ ազդեցութիւն մը չընէր , և հետևապէս զինքը պիտի չփրկէ : Ան հաւատքը սատանաներուն հաւատքին նման է , որոնք կը հաւատան և կը սարսափին ալ՝ բայց բնաւ սէր չունին :

13

Քանզի ով որ բոլոր օրէնքը սրահէ , ու մէկ քանի մէջ յանցաւոր ըլլայ , անիկայ ամենուն պարտական կ'ըլլայ : Յակ . Բ . 10 :

ԸՆԴՀԱՆՐԱՊԷՍ մարդիկ իրենց բարի գործքերուն վրայ մեծ արժէք կը գնեն և կը յուսան

Թէ անոնցմով կրնան վերկուել • բայց չեն խորհիր
Թէ աս կերպով վերկուելու համար բոլոր կեան
քերնուն մէջը Աստուծոյ բոլոր օրէնքը կատարեալ
և ճշդիւ պահելու են : Թէ որ մէկ բանով մը կու
րեն իր օրէնքը , ալ անոր անէծքին տակն են
ու չեն կրնար ետքէն հնազանդութիւն ընելով
ինքզինքնին անկէց ազատել : Դիցուք թէ մէկ
մարդ մը մարդասպանութիւն ըրած է , բնա
գողութիւն ըրած չըլլալը՝ և կամ երկրին օրէնք
ներէն մէկը երբէք կտարած չըլլալը յառաջ բե
րելով չկրնար օրէնքին առջև արդարանալ և
ազատիլ • ոչ ալ այնուհետե բարի վարք մը
ունենալու երաշխաւորութիւն տալով կրնայ ա
զատիլ : Մարդասպան է և իբրև մարդասպան
օրէնքին սրափժը կրելու է : Աոյնադէս Աստու
ծոյ օրէնքը անգամ՝ մը կտարուր մեղաւոր է ու
մեղաւոր պիտի մնայ , թէպէտ ան մէկ անգա
մէն զատ երբէք օրէնքին դէմ բան մը ըրած
չըլլայ : Որ և իցէ անհնազանդութեան գործին
սրափժը մահ է , և մեղաւորը պիտի մեռնի թէ
որ իր բարի գործքերէն զատ ուրիշ ճար մը
չկրնայ գանել վերկուելու : Բայց մարդկային
ազգին ամէն մէկ անգամը մեղանչած է , չէ թէ
միայն անգամ մը՝ հասկա պիտտ շատ անգամ •
Աստուած ըսաւ որ սրտերնին շատ չար է : Ին
տո՞ր անյոյս ճամբայ է անոնց բռնած ճամ
բան , որոնք կը ջանան իրենցմէ արդարութիւն
գործելու , և անով Աստուծոյ առջև ել
լալու :

16

Ու ժողովուրդը բանակը դարձաւ . և Իսրայէլի ծերերը ըսին . Ինչո՞ւ համար Տէրը Փղշտացւոց առջևը կտարեց մեզ այսօր . Տէրոջը ուխտին տապանակը Սեւովէն մեր քովը առնենք . ու մեր մէջը գանուի , որ մեզ ազտանէ մեր թշնամիներուն ձեռքէն : Ա. Թ. ա. Գ. . 3 :

ԵՐԲՈՐ Տէրը բարկացաւ և Իսրայէլացիները թողուց՝ որ Փղշտացիներէն յաղթուին , անմիջապէս սկսան մէկզմէկու պատճառ հարցընել : Աստուած շատ անգամ իրենց կողմէն պատերազմեցաւ , և անոնք դիտէին թէ կարող էր աս անգամ ալ իրենց թշնամիներէն փրկել զիրենք . անոր համար մէկ պատճառ մը կը լիցանայր . էր որ իրենք ձգեց որ յաղթուին : Աստուած շատ անգամ ըսաւ որ իրենց մեղքերէն զատ ուրիշ պատճառ մը չկայ իրենք երեսէ ձգելուն . ուստի պէտք էր որ իրենց սիրտերը քննէին , և ասպաշխարութիւնով գային ու իրենց մեղքերը խոստովանէին անոր առջին , ու թողութիւն և ողորմութիւն խնդրէին : Բայց աս ընելնուն անոր տապանակ ուխտին բանակը բերել առին , խորհելով թէ անսկիայ կրնայ իրենք ազտանել : Բայց Աստուած իրենց դարձած յիմարութիւնը ցուցուց իրենց , թող առավ Փղշտացւոց որ տապանակ ուխտին ալ տանին :

ասանին : Իսրայէլացիք իրենց յոյսերը աւելի
արտաքին արարողութիւններու և արտօնութիւն-
ներու վրայ դրած էին , քան թէ Աստուծոյ
բայց մինակ անոնք չեն ասանկ ընողները : Տա-
կաւին շատ մարդ կայ խորհող թէ տեսանելի
եկեղեցիին հետ կապուած ըլլալով և անոր
սահմանադրութիւնները կատարելով ապահով
են : Եւ թէ որ գիտունուն վտանգ մըն ալ
դայ , ապաշխարութիւնով Աստուծոյ երթալուն
և իրմէն ողորմութիւն խնդրելուն տեղը , ան
սահմանադրութիւններուն կը վազեն որ ապահո-
վութիւն գտնեն : Բայց Աստուած պիտի ցուցը-
նէ ամէն մարդոյ , թէ ինչ սրտառ քան է մի-
այն իրեն ապաւինելուն տեղը ուրիշ քանի մը
և մինչև անգամ ինք իր ձեռքովը դրած սահ-
մանադրութիւններու ապաւինիլը :

17

Աստուծոյ ու հօրը քով մարութր ու անարատ
կրօնասիրութիւնը աս է . որբերուն ու որբա-
րիներուն տես երթալ իրենց նեղութեան տ-
տեներ , ու անձը անարատ պահել աշխարհէն :
Յակ . Ա . 27 :

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԻՆ սորվեցուցած կրօն-
քին մէկ դեղեցկութիւնն է աս , որ մարդոցմէ

կը պահանջէ չէ թէ միայն առ Աստուած ունեցած պարտաւորութիւննին, հասցա նաև առ մարդիկ ունեցած արդարութեան և մարդասիրական պարտաւորութիւններնին զգուշութեամբ կատարել : Աս կրօնքը բանողները մեծ գութ ունին նեղեալներուն վրայ, և տառապեալները մխիթարելու աշխատիք իրենց շատ հաճելի գործ մըն է : Քրիստոնեայ չէ ան մարդը, որ իր Արդաստեանն նման չփախաքիր բարեգործութիւն ընելու, և նեղութեան մէջ եղողները մխիթարելու և հոգալու : Քիտուս Քրիստոս մեծ գութ ունէր բոլոր նեղեալներուն վրայ, և աս նոյն իր հոգին իր աշակերաններուն մէջն ալ ըլլալու է : Բայց Քրիստոնեան չէ թէ միայն որ բերուն և որբեարիներուն տես երթալու է իրենց նեղութեան ժամանակը, չէ թէ միայն իր մարդասիրական պարտաւորութիւնները հաւատարմութեամբ կատարելու է, հասցա ինքզնիքը աշխարհքէն անարատ պահելու է : Քրիստոնեաները քանի որ աշխարհիս մէջն են աշխարհէս հետու ըլլալու են, աշխարհիս նման ըլլալու չեն : Անարատ ըլլալու են աշխարհիս սովորութիւններէն՝ սկզբունքներէն և զգայումներէն : անարատ ըլլալու են աշխարհիս անձնասիրութեան և հպարտութենէն : Քանի որ մարդասիրական գործքեր կ'ընեն, աշխարհիս նման՝ պատիւ առնելու համար ընելու չեն, հասցա սիրով շարժուած առ Աստուած և առ մարդիկ :

Աստուած մնալու էն աշխարհիս սէրէն . մէկ
խօսքով ցուցնելու էն թէ աս աշխարհէս չեն՝
խնոր որ Վրիտոս ալ աս աշխարհէս չէ :

18

Քանզի ժամանակ է որ դատաստանը Աստու-
ծոյ առնէն սկսի . և թէ որ առաջ մեզմէ
կըսկսի, հապա անոնց վերջը ի՞նչ պիտի ըլլայ՝
որոնք Աստուծոյ Աւետարանին չեն հնազանդիր :
Ա Պ Ե Պ . Դ . 11 :

ԱՌԱՔԵՐԱԼԸ հաս խնդիր մը կ'առաջարկէ,
որուն ամէն մարդ աղէկ մտադրութիւն ընելու
է : Մարդիկ աս աշխարհիս մէջ Աւետարանը
մէկդի կը ձգեն . և աս ներկայ վիճակներուն
մէջ՝ Աստուծոյ ծառայողներուն և չծառայողնե-
րուն մէջ մէկ մեծ տարբերութիւն մը չերևար .
և թէպէտ հիմա ապահով կ'երևան, բայց աղ-
ղեօք միշտ ասանկ պիտի մնան : Ըռւտով աս աշ-
խարհէս պիտի ելլեն, և ան ատենը հիմակուան
պէ՞ս պիտի մնան . վերջերնին ի՞նչ պիտի ըլլայ :
Աստուած աս հարցմունքներուն պատասխանը
տուած է . յաւիտենական մահն է իրենց վախ-
ճանը : Աստուած անոնց որտմտութիւն և բար-
կութիւն նեղութիւն և տանջանք պիտի հա-
տուցանէ : Իր դիմացէն պիտի վաճառուին և ի-

ընկնայ դործքերուն պառուղը յուսահատութեան
աշխարհին մէջ պիտի քաղեն, ուր տեղի որդը
չմեռնիր և կրակը չմարիւր: Իրենց մէկ հատիկ
Փրկիչը արհամարհեցին, և ալ հիմա իրենց մե-
ղացը համար ուրիշ զոհ չկայ: Ա՛լ թէ մար-
դիկ իմաստուն ըլլային, և առ բանը հասկը-
նային ու իրենց վախճանը խորհէին: Բայց ո-
րո՞նց է առ դատապարտութիւնը, բոլոր Աւետա-
րանին ճշնադանդողներուն: Վրիստանեայ կո-
չուկը և Յիսուս Քրիստոսը Փրկիչ հաւատալը
բաւական չէ. Վրիստոսի պատուիրանքները
պահելու ենք, Աւետարանին բոլոր հրամաննե-
րուն հնադանդեղու ենք, թէ որ կ'ուզենք վեր-
ջապէս երկնից թագաւորութեանը ընդունուող-
ներուն մէջն ըլլալ:

19

Դարձեալ՝ երկնից թագաւորութիւնը արախի մը
մէջ պահուած գանձի նման է, որ անիկայ մէկ
մարդ մը գանելով կը ծածկէ. և ուրախութե-
նէն կ'երթայ բոլոր ունեցածը կը ծախէ, ու
ան արտը կը գնէ: Մատթ. • Ժ. Գ. • 44:

ՔՐԻՍՏՈՍԻ Աւետարանը մեզի գանձ մը կը
յայտնէ որն որ ամէն մարդ կրնայ առնել:
Անիկայ անհուն գնով գանձ մըն է, անանկ

դանձ մըն է ան, որ չէ թէ միայն մարմինը
 կ'ուրախացընէ, հասլա նաև անմահ հոգւոյն
 փափաքներն ալ կը լէշընէ: Չէ՛ թէ միայն մե-
 ղի քիչ մը առնն օգուտ կ'ընէ, հասլա յաւի
 տենական փառք՝ սրտիւ և երանութիւն կը
 բերէ իր հետը: Աս աշխարհիս մարդիկները
 աս դանձը չեն տեսներ, անիկայ անոնցմէ ծած-
 կուած է. քովէն կ'անշնին ու չեն կրնար դըս-
 նել: Բայց երբոր Աստուծոյ շնորհքը կը դըր-
 դէ մարդ մը աս դանձը փնտռելու, երբոր իր
 աչքերը կը բացուին և անոր ճշմարիտ արժո-
 դութիւնը կը տեսնէ, երբոր կատարելապէս կը
 հաւատայ թէ աս դանձը կրնայ իրենը ըլլալ,
 ուրախութիւնով կը լէցուի և սրտաբառ է ամէն
 բան ձգել անիկայ ձեռք բերելու համար: Աս
 աշխարհիս բաները շատ սիրողները, և կամ ա-
 մէն բանէ աւելի անոր հարստութեանը՝ սրտ-
 ախիսն և դքսանքին փափաք տուողները չեն
 կրնար աս դանձը ժառանգել: Աւետարանին
 դանձը գանող մարդը, անիկայ իրենը ընելու
 համար աշխարհքը և բոլոր իր փառքերը ուրա-
 խութեամբ կը ձգէ: Նրեն այնչափ սիրելի եղած
 բոլոր մեղքերը կը ձգէ. բոլոր իր հպարտու-
 թիւնը և անձին արգարութիւնը կը թողու: Ա-
 մէն բան կը ձգէ և Քրիստոսի կու գայ աս
 դանձը ստանալու համար, և շատ մեծ շահ մը
 կը սեպէ բոլոր աս բաները կորսնցընելովը անի-
 կայ ձեռք բերելը: Թէ որ աս մեծ դանձը ըս

տանանք, աշխատելու ենք անոր ճշմարիտ ար-
ժէքը ուրիշներուն ալ ցուցընելու, որ անանք
ալ անիկայ գանե՛ն :

20

Բայց արդարներուն ճամբան ծագող լոյսին պէս
է, որ երթալով կը լուսաւորուի, մինչև որ կա-
տարեալ որ ըլլայ : Առակ • Գ • 18 :

ԱՆԽԱՐՀԻՍ մէջ չկայ անանկ արդար անձ
մը որ միշտ բարի գործէ և երբէք չվեղանչէ •
բայց կան անձինք որ իսուս Վրիստոսի հաւատ-
քովը արդարայաժ էն և անոր շնորհքովը կա-
րող էն աշխարհիս մէջ աստուածապաշտութեան
կեանք մը վարելու : Ասանք աշխարհի լոյսն էն,
իրենց բոլորովը եղողներուն մեծ օգուտ կ'ը-
նեն մեղայ խաւարը փարատելով և ճշմարտու-
թեան լոյսը ցուցընելով : Իրենց վարքին մէջ
կը փայլի ան բնաւորութիւնը՝ որն որ Աս-
տուած պահանջած է մարդոցմէ • և իրենց ամէն
գործքերուն մէջ Ղեկտարանին սկզբունքներովը
գործելով աւիթ կ'ըլլան անոր Աստուածային
լոյսը ամէն կողմ տարածուելուն : Արդարեւ ա-
նանք ծագող լոյսին պէս են, որ երթալով կը
լուսաւորուի, մինչև որ կատարեալ որ ըլլայ :
Անանք շնորհքով կ'աճին • կեանքերնին որչափ

որ երկըննայ, այնչափ օրէ օր սուրբ և Աստուծոյ նման կ'ըլլան: Քանի որ աս Աստուածային կենաց մէջ առաջ երթան, իրենց օրինակը այնքան օգտակար կ'ըլլայ. և ասանկ պիտի երթան օրէ օր աւելի Քրիստոսի նման և աշխարհիս մէջ աւելի պայծառ լոյսեր ըլլալով, մինչև որ Քրիստոսով կատարեալ մարդ ըլլան, և երկնից կատարեալ լոյսը վայելէլու երթան: Աս է բոլոր հաւատքով արդարացածներուն 'վախճանը. և աս կատարելութեանը ամէնքս ալ կրնանք հասնիլ և հաւատքին ձեռքովը անխիայ գանել թէ որ հաւատքով ապրինք:

21

Տէրօջը բոլոր ճամբաները ողորմութիւն ու ճշմարտութիւն են, իր ուխտը ու վկայութիւնները պահողներուն: Մաղձ • ԻԵ • 10:

ԱՍՏՈՒԱԾ՝ աշխարհիս մէջ սեպհական ժողովուրդ մը ունի. ինքը անոնց հետ ուխտ մը ըրաւ. խոստացաւ անոնց Աստուածը ըլլալ թէ որ անոնք ալ իր ժողովուրդը ըլլան: Իր ջանարհաց գանձերը բացաւ և խոստամունքով ու երգումով ինքզինքը պարտաւորութեան տակ դրաւ, որ զանոնք բոլոր իրեն հետ ուխտի մըտնողներուն և իր վկայութիւնները պահողներուն

պարգևէ : Մտնք որ ճշմարտապէս Աստուծոյ
 զաւկըններն են ամէնքն ալ առ ուխտը ըրած
 են • չեն խոստանար թէ իրենք իրենց կարո-
 զութիւնովք պիտի կատարեն իրենց կողմին ին-
 կած դաշինքը • բայց Քրիստոս՝ իրենց բարե-
 կամը և եղբայրը, կը կատարէ անիկայ իրենց
 տեղը և անոնք մէկ են անոր հետ : Աստուծոյ
 ուխտը կը պահեն Քրիստոսի միշնորդութիւնը
 ընդունելով, և ինքզինքնին անոր յանձնելով •
 և բոլոր իրենց կարօտութիւնները իրմէն խընդ-
 րելով • անոր զօրութիւնովք Տէրօջը օրէնքները
 կը պահեն : Բոլոր ասանկներուն Տէրօջը ճամ-
 բաները ողորմութիւն և ճշմարտութիւն են, և
 Աստուած անոնք իրեն մեծ մարդասիրութիւ-
 նովք ու գթութիւնովք կ'առաջնորդէ : Թէ որ
 անոնց 'նեղութիւն տայ' չէ՛ թէ իր բարկութե-
 նէն է, հապա անոնց օգուտին համար • թէ և
 կրակով փորձուին, սակայն Աստուած տակաւին
 ողորմութիւնով և ճշմարտութիւնով կը վարուի
 անոնց հետ : Ինքը խոստացած է զինքը սիրող-
 ներուն որ բարի բանի մը կարօտութիւն պիտի
 չքաշեն, և առ իր խոստամունքը կը պահէ : Եր-
 բէք իր խոստամունքը չկատարելէք չըներ, և մենք
 պարտաւոր ենք անոր հաւատալ՝ թէ և չկր-
 նանք հասկընալ ինչո՞ւ և ինչպէ՞ս ընելը : Հի՞մա
 ապաւինելու ենք, և վերջն ալ պիտի հասկընանք •
 երբոր արքայութիւն ելթանք պիտի տեսնենք
 թէ Տէրօջը ճամբաները մեզի ողորմութիւն և

Ճշմարտութիւն եղան, և անոր համար յաւիտեանս զինքը պիտի փառաւորենք :

22

Ասոր համար մենք ալ անդադար Աստուծմէ կը գոհանանք, որ մեզմէ Աստուծոյ խօսքը լրտելով ընդունեցիք, չէ թէ իբրև մարդոց խօսք, հասկա ինտոր որ ճշմարտապէս է, Աստուծոյ խօսք, որ նաև կը ներդործէ ձեր մէջը որ հաւատար : Ա թէ՛ս • Բ • 13 :

ՊՕՂՈՍ պատճառ ունէր թեատղանիկեցիներուն համար Աստուծոյ գոհութիւն տալու, որ ան կերպով ընդունեցին իրենց քարոզած խօսքը, ինչու որ հաստատ տեսաւ թէ իր աշխատանքը պարասը չգնաց : Իրենց քարոզուած խօսքը իբրև ճշմարտապէս Աստուծոյ խօսքը ընդունելովն, խմաստուն եղան փրկուելու, և այսպէս Աստուած անոնց մէջ փառաւորուեցաւ : Շատ մարդիկ Աստուածաշունչը կը կարգան կամ մտիկ կ'ընեն, բայց շատ քիչ ազգեցութիւն կ'ընդունին • և գլխաւոր պատճառը աս է որ անիկայ բոլոր սրտովն իբրև Աստուծոյ խօսքը չեն ընդունիր : Թէ որ ամէն մարդ ճանչնար թէ Աստուածաշունչը յաւիտեանական Աստուծոյ խօսքն է որ իրենց կը խօսի, այնչափ անհոգու-

Թիւն չէին կրնար ցուցնել անոր խօսքերը կարդացած կամ մտիկ ըրած Ժամանակնին : Թէ որ անոր իբրև Աստուծոյ խօսք ականջ դրած ըլլային , ալ անանկ անհոգ և անտարբեր պիտի չըլլային երբոր աս ահաւոր խօսքերը լուսէին , թէ “ Ան անձը որ մեղք կը գործէ՝ անիկայ պիտի մեռնի ” • կամ “ Թէ որ չապաշխարէք ամէնքդ ալ անանկ պիտի կորսուիք ” • “ Յիսուս Քրիստոս աշխարհք եկաւ մեղաւորները փրկելու համար ” • անկարելի պիտի ըլլար որ աս ճշմարտութիւնները մէկ ականջներնէն մտնէր ու միւսէն ելլէր : Զանալու ենք միշտ ան զգացումը ունենալ Աստուածաշունչին վրայ , թէ Աստուծոյ խօսքն է որ մեզի կը խօսի , և անիկայ իբրև Աստուծոյ խօսքը ընդունելու ենք , որ ան ատենը մեր հոգիներուն յաւիտենական կեանք ըլլայ :

23

Տերօջը ողորմութիւններէն է , որ չհատանք • վասն զի անոր գթութիւնը չպահսեցաւ : Ուր • Գ • 22 :

ՉԵՆՔ կրնար Աստուծոյ ողորմութեանը մեծութիւնը կատարելապէս իմանալ , մինչև որ մեր մեղացը մեծութիւնը չզգանք : Սուրբ Հոգին մի-

այն կրնայ կարողութիւն տալ աս բանը ընելու , վասն զի մենք մեզմէ բնաւ չենք տեսներ մեր յանցանքներուն շատութիւնը : Թէ որ մեղքերնիս համարել ուզուիք՝ գլխունուս մազէն շատ են . բայց Աստուած մեր գործած բոլոր յանցանքները գիտէ : Բոլոր սկիզբ և անձնասիրութեան զգացումներնիս , բոլոր չար իորհուրդներնիս , բոլոր սարսաղ և մեղանչական խօսքերնիս , ինքը ալէկ գիտէ : Քանի անգամ իր սատուի բանքները կտորելնիս , քանի անգամ արգիլուած գործքի գործելնիս աչքին առջին են . և բոլոր աս բան՝ ըր զինքը սինտ շատ նեղացուցած են : Ամենէն փոքր մեղքը իրեն շատ զղուելի է . ուստի ինասիր մեծ ողորմութիւն ցուցուց մեզի որ այսչափ ժամանակ մեզ իր բարկութիւնովը չզարկաւ : Մենք իր ձեռքն ենք , և մէկ խօսքով կրնայ մեզ յաւիտ նական մահուան խորհել . բայց տակաւին մեզի կը համբարէ և ամէն օր իր օրհնութիւնները կը սարգուէ , վասն զի իր գլխութեանը անհասանում է : Ամէն օր և ամէն ժամ Աստուծոյ մեծ ողորմութեանը փառաբանութիւն կարդալու ենք . և յաւիտեանս պիտի տեսնենք որ իրեն բաւական գոհութիւն չենք կրնար տալ , վարն զի իր ողորմութիւնները յաւիտեանս կը մնան :

24

Քանզի մենք Քրիստոսի մասնակից եղած ենք, միայն թէ ան հաստատութեան սկիզբը մինչև վերջը պինտ բռնենք : Եբր . Գ . 14 :

ԱՍՏ սքանչելի արտօնութիւններ են ճշմարիտ քրիստոնէին արուած արտօնութիւնները . և շատ բարձր պատիւներ են իրեն շնորհուած պատիւները : Յիսուս Քրիստոս՝ Աստուծոյ Արդին անոնք իրեն հետ մէկ ըբաւ . իրենց մէջը կը բնակի և անոնք բոլոր իրեն ունեցածներուն մասնակից են : Ասիկայ շնորհաց մէկ դաղանիքն է, բայց Աստուած մեզի յայանեց . և թէպէտ չենք կրնար կատարեալ հասկընալ, սակայն կրնանք հաւատալ՝ սքանչանալ և փառաբանել : Թէ որ ճշմարիտ հաւատացեալ ենք Քրիստոսի բոլոր լիութեանը մասնակից ենք, և բնաւ պակասութիւն մը չունինք : Մենք թշուառ մեղաւորներ ենք, բայց իրեն հաւատալով իր արդարութեանը մասնակից կ'ըլլանք, և անով հագուած կրնանք առանց երկիւզի Աստուծոյ առջև ելլել : Մենք տկար և յանցաւոր ենք, բայց ինքը մեզ իր սրբութեանը հաղորդ կ'ընէ . մեր մէջը կը բնակի, և մեղքին զօրութիւնը կը յաղթէ ու մեզ իրեն նման կ'ընէ : Մասնակից ենք ան սիրոյն, որով հայրը զնիքը կը սիրէ : Մեզ իրենները և իրեն նմաններ կը կոչ-

չէ, և Հայրը մեզի սիրով կը նայի : Իր ժառանգութեանը մասնակից ենք, մենք իրեն հետ ժառանգակից ենք, և իր փառքին ալ մասնակից պիտի ըլլանք : Ինքը կ'ուզէ որ իր հետը ըլլանք և իր փառքը տեսնենք, և ինքը խոստացաւ որ մենք իր հետը իր աթոռը նստինք :

25

Արդ՝ յուսոյ Աստուածը ձեզ լեցընէ բոլոր ուրախութիւնով ու խաղաղութիւնով հաւատալու մէջ, որ առատանաք յուսով Հոգւոյն Սրբոյ զօրութեամբը : Հոով՝ • ԺԵ • 13 :

ՅՈՅՍԸ մարդուս բնական է • յոյսն է զինքը իր ներկայ նեղութիւններուն մէջ մխիթարողը, և զինքը աշխատութեան շարժողը : Բայց ճշմարիտ քրիստոնէին մէկ արտօնութիւն մըն է յուսով առատանալը • յուսոյ Աստուածը փառաւոր յոյսեր կը դնէ անոնց առջին, և առ յոյսերով անոնք շարունակ ուրախութեան մէջ են : Թէ որ նեղութեան և տառապանաց մէջ ըլլան, աչքերնին ան աշխարհքը կը դարձընեն, ուր բնաւ տրամաւթիւն չկայ, և ուր քիչ առ տեսնեն երթալ կը յուսան : Թէ որ բոլորաիջնին եղած շարութիւնները իրենց նեղութիւն տան, կ'ուրախանան յոյսով որ շուտով երկինքին մէջի

կատարուած սուրբերուն ընկերութեանը պիտի
խառնուին : Թէ որ իրենց մեղանշահանութիւնը
զգայով արամութեան մէջ իյնան , մէկ լաւա-
գոյն վիճակի մը հասնելու յոյս ունին , որ ալ
անկէջ ետև յաւիտեանս մեղքէ պիտի ազաւին :
Վերջապէս ինչ փորձութիւն որ դայ գլխունուն ,
կը յուսան քիչ ատենէն յաւիտեանս անկէջ
ազաւիլ , և կատարեալ ու յաւիտենական եր-
ջանկութիւն վայելել . Բայց առ փառաւոր
յոյսերով առատանալու համար , նախ հաւատա-
քով առատանալու է . Թէ որ հաւատքով տկար
ըլանք , մեր մեղքերը աչքերնիս պիտի խաւա-
րեցընեն , ու երկբայութիւններով և վախերով
պիտի լեցուինք : Բայց Թէ որ ան կենդանի
հաւատքը ունենանք որ մեզ Քրիստոսի հետ
հաստատ կը միաւորէ , որ բոլոր յոյսերնիս իր
վրայ դնենք , շարունակ կրնանք յոյսով ու-
րախանալ :

26

Եկէք , ու Տէրոջը դառնանք . քանզի անիկայ
պատուեց , ու անիկայ մեզ պիտի բժշկէ . անի-
կայ զարկաւ , ու անիկայ մեզ պիտի պատէ :
Ո՛վէ՛ք . Զ . 1 :

ԱՍՏՈՒԾՈՅ իր ժողովուրդին հետ ըրած ուխտ .

օրն մէկ մասը սա է՝ որ էթէ մեղանչեն և զինքը
 ձգեն, իրենց յանցանքներուն դաւադանով այ-
 ցելութեան պիտի դայ, և իրենց անօրէնութիւն-
 ներուն հարուածքով : Թէ որ անոնք բոլոր-
 վին երեսէ չձգէ, կը յանդիմանէ մեղքերնուն
 համար . և ըրած յանդիմանութիւնը սրարապը
 գացած չըլլար, երբոր տառապեալ անձին սըր-
 տանց աղաղակել կու տայ, թէ Ես Տէրոջը
 պիտի դանամ : Երբոր Վասուած կը տեսնէ
 թէ իր զաւկները իրենց բարեկամներէն մէկը
 և կամ երկրաւոր բան մը իրենց կուռքը կ'ը-
 նեն, հաւատարիմ է իր խոսամունքին որ կ'ըսէ
 “Ձեր բոլոր կուռքերէն ձեզ պիտի սրբեմ” ,
 և ան սիրելի բաներնին ձեռքերնէն կ'աննէ որ
 նորէն բոլոր սրակնին իրեն տան : Վասուած
 շատ անգամ չէ թէ միայն առանձին մարդիկ .
 հասրա ժողովուրդներ ու ամբողջ եկեղեցիներ
 կը յանդիմանէ իրմէն մոլորեւուն համար : Այն
 ան եկեղեցիին՝ ուսկէց Սուրբ Հոգին իր ներ-
 գործութիւնները ետ քաշած է, և եկեղեցւոյն
 անդամները լոկ քրիստոնեայ անունով մը ձը-
 գած է, արտաքին կրօնական արարողութիւն-
 ներու և անպառը սահմանադրութիւններու ա-
 պաւինելու, կենդանի հաւատքէ՝ հողևոր ուրա-
 խութիւններէ և խաղաղութենէ զրկուած : Թէ
 որ եկեղեցիի մը անդամները ինքզինքնին սա մի-
 ճակին մէջը գանեն, սրտանց ըսելու են Դաս-
 նանք մեր Տէրոջը երթանք . և թէ որ լայնով
 ու սպառնալեւով իրեն երթան, իրենց պիտի
 դանայ և իրենք վերստին պիտի տարեցընէ :

27

Եւ անոր աշակերանները եկան՝ ու մարմինը վերցրնելով թաղեցին . և դացին Յիսուսին պատմեցին : Մատթ . ԺԴ . 12 :

ԵՐԲՈՐ Յիսուսի կարապետը՝ Յովհաննէս Մկրտիչը անգուծ հերովդէսին ձեռքովը դըխատուեցաւ, անոր աշակերանները մեծ տըրամուծեան մէջ ինկան : Ինչ ապահովութիւն և ինչ պաշտպանութիւն կրնային յուսալ՝ երբոր իրենց առաջնորդը սպաննուեցաւ անկիրթ իշխանի մը ձեռքով անառակ աղջկան մը աղաչանքովը : Բայց մէկ միսիթարիչ մը ունէին, որուն կրնային երթալ պատմել բոլոր իրենց ցաւերն ու երկիւղները, ու դացին և պատմեցին Յիսուսին : Յիսուս հիմա ալ ան ժամանակուան պէս պատրաստ է տրամուծեան պատմութիւններ մտիկ լնել, և սղաւորները միսիթարել . ինտոր որ Յովհաննէս Մկրտիչին աշակերանները դացին, անանկ ալ մենք կրնանք բոլոր մեր միշտերովը իրեն երթալ : Թէպէտ չենք կրնար անոնց պէս մարմնաւոր աչքով զինքը տեսնել, սակայն ինքզինքը անանկ յայտնած է մեզի, որ հաւատոյ աչքով կրնանք տեսնել զինքը և գիտնալ ալ որ քաղցրութեամբ մեր աղաղակներուն ախանջ կը կախէ : Ամէն նեղութեան ժամանակնիս թէ որ իրեն երթանք

մեզի կարեկից կ'ըլլայ և մեզ կը մխիթարէ : Ուստի միշտ երբոր փորձութեան մը մէջ իյնանք, երթանք և Յիսուսի պատմենք, և ինքը մեզ պիտի մխիթարէ և ուրախացընէ :

28

Բայց Տէրը հաճեցաւ որ զանհիկայ ծեծելով ցաւերու մատնէ : Եսայ • ԾԳ • 10 :

ԱՍՏՈՒԱԾ՝ ողորմութեանց հայրն է և շնորհաց Աստուածը : Անհիկայ մարդոց զաւկընէրը կամաւ ջնեղեր և չտառասուցընէր • և սակայն մարդարէն կ'ըսէ, Տէրը հաճեցաւ անհիկայ ծեծելու : Հոս յիշուած անձը մեղաւորաց Փրկիչն է, Աստուծոյ միածին Որդին : Աստուած անոր հաւներ էր • արարածներէն մէկը անոր չափ չէր սիրեր, և սակայն հաճեցաւ զինքը ծեծելու • և անհիկայ ցաւերու մատնեց : Զարմանալի խօսք մըն է սա, բայց առանց պատճառի չէր՝ որ Աստուած հաճեցաւ իր սիրական Որդին ծեծելու : Իր Որդին մեղաւորներուն տեղը անցաւ և ինքզինքը անոնց կողմանէ չարչարուելու տուաւ • սա ընելովը յաւիտենական երջանկութիւն պատրաստեց բազմաթիւ հոգիներու որ մարդ կարող չէ համբել : Աստուած գիտէր որ իր Որդիին քաշած չար-

չարանացը փոխարէն շատ մեծ հասուցում մը պիտի ընդունի . դիտէր թէ աս բանով բոլոր տիեզերքը զարմանքով սիրով և փառաբանութեամբ պիտի լեցուի . ուստի ասոր համար հաճեցաւ Տէրը զինքը ծեծելու : Յաւիտեանս պիտի զարմանանք և փառաւորենք աս մեծ շնորհքին խորհուրդը որ հայրը մեր բոլոր անօրէնութիւնները իր սիրական Արդւոյն վրայ դրաւ :

29

Եւ Առաքեալները Յիսուսի քովը ժողովուցան , և պատմեցին անոր՝ ամէն ինչ որ ըրին և ինչ որ սորվեցուցին : Եւ անիկայ ըսաւ անոնց . Եկէք դուք առանձին՝ անապատ տեղ մը , և քիչ մը հանգչեցէք : Մարկ . 2 . 30 , 31 :

ԱՍ Քաղցր հանգստութիւն մը առած պիտի ըլլան առաքեալները , երբոր Յիսուս հրաւիրեց անոնք իրեն հետ առանձին անապատ տեղ մը երթալու : Իր հրամանովը անդին առդին տարածուեր էին իր խօսքը քարոզելու և իր կամքը կատարելու , և հիմա եկան բոլոր ըրածներնին և սորվեցուցածներնին իրեն պատմելու : Անոնց յոգնելուն կարեկից եղաւ և սիրով կանչեց անոնք որ առանձին տեղ մը հանգչին : Ինքն ալ անդադար կ'աշխատէր , բայց կը դը-

Թար իր աշակերտացը վրայ և անոնցմէ իրենց
 տկար բնութեանը կարող եղածէն աւելի բան
 չէր պահանջեր : Մենք ալ առաքելոց նման բոլոր
 խօսածներնիս և ըրածներնիս շատ անգամ եր-
 Թալու Յիսուսի պատմելու ենք : Աս ընելովնիս
 շատ բաներ պիտի գանենք որ բուն մեր խրոյճ-
 մտանքները պիտի դատաւարալտեն • բայց բոլորն
 ալ Քրիստոսի խոստովանելու ենք : Շատ աղէկ
 կ'ըլլայ թէ որ կարողանանք ըսել թէ բոլոր
 ըրածներնիս իր կամքը կատարելու և զինքը փա-
 ռաւորելու դիտաւորութիւնով եր : Ան ատենը
 մեզ մեր աշխատանացը վրայ պիտի հանգչեցրնէ
 իր ներկայութեանը և սիրոյն ազդումովը : Յատ-
 կապէս Քրիստոսի պաշտօնեաները ամէն օր ը-
 րած գործքերնին և սորվեցուցած բաներնին եր
 Թալու իրեն պատմելու են : Թէ որ իրեն հետ
 աս հաղորդակցութիւնը ընեն , ինքը իրենց գործ-
 քերը պիտի առաջնարդէ և մահացու մոլորու-
 թիւններ սորվեցրնելէն անոնք պիտի խլահէ :
 Իրենց աշխատանքներն ալ պիտի օրհնէ , և ա-
 նոնք բարեաց պատճառ պիտի ընէ :

Մունճ եղայ ու բերանս ջբացի , վասն զի
 դուն ըրիր : Սաղմ . ԼԹ . 6 :

ԵՐ ԲՈՐ աշխարհային մարդ մը նեղութեան

մէջ իյնայ շատ տրտունջ կ'ընէ . թէ որ ձեռ-
 քէն գայ Աստուծոյ իրաւունք կը սրահանջէ , և
 կը գանգառի իբր թէ իրեն հետ խստութեամբ
 կը վարուի : Բայց երբոր Աստուծոյ որդւոցմէն
 մէկը նեղութեան մէջ իյնայ , ամենևին տրտ-
 ւունջ մը չընէր՝ խորհելով թէ Աստուած է
 ընողը : Գիտուածով փորձութիւն գալ չըլլար ,
 ամէնքն ալ անսխալապէս Աստուծոյ կարգադրու-
 թիւնովը կ'ըլլան . անոնց ամէնքն ալ Աստուծոյ
 ձեռքին գործիքներն են , որոնցմով իր զիտա-
 ւորութիւնները կը կատարէ : Ուստի վրանիա ինչ
 տրամութիւն որ գայ , անիկայ Աստուծոյ ձեռ-
 քէն եկածի պէս ընդունելու ենք . թէ որ մեր
 ամենասիրելի բարեկամները մեռնին տրանջելու
 չենք , ինչու որ Աստուած է ընողը : Մեղի պէս
 մեղանշական և անարժան տրարածներուն չը-
 վայելեր որ Աստուծոյ մեղի ըրած բաներէն
 մէկուն համար գանգաաւինք . մի թէ իր ձեռքէն
 բարի ընդունինք ու չար չընդունինք : Ինքը ա-
 մենխմաստ և ամենաբարի է . ինքը գիտէ՝ թէ որն
 աղէկ է և բոլոր իր ըրածները բարի են : Ուս-
 տի ալ մենք որ այսօր կանք ու վաղը չկանք
 և բան մըն ալ չենք գիտեր , աստատմբելու ենք
 իր մեղի ըրածներուն գէմ : Ի՛նչ քաղցր բան է
 ամէն բան Աստուծոյ հրամանովը ըլլալը գիտ-
 նալ և հնազանդութեամբ մեր անձը անոր ձեռ-
 քը յանձնել , ու իր կամքէն զատ ուրիշ
 կամք մը չձանձնալ :

ՀՈՆՏԵՄԲԵՐ

1

Յիսուս երբոր լսեց, ըսաւ. Աս հիւանդութիւնը մահուան համար չէ, հասար Աստուծոյ փառացը համար, որ Աստուծոյ Որդին անով փառաւորուի: Յ. Կ. ԺԱ. 4:

ՄԵԾ տրտմութեան մէջ էր Բեթանիացի ան փոքր ընտանիքը: Ղազարոս հիւանդ էր, և Մարթան ու Մարիամը սրտերնին կտարած կը վախնային որ չըլայ թէ մեռնի: Իրենց նեղութեանը մէջ Յիսուսի լուր հասցուցին թէ Ղազարոսը հիւանդ է, հաւատալով որ ինքը կարող է և կ'ուզէ ալ անխկայ բժշկել: Յիսուս անմիջապէս չգնաց. տրտմութիւննին մէկէնիմէկ ուրախութեան չփոխեց: Անոնցմէ շատ աղէկ գիտէր ինքը թէ որ բանն աղէկ է. ան ասենը լացին՝ բայց ետքը շատ ուրախացան ան նոյն բանով՝ որն որ իրենց այնքան մեծ ցաւ տալու առիթ եղած էր: Յաւիտեանս պիտի ուրախանան որ նեղութեան մէջ ինկան իրենք, վասն զի իրենց նեղութիւնը Աստուծոյ փառքին համար եղաւ, և Աստուծոյ Որդին անով այնչափ

փառաւորուեցաւ : Աստուած իր որդւոցը ինչ
 փորձութիւն որ խրկէ իր փառքին համար է , և
 որ անով իր Որդին փառաւորուի : Աստուծոյ
 մեղի ըրածներուն թէ որ ուրախութեամբ հը-
 նազանդինք , թէև անոնց պատճառը՝ հիմա չը-
 գիտնանք , վերջը պիտի գիտնանք և փառք պի-
 տի տանք Աստուծոյ՝ որ մեր նեղութիւններովը
 Գրիատոսի անունը փառաւորուեցաւ :

2

Շնորհք ան ամենուն հետ՝ որոնք մեր Տէր
 Յիսուս Գրիատոսը անկեղծութեամբ կը սիրեն :
 Ամէն : Եբե . . 2 . 24 :

ՊՕՂՈՍ առաքեալ Եփեսացւոց գրած թուղ-
 թը աս բարեմաղթութիւնովը կը վերջացընէ :
 Շնորհք խնդրելը Աստուծոյ ողորմութիւնը և
 անոր մէջը պարունակուած ամէն օրհնութիւն-
 ները խնդրել է , վասն որոյ շնորհք խնդրելով
 մեղաց թողութիւն՝ Աստուծոյ առջև արդարու
 թիւն՝ խղճմտանքի խաղաղութիւն՝ Յիսուս Գը-
 րիատոսի հետ հաղորդակցութիւն և անապական
 ու անկորուստ ժառանգութեան գրաւ խնդրած
 էրաւ : Պօղոս Սուրբ Հոգիէն ինտոր որ կը շար-
 ժուէր անանկ կը խօսէր , և աս իր բարեմաղ-
 թութեանը մէջ գտնուած օրհնութիւնները ան-

շուշա պիտի գան բոլոր Տէր Յիսուս Քրիստոսը անկեղծութեամբ սիրողներուն վրայ : Շատերը կան Քրիստոսի անունովը կանչուած՝ որոնք զինքը անկեղծութեամբ չեն սիրեր , որովհետեւ իր պատուիրանքները չեն պահեր . բայց Աստուած՝ որ ինքն է ամէն շնորհք պարգևողը , սոսկ անունով մը կամ արտաքին երևոյթներով չբխարուիր : Անխկայ սիրտերը կը նայի , և իր շնորհքը միայն Տէր Յիսուս Քրիստոսը անկեղծութեամբ սիրողներուն կու տայ : Պօղոս քրիստոնէական սիրոյ և միութեան ճշմարիտ հոգին ունէր . կը սիրէր բոլոր Տէր Յիսուս Քրիստոսը անկեղծութեամբ սիրողները՝ անոնք ինչ անուն որ ունենային : Նոյնպէս և մենք սիրելու ենք բոլոր անոնք որ անկեղծութեամբ Փրկիչը կը սիրեն , թէև արտաքին երևոյթներով մեզմէ շատ տարբեր ըլլան :

3

Սակայն ես միշտ քեզի հետ եմ . գուն իմ աջ ձեռքէս կը բռնեմ : Սաղմ : ՀԳ . 26 :

ՏԵՐՈՋԸ գթութեան ու ողորմութեան ճամբաները՝ որոնցմով որ Աստուծոյ որդիքը առաջնորդուեցան և կ'առաջնորդուին , շատ անգամ իրենց զարմանքի առիթ մը կ'ըլլան : Քր-

ըխտանեաներուն շատերը կրնան շատ անանկ
 ժամանակներ միտքերնին բերել՝ որ քիչ մնաց
 պիտի սահէր ոտքերնին, և թէ որ Աստուած
 զերենք չբռնէր յաւիտեանս պիտի կորսուէին :
 Շատ դերազանց քաջալերութիւն և լիտիթա-
 րութիւն մըն է որ միշտ Աստուծոյ հետն ենք .
 թէ որ ասանկ չըլլար՝ ինտոր կրնայինք գլխու-
 նուս եկած բոլոր փորձութիւններուն դէմ կե-
 նալ : Աշխարհքը մեզ իրեն կը քաշէ, և սատա-
 նան աղէկ գիտէ թէ ինտոր վրանիս յարձըկե-
 լու է մեր ամենէն ապահով եղած ատեննիս,
 և թէ ինտոր առջնիս սրատուական բաներ գը-
 նելու է որ մենք մեզք գործելու գրգուխք, և
 մեր խաբեբայ սրտերն ալ ան բաներուն շատ
 յօժարին : Մեր մի միայն ապահովութիւնը ինք-
 ղինքնիս Աստուծոյ ձեռքը յանձնելն է . թէ որ
 իրեն ապաւինինք ինքը մեր ձեռքերէն պիտի բռնէ,
 ինտոր որ գորովագութ հայր մը իր տկար
 որդւոյն ձեռքէն կը բռնէ : Միշտ Աստուծոյ հետն
 ըլլալնուս համար շատ զգուշութիւն ընելու ենք
 որ մեզք չգործենք . չըլլայ որ բարկացրնենք
 զինքը և անհնազանդութիւն ընենք, վասն զի
 միշտ իր հետն ենք :

4

Ուրեմն ան ժամանակը ի՞նչ պտուղ ունէիք
ան բաներէն՝ որոնցմով հիմա կ'ամչնաք . ինչու
որ անոնց վերջը՝ մահ է : Հոով . 2 . 21 :

ԵՐԲՈՐ ձեզ մարդ մը Սուրբ Հոգիին աղղե-
ցութիւնովը նորէն կը ծնանի , իր առջի վարքին
վրայ կը նայի ու իր յիմարութեանը վրայ շատ
կը զարմանայ : Ինքնիրեն կը հարցընէ թէ ի՞նչ
պտուղ կը քաղէր ան բաներէն , որոնց վերջը
մահ է : Կ'ամչնայ և կը զարհուրի երբոր կը խորհի
իր առջի վիճակին վրայ , որ մեղքով լեցուն էր
և Աստուծմէ օտարացած : Երանելի բան կ'ըլ-
լայ թէ որ բոլոր աշխարհային մարդիկ՝ որոնք
աշխարհքին և աշխարհիս բաներուն ետեւն են ,
Աստուած և երկինքը արհամարհած ժամանակ-
նին զգուշութեամբ ինքնիրեննուն հարցընեն , թէ
Ի՞նչ պիտի ըլլայ իրենց բոլոր աշխատանքնե-
րուն վերջին պտուղը : Աստուած ըսաւ որ ան
բաներուն վերջը մահ է . չէ թէ միայն մարմ-
նաւոր մահ , վասն զի անիկայ ամենուն ալ է ,
հապա հոգիին յաւիտենական մահը : Բայց թէ
պէտ և Աստուած ասանկ ըսաւ , սակայն մար-
դիկ փափաքով ան բաներուն ետեւն կ'ըլլան ,
որոնցմէն գիտեն թէ աս լեղի պտուղը պիտի
քաղեն : Ո՛հ թէ մարդիկ բանականութեան
ցուցուցած ճամբան երթային և աւելի յաւի-
տենական կենաց ետեւ ըլլային , քան թէ յաւի-
տենական մահուան :

5

Ամէն զգուշութիւնով քու սիրտդ պահէ ,
քանզի կենաց աղբիւրները անկէ է : Առաի . Դ . 23 :

ԱՍՏՈՒԾՈՅ որդիքը աս աշխարհիս մէջը
հոգ մը ունին՝ որուն աշխարհիս մարդիկը ծա-
նօթ չեն . ասիկայ սրտին պահպանութիւնն է :
Աշխարհային մարդուն հոգը չէ սրտին մէջ
ինչ գառնալը , անիկայ միայն կը նայի որ իր
արտաքին վարքը իր ընկերներուն առջին բարի
սեպուի : Ինչ և իցէ չար կիրք որ իրեն վար-
քին մէջ երևալովը աշխարհիս առջևը ունեցած
պատիւին չգտչիւր , հոգը չէ որ իր սրտին մէջ
մնան : Բայց քրիստոնէին ամենէն մեծ հոգը
աս է որ իր սիրտը Աստուծոյ առջևը բարի ըլ-
լայ . գիտէ որ Աստուծոյ աչքը միշտ հոն է ,
և կ'աշխատի բոլոր ան չար կիրքերը անկէց
դուրս ձգել՝ որոնք անոր սուրբ և անարատ
աչքերուն պիղծ կ'երևան : Նաև դէպի իր ըն-
կերներուն ունեցած պարտաւորութիւնները կա-
տարելու համար կ'աշխատի իր սիրտը պահպա-
նել : Գիտէ որ սրտին մէջն են կենաց աղբիւր-
ները , և թէ եթէ սիրտը բարեպաշտութիւնով
և սիրով լեցուելու ըլլայ , արտաքին գործքերն
ալ արդար և Աստուծոյ պահանջմունքներուն
համաձայն կ'ըլլան : Ինչ պարտաւ ջանքեր են
անոնց ջանքերը , որոնք կ'աշխատին մարմնաւոր

խատութիւններով սրբութեան հասնիլ , քանի որ սրտերնին չարէն սլահելու չեն աշխատիր : Տէ՛ր՝ շնորհք տուր ինձի որ ամէն օր սիրտս սլահսպանեմ :

6

Վասն զի իմ ժողովուրդիս վրայ դալու չարիքը ինչպէս կրնամ տեսնել . իմ աղգականներուս կորուստը ինչպէս կրնամ տեսնել : Ե.Թ. Ը. 6 :

ԵՍԹԵՐ շատ բարձր վիճակի մը մէջ էր . իր ցած վիճակէն ելաւ ու հարուստ և զօրաւոր Արտաշէս թագաւորին թագուհին եղաւ : Բայց թէպէտև այնչափ բարձր վիճակի մը հասաւ , սակայն իր եղբայրները ու աղգականները չքմոցաւ : Եւ երբոր ան ջարդուելու սպառնալիքը եղաւ անոնց , ինք ծամ բռնեց ու լացաւ , և անոնց կողմէն իր թագաւորին բարեխօսութիւն ըրաւ : Անոնց աս սպառնալիքը ըլլալուն համար անհանգիստ էջ և ձեռքէն եկածը ըրաւ որ անոնք փրկէ : Թէ որ Աստուծոյ որդիքն ենք , ցած վիճակէ մը ելած և թագաւորութեան մը ժառանգորդ եղած ենք : Բայց մտնալու չենք որ մեր աղգականներէն և ընկերներէն շատերը Քրի առջի ան նոյն նուաստութեան վիճակին

ձէջն են , և թէ առջևին սոսկալի կործանում
մը կայ . չէ թէ միայն Եսթերին ազգականներ
բուն ստանալիք եղած մարմնաւոր մահը , հա
սրա հոգիին յաւիտենական մահը . Աստուծոյ
յաւիտենական բարկութիւնն ու անկէճքը , յաւի
տենական կրակով վառուած բնակութիւն մը
առանց յոյսի : Անոնք չեն գիտեր գլխունուն
գալու չարիքը , բայց մենք գիտենք , և սրտանց
չատ արամելու ենք անոնց ան ցաւալի վիճակին
վրայ : Շատ ու ստէպ ստէպ աղօթելու ենք
անոնց փրկութեանը համար . ձեռքերնէս եկած
ջանքը ընելու ենք անոնք համադելու համար որ
գալու բարկութենէն փախչին , վասն զի ինտոր
կրնանք մեր ազգականներուն յաւիտենական
կործանումը տեսնել :

7

Իմ ոչխարներս իմ ձայնիս կը լսեն , ևս ալ
անոնք կը ճանչնամ , և իմ ետևէս կու գան :
ՅԻ՛՛՛՛ . Ժ . 27 :

Տէ՛ր Յիսուս Քրիստոսի և իր ժողովուրդին
մէջ տեղը եղած յարաբերութիւնն ու կասկե
ցութիւնը Սուրբ գրոց մէջ կերպ կերպ նմա
նութիւններով ցուցուած է : Մէկ շատ հա
սարակ օրինակը հովիւն ու իր ոչխարներն են :

Քրիստոս բարի հովիւի մը նման իր ժողովուրդը
կը պահպանէ, և անոնք իրենց թշնամիներէն կը
պաշտպանէ, և իրենց բոլոր պահպութիւնները
կը լեցունէ: Անոնք ալ ոչխարներու նման ար-
գէտ՝ անզոր և իրենց թշնամիներէն ինքզինքնին
պաշտպանելու և կամ իրենց հանգիստած վը-
տանդներէն ետ կենալու բոլորովն անկարող
են: Անոնք իրենց հովիւին նայելու են, որ
ան սոյ իրենց պէտք եղած հոգևոր սնունդն
ու ապահովութիւնը: Քրիստոսի հօտէն ելող
իր ճշմարիտ ոչխարները իր ձայնին կը լսեն.
ուր որ կանչէ կ'երթան. ուր որ Մի երթար,
ըսէ, չեն երթար, անոր ձայնը ուրիշ առաջ
նորդներու ձայներէն կ'որոշին և միայն իր ետեւն
կ'երթան: Աս աշխարհի մէջ ճշմարտապէս
Քրիստոսինը չեղողներն ալ կրնան Քրիստոսի հօ-
տին խառնուիլ և ուրիշներուն աչքին իրեններուն
պէս երևալ: Բայց Յիսուս իրենները կը ճանչ-
նայ, և ահա ժամանակը կու գայ որ ստեն
ճշմարտապէս իրենները եղողները բոլոր օրեգե-
քին պիտի ճանչցնէ: Թէ որ ուզէիք գիտնալ
թէ արդեօք իրաւցընէ Քրիստոսի հօտին մէջն
ենք, մենք մեզի հարցընելու ենք թէ արդեօք
իր ետեւն կ'երթանք. աս է իր ոչխարներուն
նշանը՝ որ ինքը անոնց վրայ գրաւ: Ար ձայնին
կը հնազանդիւնք արդեօք, և իր քայլերուն կը
հետեւիւք:

8

Եւ ես անոնց յաւիտենական կեանք կուտամ, ու յաւիտեան պիտի չկորսուին. և մէկը իմ ձեռքէս պիտի չյափշտակէ զանոնք : Յով. Ժ. 28 :

ՄԵՐ արտօնութիւն է Քրիստոսի հօտին անգամ ըլլալը : Չէ՛ թէ միայն հիմակուան պէտք եղած օրհնութիւնները կուտայ իր ոչխարներուն, հասցաւ յաւիտենական կեանք ալ կուտայ : Ասիկայ անոնց համար պատրաստուած քարիք մըն է, որուն սկզբնաւորութիւնն ու ճաշակը Քրիստոսի երթալուն պէս կը վայելեն, բայց անոր կատարեալ արժէքը յաւիտենականութեան մէջ միայն կարող պիտի ըլլան զգալ : Ճշմարտապէս Քրիստոսինը եղողները՝ իր ձայնին մտիկ ընողները և իր ետեւէն գացողները վախի բան չունին. անոնք բնաւ պիտի չկորսուին : Փոքրիկ աղայ մը իր մօրը գիրկը ապահով կ'ըլլայ. բայց հիւանդութիւնը ցաւը և մահը հոն կուգան իրեն, և իր մայրը կարող չէ զինքը ազատել. և կամ իր մօրմէն զորաւոր մարդ մը կրնայ անոր գիրկէն զինքը յափշտակել և իր մայրը իրեն պաշտպանութիւն մը չկրնար ընել : Բայց քրիստոնէան ասանկ չէ, մէկը երբէք պիտի չկրնայ իր Փրկիչին ձեռքէն զինքը յափշտակել : Սատանան

իր ետեւէն կ'իյնայ և կը ջանայ իր հոգին կոր-
սընցնել, և կամ աշխարհքը կ'աշխատի զինքը
կորուստի հրապուրել, բայց քանի որ իր յոյսը
Քրիստոսի վրայ դրած է բնաւ պիտի չկորսուի :
Ապահով է ինք՝ թէև բոլոր աշխարհք և դը-
ժոխք իրեն դէմ պատերազմին :

9

Իմ հայրս՝ որ անոնք ինձի տուաւ, ամենէն
մեծ է, և մէկը չկրնար իմ հօրս ձեռքէն յա-
փշտակել : Յովն . Ժ . 29 :

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԸ լեցուն է հաստատ
մխիթարութիւններով ամէն անոնց համար որ
Քրիստոս իրենց ապաստանարանը ըրած են :
Յիսուս ուղեց որ բոլոր հնարաւոր եղած վրս-
տահութիւնը և յոյսը տայ իր աշակերտներուն :
Չէ՛ թէ միայն իրեն անոնք փրկելու կարող ըլ-
լալը ցուցուց, հասրա որ Աստուած իր հայրը
անոնք իրեն տուաւ որ փրկուին, և մէկը կա-
րող չէ անոնք հօրը ձեռքէն յափշտակել : Ինչ
գերազանց ճշմարտութիւն մըն է, աս բոլոր ճրչ-
մարտապէս յոյսերնին Քրիստոսի վրայ գնողնե-
րուն : Ժամանակ կ'ըլլայ որ մեղքին իշխանու-
թիւնը և իրենց հոգեւոր թշնամիներուն զօրու-
թիւնն ու բազմութիւնը իրենց անանկ մեծ կ'է-

ընայ որ կը վախնան թէ վերջապէս պիտի կորսուին : Բայց չէ, ասիկայ անկարելի բան է . Աստուած Ամենակարողը բոլոր ճշմարտապէս Քրիստոսի ետեւն գացողներուն յաւիտենական կեանքի դրաւ տուաւ : Միտքը դրաւ որ անանկները փրկուին, և մի թէ կատարելու չէ՞ իր միտքը դրածը . արդեօք կայ այնչափ զօրութիւն ունեցող մէկը որ անոր դիտաւորութիւնները խափանէ : Ուրեմն երթանք Քրիստոսի մօտեանք և իր ձայնին մտիկ ընենք ու իր ետեւն երթանք, որ դիտնանք թէ մենք ալ անոնցմէն ենք որոնց յաւիտենական կեանք պարգևեց :

10

Ուստի մենք ալ գործակից ըլլալով՝ կադաչենք որ Աստուծոյ շնորհքը պարասպ տեղը ընդունած ջրլաք : Բ. Կորնթ. Զ. 1 :

ՊՕՂՈՍ իր պաշտօնը մեծ սեպեց . զգաց որ Տէր Յիսուս Քրիստոսի ծառայ ըլլալը շատ մեծ պատիւ մըն էր . բայց Քրիստոս իրեն հետեւողները լոկ ծառայ չկոչեր, հասցա բարեկամ : Եւ հոս Պօղոս կը ըսէ իրեն և միւս առաքեալներուն համար, թէ Քրիստոսի հետ ընկերացած են ան աշխատութեանը մէջ և իր հետը գործակից են : Մեծ արտօնութիւն մըն է Քր-

րիատասի հետ առ կերպով կապակցութիւն ու-
 նենալը, առ պաշտօնին մէջն են բոլոր Աւետա-
 րանը քարոզողները թէ որ ճշմարտապէս Քր-
 րիատասի բարեկամներն են : Իրենց աշխատանքը
 ան նոյն բանին համար է, որուն համար ինքը
 երկինքէն աշխարհք եկաւ մեռնելու, որ է մե-
 դաւորներուն փրկութիւնը : Ինքը հիմա ինչ փա-
 փաք որ ունի՝ անոնք ալ նոյն փափաքը ու-
 նին, և իրենց ջանքերը ան նոյն վախճանին կը
 նային՝ որուն համար ինքը հիմա երկինքին և
 երկրի մէջ կը գործէ : Անոնք նաև կցորդ պի-
 աի ըլլան անոր յաղթութիւններուն ու անոր
 պատկին : Բայց միայն Աւետարանին պաշտօնեա-
 ները չեն Քրիատասի հետ գործակից ըլլալու պա-
 տիւր վայելողները, ամենէն յեափն քրիստոնեան
 որ Քրիատասի կամքին պէս կ'ուզէ իր վիճակին
 ինկած պարտաւորութիւնները կատարել, և անոր
 թագաւորութիւնը յառաջանալուն համար ա-
 ղօթք կ'ընէ և ձեռքէն եկած աղէկութիւնը կ'ը-
 նէ մարդոց, ան ալ Քրիատասի հետ ընկեր է :
 Երանի թէ մի միայն առ մէկ պատիւը ունենա-
 յի, ալ անկէց աւելին չէի փնտռեր :

Ուստի արթուն կեցեք, և միտքերնիդ բերեք՝ որ իրեք տարի գիշեր ու ցորեկ չդադարեցայ ամէն մէկը արցունքով խրատելէն : Գործ . Ի . 31 :

ԵՐԲՈՐ Պօղոս սկսեց Վրիստոսի ծառայել, իր բոլոր սրտովն էր ծառայէր . անհողութեամբ չէր ծառայէր իր Արդապեալին : Գիտէր թէ աս աշխարհիս մէջ Վրիստոսի համար աշխատելու ժամանակը որչափ երկայն ալ որ ըլլայ ասկաւին կարճ է : Գիտէր ան հողիներուն արժէքը, որոնց համար Վրիստոս մեռաւ, և եւանդով անոնց փրկութեանը համար կ'աշխատէր : Թէ որ իր տուած խրատներէն մէկը զանց առնէին՝ անոնք չէր ձգէր, հասցա ետեւէն կ'ըլլնար սիրով աղաչանքներ ընելով : Ու նաև իր յորգորանքները երեսանց ու տկար չէին, հասցա որոանց և անոնք համոզելով : Անոնք էր խրատէր արցունքով, որ կ'երկայ թէ անոնց ցաւալի վիճակը իրեն ինչ զգացում կու տար, ուստի կրնար ըսել թէ անոնց ամենուն արիւնէն ալ անպարտ էր : Ասանկ աշխատելու են Վրիստոսի բոլոր պաշտօնեաներն ալ մարդոց փրկութեանը համար . ասանկ անդադար և լալով խրատելու են մարդիկ որ գալու բարկութենէն փախչին : Այ կերպով բոլոր վրիստոս

Եւաներն ալ Քրիստոսի համար ըրած ծառայութիւններն մէջ թիւ ըլլալու են . և աս կերպով ամէն մարդ զգալու է կորսուելու վրայ եղող անսահ հոգիներուն արժէքը : Քրիստոս լացաւ Երուսաղէմի բնակիչներուն վրայ , որոնք իրենց մեղքերուն մէջ դէպ 'ի կորուստ կ'երթային , և արդարև մենք ալ լալու և ողբալու ենք մեղքի և մեղաւորներու վրայ :

12

Քանզի օրէնքով է մեղքը ճանչնալը : Հոգի . Գ . 20 :

ԴԺՈՒԱՐ բան է մարդոց որ իրենց ճշմարիտ բնութիւնը՝ այսինքն մեղաւոր ըլլալնին սորվին : Չեն ուզիր հաւատալ թէ իրաւ Աստուածաշունչն ցուցուցածին պէս չար են . սրբաբանին խաբեքայ է և իրենք կուրութիւնով չեն տեսներ իրենց չարիազանց մեղանշահանութիւնը : Աս համարը միայն Սուրբ Հոգին կրնայ սորվեցընել , և ան կը սորվեցընէ Աստուծոյ օրէնքին սրբութիւնը ցուցընելով : Թէ որ մարդ մը Աստուծոյ պահանջմունքներուն կատարեալ սրբութիւնը խմանայ , հարկաւ խելքը կը հասնի որ իր արդարութիւնովը չկրնար փրկուիլ : Երբոր զգայ թէ բոլոր պատուիրանքները սրաին

խորհուրդներուն և զգացումներուն ալ կը վերաբերին, հարկաւ իր մեղաւոր ըլլալը կը տեսնէ: Երբոր ինքզինքը ուրիշ մարդոց հետ բազմատէ, դիւրին կ'ըլլայ ինքզինքը մէկ մեծ մեղաւոր մը չկարծելը. բայց երբոր Սուրբ Աստուծոյ հետ բազմատէ ինքզինքը, իր ինտոր մոլի ըլլալը ան ատենը կը սորվի: Աստուծոյ օրէնքին սրբութիւնը անոր սուրբ բնութեանը մէկ օրինակն է, և թէ որ մարդ մը անոր բոլոր ընդարձակութիւնն ու հոգևորութիւնը հասկընայ, հարկաւ կ'իմանայ որ անոր սուրբ սա-հանջմունքները անթիւ անգամ կոտորել է: Ասկերպով օրէնքով կ'ըլլայ մեղքը ճանչնալը. և որովհետեւ մեր մեղանշահանութիւնը 'գիտնալով Փրկչի մը կարօտութիւննիս ալէկ կ'իմանանք, աս կերպով օրէնքը մեզի վարժապետ կ'ըլլայ և մեզ Քրիստոսի կ'առաջնորդէ:

13

Ինչու որ կը սեպենք թէ մարդը հաւատքով կ'արդարանայ՝ առանց օրէնքին գործքերուն: Հովհ. • Գ • 28:

ՏԵՍԱՆՔ որ Աստուծոյ օրէնքը առանկ սուրբ՝ արդար և բարի է, ուստի ալ ինչ տարապա-ն է մեղաւորներուն անով արդարանալու յոյսը:

Քիւրաւոր անգամ արդէն անիկայ ոտքի տակ
առած ենք . աղէկ ալ հասկըցանք թէ ոչ խօս-
քով ոչ գործքով և ոչ խորհուրդով օր մը ան-
գամ կրնանք պահել բոլոր անոր պահանջմունք-
ները , ուրեմն ինտոր կրնանք ալ ասկէց ետև
առանց կտարելու պահել և անկէց զատ անցած
մեղքերնու համար ալ անիկայ պահելով քա-
ւութիւն ընել : Անիկայ անհնարին բան է , և
թէ որ մեր գործքերէն զատ ուրիշ փրկուելու
ճամբայ մը չըլտոր յաւիտենական յուսահա-
տութեան մէջ թաղուելու էինք : Բայց օրհ-
նեալ է Աստուած որ ճիշտ մեղի պէս մեղա-
ւորներու յարմար արդարութեան ճամբայ մը
կայ . առ ճամբան Աստուած հնարեց որ իր
անհուն իմաստութիւնը կը ցուցնէ : Տէր Յի-
սուս Քրիստոս որ մեր մեղքերը իր մարմնովը
խաչափայտին վրայ կրեց , մեր արդարութիւնն
է . և թէ որ իրեն հաւատանք թէ որ հա-
ւատքով իրեն հետ մէկ ըլլանք թէ որ զինքը
սիրենք և իրեն ծառայենք , իրմով սխաի ար-
դարանանք : Անիկայ միշտ Աստուծոյ հաճոյ է
և բոլոր իրեն ապաւինողները և իրենը եղող-
ները իրմով կ'արդարանան և կը փրկուին :

14

Աստուած մեր ապաւէնը ու զօրութիւնն է .
 նեղութիւններուն մէջը խիստ օգնական կը գըրա-
 նուի : Սաղմ . ԽԶ . 1 :

ԱՍՏ անուշ և ապահով բան մըն է մի մի-
 այն Աստուծոյ ապաւինիլը և զինքը մեր ապա-
 ւէնը և զօրութիւնը ճանչնալը : Աստ զօրաւոր
 թշնամիներ կ'ունենանք սրոնք ժամանակ ժա-
 մանակ վրանիս կը յարձակին և անանկ կ'երևայ
 թէ մեզ պիտի յաղթեն . բայց մենք ապաւէն
 մը ունինք , որուն թէ որ գիմենք ապահով
 կ'ըլլանք : Թէ որ Աստուած մեր ապաւէնը ը-
 նենք անշուշտ մեզ կը պաշտպանէ . անիկայ Ա-
 մենակարող է , մէկը կարող չէ մեզ իր ձեռքէն
 յափշտակել : Թող մեր թշնամիները կատարեն և
 մեր կորուստը փնտրուեն , բայց ո՛վ կրնայ մե-
 զի մնաս մը հասցընել երբոր Ամենակարող զօ-
 րութիւնը մեր պաշտպանն ըլլայ . մեր աս ա-
 պաւէնը միշտ մեզի մօտ է : Թող մեր թշնամի-
 ները շատ խորամանկ ըլլան և սպասեն որ յան-
 կարժ վրանիս յարձակին , բայց չեն կրնար վը-
 րանիս գալ երբ մեր Ապաւէնը և Զօրութիւնը
 քովերնիս ըլլայ . ամէն խռովութեան ատեն կըր-
 նանք խկոյն իրեն գիմել և ապահով ըլլալ :
 Գերազանց պարգև մըն է Աստուծոյ որդի ըլլալը ,
 որոնց թող կու տայ որ իր թեկերուն շուքին

տակը հանդէին, և որոնց խոստացած է հետերնին ըլլալ, իրենք պաշտպանել և յաւիտեանս փրկել: Ո՛հ Աստուած ի՛նչ մեծ խոնարհութիւնով մեզի կը խոնարհի. կրնայ արդարութեամբ մեզ թողուլ որ թշնամիներնուս ձեռքէն չաղասինք և մեր ակարութիւնովը կանանք: Բայց չէ, թէպէտև մեղաւոր ենք, բայց ինք սիրով մեզի կը ներէ, մեզ կը պաշտպանէ և բոլոր իրեն ապաւինողները յաւիտեան կը փրկէ:

15

Քեզի աղաղակեցին, ու աղատեցան, քեզի յուսացան ու չամչցան: Սաղմ. ԻԲ. 5:

Թէ որ մարդ մը իր կարողութեանը և վարպետութեանը ապաւինելով բանի մը ձեռք զարնէ, ու հաւատայ թէ պիտի յաջողի յուսալով թէ իր իմաստութիւնն ու զօրութիւնը բաւական են անխկայ գլուխ հանելու, ու թէ որ վերջը չ'յաջողի խայտառակ ու ամօթով կ'ըլլայ: Ասանկ ալ իր բարեկամներուն շատութեանը և կարողութեանը ապաւինող մարդը. անոնց ձեռքը զօրութիւն և իշխանութիւն ըլլալուն համար կը խորհի թէ անոնց պաշտպանութիւնը վտանգի ատեն բաւական է: Բայց

Թէ որ իր նեղութեան ժամուն զինքը երեսէ ձգեն, և կամ զօրութիւնն զինքը ազատելու չափ եղած չըլլայ, սխալմամբ անոնց վատահելուն համար ամօթով կ'ըլլայ: Բայց Տէրօջը ապաւինողներէն մէկը երբէք խայտառակ չեղաւ. անիկայ իր ժողովուրդին միայն իրեն ապաւինելը կը սիրէ: Անոնք իրեն ապաւինելու կը հրաւիրէ, և խոստացած է որ անոնց յոյսը սրարապը պիտի չէրթայ. անոնք որ անկեղծութեամբ իրեն կ'ապաւինին զինքը կը պատուեն, իր անունին համար պիտի փրկէ: Երբէք պիտի ըսել չտայ չարին թէ Ահա Տէրը կարող չէ իրեն ապաւինողները պաշտպանել: Ուստի թէ որ Տէրօջն ենք ամենեին վախի բան չունինք: Թող չարերը վրանիս յարձակին, բայց մենք Տէրօջը ձեռքն ենք և հոն ապահով ենք: Թէ որ իրեն կանչենք՝ կ'ազատինք, թէ որ իրեն ապաւինինք՝ պիտի չամչնանք:

16

Մի վախնար պղտիկ հօտ. ինչու որ ձեր հայրը հաճեցաւ որ թագաւորութիւնը ձեզի տայ: Ար. 1. Ժ. 32:

ՔՐԻՍՏՈՍԻ աշխարհիս մէջ ունեցած հօսը մինչև հիմա միշտ փոքր է: Իրօք և ճշմարտա-

պէս իր ետևէն գացողներուն թիւը իրեն չը-
 հնազանդողներուն և զինքը արհամարհողներուն
 բազմութեանը քով սկիզբէն ՚ի վեր քիչ է : Թէ որ
 լուկ մարդկային միտքի վրայ դատելինք , պիտի կար-
 ծէինք թէ թշնամիները վերջապէս պիտի յաղթեն
 և առ տկար հօտը կործանեն , մանաւանդ թէ բար-
 ձրը աստիճանի մարդիկ անոր դէմ հաստատ թըշ-
 նամութիւն ունին : Ինտո՞ր կրնայ ասանկ մէկ փո-
 քըր և տկար գունդ մը յուսալ թէ վերջապէս բո-
 լոր իր վրան յարձակող թշնամիներուն պիտի
 յաղթէ : Թէ որ իրենց յոյսը մարդկային զօ-
 րութեան վրայ ըլլար , արգարև պիտի յուսա-
 հատէին • բայց իրենց հայրը հաճեցաւ որ թա-
 գաւորութիւնը տայ իրենց : Աստուած ինչ որ
 կ'ուզէ կը կատարէ , և մէկ զօրութիւն մը չը-
 կայ անիկայ իր միտքը դրած բանէն ևս կեցը-
 նելու • առ բանը իր գործն է , իր հաճութիւ-
 նովը միտքը դրաւ և անշուշտ պիտի կատարէ :
 Քրիստոսի եկեղեցիին վրայ ամենևին վախ մը
 ունենալու չէնք : Թո՞ղ սուտ բարեկամները կոր-
 ծանու՞մ սարա՞նան , թո՞ղ թշնամիները յայանի
 իր վրայ յարձակին , բոլոր առ բաներուն վրայ
 տակաւին ան ամէնը՝ որ հոգիով և ճշմարտու-
 թեամբ Քրիստոսի հետ միացած են , ապահով
 պիտի կենան , ու վերջապէս թագաւորութիւնը
 և թագաւորութեան մեծութիւնը Բարձրելոյն
 սուրբ ժողովուրդին պիտի արուի , վասն զի Տէ-
 րոջը բերանը խօսեցաւ :

17

Վ'ուզեմ որ գիտնաք՝ եղբայրներ, թէ ինչ որ ինձի պատահեցաւ՝ ալ աւելի Աւետարանին յառաջադիմութեանը համար եղաւ : Փիւքի . Ա . 1 : :

ԱՒԵՏԱՐԱՆԻՆ ԹՆՆԱՄԻՆԵՐԸ ՊՕՊՈՍԸ ՀԱՂՈՒԾԵՅԻՆ և բանտարդէցին, որ անանկով ճշմարտութեան ընթացքը խափանեն : Բայց Քրիստոսի Աւետարանին հակառակութիւն ընելը պարսպ բան է : Պօղոս Փիլիպպ'ցւոց կ'ըսէ թէ իրեն պատահած բաները ոչ թէ միմակ Աւետարանին յառաջադիմութեանը արգելք չեղան, հասցա մանուանդ անոր օգնութիւն ալ ըրին անոնցմով եղբայրները զօրացան, և իր կապերովք Քրիստոսի լուրը անգին ասգին տարածեցաւ : Եւ միշտ ասանկ կ'ըլլայ . Աստուած ազէկ գիտէ մարդոց բարկութիւնը՝ զինքը փառաւորելու միջոց ընելու կերպը : Ուստի երբոր թող կու տայ որ չարերը իր ճշմարտութիւնը խափանելու համար ճամբաներ հնարեն, իր թոյլտուութիւնը անոնց ուղածները կատարելու համար չէ, հասցա անոնք խայտառակելու և իր Սուրբ անուր փառաւորելու համար է, իրենց ան նոյն չար դիտաւորութիւնները՝ որ իր Աստուածային ճշմարտութիւնը կործանելու համար 'ի դործ գրած էին, բուն անոր տարածմանը և յառաջ

երթալուն ծառայեցրնելով : Սատանան երբեմն
 մեծ բարկութիւնով կու գայ և կը գրգռէ բո-
 լոր իր ծառաները Քրիստոսի Աւետարանին վը-
 ռայ յարձակելու . անանկ ատեններ մեծ յոյս
 ունենալու է թէ ան իր հանած վրդովմունքը շատ
 չքշեր : Ամենևին վախնալու կամ թուլնալու
 չենք , հապա ամէն բան Տէրոջը յանձնելով
 հանգարտութեամբ սպասելու ենք , մինչև որ
 խաւարէն լոյս ծագեցրնէ :

18

Բայց թէ որ չարչարուի իբրև քրիստոնեայ՝
 թող չամչնայ , հապա աս մասին թող Աս-
 տուծոյ վառք ասայ : Ա Պեդ . 1 . 16 :

ՄԱՐԴԻԿ քանի որ մեղքը կը սիրեն և մե-
 ղանչափան կեանք մը կ'անցրնեն , Տէր Յիսուս
 Քրիստոսի ոտքին քայլերուն հետևիլ ուզողները
 նեղութիւն քաշելու ենթակայ են : Իրենց սուրբ
 օրինակը չարագործներուն մեղքերը կը յանդի-
 մանէ , և իրենց բարի վարքը շատ անհաճոյ է
 իրենց մեղքերը շարունակել ուզողներուն : Աս-
 տուած մարդոց բարկութիւնը երբեմն կը զսպէ
 որ իր ժողովուրդը խաղաղութիւնով և հան-
 գարտութիւնով ապրի , և երբեմն թոյլատու-
 թիւն կ'ընէ չարերուն որ իրենց չարութիւնը

ընեն, և իր ժողովուրդը իր անունին համար
 չարչարուած տաննին զինքը փառաւորեն : Այն
 տեղերը ուր որ Աւետարանին ճշմարտութիւն
 ները դեռ ընդհանուր տարածուած չեն, հոն
 գտնուող քրիստոնեաները ստեպ ստեպ Քրիստոսի
 անունին համար նեղութիւն կը քաշեն :
 Իսոյց մէկն ալ Քրիստոսի անունովը քաշած
 նեղութիւններուն համար ամչնալու չէ . թէպէտև
 անարգուի նախատուի և իր անունը գէշ էլլէ,
 սակայն ամչնալու չէ, հասցա սա անունովը
 Աստուծոյ փառք տալու է : Յիսուս Քրիստոսի
 սպասաւորութեան ան բարձր պատիւը վայելե-
 լուն համար է որ իր անունը գէշ կ'էլլէ . իր
 Արդարապէտին նման ըլլալուն համար է որ
 կ'անարգուի և կը հաշածուի : Ուստի արդարև
 փառք տալու է Աստուծոյ իր վայելած շնորհք
 ներուն համար, և չէ թէ չարերուն տուած
 նախատինքներովը ամչնալու է :

19

Ու ըսաւ անոնց . Ինչո՞ւ ստանկ վախկոտ էք,
 ինչպէս կ'ըլլայ որ հաւատք չունիք : Մարի .
 Գ . 40 :

ՅԻՍՈՒՍ իր աշակերտներուն հետ նաւի մը
 մէջ էր, և ահա մեծ փոթարիկ մը ելաւ : Ինք

ան ատենը կը քննարար և անոնք վախով լե-
ցուեցան ու արթնցուցին զինքը աղաղակելով ,
“ Աւրդասպեա՛ հոգդ չէ՞ որ կը կորսուինք , ”
Հովը և ծովը դադրեցընեկէն ետև յանդիմա-
նեց անոնք իրենց վախոտութեանը և թերե-
հաւատութեանը համար : Ամէն ատեն ասլա-
հովութիւն է Քրիստոսի եղած տեղը ըլլալ . թէ
որ աշակերաններուն հաւատքը զօրաւոր ըլլար
աս բանը կը զգային : Թէ որ փոթորիկներ ել-
լան բոլորախիբնիս , բնաւ միաս չունի թէ որ
միայն Քրիստոս մեզի հետ ըլլայ : Ինչ նեղու-
թիւն որ գայ դիտունուս , ինչ թշնամիներ որ
մեզի հահառակութիւն ընեն , թէ որ միայն
Քրիստոսի գործին մէջն ըլլանք և զինքը մեր
կողմը ունենանք , ամենևին վախի բան չունինք :
Աշակերանները բաւական հաւատք ունէին՝ որ
իրենց նեղութեան ժամուն Քրիստոսի գային ,
աս բանը աղէկ ըրին . ամէն նեղութեան ժա-
մանակ իրեն երթալու ենք , և ինքը մեզ կը
մխիթարէ : Աշակերանները երբոր ան կատաղի
աղէկոծութենէն ահուգողի մէջ էին , մտքերնէն
չանցուցին թէ ան փոթորիկը իրենց Աւրդասպե-
ան զօրութիւնը փառքով յայանուելու համար
և իրենց ուրախութիւնն ու անոր վրայ ունե-
ցած վստահութիւննին աճեցունելու համար ե-
լաւ : Նոյնպէս և իր ժողովուրդին վրայ աղէկո-
ծութիւններ կը խրկէ որ իր զօրութիւնը ցու-
ցընէ անոնց , անոնք պաշտպանելով և աղա-

տեղով և մարդոց բարկութիւնովը փառաւոր-
տեղով :

20

Ինչու որ դուն ինծի ապաւէն մը եղար ,
ամուր աշտարակ մը՝ թշնամիին երեսէն : Սաղմ .
ԿԱ . 3 :

ԴԱԻԻԹ շատ անգամ Աստուծմէ պաշտպա-
նութիւն խնդրած էր . շատ անգամ աեսած
էր որ մարդոց օգնութիւնը պարապ բան էր :
Անոնք որ իր բարեկամներն ըլլալու էին իր
փրան ելան , և իբրև վայրենի անասուն զինքը
որսացին : Բայց թէպէտ իր երկրաւոր բարե-
կամները զինքը երեսէ ձգեցին , հոս ինքը կը
զրուցէ թէ Աստուած իրեն ինչ ըրաւ . “ Ա-
պաւէն մը՝ ու ամուր աշտարակ մը եղար ին-
ծի թշնամիին երեսէն ” : Ինչ որ փնտրուեց Աս-
տուծոյ քով գտաւ , և բոլոր իր կարօտութիւն-
ները լեցուեցան : Աստուած Դաւթի օրերը ինչ
որ էր հիմա ալ նոյնն է , և բոլոր զինքը փրն-
տըւողներուն ապաւէն և ամուր աշտարակ մը
պիտի ըլլայ : Աստուծոյ մէկ սքանչելի շնորհքն է
որ մեզի պէս մեղաւորներուն առանկ կը խո-
նարհի . ամէն վտանգի և փորձութեան ժամա-
նակ իրեն երթալու ենք , և ապահովութիւն կը

դանենք : Արդարև անիկայ ամուր աշտարակ մըն է ամենուն , որոնք յոյսերնին իրեն վայ կը դնեն . մէկը կարող չէ զանիկայ յաղթել : Երբոր աս աշտարակին մէջն ըլլանք մեր թըշնամիներուն վրանիս նետած նետերը և մեզ յաղթելու համար ըրած բոլոր ջանքերնին պարտաւր կ'երթայ : Տէրն է մեր պաշտպանը , և անիկայ Ամենակարող է :

21

Ո՛վ իմ անձս՝ միայն Աստուծոյ սպասէ , վրան զի անկէ է իմ յոյսս : Սաղմ . ԿԲ . 5 :

ԱՍՏՈՒԱԾԻ Կը փառաւորուի երբ որ մայն իրեն սպասենք : Մարդիկ շատ անգամ Աստուծմէ ունեցած կախումնին միայն խօսքով կը ճանչնան , և իրենց պէտք եղած օրհնութիւնները աղօթքով իրմէն կը խնդրեն , երբոր սրտով իրենց կարողութենէն և ջանքերէն և կամ երկրաւոր միջոցներէ կախուած են : Բայց երբոր սրտով զգանք թէ ամէն բարութիւն Աստուծմէ կու գան , երբոր մեր անօրհնականութիւնը և բոլոր երկրաւոր միջոցներու ակարութիւնը զգանք , երբոր աս հոգիով Աստուծոյ սպասենք , իր օրհնութիւնները մեզի կու տայ : Այս ինչ շնորհքին կարօտութիւն ունի՞նք , Աս-

տուժոյ սպասենք . հաւանօք չունինք , խմաւ-
տուժիւն չունինք , աչքերնիս միայն Աստուծոյ
վերցրնենք : Աչքերնուս առջին գործուած մե-
ղայ շատութեանը վրայ կ'ողբանք , միայն Աս-
տուծմէ օգնութիւն խնդրենք : Քրիստոսի ճշշ-
մարտութիւնը յայտնի վտանգի մէջ է , անոր
սաշտարան կեցողները քիչևոք , և անոր դէմ
հակառակութիւն ընողները զօրաւոր և շատեր
են , և սա բաները տեսնելով կը վախնանք և
կ'ողբանք , քերեմն Աստուծոյ սպասենք և սխալ
տեսնենք որ զինքը ստարաստ տեղը չենք փրն-
արուեր :

22

Պատասխան տուաւ Յովհաննէս ու ըսաւ .
Վարդապետ՝ մէկը տեսանք որ քու անունովդ
դէեր կը հանէր , և զանհիկայ արգիլեցինք , ին-
չու որ մեր հետը չպարտիր : Ղուկ . Թ . 49 :

ՔՐԻՍՏՈՍԻ աշակերտներուն վրայ շատ ան-
գամ մարդկային բնութեան սկարութիւնները
երևցան մինչև անգամ Քրիստոս զանոնք ընտ-
րելէն ետքն ալ . մէջերնին վէճ մը եղաւ թէ
իրենցմէ ո՛վ մեծ սխալի սեպուի : Աս համարին
մէջն ալ յիշուած է թէ Քրիստոսի անունովը
դէեր հանողներուն մէկը արգիլեցին իրենց հետը

չարտրտելուն համար : Քրիստոսի վրայ ունեցած սերերնուն հետ մէկ տեղ պատիւ տանելու փափաք մըն ալ ունէին : Իրենց անանկ կու գար՝ թէ Քրիստոսի հետ անանկ կից հաղորդակցութիւն մը ունենալնուն համար իրաւունք ունէին բոլոր ինքը դաւանողներուն առաջնորդութիւն ընել : Բայց Քրիստոս յանդիմանեց իրենք աս հոգին ունենալնուն համար : Իրեն գէմ չեղողներուն ամէնքն ալ իր կողմէն կը սեպէր : Հիմա ալ շատերը կան որ առաքեալներուն հոս ցուցուցած բնութենէն են : Իրենց չհեռադները Քրիստոսի հետևող չեն սեպեր • կ'ուզեն բոլոր ուրիշները արգիլել ինչ և իցէ կերպով բարեգործութիւն ընելէն իրենցմէ չըլլալնուն համար : Քրիստոսի անունը քարոզելէն արգիլել կ'ուզեն իրենցմէ չըլլալնուն համար : Ասիկայ Քրիստոսի հոգին չէ • ան բոլոր ղինքը սերողները կ'ընդունի ղէն չունի ինչ անունով որ կանչուին , և մենք ալ անանկ ընելու ենք :

23

Եւ դարձաւ յանդիմանեց զանոնք՝ ըսելով • Չէ՛ք գիտեր թէ ինչ հոգիի տէր էք : Ասի • Թ . 55 :

ՄԱՐԱՐԱՅԻՈՅ մէկ գէղէն չընդունեցին

Յիսուսը և իր աշակերտները, որովհետև երեսնին Երուսաղէմ երթալու դրեր էին: Աշակերտները առ բանին վրայ բարկացան և իրենց Արդարադատէն հրաման ուղեցին որ երկինքէն կրակ իջեցնեն և մեղաւորները սասկեցնեն: Անաստասիոս կարծեցին թէ ասիկայ Քրիստոսը պատուել է, և դուցէ խորհեցան թէ իր փառքը փնարուէնին էր իրենք առ բանը ըսելու շարժողը: Բայց Յիսուս յանդիմանեց անոնք ըսելով. Չէք գիտեր թէ ինչ հոգիի տէր էք: Յիսուսի իր աշակերտներուն սրտին մէջ փրկարուած բնութիւնը առ չէր. ինքը մարդիկ փրկելու համար եկած էր և չէ թէ կործանելու, և իր հոգին ունեցողներն ալ ասանկ պէտք է ընեն: Մեր Քրիստոսն ան դիտաւորութիւնը չունէր որ իր կրօնքը սուրով տարածէ և սաշտպանէ: Թէ որ մարդիկ իրեն հեռուողներուն դէմ հակառակութիւն ընեն, անոնք անոնց համար աղօթք ընելու են և դարձի բերելու աշխատելու են, ու չէ թէ բռնութիւնով անոնք քրիստոնեայ ընելու են: Բայց նոյն իսկ Քրիստոսի առեւնէն 'ի վեր եղան անանկ մարդիկներ, որոնք թէպէտ քրիստոնեայ կ'ըսուէին, բայց տակաւին մահու չափ հալածանքներ ըրին ան քրիստոնեաներուն դէմ որոնք իրենց հաւատացածին պէս չէին հաւատար: Բայց ասանկները մէջերնին բնաւ Քրիստոսի հոգին չունին, և ոչ ալ իր օրէնքներուն կը հնազանդին: Եր հըրամանը՝ սիրել և օրհնել է, ու չէ թէ անիծել և սպաննել:

Որ մէկ ըլլան՝ ինչպէս որ մենք մէկ ենք :
Յ․Է․ ԺԷ․ 22 :

ՅԻՍՈՒՍ Քրիստոսի Հոգին սէր է . կ'ուզէ որ աս Հոգին բոլոր իրեն հետեողները ունենան : Թէպէտ կ'ուզէ որ բոլոր մարդիկ իրար կարեկցութիւնով սիրեն , բայց մէկ ուրիշ մասնաւոր սէր մը ունենան մէկզմէկու վրայ , անանկ զօրաւոր սէր մը որ անոնք մէկ ընէ : ինչպէս որ Հայր Աստուած և Յիսուս Քրիստոս մէկ են : Աս սէրը և միութիւնը դրսուանց միակերպ ըլլալէն չէ . Թող տարբեր անուններ ունենան , Թող արտաքին բաներու վրայ տարբեր դատումներ ունենան , սակայն սրտով մէկ ըլլալու են : Աս միութիւնը Քրիստոսի վրայ մեծ սէր մը ունենալէն առաջ կաւ գայ , որ անով բոլոր իր պատկերին կերպարանակից եղողները սիրելու առաջնորդուինք : Աս միութիւնը սնեցողներուն անանկ մեծ բան կ'երևայ սրտին կրօնքը , որ բոլոր արտաքին ձևերն ու արարողութիւնները անոր քովը ոչինչ կ'երևան : Ասիկայ կը պարունակէ ան խոնարհութիւնը , որով մէկը միւսը իրմէն աւելի կը յարգէ : Ուր որ Քրիստոսի Հոգին շատ կայ , հոն աս միութիւնը կ'ըլլայ . Թէ որ Քրիստոսի աշակերտները ըլլալ կ'ուզենք , իրեն հետեողներուն վրայ

աս սէրը ունենալու էնք : Աս բանին համար
ինքը մեծ եռանդով աղօթք ըրաւ , և մենք ալ
ասոր համար աղօթք ընելու և աշխատելու
ենք :

25

Մի կարծէք՝ թէ ես երկրի վրայ խաղաղու-
թիւն ձգելու եկայ . խաղաղութիւն ձգելու չե-
կայ , հասցա՛ սուր : Մատի . յ . 34 :

ՅԻՍՈՒՍ Քրիստոս խաղաղութեան իշխան է ,
իր կրօնքը սիրոյ կրօնք է . կ'ուզէ որ բոլոր ի-
րեն հեռուողները մէկ ըլլան : Բայց քանի որ
աշխարհս մեղքով լեցուն է և մարդիկ սրբու-
թիւնը կ'ատեն , Քրիստոսի սուրբ կրօնքը ան-
միաբանութեան պատճառ պիտի ըլլայ : Աշ-
խարհս՝ չար ըլլալուն համար հակառակութիւն
պիտի ընէ ճշմարտութեամբ Քրիստոսի հնազան-
դողներուն : Մարգու մը իր ընտանիքը շատ ան-
գամ հակառակ պիտի կենան իրեն , և զինքը
մէջերնէն գուրս պիտի ընեն , անոր համար որ
իրենք մեղքը կը սիրեն , իսկ ան հաւատքով և
սրբութիւնով կեանք մը կ'անցընէ : Քրիստոս
խմայուց իր աշակերտներուն թէ աս բաները
պիտուենուն պիտի գայ : Թէպէտև խաղաղութիւնը
քրիստոնէին շատ սիրելի բան է , սակայն Աս-

տուժոյ ճշմարտութիւնը աւելի սիրելի ըլլալու է .
 ամէն փորձանքի մէջ Աստուծոյ հնազանդելու է :
 Որչափ որ կրնաք , կ'ըսէ առաքեալը , ամէն
 մարդոց հետ խաղաղութեամբ վարուեցէք : Քը
 բիստոնեան աշխատելու է ամենուն հետ սիրով
 վարուելու . ինքը ըլլալու չէ իր բոլորակը ե-
 ղողներուն հետ ունեցած միաբանութեան կա-
 սը քակողը , հեղ ու երկայնամիտ ըլլալու է :
 Բայց երբոր խաղաղութիւն ընելով ճշմարտու-
 թիւնը ձգել , կամ Աւետարանին հրամաննե-
 րուն չհնազանդիլ պէտք կ'ըլլայ , ան ատենը
 յայտնի է իր պարտաւորութիւնը՝ որ Աստու-
 ծոյ հնազանդելու է , թէև ասանկ ընելովը աշ-
 խարհք խռովութիւնով լեցուի : Քրիստոնեան
 Քրիստոսի մօտենալու է , ամէն բանի մէջ իրեն
 հնազանդելով , և Աւետարանին բոլոր ճշմար-
 տութիւնը դաւանելու է , ու ան ատենը թէ որ
 բաժանմունքներ և հակառակութիւններ ելլան ,
 յանցանքը իրը չէ : Իրեն գէմ հակառակու-
 թիւն ընողները հաշիւ պիտի տան :

Գիտեմ՝ քու գործքերդ՝ որ դուն անուն ունիս
 թէ կենդանի ես , ու մեռած ես : Յայտ . Գ . 1 :

ԱՍԻԿԱՅ Սարգիսյւոյ եկեղեցիին համար

Փրկչին առած պատգամին մէկ մասն է : Բայց հիմա ալ շատերը կան՝ որ աս նոյն յանդիմա նութեանը արժանի են , և աղէկ կ'ըլլայ որ բոլոր քրիստոնէական եկեղեցիները և բոլոր քրիստոնէայ կոչուած մարդիկ ինքզինքնին քննեն և ատենեն թէ Փրկչին Սարգիսցւոց եկեղեցիին ըսած խօսքը արդեօք իրենց ալ կը դաչի : Թէ որ Քրիստոնէայ կոչուած ենք , կենդանիի անուն ունինք . աս անունը կը ցուցունէ թէ մենք Աստուած փառաւորելու և զինքը սիրելու և իրեն հնազանդելու պարտաւորութիւններնուս մէջ կենդանի ենք , թէ մեղքին չարութիւնը իմացած ենք և անկէց կը փախչինք : Կը ցուցնէ թէ Աստուծոյ Որդւոյն վրայ հաւատք ունինք և իր կամքին համաձայն ենք : Բայց թէ որ յանցանաց և մեղաց մէջ մեռածներուն նման ենք , յայտնի կ'ընենք թէ միայն անուն ունինք թէ կենդանի ենք . Թէ որ աշխարհքը և աշխարհային բաները կը սիրենք , թէ որ առաւել մեր հանգստութիւնը կը փրնարուենք քան թէ Քրիստոսի փառքը , թէ որ մեր ուղածները կ'ընենք և Աստուծոյ կամքը զանց կ'առնենք , թէ որ իրեն աղօթք ընելը չենք սիրեր և ուրախութիւնով իր սուրբ խօսքը չենք սորվիր , թէ որ Քրիստոսի հետ միացածներուն ընկերութեանը չենք մտներ , յայտնի կը ցուցնենք թէ կենդանիի անուն ունինք ու մեռած ենք :

Բայց դուն իմ որդեակս՝ զօրացիր ան շը-
նորհքովք՝ որ Քրիստոս Յիսուսով է : Բ ՏԺՏ .
Բ . 1 :

ԱՄԻՆ քրիստոնեայ ատեն ատեն ինքզինքը
շատ տկար և անօգնական կը տեսնէ , զօրաւոր
թշնամիներ ունի , որոնք կարող չէ յաղթել :
Սատանան միշտ իր կործանումը կը փնտրուէ ,
և ինքը կարող չէ աս զօրաւոր հակառակորդին
ձեռքէն փախչիլ : Երբեմն աշխարհք իրեն դէմ
կ'ելլէ , և ինքզինքը անկարող կը դաննէ դէմ
դնելու : Բայց Պօղոս հոս կը ցուցնէ թէ աս-
անկ պարագաներու տակ որով և ինչպէս կըր-
նանք զօրանալ , այսինքն Տէր Յիսուս Քրիստո-
սով եղած շնորհքովք : Աս շնորհքին առատու-
թիւնը լեզուով չպատմուիր , անիկայ անհատ-
նում է . ամէն պակասութիւններնիս անկէց կըր-
նանք դաննել : Եւ որովհետեւ կրնանք աս շնորհ-
քին մօտենալ , անոր համար մեր թշնամիներ
ունենալու անպակաս անհարանալու հրաման չունինք :
Մեզի հրամայուած է որ զօրաւոր ըլլանք , չէ
թէ մեզմէ հապա Քրիստոս Յիսուսով եղած
շնորհքովք : Թէ որ սատանան մեզ ուզէ փոր-
ձել Աստուծոյ մեզ փրկել ուղեւուն վրայ երկ-
մտելու , կամ անոր խոստմունքներուն չհաւա-
տալու , և կամ մեր մեղքերուն համար յու-

սահասութեան մէջ իյնալու , բոլոր իր ջանքե-
րուն դէմ դնելու ենք Յիսուս Քրիստոսով ե-
ղած շնորհքովք : Աս շնորհքը ունենալու ենք ,
անոր հաւատաւորութեամբ եւ բոլորովին անոր ա-
պաւինելու ենք : Աս աշխարհիս ոչ գրգռմանե-
րը եւ ոչ թշուառութիւնները կրնան մեզի բան
մը ընել , թէ որ Քրիստոս Յիսուսով եղած ջը-
նորհքովք լեցուինք :

28

Ուստի սիրելիք՝ որովհետեւ մենք աս խոստմունք-
ները ունինք , մեր անձերը մարմինի ու հոգիի
ամէն կերպ պղծութենէն մաքրենք եւ սրբութիւն
գործենք Աստուծոյ վախովք : Բ. Կորնթ . Է . 1 :

ՆԱԽԸՆԹԱՅ գլխուն մէջ վերջին բանը որ
Պողոս յիշեցուց Կորնթոսի քրիստոնէականներուն
Աստուծոյ աս խոստմունքն էր ,
թէ « Ես ձեզ պիտի ընդունիմ , եւ ես ձեզի
հայր պիտի ըլլամ , ու դուք ինծի աղաքներ
ու աղջիկներ պիտի ըլլաք՝ կ'ըսէ ամենակալ
Տէրը » : Աս խօսքը ինչ ալէկ յորդորանք մըն
էր անոնք սրբութեան կանչելու : Ի՞նչ , Աս-
տուած մեզի՝ մեղանշահան որդերուս խոստա-
ցաւ թէ ինքը մեզի հայր եւ մենք իրեն որդի
պիտի ըլլանք . աս բանը մեզի՝ բոլորովին ա-

Կարժաններուն համար է : Ուրեմն ինտոր եւ
 ռանդով աշխատելու ենք օրէ օր ամէն մեղք
 ձգելու , որ մեր դժած հայրը չբարկացընենք :
 Ինտոր ջանալու ենք շարունակ սրբութիւն գոր-
 ծելու որ ան վրանիս եղած սուրբ անունը ան-
 պատիւ չընենք : Տէք Ամենակալ Աստուծոյ զաւ-
 րները արգիօք իր մեծ թշնամիին ծառայելու
 են , և կամ սրաւրնին ու զօրութիւննին աշ-
 խարհիս ունայնութիւններուն տալու են : Մոռ-
 նալու են երկնային ծնունդով ծնած ըլլալնին ,
 և սա աշխարհիս որդւոցը պէս ապրելու են :
 Շուտով մեր Երկնաւոր հայրը բոլոր իր զաւ-
 րները իր տունը պիտի կանչէ • շատ ջանջած
 մեզմէ առաջ գացող եղբայրներնիս ու քոյրերնիս
 պիտի տեսնենք և անոնց ու սուրբ հրեշտակներուն
 հետ Աստուծոյ առջև պիտի կայնինք : Ուրեմն
 ամէն օր պատրաստութիւն տեսնենք ան սուրբ
 ժողովին մէջ ընդունուելու :

Չէ որ անոնք ամէնը սպասաւորող հողիներ
 են , որոնք կը խրկուին սպասաւորութեան ա-
 նոնց համար , որ փրկութիւն պիտի ժառան-
 գեն : Եբբ • Ա • 14 :

ԷՐԲՈՐ մէկ մեղաւոր մը ապաշխարէ և

Աստուծոյ դառնայ, երկնից բոլոր հրեշտակները անոր վրայ կ'ուրախանան: Եւ անդադար հաղորդակցութիւն կ'ընեն անոր հետ մինչև որ ինքն ալ գայ Աստուծոյ ակօսութեամբ շրջապատուան փառաւոր ընկերութեանը խառնուի: Անոնք շատ բարձր աստիճանի մէջ են. ճիշտ Աստուծոյ առջևն են. սրբութիւնով կատարեալ են. և սակայն վար կ'իջնան փրկութեան ժառանգներուն սպասաւորութիւն ընելու: Չկայ մէկ հաւատացեալ մը, թէ և շատ նուազ և անարդ ըլլայ աշխարհիս առջևը, թէ և շատ աղքատ և սղփա ըլլայ, որուն երկինքի սպասաւորները ուրախութիւնով սպասաւորութիւն չընեն: Անոնք անմահ հոգիի մը արժէքը աղէկ գիտեն. անոնք կը զգան թէ ինչ մեծ պատիւ է Քրիստոսի ընտրածներէն մէկն ըլլալը, իր արիւնովը փրկուած, և անանկներուն ուրախութիւնով կու գան իրենց երկնային ճամբորդութեանը մէջ օգնելու: Մեծ պատիւներ են Յիսուսի հաւատացողներուն տրուած պատիւները. աս կեանքիս մէջ բոլոր երկինք վրանին հոգ կը տանին: Յիսուս իրենց Վարդապետը երկինքի փառաւոր զօրքերը կը խրկէ որ իրենց սպասաւորութիւն ընեն: Անդադար անոնց վրայ հոգ կը տանի, և բոլոր իրենց պակասութիւնները կը լեցընէ: Ուրեմն թէ որ հրեշտակները մեզ կը հոգան, աղէկ նայինք ինքզինքնիս և զգոյշ ըլլանք, որ վերջապէս անոնց հետ մէկտեղ ըլլանք երկինքին մէջ:

Հաս նեղութիւններով պէտք է մեղի Աստուծոյ թագաւորութիւնը մտնել : Գործ • ԺԴ • 21 :

ՅԻՍՈՒՍ Քրիստոս երբէք մարդիկ իր աշակերտները ըլլալու չհրաւիրեց աշխարհային հանդատութիւն և երջանկութիւն խոստանալով : Ըսաւ անոնց որ ինքը իր գլուխը դնելու տեղ մը չունի • և թէ բաւական է ծառային իր Տէրոջը պէս ըլլալ : Ինք աշխարհիս ատելի էր , և իմացուց իր աշակերտներուն որ իրենք ալ աշխարհի ատելի սխալի ըլլան : Եւ յիշաւ Քրիստոսի ժամանակէն մինչև աս օրս հաւատացեալները շատ նեղութիւնով Աստուծոյ թագաւորութիւնը մտան : Ամէն դարի մէջ և ամէն երկիր ուր որ չար մարդոց ձեռքը զօրութիւն կար , Աստուծոյ ժողովուրդը հալածեցին ու հազարաւոր մարդիկ արիւնաթաթախ մահուամբ երկինքը գացին : Եւ ուր տեղ որ եկեղեցին խաղաղութիւն կը վայելէր , հան ալ Աստուած աղէկ սեպեց նեղութիւն խրկել որ իր զաւկըները երկինքը մտնելու կատարեալ ըլլան : Տէրը ով որ սիրէ կը չեխէ , և անանկով սրտերնին աշխարհէս և աշխարհային բարութիւններէն կը կտրէ : Աս կերպով իրենց սէրը գլխաւորապէս իր վրայ հաստատել կու տայ , որ ինքն է մի միայն անսխալիս Աստուածը ,

և կը յորդորէ անոնք որ իր ներկայութեանը
ան սուրբ երջանկութիւնը փնտրուն : Քրիս-
տոնեաները նեղութեան մէջ Աստուծոյ փառք
տալու են , որովհետեւ անով աւելի աղէկ կը
պատրաստուին երկնային թագաւորութիւնը մը ա-
նելու :

31

Ու մարդիկ անով պիտի օրհնուին , ամէն ազ-
գերը երանութիւն պիտի տան անոր : Սաղ .
ՀԲ . 17 :

ԱՍ աշխարհիս մէջ բնաւ պիտի չկրնանք
կատարեալ հասկընալ թէ որչափ տարտակա-
նութիւն ունինք Քրիստոսի : Կրնանք քիչ շատ
զգալ աս խորհրդածութիւնը ընելով թէ ինչ
պիտի ըլլար աշխարհիս վիճակը թէ որ Քրիս-
տոս անիկայ փրկելու չգար : Որովհետեւ ամէն-
քրն ալ մեղանշեցին և Աստուծոյ անէժքը վը-
րանին բերին , ամէնքը անոր պատիժը պիտի
կրէին յաւիտենական թշուառութեան մէջ : Եւ
մինչև անդամ աս աշխարհքն ալ գժոխքի պի-
տի դարձունէին , ինչու որ բան մը պիտի չը-
գանուէր իրենց չար կիրքերը զսպելու : Ա՛չ
Կիրակի ո՛չ Աստուածաշունչ ո՛չ բարի մարդու
օրինակ և ո՛չ սրբութեան առաջնորդող բան մը

պիտի ըլլար աշխարհիս մէջ՝ անոնց չար յօ-
 ժարութիւնները սանձելու, և անսանձ մնալով
 նին ըրած չարութիւններնին խափանելու: Բո-
 լոր աշխարհք հեթանոսներուն մէջը գտնուած
 ամենէն խաւար և ամենէն անգութ ազգին նը-
 ման պիտի ըլլար, թէ որ Քրիստոս անոր փրկ-
 կագործութեանը ձեռք չդարնէր: Բայց օրհնեալ
 է իր անունը որ շնորհուց մեզ մեր մեղքերովը
 կորսուելու. ինքը մեր Թագաւորը և Փրկիչը
 եղաւ, և բոլոր վայելած օրհնութիւններնիս ինք
 ծախու առաւ և մեզի պարգևեց: Եւ ժամա-
 նակ պիտի գայ՝ որ բոլոր աշխարհք զինքը պի-
 տի ճանչնայ, և իրեն պիտի ծառայէ ու իր-
 մով պիտի օրհնուի:

ՆՈՅՆՄԻՆԻ

1

Տէրոջը պատիւ ըրէ քու ստացուածքէդ, եւ
քու բոլոր բերքերուդ երախայրիներէն : Առաջ .
Գ . 9 :

Այն աշխարհիս հարստութիւններուն փոքրա-
քը միշտ մարդս մեզայ կ'առաջնորդէ : Բայց
հոս մէկ սկզբունք մը կայ, որ անխիայ մեզի
մեր ստացուածքները գործածելու կանոնը ընե-
լու ենք : Արնանք աշխատութիւնով եւ կամ
ուրիշ օրինաւոր միջոցով մը աշխարհային բարիք
ձեռք ձգել, եւ թէ որ Աստուած մեր աշխա-
տութիւնները օրհնէ, շնորհակալութեամբ կըր-
նանք վայելել ինչ որ մեզի պարգևէ : Բայց
յիշելու ենք որ բոլոր ստացուածքնիս Աստու-
ծոյ է, եւ անով զինքը պատուելու ենք : Աս-
տուած մեզմէ չպահանջեր որ հին հրեից պէս
զոհեր եւ մեր առաջին պտուղները իր սաճարը
տանինք, հասցա մեր ստացուածքովը ինքը պա-
տուելու շատ ճամբաներ գրաւ առջնիս : Միշտ
ապքատ կայ քովերնիս, եւ թէ որ անոնց նեղ-

եալ պարագաներնուն պակասութիւնները հոգանք ,
 մեր ստացուածքովը Տէրը պատուած կ'ըլլանք :
 Մեր ստացուածքովը մեր ընկերներուն ինչպէս
 որ մարմնաւոր պակասութիւնները անանկ ալ հո-
 գևոր պակասութիւնները կրնանք հոգալ : Արը-
 նանք Աստուածաշունչ և ուրիշ բարի գիրքեր
 առնել , և անոնք չունեցողներուն տալ , և կամ
 կեանքի ճամբան չգիտցող տղէտները կրթողնե-
 րուն օգնութիւն ընել : Աս կերպով որչափ
 շատ ստացուածք որ ունենայ մարդ մը , կրը-
 նայ անիկայ իր Աստուածը և Փրկիչը պատուե-
 լու համար դործածել : Թէ որ աս բանը մեր
 նպատակը ընենք , հարստութիւն դիզելու ջանք
 ընողներուն ապօրինաւոր փափաքը մեր սիրտե-
 րուն մէջ տեղ պիտի չունենայ :

2

Եւ անիկայ ըսաւ . ԱԼ մէյ մըն ալ քու
 անունդ Յակոբ չըսուի , հասցա Իսրայէլ ըսուի .
 ինչու որ Աստուծոյ հետ ու մարդոց հետ մտր-
 աղնչեցար , և յաղթեցիր : Ծննդ . ԼԲ . 28 :

ԱՍ խօսքը հրեշտակին ձեռքովը Յակոբին
 ըսուեցաւ , որուն հետը մարտնչեցաւ օրհնու-
 թեան մը համար , երբոր իր սրգողած Եսաւ
 եղբայրը դիմաւորելու վճայ էր : Յակոբ մար-

արնչելուն մէջ յաղթող հանդիսացաւ և օրհնու-
 թիւնը ինք առաւ, և խաղաղութեամբ իր եղ-
 քայրը դիմաւորեց: Իսրայէլ անունը բոլոր Աս-
 տուծոյ որդւոցը տրուած է. անոնք հողևոր
 ու ճշմարիտ Իսրայէլ կը կոչուին: Արնանք ը-
 սել թէ անոնք Աստուած կը յաղթեն. աղօթք
 ըրած ժամանակնին կը մարտնչին անոր հետ.
 “ Իր զօրութիւնը մէջ կը բերեն ”, երբոր առ-
 ջին կ'ելլեն աղօթք ընելու, և իր տուած խոստ
 մուկներուն համար կը ստիպուի անոնց ահանջ
 կախելու, և իրենց ուզածը տալու: Աստուծոյ
 և մարդոց կը յաղթեն, վասն զի Աստուծոյ
 զօրութիւնը իրենց կողմն է, որ մարդոց սիր-
 տերը կը դարձնէ իրենց խնդրուածները կա-
 տարելու: Սակայն Աստուծոյ կամքին համա-
 ձայն բաներ խնդրելու են, և հաւատքով ու
 խոնարհութիւնով և ջերմեռանդութիւնով խընդ-
 րելու են. և աս կերպով ըլլալու են ճշմարիտ
 Իսրայէլի աղօթքները: Աստուած ինտոր քաղց-
 րութեամբ կը խոնարհի և կը խոստանայ մեր
 ձայնին մտիկ ընելու. և որչափ աստերախտու-
 թիւն ըրած կ'ըլլանք, թէ որ շարունակ իրեն
 աղօթք ջրնենք, թէ մեզի համար և թէ ուրիշ
 ներուն համար հողևոր օրհնութիւններ խընդ-
 րելով:

3

Ու Ենովք Աստուծոյ հետ քալեց, և չէր
գանուեր . ինչու որ Աստուած առաւ զանիկայ :
Ծննդ . Ե . 24 :

ԱՍԻԿԱՅ երէք հարիւր վաթսուներկինգ տա-
րի ապրող մարդու մը վարքին սլամմութիւնն
է . և սակայն շատ իմաստալից զրուցուածք
մըն է : Աս իր յիշատակը շատ յարգի յիշա-
տակ մըն է . չկայ մարդկային գովասանութիւն
մը Սուրբ Հոգիին շունչովը գրուած ասանկ մէկ
վկայութեան մը հաւասար : Աստուծոյ հետ քա-
լեց . կրնան երկու հոգի մէկտեղ քալել մինչև
որ մէկզմէկու հետ չմիաբանին : Աստուծոյ հետ
քալելովը անոր հետ հաղորդակցութիւն կը-
նէր . իր սիրտը անոր առջին շտակ էր . Աս-
տուծոյ սիրած բանը կը սիրէր, և ատած բանը
կ'ատէր . Աստուած ինքը ուր որ առաջնորդէր
հոն կ'երթար : Անանկ պիտա կապակցութիւն
մը ունէր Աստուծոյ հետ, որ Աստուած ինքը
չթողուց որ աս մեղաց աշխարհին մէջ քալէ,
ու անիկայ իր քովը տաւ : Ենովք շատ մեծ
աբաժնութիւն մը ընդունեց . բայց նոյն եր-
ջանկութիւնը մենք ալ կրնանք վայելել : Ենով
քին պէս կրնանք Աստուծոյ հետ քալել, իր
մեղմէ սրահանջածը աս է . աս աշխարհիս մէջը
պարտաւորութիւններ ունինք ընելու, և զու-

արթուածեամբ կատարելու ենք անոնք Աստուծոյ կամքին հնազանդելով : Բայց աշխարհային գործքերնուս մէջ զբաղած օրերնիս ստէպ ստէպ Աստուծոյ ներկայութեանը ելլելու ենք : Ամէն ստեն սեպելու ենք թէ Աստուծոյ առջին ենք , և զգուշանալու ենք ոչ իր կամքին համաձայն ասարինք . և ան ստենը երբոր յարմար տեսնէ Ենովջին պէս մեզ իր քովը կ'առնէ : Բայց չէ թէ Ենովջին պէս առանց մահ ճաշակելու . զան զի մահը պիտի ըլլայ մեզ երկինքը սանազ դեպքանը , ուր յաւիտեան Տէրօջը քով պիտի կենանք :

4

Բայց մենք ամէնքս բայց երեսով Տէրօջը փառքը որպէս թէ հայելի մէջ տեսնելով , նոյն պատկերին կը նորոգուինք փառքէ 'ի փառք , որպէս թէ Տէրօջը հողիկն : Բ. Կորնի . Գ . 18 :

ԱՒԵՏԱՐԱՆԸ Աստուծոյ կատար' լութիւն . ներուն մէկ փառաւար յայանութիւնն է : Հոն կը տեսնենք որպէս թէ հայելի մէջ իր ըստորոգելեաց անդրադարձութիւնը : Իր սրբութիւնը արդարութիւնը ողորմութիւնը և իր սէրը Աւետարանին մէջ յայանի կ'երկի : Հին սուրբերը մութ և անկատար ծանօթութիւն

մը ունէին անոր վրայ . բայց մէնք Յիսուս
Քրիստոսով յայանուած բոլոր լոյսը և գիտու-
թիւնը կը վայելենք , իր կատարելութիւննե-
րուն փառքը քիչ շատ կը տեսնենք : Թէ որ
Աստուծոյ բնութեանը վրայ ազէկ տեղեկու-
թիւն մը ունենալ ուզենք , Աւետարանը սոր-
վելու ենք . Թէ որ աս բանը շարունակ ընենք՝
նոյն պատկերին պիտի փոխուինք : Որչափ որ զար-
մանքով կը նայինք իր սրբութեանը գեղեցկու-
թիւններուն վրայ՝ որոնք մեզի յայանեց , այն-
չափ աւելի իրեն կերպարանակից կ'ըլլանք :
Ասիկայ է Սուրբ Հոգիին գործի դրած միջոցը ,
որով սրտերնիս կը սրբէ , և մեզ Աստուծոյ
Թագաւորութեանը կը պատրաստէ : Ուրեմն Թէ
որ կը փափաքինք մեզքէ ազատ և սուրբ ըլ-
լալու՝ ինչպէս որ Աստուած սուրբ է , Ժրու-
թեամբ սորվինք իր սուրբ խօսքը : Շատ խոր-
հինք իր բնութեանը վրայ՝ ինչպէս որ Քրիս-
տոսով յայանուեցաւ . և աղաչենք որ Սուրբ
Հոգին գայ ու մեզ նոյն պատկերին փոխէ :

Տ

Անխախտ պահենք յոյսին դաւանութիւնը .
ինչու որ հաւատարիմ է անիկայ՝ որ խոստա-
ցաւ : Եֆե . Ժ . 23 :

ՔՐԻՍՏՈՆԵԱՆԵՐԸ, շատ փորձութիւններ
 ունին իրենց հաւատքին դաւանութենէն խախ-
 տելու : Աշխարհային մարդիկ ծաղր կ'ընեն և
 կ'ատեն, և կամ մինչև անգամ կը հալածեն
 անոնք ան բանին համար : Սատանան անոնք
 կը փորձէ Աստուծոյ հաւատարմութեանը վրայ
 երկմտելու, կամ կը ցուցնէ անոնց թէ ինչ
 մեծ փորձութիւններու կրնան հանդրալիլ բըռ-
 նած ճամբաներնուն մէջ, կամ ինչ դժուա-
 րութիւններու դէմ դնելու են իրենց երկնային
 ճամբորդութեանը մէջ : Եւ կամ բուն իրենց
 սիրտերը զիրենք կը յորդորեն ջանքերնին մէկ
 դի ձգելու, և աշխարհային ճամբաներու դառ-
 նալու : Բայց երանելի է մինչև վերջը դիմացո-
 զը • մեր դաւանութիւնը փառաւոր դաւանու-
 թիւն մըն է, անիկայ անխախտ սրահէնք ա-
 ռանց շարժելու : Անանկ դաւանութիւն մըն է
 որ կեանք՝ զօրութիւն և յաւիտենական երջան-
 կութիւն կու տայ մեզի • անիկայ ձգելու հա-
 մար եկած ամէն փորձութեան դէմ կենանք :
 Թէ որ ասանկ անխախտ սրահէնք մեր յոյսին
 դաւանութիւնը, մեր ըրած վստահութեանը հա-
 մար պիտի ջամջնանք : Հաւատարիմ է ան որ
 խօսք տուաւ • բոլոր ան խօսքերը՝ որոնց վրայ
 վստահութիւննիս դրած ենք, բոլոր խիեզերքը
 պիտի տեսնայ թէ անխոփոխ ճշմարտութիւն-
 ներ են եղեր : Բոլոր իր խոսամունքները պի-
 տի կատարէ • պիտի օգնէ մեզի մեղաց և սա-

տանային յաղթելու, և վերջապէս յաղթութեան սլասիը պիտի տայ մեզի երկինքը :

6

Վասն զի մեզի ճիշտ ասանկ քահանայապետ մը կը վայելէր, սուրբ՝ անմեղ՝ անարատ՝ մեղաւորներէն զատուած՝ ու երկինքէն բարձրըցած : Եբե . Է . 26 :

ՄՈՎՍԻՍԱԿԱՆ անտեսութեան մէջ քահանայապետական պաշտօնը շատ բարձր պաշտօն մըն էր . Ժողովուրդին համար պատարագներ և զոհեր կը մատուցանէր : Երբոր քառութեան ան մեծ օրը գար, Ժողովուրդին կողմանէ միջնորդութիւն կ'ընէր, անոնց տեղը ինքը Սբբութիւն սրբութեանցը մանելով և քառութեան արիւնը մատուցանելով : Բայց ասանկ զոհերը մեղք չէին կրնար վերցընել . հազարաւոր ցուլեր ու նոխազներ բաւական չէին մեր մեղքերը քաւելու : Բայց աս զոհերը ան մեծ զոհին խորհրդաւոր նշանն էին որ պիտի մատուցուէր, և ան քահանաները ան մեծ քահանայապետին օրինակն էին որ պիտի գար : Յիսուս եկաւ և ինքզինքը զոհեց մեր մեղքերուն քառութեանը համար : Անիկայ անխփփօս քահանայութիւն մը ունի . պէտք չէր որ

հին քահանաներուն պէս առաջ իրեն համար
 քաւութիւն ընէր, հապա ինքը սուրբ՝ անմեղ՝
 և անարատ էր: Ինքը Քահանայապետ և մի-
 անգամայն զոհ ալ է. մեր յանցանքները ա-
 ղարած մը պատարագելով չվերցուց, հապա
 ինքը անձամբ եկաւ իբրև Աստուծոյ սուրբ
 Արդին, և իր արիւնը մեզի համար թափեց:
 Ասկէց պզտիկ բանով մը մեր մեղքերուն քա-
 ւութիւն չէր կրնար ըլլալ. և ուրիշ էակ մըն
 ալ չէր կրնար մեզի Քահանայապետ ըլլալ:
 Օրհնեալ է, և յաւիտեանս օրհնեալ ըլլայ ինքը
 որ սա գործիս ձեռք զարկաւ և մեր փրկու-
 թեանը ճամբայ մը բացաւ:

7

Բայց ասիկայ մէկ զոհ մը մատուցանելով
 մեղքերու համար, մշանջենաւորապէս Աստու-
 ծոյ աջ կողմը նստաւ: Եբր. Ժ. 12:

ՀԻՔԻՑ քահանաները ամէն օր պատարագ
 կը մատուցանէին, վասն զի իրենց անզօր ու
 անկատար պատարագները չէին կրնար մեղք
 վերցընել: Բայց մեր մեծ Քահանայապետը
 մէկ պատարագ մը մատուց, որ բաւական է
 բոլոր աշխարհիս մեղքերը քաւելու. իր անձը
 մատուցանելով ուրիշ պատարագ մատուցանելը

ալ յաւիտեանս վերջացուց : Աս է Աստուծոյ ընդունելի ան մէկ հատիկ քաւութիւնը , ուստի ալ ուրիշ մեղաց պատարագ չկայ : Պարտաքան է մտածելը թէ մեր գործքովը , կամ այսինչ և այն ինչ պատարագներով , չարչարանք քաշելով և կամ ինչ և իցէ գործքով մեղաց քաւութիւն կրնայ ըլլալ . Յիսուս Քրիստոս ան Տէր պատարագը մատուց : Թէ որ հոգիներնուս փրկութիւնը փնտրուենք , իրեն երթալու ենք որ իր արիւնովը ծախու առած օրհնութիւնները մեզի տայ : Թէ որ իր ըրած քաւութեանը չապաւինինք ու իր արիւնը արհամարհենք , թէ որ մենք մեզմէ բան մը ընել ուղենք մեղքերնիս քաւելու համար , և յաւիտեանական կեանքը իբրև իր ձրի պարգևը չընդունինք , ալ յոյս չկայ մեզի , և մեր անօրինութիւններուն պտուղը յաւիտեան պիտի քաղենք :

8

Մեղքի համար՝ որ ինծի չեն հաւատար :
Յ. Է . Ժ. Զ . 9 :

Թէ որ մարդ մը մարդասպանութիւն կամ գողութիւն ընէ , ամէն մարդ անիկայ մեծ մեղաւոր մը կը ճանչնայ : Թէ որ մարդ մը սուտ խօսի կամ խաբէրայութիւն ընէ , և կամ իր աղ-

գահաններուն հետ անվայել կերպով վարուի ,
 դիւրաւ կը տեսնուի թէ մեղաւոր է : Թէ որ
 մարդ մը բոլոր կրօնական պարտաւորութիւն-
 ները զանց առնէ , և յայտնի մեղք գործէ ,
 պայծառ կ'երևայ թէ մեղաւոր է : Բայց թէ
 որ մարդ մը բնութեամբ քաղցր ըլլայ , և
 բոլոր իր ազգականներուն ու բարեկամներուն
 հետ սիրով վարուի , թէ որ ամէն բանի մէջ
 իր ընկերին հետ արդարութեամբ վարուի ու
 բոլոր զգուշութիւնով ճշմարտութեան ետեւ ըլ-
 լայ , և թէ որ կրօնական արտաքին պարտաւո-
 րութիւններուն ամէնքն ալ պահէ , շատ դժ-
 ուար բան է իր մեղաւոր ըլլալը տեսնել , թէ
 և ինք դիտնայ թէ Տէր Յիսուս Քրիստոսի
 վրայ ճշմարիտ և կենդանի հաւատք չունի :
 Բայց երբոր Սուրբ Հոգին իր սիրտը իջնայ ,
 իրեն կը ցուցնէ իր ան մեծ անհաւա-
 տութեան յանցանքը : Սուրբ Հոգին կրնայ
 զգացնել մարդիկներուն , թէ մարդոց գէճ
 գործած բոլոր մեղքերնին Քրիստոսի վրայ ը-
 րած անհաւատութիւններնուն քով պղտիկ են :
 Աստուծոյ Որդին իր երկնային աթոռը ձգէ
 աշխարհք գայ , և չարչարանայ կեանք մը անցը-
 նելէն ետեւ՝ իր արիւնը խաչին վրայ թափէ որ
 մարդիկ փրկուին , և ան մարդիկը աս Փրկիչը
 տան և աս արիւնով ծախու առնուած փրկ-
 կութիւնը չընդունին . աս բանը՝ Սուրբ Հո-
 գին սորված անձը աս բանին օր աստիճան

մեղք ըլլալը աղէկ կը զգայ և յաւիտենական
մահուան արժանի չարութիւն ըլլալը կը խոս-
տովանի :

9

Ինչու որ մեր Աստուածը մաշող կրակ է :
Եբր . ԺԲ . 29 :

Թէ որ մեղաւորները Աստուծոյ բնութիւնը
գիտնային , պիտի սարսըփէին իր բարկութեա-
նը և անէծքին տակը ըլլալուն համար : Ա-
նիկայ անհուն սրբութիւն ունի և անհուն զըղ-
ուանքով մեղքէ կը գարշի : Ինքը ըսած է որ
մեղք գործող անձը պիտի մեռնի . պիտի չը-
թողու ամենէն փոքր մեղքը որ առանց պատի-
թի անցնի . բոլոր անօրէնութիւն գործողներուն
մաշող կրակ մը պիտի ըլլայ : Աս սուրբ Աս-
տուծոյն դէմ ամէնքս ալ մեղանշեցինք . ան-
թիւ անգամ իր օրէնքը ոտքի տակ առինք .
արդարութեամբ բարկացած է մեզի , ուրեմն
իր բարկութենէն ինտո՞ր պիտի ազատինք :
Միշտ մեր բոլորախէն է ու մենք իր ձեռքն ենք ,
ինտո՞ր պիտի ազատինք աս մաշող կրակէն :
Յիսուս Քրիստոս ինքզինքը մեղաւորներուն ա-
պաւէնը կ'ընէ . ինք իր արիւնը թափեց ու կը
հրամայէ մեզի որ անով լուացուինք ու սըր-

բուհնք : Կը հրաւիրէ մեզ որ բոլոր մեղքեր-
նիս ձգենք , և իր արդարութիւնովը Աստուծոյ
առջևը ելլենք : Թէ որ աս բանը ընենք Աս-
տուծոյ հաճոյ կ'ըլլանք , ինչպէս որ իր սիրե-
լի Արդին իրեն հաճոյ է : Բայց թէ որ աս Փր-
կիչը վար զարնենք և մեր արդարութեանը ա-
պաւինեչով Աստուծոյ առջևը ելլանք , զինքը
մաշող կրակ պիտի դանենք :

10

Ինչու որ ինքը Հայրը ձեզ կը սիրէ , վասն զի
դուք զիս սիրեցիք՝ և հաւատացիք թէ ես Աս-
տուծմէ ելայ : Յով . ԺԶ . 27 :

ԱՍՏՈՒԱԾ կը սիրէ ամէն անոնք , որոնք որ
իւր Արդին Յիսուսը կը սիրեն և կը սրատունն .
իրեն շատ հաճելի բան է անսկիայ փառաւորե-
լը , և կ'ուզէ որ ամէն մարդ իւր Արդին պա-
տուէ , ինչպէս որ Հայրը կը պատուեն : Մտնք
որ Յիսուս Քրիստոսը կը սիրեն և անոր կը
հաւատան , Հայր Աստուած անոնք կը ճանչնայ
թէ իր որդիներն են և սիրով կը նայի վրանին ու
բոլոր մեղքերնին կը ներէ . Աստուծոյ հաճոյ ըլ-
լալու ճամբան միայն ասկիայ է : Մեղաւորները
իւր քովը չկրնար առնել , թէ որ Քրիստոսինը
ու անով թողութիւն գտած չըլլան : Բոլոր

Փրկիչը արհամարհողները Աստուծոյ բարկու-
թիւնը պիտի կրեն, վասն զի իր սիրելի Արդին
անպատիւ ըրին : Փրկութեան ճամբան գիտցող
մեղաւորները թէ որ հոգիներնուն փրկութիւնը
չփնտրուեն Աստուծոյ դատապարտութիւնը պիտի
ընդունին, չէ թէ միայն բոլոր կեանքերնին
իր օրէնքին անհնազանդութիւն ընելով անցը-
նելնուն համար, հասրա ևս առաւել իր սիրե-
լի Արդին անարդէնուն ու արհամարհելնուն
համար : Ինտո՞ր կրնանք ազատիլ թէ որ աս
ձե՞ծ փրկութիւնը ստենք :

11

Յիսուս պատասխան տուաւ . իմ թագաւորու-
թիւնս աս աշխարհէս չէ . թէ որ աս աշխար-
հէս ըլլար իմ թագաւորութիւնս, իմ սպա-
սաւորներս կը կռուէին՝ որ ես Հրէից ձեռքը
չմատնուիմ . բայց հիմա իմ թագաւորութիւնս
ասկէ չէ : Յ.Է. ԺԸ . 36 :

ՔՐԻՍՏՈՆԵԱՅ անունով մարդիկ ժամանակ
ժամանակ աշխատեցան երևելի աշխարհային թա-
գաւորութիւն մը հաստատել : Եկեղեցիին աս
տեսակ պաշտօնեաները զօրութիւն՝ հարստու-
թիւն և պատիւ ձեռք ձգեցին . ջանացին քը-
րիստոնէութիւնը սուրով տաքածել, և հերե-

անկոս սեպածներնին հարածեցին ու մեռցուցին :
 Բայց Քրիստոսի հաստատել ուղած թագաւորութիւնը
 ասանկ չէ • ինք աշխարհիս վրայ եղած
 ասեւը գլուխը գնելու տեղ չունէր , և
 ընտ գիտաւորութիւն չունէր որ մարդիկ իր
 աշակերանները ըլլալով հարստութիւն և պատիւ
 ստանան : Իր առաջին աշակերանները աղքատ
 ներէն ընտրեց , “ ու զօրաւորները և այնուա
 կանները ճանչուեցան ” : Աս թագաւորութիւ
 նրս հոգևոր է • ասիկայ մարդոց սրտերուն մէջ
 հաստատուած է , ու իր տուած պատիւներն են
 արդարութիւն ու սրբութիւն և ցնծութիւն
 Սուրբ Հոգիով : Աս թագաւորութիւնս աշխարհային
 զօրութիւնով տարածուելու չէ • “ Մեր
 զէնքերը մարմնաւոր չեն , հասցա հոգևոր ” ,
 կ'ըսէ առաքեալը : Կակ աս թագաւորութեանս
 անդամները իրենց թշնամիները մարմնաւոր պա
 տիժներով պատժելու չեն • “ Արէժխնդրու
 թիւնը իմս է , ու ես պիտի հատուցանեմ ” ,
 կ'ըսէ Տէրը : Քրիստոսի թագաւորութեան հա
 կառակորդները յաւիտենականութեան մէջ պա
 տիժնին պիտի ընդունին , և իր աշակերաններն
 ալ հոն պիտի ընդունին իրենց պատիւն ու
 վարձքը :

զօթք կ'ընէր ու կ'ըսէր, Տէր Յիսուս՝ ընդունէ իմ հողիս : Գործ . է . 58 :

Տէր Յիսուս Քրիստոսի վրայ ունեցած սիրոյն և հաւատարմութեանը համար էր որ Ստեփաննոս կը մեռնէր : Բայց իր Փրկչին վրայ ունեցած վստահութիւնովը աս փորձութեան ժամուն մէջ չսկարացաւ : Թէպէտև հիմա իր թշնամիներուն ձեռքն էր, բայց տակաւին կը հաւատար թէ Քրիստոս կարող է զինքը փրկել, և հաւատքով հողին անոր ձեռքը յանձնեց, երբոր իր կատարած թշնամիները զինքը կը քարկոծէին : Աստուած երբեմն թոյլտուութիւն կ'ընէ որ չար մարդոց իր ծառաներուն դէմ ըրած խորհուրդները յաջողին . բարի գիտաւորութիւններով իրենց մարմինները անոնց ձեռքը կը ձգէ : Բայց հողիին միտամը չեն կրնար հասցընել . հողին միայն ժամ մը առաջ Փրկչին քով կրնան խրկել : Քանի որ ան չար մարդիկը իրենց կատաղութիւնը Ստեփաննոսին վրայ կը թափէին ինքը մեծ խաղաղութեան մէջ էր : Անոնք իրենց չարութիւնը կը կատարէին, բայց ան ինքզինքը իր Տէրոջը և Արդապետին ձեռքը յանձնեց, որով ապահով և երջանիկ էր : Թէ որ կարենանք հաւատքով ինքզինքնիս Տէր Յիսուս Քրիստոսի ձեռքը յանձնել, ալ մարդոց մեղի ըրածներէն չենք վախնար : Մահը ինչ եղանակով որ

դայ թող դայ, միայն խոնարհ հաւատքով հոգինիս Գրիստոսի յանձնելու ենք ու ապահով կ'ըլլանք :

13

Ոմանք չարչարուեցան՝ և չընդունեցին ազատութիւնը, որ լաւագոյն յարութեան հասնին : Եբբ • ԺԱ • 35 :

ԱՌԱՔԵԱԼԸ առ խօսքերը յառաջ կը բերէ հաւատքին զօրութիւնը ցուցնելու համար : Աստուծոյ ծառաները անով զօրացած ամենամեծ չարչարանքներու դիմացան, ու չընդունեցին ազատութիւնը, որ եթէ Տէրոջը ճամբաները արհամարհէին կրնային խալսիլ : Բայց աչքերնին աներևոյթ բաներու վրայ էր • հաւատքը իրենց լոյս էր • անոնք ան բաներուն կը նայէին որ մինչև 'ի մահ հաւատարմութիւն ընելովնին պիտի ձեռք ձգէին, և ասանկով ան անցաւոր հանգստութիւնը աչքերնուն ոչինչ կերևար, որ կրնային գտնել իրենց թշնամիներէն՝ հաւատքնին ուրանալով : Մարմիննին կը տանջուէր քաշած չարչարանքներովնին, բայց անոնք անկէջ ետև գալու լաւագոյն յարութեան մը կը նայէին : Ու ըրածնին խելացութիւն էր • հարիւրաւոր տարիներէ 'ի վեր և մինչ

չև հիմա անոր պատուը կը քաղեն երկնային
 փառաց մէջ : Մենք ալ սորվինք հաւատքին աչ-
 քովը ներկայ ու գալու բաներուն վրայ նայե-
 լու : Երբոր մեր Փրկիչը արհամարհելու և կամ
 դէպի իրեն ունեցած պարտաւորութիւններնուս
 մէկը ձգելու փորձուինք, ան լաւագոյն յա-
 լութիւնը մտքերնիս բերենք որն որ գանել կը
 յուսանք : Երկրաւոր հրապուրանաց զօրութիւնը
 կտարտենք, ան երանութեանը վրայ խորհելով՝
 որ Քրիստոսի հետևողներուն պատրաստուած է
 երկինքին մէջը :

14

Աս մտթուած Գառնուկը արժանի է զօրու-
 թիւն՝ ու հարստութիւն՝ և իմաստութիւն՝ ու
 կարողութիւն՝ և պատիւ ու փառք ու օրհնու-
 թիւն առնելու : Յայտ • Ե • 12 :

ԱՄԻԿԱՅ Յովհաննէսին ան բաղմութենէն
 լսած փառաբանութիւնն է, որոնց համբանքն էր
 բիւրք բիւրուց և հազարք հազարաց : Ան մտթ-
 թուած Գառնուկը յաւիտեանս յաւիտենից փրկ-
 կուածներուն փառաբանութեանը առարկան պի-
 տի ըլլայ : Ան հիմա բարձրացած է փառքով
 և պատիւով հօրը՝ աջ կողմը, սակայն դեռ վը-
 րան են իր սպաննուելուն նշանները : Տակա-

լին կը յիշէ իր նուաստութեանը և չարչարա-
 նաց օրերը, և երկնից բոլոր բնակիչներն ալ
 կը յիշեն անոնք: Չկրնար մէկ փրկուած հո-
 գի մը երկինքը մտնել առանց նախ և առաջ
 մորթուած Գառնուկին վրայ նայելու և անոր
 փառաբանութիւն կարդալու: Եւ առ փառաբա-
 նութիւնը պիտի չդադրի. փրկուած մեղաւոր
 մը երբէք պիտի չմտնայ որ իր փրկութիւնը
 ան մորթուած Գառնուկէն ընդունեց: Եւ քա-
 նի որ բարձրանայ երկնային երանութիւններու
 մէջ, այնչափ պիտի դդայ թէ որչափ պարտա-
 կանութիւն ունի իր Փրկչին: Եւ աւելի բար-
 ձրը անուշ ձայնով փառաբանութիւն պիտի
 կարդան ըսելով, « Աս մորթուած Գառնուկը
 արժանի է դորութիւն՝ ու հարստութիւն՝ և ի-
 մաստութիւն՝ ու կարողութիւն՝ և պատիւ ու
 փառք ու օրհնութիւն աննելու »:

13

Ետքը Յիսուս նորէն ըսաւ անոնց. Ես կ'եր-
 թամ՝ ու զիս պիտի փնարուէք. և ձեր մեղա-
 ցը մէջ պիտի մեռնիք. ուր որ ես կ'երթամ,
 դուք չէք կրնար դալ: Յով. Ը. 24:

ՅԻՍՈՒՍ Հրէաներուն ողորմելու եկաւ, ու
 անոնք զինքը չընդունեցին: Անոնք խրատեց ու

հրաւիրեց և աղաչեց անոնց, բայց ամէնը զուր
 տեղը • իր խօսքերը արհամարհելուն վրայ հաս-
 տատ կեցան, և զինքը իրենց Փրկիչ ջընդունե-
 ցին : Ան ատենը խմացուց անոնց՝ թէ իրենց
 ցուցուցած իր աս ողորմութիւնը ու համբե-
 րութիւնը յաւիտեան պիտի չմնայ : Անոնցմէ
 հրաժարելու վրայ էր • նեղութեան ժամերնուն
 պիտի փնտրուէին զինքը, բայց պիտի չգտնէին :
 Մեղքերնուն մէջը պիտի մեռնէին, և բնաւ
 պիտի չկրնային իր ներկայութեանը երթալ :
 Հիմա ալ Քրիստոս մեղաւորներուն հետ՝ Հրե-
 ից հետ վարուածին պէս կը վարուի • ողոր-
 մութեան պարգևները անոնց կը ցուցնէ, և
 մեծ երկայնատութիւնով կը հրաւիրէ անոնք՝
 որ իրեն դան ու փրկուին : Բայց թէ որ իր
 շնորհքը արհամարհելին շարունակեն, ալ ա-
 նոնք կը թողու որ իրենց ընտրած ճամբան
 երթան, և մեղքերնուն մէջը մեռնին : Բոլոր
 գործած մեղքերնին վրանին բեռնաւորուած դա-
 տաստանի պիտի կայնին Աստուծոյ առջին :
 Ի՞նչ ասէղ դատապարտութիւն մը պիտի ըլ-
 լայ անոնց դատապարտութիւնը, որ բոլոր մեղ-
 քերնուն վրայ Փրկիչը արհամարհել մըն ալ
 աւելցուցին : Անոնք Քրիստոսի եղած տեղը
 պիտի չկրնան երթալ :

16

Եւ ձեզի նոր սիրտ պիտի տամ , ու ձեր ներսի դին նոր հոգի պիտի դնեմ , և ձեր մարմիններէն քարեղէն սիրտը պիտի հանեմ , ու ձեզի մարմնեղէն սիրտ պիտի տամ : Եւեհ . Լ. 2 . 26 :

ԱՍՏՈՒԱԾ առ հերպով կը վարուի մարդոց բոլոր մեղանշահան որդւոցը հետ , որոնք իրենները ընելու կ'ընտարէ : Իրենց մեղացը մէջ վրանին կը նայի և կը տեսնէ թէ ինչպէս կը սիրեն մեղքը , և ինչպէս հաստատուած են աշխիւս շարունակելու : Ար տեսնէ թէ սրտերնին որչափ կարծրացած է , և դէպի իրենց ցուցած ողորմութիւնը ու սէրը անոնց որչափ քիչ ազդեցութիւն կ'ընէ : Ար տեսնէ թէ որչափ քիչ կը նային իր խրատներուն և սպառնալիքներուն , և սակայն անոնց ողորմելու դիտարութիւնը չփոխեր : Միաքը կը դնէ անոնք վերիէլ , ու նոր սիրտ և նոր հոգի կու տայ անոնց . ալ անկէց ետե մեղք սիրելէն կը դադրին , ու կը սկսին զԱստուած և սրբութիւնը սիրել : Ար հանէ անոնցմէ իրենց ան քարեղէն և անդդայ սիրտը , որ բոլոր իր սէրէն և ողորմութենէն ամենեկին պիտի ջարժէր , և անոնց մարմնեղէն սիրտ կու տայ , որ ան կրնայ մեղքին գէշութիւնը զգալ և անոր վրայ ողբալ ,

և Աստուծոյ բարութիւնը տեսնելով կը հալի :
Թէ որ փրկուած ենք՝ Աստուծոյ զօրութիւնովը
և շնորհքովը փրկուեցանք, թէ որ հիմա մե-
զաւոր չենք, թէ որ զղջումի զգացումներ կան
ներսիդինիս, Աստուծոյ սրտերնիս փոխելուն
համար է, ու իրեն կը վայելէ բոլոր փառքը :

17

Եւ իմ հոգիս ձեր ներսի դին ախաի դնեմ ,
ու ձեզի՝ իմ օրէնքներուս մէջ քաշել ախաի
տամ , ու իմ իրաւունքներս ախաի պահէք ու
ի գործ պնէք : Եւեի . 1, 2 . 27 :

Չէ թէ միայն մարդուս գործի գալուն ,
հապա բոլոր իր ապագայ հնազանդութեանն ալ
փառքը Աստուծոյ կը վայելէ : Թէ որ Տէրօջ
օրէնքներովը քաշենք ու անոր իրաւունքները
պահենք իր հոգին մեր ներսի դին դնելովն է ,
և մեզի անանկ ընել տալովն է : Ասանկով մեծ
յոյս կ'ունենանք , վասն զի թէ որ միայն մեր
զօրութեանը ապաւինելու ըլլայինք , յուսահա-
տութեան մէջ ախաի իյնայինք : Բայց Աստու-
ած խոստացաւ թէ քանի որ մենք ահով ու
գողով կը ջանանք մեր փրկութիւնը ձեռք ձը-
գել , ինք ալ ներսիդինիս աշխատի : Խոստա-
ցաւ իր հոգին մէջերնիս դնելու , վասն որոյ

կրնանք իրեն երթալ, և սա իր խոսամունքը մեջ
բերելով իրմէն դորութիւն խնդրել ներսիդի-
նիս եղած մեղքը յազթելու: Բայց աղէկ նա-
յինք որ սա Հոգիին գէմ չգործենք և մեղմէ
չհեռացրնենք, որովհետև մեր բոլոր յոյսը ա-
նոր վրայ է: Երբոր մեզ Տէրոջը օրէնքներուն
տանի՛ իր առաջնորդութեանը հետեւելու ենք.
և երբոր մեր անձը խոնարհեցրնենք իր առջին
մեր մեղքերը աղաչխարելով, մեր ներսիդին
յաջողած գործին բոլոր փառքը իրեն տա-
լու ենք:

18

Մեր ճամբաները քննենք ու փորձենք, ու
Տէրոջը գառնանք: ՈՂԲ • Գ • 40:

ԵՐԲՈՐ կը զգանք թէ Տէրոջը բարկու-
թիւնը կը կրենք, երբոր ինքզինքը մեղմէ ծած-
կէ որ իր երեսին լոյսը չտեսնանք, երբոր չը-
կրնանք մօտենալ իրեն աղօթք ընելու, և կամ
ինքը մտիկ չընէ մեր աղաչանքներուն, ան ա-
տենը հաստատ գիանալու ենք որ մեր մեղքե-
րը մեզ իրմէն հեռացուցին, ու քննելու և
փորձելու ենք մեր ճամբաները ու Տէրոջը
գառնալու ենք: Պէտք է որ շատ անգամ զըղ-
ջանք մեր մեղացը վրայ, ու կրկին և կրկին

ներում խնդրենք : Ու մեր ճամբաներն ալ
 քննելու ենք . դիւրաւ կը մտնանք մեր մեղ-
 քերը , կամ անհոգութեամբ մեղք կը դոր-
 ծենք , և կամ մեր սրտին խօրեբայութենէն
 դրեթէ առանց զգալու կը մեղանչենք . անոր
 համար մեր ճամբաները քննելու ենք , և առ
 դաղանի կամ մոռցուած մեղքերը դանելու
 ենք , և Աստուծոյ խոստովանելու ու թողու-
 թիւն խնդրելու ենք : Նայելու ենք թէ ինչ
 բաներով իրմէն մոլորեցանք , և վերստին դառ-
 նալու և զինքը փնտրուելու ենք ապաշխարու-
 թիւնով : Թէ որ ասանկ Տէրոջը դառնանք և
 բոլոր սրտով զինքը փնտրուենք , մեզի պիտի
 գտնուի և իր թողութիւն տալուն յմէկ նշանը
 պիտի տայ , ու կրկին մեզ իր սիրովը պիտի
 կենդանացնէ :

19

Եւ ահա՛ ես այսօր ամէն երկրին ճամբան
 կ'երթամ : Յէս . ԻԳ . 14 :

ՄԵՌՆԻԼԸ միշտ ահեղ բան է , բայց աւե-
 լի ահարկու եղած ըլլալու է առջի մօրդոց ,
 դեռ որ լոյսն ու անմահութիւնը Սեւտարա-
 նով յայանուած չէր : Բայց հոս Յեսու շատ
 հանդարտութեամբ կը խօսի իր մահուանը վր

րայ որ մօտ էր . ինք մեզի պէս տեղեկու-
 թիւն չունէր ան լաւագոյն յարութեանը և
 Քրիստոսի զինքը սիրողներուն համար պա-
 րաստած օթեաններուն վրայ : Բայց իր հաւատքը
 զօրաւոր էր , կրցաւ իր չդիտցած բաներուն
 ստասել ապաւինիլ և յուսալ Աստուծակ , մին-
 չև որ յաւիտենականութեան լուսովը գիտցաւ :
 Իր վերջին ժամերը Աստուծոյ ճշմարտութիւնը
 և հաւատարմութիւնը վկայելով անցուց , և Իս-
 րայէլի ժողովուրդը յորդորելով՝ որ անոր հը-
 նազանդին ու անոր ծառայէն : Ինչպէս որ բո-
 լոր իր կեանքը՝ անանկ ալ իր վերջին ժամե-
 րը Աստուծոյ իրեն յանձնած գործքովը ան-
 ցուց , և այսպէս պատրաստուեցաւ հրաժարուե-
 լու երբոր իր ժամանակը հասաւ : Երանելի
 բան է թէ որ մահը մեզ մեր Արդապեաին
 գործին զբաղած գտնէ : Երանելի բան է Յե-
 սուին պէս մահուան ձայնին հնազանդելու կա-
 րող ըլլալը , և իրեն պէս հանդարտութեամբ
 զատուիլը : Ամէն որ զգուշութիւն ընենք ու ա-
 ղօթենք որ աս երանութիւնը մերն ալ ըլլայ :

Այսօր երկինքը ու երկիրը վկայ կը բռնեմ
 ձեզի , որ կեանքը ու մահը , օրհնութիւնը ու
 անկէճքը ձեր առջևը դրի : Բ. Օրին . Լ . 19 :

ԱՅՍՊԷՍ խօսեցաւ Մովսէս Իսրայէլացւոց
 էրբօր անոնցմէ զատուելու վրայ էր . և ցու-
 ցուց թէ գեպի իրենց ունեցած բոլոր պար-
 տաւորութիւնը կատարեց : Հաւատարմութեամբ
 առջինին դրաւ կենաց և մահուան ճամբան ,
 յորդորելով անոնք որ կենաց ճամբան ընտրեն :
 Թէ որ կրկին մահուան ճամբան ընտրէին , ա-
 լիւննին իրենց գլուխնին պիտի ըլլար և ինքն ալ
 անպարտ էր : Երանելի բան է Քրիստոսի պաշ-
 տօնեաց եղողի մը թէ որ կարենայ առանկ եր-
 կինքը ու երկիրը վկայ կոչել թէ ինքը հա-
 վատարմութեամբ կատարեց իր պարտաւորու-
 թիւնը , թէ իր ձեռքին տակը եղող ժողովուր-
 դին յայտնի ցուցուց կենաց ճամբան , և յոր-
 դորեց անոնք որ անոր մէջը քաշեն , և անոնք
 մահուան տանող ճամբէն զգուշացուց որ ան-
 կէց ետ կենան : Ասանկ մէկը Պօղոս առաքեալին
 պէս կրնայ ըսել թէ բոլոր մարդոց արիւնէն
 ազատ է : Բայց իրենց պարտաւորութիւնը զանց
 ընտաները , և վրիպութեան ճամբան ժողովուր-
 դին յայտնապէս չսորվեցընտաները ահարկու-
 հաշիւ մը պիտի տան , էրբօր իրենց ժողովուր-
 դին հետ Քրիստոսի առջին դատաստանի կայնին :

ԱՆՈՒՅՔ որ Քրիստոսով եղած փրկութեան
 ճամբան գիտեն, և կամ Աստուծոյ խօսքը քո-
 վերնին ունին ու կրնան կարգալ, Մովսէսին
 Խորայէլացւոյ ըսածը՝ անոնց համար ալ է, թէ
 Կեանքն ու մահը, օրհնութիւնն ու անէծքը
 առջևնիդ է: Եւ անոնց ամենուն ալ Աստուած
 ինքը կու տայ աս յորդորանքը՝ ըսելով, Ուս-
 տի կեանքը ընտրեցէք, որ դուք և ձեր սե-
 րունդը ապրի: Ըստ օտար և զարմանալի բան է
 կեանք ընտրելու համար ստիպում ընելու հար-
 կաւորութիւն ըլլալը, բայց անանկ է: Մարդիկ
 մեզքը կը սիրեն և անոր ետեւն ախտի յերթան,
 թէ և գիտնան ալ թէ անիկայ յաւիտենական
 մահուան կը տանի: Ար լսեն կենաց սարսե-
 ներուն ու երջանկութեանը վրայօք, կը աւա-
 նեն թէ որչափ փափաքելի բան է Աստուծոյ
 հնազանդողներուն ընդունելու յաւիտենական
 վարձքը, և գիտեն ալ թէ ինչ սոսկալի դա-
 տապարտութիւն ախտի ընդունին թէ որ մե-
 ղաց մէջ մնան, և սակայն սրտերնին անանկ
 կապուած է մեղաց հեշտութիւններուն հետ,
 որ անոնցմէ մէկն ալ կենաց ճամբան ախտի
 չընտրէ՝ մինչև որ Աստուած իր հոգիովը սրբ-
 տերնին չփոխէ: Թէ որ կենաց ճամբան ընտ-
 րած ենք, միշտ փառք տանք Աստուծոյ, որով
 հետև ոչ թէ մեզմէ էր աս բանը, այլ իր ան-
 մեծ շնորհքովն էր որ սրտերնիս նորոգեց:

Եւ ահա՛ ճամբուն քովը երկու կոյր նրա-
տած էին . երբոր լսեցին թէ Յիսուս կ'անցնի ,
աղաղակեցին ու ըսին . Ողորմէ՛ մեզի Տէր՝ Որ-
դի Դաւթի : Մատթ . Ի . 30 :

ԱՍ մարդիկը Քրիստոսի կը հաւատային թէ
ինքն էր Մեսիան , և աղաղակեցին իրեն ըսե-
լով , Տէր Որդի Դաւթի : Կը հաւատային թէ
աչքերնին բանալու կարող է , և վստահ էին
թէ կը կամի բանալու : Չեկան ու աս բանը
իրմէն ջննդրեցին , հասաւ աղաչեցին որ ողորմի
իրենց : Չգացին թէ արժանաւորութիւն մը
չունէին ան բանը ընդունելու , բայց կրնային
աղաչել որ իր ողորմութեանը համար խնդիրք-
նին կատարէ : Նաև մեծ եռանդով ու ձանձ-
րացընելու ջափ աղաչեցին . թէպէտ շատերէն
չեի լսեցին , սակայն չգաղղրեցան աղաղակե-
լէն՝ ըսելով , Ողորմէ՛ մեզի Տէր՝ Որդի (Դաւթի :
Ինչպէս որ աս կոյրերը Յիսուսի դացին , անանկ
ալ բոլոր մեղաւորները իրեն երթալու են ի-
րենց հողևոր կարօտութիւնները խնդրելու : Ա-
նանկ հաւատքով՝ անանկ խոնարհութիւնով և
անանկ ձանձրացուցիչ թախանձանքով հողի-
ներնուն փրկութիւնը խնդրելու են : Մեղաց
թողութեան հետ բաղդատելով , որն որ ամէն
քըս ալ խնդրելու ենք Քրիստոսէն , շատ փոքր

բան մըն է մարմինին աչքերուն բացուիլը :
Ուրեմն անդադար աղաղակենք իրեն , Ողորմէ
մեզի Տէր՝ Որդի Դաւթի :

23

Եւ Յիսուս խղճալով՝ անոնց աչքերուն դը-
պաւ . և շուտ մը անոնց աչքերը բացուեցան ,
ու անոր ետեւէն գացին : Մատթ . Ի . 33 , 34 :

ՅԻՍՈՒՍ նեղեալներուն միշտ կարեկցութիւն
կը ցուցընէր , և իրեն եկող ողորմութիւն խընդ-
րողներուն մէկը սարսապ ետ չէր դառնար :
Հիմա ալ ան նոյն կարեկից Փրկիչն է . թէ որ
ան կոյրերուն սէս իրեն երթանք մեզի ալ կ'ու-
ղորմի : Մեղաւոր ըլլալովսիս՝ ան կոյրերէն շատ
աւելի նեղութեան մէջ ենք . անոնք միայն ի-
րենց մարմնաւոր աչքերը բանալու համար անոր
գացին . մենք մեր հոգևոր կուրութիւնը վրայ-
ներնէս վերցընելու համար անոր պիտի եր-
թանք , ու մտքերնիս լուսաւորելու համար՝
որ Աստուածային ճշմարտութիւնը հասկընանք
և հոգինիս փրկուի : Մենք յաւիտենական կե-
նաց սարգևը ընդունելու համար իրեն պիտի
երթանք , որ եթէ չսարգևէ մեզի յաւիտեան
պիտի կորսուինք : Ան մեզի մօտ է ինչպէս որ
կոյրերուն մօտ էր , և ինքը գիտէ բոլոր մեր

կարօտութիւնները . թէ որ հաւատքով և զըղ-
ջումով իրեն երթանք , մեզ պարտաւ կտ պիտի
չկարկէ : Անիկայ Ամենադուժ է . ան նոյն ո-
ղորմածութիւնը՝ որ զինքը աշխարհք բերաւ
մեռնելու , տակաւին իր վրան է : Օրհնեալ է
Աստուած որ խսանկ ողորմած Փրկիչ մը ու-
նինք : Բայց բնաւ պիտի չգլծայ անոնց , ո-
րոնք կ'ուզեն իր ողորմութիւնները ընդունիլ
իրև իրենց բարի գործոց հատուցումը ու չէ-
թէ անոր ձրի ողորմութեան պարգևը :

24

Ամէն ճիւղ որ խմ վրաս է՝ ու պտուղ չը-
բերեր , կը կորէ զանիկայ : Յօ՛ւ . ԺԵ . 2 :

ՅԻՍՈՒՍ Քրիստոս ինքզինքը որթի մը կը
նմանցընէ , և իրեն հեռեւորները անոր ճիւղե-
րուն : Բայց բազմաթիւ մարդիկ կան աշխար-
հիս մէջ որ Քրիստոսի աշակերտները ըլլալ կը
գաւանին , որոնք գործքով չեն ցուցըներ
թէ իրօք իրենն են : Վնասը որ ճիւղը որթին
նման է , անանկ ալ իր աշակերտները իրեն
նման պիտի ըլլան . իր հոգին ունենալու են և
իր սուած օրինակին հեռեւորու են : Անոնք ի-
րեն պէս Աստուծոյ սիրովը և իր փառքին նա-
խատիւքովը լեցուած ըլլալու են , խոնարհ և

Ինքզինքնին ուրացող, ձեռքերնէն եկածին չափ
 իրենց ընկերին թէ հողւոյն և թէ մարմնոյն օ-
 գուտ ընելու ժիր: Ասոնք են բոլոր իր աշա-
 կերաներէն ուղած պառւղները, և ամէն ճշշ-
 մարիտ ճիւղ որ որթին վրայ հաստատուած է,
 ասանկ պառւղներ կը բերէ: Ասոնք որ քը-
 ռիատոնեաց կ'անուանին, ու քրիստոնէի պառւղ
 չեն բերեր, անուննին իրենց օգուտ մը չընէր:
 Աստուած կը տեսնէ անոնք, և ինտոր որ այ-
 դեպանը անպառւղ ճիւղերը կը կտրէ, անանկ
 իր ճշմարիտ աշակերաներուն մէջէն անոնք պի-
 տի հանէ: Սրտերնիս ու վարքերնիս քննելու
 և նայելու ենք թէ արդեօք քրիստոնէի պառւղ
 կը բերենք, որ չըլլայ թէ անպառւղ ճիւղերու
 պէս կտրուինք:

25

Եւ ամէնը որ պառւղ կը բերէ, կը մաքրէ
 զանիկայ, որ ալ աւելի պառւղ բերէ: Յով .
 ԺԵ . 2:

ՀՄՈՒՏ այդեպանը ստէպ ստէպ իր այգին
 կը մաքրէ, կտրելով բոլոր աւելի անպիտան
 ճիւղերը, որ շատ պառւղ ըլլայ: Ասանկ ալ
 Աստուած իր հողերը այգին կը մաքրէ. կ'ու-
 ղէ որ շատ պառւղ բերեն իր փառքին համար:

ուստի բոլոր ան բաներն՝ որ աս նախասակիս
կատարուելուն չեն օգներ ու արգելք կ'ըլլան ,
կը կտրէ : Աստուած շատ ճամբաներով կը
մաքրէ իր որդւոցը սիրտը • աս բանը ընելու
համար շատ անգամ նեղութիւն կը գործածէ :
Ար տեսնէ որ սէրերնուն մեծ մասը աշխար-
հային վայելչութիւններու կամ երկրաւոր բա-
րեկամներու տուած են , և աս Աստուած ու-
նեցած հաւատքներնին ու սէրերնին չաճիր •
անոր համար կը նեղէ անոնք իրենց շատ սի-
րած բաներնին ձեռքերնէն առնելով , և այս-
պէս կը յորդորուին կրկին իրեն մօտենալու ,
առաւել ևս իր փառքին համար ապրելու : Աս
ճամբան միշտ կը գործածէ • հաւատարմութեամբ
կը նեղէ անոնք իրենց օգտին համար •
չթողուր որ մեղաց մէջ մնան , հասցա իրենց
բոլոր կուռքերէն իրենք պիտի սրբէ որ Աս-
տուած փառաւորեն : Երանի թէ իրեն մաք-
րած ճիւղերէն ըլլայինք , որ շատ պտուղ բե-
րէինք , ու չէ թէ կտրածներէն :

26

Միայն թէ Աստուծոյ շնորհօքն եմ՝ ինչ որ
եմ • և անոր շնորհքը որ իմ վրաս է , պարտաւ
բան մը չեղաւ , հասցա ես անոնց ամենէն աւե-
ջի աշխատեցայ • և չէ թէ ես , հասցա Աստու-
ծոյ շնորհքը՝ որ իմ հետս էր : Ա Կորնթի • ԺԵ • 10 :

ՊՕՂՈՍ Յիսուս Քրիստոսի մէկ հաւատա-
 շիւմ և յաջողակ ծառան էր : Շատ կ'աշխա-
 տէր և Աստուած իր աշխատանքները յաջողու-
 թիւնով պատկեց . իր ձեռքովը շատ հողիներ
 դարձի եկան , ու եկեղեցիներ հաստատուեցան :
 Բայց ասով միթէ կը պարծենար , և կամ կը
 խորհէր թէ ասանկով արժանաւորութիւն մը
 ունեցաւ երկինք մտնելու . քաւ լիցի : Չմոռցաւ
 իր ինտոր մեղաւոր ըլլալը , և ինտոր ամբար-
 տաւանութեամբ Քրիստոսի գէմ պատերազ-
 միլը : Չմոռցաւ Փրկչին ինտոր ողորմութիւնով
 իր գէմը ելլելը , երբոր կատաղած անոր ժողո-
 վուրդին վրայ կ'երթար , և սիրով իր չար սիր-
 արը յաղթելը : Չէ՛ . կը շունչնար թէ Աստու-
 ծոյ շնորհօքն էր՝ ինչ որ էր : Աննց ամենէն
 աւելի աշխատիլը Աստուծոյ իրեն պարգեւած շը-
 նորհքովն էր . միւսներէն բարի ըլլալուն հա-
 մար չէր , և աս կողմանէ ամենևին արժանա-
 ւորութիւն մը չունենալը գիտէր : Ինք չէր՝
 հասկա իր վրան եղած Աստուծոյ շնորհքն էր .
 և հիմա անասարակոյս երկինքին մէջն ալ փա-
 ռաբանութիւն կը կարդայ Աստուծոյ շնորհա-
 ցը , որն որ աշխարհիս մէջ եղած ասուեր ի-
 րեն մեծ ուրախութիւն էր անխկայ փառաւո-
 ընը : Ամէն քրիստոնէոյ Պողոսին հետ ըսե-
 լու է , Ինչ որ եմ՝ Աստուծոյ շնորհօքն եմ :
 Թէ որ հիմա ան առջի մեղաւորը չենք , Աս-
 տուծոյ իր անհուն շնորհքով սրտերնիս փոխե-

լին եղաւ : Աս բանիս համար անդադար փառք
տալու ենք իրեն մեր անարժանութիւնը զգա-
լով մինչև գետինը իր առջին խոնարհելով :

27

Ան որ կ'ըսէ՝ թէ Ես անիկայ ճանչցայ , ու
անոր պատուիրանքները չպահէր , ստախոս է ,
և անոր մէջը ճշմարտութիւն չկայ : Ա. Յօ՛ւ .
Բ . 4 :

ԶԱՍՏՈՒԱԾ և իր Որդին Յիսուս Քրիս-
տոսը ճանչնալը յաւիտենական կեանք է : Աս
ճանաչումը ուրիշ մէկը չկրնար ունենալ , հա-
պա միայն անոնք՝ որ ճշմարտապէս հաւատա-
ցած են , և որոնց միտքը Աստուծոյ Հոգիովը
լուսաւորուած է : Աս կերպով զինքը ճանչցող-
ները կը սիրեն զինքը և իր պատուիրանքները
կը պահեն : Գիտեն թէ ինքը որչափ սուրբ է ,
որչափ բարի է , և որչափ արժանի է սիրուե-
լու , և անոր համար զինքը կը սիրեն : Ար
տեանեն թէ ասանկ Աստուծոյ մը գէ՛մ մեղան-
չելը շատ վատ և ատելի բան է , և անկէց կը
զգուշանան : Ար տեանեն որ իր պատուիրանք-
ները սուրբ՝ արդար և բարի են , և ուրախու-
թիւնով իր կամքը կը կատարեն : Ան որ կ'ը-
սէ թէ Ես անիկայ կը ճանչնամ , ու անոր

պատուիրանքները չպահէր, անոր մէջը ճշմարտութիւն չկայ: Աստուծոյ պատուիրանքները շատ յայտնի գրուած են իր սուրբ խօսքին մէջ. մեզմէ ինչ որ կը պահանջէ ամէնքն ալ մեզի ցուցուց: Թէ որ ուզէնք գիանալ թէ Աստուծոյ վրայօք փրկող տեղեկութիւն մը արդեօք ունինք, սրտերնիս ու վարքերնիս աս Սուրբ Գրքին պահանջմունքներուն հետ բաղդատելու ենք: Եւ ուրիշներուն ալ վարքը քննելով կրնանք տեսնել թէ ան որ Աստուծոյ պատուիրանքները չպահէր իղինքը՝ չճանչնար:

28

Երբոր հողիս իմ վրաս մարեցաւ, Տէրը յիշեցի. ու իմ աղօթքս քեզի՝ սուրբ տաճարդ հասաւ: Յով. Բ. 7:

ՅՈՎԱՆԱՆ ուզեց Տէրօջը երեսէն փախչիլ, և պարսապ տեղը խորհեցաւ թէ եթէ Իսրայէլացւոյ երկրէն ելլայ հեռու տեղ մը (երթայ ամենատես Աստուծոյ) երեսէն կրնայ փախչիլ: Բայց տեսաւ որ գաղտնի տեղ մը չկայ ուր անօրէնութիւն գործողները կարենան ինքզինքնին պահել: Երբոր կը փախչէր, Աստուած ծովին վրայ գէմը ելաւ, և ալէկոծութիւն ընելով զինքը սարսափեցուց: Երբոր կէտը Յով.

նանը կրլէց , ան ատենը իր մեծ նեղութեանը
 մէջ Տէրը յիշէց : Ան ատենը ասիկայ իրեն
 մխիթարանք եղաւ թէ չկար անանկ խաւար
 կամ ծածուկ տեղ մը որ Տէրը անիկայ չտես-
 նար , և կամ անկէջ ձայն չլսէր : Իր հանգրս-
 տութեան օրերը Տէրոջմէն փախաւ , բայց աս
 խորունկ արամութեանը մէջ Տէրոջը աղաղա-
 կելը իրեն ուրախութիւն էր . և Աստուած իր
 ձայնին լսէց : Ա՛հ , ինտո՞ր ողորմած և երկայ-
 նամիտ է մեր Աստուածը . իր արարածները
 թէպէտև հանգստութեան ժամանակ զինքը կը
 մոռնան , և մինչև անգամ կ'ուզեն իր երեսէն
 փախչիլ , սակայն երբոր նեղութեան մէջ իյնան
 և իրեն աղաղակէն մտիկ ջրնելիք ջրներ : Ա-
 նոնց վրայ նեղութիւն կը խրկէ՝ որ իրեն դառ-
 նան , և միշտ պատրաստ է մտիկ ընելու ապաշ-
 խարող մեղաւորին աղաղակը : Աւրեմն զգոյշ
 ըլլանք որ աս գթած Աստուծոյն դէմ մեղան-
 չելով զինքը չնեղացրնենք :

Եւ մարդիկները ու անասունները քուրճ
 հազնին , ու բոլոր ուժով Աստուծոյ աղաղա-
 կէն . և ամէն մարդ իր չար ճամբայէն , ու իր
 ձեռքերուն մէջ եղած անիրաւութենէն դառ-
 նայ : Յովն . Գ . 8 =

ԵՐԲՈՐ Նինուէի Թագաւորը Աստուծոյ ան-
 քաղաքին դէմ ըրած սպաննալիքը լսեց, ան-
 միջապէս հրաման հանեց որ բոլոր Ժողովուրդը
 ապաշխարէ : Գիտէր թէ անոնք շատ մեղաւոր
 էին, և թէ իրենց մեղքերուն համար եղած
 պիտի ըլլայ՝ որ Աստուած անոնց բարկացաւ
 ու աս սպաննալիքը ըրաւ : Գիտէր ալ թէ
 Աստուած դրսուանց արամելով չխաբուիր, և
 թէ քուրձ հազնելը և արամութեան ձայնով
 Աստուծոյ աղաղակելը բաւական չէր : Հապա
 իրենց չար ճամբաներէն դառնալու էին . ա-
 տելու էին իրենց մեղքերը, որով Աստուծոյ
 բարկութիւնը վրանին բերին : Ծշմարիտ ապաշ-
 խարութիւնը աս է . սյսինքն անցած մեղաց
 վրայ ողբալ և անոնցմէ հեռանալ : Թէ որ Աս-
 տուծոյ ամէն մեղքերու դէմ ըրած արդար
 դատաստանէն վրասչիլ կ'ուզենք, սրտի մտօք
 իրեն աղաղակելու ենք, ու բոլոր չար ճամբա-
 ներնուս դառնալու ենք, և միայն Աստուծոյ
 հաճոյ եղած բաները ընելը նայելու ենք :

30

Ա՛լ գիտէ . դուցէ Աստուած դառնայ, ու
 զղջայ, և իր սաստիկ բարկութենէն դառնայ,
 ու չկորսուինք : Յո՛ւն . Գ . 9 :

ՆՒՆՈՒԷԱՅԻՆԵՐԸ, Ծշմարիտ Աստուծոյ բը-

նութեանը վրայօք շատ քիչ տեղեկութիւն ու-
 նէին . չէին գիտեր իր ողորմութեան մեծու-
 թիւնը : Իր վրայօք դիտցածնին միայն բնու-
 թեան սղօտ լուսովը սորվածնին էր . չէին գի-
 տեր թէ արդեօք պիտի մտիկ ընէ՞ իրենց աղա-
 ղակներուն , և ըրած ասպաշխարութիւնովնին պի-
 տի շարժի : Բայց գիտէին թէ պարտաւոր էին
 իրենց ջարութիւններուն համար ասպաշխարու-
 թիւն ընել , և թէ եթէ չասպաշխարէին լան-
 շուշտ պիտի կորսուէին : Եւ ուրիշ բան չէին
 գիտեր , հասրա միայն ասիկայ թէ գուցէ կը
 համոզուի իր սրտմտութեան սաստիկ բարկու-
 թենէն դառնալու , և կ'ազատին : Մի միայն
 աս հաւանականութիւնը կար իրենց մեղքերուն
 համար տրտմած ժամանակնին իրենց քաջալե-
 րութիւն ու յոյս տուող : Ճշմարիտ Աստու-
 ծոյ վրայով մենք ասանկ տգէտ չենք . իր վը-
 րայովը ըրած յայտնութիւնը ունինք , և գի-
 տենք թէ իր ողորմութիւնը անհուն է , և անօ-
 րէնութիւններու՝ յանցանքի ու մեղաց ներող
 Աստուած է : Ինք խոստացած է ճշմարիտ խղի-
 ջի եկողին թողութիւն տալ , թէ որ Քրիս-
 տոսի անունովը իրեն երթան : Ուստի մեղքեր-
 նիս որչափ որ շատ ըլլայ , կրնանք ողորմու-
 թիւն յուսալ , թէ որ ճշմարիտ ասպաշխարու-
 թիւնով իրեն երթանք :

Դ Ե Կ Տ Ե Մ Բ Ե Բ

1

Ո՛վ դուք՝ արդարութեան հետևողներ, ու
Տէրը փնտրողներ՝ խնձի մտիկ ըրէք : Եսայ .
ԾԱ . 1 :

ԱՍՈՆՔ Աստուծոյ ճշմարիտ Ժողովուրդին
հանդամանքներուն մէկ երկու հասն են . ա-
նոնք արդարութեան հետևողներ և Տէրը փնտ-
րողներ են : Ինքզինքնին կատարեալ սրբու-
թեան հասած չեն սեպեր . անոնք հին Փարի-
սեցիներուն պէս գոհութիւն չեն տար Աստու-
ծոյ թէ ուրիշ մարդիկներուն պէս մեղաւոր
չեն . և կամ իրենց ընկերին չեն ըսեր, Մէկ
դի կեցիր, վասն զի ես քեզմէ սուրբ եմ :
Ինքզինքնին մեղաւոր կը ճանչնան, և ասիկայ
իրենց նեղութիւնն ու ամսթն է : Բայց թէ-
պէտև մեղաւոր են, չեն ուզեր մեղք գործել .
անսիկայ չեն սիրեր, սրբութիւն կը փնտրուեն :
Իրենց ջանքը արդարութեան հասնիլ է . կ'ուզեն
Աստուծոյ և Յիսուս Քրիստոսի նման ըլլալ :
Թէպէտև ասիպուած են իրենց սրտին տկարու-

Թիւնը և մեղանչականութիւնը զգալու, որոնք միշտ կը թողուն իրենք մեղաց մէջ իյնալու, սակայն Տէրը կը փնտրուն: Եւ աս բանը տկար փափաքով մը չեն ըներ, հասցա եռանդով կ'աշխատին մեղքը յաղթելու և սրտերնուն մէջը ամէն սուրբ զգացում սնուցանելու, շարունակ և ջերմեռանդութեամբ Աստուծոյ աղաչելով: Թո՛ղ բոլոր ասանկները Տէրոջը մտիկ ընեն. իր սուրբ խօսքովը անոնց կը խօսի. հոն կը զուցէ թէ ինչ բան պարտաւոր են ընելու: Թո՛ղ զգուշութեամբ իրեն մտիկ ընեն, և իրենց ցուցուցած ճամբան երթան. ու իրենց արդարութեան անօթութիւննին ու ծարւութիւննին պիտի անցնի:

2

Դուք ան վէժին նայեցէ՛ք, ուսկէց որ կըտրուեցաք, և ան գուբին փոսին, ուսկէց որ փոքրուեցաք: Եսայ • ԾԼԼ • 1:

Թէ որ ճշմարտապէս Բրիտոսի կը հաւատանք, մեծ պատուոյ հասած ենք, ամենակարող Տէր Աստուծոյ զաւկրներն ենք, յաւիտենական թաղաւորութեան մը ժառանգներ ենք, և շուտով հրեշտակաց հաւասար պիտի ըլլանք: Արդ՝ կարելի է թէ տկար և մեղանչական սրբ-

տերնիս ատեն ատեն հպարտանայ աս բարձր պատիւները միտք բերելով . և սատանան փորձէ մեզ խորհելու թէ մեր վրայ մէկ բարի բան մը ըլլալուն համար է որ Աստուած մեզ ընտրեց . ու իր զաւկրները ըլլալու կանչեց : Արբոր ասանկ փորձուինք հպարտութեան ըզդացումներ ունենալու , ան վէժին նայելու ենք ուսկէց որ կարուեցանք , և ան գուբին փոսին ուսկէց որ փորուեցանք : Ի՞նչ էինք մենք Աստուծոյ մեզ իր թագաւորութեանը կանչած ժամանակը , խեղճ թշուառ մեղաւորներ : Սըրտերնուս ո՛չ մէկ խորհուրդը և ո՛չ մէկ դիտաւորութիւնը բարի էր իր աւջին . մահուան ճամբան ընտրեր էինք , և կուրութեամբ անիկայ բռններ կ'երթայինք : Մնանկ մեծ 'մեղաւորներ էինք' որ իր յաւիտենական բարկութեանը արժանի էինք , և թէ որ մեզ յաւիտենական կորուստի տար , մեզի պէս չարերուն արժան եղածը ընդունած կ'ըլլայինք : Եւ մինչև անգամ իր խօսքովը ու իր նախախնամութիւնովը և իր հոգիովը մեզ իրեն դառնալու կանչելէն ետե , ո՞րչափ ժամանակ դէմ կեցանք իր Հոգւոյն և անկէց երես դարձուցինք : Արդարեւ չէ թէ մեր գործած մէկ արդարութեան գործերնուս համար էր , հասցա իր ողորմութիւնովն էր որ մեզ իր թագաւորութեանը բերաւ : Մեր փրկուութեան փառքը միայն իրեն ըլլայ յաւիտեանս :

Ես եմ, ես եմ որ ձեզ կը մխիթարեմ .
 դուն ո՛վ ես՝ որ մահկանացու մարդէն, ու
 խոտի նմանեղու մարդու զաւակէն կը վախնաս .
 Եսայ . ԾԱ . 12 :

Թէ որ տղայ մը բարերար և զօրաւոր հօր
 մը քովը և անոր պաշտպանութեանը տակն ըլ-
 լայ, իրեն պէս ուրիշ տղէ մը չվախնար :
 Բայց մեր Երկնաւոր Հայրը մեզի ասկէց շատ
 աւելի զօրաւոր պաշտպան մըն է : Անիկայ Ա
 մենակարող է, կարող չէ մէկը իրեն դէմ կե-
 նալ և յաջողիլ . մէկ խօսքով կրնայ բոլոր իր
 թշնամիները յաւիտենական հարուածքով զար-
 նել : Ասանկ մէկ բարեկամ մը ունինք, ՅԼԱ-
 տի ալ ինչու վախնանք մարդոց մեզի ըրածնե-
 րէն : Երբեմն աշխարհիս մեծերը և զօրաւոր-
 ները անանկ բարկութիւնով Աստուծոյ ժողո-
 վուրդին վրան կը յարձակին, որ իբր թէ ա-
 նոնք պիտի ոչնչացնեն . ու հաւատքով տկար
 եղողները ահով ու դողով կը լեցուին : Բայց
 աս վախնալովնին Աստուած անպատիւ կ'ընեն .
 անտարակոյս երկնից զօրքերուն մեծ զարմանք
 եղած պիտի ըլլայ՝ թէ յաւիտենական Աստուածը
 իրենց ասպատանարան ունեցողները մահկանա-
 ցու մարդէն և խոտի նմանեղու մարդու զա-
 ւակէն վախնան : Երանի թէ երբէք Աստուած

ասանկ անպատիւ ջրնէինք • մարդիկ և սատա-
նաները մեզի ինչ որ ընեն՝ մենք իրմով ան-
վախ ըլլանք : Այսպէս ընելով պիտի տեսնենք
որ չէ թէ միայն մեզ պիտի պաշտպանէ , հա-
պա պիտի մխիթարէ ալ : Իր սիրտը գթու-
թիւնով լեցուած է մեր վրայ , և իրեն սապա-
ւինողները մխիթարելու ճամբան աղէկ գիտէ :

 4

Եւ հիմա ո՛վ Տէր՝ նայէ՛ անոնց սաբանալիք-
ներուն , ու շնորհէ՛ քու ծառաներուդ որ բռ-
լոր համարձակութիւնով քու խօսքդ խօսինք :
Գործ • Դ • 29 :

Այ աղօթքը ըրին առաքեալները ատեանէն
արձակուելէն ետքը , ուր որ կանչեցին իրենք
Հրէից իշխանները և վախ ծուին որ Յիսուսի
անունը չսորվեցրնեն ու չքարոզեն : Անոնք թըշ-
նամիներնուն կործանում ջննդրեցին , չաղաչե-
ցին որ անոնց ձեռքէն ազատին , ջննդրեցին որ
հալածու՞մէ՛ բանտէ ու մահուանէ ազատ մը-
նան , հապա իննդրեցին որ կարող ըլլան հա-
լածման մէջ տեղը հաւատարիմ ըլլալ իրենց
Տէրոջը և Արդապետին , և իրենց յանձնուած
պարտաւորութիւնները կատարել : Գիտէին մարդ-
կային բնութեան տկարութիւնը , կը ճանչնային

բուն իրենց սրտին խաբէբայութիւնը, վասն որոյ յոյսերնին անոնց վրայ չգրին, հասլա գալին Տէրոջմէն օգնութիւն և զօրութիւն խընդրեցին : Եւ իրենց աղօթքներնին լսուեցաւ, ու հաւատարիմ մնացին մինչև 'ի մահ : Ամէն փորձութեան ատեն մեր ալ գլխաւոր փափաքը սաղլալու է : Ամէն շարիքներէն աւելի՝ վախնանք մեր օրհնեալ Փրկչին անհաւատարմութիւն ընելէն, և ամէն փորձութեան ժամանակ Աստուծոյ երթանք և աղաչենք իրեն որ մեզ իր շնորհօքը պահէ :

 5

Արթուն կեցէք, հսկեցէք, ինչու որ ձեր հակառակորդը սատանան մանչող առիւծի պէս կը պարտի, ու կը փնտրուէ թէ ո՞վ կըլլէ : ԱՊԵՊ • Ե • 8 :

ՇԱՏ անգամ քրիստոնէին կեանքը՝ սրտերազմի կեանք կոչուած է Աստուծոյ խօսքին մէջ • շարունակ սրտերազմ մը ունինք ընելու սրտերնուս մէջ, բոլորովին յաղթելու աշխատելով հոն եղած մեղքը, որ այնչափ երկայն ժամանակ մեր վրայ տիրեց : Բայց մեր թշնամին միայն սրտերնիս չէ, Աստուած (մեզի յայտնեց թէ սատանան մեզի զօրաւոր և արթուն

Թշնամի մըն է : Աս ինկած հողիին վրայ քիչ
տեղեկութիւն ունինք , բայց ինքզինքնիս ան-
կէց զգուշանալու և պաշտպանելու շափ բան գի-
տենք : Իր խորամանկ հնարքներովը մեր նախա-
հայրը և նախամայրը մեզաց մէջ ձգեց , և անկէց
ի վեր իր բանը գործը մարդիկ փորձելն է , և
կ'աշխատի անոնք յաւիտենական մահուան դր-
դելու : Մասնաւորապէս Ատուծոյ որդւոցը շատ
Թշնամի է . երբոր կը տեսնէ թէ իր Թագաւո-
րութենէն բոլորովին պիտի փախչին , վրանին
շատ կը կատակ . մանչող առիւծի մը պէս մէ-
ջերնին կը ստըտի , և կը փնտրուէ թէ ո՞վ
կըլլէ : Ուստի ասանկ մէկ Թշնամի մը ունենալ-
նիս տեսնելով առաքեալին խրատը բռնենք 'ու
արթուն կենանք և հսկենք . միշտ ինքզինքնիս
պաշտպանենք որ չըլլայ թէ իր խորամանկու-
թիւններովը մոլորինք : Եւ աղօթքով հսկենք .
անիկայ մեզմէ զօրաւոր է , և թէ որ միայն մեր
կարողութեանը ասրաւնեւու ըլլայինք , յուսա-
հատութեան մէջ պիտի խնայինք թէ պիտի չը-
կրնանք ձեռքէն ազատիլ : Բայց Յիսուս՝ որ
մեր զօրութիւնն է , անկէց շատ զօրաւոր է :

6

Ուստի ձեր տեղը կայնեցէ՛ք , մէջքերնիդ
ճշմարտութեամբ ամուրցընեւով , ու արդարու-
թեան զրահը հաղնեւով : Եփե՞ . 2 . 14 :

ՄԵՐ հոգևոր պատերազմին մէջ առանց զէն-
քի չենք • աս զէնքերը մարմնաւոր չեն հասկա
հոգևոր, և Աստուծով զորաւոր բերդերը քա-
կելու զօրութիւն ունին : Մէջքերնիս ճշմար-
տութիւնով ամուրցուծելու ենք • մեր յոյսը և
զօրութիւնը յաւիտենական ճշմարտութիւնն է :
Աս աշխարհիս մարդիկը խաբերաց ունայնու-
թիւններու կը հեռակին, բայց մենք հաստատ
գիտենք թէ մեր հաւատք ընծայած և յոյսեր-
նիս դրած բանը Աստուծոյ ճշմարտութիւնն է :
Եւ նայելու ենք որ բնաւ մէկ բանով մը մո-
լորութեան կամ ստութեան մէջ ինկած չըլլանք,
հասկա Աստուծոյ բալոր ճշմարտութիւնը իր
խօսքովը յայանուածին սկս բռնած ըլլանք :
Եւ աս ալ նայելու ենք որ մեր խօսքերը ու
գործքերը ճշմարտութեան համաձայն ըլլան :
Որովհետեւ Տէր Յիսուս Քրիստոսի ծառայել կը
դաւանինք, գործքերնիս մեր դաւանութեան
դէմ չըլլան • ինչպէս որ հաւատացինք անանկ
բռնենք ճշմարտութիւնը : Ու սրկունքներնուս
ալ զգուշանալու ենք որ ճշմարտութենէն զատ
ուրիշ բան չհանենք բերաններնէս : Այսպէս
յարմարութիւն կ'ունենանք մեր հոգևոր թըշ-
նամիներուն հետ պատերազմելու : Նաև արդա-
րութեան զրահը հագնելու ենք • ամիսոս որ
մենք մեզմէ արդարութիւն մը չունինք, բայց
կրնանք Փրկչին արդարութիւնովը հագուել • և
միայն անոր ասպաւինիլ Աստուծոյ առջևը ելած

ժամանակնիս : Բայց աս ալ նայելու էնք որ
մեր ընկերները վարքերնուս մէջ գէշ բան մը
չտեսնեն : Չարին երևոյթէն անգամ փախչե-
լու էնք . երբոր մեզայ մէջ իյնանք մեր թըշ-
նամիները վրանիս յաղթութիւն կը ստանան :

7

Եւ ամէն բանին վրայ հաւատքին վահանը
առէ՛ք, որով կարող պիտի ըլլաք չարին ամէն
կրակոտ նետերը մարելու : Եփե՞ . 2 . 16 :

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ սրտերազմին մէջ հաւատա-
քը զարմանալի զօրութիւն ունեցող զէնք մըն
է : Մարդիկ և սատանաները ինչ կարողու-
թիւն ունին հաւատքով զօրացած և սրտապա-
րուած մէկը յաղթելու : Անիկայ երբոր մեզք
գործելու փորձուի, հաւատքով Աստուած ներ-
կայ կը տեսնէ և անոր առջև մեզք չկրնար
գործել : Թէ որ իր մեղքերուն շատութեանը
վրայ խորհած ժամանակը յոստահատութեան
մէջ իյնալու փորձուի, հաւատքով իրեն համար
խաչուած Փրկիչը կը տեսնէ՝ որ սրտաբաւ է
մեղաւորներուն ամենէն գլխաւորը անգամ ըն-
դունելու : Երբոր սատանան վրան յարձակի,
հաւատքով Քրիստոսի շնորհքին առատութիւ-
նովը անոր գէմ կը գնէ : Հաւատքը երկնից

ցնծութիւնները և փառքերը իրեն յայտնի կը
ցուցնէ, և այսպէս կարող կ'ըլլայ աշխարհիս
գրողներուն դէմ դնելու: Թէ որ միայն հա-
ւատքով տկար ըլլանք թշնամիներնիս կրնան մեզ
յաղթել, ինչու որ հաւատքով կրնանք սէտք
եղած զօրութիւնն ու շնորհքը Քրիստոսէն առ-
նել և անյաղթելի ըլլալ: Աւրեմն ամէն որ ա-
ղաչէք Տէրոջը որ մեր հաւատքը աւելցնէ:

8

Եւ փրկութեան սաղաւարտը առէք, ու Հո-
գիին սուրը՝ որ Աստուծոյ խօսքն է: Եփես.
2. 17:

ՄԵՐ սրտերազմին մէջ չէ թէ միայն ինք-
զինքնիս սաշտարանելու ենք, հասցա մեր թըշ-
նամիներուն վրայ յարձակելու ենք: Սատա-
նան թաղաւորութիւն մը հաստատեց առ աշ-
խարհքիս մէջ, որն որ երկան ատեն է որ ձեռ-
քն է: Բայց մենք քրիստոնեաներս աշխատե-
լու ենք ան թաղաւորութեան հարստակները
Քրիստոսի թաղաւորութեանը մէջ մտցնելու:
Աս յարձակմանը մէջ գործածելու ղէնքերնիս
Հոգիին սուրն է, որ է Աստուծոյ խօսքը: Սա-
տանային թաղաւորութիւնը խաւարի թաղա-
ւորութիւն է, և անոր հարստակները խաւարի

մէջ են : Բայց Աստուծոյ խօսքը ճշմարտութեան լոյսը ունի վրան • աշխատելու ենք որ մարդիկ աս լոյսը տեսնեն : Աս ճշմարտութիւնը աչքերնուն առջին բանալու ենք , և աշխատելու ենք որ անով խիղճերնին արթննայ : Աստուծոյ խօսքը միայն կրնայ անոնց իրենց վիճակին թշուառութիւնը զգացընել թէ Սատանային թագաւորութեանը հպատակներ են , և համոզել անոնք որ Քրիստոսի թագաւորութեանը հպատակ ըլլան : Ան միայն կրնայ ցուցընել անոնց թէ ինչ ապաստանարաններու վերայ յոյսերնին դրած են , և այսպէս անոնք սատանային իշխանութենէն ազատել : Երանի թէ յոյսերնիս Աստուծոյ խօսքէն զատ ուրիշ բանի մը վրայ չգնէինք թէ՛ մեր ապահովութեանը՝ և թէ՛ մեր ընկերին փրկութեանը համար :

9

Ի՞նչ հատուցանեմ Տէրոջը , անոր բոլոր ինծի ըրած բարութեանը փոխարէն : Սաղմ . ԸԺԶ . 12 :

ԵՐԲՈՐ մէկէն բարութիւն մը ընդունինք , բնականապէս կ'ուզենք անոր փոխարէն մը ընել , այսինքն ընդունած բարերարութիւններ .

նուս փոխարէն բարերարութիւն մը ընել :
 Բայց երբոր Աստուծոյ բոլոր մեղի ըրածնե-
 րուն վրայ խորհինք , դէպի իրեն ունեցած պար-
 տաւորութիւններնուս մեծութիւնը տեսնելով
 կը սախալուինք աղաղակելու , “ Ի՞նչ հասուցա-
 նեմ Տէրաջը , անոր բոլոր ինծի ըրած բարու-
 թեանը փոխարէն ” : Մեղի ցուցուցած ողոր-
 մութիւնները անթիւ են . ծնած օրերնէս ՚ի
 վեր մեզ իր բարութիւնովք լեցուց : Բայց քը-
 ռիատոնեաները՝ իր շնորհքովք նորոգուելնուն հա-
 մար , շատ մեծ պարտաւորութեան տակ են
 Աստուծոյ դէմ : Մարդկային լեզուով կարող
 չենք ստորագրել Յիսուս Քրիստոսի ձեռքովք
 ընդունած օրհնութիւններնուս երկայնութիւննե-
 ու լայնութիւնը բարձրութիւնն ու խորունկու-
 թիւնը : Երբով ամէն բանի ժառանգ եղանք ,
 և տիեզերքին մէջ մեղի պէտք եղած ամէն բա-
 րութիւն մեր ժառանգութիւնն է : Եւ արդ՝ ի՞նչ
 պիտի հասուցանենք մեր Աստուծոյն և Փրկչին .
 ամիսոս որ իրեն ըրած փոխարինութիւննիս մի-
 այն ապերախտութիւն և յանցանք է : Մեր ը-
 րած ամենալաւ ծառայութեանը համար իրմէն
 թողութեան կը կարօտինք , և մեր ամենամեծ
 սէրը՝ իրեն հասուցանել արժան եղած սիրոյն
 հետ բաղդատելով ոչինչ է : Բայց կոտորած և
 ապաշխարող սիրտ մը կրնանք իրեն մատուցա-
 նել , և սա պատարագը չմերժեր :

10

Արդ՝ միտք բերէք անիկայ, որ ասանկ համբերեց մեղաւորներուն իրեն դէմ հակառակ խօսելուն, որ չլլայ թէ ձեր անձովը յոգնիք ու թուլնաք : Ե՛բ . ժԲ . 3 :

ՅԻՍՈՒՍ Քրիստոս երբոր իր աշխարհիս մէջ ունեցած գործը կը գործէր, մեղաւորներին շարունակ ատելութիւն ու հակառակութիւն կը քաշէր : Իր սիրտը անոնց վրայ սիրով լեցուն էր, բայց անոնցը իրեն դէմ թշնամութիւնով . անիկայ անոնք օրհնելու կ'աշխատէր ի անոնք զինքը կործանելու : Երբոր հիւանդները կը բժշկէր և մեռելները կը յարուցանէր, անոնք զինքը մեռցընել կը նայէին : Երբոր իր ողորմութիւնովը խեղճերուն ու մեղաւորներուն բարերարութիւն կ'ընէր, կը նախատէին զինքը թէ մեղաւորներուն բարեկամն է : Երբոր դէեր կը հանէր, Բեհեղզեբուզին՝ դէերուն իշխանին ձեռքովն է կ'ըսէին : Բայց Յիսուս մեղաւորներուն իրեն դէմ ըրած աս հակառակութիւններուն համար արդեօք թուլցա՞ւ . չէ, շարունակեց իր սիրոյ աշխատութիւնները առանց դադրելու մինչև որ իր գործը լմընցուց : Մինչև անգամ խաչին վրայ ցուցուց թէ իր ձեռք զարկած ան մեծ գործին մէջ տակաւին թուլցած չէր, վասն զի իր դահիճներուն փրկու-

Թեանը համար աղօթք ըրաւ, և իր շնորհքը
 աւազակին սիրաւը նորոգեց: Բարի մարդիկ ինք-
 ղինքնին Աստուծոյ կամքին կերպարանակից ը-
 նելու, և կամ իրենց ընկերին բարութիւն ը-
 նելու աշխատած ժամանակնին, շատ անգամ
 չարերուն ձեռքէն հակառակութիւն կը քաշեն,
 և սա սխառաւար կրքեմն թուլնալիք կ'ընեն:
 Բայց թող բոլոր անոնք Քրիստոսը յիշեն, որ
 մեղաւորներէն անանկ հակառակութիւններ քա-
 շեց: Եւ ամէնքնիս ալ յիշեմք մեզի ցուցու-
 ցած երկայնատութիւնը, որ մեղաւոր ընկեր-
 ներնուս ըրածովը համբերութիւննիս չհասնի:

 11

Եւ ձեզի նեղութիւն քաշողներուդ՝ մեզի հետ
 հանգիստ, Տէր Յիսուսին երկինքէն յայտնուե-
 լու ատենը իր զօրաւոր հրեշտակներովը: Բ
 ԹԷ՝ • Ա • 7 :

ԺԱՄԱՆԱԿ պիտի ըլլայ որ աշխարհիս բո-
 լոր անկարգութիւնները պիտի վերնան: Հոս
 Աստուծոյ ժողովուրդը հանգստութիւն չունի,
 շատ անգամ նեղութիւն կը քաշեն • չարերը
 կը յաջողին, անոնք կ'անարգուին ու երեսե-
 կը ձգուին: Մարդոց տուած հարստահարու-
 թիւններէն և աչքերնուն առջին եղած մեղքե-

բէն կը նեղուին : Ար վշտանան իրենց տեսած
 և լսած չարութիւններէն , և Սաղմոսերգութիւն
 պէս կը ցանկանն որ աղաւնիի թեր ունենա-
 յին և փախչէին ու հանգիստ ըլլային : Եւ վեր-
 ջապէս պիտի հանգստանան . երբոր Տէր Յի-
 սուս յայտնուի երկինքէն աշխարհս դատելու ,
 ան ատենը հանգստութիւն պիտի տայ իրեն
 համար նեղութիւն քաշողներուն : Եւ ո՛րչափ
 փառաւոր պիտի ըլլայ ան հանգիստը . հոն ալ
 իրենք նեղող պիտի չըլլայ , չար մէկը պիտի
 չկրնայ իրենց երանաւէս բնակարանը մտնել ի-
 րենք տառապեցընելու : Իրենց հանգիստը յա-
 շտենական պիտի ըլլայ , իրենց Աստուծոյն
 և Ֆրիչին քով յաշտեանս պիտի հանգչին .
 յաշտեան հանգստութիւն պիտի ունենան բո-
 լոր սուրբ էակներուն ընկերութեանը մէջ : Պի-
 տի հանգչին Աստուծոյ սուրբ երկրորդութիւն
 և ծառայութիւն ընելով . աս կենացս նե-
 ղութիւններուն վրայ որչափ անուշ պիտի դայ
 աս հանգիստը : Ըստ անդամ խորհինք ա-
 նոր վրայ , և անոր յոյսը մեզ կենդանացընե-
 աւելի ջերմեռանդութիւնով մեր Արդարապետին
 ծառայելու :

ԱՄԻՆ բանին վախճանը աս է, և վերջապէս ասանկ պիտի ըլլայ. հիմա անանկ կերևայ թէ Աստուած աս չար աշխարհիս մէջ չէ, մեծ մարդոց խորհուրդներուն մէջ չէ: Չարերուն ամէն մէկուն բռնած ճամբան անանկ է որ իբրև թէ իրենք պիտի ըլլան ամէնը և ամէն բանի մէջը: Բայց Աստուած միտքը դրաւ որ միշտ ասանկ չմնայ, բոլոր տիեզերքին մէջ ինքը պիտի բնակի և ինքը պիտի ըլլայ ամէնը և ամէն բանի մէջ. և որոշեց որ աս իր դիտաւորութիւնը անհուն ողորմութեան ճամբով մը կատարէ: Արնար աս աշխարհս և անոր մեղաւոր բնակիչները մէկէն կործանել, և իր ողորմութիւնովը դադրեցընել իրեն դէմ եղած ասպտամբութիւնները: Բայց ողորմեցաւ մեզի, մեզ հրաւիրեց որ դառնանք ու իրեն հետ խաղաղութիւն ընենք: Եր սիրելի Արդին տուաւ՝ որ մեզի փրկութեան ճամբայ մը բանայ, և մեր ցեղէն շատերը իր շնորհացը յաղթանակներ պիտի ընէ, որոնց բերկրութիւնը պիտի ըլլայ յաւիտեանս զինքը մեծացուցանելը: Երեն չհնազանդողները իր բարկութիւնովը պիտի փշրէ. աշխարհիս բոլոր ասպտամբները յուսահատութեան բանար պիտի նետէ, և բոլոր զինքը սիրողները իր վերին թաղաւորութեանը պիտի հաւքէ, ուր պիտի ցնծան Աստուած ամէնը ու ամէն բանի մէջ տեսնելով: Թէ որ կ'ուզենք վերջապէս ան երջանիկ ընկե-

ըռթեանը խառնուիլ, աս աշխարհիս մէջն է.
 զած ասե՛ննիս բոլոր սրտերնիս Աստուծոյ
 տանք, և բոլորտիքնիս եղածները յորդորենք
 անոր հնազանդելու և զինքը սիրելու, իբրև
 իրենց ամէնը և ամէն բանի մէջը:

13

Փորձեցէ՛ք ձեր անձերը թէ հաւատքին մէջն
 էք • քննեցէ՛ք ձեր անձերը • չէ՞ք դիտեր ինք-
 զինքնիդ, որ Յիսուս Քրիստոս ձեր մէջն է,
 միայն թէ որ խոսակի չըլլաք: Բ. Կորնթ. Ժ.Գ. 5:

ՊՕՂՈՍ Կորնթացւոց եկեղեցիին զըռչեց
 աս խօսքերը որ չըլլայ թէ անոր անդամները
 կարծեն՝ թէ Քրիստոսի անունովը մկրտուած
 ըլլանուն համար և ինքզինքնին Քրիստոսի հե-
 տևողները ըլլալ խոստովանելուն համար էր որ
 քրիստոնեայ էին: Արտաքին արարողութիւ-
 նով և կամ արտաքին դաւանութիւնով մը
 չէին կրնար Քրիստոսի հետ մէկ ըլլալ, հասլա
 պէտք է սիրաը անոր հետ մէկ ըլլայ: Պօղոս
 անոնք չգատեց • մարդկային էակ մը կարող
 չէր անոնց ներսիդին հասկընալ, հասլա իրենք
 ինքզինքնին քննելու և փորձելու էին թէ արդ-
 եօք ան հաւատքին մէջն են: Մենք ալ Կո-
 րնթոսի քրիստոնեաներուն պէս անձերնիս քըն

նեղու էնք • մեր սիրտերը անոնց սիրտերուն
 պէս խաբէբայ են , և փորձելու էնք անձերնիս
 որ յաւիտենական կեանք դանելու սուտ յոյ-
 սով մը խաբուած չըլլանք : Մեր անվախճան
 երջանակութեան դործը փոքր բանի մը տեղ դը-
 նեղու չենք : Արտաքին խոստովանութիւնով
 չենք կրնար փրկուիլ , հապա Քրիստոս Յիսուս
 մեր մէջը ըլլալու է • և մեր ամենէն մեծ սիրոյ
 առարկան , մեր միակ յոյսն ու վաստահութիւնը
 ինքն ըլլալու է : Մէջերնիս ըլլալու է՝ իր հո-
 դիովը մեզ իրեն կերպարանակից ընելու : Մեր
 մէջը ըլլալը յայանելու էնք ան նոյն իր ցու-
 ցուցած քաղցրութիւնը՝ հեղութիւնը՝ համբե-
 լութիւնը և առ Աստուած ու առ մարդիկ ու-
 նեցած սէրը մենք ալ ցուցընելով : Թէ որ առ
 կեանքիս մէջ ասանկ միանանք իրեն հետ հա-
 ւատքով , յաւիտենական կենաց մէջ իրեն հետ
 պիտի թաղաւորենք :

14

Գոհացէ՛ք Տէրոջմէն , ինչու որ բարի է • ինչ-
 չու որ անոր ողորմութիւնը յաւիտեան է :
 Սաղմ • ԸԶ • 1 :

ՇԱՏ պատճառներ ունինք միշտ գոհութիւն
 և փառաբանութիւն մատուցանելու Տէրոջը :

Գոհութիւն տալու ենք իրեն բոլոր մեր հոգի-
 ումը և բոլորախիբնիս եղածներովը իր բնութեանը
 և մեզի ըրածներուն համար : Ենքը բարի է ,
 բոլոր իր ճամբաները ողորմութիւն ու ճշշ-
 մարտութիւն են . բոլոր իր գործքերը իր բա-
 րութիւնը կը ցուցնեն : Եւ սա բարի Աս-
 տուածը թէ Աստուածն է . իր բարութիւնը
 թէ՛ է . ուստի արդարեւ անդադար գոհութիւն
 մատուցանելու ենք իրեն : Թէ որ գոհութիւն
 տալը զանց անենք , քարերը սխալի աղաղա-
 կեն մեր ապերախտութեանը համար : Բայց սա
 Աստուծոյն դէմ ամէնքս ալ մեղանչեցինք , սա-
 կայն իր ողորմութիւնը յաւիտեան է . աշխարհ
 դալերնուս 'ի վեր մեզի ողորմեցաւ : Շատ ան-
 դամ զինքը մեր մեղքերովը բարկացուցինք ,
 բայց իր ողորմութիւնը հասած չէ . իր առատ
 ողորմութիւնովը մեզի Փրկիչ մը սպարաատեց :
 Եւ թէպէտ այնչափ ժամանակ սա Փրկիչը ար-
 համարհեցինք , սակայն իր ողորմութիւնը մը-
 նաց : Իր ողորմութիւնովը իր հոգին խրկեց մեր
 սիրտերը նորոգելու և մեզի Քրիստոսի հաւատա-
 ցրնելու : Եւ հիմա ալ թէպէտև կը յուսանք
 թէ զինքը կը սիրենք , սակայն ամէն օր մեր
 մեղքերովը զինքը կը նեղացնենք , և ամէն օր
 կը տեսնենք թէ իր ողորմութիւնը անհասնում
 է : Արդարև յաւիտեանս յաւիտենից սխալի
 ուրախանանք իրեն գոհութիւն տալով , ինչու
 որ իր ողորմութիւնը յաւիտեան է :

Եւ Փարաւօնը ու անոր զօրքը Կարմիր ծովուն մէջը թօթվողէն, ինչու որ անոր ողորմութիւնը յաւիտեան է : Սաղմ . ՃԼԶ . 15 :

ՍԱՂՄՈՍԵՐԳՈՒՆ աս բանը կը յիշէ իբրև օրինակ մը Աստուծոյ մեծ ողորմութեանը : Փարաւօն երկար ժամանակ անդթութեամբ Աստուծոյ ժողովուրդը նեղեց . Աստուած շատ երկայնամտութիւն ցուցուց իրեն ու շատ խրատեց, բայց ամէնը պարապը գնաց, սիրտը չկակուղցաւ : Ու հիմա որ Իսրայէլի ժողովուրդը Եգիպտոսէն ելեր կ'երթային Աստուծոյ հրամանին պէս, անոնց ետեէն ինկաւ ու միտքը դրաւ անոնք սպաննելու : Բայց Աստուած իր ողորմութիւնովը Իսրայէլացիները փրկեց, Փարաւօնը և իր զօրքը Կարմիր Ծովուն մէջ կործանելով : Չարերուն գէմ ասանկ սոսկալի պատիժներ տալով Աստուած ամէն ատեն իր ողորմութիւնը ցուցուց, և միշտ ասանկ պիտի ընէ : Մեղաւորներուն շատ երկայնամտութիւն կ'ընէ՝ անոնց կ'ողորմի . բայց թէ որ իր ողորմութիւնները միշտ մերժեն՝ չթողուր որ ապրին ու իրենց չարութիւնովը իր ժողովուրդին երջանկութիւնը խանդարեն : Դժոխքը հաստատեց ու բոլոր զինքը ջնջողները՝ իրեն չճառայողները յաւիտեան հոն պիտի խրկէ, ինչու որ իր

ողորմութիւնը յաւիտեան է : Պիտի չթողու ա-
նոնց որ իր զաւկընէրուն նեղութիւն տան ու
փորձեն , հապա ողորմելով բոլոր սուրբ էակ-
ներուն , չարը խաւարին մթութեանը մէջ յա-
ւիտեան պիտի կապէ :

16

Մենք զանկիայ (Աստուած) կը սիրենք , ին-
չու որ առաջ անկիայ մեզ սիրեց : Ա. Յ. Կ .
Դ . 19 :

ՄԵՆԻ Քրիստոսը ջնարեցինք , հապա Քր-
իստոս մեզ ընտրեց . մենք զինքը չփնտրուե-
ցինք հապա ան մեզ փնտրեց : Սրտերնուս մե-
ջը սիրոյ բոբոբ մը տեսնելուն համար չէր՝ որ
մեզ ընտրեց . չէ , մենք մեղքի և յանցանքի
մէջ մեռած էինք . սրտերնիս անձնասիրութիւ-
նով ու ամէն կերպ չարութիւնով լեցուն էր :
Զինքը ձգած էինք ու կուրսութեամբ և անհո-
գութեամբ յաւիտենական մահուան տանող
ճամբան բռնէր կ'երթայինք : Մեր մեղքերուն
և թշուառութիւններուն մէջ մեր վրայ նայե-
ցաւ , և իր սէրն ու գութը վրանիս շարժե-
ցաւ . մեզ սիրեց ու միտքը դրաւ մեզ փրկե-
լու : Ինքը մեր կոյր աչքերը բացաւ որ մեր
յանցանքներն ու վտանգը տեսնէիք . մեր կար-

ծրո սիրտերը կահուղցուց որ զգացողութիւն
 ունենանք : Ինքը ցուցուց մեզի Գողգոթային
 վրայ մեզի համար ըրածը , և թէ ինչպէս ին-
 քը առաջ մեզ սիրեց , որ մենք ալ զինքը սի-
 րեցինք : Եւ արդ՝ ինտոր սէր ունենալու ենք
 իր վրայ • բոլոր սրտերնիս ու հոգինիս իրն
 ըլլալու են : Եւ մինչև անգամ ասանկ ալ ըլ-
 ւայ , ինչ ոչինչ հատուցում մը ըրած պիտի
 ըլլանք իր մեզի ցուցուցած անհուն սիրոյն վա-
 խարէն : Օրհնեալ Փրկիչ՝ քեզ ասկէց աւելի
 չսիրելնուս ներէ , և քու շնորհքովդ քու վը-
 րադ ունեցած սէրերնիս զօրացնելու ու աճե-
 ցնելու , որ երթալով յաւիտեան զօրանայ :

17

Եւ մենք հաւատացինք ու գիացանք՝ թէ
 դուն ես Քրիստոսը Աստուծոյ Որդին : Յ․Է․
 Զ․ 70 :

ՊԵՏՐՈՍ առաքեալ հոս անանկ կը խօսի
 որ կ'երևայ թէ կատարեալ վստահութիւն ունի
 իր վրայ • և իր խօսքէն անանկ կը հասկըցուի
 թէ ան ատենը իր հաւատքին վրայ ամենևին
 երկբայութիւն մը չունէր : Եւ իր վստահած
 բանը ամենօրհնեալ ճշմարտութիւն մըն էր • կը
 հաւատար թէ Յիսուս՝ իր Ասրդատեալը , ու-

բուն աշակերան էր , և որուն համար ամէն բան
 ձգեր էր , իրօք Քրիստոսն է , ան Օծեալը՝ որ
 աշխարհիս մեղացը համար քաւութիւն պիտի
 ընէր , և որ բոլոր աշխարհիս վայ պիտի թա-
 գաւորէր : Հաստատ գիտէր թէ անկիցայ Աս-
 տուծոյ Արդին է , և ուստի անոր քովը յաւի-
 տենասկան կեանք կար . և թէ անոր բոլոր խօս-
 քերը և բոլոր խոստմունքները յաւիտենական
 ճշմարտութիւններ էին : Քրիստոսի մահէն ա-
 ռաջ իր աշակերտները անոր վրայով մեր հիմա-
 կուան գիտցածնու չափ բան չէին գիտեր :
 Հիմա կատարելապէս բացատրուած է մեզի ա-
 նոր աշխարհ գալուն գիտաւորութիւնները , և
 բոլոր ան մեծ օրհնութիւնները , որ մեզի հա-
 մար ձեռք բերաւ : Աւստի մենք ալ անոնց չափ
 սրամտ ունինք հաւատալու թէ Յիսուսը Քր-
 իստոսն է , կենդանի Աստուծոյ Արդին : Աւ-
 բեմն ուրախանանք առ ճշմարտութեանս վրայ ,
 և մեր հաւատքին համաձայն կեանք վարենք :
 Իրեն ծառայելու ժիր ըլլանք , և մարդոց մեզի
 դէմ բանեցուցած հնարքներէն չվախնանք , քան-
 զի Յիսուս՝ մեր Վարդապետը կենդանի Աս-
 տուծոյ Արդին է : Եւ քանզի Քրիստոսի աշա-
 կերտներ կանչուած ենք , մեր առ բարձր ա-
 նունին արժան գործք գործելու ջանք ընենք :

Քանզի ձեզի դաչողը, իր աչքին բիբին կը
դաչի : Զ. Գ. Բ. 8 :

ՄԱՐԴՈՒԹ աչքին բիբը մարմինին ուրիշ
մասերէն շատ դիւրաւ կը դգայ . քիչ մը դըպ-
չելով շուտով ու սաստիկ կը ցաւի : Աս բանը
Աստուած իր ժողովուրդին վրայ ունեցած խը-
նամքին ու ցաւահոցութեանը օրինակ կը բերէ :
Մէկը չկրնար անոնց դաչիլ զնոսա մը հասցը-
նելու համար, առանց Աստուծոյ դգալուն .
մարդ մը իր աչքին բիբը ինտոր որ կը նայի՝
անիկայ ալ անոնք անանկ կը նայի : Աս խօս-
քերը Աստուծոյ առջի ժողովուրդին խօսուած
ժամանակը անոնք մեղանչեր էին, և իրենց մեղ-
քերուն համար սաստիկ յանդիմանութիւն մը
լսած էին . բայց անոնց վրայ անանկ սէր մը ու-
նէր, որ բնաւ մէկ բանով մը չէր կրնար սղաղիլ :
Եւ որովհետեւ Աստուած անվտփոխ է, հիմա
ալ ան նոյն դգացումները ունի իր ժողովուր-
դին վրայ, և Աստուծոյ խորհիքը ամէն դարի
մէջ աս սրատուական խօսքերուն առւած միսի-
թարութիւնը կրնան վայլել : Մէնք՝ թէ որ իր
ճշմարիտ աշակերաներն ենք, իր աչքին բիբին
պէս իրեն սիրելի ենք . պիտի չթողու որ բա-
նէ մը մեզի զնոսա մը դայ : Թէ որ չար մարդիկ
մեզի հակառակութիւն ընեն, Աստուծոյ դէմ

կ'ընեն . անխիայ կը տեսնէ և կը զգայ անոնց
խորամանկութիւնները : Մենք կրնանք հանդար-
տութեամբ և ապահով կենալ , վասն զի մենք
ինչ որ կը զգանք՝ Աստուած ալ նոյնը կը
զգայ մեր նեղութիւններէն , և մեր թշնա-
միները իր ձեռքն են ու մենք ապահով
ենք : Պիտի սրահէ ու սրաշտտանէ մեզ , և բնաւ
պիտի չլծողու որ մեզի օգուտ եղածէն աւելի
փորձութիւն կրենք : Ասխիայ ահարկու ճըշ-
մարտութիւն մըն է անոնց որ կ'ելլեն հակա-
ռակութիւն ընելու և Աստուծոյ ժողովուրդը
հարածելու , թէ Աստուծոյ աչքին բիբին կը
դաշին : Չկրնար մէկ էակ մը առ բանը առանց
պատիժի ընել . անխիայ Ամենակարող զօրու-
թիւն ու վրէժխնդրութիւն ունի , և անոնց ար-
ժան եղածը պիտի հասուցանէ :

19

Քանզի իմ խորհուրդներս՝ ձեր խորհուրդները
չեն , ու ձեր ճամբաները՝ իմ ճամբաներս չեն ,
կ'ըսէ Տէրը : Եսայ . ԾԵ . 8 :

ՀԵԹԱՆՈՍՆԵՐԸ միշտ կը կարծեն թէ ի-
րենց երեսկայած Աստուածներուն բնութիւնը
իրենց բնութեանը նման է . և մինչև անգամ
Աստուծոյ բնութիւնը որոշ յայտնուած աւ-

ղերը մարդիկ կը կարծեն թէ Աստուած իրենց պէս մէկն է : Բայց օրհնեալ է իր անունը որ գիտենք թէ մեղի նման չէ . իր խորհուրդներն ու ճամբաները մերինին պէս չեն : Թէ որ Աստուծոյ խորհուրդները մեր խորհուրդներուն նման ըլլային , պիտի ջանարհէր իր ապրատամբ արարածները վերկելու . իրեն գէտ մեղանչած տեղերնին անոնք պիտի սպաննէր : Թէ որ իր ճամբաները մեր ճամբաներուն նման ըլլային , իր բարկութեան շունչովը յաւիտենական հարուածքով պիտի զարնէր ան մեղաւորները , որոնք կը համարձակին իր Որդին ատել , և անոր ձեռքովը եղած շնորհաց պարգևները բանի տեղ չգնել : Փրկութիւն պիտի չտար մեղաւորներուն , որոնք միշտ անիկայ կ'արհամարհեն , և երկայնամիտ պիտի չըլլար անոնց , վասն զի ամէն օր և ամէն ժամ իր օրէնքները կը կտարեն , և իրենց անօրէնութիւնները անոր վրէժխնդրութիւնը կը գրդեն : Բայց երկինքը երկրէս որչափ որ բարձր է , իր խոստմունքներն ու ճամբաներն ալ այնչափ մերինէն բարձր են : Եւ ուրախանանք ու փառք տանք ասանկ ըլլալուն համար . անիկայ սուրբ՝ անփոփոխ և ճշմարիտ է , ողորմութիւնով ու գրթութեամբով լեցուն : Ո՛հ մեղմէ՛ սրչափ տարբեր է :

20

Քեզ պիտի չթողում ու քեզ անտես պիտի չընեն : Զօրացիր ու քաջասիրտ եղիր :
Յե՞ . Ա . 5 , 6 :

ՅԵՍՈՒ մեծ գործ մը ունէր առջևը , և անանկ գործ մըն էր որ մարդս ահու դողի մէջ կը ձգէր : Իսրայէլի ժողովուրդը պիտի առաջնորդէր ու տանէր Քանան երկիրը ժառանգելու , և իրենցմէ շատ զօրաւոր ու մեծ ազգերու հետ պատերազմելու . անանկ ազգեր՝ որ անշուշտ զիրենք կը յաղթէին թէ որ իրենց կողմէն մարդկային զօրութենէն վեր զօրութիւն չունենային : Բայց Աստուած քաջալերութիւն տուաւ Յեսուին աս խոստմունքով , թէ “ Քեզ պիտի չթողում ու քեզ անտես պիտի չընեն ” : Աս մեծ քաջալերութիւնով Յեսու զօրացաւ ու սիրտ առաւ , ինչու որ Աստուած իր կողմը ըլլալով մէկը կարող չէր զինքը յաղթել : Աստուծոյ աս՝ “ Քեզ պիտի չթողում ու քեզ անտես պիտի չընեն ” , խոստմունքը բոլոր իր ժողովուրդին ալ է : Թէ որ անանկ մեծ և փոքր ձիջ պարտաւորութիւններ ընել պէտք ըլլայ , որ բնականաբար կարող պիտի չըլլան կատարել , Աստուած անոնց հետը պիտի ըլլայ , ու իրենց զօրութիւն պիտի տայ : Երբոր դասն անդութիւններու մէջ խնան , Աստուած իրենք

ձեռքէ պիտի չթողու . թէ որ երկրաւոր բարեկամներնին իրենք երեսէ ձգեն , Աստուած պիտի չձգէ : Աս վատահաւթիւնով ուրախութեամբ ճամբաներնիս երթանք . միայն աղէկ նայինք որ իրմէն չմոլորինք , ու ինքը միշտ մեր հետը պիտի ըլլայ :

21

Ես եմ՝ ես եմ, որ քու յանցանքներդ ինծի համար կը ջնջեմ, ու քու մեղքերդ ալ պիտի չյիշեմ : Եսայ . ԽԳ . 25 :

Ո՞վ է աս գթութեան խօսքերը դրուցողը . ո՞վ կրնայ ջնջել մեր մեղքերուն շատութիւնը : Աստուած ինքն է , ան Աստուածը՝ որուն դէմ մեղանշեցինք . ան Աստուածը՝ որուն դէմ դորձած մեղքերնիս լեռան պէս բարձրացան : Աս Աստուածը՝ որուն հատուցում մը չենք կրնար ընել մեր անցեալ մեղքերուն համար , իր սղորմութեան մեծութիւնովը մեզ կը քաջալերէ ըսելով , Պիտի ջնջեմ քու մեղքերդ ինծի համար : Մենք բան մը չունինք՝ որով իր գթութեանը արժանանանք . բոլորովին անարժան ենք իր սիրոյն . և իրմէն մեր մեղքերուն թողութիւն գնելու ձեռքերնիս բան մը չունինք . բայց Աստուած անոնք իրեն համար ձրիապէս կը ջնջ-

ջէ, և անոնք ջիշէր : Մեղքերնիս այնչափ մեծ են որ չենք կրնար մոռնալ, անոնք կը յիշենք և կուլանք ու կ'ողբանք : Ո՛հ անոր շնորհքին լայնութիւնը ու երկայնութիւնը, բարձրութիւնը և խորունկութիւնը • բայց աս խօսքերուն առած մխիթարութիւնը արդէօք թե՛ ալ կրնանք վայելել • Աստուած աս խօսքերը մեզի ալ կ'ըսէ՞ : Այո՛ թէ որ իր ժողովուրդն ենք • Թէ որ ճշմարիտ ապաշխարութիւն ընենք, և Քրիստոսի ապաւինինք, աս խոստմունքները մերն ալ կ'ըլլան :

22

Ասան զի Աստուած անիկայ՝ որ մեղք չէր գիտեր, մեզի համար մեղաւոր սեպեց, որ մենք անոր միջոցովը Աստուծոյ արդարները ըլլանք : Բ Կորնթ. • Ե • 21 :

ՅԻՄՈՒՍ Քրիստոս սուրբ՝ անմեղ՝ անարատ և մեղաւորներէն զատուած էր • բոլոր երկնային զօրքերը իրեն երկրապառութիւն կ'ընէին • Աստուծոյ սիրելի Որդին էր, և Հայրը իրեն շատ հաւնած էր : Սակայն աս սուրբ էակը մեղաւոր սեպուեցաւ • խաչափայտին վրայ բեռնեցաւ յեան չարագործի մը պէս, և Հայրը զինքը երեսէ ձգեց ու աշխարհիս մեղքերը ա-

նոր վրայ դրաւ : Եւ բոլոր սա բաները մեզի
 համար եղաւ, մեզի՝ իրեն թշնամիներու և
 յաւիտենական մահուան արժանի մեղաւորնե-
 րու համար : Մեզի համար մեղաւոր սեպուե-
 ցաւ . մեր մեղացը արժան եղած պատիժը ինք
 իր վրան առաւ՝ որ իր ձեռքովը Աստուծոյ ար-
 դարները եղած ըլլանք : Յիսուս չէ թէ միայն
 մեր մեղքերը վերցուց, հասա իր արդարու-
 թիւնն ալ մեզի կու տայ : Մենք մեղմէ ար-
 դարութիւն մը չունինք . մեր արժանաւորու-
 թիւնովը Աստուծոյ առջևը չենք կրնար ելլալ,
 վասն զի ամէնքս ալ չար մեղաւորներ ենք,
 հասա Քրիստոսի անունովը կրնանք երթալ,
 և իր արդարութիւնովը կրնանք ընդունուիլ : Աս
 անունով եկողներուն բնաւ մէկը պիտի չը-
 վարնաուի :

23

Մէյմըն ալ քու երկրիդ մէջը բռնութիւն,
 և քու սահմաններուդ մէջը յափշտակութիւն
 ու կոտորած պիտի չսուի . հասա քու պա-
 րիապներդ՝ Փրկութիւն, ու դռներդ Գովու-
 թիւն պիտի անուանես : Եսայ . Կ . 18 :

ԱՍ աշխարհս շատ պիտի փոխուի երբոր
 Յիսուս Քրիստոս ամէն տեղ ճանչցուի ու ըն-

գունուի : Հիմա աշխարհս անգթութիւնով լե-
ցուն է • գրեթէ ամէն երկրի մէջ բաղնաթիւ
անձինք սպաննուած են բռնութիւնով : Մար-
դիկ մարդոց վրայ կը յարձակին , և իրենց չա-
րութիւնը կատարելու համար , և կամ դրսու-
անց բարութիւն մը շահելու համար , մէկզմէկ
կը նեղեն կամ կը սպաննեն : Ան երկիրները
ուր ճշմարիտ քրիստոնէութիւնը շատ տարա-
ծուած է , մարդիկ շատ մեծ խաղաղութիւնով
ու հանգստութիւնով կ'ապրին , բայց յափըշ-
տակութիւն ու կործանում չեղած տեղ չկայ :
Աւետարանին լոյսը ամենեւին չծաղած երկիր-
ներուն մէջ անձնասիրութիւնը՝ անգթութիւնը
և բռնութիւնը տիրած է : և անանկ գէշութիւն-
ներ կ'ըլլան՝ որ առանց սարսափելու չենք կր-
նար անոնց վրայ խորհիլ : Բայց միշտ ասանկ
պիտի չմնայ • ամէն մարմին Աստուծոյ փրկու-
թիւնը պիտի տեսնէ • ան ատենը իբրևութեան
ու կործանման տեղը խաղաղութիւնն ու սէրը
պիտի անցնի : Ան ատենը մարդիկ պարիսպներ
պիտի չքաշեն իրենց ընկերին գէմ՝ որ սպա-
հով մնան , հասցա փրկութիւնը պիտի ըլլայ ի-
րենց պարիսպն ու պատնէշը : Աստուած կրնայ
ընել աս մեծ փոփոխութիւնը , և ամէն որ ա-
ղօթք ընենք որ իր թագաւորութիւնը գայ :

Երկինքը ու երկիրը պիտի անցնին , բայց իմ
խօսքերս բնաւ պիտի չանցնին : Մատթ . ԻԴ . 35 :

ԲՆԱԿԱՆԱԲԱՄ տեղական սեպած բաներ-
նուս առաջինը երկինքն ու երկիրն են՝ որ գը-
րեթէ վեց հազար տարի է որ հաստատ ու ան-
փոփոխ մնացին : Բայց յաւիտեան (պիտի չմը-
նան . երկինքը մագաղաթի պէս պիտի դալա-
րուի , և երկիրս բոլոր մէջը եղածներովը պիտի
այրի . բայց Տէրոջը խօսքը յաւիտեան պիտի
մնայ : Իր բերնէն ելած խօսքերուն ամէնքն ալ
յաւիտենական ճշմարտութիւններ են . բոլոր իր
խոստմունքները և բոլոր իր սպանալիքները
պիտի կատարուին : Ինքը ըսաւ թէ Ալ որ ա-
ստաշխարհութիւն ընէ և Վրիստոսի հաւատոյ՝
պիտի փրկուի . և ամէն աստաշխարհ ու հաւա-
տացող անձն առ խոստմունքին մխիթարութիւնը
կրնայ վայելել , և վստահ ըլլալ թէ՛ թէ և եր-
կինքը ու երկիրը անցնին , իր փրկութիւնը
հաստատ է : Ինքը ըսաւ թէ Չարերը և բոլոր
Աստուած մոռցող ազգերը դժոխք պիտի եր-
թան , և թող չարը դուրայ առ խօսքին վրայ .
վասն զի բնաւ պիտի չանցնի : Ըսաւ թէ Աշ-
խարհք Տէրոջը գիտութիւնովը պիտի լեցուի , և
առ օրհնեալ յոյսը պիտի վայելենք՝ ինչու իր
պիտի կատարուի : Տէրը ճշմարտութեան Աս-

տուած է, և թող բոլոր աշխարհք աս բանիս
համար ցնծայ :

25

Ղասն զի մեզի մանուկ մը ծնաւ, մեզի որ-
դի մը տրուեցաւ, և իշխանութիւնը անոր ու-
ոին վրայ պիտի ըլլայ, ու անոր անունը պիտի
կոչուի՝ Աքանչելի, Խորհրդակից, Հոօր Աս-
տուած, Յաւիտենականութեան հայր, Խաղա-
ղութեան Իշխան : Եսայ . Թ . 6 :

ՄԱՐԻԱՄԻՆ որդւոյն Բեթլեհեմի մանուկին
նման պարագաներ ունեցող զաւակ մը երբէք
աշխարհք չեկաւ . եկած ժամանակը բոլոր աշ-
խարհք խնդայ : Եւ ասիկայ զարմանք չէ,
վասն զի երկինքի զօրքերը անոր ո՛վ ըլլալը
գիտէին : Անօգնական մանուկի մը տէս աշ-
խարհք եկաւ, բայց « Աստուած էր մարմին ա-
ռած » : Իր անունը Աքանչելի էր . ասանկ ըս-
քանչելիք մը արեւելքը տեսած չունէր, Աս-
տուած մարդացած : Խոնարհեցաւ ու վրան
մարդկութեան կերպարանք հաղաւ . և զարմա-
նալի գիտաւորութիւնով մը՝ աշխարհիս մեղքե-
րը վերցնելու, մեղաւորներուն տեղը կայնե-
ցաւ : Հոօր Աստուծմէ վար էակ մը կարող
չէր կատարել իր ձեռք զարկած աս մեծ գոր-

ծը : Եւ իբրև Իշխան խաղաղութեան՝ աշխարհ
եղաւ . եղաւ բարկացած Աստուծոյ մը և անոր
յանցաւոր արարածներուն մէջ խաղաղութիւն
ընելու : Եղաւ յանցաւոր հոգիներուն խիղճի
խաղաղութիւն տալու , և մարդոց մէջ ալ խա-
ղաղութիւն ձգելու : Սուրբերը երկինքին մէջ
յաւիտեանս ուրախութիւնով պիտի տօնեն սա
մեծ դիպուածը , որ է Քրիստոսի ծնունդը :

26

Եւ բանը մարմին եղաւ , ու մեր մէջը բընա-
կեցաւ , (ու անոր փառքը անսանք Հօրմէն մի-
ածնի փառքին պէս) շնորհքով ու ճշմարտու-
թիւնով լեցուն : Յովհ . Ա . 14 :

ՀՕՐԸ միածնին մարմին առնելը մէկ խոր-
հուրդ մըն է՝ որն որ հրեշտակները փառաբե-
ցան հասկընալ : Մեծ խոնարհութիւն մը եղած
կ'ըլլար՝ թէ որ առանց Աստուածութեան փառքը
ձգելու ատեն ատեն աշխարհք դար մեզի ողոր-
մելու , բայց ինքը միայն սա բանը չըրաւ :
Աստարելապէս մեր գործը վրան առաւ , մեր
բնութիւնը հագնելով մեզի հետ մէկ եղաւ .
մարդոց որդւոցը հետ համբուեցաւ , և մարդ-
կային արամութիւններուն ամէնքն ալ ճաշա-
կեց : Բայց թէպէտև խոնարհ մարդու մը կեր-

սպարանքն առած էր, սակայն իր Աստուածա-
յին բնութեան փառքը վրան կը փայլէր • շը-
նորհքով և ճշմարտութիւնով լեցուն էր, որուն
նմանը հասարակ մարդոց մէջ տեսնուած չէր :
Իր սուկունքներէն յաւիտենական ճշմարտութիւն
կ'ելլար և բոլորովորեւ եղողները իրմէն ճշմար-
տութիւն կը սորվէին • և իր բոլոր կենացը
մէջ անհուն շնորհաց գանձ մըն էր : Ամենէն
նուաստ մարդոց կը խոնարհէր, նեղեալները կը
քաջալերէր, ապաշխարողները կը մխիթարէր,
և ամէնքը կը զարմանային իր բերնէն ելած ան
սպասուական խօսքերուն վրայ :

27

Ասոնք թեսաղոնիկէի մէջ եղողներէն աւելի
ազնիւ մարդիկ էին, որ Աստուծոյ խօսքը կա-
տարեալ յօժարութեամբ ընդունեցին, և ամէն
օր Գիրքերը կը քննէին՝ թէ աս բաները ա-
սանկ է : Գործ • ԺԷ • 11 :

ՊՕՂՈՍ թեսաղոնիկեցիներուն ալ ու Բերի-
ացիներուն ալ նոյն Աւետարանը քարթղեց,
բայց իր քարոզութեան արդիւնքը շատ տար-
բեր եղաւ աս երկու տեղերը : Թեսաղոնիկէի
մէջ աղմուկ մը ելաւ ու ժողովուրդը բարկա-
նալով քաղաքէն դուրս ըրին զինքը • բայց Բե-

ընկալին մէջ շատ բազմաթիւն հաւատաց : Ճշմարտութիւնը երկու տեղն ալ մի և նոյնն էր , սակայն սրտերնին մէկդմէկէ շատ տարբեր էր : Թեաաղոնիկեցիները նախապաշարմունքով ու հրապարտութիւնով լեցուն էին , ծերերուն ձգած աւանդութիւնները կը սիրէին , վասն զի անոնք հրաման կու տային իրենք իրենցմէ արդարութիւն դործելու : Առաքեալներուն վարդապետութիւնները յանցանքնին ցուցուցին իրենց , ու սրտի և վարքի սրբութիւն կը պահանջէին : Իրենք ասոր դէմ էին , անոր համար առաքեալներուն պահանջած բաներուն անանջ ջլատեցին , ու ոչ ալ քննեցին թէ ըսածնին արդեօք ճշմարիտ է թէ չէ : Բայց Բերիացիները մտիկ ըրին ըսածներնուն , ու քննեցին անոնք ան մէկ հաստիկ փորձով այսինքն Սուրբ Գիրքերով , որ տեսնեն թէ անոնց ըրած վարդապետութիւնները ճշմարիտ էին : Մարդոց իշխանութիւնովք բան չէին ընդունել , հասցաւ մէն օր Սուրբ Գիրքերը քննելով , ան բանը՝ որ Աստուծոյ խօսքին համաձայն կը դանէին , կ'ընդունէին : Աս նոյն փորձով մենք ալ փորձենք բոլոր լուսած վարդապետութիւններնիս , և թէ որ Սուրբ Գրոց համաձայն դանենք՝ թիրով անոնք ընդունենք :

28

Հասա հրաժարեցանք ամօթալի ծածուկ բաներէն, ու խորամանկութիւնով չենք վարուիր, և խարդախութիւն չենք ընելը Աստուծոյ խօսքին մէջ. հասա ճշմարտութիւնը յայանելով՝ անձերնիս մարդոց ամէն խղճմտանքին կ'ընծայենք Աստուծոյ առջև: Բ. Կորնթ. Գ. 2:

ՊՕՂՈՍ հոս կը ստորագրէ Աւետարանին ըստաստուորութիւնը ընդունելուն արդիւնքները: Սուա կրօնքներ սորվեցընողները շատ չարութիւն կ'ընեն մարդոց. անոնք խորամանկ ու խաբէբայ են, քովերնէն հնարած պատմութիւններով մարդիկ կը խաբեն: Ասանկ ալ քրիստոնէութիւնը ապականողները. անոնք խարդախութիւն կ'ընեն Աստուծոյ խօսքին մէջ, ծուռ մեկնութիւններ կ'ու տան անոր. և ոմանք ալ Սուրբ Գիրքը անգամ կ'աւան են խղճութիւն ձեռքէն որ չըլլայ թէ ստութիւննին ու խաբէբայութիւննին յայանուի: Բայց ճշմարտութիւնը սիրով ընդունողը ասանկ չընել, և Աստուծոյ վախովը կը ջանայ ճշմարտութիւնը եղածին պէս մարդոց սորվեցընելու: Ասանկ մարդիկ իրենց գիտցածը չեն ծածկել. լոյսը կը թիրեն, կը ցանկանն որ իրենց վարդապետութիւնները լսողները փորձեն Սուրբ Գիրքը լսով, որ գիտնան թէ արդեօք իրօք Աստուծոյ

պատգամներուն պէս կը խօսին թէ չէ : Եւ
ճշմարտութիւնը չէ թէ միայն խօսքով, հասարակ
վարքով ալ կը ցուցնեն . անոր սկզբունքնե-
րովը կ'երթան, և ասանկ խոնարհ ու սուրբ
վարքով անձերնին ամէն մարդոց խղճմտանքին
կ'ընծայեն Աստուծոյ առջև :

29

Եւ խոստովանեցան թէ իրենք օտարներ ու
պանդուխտներ են երկրի վրայ : Ե՛բ . ԺԱ . 13 :

ԱՍԻԿԱՅ հին տնտեսութեան տակ գտնուած
վիայեալ սուրբերուն հաւատքին մէկ արդիւնքն
է . անոնք աս աշխարհիս մէջ իբրև իրենց մըշ-
տընջենաւոր բնակարանը չտարեցան, խոստովա-
նեցան որ օտարներ ու պանդուխտներ են հոս՝
ժամանակ մը պանդխտութիւն ընելու աշխարհ-
քիս մէջ, մինչև որ դէպի ան իրենց փնտրուած
լաւագոյն երկիրը ըրած ճամբորդութիւննին լը-
մըննայ : Մենք ալ անոնց ունեցած զգացումը
ունենալով անանկ ընելու ենք . հոս անցընելու
ժամանակնիս շատ կարճ է, և ինչո՞ւ համար
աս աշխարհիս բարութիւնները դիզելու ետեկ
պիտի ըլլանք, իբրև թէ ասիկայ պիտի ըլլայ
մեր մշտնջենաւոր բնակութիւնը : Մեր Երկ-

նաև որ հայրը աս ճամբորդութիւնը ըրած ժա-
 մանակնիս բարութիւններ կու տայ մեզ ուրա-
 խացընելու համար, և անոնք գոհութիւնով վայե-
 լելու ենք. սակայն զգուշութիւն ընելու ենք
 որ մեր գացած բնակարանին վրայ ունեցած
 խորհուրդներնիս իրենց չքաշեն: Ասա ընկեր-
 ներ կը գանանք մէկ տեղ ճամբորդութիւննիս
 ընելու, և իբրև ճանապարհորդակից սիրելու
 ենք անոնք. բայց մեր նախատակը ճամբորդու-
 թիւններնուս մէջ մէկզմէկու օգնելը պիտի ըլ-
 լայ, և թէ որ մեզմէ առաջ իրենց երկնաւոր
 բնակարանը երթան, ցաւելու չենք աս բանիս
 վրայ, հասլա ուրախանալու ենք ան յոյսով՝
 որ երբոր մեր ճամբորդութիւնն ալ լմնայ նորէն
 պիտի տեսնենք անոնք: Ասա շուտով մեր ճամ-
 բորդութեանը վախճանին կը հասնինք. օրերն
 ամիսներն ու տարիները կ'անցնին կ'երթան, մեր
 վերջին ժամը շուտով կը հասնի, և ան ատենը՝
 թէ որ սրտարաստ գանուինք, մեր երկնաւոր բը-
 նակարանը պիտի մտնենք:

30

Աւստի նայեցէ՛ք թէ ինչպէս զգուշութեամբ պի-
 տի քալէք, չէ թէ անմիաներու պէս, հասլա
 իմաստուններու պէս: Եփե՞ս • Ե • 15:

Թէ որ մէկը թաղաւորութեան մը ժառանգ

ըլլայ, որն որ կը յուսայ շուտով ձեռք ձը-
 դել, ու իր ժամանակը յարդի ու քարի կը
 ստրտուքներու հետ խաղալով անցընելու ըլլայ,
 ան մարդուն խենդ կ'ըսենք: Թէ որ կտուա-
 ւարներու ու վարժապետներու սակ դրուած
 ըլլար, որ զինքը իրեն հասնելու ան բարձր
 վիճակին յարմարցընեն, ու անոնց տուած կըր-
 թուծիւններուն մտք տալուն տեղը ամենա-
 չնչին բաներով դբօսանք ընելու ըլլար, զինքը
 իմաստուն պիտի չտեսնինք: Թէ որ Բրիտանի
 ճշմարիտ աշակերտներն ենք, թագաւորութեան
 մը ժառանգներ ենք. քիչ մը ժամանակ տը-
 բուած է մեզի որ վայելուչ կերպով մը պատ-
 րաստութիւն տեսնենք և յարմարութիւն մը
 ունենանք ան մեր ժառանգութեանք հասնելու
 ու անոր փառքը վայելելու: Բայց առ ժամա-
 նակը շատ կարճ է, ու շուտով պիտի հասնինք
 մեր թագաւորութեանը: Ուրեմն դպուշութեամբ
 քաղենք, չէ՛ թէ անմիաներու պէս, հասա ի-
 մաստուններու պէս. մտքերնիս ըլլան ան մե-
 ծութիւնները՝ որոնց պիտի հասնինք: Աս աշ-
 խարհքիս սչինչ հողերովը ինքզինքնիս չբեռնա-
 ւորենք, ու սրտերնիս անցաւոր հաճութիւննե-
 րու չտանք: Յիմար եղած կ'ըլլանք՝ թէ որ
 մեր սէրը և կամ մասդրութիւնը ըստ մեծի
 մասին տա աշխարհիս բաներուն տանք: Զանք
 ընենք մէկ աւելի կատարեալ պատրաստութիւն
 մը ունենալու մեր դարու ժառանգութեանը.


աչքերնիս մեր երկնային պաակէն ասդին շառ-
նենք : Փութանք ան փառաւոր օրուանը հաս-
նելու , երբ մեր փորձի օրերը պիտի լմնան ,
ու թագաւորներ և քահանաներ պիտի ըլլանք
Աստուծոյ յաւիտեանս :

31

Աս բաներուն վկայութիւն տուողը կ'ըսէ ,
Այո՛ շուտով կու գամ ես : Ամէն • Եկուր Տէ՛ր
Յիսուս : Յայտ • ԻԲ • 20 :

ԱՄԷ՛ն տարի որ կը վերջանայ միաքերնիս
կը ձգէ թէ Տէրոջը դայը կը մօտենայ : Շու-
տով պիտի դայ երկինքին ամպերովը պատած ,
զօրութիւնով ու մեծ փառքով : Շուտով դա-
տաստանին աթուրը պիտի դրուի , և բոլոր
մարդկային աղբը իր առջին պիտի ժողվուին
իրենց վերջին վճիռները ընդունելու : Առաւել
շուտ պիտի դայ Տէրը ամէն մէկ մարդոց մեռ-
նելու ատենը • շատ շուտ պիտի դայ մեզ աս-
կեց կանչելու , կամ փառքով իր քովը մընա-
լու , և կամ յուսահատութեան աշխարհքը եր-
թալու : Երանի անոր՝ որ կրնայ սրտանց ը-
սել , “ Ամէն • Եկուր Տէ՛ր Յիսուս , ” : Երանի
անոր՝ որ կը զգայ թէ երկնից փառքերը աշ-
խարհիս փառքերէն շատ մեծ են , և հոն տեղի

ընկերութիւնը և իր Փրկչին ներկայութիւնը հաս-
տեղի իր ամենասիրելի բարեկամներուն ընկե-
րութենէն շատ աղէկ է : Երանի անոր , որուն
համար Սուրբ Հոգին ալ իր հոգւոյն հետ կը
վկայէ թէ ինքը Աստուծոյ որդին է , և մեծ
վստահութիւն ունի որ երբոր Տէրը գայ զին-
քը իր աջ կողմը կանչելու նստեցունելու հա-
մար պիտի ըլլայ անոր գալը : Գիշերը մէկ դի-
գիաց ու ցորեկը մօտեցաւ . մեր ճամբորդու-
թիւնը շուտով պիտի լինայ . շուտով Աար-
դապետնիս պիտի գայ ու մեզ առկէց կանչէ :
“ Ամէն . եկուր Տէ՛ր Յիսուս , ” :



ՎՏԻՊ ԱԿ

ԵՐԵՍ . ՏՈՂ .		ՍԽԱԼ	ՈՒՂԻՂ
2	5	դեռ	դեռ
10	18	Տէր	Տէր
17	12	Գործք	Գործք
18	12	ԻԳ	ԻԳ
20	15	Ճնախատեր	Ճնախատեր
24	14	անուանին	անուանին
37	20	մեղ	մեղ
42	24	ա	ալ
53	4	Գործ	Գործ
61	23	մեղի	մեղի
63	„	(Բիւ լիս)	63
66	20	շուքին	շուքին
68	8	28	27
170	„	107	170
228	14	արածնու թիւն նեղը	արածնու թիւն նը



1871
 1872
 1873
 1874
 1875
 1876
 1877
 1878
 1879
 1880
 1881
 1882
 1883
 1884
 1885
 1886
 1887
 1888
 1889
 1890
 1891
 1892
 1893
 1894
 1895
 1896
 1897
 1898
 1899
 1900

558²r

002 6969

558

2013

